

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ  
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Գ. Ս. ՂԱԶԻՆՅԱՆ  
Ա. Գ. ՎԱՂԱՐՉԵՅԱՆ

ՀԱՅՈՑ ԻՐԱՎՈՒՆՔԻ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

ՀԻՆ ԾՐՋԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ

Հրատարակության Է երաշխավորել ԵՊՀ իրավագիտության  
Փակուլտետի գիտական խորհուրդը

Խմբագրությամբ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ քղբակից անդամ Գ. Ս. Ղազինյանի

Երևան  
ԵՊՀ իրատարակչություն  
2014

ՀՏԴ 340 (091)

ԳՄԴ 67.3

Ն 173

Հեղինակներ՝

Ղազինյան Գաղիկ

իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

գլ. 1 § 3, գլ. 2 § 2 (համարել.), գլ. 3 § 2, 3  
(համարել.), 4, գլ. 4 § 2, գլ. 5 § 4, 6, 7  
(համարել.), 8, գլ. 6 § 3, գլ. 7 § 4, գլ. 10 § 1, 2,  
գլ. 11 § 1, 2, 3, 5, 7, գլ. 12 § 1, 2, 3, 6, 7, 8, գլ.  
13 § 1, 2 (համարել.), 3, 4, գլ. 14, գլ. 15 § 3

Վաղարշյան Արքուր

իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

գլ. 1 § 1, 2, գլ. 2 § 1, 2 (համարել.), գլ. 3 § 1, 3  
(համարել.), գլ. 4 § 1, 3, գլ. 5 § 1, 2, 3, 5, 7  
(համարել.), գլ. 6 § 1, 2, գլ. 7 § 1, 2, 3, գլ. 8,  
գլ. 9, գլ. 10 § 3, 4, գլ. 11 § 4, 6, գլ. 12 § 4, 5, 9,  
գլ. 13 § 2 (համարել.), գլ. 15 § 1, 2

Ղազինյան Գ.Ս., Վաղարշյան Ա.Գ.

Ն 173 Հայոց իրավունքի պատմության հիմնահարցերը: Հին շրջանից  
մինչև մեր օրերը/ Գ. Ս. Ղազինյան, Ա. Գ. Վաղարշյան: ԵՊՀ.-  
Եր.: ԵՊՀ հրատ., 2014.- 416 էջ:

Մենագրությունը համակարգված պատմաիրավական հետազոտություն է՝ նվիրված հայ իրավունքի և Հայաստանի իրավական մշակույթի առանձին տարրերի ձևափորման, գործողության և պատմական զարգացման ընդհանուր հարցերին և օրինաչափություններին:

Հետազոտությունն իրականացված է իրավագիտության հիմնախնդիրների լուծման արդի մոտեցումների ու սկզբունքների օգտագործմամբ, ինչը հնարավորություն է տվել խուսափելու գործ ձևական-իրավական վերլուծությունից և հայ իրավունքի համապատկերը վեր հանել իր կազմավորման և գործողության պատմական փուլերին համապատասխան:

Նախատեսված է Հայաստանի պետության ու իրավունքի պատմության հիմնախնդիրներով հետաքրքրվողների, ինչպես նաև իրավաբանական ֆակուլտետների դասախոսների, ասպիրանտների և ուսանողների համար:

ՀՏԴ 340 (091)

ԳՄԴ 67.3

ISBN ISBN 978-5-8084-1906-3

© Ղազինյան Գ., 2014

© Վաղարշյան Ա., 2014

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ԲԱԺԻՆ 1.

#### ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՍՏԱԿՐԳՔ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

#### ԳԼՈՒԽ 1. ՍՈՑԻՈՆՈՐՄԱՏԻՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՍՏԱԿՐԳՔ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՕՐԻՆԱՀԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ..... 11

§ 1. Հասարակության սոցիոնորմատիվ կարգավորման համակարգի ձևավորման և զարգացման պատմական օրինաչափությունները ..... 11
§ 2. Մինչքրիստոնեական Հայաստանի սոցիոնորմատիվ կարգավորման համակարգի ձևերը և հիմնական ինստիտուտները ..... 16
2.1. Արատուա. սրբացված սովորույթների երկիր ..... 16
2.2. Մ.ք.ա. III-II հազարամյակների քաղաքական անկայուն կացությունը և պահպանողական-կայուն սոցիալական կարգավորումը ..... 20
2.3. Արարատյան քագավորության իրավական համակարգը և իրավունքի ձևերի հիմնահարցը ..... 23
§ 3. Արյան վրեժի և քագավորական իրավարարների ինստիտուտը Հայաստանում մ.ք. I-III դարերում ..... 47
ԳԼՈՒԽ 2. ՎԱԴ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՍՏԱԿՐԳՔ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (IV-IX ԴԱՐԵՐ) ..... 55
§ 1. Քրիստոնեության ընդունումը և սոցիոնորմատիվ համակարգի երկատումը աշխարհիկի և կրոնականի ..... 55
§ 2. Հայոց պետականության կորուստը և Հայաստանի իրավական «բռնազավորումը» VI-IX դարերում ..... 60

#### ԳԼՈՒԽ 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՍՏԱԿՐԳՔ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ X-XVIII ԴԱՐԵՐՈՒՄ ..... 65

§ 1. Հայաստանի իրավական համակարգը և իրավունքի աղբյուրները X-XIV դարերում ..... 65
§ 2. Սեղուկյան տիրապետությունը և Հայաստանի իրավական համակարգի երկատումը ..... 70
Երնիկ-կրոնական հատկանիշով ..... 70
§ 3. Հայ իրավական մշակույթը XV-XVII դարերում ..... 72
§ 4. Հայ իրավական մշակույթի արտահանումը և հայկական գաղթավայրերում դրա զարգացումը XVI-XVIII դարերում ..... 77

#### ԳԼՈՒԽ 4. ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՍՏԱԿՐԳՔ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ..... 82

§ 1. Կիլիկիայի հայկական թագավորության իրավական համակարգի առանձնահատկությունները ..... 82
§ 2. Կիլիկիայի հայկական թագավորության ներդրումը միջազգային մասնավոր իրավունքում ..... 85
§ 3. Կիլիկիայի հայկական թագավորության իրավական համակարգի արտաքին միջավայրի և իրավունքի փոխառված աղբյուրները ..... 87

### ԲԱԺԻՆ 2.

#### ՈՒՃՄԵՋՆԱԴԱՐՅԱՆ ԵՎ ՆՈՐ ՇՐՋԱՆԻ ՀԱՅ ՀԱՍՏԱԿՐԳՔՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

#### ԳԼՈՒԽ 5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ԻՐԱՎԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՐՐԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՈՒՆ ՈՒ ԶԱՐԳԱՅՈՒՄ ԽՎԻ-ԽԻ ԴԱՐԵՐՈՒՄ ..... 91

§ 1. Հայ հասարակական իրավական մշակույթը ..... 91
XVIII դարում ..... 91
§ 2. Հայ իրավական մշակույթի կացությունը պայմանավորող գործոնները XIX դարում ..... 95
§ 3. Հայ իրավական մշակույթի առանձնահատկությունները Արևելյան և Արևմտյան Հայաստաններում XIX դարի սկզբին ..... 97

§ 4. Թուրքիայի դատաիրավական համակարգի աշխարհիկացման փորձերը .....	103
§ 5. Թուրքիայի իրավական վերափոխումները և .....	108
հայ իրավական մշակույթի առանձին տարրերի վիճակը.....	108
§ 6. Կայսերական Ռուսաստանի պետական իրավական համակարգի փոխակերպումները XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկիզբին.....	111
§ 7. Արևելան Հայաստանի իրավական մշակույթի զարգացման օրինաչափությունները XIX դարում .....	116
§ 8. Հայ իրավագետների առաջ գալը և իրավագիտության ձևավորումը .....	123

**ԲԱԺԻՆ 3.**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԴՐԱ ԱՌԱՋԻՆ  
ՏԱՐՐԵՐԻ ԲՆՈՒԹՅԱԳԻՐԸ**

<b>ԳԼՈՒԽ 6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ .....</b>	126
§ 1. Հայաստանի առաջին հանրապետության կազմավորումը և իրավական համակարգի նորմատիվային հիմքերի ստեղծումը.....	126
§ 2. Իրավունքի աղբյուրները և Սահմանադրության հիմնահարցը Առաջին հանրապետության իրավական համակարգում .....	133
§ 3. Իրավական համակարգի գործողության հասարակական պայմանները .....	141

<b>ԳԼՈՒԽ 7. ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԱՏԱՐԸ 147</b>	147
§ 1. Առաջին հանրապետության հոչակումը և կառավարման համակարգը մինչև առաջին խորհրդարանի հիմնադրումը .	147

§ 2. Հայոց ազգային-քաղաքական ներկայացուցության համակարգից անցումը բնակչության և քաղաքական կուսակցությունների ներկայացուցական խորհրդարանական կառավարման համակարգին .....	155
--	-----

§ 3. Գործադիր իշխանության համակարգը և կառավարությանը օրենսդրական լիազորություններով օժտելու ինստիտուտը .....	160
§ 4. Առաջին հանրապետության դատական համակարգը ..	169

**ԳԼՈՒԽ 8. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԵՆԹԱԾՈՒՅԹ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ  
ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ-ՈՒՄ.....**

§ 1. Խորհրդարանների իրավասության բնույթը և իրավական ամրագրման հիմնախնդիրը.....	182
§ 2. Խորհրդարանի օրենսդրական իրավասությունը և օրինաստեղծագործության կառուցակարգը.....	185
§ 3. Հայաստանի խորհրդի և Հայաստանի պառամենտի օրենսդրական գործունեությունը .....	209
§ 4. Կառավարության լիազորություններն օրինաստեղծագործության կառուցակարգում .....	218
§ 5. Գործադիր իշխանության ենթաօրենսդրական ակտերը և «պարտադիր որոշումների» ինստիտուտը.....	233

**ԲԱԺԻՆ 4.**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ**

**ԳԼՈՒԽ 9. ՍՈՅԻՎԼԻՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ  
ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԽՈՐՀՐԱՎՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ .....**

§ 1. Սոցիալիստական հասարակության և պետության .....	240
տեսական հիմունքները.....	240
§ 2. Իրավունքի նկատմամբ իշխանության գերակայության հայեցակարգի մշակումը և խորհրդահայ իրավագիտության ձևավորումը .....	246

§ 3. Խորհրդային Հայաստանի իրավական համակարգի քարգացման փուլերը.....	251
--	-----

**ԳԼՈՒԽ 10. ՀԱՅԱՍՏԱՆԻՄ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ  
ԴԻԿԱՍՈՒՐԱՅԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱՅՎԱԾ  
ՆՈՐՄԱՏԻՎ ԿԱՐԳՎԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ  
ԿԱԶՄՎԱՐՈՒՄԸ .....** 254

§ 1. Հայաստանի խորհրդայնացումը և «իին պետականական համակարգի ջարդի» մեծամասնական քաղաքականությունը .....	254
§ 2. Հեղափոխական իրավագիտակցությամբ սոցիալական կարգավորումից անցումը կենտրոնացված նորմատիվ (օրենսդրական) կարգավորման .....	261
§ 3. Խորհրդային Հայաստանի 1922 թ. Սահմանադրության ընդհանուր բնութագիրը .....	265
§ 4. Դասակարգային խորականության սահմանադրական քաղաքականությունը և քաղաքական ազատության վերացումը .....	272

**ԳԼՈՒԽ 11. ԽՈՐՀՐԴԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԿԱՌՈՒՅՄԱՆ ԾՐԱԳՐԻ  
ԿԵՆՍԱՎԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ.....** 278

§ 1. Խորհրդային իրավական համակարգի կենտրոնացումը .....	278
§ 2. Սոցիալիզմի կառուցման քաղաքական կուրսը և իրավական համակարգի փոփոխությունների բնույթը 1925-30- ական թթ.....	281
§ 3. Խորհրդային իրավական նիկիլիզմը դատավարական ձևի նկատմամբ. իրավական վարույթը՝ որպես դասակարգային պայքարի ոլորտ .....	286
§ 4. Խորհրդային Հայաստանի 1937 թ. Սահմանադրության ընդունումը և ընդհանուր բնութագիրը .....	292
§ 5. Արդարադատության սահմանադրական համակարգի դեկլարատիվ բնույթը .....	298

§ 6. Խորհրդային ընթացիկ օրենսդրության ու իրավակիրա- ռական պրակտիկայի հակասահմանադրական բնույթը .....	303
§ 7. Դաշնային իրավական համակարգի միասնականացումը 1940-50-ական թթ.....	308

**ԳԼՈՒԽ 12. ԽՈՐՀՐԴԱՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԸ 1953-1990 թթ. ....** 312

§ 1. Խորհրդային հասարակության քաղաքական-իրավական վարչածնի ազատականացումը 1953-64 թթ.....	312
§ 2. Խորհրդային ընթացիկ օրենսդրության կիսարքե- փոխումները «խրուշչովյան հալոցքի» տարիներին .....	316
§ 3. Խորհրդային երրորդ սերնդի սահմանադրությունների ընդունման ներպետական և միջազգային իրավական նախադրյալները .....	319
§ 4. ՀԽՍՀ 1978 թ. Սահմանադրության ընդհանուր բնութագիրը .....	323
§ 5. Անհատի սահմանադրական իրավունքների խորհրդային ինստիտուտի գարգացումը և դրա հայեցակարգային բացբողումները .....	327
§ 6. Արդարադատության երաշխիքների սահմանադրական հոչակումը և ընթացիկ օրենսդրության ու իրավակիրառման հետադիմական պահպանողականությունը .....	330
§ 7. Ներպետական և միջազգային իրավունքի հարաբերակցության հիմնահարցը .....	335
§ 8. Վերակառուցման շրջանում իրավագիտության ապաճորտացումը և սոցիալիստական իրավական պետության կառուցման հոչակումը .....	337
§ 9. Խորհրդային Հայաստանի իրավական պատմության քաղաքական գնահատականը .....	341

<b>ԲԱԺԻՆ 5.</b>	
<b>ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՍՏԱԿՐԳԻ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ԿԱՅԱՑՄԱՆ ՓՈԽԼԵՐԸ (1990-1995 ԹԹ.)</b>	
<b>ԳԼՈՒԽ 13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՋՎԱՎԳԻՐԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ, ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՍՏԱԿՐԳՈՒԹՅԱՆ ՈՎԱՉՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԵՆՍԳՈՐԾՈՒՄԸ.....</b>	<b>345</b>
§ 1. Գերազույն խորհրդի 1990 թ. մայիսյան ընտրությունները և Հայաստանի անկախության հռչակագրի ընդունումը, .....345	
դրա քաղաքական իրավական նշանակությունը.....345	
§ 2. Հայաստանի անկախության հռչակագրի նախանշած ժողովրդավարական, իրավական հասարակությունը՝ որպես զարգացման ռազմավարություն, և իրավական բարեփոխումների հիմնական ուղղությունները.....353	
§ 3. Սահմանադրական կարգավորման հիմնախնդիրները 1990-1991 թթ. և Սահմանադրության նկատմամբ ընթացիկ օրենքների գերակայության հաստատումը .....358	
§ 4. Օրենսդրական բարեփոխումների քաղաքականությունը 1990 թ. օգոստոսից մինչև 1991 թ. սեպտեմբեր .....361	
<b>ԳԼՈՒԽ 14. «ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎԴՐՈՒԹՅԹ- ՆԵՐԻ ՄՎԱՀԻՆ» ՍԱՀՄԱՆԱՎԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ ԵՎ ԱՐՄԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՖՈԽՈՒՄՆԵՐԸ (1991 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ - 1995 Թ. ՀՈՒԼԻՍ).....</b>	<b>370</b>
§ 1. Հայաստանի Հանրապետության անկախացումը և դրա սահմանդրական ամրագրումը .....370	
§ 2. Արմատական իրավական բարեփոխումների կենսագործման ընթացիկ օրենսդրական ձևը և դրա հիմնական ուղղությունները (1991 թ. սեպտեմբերից մինչև 1995 թ. հուլիս) .....374	
§ 3. Սոցիալական ոլորտի իրավական քաղաքականությունը .....382	

§ 4. 1995 թ. մարտի 27-ի «Սահմանադրական օրենքը» և խորհրդարանական ընտրությունների իրավակարգավորումը.....387	
§ 5. Հայաստանի Հանրապետության ազգային-ներպետական և միջազգային իրավունքի հարաբերակցության հիմնախնդիրները 1990-1995 թթ. ....390	
<b>ԳԼՈՒԽ 15. ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՍՏԱԿՐԳԻ ՔԱՂԱՔԱՎԱՆ- ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՎԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՆԱԿՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱԿՐԳՈՒՄԸ.....</b>	<b>394</b>
§ 1. Իրավական համակարգի նորմատիվային հիմքերի կայունացման խնդիրը և Սահմանադրության նախագծի մշակման քաղաքական գործընթացը .....394	
§ 2. ՀՀ 1995 թ. Սահմանադրության իրավաբանական ընդհանուր բնութագիրը և առանձնահատկությունները.....401	
§ 3. Սահմանադրական կողիփփիկացիան և Հայաստանի իրավական զարգացման հետագա ուղղությունները .....409	

# ԲԱԺԻՆ 1. ՀԻՆ ԵՎ ՄԻԶՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՍՏԱՐԳՎԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂՔՅՈՒՆԵՐԸ

## ԳԼՈՒԽ 1. ՍՈՅԻՌԱՋԱՏԻԿ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՍՏԱՐԳՎԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՍԱԿԱՆ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՌԱՋԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### § 1. Հասարակության սոցիոնորմատիվ կարգավորման համակարգի ձևավորման և զարգացման պատմական օրինաչափությունները

Հայ իրավունքի առաջացման, ձևավորման և զարգացման պատմության հետազոտությունները Հայաստանում աչքի են ընկնում երկու առանձնահատկությամբ: Առաջին՝ Հայաստանի հնագույն շրջանի, ընդ որում, ոչ թե սոցիոնորմատիվ կարգավորման համակարգի, այլ միայն իրավունքի, հետազոտություններն իրականացվել են մեծամասմբ ընդհանուր պատմագրության շրջանակներում և այն էլ կցկոտուր, դրվագային հետազոտությունների ձևով: Երկրորդ՝ իրավական պատմության հետազոտման մերողաբանությունը պատմաբանները և նույնիսկ իրավագետները կառուցել են պետականական-լեզվատական մոտեցման վրա, ինչի արդյունքում հեղինակների մի մասը նույնիսկ փնտրում է ուրարտական (Արարատյան) դատաստանագիրքը<sup>1</sup>:

Այս պատճառով հնագույն շրջանում հայ հասարակության սոցիոնորմատիվ կարգավորման համակարգի (Յերանյալ իրավունք) առաջացման և զարգացման պատմությունը վերահստատավորման կարիք ունի՝ նոր գիտամեթոդաբանական մոտեցում-

ների հիման վրա: Այդ վերահստատավորման մեթոդը չի կարող լինել ո՛չ արդեն հնացած պետականացված մոտեցումը՝ կառուցված իրեն համապատասխանող լեզվատական իրավահասկացողության վրա, ո՛չ էլ մարքսիստական սոցիոլոգիական պողիտիվիզմը, որում իրավունքը պատկերացվում էր որպես տնտեսապես գերիշխող դասակարգի կամք՝ պետության միջոցով բարձրացված օրենքի աստիճանի:

«Էտասիստական մոտեցման կողմնակիցների մեկնարանմամբ՝ իրավունքի պատմական ծագումը ներկայացված է որպես գիտակցականորեն կազմակերպված, սուբյեկտիվ գործընթաց. իրավունքը չի ծագել հասարակական կառույցներից ու հարաբերություններից, այն ստեղծվել, կառուցվել, ներմուծվել է պետության գերիշխող վերնախավի կամային կարգով, որը շահագրգությած էր զանգվածների ճնշման, շահագործման և մանիպուլացիայի մեջ: Պատմականորեն իրավունքը փարարվել է հասարակությանը պատերազմի, բռնության և հարկադիր խաղաղեցման միջոցով»<sup>1</sup>: Այս դասակարգային-մատերիալիստական հիմնադրությից բխում է երկու եզրակացություն՝ պատմականորեն և տրամաբանորեն պետությունն առաջնային է իրավունքից: Վերջինը պետական քաղաքականության իրականացման ձև է: Հետևաբար իրավունքը պետության ուժային գործիքն է, այն չի կարող գոյատևել՝ չհենվելով բռնության վրա: Այսպիսի մեթոդաբանության կիրառումը իրավունքի պատմության հետազոտման նկատմամբ բերում է այն բյուր եզրակացության, որ իր Հին Հայաստանում կային դատաստանագրեր, սակայն դրանք մեզ չեն հասել:

Իրավունքի ձևավորման ու զարգացման պատմության հետազոտությունը պետք է կառուցել հակառակ մոտեցման վրա՝ ելնելով այն հանգամանքից, որ պետություն և իրավունք երկմիասնության մեջ առաջնայնությունը պատկանում է ոչ թե պետությանը, այլ իրավունքին, որ իրավունքը պոլիտոգենեզի պատճառնե-

<sup>1</sup> Տե՛ս Հ. Կարագելոյան, «Դիտողություններ քիախնական դատաստանագրի կապակցությամբ», «Հանդէս Ամսօրեայ», 2002, 1-12, էջ 338-342:

րից մեկն է, այն խթանող եական գործոն: Հետևաբար, վաղնջական շրջանում, ինչպես աշխարհի այլ ժողովուրդների, այնպես էլ Հայաստանի սոցիոնորմատիվ կարգավորման համակարգի պատմությունը հետազոտելիս պետք է ելնել հետևյալ օրիաչափություններից:

1. Նախնադարյան համայնական կարգերին բնորոշ էր միասնական չտարբերակված սոցիոնորմատիվային կարգավորման համակարգը: Նախնադարյան համայնքի բնական-բնազդային կոլեկտիվիստ անդամների հասարակական կապերը և մարդկային վարքագծի միօրինակությունը հաստատվում էր նորմերի միասնական համակարգի միջոցով, որը կոչվում էր նախնադարյան սովորույթ: Այդ միասնական կարգավորիչն աչքի էր ընկնում սինկրետիզմով (շտարբերակված մոնոնորմեր), սրբացված հեղինակությամբ: Այդ սոցիալական նորմերն իրենց բովանդակությամբ բավական մանրամասնեցված էին: Նման սոցիալական նորմը կամ սովորույթը կատարում էր նորմատիվ կարգավորման բոլոր գործառույթները<sup>1</sup>:

2. Հասարակության զարգացման գործընթացում տնտեսական, սոցիալ-դասակարգային, մարդու անհատականացման և արտաքին պաշտպանական օրինաչափությունների գործողության շնորհիվ նախնադարյան միասնական նորմատիվ կարգավորումը ենթարկվեց քննադատական և տարբերակված վերաբերունքի<sup>2</sup>: Արդյունքում տեղի ունեցավ միասնական կարգավորման տրոհում, ճյուղավորում: Նախնադարյան սինկրետիկ սովորույթի

<sup>1</sup> Հասարակական կյանքում սոցիալական կարգավորիչները (իրավունքը, բարոյականությունը, սովորույթը և այլն) կատարում են կարևոր և նշանակալի գործառույթներ: Դրանք, բացի կարգավորիչ և պահպանական գործառույթներից, կատարում են նաև զնահատողական (օրինակ՝ բարյական նորմերը չափանիշ են այս կամ այն գործողությունները զնահատելու, արժեքավորելու և բարյականն ու անբարյականը զատելու համար), ինչպես նաև փոխանցող, դաստիարակող և այլ գործառույթներ (տե՛ս Ա.Գ. Վաղարշյան, Պետության և իրավունքի տեսություն-2: Դասախոսություն, ԵՊՀ, Եր., հեղինակային հրատարակություն, 2011, էջ 268-269):

<sup>2</sup> Տե՛ս Ա.Գ. Վաղարշյան, Պետության և իրավունքի տեսություն-1: Դասախոսություն, ԵՊՀ, Եր., հեղինակային հրատարակություն, 2013, էջ 44-47:

հիմքի վրա աճեցին բարոյականությունը, իրավունքը, կրոնական, քաղաքական և այլ նորմերը, որոնք արդեն ինքնուրույն սոցիալական կարգավորիչներ են:

3. Իրավունքի պատմությունը սկսվում է սովորույթից: Իրավական դարձած հնագույն սովորույթը հիմն իրավունքի միակ և համընդիանուր ձևն է: Հետևաբար իրավական հիմն համակարգերը սովորության իրավական համակարգեր են, որոնցում կարենոր դեր էին խաղում կրոնականացված կարգադրագրերը՝ տարուները, ուխտախոսումները, երդումը, անեծքը և այլն:

4. Իրավունքի պատմությունը համաշխարհային մասշտարով անցել է երկու հիմնական պատմական փուլ՝ սովորութային իրավունքի շրջան և քաղաքականացված օրենսդրական իրավունքի շրջան: Առաջին փուլը, ըստ իրավական ձևի առանձնահատկության, իր հերթին տրոհվում է երկու ենթափուլ՝ բանավոր և գրավոր իրավական սովորույթներով իրավական համակարգեր: Ամեն մի փուլում և ենթափուլում պետությունն ունի տարբեր դերակատարություն: Իրավունքի զարգացման երկրորդ փուլում առաջ է գալիս իրավունքի նոր ձև (աղյուր)՝ օրենքը որպես քաղաքականացված, պաշտոնապես ամրագրված նորմատիվ իրավական ակտ: Գրավոր ձև ունեցող օրենքը պետության իրավաստեղծագործության արդյունքն է, որում էական դեր է խաղում նպատակահարմարությունը: «Նորը, որ թերեց պետությունը հասարակության նորմատիվ կարգավորիչ ոլորտում, ոչ թե իրավունքն է՝ որպես հասարակական կարգավորիչ (այն արդեն հայտնի էր իրավական սովորույթի ձևով), այլ իրավական նոր ձևը՝ օրենքը, օրենսդրական ակտը, դատաստանագիրը, օրենսգիրը»<sup>1</sup>: Օրենքի՝ որպես պետության հեղինակած իրավունքի ձևի առաջացմանը և համընդգրկուն տարածմանը ավարտվում է սովորութային իրավունքի գերակայության դարաշրջանը, չնայած սովորութային իրավունքը մարդկության պատմության ամբողջ ընթացքում շարունակական է:

<sup>1</sup> Տե՛ս Проблемы общей теории права и государства. Под общ. ред. В.С. Нерсесянца. М., 1999, էջ 99:

կում էր անընդհատ գոյություն ունենալ և գործում է նաև մեր օրերում:

5. Իրավունքի առաջացումը և իրավական ձևերի գարգացումը երկարատև գործընթաց է, որի սկիզբն ազդարարում են այնպիսի գործուներ, ինչպիսիք են մասնավոր սեփականությունը, ժառանգումը, փոխանակությունը, տնտեսական շրջանառությունը: Սակայն դրանում էական դեր են խաղում նաև կրոնական, քաղաքական (պետութան առաջացման ձևը և պետական իշխանության հզորությունը), էքնիկ-մշակութային և այլ գործուներ: Հետևաբար համաշխարհային մասշտարք իրավունքի պատմությունը տարաժամկետ գործընթաց է: Միևնույն պատմական դարաշրջանում ժողովուրդները գտնվում են իրավական գարգացման տարրեր փուլերում՝ պայմանավորված իրենց պատմական ճանապարհի յուրահատկությամբ: «Իրավունքի պատմությունը միշտ կրկնվում է, և այն փուլերը, որոնք անցել է Արևելքը շատ հազարամյակներ առաջ, աշխարհի այլ մասերում հասել են ավելի ուշ և նոյնիսկ մեր օրերին: Ենթադրվում է, օրինակ, որ Համանորարի օրենսգիրը (մ.թ.ա. 1914 թ.) ազդարարում է այն փուլը, որին Հռոմը հասել է մ.թ.ա. 1250 թ., իսկ Աբհասիան միայն այսօր»<sup>1</sup>:

Այսպիսով, հայ իրավունքի պատմությունը չպետք է կապել իրավունքի գրավոր ձևերի առաջացման ժամանակի հետ: Մինչև այդ ձևերի առաջացումը հայկական լեռնաշխարհի ցեղային միություններում և նախապետություններում գործում էր սովորութային իրավական համակարգը, որի համընդհանուր ձևը հայկական լեռնաշխարհի ցեղերի սովորություններն էին: Պայմանավորված աշխարհաբարքական, տնտեսական, էքնիկ կառուցվածքի առանձնահատկություններով՝ Հայկական բարձրավանդակում սակրալիզացված սովորության իրավական համակարգը գոյատևեց բավականին երկար ժամանակ:

<sup>1</sup> Տե՛ս **Diamond A.S.**, Primitive Law. p. 1.

## § 2. Մինչքրիստոնեկան Հայաստանի սոցիոնորմատիվ կարգավորման համակարգը. ձևերը և հիմնական ինստիտուտները

### 2.1. Արատուա. սրբացված սովորությունների երկիր

Սոցիոնորմատիվ կարգավորման համակարգը սերտորեն կապված է կարգավորվող հասարակության էքնիկ-մշակութային առանձնահատկությունների հետ: Եթե արդի դարաշրջանն աչքի է ընկնում պետական կառավարման և իրավական կարգավորման համակարգի (մոդելի) միասնականացմանը, ապա Հին աշխարհում պետական կառավարման համակարգը և սոցիոնորմատիվ մշակույթն ուներ էքնիկ-քաղաքակրթական հատկանիշով պայմանավորված բազմազանություն: Սովորությունները սերտորեն կապված են կրող էքնոսի հետ, և դրանք միայն տվյալ էքնոսի սովորություններն են: Այս հարցում մերոդարձանական ճիշտ մոտեցում ունեն իրավունքի պատմական դպրոցի ներկայացնությունները, ովքեր իրավունքը նմանեցնում են լեզվի հետ: Յուրաքանչյուր էքնոսի դարավոր գարգացումների արդյունքում ձևավորվում է նրա սոցիոնորմատիվ կարգավորման համակարգը, որի վաղնջական նորմատիվ ձևը նախնադարյան սովորույթն էր:

Հայկական լեռնաշխարհի հնագիտական տվյալները բույլ են տալիս հետազոտողներին մ.թ.ա. X-IX հազարամյակների սահմանագծից մինչև Վանի-Արարատի-Ուրարտուի բազավորության շրջանն ընկած ժամանակահատվածը բաժանել երեք խոշոր դարաշրջանների, որոնք միմյանցից առանձնանում են ինչպես պատմամշակութային միջավայրի առանձնահատկություններով, այնպես էլ հասարակական կեցության ողջ համակարգի արմատական փոփոխությունների մասին վկայող տվյալներով<sup>1</sup>:

<sup>1</sup> Տե՛ս **Ավետիքյան Պ.Ս.**, Հայկական լեռնաշխարհը մ.թ.ա. XXIV-IX դարերում (սոցիալ-մշակութային ձևավորման պինամիկան ըստ հնագիտական տվյալների), Է.00.03-«Հնագիտություն» մասնագիտությամբ պատ. գիտ. դոկ. գիտ. աստիճանի հայցման գիտական գեկուցում, Եր., 2014, էջ 66-88:

Մ.թ.ա. X/IX հազարամյակից մինչև մ.թ.ա. IV հազարամյակի կեսերն ընկած ժամանակաշրջանը համարվում է «վաղ երկրագործական-անասնապահական հասարակությունների» կայացման փուլ: Հայկական լեռնաշխարհի սահմաններում քարտեզագրվող վաղ երկրագործական մշակույթներն իրարից տարբերվում են նախնիներից ժառանգած մշակութային ավանդույթներով: Լեռնաշխարհի տարբեր շրջաններում փաստագրվում են իրարից զգալիորեն տարբերվող համաժամանակյա հնագիտական մշակույթներ: Հնագիտական մշակույթի բազմազանությունը ենթադրում է նաև հայկական լեռնաշխարհի սոցիոնորմատիվ կարգավորման համակարգի տեղային տարբերություններ: Սակայն մ.թ.ա. IV հազարամյակի երկրորդ կեսից մինչև մ.թ.ա. III հազարամյակի վերջին քառորդն ընկած ժամանակահատվածում հայկական լեռնաշխարհի զարգացման տարբեր մակարդակների վրա գտնվող վաղ երկրագործական հասարակությունների տարբերակված համաժամանակյա համապատկերը էականորեն փոխվում է, և Հայկական լեռնաշխարհի բնակչությունը «ներկայանում է զարգացման նույն մակարդակի վրա գտնվող, համասեռ մշակութային միջավայր կերտած հասարակությամբ»<sup>1</sup>:

Համասեռ մշակութային միջավայրի կերտումը պայմանավորված էր առաջին հերթին էքնիկ ծագումնաբանության նույն հիմքերով: Հավաքության և որորդ-քոչվորության շրջանում (մինչև մ.թ.ա. IV հազարամյակը) ցեղերի անընդհատ ճյուղավորումների և շփումների հազարամյակության պայմաններում տեղի է ունեցել սոցիոնորմատիվ համակարգի տարբերակում (դիմերենցիա՝ ցեղատարածքային սկզբունքով: Սակայն տնտեսական զարգացման պայմանները և Հանրային կառավարման ինստիտուտների ձևավորումը բերեցին նրան, որ հայկական լեռնաշխարհում ձևավորվեց համասեռ մշակութային միջավայր, այդ թվում նաև սոցիոնորմատիվ մշակույթ, որում, սակայն, տարբերությունները դեռևս պահպանվում էին:

<sup>1</sup> Տե՛ս Ավետիսյան Պ.Ս., գիտ. դոկ. գիտ. աստիճանի հայցման նշված գեկուցումը, էջ 66-67:

Այսպիսով՝ «մ.թ.ա. III հազարամյակի վերջին քառորդից հասարակական զարգացումներում նկատվող փոփոխություններն ու տեղաշարժերը վկայում են վաղագույն պետական կազմավորումների մասին վկայող բազմաթիվ տվյալների աննախադեպ դրսևություններով»<sup>1</sup>: Հնամշակութային միջավայրի տրանսֆորմացիան և հաջորդափոխության համապատկերը հնագետներին հիմք են տալիս եզրակացնելու, որ սկսած մ.թ.ա. III հազարամյակի վերջին քառորդից մինչև մ.թ.ա. I հազարամյակը հայկական վաղ պետական կազմավորումների սաղմնավորման և արմատավորման փուլն է<sup>2</sup>:

Վաղ պետական կազմավորումը ենթադրում է արդիս կայացած իրավական կարգավորում, որի համընդիմությունը ձևն իրավական սովորույթն է: Ինչպիսին էին այդ սովորույթների բովանդակությունը և հայկական սովորութային իրավունքի հիմնական ինստիտուտները, մենք չենք կարող իմանալ, քանզի աղբյուրները գրեթե ոչինչ չեն փոխանցել մեր օրերին: Այնուամենայնիվ, պատմագրական նյութերը հիմք են տալիս քաղելու որոշակի իրավական տեղեկույթ կամ պատմագրական փաստերին տալու իրավական մեկնարանություն:

Մ.թ.ա. III հազարամյակի հայկական հնագույն պետականությունը Արատտան էր<sup>3</sup>: Այդ շրջանի պատմության սկզբնաղբյուրների մեջ հայտնի է շումերական դյուցանավեալը, որի վիպերգերից հինգը տեղեկություններ են պարունակում Արատտան երկրի և շումեր-արատտական հարաբերությունների մասին<sup>4</sup>: Այդ վիպերգերից առաջինում՝ «Էնմերքարը և Արատտայի տիրակալը», Արատտային բազմից տրվում է «աստվածային/սուրբ օ-

<sup>1</sup> Տե՛ս նոյն տեղը, էջ 67:

<sup>2</sup> Տե՛ս նոյն տեղը, էջ 67:

<sup>3</sup> Արատտայի տեղորշման և քաղաքական պատմության, հասարակական տնտեսական կացության մասին մանրամասն տե՛ս Մովսես Ա.Ե., Հայատանը Քրիստոնից առաջ երրորդ հազարամյակում (ըստ գրավոր աղբյուրների), Եր., Երևանի համալսարանի հրատ., 2005, 176 էջ:

<sup>4</sup> Տե՛ս նոյն տեղը:

թենքների երկիր» պատվանուն-մակդիրը<sup>1</sup>:

«Սուրբ օրենքների երկիր» պատվանունը դիցարանական մեկնարանությունից բացի կարևոր նշանակություն ունի Արատայի սոցիոնորմատիվ համակարգի բնութագրի համար: Եթե Սիջազետքում տնտեսական հարաբերությունների գարգացման ավելի բարձր մակարդակն ու դրան համապատասխան մարդու անհատականացման ավելի բարձր աստիճանն արդեն խարիսկել էին սովորութային պահպանողական սոցիոնորմատիվ համակարգը, ապա Արատտայում սովորույթները դեռ սրբացված էին: Սովորութային իրավունքի համակարգն այստեղ դեռ հիմնվում էր սրբացված հեղինակության և ավանդապաշտության վրա, որոնք ապահովում էին սովորույթների կենսագործումը հասարակության գրեթե բոլոր անդամների կողմից: Հետևաբար, թեոկրատական Արատտայում հասարակական նորմերի կենսագործման հիմնական մեթոդը կրոնական սոցիալիզացիայի միջոցով ձևավարված համոզմունքն էր, այլ ոչ թե հարկադրանքը<sup>2</sup>:

Եթե մի կողմ բողնինք դիցարանությունը և առասպելաբանությունը, ապա շումերական դյուցազնավեպի «Գիլգամեշն ու անմահության երկիրը» վիպերգն ունի բառացի հետևյալ բովանդակությունը. Գիլգամեշը՝ «Ուրուկի գերագույն քուրմը» (կամ «Կուլաբայի գերագույն քուրմը») նայելով իր քաղաքին տեսնում է սոցիալական քառս՝ սպանություններ և մահ (գետում դիակներ են լողում): Նրա սիրտն «այրվում, ճզմվում է»: Գերագույն քուրմը՝ որպես կարգուկանոնի պատասխանատու, իրեն անուժ է զգում:

<sup>1</sup> Շումերերեն kur-me-sikil-la արտահայտությունը Ա. Մովսիսյանը բարգմանել է «աստվածային սուրբ օրենքների երկիր»:

<sup>2</sup> Իշխանությունն իր պատմական զարգացման ողջ ընթացքում օգտագործում է կառավարման երկու հիմնական եղանակներ, մերողներ՝ համոզում և հարկադրանք: Համոզումը մարդկանց կամքի և գիտակցության վրա զարգարաբարությական միջոցներով ակտիվ ներգործության ձևն է: Այս միջոցների օգտագործման արդյունքում մարդու, մարդկանց խմբերի մոտ ձևավորվում են որոշակի հոգեբանական արժեքներ, և դրանով իսկ հասարակական շահերն ու իշխանության պահանջները վերածվում են անհատի ներքին հոգեբանական համոզմունքի (տե՛ս ս. Ա. Գ. Վաղարշյան, Պետության և իրավունքի տեսություն-1..., էջ 81-83):

Այդ վիճակից դուրս գալու ելքը նա գտնում է դեպի սուրբ օրենքների երկիր արշավանքում, որը, կարծես թե, վրեժխնդրություն էր, հենց միայն այն բանի համար, որ այնտեղ օրենքները դեռ սուրբ են: Գիլգամեշի պատկերացմանք, Խուվավային սպանելով, նրա ուժը (ճառագայթները) և նրա երկրին բնորոշ օրենքների սրբությունը կանցնի իրեն և իր երկրին: Այդ հզորության ճառագայթներից մեկն էլ հասավ «անեծքի բարին»: Ինչպես գիտենք, անեծքը՝ որպես առասպելաբանական երևույթ, էական դեր էր խաղում Հին Արևելքի սոցիոնորմատիվ կարգավորման համակարգում՝ որպես հանրությունը կազմակերպող և խախտումները կանխող միջոց: Դրանով են պայմանավորված անեծքի բանաձևերի առաստությունն Արևելյան բոլոր երկրների մեզ հասած արձանագրություններում: Ամենայն հավանականությամբ Գիլգամեշի քաղաքում կար անեծքի քար, որը «կորցրել էր իր հզորությունը» և անեծքը որպես իրավաչափ վարքագծի ապահովման միջոց չէր կատարում իր դերը: Այդ իսկ պատճառով շումերական Էնլիլ Աստվածը Խուվավայի երկրի «փայլի ճառագայթներից» մեկը տվեց Ուրուկի «անեծքի բարին», որպեսզի վերականգնի նրա հզորությունը, աղդեցությունը:

Այսպիսով, Արատտան հայկական լեռնաշխարհի առաջին վաղագույն պետական կազմակերպությունն է: Հայատանն այս շրջանում առաջնորդությունից (չիֆորմից) անցում էր կատարել վաղ պետական զարգացման շրջանին, որի սոցիոնորմատիվ կարգավորման համակարգը թեոկրատական սովորութային էր:

## 2.2. Մ.թ. III-II հազարամյակների քաղաքական անկայուն կացությունը և պահպանողական-կայուն սոցիալական կարգավորումը

Հայկական բարձրավանդակի այս շրջանի պատմությունը մեզ հետաքրքրող տեսանկյունից իրենից ներկայացնում է վաղ պետական կազմավորումների հերթափոխում, որոնցում, սակայն, գործում էր կայուն սոցիոնորմատիվ կարգավորումը:

«Հնագույն գրավոր աղբյուրները Հայաստանի համար օգտագործում են ԱՐԱՍՍ (մ.թ.ա. IV-III հազարամյակներ, շումերական դյուցազնավեպ) ԱՐԱՐԱԴ/ԱՐԱՐԱՏ, ՀԱՐՁ, ՀԱՅՁ, ԱՐՄԵՆԻԱ (մ.թ.ա. III հազարամյակի կես, Մ. Խորենացի), ԱՐՄԵՆ(Ն), ՀԱՅ ՆԱ-Ա (մ.թ.ա. III հազարամյակի կես, Էրլայից հայտնաբերված գրավոր աղբյուրներ), ԱՐՄԱՆԻ (մ.թ.ա. III հազարամյակի վերջ, աքքաղական գրավոր աղբյուրներ), ՀԱՅԱՍՏԱՆ ԱԶՁ, ԽՈՒՐՇԻ, ՍԻՏԱՆԻ, ՆԱՅԱՐԱԽՆԻ (մ.թ.ա. II հազարամյակի կես, խեթական, եգիպտական, խորիխական գրավոր աղբյուրներ), ՆԱԻՐԻ, ՈՒՐԱՐՏՈՒ, ՍՈՒԲԱՐՏՈՒ (մ.թ.ա. II- I հազարամյակի սկիզբ, ասորական գրավոր աղբյուրներ), ԱՐԻՄ (մ.թ.ա. XII դար, «Խլիպական»), այնուհետև՝ Արմենիա (մ.թ.ա. I հազարամյակի կես, հունական գրավոր աղբյուրներ), ԱՐՄԵՆԱ (իին պարսկերեն), ՈՒՐԱՉՏՈՒ (բաքերեն), ՀԱՐՄԻՆՈՒՅՑ (էլամերերեն) (մ.թ.ա. I հազարամյակի կես, Դարեհ I թեհիսքունյան եռալեզու արձանագրություն), ԱՐԱՐԱՏ (մ.թ.ա. VII-VI դարեր, Աստվածաշունչ) և այլն»<sup>1</sup>:

Անվանումների այս բազմազանությունը, որ երբեմն քյուրմբոնումների և տարակուսանքների է հասցնում պատմագիրներին, լրիվ բացատրելի է լեզվամշակութային և սոցիալ-քաղաքական կացության դիրքերից: Նախ՝ հայոց աշխարհի ամբողջական կամ նրա առանձին ցեղային միությունների ու նախապետությունների «հնագույն անունների մեջ մեծ թիվ են կազմում Արով սկսվող անունները. Արատա, Արարատ, Արմանի, Ուրարտու (Արարարտ), Արմինա, Արմենիա և այլն: Հնագույն այս անունները կապված են Ար Աստծո անվան հետ, նորից փաստելով այն իրողությունը, որ Հայկական լեռնաշխարհն Արարիչ ԱՐ Աստծո պաշտամունքի հնագույն երկիրն է»<sup>2</sup>:

Եթե դա այդպես է, ապա թեոկրատական հասարակության

մեջ նոյն Աստծո պաշտամունքը վկայում է մշակութային միասնականություն՝ տեղական ցեղային տարաբերություններով հանդերձ: Մշակութային միասնությունը հաստատվում է հնագիտական հետազոտությունների արդյունքներով: Թեոկրատական պաշտամունքային հասարակության մեջ միաստվածությունը անպայմանորեն ենթադրում է նաև սոցիոնորմատիվ կարգավորման համակարգի միասնականություն՝ տեղական ճյուղավորվածությամբ հանդերձ:

Հայաստանի «երկրների» անվանումների բազմազանության հիմնական պատճառը պատմագրությունը բացատրում է մեր մասին հաղորդագրություն թողած օստարների լեզվահնչյունական առանձնահատկություններով, ինչպես նաև անվանումների լեզվական աղավաղումներով: Սակայն այդ բազմազանության հիմնական պատճառը Հայաստանի մ.թ.ա. VI-II հազարամյակի սոցիալ-քաղաքական կացությունն էր, այն է՝ վաղ պետություն, երբ խարիսկել էր նախնադարյան անմիջական կառավարման համակարգը, բայց չէր ձևավորվել հասուն ու կայուն պետություն: Վաղ պետության քաղաքական կացության հիմնական գիծն անկայունությունն է: Հետևաբար, անընդհատ վերացող և վերաստեղծվող նոր քաղաքական ուժառերում ու դաշինքներում հաստատվում էր ինչ-որ մեկ արքայի կամ ցեղախմբի գերիշխանություն, որն ուներ իր ցեղային անվանումը:

Պատմական աղբյուրների միջոցով մեզ հասած տեղեկությունները հայկական ցեղային միությունների և վաղ պետությունների, դրանց քանակի և անվանումների վերաբերյալ ընդամենը կցկտուր տվյալներ են ընդհանուր պատկերի մասին: Երկու հազարամյակի ընթացքում հաստատապես Հայոց աշխարհում ձևավորվել և իրար հերթափոխել են շատ ավելի մեծ թվով վաղ պետական կազմավորումներ, սակայն դրանցից միայն նրանց վերաբերյալ տվյալներն են հասել մեզ, որոնք շփվել են զիր ունեցող հարևան քաղաքակրթությունների հետ: Հետևաբար, Հայկական քարձրավանդակի քաղաքական պատմությունն այս շրջա-

<sup>1</sup> Տե՛ս Տեղյան Անժելա, Հայաստանն արարշագրության և քաղաքակրթության բնուրյան: - Եր., Ուկան Երևանցի, 2011, էջ 59:

<sup>2</sup> Տե՛ս նոյն տեղը, էջ 59:

նում իրենից ներկայացնում է իրար հաջորդող վաղ պետությունների հերթափոխ: Քաղաքական այս կացությունը հաղթահարվեց, և առաջին համահայկական պետությունը ձևավորվեց միայն մ.թ.ա. IX դարում:

Մ.թ.ա. III-II հազարամյակի իրար հերթափոխող վաղ պետական կազմավորումների քաղաքական անկայունությանը հակառակ՝ սոցիոնորմատիվ կարգավորման համակարգը համեմատաբար կայուն էր և պահպանողական: Կարգավորման այդ համակարգը, որն արդեն հավակնում էր լինել իրավական, սովորությին էր, իսկ նրա համբողանուր կարգավորիչ ձևը՝ սրբացված և պահպանողական բնույթ ունեցող կայուն սովորույթը: Միասնական լեզվամշակութային տարածքում այն դեռևս արդյունավետորեն կատարում էր իր դերը և համապատասխանում էր հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակին:

### 2.3. Արարատյան թագավորության իրավական համակարգը և իրավունքի ձևերի հիմնահարցը

Արարատյան թագավորության իրավական համակարգի հիմնահարցը հայագիտության չուսումնասիրված, իսկ որոշ դեպքերում նաև խեղաքյուրված հիմնահարցերից է: Խնդիրը այն էր, որ հիմնահարցը ընդհանուր պատմագրության մեջ գրեթե չի շոշափվել: Ուրարտագետների որոշ մասը կանգ է առել Արարատյան թագավորության սոցիալ-տնտեսական հարաբերությունների և նույնիսկ պետական կարգերի հիմնահարցերի հետազոտության վրա, սակայն ոչ իրավական համակարգի: Հետազոտողներից միայն Ա.Գ. Սուրբայանն է իր «Գոսудարство и право Урарту» (Երևան, 1963) աշխատության մեջ փորձել վեր հանել ուրարտական իրավունքի հիմնական գծերը: Աշխատության մեջ հեղինակը, վերլուծելով Արարատյան/Ուրարտական թագավորության իրավակայտ աղբյուրները, գալիս է այն եզրակացության, որ այս թագավորության իրավունքը ստրկատիրական իրավունք էր, որի կարևոր ինստիտուտը հողի «ստրկատիրական սե-

փականության իրավունքն էր»: «Մասնավոր սեփականության օրյեկտ էին ոչ միայն հողը և ստրկաները, այլև արդյունաբերական արհեստանոցները, որ պատկանում էին թագավորներին, տաճարներին, առանձին ստրկատերերին»: Այնուհետև Ա.Գ. Սուրբայանն առանձնացնում է ուրարտական իրավունքի որոշ ինստիտուտներ՝ հիմնականում քրեական ոլորտի, այն է՝ տաճարային սեփականության պաշտպանությունը, անեծքի քանաձների միջոցով մեզ հասած պատժական քաղաքականության որոշ տարրեր, հանցակցության, համապարտ քրեական պատասխանատվության ինստիտուտները:

Մեր օրերում իրատարակված հետազոտություններից ուրարտական իրավունքին է նվիրված Հ. Կարագեողյանի «Դիտողություններ բիայնական դատաստանագրքի կապակցությամբ» հոդվածը: Հեղինակը, վկայակոչելով Եզիպոտսի, Շումերի, Աքքաղի, Բաբելոնի, Հնդկաստանի, Իրանի օրենքների ժողովածուները ենթադրում է, որ «Բիահինին այդ երկրների շարքում բացառություն կազմել չեր կարող: Հավանաբար այնտեղ ևս գոյություն են ունեցել գործող օրենքներ, որոնք սակայն, համահավաք ձևով մեզ չեն հասել»<sup>1</sup>: Համեմատական-իրավական այդ վերլուծությունը շատ մակերեսային է, իսկ ստացված եզրակացությունը՝ հակագիտական: Չի կարելի համեմատել ուրարտական իրավունքը և հնդկական իրավունքը, որովհետև դրանք իրարից էականորեն տարբերվող սոցիալական կարգավորիչներ էին: Ընդ որում, Հնդկաստանը չուներ օրենք, նրա սոցիոնորմատիվ կարգավորման համակարգը կրոնաէթիկական էր: Այսպիսով, հեղինակը, վկայակոչելով հնդկական պայմանականորեն օրենքներ անունը ստացած Մանուի դիարմաշատրան, հաստատում է, որ Ուրարտուում կարգավոր դատաստանագիրը, որը սակայն մեզ չի հասել:

Որպեսզի կարողանանք վեր հանել Արարատյան թագավորության իրավական համակարգի ընդհանուր գծերը, անհրաժեշտ է նկատի ունենալ մի քանի հանգմանքներ, մասնավորապես՝ ա)

<sup>1</sup> Տե՛ս Հ. Կարագեողյան, նշված հոդվածը, էջ 338-342:

մշակութային տարածքի առանձնահատկությունները և դրանով պայմանավորված՝ սոցիոնորմատիվ կարգավորման մշակույթը (ըստ հնագիտական տվյալների), բ) Հայկական բարձրավանդակի հետուրատական շրջանի մշակույթը և դրանով պայմանավորված՝ սոցիոնորմատիվ կարգավորման առանձնահատկությունները, զ) Արարատյան թագավորության՝ որպես պետության ձևավորման առանձնահատկությունը և բնույթը, դ) Արարատյան թագավորների ներքին սոցիալ-դեմոքրաֆիկական քաղաքականությունը և սոցիոնորմատիվ մշակույթի միասնականացումը:

Արարատյան թագավորության մշակույթին նախորդած հայկական բարձրավանդակի մշակույթը հնագիտությունը բնութագրում է որպես մշակութային մեկ ընդհանրություն: «Հայաստանի ողջ տարածքով մեկ վաղ երկարի դարաշրջանում տարածված էր նոյն մշակույթը, որը, որպես կանոն, խմբավորվում է մշակութային մեկ ընդհանրության շրջանակներում (Հայաստանի վաղ երկարեղարյան մշակույթ, լճաշեն-մեծամորյան մշակույթ) և թվագրվում են վաղ երկարի համար ներկայումս ընդունված ժամանակագրության ընդհանուր սահմաններում, այն է՝ մ.թ.ա. XII/XI-IX/VIII դդ.»<sup>1</sup>: Ընդ որում, այդ ժամանակաշրացքում մշակույթը ապրել է տրանսֆորմացիայի վեց փուլեր, որոնք են ընկնում մշակութային համասեռ միջավայրի ձևավորման, ինտեգրման, երբեմն նաև տրոհման միտումներով<sup>2</sup>: Այդ փուլաբաժանման վերջին շրջանը մ.թ.ա. XVI դարի վերջին քառորդ - IX-VIII դդ. սահմանագիծն է, որը հնագիտությունը համարում է մշակութային համասեռ միջավայրի ձևավորման դարաշրջան, իսկ III հազարամյակից սկսած՝ այն մշակութային ինտեգրման չորրորդ փուլն էր:

Մ.թ.ա. II հազարամյակի առաջին կեսին հայոց լեռնաշխար-

հի հարավ, հարավարևմտյան և արևմտյան շրջաններում բնորոշ էին առավելապես քաղաք-պետությունները, մնացած մասերում՝ մորիլ, քոչվորական կամ կիսաքոչվորական կենսաձև ունեցող հանրություններով ցեղապետական կազմավորումները, որոնք իրենցից ներկայացնում էին «սաղմնային/սեզմենտար վաղ պետականություններ»: Այն, որ մ.թ.ա. II հազարամյակի երկրորդ կեսում վերջիններս արդեն հանդես են գալիս որպես որոշակի սահմաններ ունեցող, տարածքային պետական կազմավորումներ, վկայում են սեպագիր աղբյուրների հիշատակությունները Հայկական լեռնաշխարհի և այլ երկրների սահմանների վերաբերյալ<sup>3</sup>:

Ընդ որում, աղբյուրներն այս երկրների կառավարիչներին ու տիրակալներին բնորոշում են որպես արքաներ: Զիշ հավանական է, որ օտարամոլությամբ տառապող ասորաբելական թագավորներն իրենց թշնամի ժողովուրդների առաջնորդներին հենց այնպես կշնորհեին արքայի տիտղոսը: Սա խոսում է այն փաստի օգտին, որ այդ կազմավորումները ոչ թե առաջնորդություններ կամ ցեղապետություններ էին, այլ հանրային պետական իշխանություն մարմնավորող սուբյեկտներ, որոնց արքայական իշխանությանը վերապահվում էր աստվածատոր ծագում<sup>2</sup>:

Այսպիսով, Արարատյան թագավորության խալքյան հարստության գերիշխանության հաստատման սկզբին Հայաստանը քաղաքական տեսանկյունից պետական, վաղ պետական և նախապետական կազմավորումների համակցություն էր, իսկ մշակութային սահմանագիծն էր մշակութային միասնական բնութագրերով աչքի ընկնող

<sup>1</sup> Տե՛ս նոյն տեղը, էջ 65:

<sup>2</sup> Այս մոտեցմանը կողմնակից են նաև հնագիտները, որոնց կարծիքով «Առաջնավորական հանրությունների ընկալումներում արքայական իշխանությունն ասստվածատոր» էր և ամեն մի կառավարիչ չէ, որ կարող էր բնորոշվել այդ տիտղոսով: Արքայական գաղափարով ակնհայտորեն տիրակալության հանգամանքն էր շեշտում՝ անկախ նրանցից տիրակալությունը վերաբերում էր աշխարհի չորս ծայրերին, թե կոնկրետ մեկ հանրությանը: Ասել է թե, սեպագրերում իշխատակված արքաներին որպես առաջնորդ կամ ցեղապետ ներկայացնելը համարում են մերժապես անբոլյատրելի և չիմնավորված» (տե՛ս Ավետիսյան Պ.Ա., գիտ. դոկ. գիտ. աստիճանի հայցման նշված գեկուցումը, էջ 71):

<sup>1</sup> Տե՛ս Ավետիսյան Հ.Գ., Արարատյան դաշտավայրի մշակույթը Մ.Թ.Ա. XI-VI դդ., Է.00.03-«Հնագիտություն» մասնագիտությամբ պատ. գիտ. դոկ. գիտ. աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2002» էջ 9:

<sup>2</sup> Տե՛ս Ավետիսյան Պ.Ա., գիտ. դոկ. գիտ. աստիճանի հայցման նշված գեկուցումը, էջ 71:

նյութական և հոգևոր մշակույթ՝ իր տեղական առանձնահատկություններով<sup>1</sup>:

Այս ամենից կարելի է հանգել հետևյալ իրավական եզրակացության. մինչև Արարատյան/Ուրարտական համահայկական և միասնական պետության ձևավորումը Հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումների ու վաղ պետական կազմավորումների սոցիոնորմատիվ համակարգը բանավոր ու սրբացված սովորույթների կարգավորման տիրույթ էր, որը համապատասխանում էր նրանց սոցիալական, տնտեսական, տարածքային, էթնիկ առանձնահատկություններին: Առանձին պետական կազմավորումների իրավական սովորույթների տարրերությունները կարող էին բխել բնակչության էթնիկ-հոգևոր տարրերություններից՝ պայմանավորված և՝ տեղանքով, և՝ տնտեսական զարգացման աստիճանով: Համենայն դեպք մշակույթում նկատվող միտումն ինտեգրումն էր, որը ենթադրում էր նաև կրոնի, սովորույթների միասնականացում: Հետևաբար, Արարատյան թագավորության ժամանակագրության սկզբին սոցիոնորմատիվային կարգավորման համակարգն իր տարրերություններով հանդերձ ուներ միասնականացման միտումներ:

Այդ թագավորության անկման ժամանակի ելքային կացությունն արդեն ձևավորված հայ ժողովուրդն է՝ որպես միալեզու էթնիկ-մշակութային հանրություն: Հետևաբար, Արարատյան թագավորության ելքային սոցիոնորմատիվ կարգավորման համակարգը չէր ենթադրում էթնիկ բազմազանություն և տեղային առանձնահատկությունների բացարձակություն: Այս ելքային իրավիճակը, որն արդեն, ըստ պատմագրական աղբյուրների, անվիճելի փաստ է, գալիս է հաստատելու, որ Արարատյան թագավորության սոցիոնորմատիվ կարգավորման համակարգը գերազանցապես թեոկրատական սովորությային իրավական համա-

կարգ էր, որում գերակշռող կարգավորիչ ձևն իրավական սովորույթն էր: Դան նպաստող հանգամանքը մշակութային տարածքին բնորոշ ինտեգրացիոն գործընթացներն էին: Դա, անշուշտ, չի բացառում թագավորական իրավունքի համաժամանակյա գոյությունը, որի մասին կխսուենք ստորև:

Արարատյան թագավորության՝ որպես պետության կազմավորման ձևը կարելի է բնութագրել մեծամասամբ ռազմական-նվաճողական<sup>1</sup>, իսկ պետության բնույթը՝ որպես արևելյան միահեծանություն՝ «անսահմանափակ» թագավորական իշխանությամբ: Այն, որ Արարատյան թագավորության առաջացման ճանապարհը ռազմականն էր, հաստատվում է նաև հնագիտական հետազոտությունների արդյունքներով՝ համաձայն որոնց, սկսած XIII դարից, Հայաստանում ավելի հաճախ են դառնում «զինվորի բաղումները», ինչը վկայում է սոցիալական նոր խավի ձևավորման, ինչպես նաև ռազմականացված հասարակությունների առաջ գալու մասին: Դա հաստատում է, որ պատերազմներն ու ռազմաարշավանքները լեռնաշխարհը բնակեցնող հանրությունների կյանքում հսկայական տեղ են զբաղեցրել՝ վերածվելով տարածաշրջանի հասարակական զարգացումների վրա ազդող հիմ-

<sup>1</sup> Գրականության մեջ առանձնացնում են պետականածագման երեք գխավոր ճանապարհներ՝ ռազմական, արհստոկրատական, պլոտոկրատական (տե՛ս Կубբել Լ.Ե. Очерки потестарно-политической этнографии. М., 1988, с. 134; Վենգերով Ա.Բ. Куббель Լ.Е., Першиց Ա.И. Этнография и науки о государствстве и праве //Вестник А.Н. СССР, 1984, ном. 10, с. 91, История первобытного общества. Эпоха классообразования. М., 1988, с. 234-237): Արհստոկրատական ճանապարհի համար բնութագրական է տոհմացեղային ավագանու աստիճանական վերածում քաղաքականացնելու կազմակերպված ուժի՝ հանրային իշխանության, որը մենաշնորհում է տնտեսական, դավանաբանական, զինվորական գործառույթները, իսկ շարքային համայնականները դառնում են քաղաքականացած ու տնտեսապես կախյալներ (տե՛ս Проблемы общевой теории права и государства. Под общ. ред. В.С. Нерсесянца. М., 1999, էջ 119): Պլոտոկրատական ճանապարհ ենթադրում է մարդկանց մեծ խմբի միավորումը «մեծ մարդու» շուրջը, մարդու, որից ամբողջ խումբը տնտեսապես կախված է: Համահայկական պետության ձևավորման համար այս ճեղ բնութագրական չէր կարող լինել: Գուցե ավելի փոքր տարածքով պետական կազմավորման համար այն ընդունելի է, սակայն ոչ համահայկական պետության:

<sup>1</sup> Ընդ որում տեղական առանձնահատկությունների համար հիմք են համարվում թաղման ծիսակարգերի և դամբարանների տարրերությունները, որոնք երևի թե բոլոր տեսակի ծիսակարգերից ու սովորույթներից ամենապահպանողական ուլորտ են:

նական գործոնի<sup>1</sup>:

Արարատյան թագավորությունը շիֆրով կամ վաղ պետական կազմավորում չէր, այլ հասուն պետություն՝ հանրային իշխանական կենտրոնական կառույցով և տեղական կայազորային-ամրոցային կառավարման համակարգով: Այստեղ պետական իշխանությունը հասել էր իր իշխանական լիազորությունների գագարնակետին՝ բացարձակ միապետության, ինչը հաստատում են նաև քագավորության արքաների տիտղոսները: Սակայն միևնույն ժամանակ, բացի ռազմահարկադրական գործոնից պետության կայացման ու կայունացման գործում էական դեր էին խաղում նաև ուխտ-պայմանագրերը նվաճված երկրների արքաների և առաջնորդների հետ, որոնց վավերացման իրավական ձևերից էր արձանագրությունը, օրինակ՝ «Միերի դռան»:

Այս հանգամանքը և ձևավորվող միասնական (ներառյալ նաև սովորության) մշակույթը չէին խթանում Խալլյան արքայատոհմի իրավական ինտերվենցիան տեղական սովորույթների ոլորտ: Նվաճված խայտարդես ցեղախմբերի, կազմավորումների աստվածների ընդգրկումը աստվածային դիցարան նշանակում էր տերունական կենտրոնական իշխանության կողմից տեղական իրավական սովորույթների լեզիտմության ճանաչում: Սակայն դա չէր կարող խանգարել արքունական թագավորական իրավունքի ձևավորմանը: Թագավորական կարգավորումն անխուսափելիորեն գոյություն ուներ, բայց դրանում գերակշռում էր անհատական իրավական կարգավորման մակարդակը, իսկ նորմատիվ կարգավորիչ ձևը՝ թագավորական ընդհանուր հրովարտակների միջոցով, իր կարգավորման առարկայով առնչվում էր միայն կարեռագույն քաղաքական, տնտեսական ոլորտներին, չուներ համընդգրկուն կարգավորիչի նշանակություն, այլ միայն դրվագային, Էպիգոնիկ, սրված հասարակական հիմնախնդիրներին էր վերաբերում:

Այսպիսով՝ ի տարբերություն միջագետքյան քաղաքակրութ-

յան, որն իր տնտեսական և քաղաքական կազմակերպության, ինչպես նաև քաղաքների զարգացման մակարդակով մոտ երկու հազարամյակ առաջանցիկ էր, Արարատյան թագավորությունում տնտեսական հարաբերությունների և հատկապես մասնավոր սեփականության ինստիտուտի թերզարգացվածությունը, քաղաքային բնակավայրերի կործանումն ու նոր ուրարտական քաղաքների կառուցումը, ինչպես նաև միասնական մշակույթը, ենթադրվում է նաև միալեզվության ու սովորույթների նույն էրնիկական հիմքերը չէին խթանում քաղաքականացված օրենսդրական-նորմատիվ կարգավորման զարգացումը:

Երեւ մ.թ.ա. 500 թ. Բարելոնի բնակչությունը հաշվվում էր 500 հազար, Եկբատանինը՝ 200 հազար, Աբենքինը՝ 150 հազար<sup>1</sup>, ապա Արարատյան դաշտի ամենախոշոր քաղաքի բնակչությունը չէր գերազանցում 20 հազարը: Այս քանակով բնակչության հարաբերությունները կայազորային-ամրոցային կառավարչական կենտրոն քաղաքի պայմաններում շատ հեշտորեն կարող էր կարգավորվել նաև անհատական իրավական մակարդակով՝ անշուշտ հիմքում ունենալով դաշտանաբանական գաղափարախոսությունը, նախնիների ավանդույթներն ու սովորույթները: Այս պատճառների ուժով իրավունքի համակարգման ձևը ոչ թե սովորության իրավունքի օրենսգրքայնացումն էր (կողիֆիկացիան), ինչպես Բարելոնում, այլ գրեթե անհատական, նեղ կարգավորմամբ թագավորական հրովարտակները, որոնց պաշտոնական պետական ամրագրումը երբեմն կատարվում էր ժայռաբեկորների, նոր կառուցված շինությունների գլուխացների ձևով:

Հասարակական հարաբերությունների հիմնական մասի կարգավորիչը մնում էր սովորության իրավունքը, որի տեղայնական մնացուկների դեմ էր ուղղված Արարատյան թագավորների ասիմիլյացիոն քաղաքականությունը: Արձանագրություններում

<sup>1</sup> Տե՛ս Ավետիսիան Պ.Ս., գիտ. դոկ. գիտ. աստիճանի հայցման նշված գեկուցումը, էջ 65-66:

<sup>1</sup> Տե՛ս Սոլոմատին Ա.Յ., Всемирная история государства и государственного управления, М., Норма, 2013, с. 27:

հազարավոր սպանվածների, տեղահանվածների ու վերաբնակեցվածների մասին փաստը վկայում են, որ կենտրոնական տերության իշխանության ընդդիմացողները վերացվում էին, իսկ հնագանդները կենդանի էին թողնվում: Սակայն, որպեսզի սրանք գրկվեն հետագայում դիմադրություն ցույց տալու տեղական նպաստող պայմաններից, քագավորական իշխանությունը կազմակերպում էր նրանց տեղաշարժը պետության այլ տարածքներ: Այս տեսանկյունից Արարատյան քագավորությունն իրենից ներկայացնում էր մշակութային խառնարան, որի վերջնարդյունքը (պատրաստուկը) հայ ժողովուրդն էր՝ որպես եթնիկ կազմավորում: Այդ խառնարանը սոցիալ-իրավական տեսանկյունից ներկայացնում է պետական-իրավական սոցիալիզացիայի քաղաքականություն, որը մի քանի հարյուրամյակի ընթացքում հանգեցնելու էր նաև տեղական սովորությունների տարբերությունների եթև ոչ վերացմանը, ապա գոնեն նվազեցմանը:

Այսպիսով, թագավորությունը, լինելով հզոր և հասուն պետություն, կարող էր իրականացնել օրենսդրական լայն իշխանություն՝ իրականացնելով նաև օրենսդրության և սպորտությների համակարգում՝ կողմիցիկացիայի ձևով։ Սակայն էքնիկ-մշակութային, լեզվական միասնության ու աստվածային դիցարանի վերաբերյալ ուխտի առկայության պայմաններում իրավական ոլորտում պետության իրավաստեղծագործությունը ձեռք էր բերում դրվագային, էպիկոդիկ բնույթ՝ լայն տեղ բողնելով ինչպես արքունական, այնպես էլ տեղական կայազորային-տաճարային մարզային կառավարչների ու փոխարքաների անհատական իրավական կարգավորմանը<sup>1</sup>:

Նախորդ շրջանի հայկական վաղ պետական կազմավորումների անկայունության փողոքը, ինչպես նաև պետահոգավական

<sup>1</sup> Իրականում օրենսդրությունը ստցիալական, մշակութային զարգացման բարձր մակարդակ պահանջող քաղաքական ռազմավարության լուրջ միջոց է, որը հասարակական կարգն ապահովող երկարատև գործոն է, ինչպես նաև քաղաքական գերիշխանության համակարգը կայունացնող հատուկ իրավաբանական միջոց (տե՛ս Проблемы общей теории права и государства. Под общ. ред. В.С. Нерсесянца. М., 1999, էջ 123):

խորաբափանցությունն Արարատյան քագավորներին հուշում էր, որ օրենսդրական իրավական ձևերը քիչ արդյունավետ, առասպելաբանական-սովորությային հոգևոր արժեքների համակարգում դժվարությամբ ներդրվող, երկար ժամանակ պահանջող քաղաքական սոցիալիզմացիայի միջոց են: Դրան հակառակ՝ սոցիալական տեղաշարժերի խառնարանի քաղաքականությունը հասարակության քաղաքական-իրավական սոցիալականացման ավելի արագ և արդյունավետ միջոց էր՝ պայմանավորված հանրային իշխանական կառույցների հզրությամբ: Այս առումով այդ քաղաքականության հետևանքը իսկապես նվաճում էր՝ ի դեմս հայ ժողովրդի՝ որպես էթնիկ հանրության ձևավորման:

Այսպիսով, Արարատյան թեոկրատական թագավորության իրավական համակարգը սովորութային իրավական համակարգ էր, որի գերակշռող իրավական ձևն իրավական սովորություններն էին, ինչպես նաև թագավորական իրավունքը: Կարգավորման համակարգում կարևոր դեր էին խաղում կրոնական բնույթի միջոցներ՝ տարուները, ուխտախոսությունները, երդումը, աճեծքը<sup>1</sup>:

Արարատյան թագավորական իրավունքի վերաբերյալ տեղեկույթի հիմնական կրողն արքայական արձանագրություններն են: Այդ արձանագրությունների մի մասն ունի գուտ իրավական նշանակություն, կատարում է թագավորական հրովարտակների դեր: Հետազոտողները այդ փաստը նկատել են դեռ անցյալ դա-

<sup>1</sup> Կրոնական ցանկացած կազմակերպություն (Եկեղեցին) առաջին հերթին իրականացնում է հոգևոր-կրոնական, դավանաբանական գործառույթ: Սակայն Եկեղեցին հասարակության քաղաքական-իրավական համակարգում տարրեր դարաշրջաններում ունեցել է տարրեր դերակատարություն: Քաղաքական-իրավական համակարգում կրոնական կազմակերպությունների դերակատարության, ինչպես նաև պետության որպես քաղաքական համակարգի հիմնական սուբյեկտի և Եկեղեցու փոխհարաբերություններն անցել են պատմական երեք տիպ: ասովածապետություն (Քենոքատական պետություն), կերպական (կրոնականացված) պետություն և աշխարհիկ պետություն: Առաջին երկու տիպերում կրոնական կազմակերպությունը քաղաքական-իրավական համակարգում կատարում էր լիիրավ սուբյեկտի դեր: Նրա կրոնադավանաբանական գործառույթը գուգակցվում էր քաղաքականով, իսկ կրոնական կանոնները կատարում էին հասարակական հարաբերությունների հոգավածան և սովորույթի ուժը:

րում: «Զրանցքներ անցկացնելու մասին որոշ արձանագրություններ ոչ միայն ուրարտական բազավորներին փառաբանող հուշարձաններ էին, այլ ունեին որոշակի պաշտոնական իրավաբանական ուժ, որ սահմանում էր բնակչության իրավունքը՝ օգտվելու ջրանցքի այս կամ այն մասից»<sup>1</sup>:

Արձանագրությունների մյուս մասը, չունենալով իրովարտակի կարգավիճակ, մեր օրերում կատարում է իրավահայտ աղբյուրի դեր: Այդ արձանագրությունների բովանդակության վերլուծությունից կարող ենք վեր հանել Արարատյան բազավորության իրավական համակարգի մի քանի սկզբունքներ, ինչպես նաև որոշ ինստիտուտների բովանդակությունը: Դրանցից մի քանիսի հիմքում, անշուշտ, ընկած են սովորության իրավունքի նորմերը: Արձանագրությունների բովանդակությունից Ա.Գ. Սուրբիասյանը հիմնավորել է տաճարային սեփականության իրավունքի պաշտպանության ինստիտուտը, ինչպես նաև դրդիչ՝ որպես հանցագործության սուբյեկտի ճանաչումը և համապարտ պատասխանատվության սկզբունքը: Հ. Կարագեոյյանը վեր է հանել թագաժառանգի և արքայորդիների արքունանիստ քաղաքից դուրս տեղակայված վայրում բնակվելու ինստիտուտները, բազադրման կարգը, զոհաբերության կարգը, բիայնական դիցարանի կարգավորումը, տուգանքի՝ որպես պատասխանատվության միջոցի գոյությունը:

Սակայն երկու հեղինակներն էլ ունեն մեթոդաբանական բացրողումներ: Ա.Գ. Սուրբիասյանը թագավորության իրավունքը համարում է սորուկատիրական իրավունք, այսինքն՝ սորուկատեր դասակարգի կամք՝ բարձրացված օրենքի աստիճանի, իսկ Հ. Կարագեոյյանն արձանագրությունների իրավական բովանդակությունը և կարգավորիչ նշանակությունը դիտարկում է որպես բիայնական օրենսգրքի առկայության հաստատում: Այս մոտեցումներից առաջինն անընդունելի է այն հիմնավորմանը, որ Հա-

յաստանում այս շրջանում չեր կարող լինել զարգացած սորուկատիրական հարաբերությունների համակարգ, ինտևարար հասարակական արտադրանքի գերակշռող մասը չեր կարող հանդիսանալ սորուկի աշխատանքի արդյունք: Հայկական բարձրավաճակում սորուկությունը չուներ բնակլիմայական և տնտեսական նախադրյալներ: Հետևարար հասարակական հարաբերությունների ամբողջությունը կարելի է որպես ավելի շատ արևելյան արտադրաեղանակ, քան սորուկատիրական:

Հ. Կարագեոյյանի մոտեցման մեջ համեմատական իրավական մեթոդի մեխանիկական կիրառման մասին արդեն խոսել ենք: Այսուղի կանգ առնենք հեղինակի կողմից արձանագրային իրավական տեղեկատվության ոչ ճիշտ մեկնաբանության վրա: Օրինակ՝ Կարմիր բլուրից հայտնաբերված մի կավե սալիկի արձանագրություն այս հեղինակը կարդում է հետևյալ կերպ: «Թարան՝ ծառան իշխանութու, (մի) աղջիկ առևանգեց (և) ոչ (մի) փախիատուցում (չի) տուել: Այժմ ասուածը կատարի՛ր, (մարդ) ուղարկի՛ր, բեր, տու՛ր»<sup>1</sup>: Ինքը՝ հեղինակը այս արձանագրությունը համարում է դատական կարգադրություն, սակայն դրա տվյալների հիման վրա եզրակացնում է, որ «աղջիկ առևանգելու և նրա հետևանքները վերացնելու վերաբերյալ բիահնելում զոյություն է ունեցել կանոնակարգված ինչ-որ մի փաստաբուղթ, որով և առաջնորդվել են նման հարցերը լուծելիս»: Միայն անհատական կարգադրության առկայությունը չի նշանակում օրենսգրքի առկայություն:

Պետք է նկատի ունենալ, որ իրավական կարգավորումը հանդես է գալիս երկու մակարդակով՝ անհատական և նորմատիվ: Անհատական կարգավորումն իրականացվում է կառավարման և կարգավորման սուբյեկտի կողմից կոնկրետ դեպքի վերաբերյալ անհատական որոշում ընդունելու միջոցով: Այդ որոշումը վերաբերում է միայն տվյալ դեպքին և դրա կոնկրետ մասնակից:

<sup>1</sup> Տե՛ս Հ. Կարագեոյյան, նշված հոդվածը, էջ 342-343:

<sup>1</sup> Տե՛ս Սոֆրանենկո Կ.Ա., Общественно-политический строй Урарту, МГУ, 1961, с. 22, 32-33:

Աերին: Այդ որոշումն ունի մեկանգամյա կիրառում և չի ազդում հետագայում կատարված արարթների վերաբերյալ գործերի վրա: Նորմատիվ կարգավորումն իրականացվում է սոցիալական նորմերի օգնությամբ: Սոցիալական նորմերը (սովորույթներ, ավանդույթներ, իրավական, բարոյական, կրոնական նորմեր և այլն) հասարակական հարաբերությունները կարգավորող ընդհանուր բնույթի նմուշային վարքագծի կանոններ են: Դրանք ուղղված են յուրաքանչյուրին և բոլորին, դրանց հասցեատերերն անհատականացված սուբյեկտները չեն: Նորմատիվ կարգավորման առաջացմամբ անհատական կարգավորումը չի անհետանում, այլ մրցում է հետ: Այսինքն՝ անհատական կարգավորումն իրականացնում են տեղերում սոցիալական նորմերի հիման վրա<sup>1</sup>:

Հնարավոր է, որ աղջիկ փախցնելու ինստիտուտն ունենա նորմատիվ կարգավորում: Սակայն այդ կարգավորումը կարող է լինել սովորության նորմատիվ, այլ ոչ թե օրենսդրական նորմատիվ: Մենք գիտենք, որ հայկական սովորության իրավունքում դա ամուսնության ընդունված ձևերից մեկն էր, որն օրինական էր համարվում մինչև հայ քրիստոնեական եկեղեցու կանոնատեղծ գործունեության ծավալումը, որի արդյունքում առևանգման միջոցով ամուսնությունն արգելվեց:

Արարատյան բագավորության նորմատիվ արձանագրությունների մեջ կարելի է առանձնացնել երկու տեսակ նորմատիվ ակտեր՝ ուխտ-դաշինքներ և նորմատիվ կարգադրագրեր (օրենքներ): Անեծքի բանաձեռքը նորմատիվ կարգադրագրեր չեն, այլ արձանագրության մեջ առկա նորմատիվ կարգադրագրի կատարման երաշխիք: Ուխտ-դաշինքի ամենացայտուն օրինակը «Մերի դուռ» ժայռի վրա արված արձանագրությունն է: Այդ արձանագրությունում, որը կազմել են Իշպուինի բագավորը և Իշպուինի առաջնորդի Մենուան, նշված են ուրարտական պանթեոնի բոլոր աստվածները և ամեն մեկին մատուցվելիք զոհաբերվող անասունների քանակը: Արձանագրության տվյալներից երևում է, որ

ուրարտական դիցարանի մեջ մտնում էին մեծ ու փոքր 79 Աստված: Դա երևի թե աշխարհի ամենամեծ պանթեոնն է, որը նոյնիսկ կարող է զարմանք առաջացնել: Հետազոտողներն արդեն նկատել են, որ Իշպուինին և նրա բագաժառանգ որդին դիմել են քաղաքական քայլի՝ դիցարանի մեջ ներառելով բուն բիայնական և նվաճված կամ դաշնակից երկրների աստվածներին՝ պետության սոցիալական հիմքերի գաղափարական միասնությունն ապահովելու համար:

«Մերի դուռ» վրա փորագրված արձանագրությունը կատարված է երկու նոյնանման սյունակներով: Այդ արձանագրությունը դիտարկվում է որպես Իշպուինի և նրա որդու կազմած տեքստ՝ հրամանագիր: Սակայն արձանագրության երկու սյունակներից 1-ինի 2-րդ տողի մի մասը և համապատասխանաբար 2-րդ սյունակի 2-րդ և 3-րդ տողերը հեղինակները չեն կարողանում ընթերցել:

### 1-ին սյունակ՝ 2-րդ տող

... Isruuinihise inili KA zaaduuali teruni ardice UTU ITU asuse manuse ...

### 2-րդ սյունակ՝ 2-րդ տողի վերջ և 3-րդ տող

... zaatuuli teertu ardice UTUnini ITU asuuse maanuse ...

Այս տողերի ընթերցման բարդությունը պայմանավորված է նրանով, որ անհնար է վերծանել «ardise UTU-(nini) ITU asuse manuse» բառակապակցության ճիշտ և հասկանալի իմաստը: Գ.Ա. Մելիքաշվիլու կարծիքով հնարավոր է, որ այստեղ նշվում է զոհաբերության ամենամսյա իրականացման պարբերականություն<sup>1</sup>: Նրա կողմից այսպիսի ենթադրության հիմքը «ITU» - ամիս բառի առկայությունն է տեքստում:

Ինչ վերաբերում է առաջին սյունակի 2-րդ տողի «zaaduuali teruni» և 2-րդ սյունակի «zaatuuli teertu» բառակապակցություններին, ապա հետազոտողները կարծում են, որ դրանք ոչ թե ուրար-

<sup>1</sup> Տե՛ս Արյունյան Հ.Վ., Կորպս урартских клинообразных надписей, Ереван, 2001, էջ 51:

<sup>1</sup> Տե՛ս Ա.Գ. Վաղարշյան, Պետության և իրավունքի տեսություն-2..., էջ 13-14:

տական լեզվի, այլ Մուսասիրի որևէ բարբառի արտահայտությունն են:

Իր հերթին Ն. Հարությունյանը ենթադրում է, որ այստեղ առկա է բառերի շփոթ, որով լիքն են ուրարտական արձանագրությունները, և բացատրում է դա փորագրողների անուշադրությամբ կամ գրագիրների կիսագրագիտությամբ<sup>1</sup>: Եթե ելնենք այս հանգամանքից, ապա առաջանում է խնդիր. Արարատյան թագավորությունում պաշտոնական լեզուն և խոսակցական լեզուն տարբերվում էին: Միայն դրանով կարելի է բացատրել թագավորական գրագիրների կիսագրագիտությունը: Եթե դա այդպես էր, ապա պաշտոնական լեզուն լավ չիմացող գրագիրը պետք է օգտագործեր իր սեփական խոսակցական լեզուն, այն է՝ հայերենը: Ընդ որում, սյունակները փորագրող գրագիրներից ամեն մեկն օգտագործել է իր բարբառային ձևը: Հենց դրանով կարելի է բացատրել սյունակների նշված տողերում առկա տարբերությունները: Նշանակում է երկու սյունակների այդ երկու տողերի որոշ բառեր պետք է փորձել կարդալ հայերեն:

ardise - ըստ ուրարտական լեզվի լեքսիկոնի նշանակում է ուժ, իշխանություն, իրաման:

UTU - ասորական հետերօգրամա է, որ նշանակում է Շամաշ - «Արևի Աստված»: Արևով երդվելը հայերի մեջ ամենատարածված երդումներից է: Տեքստում այս հետերօգրաման չի նշանակում Շամաշ, այլ արև կամ էլ Արևի Աստված:

ITU - ասորական հետերօգրամա է, որ նշանակում է ամիս:

asuse - հանդիսավորություն, պաշտոնականություն:

manuse - բող լինի (եղնի այդպես) ստիպել լինել (այդպես), այսինքն՝ պարտադիր կարգ:

Եթե փորձենք կարդալ առաջին երեք տողերը, ապա կստացվի հետևյալը. «Խալդի Աստծուն Սարդուրդի արքա Իշպուինին, Իշպուինիառդի Սենուան այս դարպասները կառուցեցին, արևի (կամ Արևի Աստծոն) ամսին զամանակում (zaatuuli teertu) բող լի-

նի տոնակատարության (հանդիսավորություն) պաշտոնական (իշխանական) կարգը Խալդի, Թեյշերա, Շիվինի և մնացած աստվածներին»: Կարծում ենք որ «zaatuuli teertu» կամ «zaaduuali teruni» բառակապակցությունները հայերեն արմատներով բառակապակցություններ են:

«Zaa duuali ter uni» բառակապակցության մեջ հստակ երևում են հայերեն արմատները: «Zaa» - զատ՝ այսինքն՝ մեկ առ մեկ: «Duu ali» - դավել (պայմանավորվել), հավատալ, դաշնել, դաշինք կնքել: Ուսւերենում կա «договор» - բառացիորեն նշանակում է խոսք տալ, պայմանավորվել ինչ-որ բանի վերաբերյալ: «Ter» - տերունական, որ նշանակում է պետական: «Uni» - ունի, ունիա, որ նշանակում է միասնություն, միություն: Առաջին սյունակի «zaa duuali ter uni» բառակապակցությունը հայերեն նշանակում է՝ «մեկ առ մեկ խոսք տվեցին (պայմանավորվեցին) տերունական միասնության, միության»: Այսպիսով՝ 1-ին սյունակի առաջին երեք տողերի համար կստանանք հետևյալ միտքը. «Խալդի Աստծուն Սարդուրդի արքա Իշպուինին, Իշպուինիառդի Սենուան այս դարպասները կառուցեցին, արևի (կամ Արևի Աստծոն) ամսին մեկ առ մեկ խոսք տվեցին (պայմանավորվեցին) տերունական (պետական) միության. Բող լինի տոնակատարության (հանդիսավորության) պաշտոնական (իշխանական) կարգը (իրամանը) Խալդի, Թեյշերա, Շիվինի և մնացած աստվածներին»:

«Zaa tuuli te eertu» բառակապակցության մեջ ևս հստակ երևում են հայերեն արմատները: «Zaa» - զատ՝ այսինքն՝ մեկ առ մեկ: «tuuli» - տոուալ, տալ: «Te» - նոյն արմատն է ինչ որ մյուս սյունակի «ter»-ը և նշանակում է տերունական, պետական: «Ertu»-ն անկասկած հայերեն երդ(թ)ումն է: Հետևյալ երկրորդ սյունակի «zaa tuuli te eertu» բառակապակցությունը հայերեն նշանակում է՝ «մեկ առ մեկ տվեցին տերունական (պետական) երդում»:

Ստացվում է հետևյալ միտքը «Խալդի Աստծուն Սարդուրդի արքա Իշպուինին, Իշպուինիառդի Սենուան այս դարպասնե-

<sup>1</sup> Տե՛ս նոյն տեղը, էջ 48:

ըր կառուցեցին, արևի (կամ Արևի Աստծո) ամսին մեկ առ մեկ տվեցին տերունական (պետական) երդում. թող լինի տոնակատարության (հանդիսության) պաշտոնական (իշխանական) կարգը (հրամանը) Խալիի, Թեյշեբա, Շիվինի և մնացած աստվածներին»:

Այսպիսով, «Սիերի դրան» արձանագրությունը ներքաղաքական ուխտ-դաշինք էր, նորմատիվ պայմանագիր, որի նպատակն էր դավանաբանական դիցարանի կարգավորման, բիայնական Աստվածների հետ միասին դիցարանում նվաճվածների ու կամավոր միացած դաշնակիցների աստվածներին ներառելով՝ ամրապնդել պետության միասնությունը, դավանաբանական միասնության միջոցով հասնել քաջավորության սոցիալական հիմքերի ամրապնդման:

Դաշնագրի կատարումն ուներ երկու երաշխիք՝ նախ կրոնական երդումը, ուխտախոսութումը, երկրորդ՝ քաջաժառանգի ներկայությունն այդ արարողությանը: Դա երաշխիք էր, որ ապագայում տեղի չէր ունենա դաշինքի-ուխտի խզում, լուծում: Հավանաբար դաշինքի կնքման արարողությանը մասնակցել են նաև դաշնագրում թվարկվող աստվածներին դավանող ընդհանրությունների պաշտոնական աշխարհիկ և հոգեոր ներկայացուցիչները, և նրանք ևս տվել են երդում-խոսութում: Դրանով պետք է քացատրել «զատ» -մեկ առ մեկ շեշտադրումը:

Կրոնական դիցարանի կարգավորումը ենթադրում էր նաև սոցիոնորմատիվ համակարգի կարգավորում: Շանաչելով բիայնական գերիշխանության տակ անցած տարածքների Աստվածներին, պետական իշխանությունը միաժամանակ լեզվացնում և լեզիտիմացնում էր նաև տեղական կրոնաիրավական սովորություններն այն ոլորտներում, որոնք չին մտնում բիայնական արքաների իրավասության շրջանակի մեջ: «Սիերի դրան» արձանագրությունը սոցիոնորմատիվ կարգավորման համակարգում կատարում էր հիմնադիր նորմատիվ պայմանագրի - օրենքի (արդի եզրութաբանությամբ՝ սահմանդրության դեր), որն ընդունվել է

մ.թ.ա. 825-810 թթ. միջակայքում՝ Իշպուինի արքայի օրոք:

Իշպուինի հայրը՝ Սարդուրի Առաջինը (մ.թ.ա. 845-825 թթ.) հիմք դրեց Նահրի-Բիայնայի հզորությանը, հիմնադրեց մայրաքաղաք Վանը, ընդարձակեց պետության սահմանները: Հզորացող պետության բարենորոգչական գործընթացներից մեկն էլ «Սիերի դուռ» հիմնադիր նորմատիվ ուխտ-օրենք-դաշինքի ընդունումն էր:

**2.3 Հայաստանի սոցիոնորմատիվ կարգավորման համակարգի հիմնական գծերը մ.թ.ա. VI դարից մինչև մ.թ. III դարը:** Քննարկվող ժամանակաշրջանի սոցիոնորմատիվ կարգավորման համակարգի հիմնական գծերը պարզաբանելու համար, մեր կարծիքով, կարևոր նշանակություն ունեն հայ ժողովրդի՝ որպես էքսոմշակութային հանրության ձևավորման գործընթացը և քաղաքական կառավարման, ներառյալ պետականության կեցությունն ու բնույթը:

Տեղկրատական սովորութային իրավական համակարգի սոցիալական հիմքը էրնիկ կրոնական հատկանիշով միավորված պահպանողական հասարակությունն է: Այդպիսի իրավական համակարգն անպայման չի ենթադրում էրնիկ միատարրություն: Հնարավոր են նաև տարակենոս հասարակություններ՝ սովորութային իրավական համակարգով, որի քաղաքական հիմքը համարաշնորհ է կամ համաճայնությունը (կոնվենցիան): Այս դեպքում փոքրամասնություն կազմող կամ ենթարկված էրնուսները պահպանում են իրենց ներքին իրավական ինքնավարությունը: Սակայն տարակենոս հասարակության մեջ դեպքերի մեծագույն մասում, սոցիալ-տնտեսական զարգացմանը զուգընթաց, վաղ թե ուշ առաջ են գալիս իրավունքի գրավոր համընդգրկուն ձևեր, որպես կանոն, օրենսգրքեր կամ դատաստանագրքեր, որովհետև սովորությունների տարբերվող բովանդակությունը արգելակում է հասարակական կարգավորման համակարգի գործողությունը, ծնում նորմատիվ կարգավորումների բախումներ՝ ան-

հատական կարգավորում իրականացնող սուբյեկտին դնելով կենսական դեպքի լուծման նորմատիվ հիմքի երկրնտրանքի առաջ:

Իրավունքի գրավոր ձևերի առաջ գալու հիմնահարցն անմիջական կապ ունի հայ ժողովրդի ծագման ժամանակագրության հետ: Հայ պատմագրության մեջ ընդունված էր հայ ժողովրդի կազմավորման ավարտը համարել մ.թ.ա. II դարը, երբեմն՝ մ.թ.ա. IV դարը:

Պատմաբանների մի մասը շրջանցում է այդ հիմնահարցը: Ինչպես ամեն մի ժողովրդի, այնպես էլ հայ ժողովրդի ձևավորումը պետք է ունենա քաղաքական, տնտեսական, գաղափարական նախադրյալներ: Ընդ որում, նախադրյալներն իրենց ժամանակագրությամբ պետք է նախորդեն հետևանքին՝ ժողովրդի կազմավորմանը: Եթե հայ ժողովրդի ձևավորման ավարտ համարենք մ.թ.ա. IV դարը, կամ էլ նույնիսկ մ.թ.ա. III դարի սկիզբը, ապա կստացվի, որ ժողովրդի ձևավորումն ընթանում էր առանց քաղաքական նախադրյալների:

Արարատյան հարստության անկումից հետո (մ.թ.ա. VI դ.) Հայաստանը հայտնվեց Արեմենյան Պարսկաստանի գերիշխանության տակ՝ ընդգրկվելով XIII և XVIII սատրապությունների մեջ: Մինչ այդ՝ մ.թ.ա. 590-ից մինչև 521 թթ. Հայաստանում կառավարում էին Հայկազունների երկրորդ հարստության արքաները: Պարսկական տիրապետությունը տևեց մինչև մ.թ.ա. 330 թ. (շուրջ երկու հարյուր տարի): Պատմագրության համաձայն՝ պարսկական տիրապետության անկումից հետո Հայաստանում իշխում էին Հայկազուն-Երվանդյանների հարստության թագավորները: Մագնեսիայի ճակատամարտից (մ.թ.ա. 190 թ.) հետո հաստատվեց Արտաշեսյանների թագավորությունը, իսկ այնուհետև՝ Արշակունիների:

Ստացվում է, որ խորհրդային շրջանում հայոց պատմագիտության ձևավորած տեսակետը, թե հայ ժողովրդի կազմավորումն ավարտվել է մ.թ.ա. IV կամ մ.թ.ա. II դարերին, իրականութ-

յանը չի համապատասխանում: Եթե ժողովրդի կազմավորման ավարտի ժամանակաշրջանը համարում ենք մ.թ.ա. IV կամ III դարը, ապա գործընթացը պետք է սկիզբ առներ մի քանի դար առաջ՝ Արարատյան թագավորությունից: Բայց չէ՝ որ Արարատյան թագավորության անկումից հետո երկու հարյուր տարի հայ ժողովրդի կազմավորման գործընթացը չուներ քաղաքական նախադրյալ, որովհետև Արեմենյանները շատ ավելի շահագրգոված էին Հայաստանի մշակութային տրոհման, քան թե միասնականացման ու միատարրության հարցում: Ստացվում է, որ ժողովրդի՝ որպես էքնոմշակույթային հանրության ձևավորման գործընթացները եզրափակվեցին ընդամենը մեկ հարյուրամյակում՝ մ.թ.ա. III դարի ընթացքում, ինչը շատ անհավանական վարկած է:

Հետևաբար գիտականորեն ավելի ճիշտ ու հիմնավոր է հայ ժողովրդի կազմավորման ավարտը համարել Արարատյան թագավորության անկման շրջանը: Պատմագրական իրողությունները «վկայում են, որ Վանի՝ Արարատյան (Ուրարտու) թագավորության ժամանակաշրջանը հայկական պետականության, մշակույթի, գիտության, քաղաքաշինության ամրոցաշինության, դիցարանի, տնտեսության, արհեստագործության նորովի զարգացման կարևորագույն փուլերից էր»<sup>1</sup>:

Հետազոտության նախորդ մասում հիմնավորեցինք, որ Արարատյան թագավորների քաղաքականության կարևոր ուղղությունն էր բնակչության դավանաբանական-իրավական և էքնիկ-իրավական միասնականացումը, իսկ երբեմն՝ նաև քոնի ասիմիլացիան: Այդ քաղաքականությունը, որի սկիզբը դրվել էր ավելի վաղ, արդեն հանգեցրել էր հայ ժողովրդի կազմավորմանը՝ մ.թ.ա. VI դարում:

Այսպիսով, սկսած VI դարից՝ սկատմական Հայաստանի տարածքներում հայ ժողովրդի՝ որպես միասնական էքնոսի ձևավորումը արդեն իրողություն էր: Դա, իհարկե, չէր բացառում տեղա-

<sup>1</sup> Տե՛ս Գանիելյան Է.Լ., Մելքոնյան Ա.Ա., Հայոց պատմություն: Հնագույն ժամանակներից մինչև մերօք.- Եր., Զանգակ-97, 2008, էջ 39:

յին տարբերությունները: Ընդ որում, այդ էքսուր, Ստրարոնի վկայությամբ, մ.թ.ա. II դարում արդեն միալեզու էր: Այս հարցում շատ ավելի համոզիչ է Ս.Ս. Կրկյաշարյանի մոտեցումը, որ Աքեմենյանների տիրապետության բոթափմամբ «Երվանդունիների հայկական թագավորության էքնիկական հիմքը հայ ժողովուրդն էր, որի կազմավորման հազարամյա պատմաշրջանն արդեն իր ավարտին էր հասել: Երվանդունիների պետության առաջացումը պատմագրության մեջ հիրավի դիտվում է որպես հայ ժողովորդի կազմավորման ավարտված պրոցեսի քաղաքական ձևավորման մի նոր փուլ»<sup>1</sup>:

Կարելի է եզրակացնել, որ հայ ժողովորդի կազմավորման գործընթացը չէր կարող ավարտվել սատրապային կառավարման դարերում և դրանից հետո, որովհետև նման գործընթացը տարերային չէ: Դրանում էական դեր է խաղում քաղաքական-պետական գործոնը: Սատրապային կառավարումը դրան նպաստող գործոն չէր կարող լինել, որպեսզի հետագա դարում հանգեցներ մոնուքնիկ Հայաստանի ձևավորման: Նշանակում է՝ հայ ժողովորդի կազմավորման գործընթացը ավարտվել էր Արարատյան թագավորության օրոք:

Հայ ժողովորդի կազմավորումը և գերազանցապես միաէքնիկության հաստատումը էական նշանակություն ուներ նաև սոցիոնորմատիվ կարգավորման համակարգի համար: Միալեզու հայ ժողովուրդ հանրույթը ենթադրում էր նաև միասնական մշակույթ, այդ թվում՝ սովորութային: Միասնական սովորութային իրավունքը, որոշ մասնավոր հարցերում տարբերություններով հանդերձ, կատարում էր հասարակական հարաբերությունների կարգավորման գործառույթներ:

Սովորութային իրավունքը չէր բացառում սատրապային, իսկ այնուհետև, անկախության շրջանում՝ թագավորական իրավունքի գոյությունը և գործողությունը: Մրանց կարգավորիչ կշիռը և

ծավալը կախված էին պետական իշխանության ուժից և հեղինակությունից, որը միջոց էր տեղայնանալու միտում ունեցող սովորույթներին դրա մղելու և կարգավորման տիրույթը զավթելու համար: Այսպիսով՝ կախված պետականության բնույթից և պետական կառավարման ուժիմից, որի ձևավորման նախադրյալներ էին իրենց բնույթով օրյեկտիվ և սուբյեկտիվ արտաքին ու ներքին գործոնները, սոցիոնորմատիվ կարգավորման համակարգի երկու նորմատիվ շերտերի (իրավական ձևերի)՝ սովորույթի և թագավորական իրավունքի հարաբերակցությունը կարող էր փոխվել:

Ուժեղ և հեղինակավոր իշխանությամբ հասուն պետությունն ընդունակ էր ինսերվենցիա ձեռնարկելու սովորութային իրավունքի ոլորտ, դրա մղելու այն՝ աներսիայի ենթարկելով նրա կարգավորման տիրույթները: Սակայն, հենց միայն թագավորի անձի փոփոխությամբ բուլակամ արքայի իշխանության տարիներին կարող էր տեղի ունենալ տեղատփության, թագավորական իրավունքի նահանջ՝ հօգուտ սովորութային իրավունքի: Այդ գործընթացում ապակենտրոնացման միտումները կարող էին հանգեցնել նույնիսկ տեղական կառավարիչների (սարատեգուների - նախարարների) վարչատարածքային միավորներում տեղական իրավունքի ձևավորմանը:

Սակայն հարձակվող թագավորական և նախարարական իրավունքները շատ զգույշ էին վերաբերում իրավական սովորույթների կարգավորման տիրույթին, որովհետև ամեն մի ոտնագույթուն կարող էր դիտարկվել որպես սրբապղծություն, բնակչության շրջանում առաջացնել սոցիալ-կենցաղային անհարմարություն: Ըստ Էության, սովորույթը սոցիալական համատեղ կյանքի հարմարավետության միջոցն էր, ինչի հետևանքով ամեն մի ոտնագույթուն կարող էր առաջ բերել դժգոհություն, ընվզում, առաջացնել զանգվածային անհնազանություն: Այն ժամանակավաճակը հասարակության հոգևոր-կրոնական, սոցիալ-մշակութային առանձնահատկությունների ուժով այդ սպառնալիքն իրական

<sup>1</sup> Տե՛ս Ս.Ս. Կրկյաշարյան, Հին Հայաստանի պետական կառուցվածքը (մ.թ.ա. VI - մ.թ.ա. IV դդ.) - Եր., Լուսական, 2005, էջ 69:

վտանգ էր, և կարող էր դառնալ հարստության կործանման պատճառ, եթե հանկարծ նա հզոր չէր այնքան, որ բռնությամբ ճնշեր այդ ընդգումը:

Եթե այս տեսանկյունից դիտարկենք հայոց պատմությունը, ապա կիամոզվենք, որ այս պայքարում պատմաքաղաքական միշտ շարք հանգամանքների ուժով Հայաստանում հաղթանակեց սովորութային իրավունքը՝ հասուն պետությունը վերածելով Արշակունյաց տարրալուծված (դիֆուզիոն), դոնդողանման պետության, որում թագավորի կարգավիճակը պայմանավորված էր ավելի շատ նրա՝ անցյալ դարերի փառքով, քան իրական իշխանությամբ:

Այս քաղաքական կացությունը բերեց նրան, որ թագավորական իրավունքը թագավորի նման դարձավ առաջինն իրեն հավասար նախարարական և հայոց ճյուղավորված աշխարհների սովորութային իրավունքների մեջ: Նման իրավիճակը վերածվել էր պոլիբիոսյան շրջապտույտի, սակայն պտտվողը ոչ թե պետությունն էր իր ձևերի հերթափոխությամբ, այլ իրավական նորմատիվի ձևերը, որոնցից ամեն մեկը ձգտում էր հաստատել իր գերակայությունը: Դրան նպաստում էր արտաքին քաղաքական կացությամբ պայմանավորված թագավորական հարստությունների հերթափոխությունը և պետականության (երևի թե սկսած մ.թ.ա. VI դարից) բոլորական անընդհատ միտումը:

Այս իրավիճակից դրւս գալու ելքը հայ քաղաքական պետականամետ ընտրանին համարում էր դիցարանի պարբերական վերանայումները՝ սկսած Արարատյան թագավորությունից: Թեոկրատական հասարակության ամրոց-տաճարային կառավարման պայմաններում դիցարանի վերանայումները, բացի արտաքին ուժերի դրդումներից, պայմանավորված էին նաև սոցիոնորմատիվ կարգավորման համակարգի գաղափարական միասնության ապահովման ցանկությամբ: Դրա ձևը հասարակական համաձայնությունն էր՝ հանրային ուժությունը, որը ձեռնարկվում էր ամեն անգամ, եթե առաջանում էր սոցիալական կարևորագույն բարեկարգության համապատասխան պահպանական գործությունը:

համակարգի ճգնաժամ: Նման ճգնաժամերը վտանգում էին պետությունը և կարող էին հանգեցնել դրա կործանման: Այս պարագայում աշխարհիկ իշխանությունը նախաձեռնում էր դիցարանի, հետևաբար նաև դավանաբանական գաղափարախոսության բարենորդում: Իսկ այդ գաղափարախոսությունն անշուշտ անմիջականորեն սնուցում էր նպատակահարմարությունից բխող թագավորական իրավաստեղծագործությունը, բայց նաև ազդում էր տարբերային գործընթացներով կազմավորվող նոր սովորույթների բովանդակության, եղած սովորույթների մի մասի վերանայման, մյուսների վերացման վրա: Այսպիսով, դիցարանի վերանայումները ոչ միայն դավանաբանական գործընթացներ էին, այլ նաև սոցիոնորմատիվ կարգավորման համակարգի գաղափարական ակունքների վերաբերյալ նոր կոնվենցիա, հասարակության քաղաքական-իրավական սոցիալիզման նոր գործընթաց:

Դիցարանի պարբերական վերանայումները դրական էին, եթե դրանք պայմանավորված էին ներքին կյանքի իրողություններով, պահանջարկված էին դրանցով և ուղղված էին սոցիալական կարգավորման ճգնաժամի հաղթահարմանը: Սակայն այդ գործընթացների արդյունքում մենք չենք նկատում պետականության աննախադեալ հզորացում, կայունացում, նրա հեղինակության աճ, արդյունքում՝ պետականապաշտություն: Դիցարանի վերանայումը չէր հանգեցնում պետության առասպելաբանական ուղղված աննախադեալ լեզվիմացման, իրավահեղինակության բարձրացման: Այն ընդամենք ճգնաժամը հաղթահարելու ժամանակավոր միջոց էր, բայց ոչ պետության հարատևության կայուն և երկարատև երաշխիք: Իսկ պետականությունը ժողովրդի հզորացման և հարատևության կարևորագույն երաշխիքն է:

### § 3. Արյան վրեժի և թագավորական իրավարարների ինստիտուտը Հայաստանում մ.թ. I-III դարերում

Հին Հայաստանի իրավունքի պատմությունն ուսումնասիրելիս մեր առջև հասնում են որոշակի դժվարություններ՝ պայմանավորված այն հանգամանքով, որ մեզ չեն հասել այդ ժամանակների իրավունքի աղբյուրները: Այդ պատճառով, ցավոք, անհնար է լրիվ վերականգնել հին հայկական իրավունքի (մ.թ.ա. I հազ. – մ.թ. V-VI դդ.) նկարագիրը: Ուսումնասիրությունները թույլ են տալիս վերհանել հայ ժողովրդի իրավական կեցության միայն որոշ կողմերը, ընդ որում, հիմնվելով ոչ թե զուտ իրավարանական, այլ հին հայկական պատմագրության վավերագրական աղբյուրների՝ Ազգաբանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Մովսես Խորենացու, Եղիշեի և այլոց երկերի վրա<sup>1</sup>:

Սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ինչպես բոլոր ժողովուրդների մոտ, Հին Հայաստանում ևս հանրութեն վտանգավոր արարքների դեմ պայքարի հիմնական ձևը եղել է ինքնադատաստանը՝ արյան վրեժը: Հին հայկական իրավունքի՝ մեզ հասած աղբյուրների սակագությունը թույլ չի տալիս հստակ որոշել հին հայկական պետությունների (մ.թ.ա.) կառուցակարգում և իրավունքի համակարգում դատարանի, ինչպես նաև նրա գործունեության կանոնների առաջացման ժամանակը և ձևերը: Իսկ ինչ վերաբերում է մեր թվարկությանը, ապա հենվելով վավերագրական աղբյուրների վրա՝ կարող ենք վերականգնել դատա-

րանի և դատավարության որոշ կողմեր:

Հունական եկեղեցական գործիչ և գրող Եվսեբիոս Կեսարացին (262-340 թթ.) իր շարադրանքներից մեկում գրում է, որ հայերի և պարթևների մոտ մարդասպանները մահվան էին ենթարկվում դատավորների և սպանվածի հարազատների կողմից: Սակայն, եթե ազգակիցները, վրեժի զգացումից դրդված, սպանում էին մարդասպանի ազգակիցներից որևէ մեկին, ապա տեղական օրենքներով նրանք պատասխան չին տալիս դատարանի առաջ<sup>1</sup>: Ծիշտ է նկատել Խ. Թորոսյանը. «Այս վկայությունից երևում է, որ արդարադատության իրականացման մասնավոր ձևի կողքին գոյություն ուներ նաև նրա պետական ձևը: Բայց, հավանաբար, ինքնադատատանն արդեն կարգավորված էր. սահմանված էր այդ կամայականության առաջին և ամենակարևոր սահմանափակումը՝ ամեն մի ազգակից պարտավոր չէ վրեժ լուծել, և արյան վրեժի իրավունքը կարելի է իրականացնել մարդասպանի ոչ բոլոր ազգակիցների նկատմամբ: Ժամանակի ընթացքում պետությունն ավելի լայն ու ակտիվ կերպով է միջամտում արդարադատության իրականացմանը»<sup>2</sup>:

Հայ պատմագրության հայր՝ Մովսես Խորենացին, Հայաստանում Արշակունյաց հարստության հիմնադիր Վաղարշակ թագավորին (I դ.)<sup>3</sup> է վերագրում պետական շինարարության ոլորտում հետևյալ գործունեությունը. «Եվ իր թագավորական տանը օրենքներ է հաստատում, ժամեր է սահմանում (արքունիք) մտնելու և իշնելու, խորհրդի, կերուխումի և գրուանքների համար: Սահմանում է զինվորական կարգեր՝ առաջին, երկրորդ, երրորդ և այլն. և երկու մարդ գրով հիշեցնողներ՝ մեկը՝ բարին հիշեցնողը,

<sup>1</sup> Տե՛ս Eusebii Pamphili Caesareae, Palaestinae episcopi Prae parationis Evangeliae. Patrologiae, cursus completus, accurante. J. P. Migne, Patrologiae graecae. t. 21, Turnholti (Belgium). VI, 10, § 276, էջ 471: Հղումն ըստ Օ՛Շունի Օ.Ա., Նույն է Յ՛Շ Շաման ա Ած ա է է Խ-ԽIII հա ա, Ածահա ա, 1985, էջ 193:

<sup>2</sup> Տե՛ս Օ՛Շունի Օ.Ա., նշված աշխ., էջ 193:

<sup>3</sup> Վաղարշակ թագավորը, ըստ Խորենացու ժամանակագրության, կառավարել է մ.թ.ա. II դարում, սակայն Արշակունյաների հարստության հաստատումը Հայաստանում տեղի է ունեցել մ.թ. 66 թվականին:

իսկ մյուսը՝ վրեժինդրությունը: Քարին հիշեցնողին հրաման է տալիս՝ քագավորի բարկանալու կամ անիրավ հրաման տալու դեպքում հիշեցնել իրավացին և մարդասիրությունը: Սահմանում է իրավարարներ արքունի տանը, իրավարարներ քաղաքներում և ավաններում»<sup>1</sup>:

Այս վկայության մեջ մեզ համար հետաքրքրություն են ներկայացնում երկու հանգամանք: Նախ և առաջ՝ հաղորդումը՝ քագավորի կողմից Հայաստանի քաղաքներում և ավաններում իրավարարներ նշանակելու մասին, և երկրորդ՝ հաղորդումը արքունիքում երկու պաշտոնատար անձանց՝ հիշեցնողներ նշանակելու վերաբերյալ: Հարց է ծագում. ի՞նչ պաշտոնատար անձինք էին նրանք և ինչո՞վ էին զբաղվում արքունիքում: Ցավոք, Խորենացին այդ պաշտոնատար անձանց պարտականությունների վերաբերյալ մեզ մանրամասներ չի հաղորդում, բայց եղած տվյալների վերլուծությունը մեզ բերում է հետևյալ մտքին. իսկ արդյոք նրանք իրենց գործառութային պարտականություններով նման չե՞ն «պաշտպանին» և «պետական մեղադրողին»՝ դատավարական իմաստով: Առաջին պաշտոնյան քարին հիշեցնողն է և քագավորի բարկանալու կամ անիրավ հրաման տալու դեպքում պարտավոր է հիշեցնել իրավացին (օրինականը) և մարդասիրությունը: Պատմիչի օգտագործած բառերը բավականին հստակ նկարագրում են այդ պաշտոնատար անձի պարտականությունների շրջանակը: Բնական է, որ քագավորը կարող էր բարկանալ, եթե հպատակներից որևէ մեկը խախտում էր օրենքները կամ չէր ենթարկվում քագավորի հրամաններին, ինչը ևս հավասարազոր է օրենքը խախտելուն՝ հանցագործությանը: Թագավորը, իհարկե, ուներ արդարադատություն իրականացնելու իրավունք: Նա նշանակում է պաշտոնատար անձի, ում հանձնարարում է քագավորական արտոնության իրականացման ընթացքում հիշեցնել «իրավացին և մարդասիրությունը», որպեսզի քագավորական բարկության

պահին ինքը չվարվի անիրավ կերպով, այսինքն, ժամանակակից խոսքերով ասած, չկայացնի անիմն և անարդար դատավճիռ: Անկասկած, այդ գործունեությունը կարելի է բնութագրել որպես պաշտպանության գործառույթի իրականացում դատավարության ընթացքում: Իսկ ինչ վերաբերում է երկրորդ պաշտոնատար անձին՝ վրեժինդրությունը հիշեցնողին, ապա մենք ամբողջովովին համամիտ ենք Խ. Թորոսյանի այն կարծիքին, որ այդ անձին բնութագրելու համար Խորենացու գործածած քառը՝ վրեժինդրությունը, արդեն իսկ տալիս է այդ պաշտոնյայի կարգավիճակի եռությունը: «Այդ պաշտոնատար անձը պետք է քագավորին գրավոր իիշեցներ վրեժինդրության, արդարացի հասուցման մասին: Արտահայտվելով ժամանակակից եզրաբանությամբ՝ այդ շինովնիկը քագավորի առջև հարց էր բարձրացնում քրեական գործ հարուցելու մասին, այսինքն՝ հանդես էր գալիս պետական մեղադրողի դերում»<sup>1</sup>:

Ամենից արժեքավորը, որ մենք կարող ենք վերցնել Խորենացու այդ վկայությունից, այն է, որ արդեն վաղմիջնադարյան Հայաստանում նկատվում է պետության ընդհանուր կառուցակարգում դատավորի պաշտոնի առանձնացումը, իսկ արքունիքում նշանակում են երկու պաշտոնատար անձինք, որոնք իրենց գործառութային պարտականություններով շատ նման են «պետական մեղադրողին» և «պաշտպանին»՝ քրեական դատավարությունը գործող անձանց: Դա նշանակում է, որ արդեն այդ ժամանակաշրջանում Հայաստանում նկատվում է մրցակցային դատավարությունը հետախուզական դատավարության վերածվելու միտումը, որի ապացույցը «պետական մեղադրողի» պաշտոնն է:

Հայ պատմագիրների մոտ հանդիպում ենք վկայությունների Արշակունիների շրջանում գումարվող աշխարհաժողովների կազմի վերաբերյալ: Ազարանգեղոսի, Փավստոս Բուզանդի բողած տեղեկությունները վկայում են, որ դրանց մասնակցում էին ավատատեր դասակարգի բոլոր աշխարհիկ ներկայացուցիչները:

<sup>1</sup> Տե՛ս Սովոր Խորենացի, Հայոց պատմություն / Խմբ., ներած. և ծանոթ. Ս. Մալխասյան. – Երևան, Երևանի համալս. հրատ., 1981, էջ 156:

<sup>1</sup> Տե՛ս Օթձանք Օ.Ա., նշանակած աշխ., էջ 199:

Դրանց թվում էր նաև «դատավորը», «փրավարարը»: Դատավորի մասնակցությունն աշխարհաժողովներին վկայում է, որ նա ուներ քավականին բարձր հասարակական կարգավիճակ: Այսպիսով, հայկական վավերագրական աղբյուրները վկայում են, որ Արշակունիների հարստության շրջանում, քրիստոնեության ընդունումից հետո Հայաստանում, քացի հոգևոր՝ Եկեղեցական դատական համակարգից գոյություն ուներ նաև աշխարհիկ՝ պետական դատարանների զարգացած ցանց, ինչն իրավագետներին հնարավորություն է տալիս Եզրակացնելու, որ մ.թ. I-V դդ. «առեղի է ունեցել արդարադատության իրականացման պետության իրավասության հետագա ընդլայնում և, համապատասխանաբար, նաև նավոր ուժի կիրառման ոլորտի նեղացում: Դա կարելի է արտահայտել երեք կետով. ընդլայնվել էր գործերի շրջանակը, որոնցով արգելվում էր ինքնադատաստանը. ավելի էր սահմանափակվում անձանց շրջանակը, ովքեր կարող էին օգտագործել ինքնադատաստանի իրավունքը. այն դեպքերում, երբ բույլատրվում էր մասնավոր վրեժը, դրա իրականացումը բողնովում էր տուժածի հայեցողությանը, այսինքն՝ պետությունը օգնության էր գալիս տուժածին այն դեպքերում, երբ նա ուզում էր, բայց չէր կարող իրականացնել իր իրավունքը»<sup>1</sup>:

Այդ մասին են վկայում ոչ միայն պետական դատարանների առկայությունը հաստատող փաստերը, այլև տվյալ շրջանի քաղաքան-իրավական միտքը՝ իբրև հայ ժողովրդի առկա իրավական կեցության արտացոլում: Այսպես՝ 5-րդ դ. հայ փիլիսոփա Եզնիկ Կողբացին, պաշտպանելով քրիստոնեական ուսմունքը և հերքելով զանազան կրոնական աղանդերը, քննարկելով նաև չարի ու բարու հիմնախնդիրները, արձանագրում է. «Եվ պարզ է, որ չար իրողություններ են լինում այն ժամանակ, երբ կարիքները օրինականությամբ չեն բավարարվում: Նույն խոսքերը նաև սպանությանն են վերաբերում: Երբ մեկը անառակության մեջ բռնվածին սպանում է՝ պատժելով նրան հանդգնության պատճառով,

չար բան չի անում: Իսկ եթե մեկն սպանում է մի անմեղի, որը վճռով հաստատված հանցանը չի գործել, կամ (եթե) բան խլելու, ունեցվածքը հափշտակելու համար է սպանում, չարիք է գործում: Թեև երկուսի գործն էլ նույնն է, բայց նպատակը նույնպիսին չէ»<sup>1</sup>:

Հատկանշական է, որ սպանության երկու տարրերակներն են քննարկվում են օրինականության համատեքստում: Այսինքն՝ անառակության մեջ բռնվածին սպանելը չար բան չէ, հետևաբար օրինական է: Ուրեմն 5-րդ դարում Հայաստանում դեռ քրեական որոշ գործերով բույլատրվում էր ինքնադատաստանը: Բացի այդ, փիլիսոփայի «վճռով հաստատված հանցանը չի գործել» արտահայտությունը վկայում է բուն քրեական դատավարության և արդարադատության՝ որպես գործունեության տեսակի առկայությունը:

Մեկ այլ տեղում Կողբացին գրում է. «Արդ՝ այս բոլոր համոզիչ բացատրություններից հետո էլ համառում ու նույնն են մեջտեղ բերում. «Զարիքները, – ասում են, – ի բնե են և ոչ կամածին»: Պատասխանում ենք, թե որ ի բնե են, ինչոր են թագավորներից սահմանվում օրենքները, իշխաններից՝ սաստումներ, դատավորներից՝ պատիժներ, չէ՝ որ չարիքներն արգելելու համար են դրանք: Այլև եթե չարիքները բնական լինեն, օրենսդիրն օրենքները չափացի սահմանի, ոչ էլ իշխանը չարագործին պիտի պատժի ենթարկի: Ինչոր են պատժում նրան, ով ինքնակամ չար չէ, որին պետք էր կարեկցել և ոչ թե պատժի ենթարկել: Եվ արդ՝ եթե այնպիսինի կինը անառակություն անի (նրա կնոջը) չպետք է մեղադրի, որովհետև, ինչպես ասում են, կամովին չի հանձն առել չարիքը, այլ բնականից է հակադրվել: Եվ եթե այնպիսինի որդին սուրը վերցրած իր վրա հարձակվի, թող նրան չմեղադրի, որովհետև ինքնակամ չի հարձակվում, այլ չարն է նրան մղում այն բանին... Իսկ երբ տեսնում ենք, որ թագավորը իր օրենքներին (հակառակվելու համար) պատժում է ու պատժելով հանցանքը պակասեցնում է, դատավորը գողին, ավագակին ամուր կապում ու տանջում է՝

<sup>1</sup> Տե՛ս Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց (Աշխարաբար բարգմ. և ծանրթագր. Ա.Փ. Աբրահամյանի), Երևանի համալսարանի հրատ., 1994, էջ 33:

<sup>1</sup> Տե՛ս Օւծոց Ծ.Ա., նշված աշխ., էջ 194:

վնասակարությունը մեջտեղից վերացնելու համար և հայրը դաժան որդուն, որպես մահապարտի, դատավորներին է հանձնում, ուրիշ բոլորն էլ իրենց անարգանքների համար պատժում են՝ անձամբ կամ իշխանների միջոցով, – պարզ է, որ կատարվող չարիքները կամածին են և ոչ ի բնե»<sup>1</sup>:

Կողքացու վերոնշյալ դատողությունները մեզ որոշակի պատկերացում են տախս Վաղմիջնադարյան Հայաստանի դատավարության մասին, որոնք համգում են հետևյալն:

ա) որոշ հանցագործություններով դեռևս գոյություն ունի ինքնադատաստանը, քանի որ մասնավոր անձինք «իրենց անարգանքների համար պատժում են՝ անձամբ».

բ) առկա է, այսպես կոչված, մեղադրական ձևի դատավարության հաստատումը: Դատավարության այդ ձևը կոչվում է մեղադրական, քանի որ և գործի հարուցումը, և դրա հետագա ողջ ընթացքը պայմանավորված են մեղադրողի-տուժողի գործողություններով, կախված են նրանից: Դատարանը ձեռնամուխ է լինում գործի քննությանը միայն մեղադրողի խնդրանքի հիման վրա: Դրան համապատասխան մեղադրական դատավարությունը համարյա ամբողջությամբ հանգում է գործը դատական նիստում քննելուն և լուծելուն: Մինչդատական քննությունը դատավարության այս ձևի մեջ գործելու լրիվ բացակայում է, քանի որ ապացույցներ հավաքելու և դրանք դատարան ներկայացնելու պարտականությունը ընկած է կողմերի վրա.

գ) առկա են նաև հանցագորության դեմ պայքարի հանրայնացման և հետախուզական դատավարության տարրերի ձևավորման միտումներ: Չե, որ հետախուզական դատավարությունը պատմականորեն միանգամից չի փոխարինել մեղադրականին: Որոշակի շրջանում դրանք գոյություն են ունեցել զուգահեռաբար: Այդպես եր նաև Հայաստանում՝ համաձայն պետության և իրավունքի զարգացման ընդհանուր օրինաչփությունների, ինչը հաստատվում է, նախ՝ զարգացած դատական կորպուսի գոյութ-

յան մասին վավերագրական աղբյուրների վկայություններով, երկրորդ՝ Կողքացու այնպիսի արտահայտություններով, ինչպես «քագավորն իր օրենքներին հակառակվելու համար պատժում է ու պատժելով հանցանքը պակասեցնում է», «դատավորը գողին, ավագակին ամուր կապում ու տաճում է», «քոյլորն էլ իրենց անարգանքների համար պատժում են նաև իշխանների միջոցով»: Այս դրսևորումները, մեր կարծիքով, համարվում են հետախուզական դատավարության տարրեր և վկայում են բազավորի, նախարարների, դատավորների ու այլոց կողմից իրականացվող քրեական հետապնդման և հանցագործներին պատժելու կայուն գործառույթի գոյության մասին:

Այսպիսով, մինչև մեր թվարկությունը դատարանը Հայաստանում կազմում էր պետական կառավարման ընդհանուր ապարատի մի մասը, դեռ չեր առանձնացել նրանից որպես ինքնուրույն մարմին, որի միակ խնդիրն էր արդարադատության իրականացումը:

Առանձնացման գործնաթացը սկսվել է միայն մեր թվարկությունում, ինչը հստակ երևում է հատկապես Արշակունիների դարաշրջանում (I-V դդ.): Եվ եթե չինեին քաղաքական իրադրության վատթարացումն ու պետականության կորուստը V դարում, ապա այդ գործնաթացը, ինչպես այլ պետություններում, կգտներ իր բնական-պատմական, օրինաչափ ավարտը:

<sup>1</sup> Տե՛ս նոյեն տեղը, էջ 51:

## **ԳԼՈՒԽ 2. ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՍՏԱՐՁՔ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (IV-IX ԴԱՐԵՐ)**

### **§ 1. Քրիստոնեության ընդունումը և սոցիոնորմատիվ համակարգի երկատումը աշխարհիկի և կրոնականի**

Մինչ IV դարը Հայաստանի սոցիոնորմատիվ մշակույթը և հասարակական հարաբերությունների կարգավորման համակարգը գոյատևում էին իրքն սովորության իրավունքի համակարգ, որը հայ իրականության քաղաքական, տնտեսական, սոցիալական և էքնիկ առանձնահատկությունների շնորհիվ համառորեն հարատևում էր: Դրանցից հատկապես վերջինը՝ միաէքնիկությունը, նպաստում էր սովորությունների՝ որպես համընդհանուր կարգավորիչ աղբյուրի ու ծեփ, սերնդից սերունդ փոխանցմանը և իր կարգավորիչ դերի բարեհաջող կատարմանը: Այս պայմաններում նույնիսկ դրա ամրագրման կարիքը չէր զգացվում: Այսպիսով, իրավական համակարգում հիմնական կարգավորիչը մնում էր սովորույթը, իսկ քաղաքականացված իրավունքը և պետական իրավաստեղծագործությունը պահպանողական հասարակական հարաբերությունների մթնոլորտում կարգավորում էին միայն խիստ քաղաքական, դիպվածային և երբեմն շատ որոշակի հարաբերություններ:

Թագավորական իշխանության կարգադրագրերը, ստանալով օրենքի նշանակություն, գործում էին այնքանով, որքանով ուժեղ էր այն ընդունող թագավորը: Դրանց կյանքը երբեմն շատ կարճատև էր, հատկապես եթք դրանք փորձում էին կամ մերժել, կամ էլ խմբագրել նախարարական սովորութային իրավունքը:

IV դարից Հայաստանի սոցիոնորմատիվ համակարգում կատարվեց հեղաբեկում: Դրա էական պատճառներն էին քրիստոնեության ընդունումը, իսկ այնուհետև՝ հայկական գրի ստեղծու-

մը: Քրիստոնեության ընդունմամբ տեղի ունեցավ ոչ միայն կրոնակիոնություն, այլև սոցիոնորմատիվ կարգավորման համակարգը սնող գաղափարական ակունքների փոփոխություն, որն առաջիկայում հանգեցնելու էր նաև իրավական կարգավորման տրհմանը երկու ենթահամակարգերի՝ աշխարհիկ (իրավական սովորույթը և քաղաքավորական ակտեր) և կրոնական (կանոնական): Դրանցից առաջինը շատ շուտով զրկվելու էր հետագա զարգացման հիմքերից՝ ի դեմս քաղաքավորական (այտական) իշխանության, որի հետևանքով իրավական կարգավորման համակարգում առաջնային աղբյուրի դերը կատարելու էին չգրված սովորույթը և կայացող կանոնական իրավունքը:

Քրիստոնեության ընդունմամբ հայ եկեղեցին ձեռք բերեց եկեղեցական-կրոնական հարաբերությունների կարգավորման լայն իրավասություն: Հայկական եկեղեցին, ի տարբերություն հայկական պետության, միշտ եղել է խիստ կենտրոնացված կազմակերպություն: Պետական իշխանության բուլությունը և, այնուհետև, անկախության կորուստը նրան հնարավորություն ընձեռեցին ներխուժելու նաև աշխարհիկ հարաբերությունների կարգավորման ոլորտ՝ համառորեն դուրս մղելով քրիստոնեությանն անհարիր սովորութային կանոնները:

Քրիստոնեության ընդունմամբ հայկական իրավական համակարգին բնորոշ է դառնում օտարերկրյա իրավունքի նորմերի փոխառումը: Հայկական քրիստոնեական եկեղեցին սկզբում փոխառեց առավելապես կրոնաեկեղեցական բնույթի նորմերը՝ Մովսիսական օրենքները, այնուհետև՝ արտաքին կանոնները: Մովսիսական օրենքները Հայաստան են ներմուծվել ինչպես ասորական ծագում ունեցող ժողովածուների բարգմանության միջոցով, այնպես էլ բուն սկզբնադրյուրի՝ չին կտակարանի բարգմանությամբ: Այդ օրենքները (հրեական իրավունքի նորմերը) շարադրված են չին կտակարանի՝ Մովսիսին վերագրվող առաջին հինգ գրքերում: Դրանցում պարունակվում են նաև դատական իրավունքի նորմեր:

Հայկական եկեղեցին, փոխառելով իրեական իրավունքի նորմերը, կիրառում էր դրանք այն չափով, ինչ չափով չէին հակասում քրիստոնեության գաղափարներին: Այդ նորմերը իրավունքի և իրավաստեղծագործության հիմք էին համարվում ոչ միայն քննարկող, այլև հետագա շրջանում: Օրինակ՝ XII դարում, երբ Սլովակար Գոշը գրեց իր դատաստանագիրը:

Տիեզերական եկեղեցու հետ դավանաբանական տարածայնությունները և հայաստանյան եկեղեցու աստիճանական ազգայնացումը հանգեցրին կանոնական իրավաստեղծագործության զարգացմանն ու ազգային կանոնախմբերի ձևավորմանը, որոնց թվում հատկապես կարևոր էին Գրիգոր Լուսավորչի և Սահակ Պարթևի կանոնադրությունները, Հովհաննես Ա Մանղակունու, Աշտիշատի ժողովի, Ծահապիվանի ժողովի կանոնները, Աղվանից թագավոր Վաչագանի Կանոնագիրը և Դվինի առաջինից իններորդ ժողովների որոշումները:

Հայկական կանոնական իրավունքը ներառում էր՝

1) արտաքին կանոնական ասհմանումները և որոշումները (Աստվածաշունչ մատյան, առաքելական կանոններ, տիեզերական ժողովների կանոններ, արտաքին տեղական ժողովների կանոններ, եկեղեցու օտար հայրերի կանոններ):

2) հայ ազգային-եկեղեցական կանոնները (հայոց հոգևոր հայրերի կանոնախմբեր, ազգային-եկեղեցական ժողովների որոշումներ):

Կանոնական իրավունքի աղբյուրների կուտակման և ազգային կանոնական իրավաստեղծագործության զարգացման տրամաբանական հետևանքը VIII դ. 10-ական թվականներին կարողիկու Հովհաննես Օձնեցու կողմից կանոնական իրավունքի համակարգումն էր՝ ի դեմս «Հայոց կանոնագրի»:<sup>1</sup> Հովհաննես Օձ-

<sup>1</sup> Հովհաննես Օձնեցու Կանոնագիրը անփոփոխ՝ իր սկզբնական վիճակով մեզ չի հասել: Դարերի ընթացքում նորանոր կանոնական բնագրեր ներառելով, երբեմն էլ կառուցվածքային փոփոխություններ կրելով՝ կանոնագիրը պահպանվել է 200-ից ավել ձեռագիր ընթօրինակություններով, որոնք բաժանվում են մի քանի խմբագրությունների (տե՛ս Կանոնագիր հայոց, հ. Ա., աշխատասիրությամբ **Վ. Հակոբյանի**, Եր., 1964, էջ XI):

նեցու «Հայոց կանոնագիրը» իրավաբանական տեսանկյունից կանոնական իրավունքի պաշտոնական ժամանակագրական ինկորպորացիա էր<sup>1</sup>: Այս հետապնդում էր ոչ միայն գործնական իրավաբանական, այլև կարևոր քաղաքական-հասարակական նպատակներ:

«Հովհաննես Օձնեցու նպատակը և միջոցառումները գնում էին հայ ժողովրդի տարրեր շերտերի քաղաքական միության վերականգնման ուղղությամբ, պահպանելու և ամրացնելու հայ ժողովրդի ներքին կյանքի ինքնավարությունը՝ պայքարելով նախքանական ուսնագործությունների, աղանդավորական շարժումների դեմ և ապա, ուժեր կուտակելով, նախապատրաստել արարների դեմ բարձրանալիք պայքարի նոր ալիքը: Հենց այդ պայքարի շրջապատույտում է, որ Հովհաննես Օձնեցին մշակում է իր կանոնախմբը և կազմում կանոնագիրը, որպեսզի կարողանա միևնույն դավանանքի ներքո հավաքագրել հայերին, պահպանել նրանց և հայ եկեղեցու ինքնուրույնությունը և անկախությունը... Ազգային ավանդական կարգ ու կանոնվ, սովորույթներով իրականացնել հասարակական քաղաքական որոշակի նպատակներ, այս է Կանոնագրի այն ժամանակվա քաղաքական և գործնական նշանակությունը»:<sup>2</sup>

Այսպիսով, IV-V դարերում Հայաստանի իրավական համակարգում իրավունքի ձևեր (աղբյուրներ) էին իրավական սովորույթը, քագավորական ակտերը, կանոնական իրավունքը:

Մինչքրիստոնեական շրջանի վերջի և քրիստոնեական շրջանի սկզբի հայ իրավական մշակույթի այլ բաղադրատարրերի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկություններ մեզ չեն հասել: Սակայն աղբյուրների մանրազնին հետազոտությունը թույլ է տա-

<sup>1</sup> Ինկորպորացիան գործող նորմատիվ իրավական ակտերի (օրենսդրության) համակարգման ձևերից մեկն է, երբ այդ ակտերը միավորում են մեկ ժողովածուի մեջ՝ առարկայական կամ ժամանակագրական սկզբունքով: Այն կարող է լինել պաշտոնական և ոչ պաշտոնական: Օրենսդրության համակարգման ձև են նաև կողիֆիկացիան և կոնսոլիդացիան (տե՛ս **Վաղարշյան Ա.Գ.**, Պետության և իրավունքի տեսություն-2..., էջ 197-198):

<sup>2</sup> «Կանոնագիր հայոց», հ. Ա., 1964, էջ XIV, XV:

լիս վեր հանելու հետաքրքիր տվյալներ հայ իրավական կյանքից: Օրինակ՝ իրավական գործունեության մեջ տարբերում էին երեք հիմնական գործառույթներ և տեսակներ՝ **իրավաստեղծ, իրավակիրառ, իրավապահպան**: Այդ է վկայում տվյալ շրջանի քաղաքական-իրավական միտքը՝ իրեն հայ ժողովրդի առկա իրավական կեցության արտացոլում: Եզնիկ Կողբացին գրում է. «Չարիքները, – ասում են, – ի բնե են և ոչ կամածին»: Պատասխանում ենք, թե որ ի բնե են, ինչու են թագավորներից սահմանվում օրենքները, իշխաններից՝ սաստումներ, դատավորներից՝ պատիժներ, չէ՞ որ չարիքներն արգելելու համար են դրանք: Այս եթե չարիքները բնական լինեն, օրենսդիրն օրենքները չափուի սահմանի, ոչ էլ հշխանը չարագործին պիտի պատժի ենթարկի»:<sup>1</sup>

Իրավակիրառական զարգացած մշակույթի մասին են խոսում «Քիշատակաց տները», որոնց վերաբերյալ վկայությունները վերաբերում են դեռ մ.թ. Ի դարին: Դրանք իրավական արխիվներ էին, որոնցում հավաքվում և պահպանվում էին թագավորական իրամանները, հրովարտակները, բազմաբնույթ անհատական իրավական ակտ-փաստաթղթերը՝ վաճառագիր, պայմանագիր, մուրհակ, սեփականության վավերագրեր, դատական որոշումներ:

«Յիշատակաց տների» վերաբերյալ տվյալներ կան Ղերության (Լարության) Եղեսացուն վերագրված վկայության մեջ. «Զամենայն ինչ զոր իրամայեն թագաւորք, եւ զամենայն որ ինչ միանգամ լինի առաջի նոցա, գրի եւ դնի ի սունը յիշատակաց... Եւ եղին ի տանն յիշատակաց քարտիսից, ուր դնին մատեանք և օրէնք արքունականք. եւ որք զնեն եւ վաճառեն եւ գրին ի միջի նոցա մուրհակը հաստատութեան, անդ պահին հաստատութեանք առանց արհամարհանց»<sup>2</sup>: Հետաքրքիր տվյալներ է հաղորդում նաև Սովետս Խորենացին. «... և զիր Պարսից և Յունաց, որովք այժմ զիւղիցն և գաւառաց, ևս և իրաքանչիր տանց առանձնա-

կանութեանց, և հանուրց հակառակութեանց և դաշանց այժմ առ մեզ գտանին արաւ գրուցաց մատեանք, մանաւանդ որ ի սեպական ազատութեան պայազատութիւն»<sup>1</sup>:

\* \* \*

Այսպիսով, IV-V դարերում Հայաստանի իրավական համակարգը կրեց Էական փոփոխություններ: Նախևառաջ այն հասարակական հարաբերությունների պահպանողական զարգացման հետևանքով գերազանցապես մնաց թեուկրատական սովորությին իրավական համակարգ: Ջրիստոնեության ընդունմամբ և տարածմամբ այդ համակարգը վերածվեց կրոնականացված (կրեական) հասարակության իրավական համակարգի, որում իրավակարգավորիչ նշանակություն ունեին նաև կրոնական կանոնները: Այդ համակարգի մյուս առանձնահատկությունը մասնաւությունը (պարտիկուլյարիզմը) էր, ինչը հանգեցրեց իրավունքի առըստերի բազմազանության և իրավակիրառողի կողմից իրավական կարգավորման ձևերի ընտրության հարաբերական ազատության: Դրա հետևանքով այն կազմավորվեց ուղարձավ քրիստոնեական մշակույթի հիմքերի վրա կառուցված միջնադարյան կրոնականացված (քայլ ոչ թեուկրատական), ավատատիրական իրավական համակարգ:

## § 2. Հայոց պետականության կորուստը և Հայաստանի իրավական «քրոնազավումը» VI-IX դարերում

Հայաստանում իրավարանների ինստիտուտի ի հայտ գալը ազդարարում էր սովորության իրավունքի ճգնաժամը: Հասունացել էր զրի առնված իրավական ձևերի ստեղծման պահը: Սակայն քրիստոնեության ընդունումը, իսկ այնուհետև պետականության կորուստը կատեցրին հայկական աշխարհիկ գրված օրենքների համակարգի զարգացումը:

Երկրի քաղաքական-իրավական նման ճակատագիրը հան-

<sup>1</sup> Տե՛ս Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդը (Աշխարհաբար թարգմ. և ծանոթագր. Ա.Փ. Աբրահամյանի), Եր., 1994, էջ 51:

<sup>2</sup> Տե՛ս Զարպահանալեան Գարեգին, Հայկական հին դպրութեան պատմութիւն (Դ-Գ դար), Վեմեսիկ, 1886, էջ 162:

գեցրեց նրան, որ հայ իրավական համակարգում կամավոր և հարկադրաբար տեղի ունեցավ օտարների աշխարհիկ օրենքների փոխառում:

Հայաստանի, հատկապես բյուզանդական մասի քաղաքային բնակավայրերում, որպես իրավական կարգավորման աղբյուրներ սկսեցին կիրառվել «Հռոմեական իրավունքը» և Հուստինիանոսի օրենսդրությունը: Արևմտյան Հայաստանը, 387 թ. սկսած մինչև Հուստինիանոսի գահակալության շրջանը, իրավական բոնազավթման (աներսիայի) չեր ենթարկվել: Նրա բնակչությունը չուներ հռոմեական քաղաքացու կարգավիճակ, հետևաբար հռոմեական իրավունքն ու օրենքներն այստեղ դեռևս չին գործում: Այս շրջանում հայկական նախարարական սովորութային իրավունքը շարունակում էր գործել և կատարել իր կարգավորիչ դերը, բացառությամբ քաղաքական-պետական հարաբերությունների ոլորտի:

Մարուր հռոմեական իրավունքը լրիվ չարմատավորվեց նաև Բյուզանդիայում, հելլենիստական մշակութային տիրույթում, առավել ևս Արևմտյան Հայաստանում, սակայն մինչև IX դարն այն կործանիչ ազդեցություն բողեց հայ նախարարական տների վրա՝ նպաստելով դրանց քայլայմանը:

Բյուզանդիայի իրավական միջամտության հետևանքով հռոմեական իրավունքի գործողությունը տարածվեց նաև Արևմտյան Հայաստանի վրա: Հուստինիանոս կայսեր 528 թ. դեկտոր և 536 թ. նովելայով բյուզանդական վարչակառավարչական համակարգը հաստատվեց նաև Արևմտյան Հայաստանում, իսկ հայ նախարարները գրկվեցին զինվորական և վարչական իրավագորություններից:

Չքավարարվելով դրանով՝ Հուստինիանոսը 535 թ. իրապարակում է եղիկոտ «Հայ ժառանգական իրավունքի մասին», իսկ 536 թ.՝ «Հայերի մասին, որ նրանք այսուհետև ամեն բանում դեկավարվեն հռոմեական օրենքներով» նովելը<sup>1</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Սամվելյան Խ., Հին հայ իրավունքի պատմություն, հ. I, Եր., 1939, էջ 64, 65:

Ավելի ուշ շրջանում Հայաստանում նկատվում է Խսավրյան հունա-բյուզանդական իրավունքի (Էկլոգայի) փոխառումը, ինչը հաստատվում է օրենքների հայկական ձեռագրերում այդ ժողովածուից արված բազմաթիվ քաղվածք-թարգմանությունների առկայությամբ:

Մատենադարանի՝ իրավական բովանդակությամբ ձեռագրերի մեջ աչքի է ընկնում մի դատաստանագիրք, որն իրավունքի պատմության մեջ ստացել է «Ասորահռոմեական դատաստանագիրք» անվանումը: Այդ դատաստանագրքի հայկական խմբագրությունները կրում են «Հաղթող քրիստոնեական քագավորների օրենքները» անվանումը:

Դատաստանագրքի հայկական և ասորական խմբագրությունների իրավական վերլուծությունը հիմք է տալիս մտածելու, որ նախնական է համարվում դրա հայկական խմբագրությունը: Դրա հիմքերը դրվել են IV դ. 20-30-ական թվականներին՝ հունարենով (հայկական գրի բացակայության պատճառով): Այդ դատաստանագրքի հիմքում դրված են գլխավորապես Արշակունյաց Հայաստանում գործող «օրենքները», հայկական սովորութային և կանոնական իրավունքը, իսկ բուն դատաստանագիրքն ստեղծվել է Բյուզանդիային միացված հայկական պրովինցիաների կարիքների համար: Այն հայկական գրի ստեղծումից հետո քարգմանվել է հայերեն, իսկ Հուստինիանոսի օրոք կրել է մի շարք փոփոխություններ:

Արևելյան Հայաստանը, ի տարբերություն Արևմտյանի, չենթարկվելով արագացված իրավական բոնակարգավորման: Պատճառն այն էր, որ նախաքրիստոնեական շրջանում Հայաստանն էական ազդեցություն էր կրել պարսկական մշակույթից, այդ թվում՝ իրավական: Նովինիսկ քրիստոնեության ընդունումից հետո

<sup>1</sup> Այս տեսակետը հայագիտության մեջ զարգացրել է Ս. Հովհաննիսյանը (տե՛ս Հովհաննիսյան Ս.Հ., Ասորական կամ «Ասորահռոմեական» կոչված դատաստանագրքի աղերսը հայ իրավունքի հետ, ՊԲՀ, 1970, N 2, նոյեմբերի՝ Ամուսնա-ընտանիքան իրավունքը վաղ ավատական Հայաստանում (IV-IX դդ.), Եր., 1976, էջ 37-43):

«շատ սովորութներ և պետական կարգ ու կանոնը դեռ մնում էին պարսկական»:<sup>1</sup>

Անկախության կորսատից հետո դարձարջանի իրավական համակարգերի օրինաչափություններին համապատասխան՝ Արևելյան Հայաստանում գործում էր զուտ հայկական իրավունքը՝ սովորութային և կանոնական: Իրավական այդպիսի ինքնավարությանը նպաստում էր նաև մարզպանական կառավարման կարգը: Բացի այդ, պարբերաբար տեղի ունեցող հակապարսկական ապստամբություններն ու խոռվությունները խոչընդոտում էին պարսկական մշակութային (նաև իրավական) գանգվածային միջանմության իրագործմանը: Նվարասկի դաշնագրով վերահստափում են հայ նախարարների և եկեղեցու իրավունքները, ինչն իրավական ոլորտում նշանակում էր, որ Արևելյան Հայաստանի ներքին հասարակական կյանքում իմնական կարգավորիչը մնալու էր հայկական նախարարական-սովորութային իրավունքը, իսկ եկեղեցական-կրոնական ոլորտում՝ կանոնական իրավունքը:

Արաբական կործանիչ նվաճողական քաղաքականության հետևանքով նախարարական համակարգը քայրայվեց, իսկ հայ նախարարական-սովորութային իրավունքը տեղի տվեց այնպիսի նորմերի, որոնք համապատասխանում էին նոր քաղաքական, հասարակական-տնտեսական պայմաններին: Արաբական խալֆաթի իրավական համակարգը թեոկրատական-կրոնականացված իրավական համակարգ էր: Դա նշանակում էր, որ Շարիաթը՝ որպես մահմեդական իրավունքի աղբյուր, կիրառվում էր նաև Հայաստանում՝ դուրս մղելով հայկական իրավունքը: Շարիաթի կիրառումը կամավոր փոխառում չէր, այլ հարկադիր: Բացի այդ, Շարիաթի կիրառումը համատարած չէր, այլ սահմանափակվում էր պետավարչական ու հարկային-ֆինանսական հարաբերությունների ոլորտներով:

Այսպիսով, VI-IX դարերում Հայաստանի իրավական համա-

կարգում իրավունքի ձևեր (աղբյուրներ) էին իրավական սովորութը և կանոնական իրավունքը: Քաղաքական անկախության բացակայության պայմաններում գործում էին նաև նվաճողների իրավունքի աղբյուրները՝ իմնականում պետավարչական, հարկային-ֆինանսական հարաբերությունների ոլորտներում: Իրավունքի հատուկ աղբյուր էին հարևան երկրների իրավական համակարգերից հարկադրաբար փոխառում իրավական ձևերը, մասնավորապես՝ «Ասորակոմնեական դատաստանագիրքը», իսկ արաբական տիրապետության ժամանակ՝ նաև Շարիաթը:

\* \* \*

IV-IX դարերում Հայաստանի իրավական համակարգը կրեց էական փոփոխություններ: Նախնառաջ այն հասարակական հարաբերությունների պահպանողական զարգացման հետևանքով գերազանցապես մնաց սովորութային իրավական համակարգ: Քրիստոնեության ընդունմամբ և տարածմամբ այդ համակարգը վերածվեց կրոնականացված (կղերական) հասարակության իրավական համակարգի, որում իրավակարգավորիչ նշանակություն ունեին նաև կրոնական կանոնները: Այդ համակարգի մյուս առանձնահատկությունը մասնատվածությունն էր, ինչը հանգեցրեց իրավունքի աղբյուրների բազմազանության և իրավակիրառողի կողմից իրավական կարգավորման ձևերի ընտրության (ներառյալ փոխառումն միջոցով) հարաբերական ազատության: Դրա հետևանքով այն կազմավորվեց ու դարձավ քրիստոնեական մշակույթի հիմքերի վրա կառուցված միջնադարյան կրոնականացված, ավատադիրական իրավական համակարգ:

<sup>1</sup> Տե՛ս Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, մ. I, Եր., 1940, էջ 223, 239:

### ԳԼՈՒԽ 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՍՏԱԿՄԱԳԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՂԹՅՈՒՐՆԵՐԸ X-XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

#### § 1. Հայաստանի իրավական համակարգը և իրավունքի աղբյուրները X-XIV դարերում

X-XIV դարերը քաղաքական պատմության տեսանկյունից բուռն ու անհանգիստ էին: Պատմաշրջանը սկսվում է Բագրատունյաց թագավորությամբ, հաջորդվում է բյուզանդական կարճատև նվաճումով, սեղուկյան մոտ մեկդարյա տիրապետությամբ, Զաքարյանների իշխանությամբ և ավարտվում է Հայաստանի մոնղոլական նվաճումով ու տիրապետությամբ: Քաղաքական անկայունությունը և ավատատիրական մասնատվածությունն իրենց ազդեցությունն էին բողնում նաև հայ իրավական մշակույթի զարգացման վրա, մշակույթ, որի զարգացման արտաքին գործոնն անկախ պետականությունն էր, իսկ ներքինը՝ երկրի սոցիալ-տնտեսական կյանքը: Երկու գործոններն էլ իրենց ազդեցությամբ իրավական համակարգի կայուն զարգացման համար նպաստավոր չէին: Սակայն նույնիսկ այդ պայմաններում խաղաղության և անկախության ամեն մի կարճատև ժամանակաշրջանում Հայաստանի իրավական կյանքն արձակում էր նոր ծիլեր՝ ի դեմս իր գրավոր աղբյուրների:

Այս շրջանի Հայաստանի իրավական համակարգն իր հիմնական գծերով արդեն կայացած միջնադարյան, ավատատիրական, կրոնականացված իրավական համակարգ էր: Դրանում առաջնային իրավական ձևեր էին սովորություն, աշխարհիկ օրենքները և կանոնական իրավունքը:

Բագրատունյաց թագավորության շրջանում նկատվում է հայոց պետականության ձգումը՝ ամրագրելու կիրառվող իրավունքը: Դա են վկայում այդ շրջանից մեզ հասած վիմական որոշ արձանագրություններ: Բացի այդ, Մխիթար Գոշի «Գիրք դատաս-

տանի»-ի «Աշխարհական օրենք» մասի առաջին հոդվածից ևս բխում է, որ նա թագավորի իշխանության, թագավորական ժատաստանի, թերդերի, ամրոցների ու քաղաքների, պատերազմի ու ավարառման և այլնի մասին համապատասխան իրավադրույթները քաղել է ինչպես Արշակունյաց, այնպես էլ Բագրատունի թագավորների օրենքներից:<sup>1</sup> Այսպիսվ, Բագրատունյաց թագավորությունն իր տնտեսական վերելով և մշակութային շինարարությամբ նախադրյալներ ստեղծեց հայ իրավունքի հետագա զարգացման համար: Այդ զարգացումը տեղի ունեցավ մի քանի ուղղություններով:

Նախ՝ «Բագրատունյաց թագավորությունը վերականգնում էր իր դերն ու ազդեցությունը նաև օտար օրենքների փոխառումով»:<sup>2</sup> Դրան էին նպաստում Հայաստանի և Բյուզանդիայի միջև առևտրատնտեսական հարաբերությունները, հայկական առևտրական կապիտալի ձեւավորումն ու կուտակումը: Մինչ սեղուկյան տիրապետությունը Հայաստանում գործել են նաև Իսավրյան հունարայուզանդական իրավունքի աղբյուրները, որոնցից հայերեն են բարգմաններ մի քանի օրենսդրական ակտեր՝ Եկլոգան, Իրինա կայսրուհու նովելաները վկաների և վկայության մասին, Հուստինիանոսի 83 և 123 նովելաները պետության և եկեղեցու փոխարարերությունների մասին, Եկլոգայի 33-րդ հավելվածը՝ «Զինվորական օրենքը», ինչպես նաև «Օրենքների կարծիքագրածուն» (բնօրինակը դեռևս չի հայտնաբերվել) և այլն:

Հայաստանում այդ իրավական ակտերը կիրառելու մասին հավաստի տվյալներ չկան: Սակայն, եթե եկեղեց այն դրույթից, որ բարգմանություններն արվում էին օգտագործելու նպատակով, և

<sup>1</sup> Խ. Սամվելյանի կարծիքով Մխիթար Գոշի «Դատաստանագրքից» երեսում է, որ Բագրատունյաց թագավորներն իրենց պետական ու վարչական համակարգը սահմանադրելիս ձգտել են վերականգնել Արշակունյաց պետության իրավական կարգերը, ավատական իրավունքի սովորույթներն ու նորմերը, և, ամենայն հավանականությամբ, այդ օրենքները կազմված են եղել գրավոր ժողովածուի ձևով, որի բովանդակությունն էլ մտել է Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» մեջ (տե՛ս Սամվելյան Խ., նշված աշխ., էջ 138-139):

<sup>2</sup> Տե՛ս նոյն տեղում, էջ 139:

նկատի ունենանք միջնադարյան պրակտիկան, երբ դատավորներն ազատ էին իրավունքի կիրառման մեջ, ապա կարելի է ասել, որ դրանք Հայաստանում գործադրվում էին։<sup>1</sup>

Հովհաննես Գ. Օճնեցու համակարգումից հետո հայ եկեղեցու իրավաստեղծ գործունեությունը շարունակվում էր, իսկ կանոնական ակտերը կուտակվում էին։ Այդ իսկ պատճառով X-XIII և հետագա դարերում ստեղծվում էին «Հայոց կանոնագրքի» նոր խմբագրություններ։<sup>2</sup>

Հայ կանոնական իրավունքի արժեքավոր աղբյուրներից է Ալավկա որդի Դավիթ վարդապետի կանոնախումբը։<sup>3</sup> Նրա կանոնների թիվն ամբողջական օրինակներում հասնում է 97-ի։ Կանոնները նրա կողմից գրվել են ի պատասխան հոգևորականների ամենօրյա գործունեության ընթացքում ծագած հարցերի։ Հենց դրանով էլ պայմանավորված է կանոնների բովանդակությունը։ Դավիթ կանոնների պատմական նշանակությունն այն է, որ դրանք հայկական ինքնուրույն համակարգված և ամբողջական իրավաբանական կողմիկացիայի ստեղծման առաջին փորձն էին։ Այդ կանոնախումբում արժեքավոր տվյալներ կան հայկական քրեական ու քաղաքացիական իրավունքների, ժողովրդի և հոգևորականների կենցաղի ու բարքերի մասին։ Դավիթն արտահայտում է մտքեր, որոնք շատ առաջադիմական էին իր ժամանակի համար, ինչպես օրինակ՝ աշխատանքի պաշտպանության վերաբերյալ կանոնները։ Դավիթ կանոնները հայկական իրավական մտքի և իրավունքի նոր համակարգումների վրա ազդել են նաև հետագա ժամանակաշրջանում։ Նրա որոշ կանոններ Սխիքար Գոշը նշորել է իր «Գիրք դատաստանի»-ի մեջ։

Զաքարյանների իշխանության ժամանակաշրջանում երկրի

տնտեսական ու մշակութային կյանքում կատարված փոփոխությունները, ինչպես նաև Հայաստանի բնակչության կառուցվածքում այլ էթնոսների հաստատումը խարիսկեցին սովորութային չգրված իրավունքի առանց այդ էլ խախուտ հիմքերը։ Այդ է փաստում այն, որ «Ասորահոռմեական դատաստանագրքի» մեջ հասած հայկական ձեռագրերի մեծագույն մասը համարվում են XIII-XIV դարերի գրչություններ։ Այսպիսով, հայ միջնադարյան աշխարհիկ իրավունքը Զաքարյանների շրջանից թևակոխեց իր զարգացման նոր՝ սովորութային գրի առնված իրավունքի շրջանը, որի դրսերումը Մխիթար Գոշի կողմից հայ իրավունքի համակարգումն էր՝ ոչ պաշտոնական կողմիկացիայի ձևով։<sup>1</sup> Այդ համակարգման արդյունքը նրա «Գիրք դատաստան»-ին է՝ հայ իրավունքի, հայ հասարակական-քաղաքական և իրավական մտքի կարևորագույն կորողը, համաշխարհային իրավական մշակույթի պատմության արժեքավոր հուշարձաններից մեկը։ Իր ստեղծագործական ժառանգության գլուխգործոցի շարադրանքը Մխիթար Գոշը սկսել է 1184 թ.։

Դրդապատճառները և նպատակները, որ Մխիթար Գոշին ստիպել են կազմել «Դատաստանագիրքը», բազմաթիվ են և հրատապ։ Իրավաբանական գործնական նպատակներից բացի՝ Մխիթար Գոշը հետապնդել է քաղաքական հատուկ նպատակներ, մասնավորապես՝ ամրապնդել հայ եկեղեցու դիրքերը, միավորել հայ ժողովրդի բոլոր ուժերն արտաքին քշնամու դեմ՝ հանուն անկախության վերականգնման, հայկական ապագա պետության մեջ հաստատել ամուր օրինականություն և այլն։ Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը» գործել և կիրառվող իրավունքի աղբյուր է ծառայել ամբողջ միջնադարի ընթացքում։ Դատաս-

<sup>1</sup> Տե՛ս **Տօրքառ X.**, նշված աշխ., էջ 44։

<sup>2</sup> Տե՛ս Կանոնագիրը Հայոց, աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, հ. Ա, Եր., 1964, հ. Բ, Եր., 1971։

<sup>3</sup> Դավիթը ծնվել է Գանձակում և գործել է XI դ. վերջին ու XII դ. սկզբին։ Նա իր կանոնները գրել է Արքայություն անունով մի հոգևորականի խնդրանքով՝ ենթադրաբար ավարտելով 1130 թ.։

<sup>1</sup> Գոշը ծնվել է Գանձակում XII դ. 30-ական թվականներին։ Կրրվել է Հովհաննես վարդապետ Տավուշեցու մոտ և ստացել վարդապետի գիտական կոչում։ Հետագայում փոխադրվել է Կիլիկիա և կրթությունը շարունակել Կարմիր վանքում։ Այնուհետև վերադարձել է Հայաստան։ Բարեկամական հարաբերությունների մեջ է եղել Զաքարե և Խվանե Զաքարյանների հետ։ Մահացել է 1213 թ.։ Նրա գրչին նաև պատկանում շատ աշխատություններ, այդ թվում՝ առակների ժողովածուն։

տանագիրքն ունի հայկական և օտարալեզու մի քանի խմբագրություններ ու դրանց թարգմանություններ։<sup>1</sup>

Հայկական բուռն զարգացող իրավունքը մոնղոլական տիրապետության ժամանակ կործանիչ հարված ստացավ, քանզի զրկվեց իր զարգացման քաղաքական հիմքերից: Թեև հայ իշխանական տները, առևտրի ու արհեստագործության կենտրոն քաղաքները մասամբ պահպանվում էին, սակայն «չէին ներկայացնում այն պետական կազմը, այն ազգային քաղաքական կոմպակտ մարմինը, որտեղ կարողանար տեղական օրենսդրություն գոյանալ և հայ իրավունքն իր հետագա զարգացումն ունենար: Այս պայմաններում հայկական միջավայրի հասարակական հարաբերությունները կարգավորվում էին սովորությական իրավունքի նորմերով և հայ օրենսգրքերով, որոնք հասել էին նախորդ՝ Զաքարյանների իշխանությունից, որտեղ, անկասկած, գլխավոր տեղն էր բռնում Սխիքար Գոշի «Դատաստանագիրքը»։<sup>2</sup>

## § 2. Մեջուկյան տիրապետությունը և Հայաստանի իրավական համակարգի երկատումը Եթնիկ-կրոնական հատկանիշով

Մեջուկյան տիրապետության հաստատումից հետո Հայաստանի իրավական համակարգի զարգացման օրինաչափություն է դառնում դրա երկատում՝ ըստ Եթնիկ-ազգային հատկանիշի: Եթե արարական տիրապետությունը խոր հետքեր չըողեց Հայաստանի բնակչության ժողովրդագրական կառուցվածքի վրա, ապա սելջուկյան տիրապետությունից սկսած՝ ներիոսքի և կրոնակության միջոցով Հայաստանում հաստատվեց մեծարիկ մահմեդական բնակչություն, որի սոցիալ-նորմատիվ կարգավորման համակարգում առաջնային կարգավորիչը մահմեդական իրավունքի գլխավոր աղբյուր Շարիաթն էր: Արաբական տիրապետության շրջանում Շարիաթի նորմերը գործում էին միայն վարչաքաղաքական և ֆինանսական հասարակական հարաբերությունների ոլորտում՝ նվազողների շահերին համապատասխան:

Հայաստանում մահմեդական բնակչության ի հայտ գալը հանգեցրեց նրան, որ Շարիաթը սկսեց կարգավորել այդ բնակչության ներիամայնքային և որոշակիորեն նաև արտահամայնքային հասարակական հարաբերությունները: Դրան նպաստեց նաև մոնղոլների մահմեդականացումը: Մահմեդական իրավական համակարգի թեոկրատական և նաև կրոնախտրական բնույթը պայամանավորեցին հայ իրավունքի հետագա գոյությունը, որովհետև այլահավատներն ունեին սեփական օրենքների և իրավական սովորույթների հիման վրա իրենց հարաբերությունները կարգավորելու իրավունք: Իրավական ներքին ինքնավարության այդ փաստը հաստատվում է նաև հայկական վավերագրական աղբյուրների վկայություններով: Օրինակ՝ այդ հանգամանքն ուղղակի հաստատում է հայ եկեղեցու գործիչ Ներսես Լամբրոնացու 1193 թ. վերաբերող վկայությունը. «Գրիգորի պատրիարքության տարիներին, որը երրորդն էր իր անվանակիցների մեջ (նկատի ու-

<sup>1</sup> Գիտնականները դեռ վաղուց նկատել էին, որ «Դատաստանագրքի» հայկական ձեռագրերն ունեն երկու (Վ. Բաստամյանց) կամ երեք (Ի. Կարստ) խմբագրություններ: Ձեռագրի մի խմբում տեքստը կազմված է նախադրությունից և 251 հոդվածից: Ընդ որում, հոդվածները միմյանց հաջորդում են ըստ համարների: Ձեռագրերի մյուս խմբում հոդվածները բաժանված են 2 մասի՝ եկեղեցական կանոններ (124) և աշխարհիկ օրենքներ (130): Ձեռագրերի երրորդ խմբում «Դատաստանագրքի» համակարգը նույն է, ինչ որ առաջինում, սակայն տեքստը որոշ տեղերում նշանակալիրեն կրծատված է: Նորագույն շրջանի հայագետները փորձեցին պարզել դրա սկզբնական հեղինակային խմբագրությունը, հեղինակային տեքստը, որոշիչ խմբագրության ստեղծման նոտավոր ժամանակը, զանազան խմբագրությունների ծագման պատճառները (տե՛ս օրինակ՝ Սխիքար Գոշ «Գիրք դատաստանի», աշխատասիրությամբ Խ. Թորոսյանի, Եր., 1975, ինչպես նաև Պիվազյան Էմ., Սխիքար Գոշի «Դատաստանագրքի» բնասիրական քննություն, Եր., 1987):

<sup>2</sup> Տե՛ս Սամվելյան Խ., նշվ. աշխ., էջ 153-154:

նի՝ պատրիարքների մեջ), Հռամկլայում, 1193 թվականին, նրա պատրիարքության տասնութերորդ տարում, քաղաքների և զավառների բնակչները սրբության առջև հարուցեցին հարց քաղաքացիական օրենքների մասին: Քանի որ մահմեդականներից նրանք, ովքեր իշխաններ էին քաղաքներում և դատավորներ, հայերի դատական գործերը չէին լուծում, իսկ նրանցից դատաստան խնդրողներին ուղարկում էին դատվելու իրենց օրենքներով: Քանի այդպիսին էր նրանց գլխավոր մելիքների հրամանը տրված քաղաքների դատավորներին՝ նրանց (հայերի) դատը բողնել իրենց դատելու, իրենց իսկ օրենքներով»<sup>1</sup>: Այս վկայությունից երևում է, որ մահմեդական դատարանները զիմնի հայերի դատական գործերը չէին ընդունում, դիմողներին էլ ուղարկում էին դատվելու իրենց իսկ օրենքներով:

\* \* \*

Այսպիսով, X-XIV դարերում Հայաստանի զարգացող իրավական համակարգը կրեց էական փոփոխություններ: Մնալով միջնադարյան, ավատատիրական սովորութային իրավական համակարգ՝ այն հասարակական հարաբերությունների զարգացման հետևանքով չգրված սովորութային իրավունքից անցում կատարեց զրված սովորութային իրավունքի՝ միաժամանակ չփոխելով իր կրոնական բնույթը: Սակայն XIII դ. սկսած՝ քաղաքական միջավայրը հայկական իրավական համակարգի զարգացման համար դարձավ աննպաստ, ինչի հետևանքով իրավական մշակույթի ակնհայտ նվաճումներ բուն Հայաստանում չեն նկատվում: Բացի այդ, բնակչության ժողովրդագրական կառուցվածքի փոփոխությունը Հայաստանի իրավական համակարգը երկատեց՝ ըստ էրնիկ-կրոնական հատկանիշի՝ բուն հայկական և մահմեդական:

<sup>1</sup> Տե՛ս Զարքիանալեան Գ., Մատենադարան հայկական քարզմանութեանց նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 754:

### § 3. Հայ իրավական մշակույթը XV-XVII դարերում

Հայկական միջնադարյան իրավունքը, որը բուռն զարգացում ապրեց IX-XIII դդ., քայլայիշ հարվածի ենթարկվեց մոնղոլների արշավանքների, քոչվոր ցեղերի տիրապետության, քուրքապարսկական գերիշխանության հաստատման հետևանքով: Հայկական պետականությունն անհետացավ պատմության թատերաբեմից: Չնայած մնամ էին հայկական քաղաքները, մասսամբ նաև ավատատիրական տները, սակայն դրանք չէին կարող դատնալ հայ իրավունքի զարգացման էական գործոն, քանի որ Հայաստանն այլս քաղաքական միավոր չէր, այլ ընդամենը մահմեդական պետությունների տարածքային մաս: Այստեղ այլև խոսք չէր կարող լինել հայ իրավունքի՝ իբրև ամբողջական իրավական համակարգի՝ մասին: Հայկական պետականության՝ որպես իրավունքի զարգացման էական գործոնի, կորստով և մահմեդական գերիշխանության հաստատմաբ Հայաստանի հայկական համայնքների հանրային բնույթը ունեցող հասարակական հարաբերությունների ոլորտում ավելի ու ավելի էր արմատավորվում Շարիաթի նորմերի կիրառումը:

Հայկական սովորութային իրավունքն ու հայ կանոնական իրավունքի աղբյուրներն իրենց գործողությունը շարունակում էին հայկական համայնքների սահմաններում և միայն ընտանեկան, ժառանգական ու մի շարք այլ հարաբերությունների ոլորտում:

Այսպիսով, ավատատիրական հասարակության իրավական համակարգի յուրահատկությունների շնորհիվ հայկական իրավունքը շարունակում էր կատարել հասարակական հարաբերությունների կարգավորման իր դերը: Այդ առաձնահատկությունն ավատատիրական իրավունքի ասլակենտրոնացվածությունն էր, որն էլ իր հերթին պայմանավորում էր իրավունքի աղբյուրների բազմազանությունը և իրավակիրառ գործունեության ընթացքում իրավունքի աղբյուրի ընտրության հարաբերական ազատությունը: Ավատատիրական հասարակության իրավական համակար-

զի այդ յուրահատկությունը նպաստում էր հայկական սովորութային իրավունքի, միջնադարյան դատաստանագրքերի, կանոնական իրավունքի, մասամբ նաև հայկական դատարանների պահպանանն ու գործողությանը:

Հնանարկվող ժամանակաշրջանում, ի տարբերություն հայ աշխարհիկ իրավունքի, կանոնականը, թեկուղ դանդաղ, այնուամենայնիվ որոշակիորեն զարգանում էր. կազմվում էին «Հայոց կանոնագրքի» նոր խմբագրություններ: Դրանցից աչքի են ընկնում Գևորգ Երգմիացու (XIV-XV դդ.), Ազարիս Սասնեցու (XVII դ.) խմբագրությունները: Սակայն, ի տարբերություն Հովհաննես Գ. Օձնեցու պաշտոնական համակարգման, կանոնական իրավունքի հետագա ժողովածուները ոչ պաշտոնական կարգով կազմվել են ժամանակի կրթված անձանց՝ հոգևոր սպասավորների կողմից: «Սակայն այս հանգամանքը չի խանգարել, որ Կանոնագիրքն ամբողջությամբ վերցրած չկորցներ իր նախնական պաշտոնական բնույթը և ըստ սովորության շարունակեր մնալ ավատական հասարակության ներքին կյանքի մի շարք կողմեր կարգավորող պաշտոնական ուղեցույց: Այս երևոյթը բնականոն էր հայ ժողովրդի պատմության համար, որովհետև նա, դարեր շարունակ գրկված լինելով իր պետականությունից, եկեղեցուն նայում էր որպես միակ կենտրոնական և համագային մի հաստատություն, որի իրավասության տակ գտնվող հարցերի լուծման համար Կանոնագիրքն ամբողջությամբ համարվում էր բարձրագույն իշխանության կամքի արգասիք»:<sup>1</sup>

Հայկական իրավունքի, ներհամայնքային ու կրոնական դատարանների պահպանանը նպաստած մյուս գործոնը իսլամի՝ որպես կրոնի, առանձնահատկությունն էր և այստեղից բխող մուսուլմանական իրավունքի հիմնական աղբյուր Շարիաթի յուրահատկությունը: Այն է՝ Շարիաթն օրենք է միայն մուսուլմանների համար: Իսլամն աշխարհը բաժանում է երկու մասերի՝ դար ալ-իսլամ (իսլամի աշխարհ, հավատի աշխարհ), և դար ալ-իսլար:

Ըստ մուսուլմանական իրավունքի՝ անձի իրավական կարգավիճակը վճռում է նրա կրոնը: Լիիրավ անձնական կարգավիճակը ուներ միայն մահմեդականը: Վերջինի հիմնական պարտականություններից մեկը սուրբ պատերազմը՝ ջիհադն էր՝ հանուն հավատի: «Անհավատների» աշխարհը պետք է նվաճվի: Նվաճումը նվաճվածների համար ստեղծում է հետևյալ իրավական կարգավիճակները. նվաճվածների մի մասը կամավոր ընդունում է խւամը և դառնում է մուսուլմանական համայնք-պետության լիիրավ անդամ, կամ նվաճվածները մնում են իրենց հավատին հավատարիմ և շարունակում են դիմադրությունը: Վերջիններս ենթակա են անիմա ոչնչացման: Վերջապես նվաճվածները մնում են հավատարիմ իրենց կրոնին, սակայն ճանաչում են մուսուլմանական համայնք-պետության իշխանությունը»:<sup>1</sup> Այս «անհավատները» մուսուլմանական պետություններում կազմում էին հպատակների հատուկ խումբ՝ գիմմիներ ( մուսուլմանական պետության պաշտպանության տակ գտնվող մարդիկ): Մահմեդական իրավունքի այս դոգմայի գործողության շնորհիվ գիմմիների համայնքներն օգտվում էին իրավական ինքնավարությունից՝ սեփական օրենքների և իրավական սովորությների հիման վրա իրենց հարաբերությունները կարգավորելու իրավունքից, քանի որ Շարիաթն իրավունք էր միայն մահմեդականների համար:

Այսպիսի իրադրությունը հանգեցրեց նրան, որ, օրինակ, Թուրքիայում XV դ. սուլթան Սեհմեդ II-ի օրոք սահմանվեց կրոնական համայնքների համակարգ, որը, նախ համապատասխանում էր մուսուլմանական իրավունքի տեսությանը, և ապա սուլթանների կողմից օգտագործվում էր ոչ մահմեդական բնակչությանը հնազանդության մեջ պահելու օժանդակ միջոց: Թուրքական իշխանությունների համար կրոնական համայնքները ստեղծում էին հարկային հարմարություններ, քանի որ հենց դրանց միջոցով էին գանձվում տարբեր հարկեր և տուրքեր: Այդ համայնքները բոլոր պահանջանական պետության ազատում էին ոչ մահմեդական

<sup>1</sup> Տե՛ս «Կանոնագիրք Հայոց», հ. Բ, Եր., 1971, էջ CXVII:

<sup>1</sup> Տե՛ս Տօրօսյան Խ., նշանական աշխարհ, էջ 108:

բնակչության հանդեպ մի շարք գործառույթներ կատարելուց:

XV դարի երկրորդ կեսին թուրքական իշխանությունները ճանաչեցին երեք կրոնական համայնքներ՝ հունաուղղափառ, հայ գրիգորյանական, հրեական: Դրանց ղեկավարությունն իր հավատակիցների վրա ուներ ոչ միայն հոգևոր, այլև որոշակի քաղաքացիական իշխանություն<sup>1</sup>: Հունաուղղափառ համայնքի կազմավորումից հետո ստեղծվեց հայ գրիգորյանական համայնքը (Երմենի միլեսի): 1461 թ. Մեհմեդ II-ի հրամանով՝ Բուրսայից մայրաքաղաք բերման ենթարկվեց Հովակիմ Եպիսկոպոսը (նրա հետ մայրաքաղաք տեղափոխվեցին բազմաթիվ հայ ընտանիքներ),<sup>2</sup> ում և սուլթանը դարձրեց պատրիարքը:<sup>3</sup>

Իրավական ներքին ինքնավարության այդ կարգը գործում էր նաև Պարսկաստանում: 1650 թ. Աքաս II շահի հրամանով հայերին թույլատրվում էր ծագած վեճերը լուծել հայ հոգևորականության միջոցով՝ «իրենց կրոնի և հավատի համաձայն», իսկ Շարիաթի նորմերը կիրառել միայն այն դեպքերում, եթե վեճի կողմերից մեկը մահմեդական էր:<sup>4</sup>

Հետևաբար, հայկական դատարանների՝ եկեղեցական (կաթողիկոս, Եպիսկոպոս, Վարդապետ, հոգևորական), դատական իրավագործությունը պահպանած ավատատեր-գիմմիների (տերունական), հայկական գյուղական և քաղաքային համայնական, ցեխերի և եղբայրությունների ընդդատությանը ենթակա իրավական գործերով կիրառվում էր հայկական իրավունքը:

Մուսուլմանական դատարանների ընդդատությանը ենթակա գործերով կիրառվում էին Շարիաթի նորմերը, որոնք թույլատրում էին բացահայտ կրոնական խորականություն և կամայականություն: Այսպես, Պարսկաստանին անցած Արևելյան Հայաստա-

նում XVII դ. սկզբին կազմակերպվեցին վարչատարածքային միավորներ՝ խանություններ՝ շահի նշանակած խանի գլխավորությամբ: «Խանություններում գրեթե ամբողջ դատական լիազորությունները կենտրոնացված էին մահմեդական հոգևորականության ձեռքում: Գլխավոր դատավորը կադին էր, որի նստավայրը քաղաքն էր, իսկ գյուղերում դատավարությունն իրականացնում էին մոլլանները: Նուրանի սկզբունքները և Շարիաթի օրենքները հնարավոր էին համարում դատավարության ընթացքում կրոնական խորականության կիրառում»:<sup>1</sup>

Սկսած XVI դ.՝ Թուրքիային անցած Արևմտյան Հայաստանում կազմակերպվեցին վարչատարածքային միավորներ՝ փաշաշություններ՝ սուլթանի նշանակած փաշաների գլխավորությամբ: Այստեղ «դատական գործը տնօրինում էր իսլամ հոգևորականությունը, իսկ դատական մարմինների գործունեության հիմքում դրված էին Շարիաթի օրենքները: Փաշայություններում Նուրանի սկզբունքների հիման վրա գործող դատավորները խախտում էին այլահավատ բնակչության իրավունքները, կիրառում էին կրոնական խորականություն, անտեսում էին արդարադատության սկզբունքները, իսկ դրանից չափից շատ տուժում էին հայերը: Փաշայություններում գլխավոր դատավորը կադին էր, որի հակողության տակ գործում էին ստորադաս դատարանները: Զնայած դատական համակարգի գոյությանը՝ փաշայի և այլ պաշտոնատար անձանց կամայականությունը բնակչության ստորին շերտերի և, հատկապես, նվաճված ժողովուրդների նկատմամբ չուներ ոչ մի սահման»:<sup>2</sup> Այդպիսի իրադրությանը նպաստում էին նաև մահմեդական իրավունքի նորմերը, որոնց հիմքում դրված էր անհանդուրժողականությունը և կրոնական խորականությունը:

<sup>1</sup> Տե՛ս Խովիչև Ա. Դ., Իստորիա Տուրցիա. Տ. 1, Լ., 1963, էջ 72:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 73:

<sup>3</sup> Պատրիարքի և պատրիարքարանի իրավագործությունների մասին մասնաւուն «Հայ ժողովորդի պատմություն», հ. IV, 1972, էջ 301-305:

<sup>4</sup> Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I, Հրովարտակներ, պրակ երկրորդ, (1601-1650 թթ.), կազմեց Հ. Դ. Փափազյանը, Եր., 1959, էջ 373:

<sup>1</sup> Տե՛ս Պարսյան Ս., Հայաստանը XIII-XVII դդ., Հայ ժողովորդի պատմություն, Եր., 1960, պարկ 5, էջ 104:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 108:

\* \* \*

Այսիսով, XV-XVII դարերում հայ իրավունքը ոչ թե ամբողջական և ինքնուրույն իրավական համակարգ էր, այլ Ծուրքիայի և Պարսկաստանի մահմեդական իրավական համակարգերում գոյատևող՝ կրոնական-էքնիկ իմբերով հարաբերականորեն ինքնուրույն իրավական կարգավորման ենթահամակարգ, որը սովորութային, դասային, կրոնականացված, ապակենտրոնացված (մասնատված) իրավունք էր: Այն գոյատևում էր բավականին բարդ և զարգացման համար աննպաստ քաղաքական միջավայրում: Դրա հետևանքով բուն Հայաստանում իրավական մշակույթի (իրավաստեղծագործություն, իրավական գործունեություն, պետականացված միտք) ակնհայտ նվաճումներ չեն նկատվում:

#### § 4. Հայ իրավական մշակույթի արտահանումը և հայկական գաղթավայրերում դրա զարգացումը XVI-XVIII դարերում

Մահմեդական գերիշխանության պայմաններում գրեթե անտանելի սոցիալ-տնտեսական իրականությունը առաջ բերեց հայ բնակչության հոծ արտագաղթ բուն Հայաստանից: Դա նշանակում էր նաև հայկական (այդ բվում իրավական) մշակույթի, արտահանում: Սիջնադարյան կրոնաիրավական համակարգերում, ի տարբերություն նոր դարաշրջանի աշխարհիկ իրավական համակարգերի, դա սովորական երևոյթ էր, իսկ էքնիկ-կրոնական չափանիշով իրավական կարգավորման աղբյուրների տարրերակումը՝ օրինաշափություն: Դրա հետևանքով հայկական իրավունքը, հետևելով հայ էքնոսի գաղթաշարժերին, սկսեց գործել և զարգանալ խոշոր ու կայացած գաղթավայրերում՝ Հայաստանից դրուս՝ օտարերկրյա պետությունների տարածքներում:

Առաջինը Լեհաստանի հայ համայնքը երկար և համար պայքարի շնորհիվ հասավ ներքին ինքնավարության: Լեհական իշխանությունները համայնքին առաջարկեցին հաստատման ներ-

կայացնել իրենց ազգային օրենքները: Հայերը Սիփթար Գոշի Դատաստանագիրը համապատասխան կրատումներով ու փոփոխություններով բարգմանեցին լատիներեն (այնուհետև՝ լեհերեն): Լեհական սեյմը քննարկեց և հավանության արժանացրեց Դատաստանագիրը, իսկ Սիփթար Մեծ քազավորը 1519 թ. հաստատեց այն: Սիփթար Գոշի Դատաստանագրի լատինական (լեհական) խմբագրությունը մինչև XVIII դ. կիրառվում էր Լվովի հայկական համայնքի դատարաններում:

XVIII դ. հայ իրավունքի գործողությունը Հայաստանից դուրս՝ հայկական գաղթօջախներում, դրսնորվում է նաև Ռուսական կայսրությունում: Այս շրջանում կայսրությունը դեռևս լրիվ չէր թոքափել իր իրավական համակարգի ավատափրական-սովորութային գծերը, ինչի հետևանքով այստեղ հնարավոր էր իրավակարգավորման տարրերակում՝ ըստ էքնիկ-կրոնական հատկանիշի: 1746 թ. Աստրախանի հայերը և այլ օտարերկրացիներ իրավունք էին ստացել դատվել իրենց օրենքներով և սովորությներով: Դրա համար ստեղծվեց Աստրախանի հայերի դատաստանագիրը՝ կազմված 1135 հոդվածներից: Այդ դատաստանագիրը՝ որպես իրավունքի աղբյուր, օգտագործվել է նաև Հարավային Ռուսաստանի հայկական այլ գաղթօջախներում՝ Ղրիմում, Նոր Նախիջևանում: 1765 թ. Եկատերինա II-ի հրովարտակով՝ Աստրախան քաղաքի հայկական համայնքին թույլատրվեց ստեղծել նաև «Աստրախանի հատուկ հայկական դատարան»:

Հայ իրավական մշակույթի ընդհանուր լճացմանը զուգընթաց մենք նկատում ենք դրա զարգացում նոր՝ յուրահասուկ ոլորտներում ու ձևերով: Համաշխարհային առևտորի բուն զարգացման պայմաններում ի հայտ է գալիս իրավական այնպիսի կարգավորիչ, ինչպիսին է միջազգային մասնավոր (առևտորական) պայմանագիրը: XVII դարից ձևավորվում են հայ վաճառականների առևտորական ընկերությունները: Դրանցից հատկապես աշքի էր ընկնում «Զուլայի հայ առևտորական ընկերությունը», որը միջազգային մասնավոր առևտորական պայմանագրեր էր կնքում ոչ միայն օտարերկրյա առևտորական ընկերությունների, այլև ա-

ունաճին պետությունների հետ: Այդ ընկերությունը «1667 և 1673 թթ. առևտրական պայմանագրեր կնքեց Ռուսաստանի հետ, որոնց համաձայն նրան իրավունք էր տրվում ազատ առևտուր անել Ռուսաստանի, ինչպես նաև Ռուսաստանի վրայով՝ Արևմտյան Եվրոպայի երկրների հետ: Չուրայեցի վաճառականների մի այլ ընկերություն Սուրահում՝ 1688 թ. առևտրական պայմանագիր կնքեց անգլիական Արևելահնդկական ընկերության հետ»<sup>1</sup>: Այդ միջազգային մասնավոր պայմանագրով հայ վաճառականները հիշյալ ընկերությունից ստացան այն բոլոր արտոնություններն ու իրավունքները, որոնցից օգտվում էին անգլիացի վաճառականները:

Անգլիական Արևելահնդկական ընկերությունը և հնդկահայ վաճառականների ներկայացուցիչ Խոջա Փանոս Ջալանթարյանը ևս կնքել են միջազգային մասնավոր առևտրական պայմանագիր, որով «հայ վաճառականներն ստանում էին անգլիական ազդեցության տակ գտնվող բոլոր երկրներում անգլիացուն հավասար իրավունք, կարող էին երթևեկել ցանկացած վայրեր, բնակություն հաստատել ցանկացած տեղում, կալվածքներ ունենալ, պաշտոններ վարել և այլն»<sup>2</sup>:

Միջազգային մասնավոր պայմանագրային իրավունքի գարգացումը՝ հայկական տարրի մասնակցությամբ, բացատրվում է այն հանգամանքով, որ այս հարաբերությունների գարգացման և դրանց իրավակարգավորումների հիմքում ընկած էր մասնավոր գործոնը, հանճինս հայ վաճառականության: Հենց այդ նույն գործոնը հետագայում նպաստեց նաև հայ պետափառական մտքի գարգացմանը Հնդկաստանի հայկական գաղթօջախներում:

Այսպիսով, XVII-XVIII դարերը հայ իրավական մշակույթի «լճացման» ժամանակաշրջանն էր: Այդ միտումը, որոշ բացառություններով, պահպանեց մինչև Հայաստանի առաջին հան-

րապետության հոչակումը: Լճացման պատճառն իրավական մշակույթի և քաղաքական-պետական գործոնի սերտ կապն ու փոխայմանավորվածությունն էր: Ընդհանրապես հայ մշակույթի զարգացման պատմության մեջ նկատվում է դրա հարաբերական ինքնուրույն զարգացումը անկախ Հայաստանի քաղաքական դրույթունից և հայ պետականության առկայությունից: Ի տարրերություն մշակույթի այլ ոլորտների՝ իրավականը սերտորեն կապված է քաղաքական իշխանության հետ, և եթե չկա անկախ պետականություն կամ հայ քաղաքական որևէ այլ գործոն, ապա իրավական մշակույթի գրեթե բոլոր բաղադրատարրերը գրկվում են իրենց զարգացման հիմքերից: Հայ իրավական մշակույթի տարրերից զարգացում նկատվում է միայն միջազգային մասնավոր իրավունքում՝ ի դեմք հայ առևտրականների կնքած միջազգային պայմանագրերի, և հայ գաղթավայրերի իրավական հարաբերությունների կարգավորման ոլորտում:

Հայ իրավական մշակույթի դրսերումներից միայն պետափառական միտքն էր, որ իր ձևավորման և զարգացման մեջ հարաբերականորեն անկախ էր քաղաքական գործոնից: Սակայն բուն Հայաստանում XVIII դարում չկային պետափառական մտքի զարգացման նախադրյաներ: Հետևաբար հայ պետափառական միտքը՝ որպես իրավական մշակույթի բաղադրատարր, ձևավորվեց Հայաստանից դուրս գտնվող գաղթավայրերում: Դրանցից հատկապես աչքի է ընկնում Մաղրասի հայրենափառական խմբակի գործունեությունը, որի արդյունքը հայ պետափառական մտքի ականավոր հուշարձաններն են՝ «Նոր տետրակ, որ կոչի յորդորակ»-ը (Սովուս Բաղրամյան), «Որոգայր փառաց»-ը (Շահամիր Շահամիրյան), «Նշաւակը»:<sup>1</sup>

Հայ պետափառական մտքի ստեղծագործության արդյունքներից էին նաև XVIII դարի վերջերին մշակված ապագա հայկական պետության և Ռուսական կայսրության միջև կնքած պայմանագրությունը:

<sup>1</sup> Տե՛ս H.B. Morse, The chronicles of the East India company trading to China, vol. 1, Oxford, 1926, էջ 174 (հղումն ըստ «Հայ ժողովրդի պատմություն», հ. IV, Եր., 1972, էջ 330-331):

<sup>2</sup> Տե՛ս «Ազգասեր», Կալկատա, 1846, N 39, հղումն ըստ «Հայ ժողովրդի պատմություն», հ. IV, Եր., 1972, էջ 341:

<sup>1</sup> «Նշաւակի» ամբողջական վերտառությունն է՝ «Տետրակ, որի կոչի նշաւակ վասն կառաւարելոյ ինչու որքոց և առանց կտակ ննջեցելոց»: Այն իրենից ներկայացնում է Մաղրասի հայ գաղութի կանոնադրությունը, որի հեղինակը և Շահամիր Շահամիրյանն է:

մանագրի երկու նախագծերը, որոնք ներկայացվել են ցարական արքունիքին: Առաջին նախագիծը մշակել և ներկայացրել էր ոռուսահայոց հոգևոր առաջնորդ Հովսեփ Արքեպիսկոպոսը՝ 1783 թ.: Այն նախատեսում էր վերականգնել հայկական թագավորությունը: Երկրորդ նախագիծը մշակել է Շ. Չահամիրյանը, որն ազատագրված Հայաստանը հոչակում էր հանրապետություն՝ ազատական բնույթի իրավական համակարգով:

Հայ պետախրավական մտքի նշված պտուղների մեջ հատկաբես աշքի է ընկնում «Որոգայթ փառացք»: Այն՝ որպես հայ իրավական մտքի ականավոր հուշարձան, հայագիտության մեջ դիտվում է որպես Հայաստանի ազատագրության ծրագիր՝ հայուս-վրաց ռազմաքաղաքական եռյակ միտրյուն ստեղծելու միջոցով:<sup>1</sup> «Որոգայթ փառացք»-ը՝ որպես հայ ազգային-ազատագրական շարժման կազմակերպման պետախրավական կառուցակարգի նախագիծ, ունի 521 հոդվածներից բաղկացած օրենսդրական բաժին՝ ազատագրված Հայաստանի համար առաջարկվող օրենքների նախագծերի տեսքով:

Հայ պետախրավական մտքի այսպիսի յուրօրինակ զարգացումը, բոհջքը պայմանավորված էր մտավոր իրավական մշակույթի նաև անհատական-մասնավոր հասարակական նախաձեռնությունների միջոցով զարգանալու ընդունակությամբ: Այսպիսով, մադրասյան խմբակի գործունեությամբ սկզբնավորվեց հայկական իրավագիտությունը: Նոր ձևավորված հայ պետախրավական միտքը (իրավագիտությունը) աշքի էր ընկնում հետևյալ առանձնահատկություններով՝ 1) ազգային-ազատագրական ուղղվածություն, 2) ազատականություն, 3) աշխարհիկ իրավաբանական աշխարհայցք, 4) լուսավորչականություն:

<sup>1</sup> Տե՛ս Խաչատրյան Գ.С., «Западная честолюбия» и «Ншавак» Ш. Шаамиряна как памятники армянского права эпохи просвещения. Автореф. Дисс. ... канд. Юр. Наук. Тбилиси, 1990, էջ 3:

#### ԳԼՈՒԽ 4. ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՍՏԱԿՄԱԳԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՄՆԵՐԸ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

##### § 1. Կիլիկիայի հայկական թագավորության իրավական համակարգի առանձնահատկությունները

Կիլիկիայի իրավական համակարգը և իրավական մշակույթի բաղադրիչները նկարագրելիս անհրաժեշտ է հաշվի առնել այդ համակարգի և իրավական մշակույթի ձևափորման ու զարգացման առանձնահատկությունները, որոնք պայմանավորված էին մի շարք գործոններով:

Կիլիկիայի հայկական թագավորությունը ժառանգել էր բուն Հայաստանի իրավական մշակույթն ու իրավական կարգավորման աղբյուրները: Դա արդյունք էր իին ու միջնադարյան իրավունքի երնիկ-կրոնական պայմանավորվածության, ինչի հետևանքով հայ բնակչության արտագաղթին հետևում էր իրավական մշակույթի, ներառյալ իրավունքի աղբյուրների, տեղաշարժը: Հետևաբար Կիլիկիայի հայկական թագավորության իրավական համակարգում իրավունքի աղբյուր կամ կարգավորիչ նորմատիվ ձևեր էին համարվում բուն հայաստանյան ձևերը, այն է՝ սովորության իրավունքը, կանոնական իրավունքը՝ ներառյալ Ալավկա որդի Դավիթ Վարդապետի կանոնախումբը, Մխիթար Գոշի դատաստանագիրը, ինչպես նաև մինչ Կիլիկիայի հայկական թագավորության հոչակումը փոխառված օտար իրավական ձևերը:

Կիլիկիայի հայկական թագավորությունը կենտրոնացված ու բավականաշափ կենաւոնակ միապետություն էր, ինչի շնորհիվ այն ոչ միայն պահպանեց հայ իրավական մշակույթի նախորդ շրջանի տարրերն ու կարգավորիչ աղբյուրները, այլև զարգացման նոր աստիճանի հասցեց հայոց իրավական մշակույթն իր բոլոր բաղադրատարրերով, այդ թվում ստեղծեց իրավական կար-

գավորման նոր աղբյուրներ (ձևեր):

Վերջիններից հատկապես աչքի է ընկնում Սմբատ Սպարապետի դատաստանագիրքը (1265 թ.)՝ որպես պետական պաշտոնական կողիքիկացիա: Այն հայ սովորութական իրավունքի, կանոնական իրավունքի, Միկրար Գոշի դատաստանագրքի՝ արևմտաեվրոպական ազդեցությամբ կատարված իրավական նորմատիվ նյութի կողիքիկացիա է: Հայ իրավունքի համակարգումն իրականացնելիս հեղինակը ցուցաբերել է ստեղծագործական մոտեցում՝ նորմատիվ իրավական կարգավորումը հարմարեցնելով տեղի և ժամանակի պայմաններին: Բացի այդ, Սմբատ Սպարապետի դատաստանագիրքը «ըստ իր ձևի և համակարգված շարադրանքի, ըստ նյութի դասավորության» խսկական օրենսգիրք է<sup>1</sup>:

Այդպիսով, Սմբատ Սպարապետը զարգացրեց հայկական իրավաստեղծագործական տեխնիկան՝ կատարելով իրավական նորմերի համակարգված դասակարգում՝ թագավորական և իշխանական իրավունքի (պետական իրավունքի) նորմեր, եկեղեցական (կանոնական) իրավունքի նորմեր, քաղաքացիական (աշխարհիկ) իրավունքի նորմեր:

Ի տարրերություն նույն շրջանի Հայաստանի, Կիլիկիայի հայկական թագավորության իրավական համակարգն իր զարգացման հիմքում ուներ համեմատաբար զորեղ միապետություն, ինչը և իրավունքի զարգացման զիսավոր գործոնն էր: Իրավական համակարգի զարգացման նպաստավոր քաղաքական գործոնի հետևանքը հայ իրավունքի նոր կողիքիկացիաներն են, ինչպես նաև ներդրումը միջազգային հանրային և մասնավոր իրավունքի զարգացման գործում, որոնցից հատկապես վերջինը կարելի է համարել ավանդ համաշխարհային իրավական մշակություն:

Հայկական կանոնական իրավունքը, որը գործում էր նաև

Կիլիկիայում, ևս զարգացավ՝ ի դեմս Ներսես Շնորհալու «Թուղթ ընդիանրականի»: Այդ փաստարդի իրավական նշանակությունն այն է, որ Շնորհալին արգելվների ու խրատների ձևով սահմանում է հայ հասարակության բոլոր խավերի վարքագծի ու ապեկակերպի նորմերը:

Կանոնական իրավունքի զարգացման հաջորդ աստիճանը Սիսի 1243 թ. եկեղեցական ժողովի կանոնական որոշումներն էին: Ժողովի ընդունած կանոնական նորմատիվ ակտն էր և կարգավորում էր ինչպես ներեկեղեցական, այնպես էլ աշխարհիկ՝ ամուսնաընտանելիան, քրեական և այլ հարաբերությունները: Սիսի ժողովը, լինելով վերջին կանոնասահմանից ժողովը, ամրագրեց նաև երկու կարևոր դրույթները: ա) օրինականացրեց ծայրագույն պատրիարքի՝ «Ամենայն Հայոց կաթողիկոսի» տիտղոսը, բ) սահմանեց սկզբունքը, ըստ որի՝ կանոններն ուժի մեջ են մտնում, երբ դրանք հրատարակվում են կաթողիկոսական կոնդակի ձևով<sup>1</sup>:

Կիլիկիայի հայկական թագավորության իրավական համակարգի վրա եական ազդեցություն է թողել նաև երկրի բնակչության էթնիկ-դասականներային կառուցվածքը:

Կիլիկիայի հայկական թագավորության բնակչությունը կազմում էր մոտավորապես 1 մլն, որի գերակշռող մասը հայերն էին: Սակայն Կիլիկիայում ապրում էին նաև հույներ, ասորիներ, հրեաներ և խոտացիներ<sup>2</sup>: Սիաթամանակ Կիլիկիայի հայկական թագավորությունից վասալական կախման մեջ էին ասպետական օրդենները (Հյուրընկալներ, Տաճարականներ, Տևոռնական), որոնք Կիլիկիայի սահմանամերձ շրջաններում ստացել էին ընդարձակ կալվածներ<sup>3</sup>: Կիլիկիայում, այդ կառուցվածքով պայմանավորված, իրավական ինքնավարություն ունեին այլազգիների գաղութները և ասպետական օրդենները: Թագավորական հրո-

<sup>1</sup> Տե՛ս Սովորական Ա.Գ. Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն (XI-XIV դարեր), Եր., 1978, էջ 240:

<sup>2</sup> Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, Եր., 1976, էջ 724, 751-752:

<sup>3</sup> Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, Եր., 1976, 717-718, 752:

վարտակներով այլազգիներին շնորհվում էր իրավական ինքնավարություն՝ փոխարենն ակնկալելով հավատարմություն: Այսպես՝ Կիլիկիայի քաղաքներում ապրող զենովացիները և վենետիկցիներն ունեին իրենց հյուպատոսները և դատարանները, որոնք կոչվում էին կուրիաներ՝ պայլական կամ հյուպատոսական (կոնսոլական) դատարաններ:<sup>1</sup> Իրեն ենթակա տարածքներում դատարան ունենալու իրավունք էր արտոնված նաև Հյուրընկալների օրդենին: Դատական արտոնություն ունեցող այլազգիների, ինչպես և օրդենական դատարաններում կիրառվում էին նրանց իրավական ձևերը: Իրավական ինքնավարություն և արտոնագրություններ չունեցող այլազգիների ու վաճառականների նկատմամբ գործում էր թագավորական իրավունքը:

## § 2. Կիլիկիայի հայկական թագավորության ներդրումը միջազգային մասնավոր իրավունքում

Կիլիկիայի հայկական թագավորությունը գտնվում էր համաշխարհային առևտրական ճանապարհների խաչմերուկում, ուներ առևտրական նավահանգիստներ և զարգացած քաղաքներ ու քաղաքային (ներառյալ առևտրային) կյանք: Միջազգային առևտրական հարաբերությունները և նրանց պետական իրախոսման քաղաքանությունը խթանեցին միջազգային մասնավոր իրավական կարագվորման զարգացումը թագավորությունում: Այդ իրավունքի զարգացման իրավական ձեր թագավորական շնորհագրերն ու արտոնագրերն էին, որոնք XIII-XIV դդ. տրվում էին օտարազգի վաճառականներին:<sup>2</sup> Այդ փաստարդերի բովանդակությունը հաստատում է, որ Կիլիկիայի հայոց թագավորներն էական ներդրում ունեն միջազգային մասնավոր իրա-

վունքի զարգացման գործում, հատկապես դրա երկու ինստիտուտներում՝ այլերկրացու ժառանգության (drooit d'aubaine) և նավարեկության (droit de bris) իրավունքներում:

Միջնադարում գործում էր սովորությային նորմ, ըստ որի՝ այլահպատակի մահվան դեպքում նրա ունեցվածքն անցնում էր այն երկրի տիրակալին, որտեղ նա մահացել էր: Կիլիկիայի հայոց թագավորները առաջինը Զենովայի և Վենետիկի հպատակների համեմայ իրաժարվեցին գույքի նկատմամբ իրավունքից նրանց մահվան դեպքում: 1285 թ. այդպիսի արտոնություն ստացան նաև Եզիպտոսի սուլթանության հպատակները, իսկ մնացած այլահպատակների նկատմամբ գործում էր նրանց գույքը ժառանգելու թագավորի իրավունքը<sup>3</sup>:

Նավարեկության իրավունքի ուժով՝ նավարեկության ներքրկած նավերի ապրանքներին տիրանում էր այն թագավորը, որի երկրի տարածքում էր ծովագիր: Օրինակ՝ նավարեկության իրավունքի արգելափակման այդպիսի կարգ էր սահմանում «Երուսաղեմի ասիսզներ» կոչված օրինագիրքը<sup>2</sup>: Կիլիկիայի հայոց թագավորները Զենովայի և Վենետիկի նավերի նկատմամբ իրաժարվեցին այդ իրավունքից: Մյուս երկրների նավերի նկատմամբ գործում էր հին կարգը:

Միջազգային մասնավոր պայմանագրերից բացի՝ Կիլիկիայի հայկական թագավորության իրավունքի աղբյուրներից էին նաև միջազգային հանրային բնույթի պայմանագրերը, որոնցից հատկապես աշքի են ընկնում 1254 թ. Հերում Ա-ի և Սոնդոլիայի մեծ խան Սանգուի միջև կնքված բարեկամության պայմանագիրը,<sup>3</sup> ինչպես նաև Եզիպտոսի սուլթան Զելավունի ու Լևոն Գ-ի միջև

<sup>1</sup> Տե՛ս Langlois V., *Essai historique et critique sur la constitution sociale et politique de l'Armenie*, paris, 1860, p. 48-49:

<sup>2</sup> Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. III, Եր., 1976, էջ 752:

<sup>3</sup> Հայ-մոնղոլական պայմանագրի բովանդակությունը տե՛ս Գալստյան Ա., Սոնդոլիան ժամանակաշրջանի հայ դիվանագիտության պատմության շուրջ, Լենինական, 1945, 4-10 էջեր, ինչպես նաև Սորիհայան Ա.Գ., նշվ. աշխ., էջ 73-75:

1285 թ. մայիսի 1-ին կնքված խաղաղության պայմանագիրը:<sup>1</sup> Ի տարբերություն առաջինի, որը զուտ միջազետական ակտ էր, երկրորդը, լինելով միջազգային հանրային պայմանագիր, պարունակում էր դրույթներ, որոնք կարգավորիչ նշանակություն ունեին ներպետական հասարակական հարաբերությունների նկատմամբ և կիրառման առաջնայնություն՝ իրավունքի ներպետական աղբյուրների նկատմամբ: Այդ պայմանագրի մեջ հասած տեքստը և նրա կնքման պատմությունն արժեքավոր տվյալներ են հաղորդում Արևելքի միջազգային իրավական մշակույթի այնպիսի տարբերի վերաբերյալ, ինչպիսիք են պայմանագրի տեքստը կազմելու տեխնիկան, պայմանագիրը կնքելու և վավերացնելու իրավական տեխնիկան, պայմանագրի կատարման երաշխիքները և խախտելու դեպքում սանկցիաները:

### **§ 3. Կիլիկիայի հայկական թագավորության իրավական համակարգի արտաքին միջավայրը և իրավունքի փոխառված աղբյուրները**

Կիլիկիայի հայկական թագավորությունը, ի տարբերություն բուն Հայաստանի, գտնվում էր իրավական առումով ավելի առաջադեմ և զարգացած միջավայրում: Բուն Հայաստանը չուներ քաղաքական անկախություն, իսկ սոցիոնորմատիվ մշակույթը կառուցված էր կրոնախորական հիմքերով: Կիլիկիայի արտաքին միջավայրը խթանում էր հարեւան երկրների արդեն պատրաստի և առաջադեմ իրավական ձևերի փոխառությունը:

Նախ՝ Կիլիկիան մինչև անկախանալը եղել էր Բյուզանդական կայսրության պրովինցիա, որի հետևանքով կիլիկյան իրավական մշակույթ էին ներթափանցել բյուզանդական իրավունքի աղբյուրները: Դա հաստատվում է «Եկողոգայի», «Զինվորական

օրենքների», «Քաղաքային օրենքի»<sup>1</sup>, կայսրուիի Իրինայի՝ վկաների և վկայությունների մասին նովելի, «Պրոխիրոն»-ի որոշ հատվածների հայերեն թարգմանությամբ: Բացի հունա-բյուզանդական օրենքներից՝ Կիլիկիայում փոխառել են նաև խաչակիր կարողիկ իշխանությունների դատաստանագրքերը, մասնավորապես՝ Երուսաղեմի և Անտիոքի ասիզները<sup>2</sup>:

Փոխառված իրավունքի աղբյուրների շարքում հատկապես կարևոր էր «Զինվորական օրենքների» թարգմանության և Կիլիկիայում կիրառության սոցիալական նշանակությունը: Այն նպատակ ուներ նպաստելու պետության արտաքին պաշտպանական գործառույթի արդյունավետ իրականացմանը՝ ստեղծելով անոր, կարգապահ ու մարտունակ հայկական բանակ: «Զինվորական օրենքները» հոռմեական ծագում ունեցող օրենքներ էին: Բյուզանդական շրջանում դրանք կազմել են «Եկողոգա» ժողովածուի հավելվածներից մեկը: Ներսես Լամբրոնացին 1196 թ. դրանք թարգմանել է հունարեն բնագրից և անվանել նաև «զինվորական սահմանադրութիւն» կամ սահման զինվորության «հաստատութեան և ահարկութեան»: Այդախով, «Զինվորական օրենքները» արդի իմաստով զինվորական կանոնագիրը է, որը կարգավորում է զինվորական ծառայության կարգը<sup>3</sup>:

Կիլիկիայի հայկական թագավորության կենսունակությունը և քաղաքական անկախությունը նրան հնարավորություն էին տալիս հարեւան պետությունների հարաբերություններում հանդես գալու որպես ինքնիշխան սուբյեկտ: Դրա շնորհիվ կնքվել են միջակատական պայմանագրեր, որոնք յուրահատուկ իրավական

<sup>1</sup> Ընդունված տեսակետի համաձայն «Եկողոգայի», «Զինվորական օրենքների», «Քաղաքային օրենքի» թարգմանությունը կատարել է Ներսես Լամբրոնացին XII դ. վերջերին:

<sup>2</sup> Ենթադրվում է, որ «Անտիոքի ասիզները» ընդունվել են Բոհեմունդ IV-ի օրոք (1201-1235): Սմբատ Սպարապետն այն հայերեն է թարգմանել, ենթադրաբար մինչև 1265 թ., այսինքն՝ մինչև հայկական դատաստանագրքի կազմումը: «Անտիոքի ասիզները» մեր օրեր են հասել միայն հայերեն թարգմանությամբ:

<sup>3</sup> «Զինվորական օրենքների» կառուցվածքի և բովանդակության վերլուծությունը տես Սովորական Ա.Գ., նշվ. աշխ., էջ 187-197:

<sup>1</sup> Հայ-մամուկյան պայմանագրի բովանդակությունը տես Սովորական Ա.Գ., նշվ. աշխ., էջ 218-225:

կարգավորիչներ էին, ունեին ոչ միայն միջայն միջայտական կարգավորիչ նշանակություն, այլև ներպետական, որովհետև գործում էին նաև որպես ներքին հարաբերությունների կարգավորիչներ:

Այսպիսով, Կիլիկայի հայկական թագավորության իրավական համակարգում իրավունքի աղբյուրներ էին՝ ա) սովորութական իրավունքը, բ) թագավորական շնորհագրերը, արտոնագրերը և այլ ակտերը, գ) միջազգային հանրային և մասնավոր պայմանագրերը, դ) հայոց կանոնական իրավունքը («Կանոնագիրք Հայոցը», Դավիթ Ալավկա որդու կանոնախումը), Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանուրականը», Սխի 1243 թ. ժողովի կանոնադրությունը), ե) հարևան Երկրների իրավական համակարգերից փոխառված իրավունքի աղբյուրները (բյուզանդական իրավունքը, հատկապես «Զինվորական օրենքները», «Քաղաքային օրենքը», խաչակիր թագավորությունների ասսիզները՝ հատկապես «Անտիոքի ասսիզները»), զ) աշխարհիկ դատաստանագրքերը (Ասորահոռմեական «Դատաստանագիրքը», Սխիթար Գոշի «Դատաստանագիրքը» և Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրքը»):

Կիլիկիայի հայկական թագավորության իրավական համակարգի նորմատիվային հիմքը բավականին զարգացած էր: Այդ համակարգի գաղափարական ու կազմակերպական տարրերը ևս հասան զարգացման ավելի բարձր մակարդակի՝ պայմանավորված միջազգայնորեն ճանաչված թագավորական իշխանության գոյությամբ: Քաղաքական այդ գործոնը մնացածների (տնտեսական, սոցիալական) հետ միասին խթանում էր դրանց կայացումը և առաջադիմական զարգացումը: Դրա հետևանքով այստեղ ավելի զարգացած ու կազմակերպված էին իրավական մշակույթի այնպիսի տարրեր, ինչպիսիք են իրավական գործունեությունը (իրավաստեղծագործությունը, իրավակիրառությունը և իրավապահպանությունը), պաշտոնեական ու տեսական պետականական գիտակցությունը: Տեսական պետականական գիտակցությունը կամ միտքը մարմնավորում են ժամանակի կարկառուն ներ-

կայացուցիչները՝ Ներսես Լամբրոնացին և Սմբատ Սպարապետը իրենց իրավական ստեղծագործություններով:

\*\*\*

Կիլիկիայի հայկական թագավորության պատմական զարգացումը հաստատում է այն օրինաշափությունը, որ հայ իրավունքը անկախության, խաղաղության և սոցիալ-տնտեսական զարգացման նպաստավոր ժամանակաշրջաններում դրսւորում էր առաջադիմական և մարդասիրական զարգացման միտումներ, ծլարձակում նոր իրավական ձևեր, մասնավորապես Կիլիկիայի հայկական թագավորության ներպետական և միջայտական գրավոր աղբյուրները:

## ԲԱԺԻՆ 2. ՈՒԾՍԻՉՆԱԴԱՐՅԱՆ ԵՎ ՆՈՐ ԾՐՁԱՆԻ ՀԱՅ ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

### ԳԼՈՒԽ 5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ԻՐԱՎԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՊԱՌԻՆ ՏԱՐԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԽVIII-ХIX ԴԱՐԵՐՈՒՄ

#### § 1. Հայ հասարակական իրավական մշակույթը XVIII դարում

XVIII դարերում Հայաստանը իրենից չէր ներկայացնում քաղաքական միավոր, հետևաբար այս շրջանում արդեն Հայաստանի իրավական համակարգը՝ որպես ամբողջական երևոյթ, գոյություն չուներ: Այս տեսանկյունից խոսքը կարող է զնալ միայն հայ ընդհանուր մշակույթի մի մասը համարվող հասարակական իրավական մշակույթի և դրա առանձին տարրերի գոյության և դրսերման մասին:<sup>1</sup>

Այս շրջանի հայ իրավական մշակույթի գոյության և զարգացման օրինաչափությունները պայմանավորված էին դարաշրջանային և տարածաշրջանային նշանակության էական գործուներով, որոնք իրենց ազդեցությունն են բողել մշակույթի այս ոլորտի յուրօրինակ նկարագրի վրա: Հայ հասարակական իրավական մշակույթը գոյատևում է շնորհիկ միջնադարյան կրոնաստվորութային իրավական համակարգերի ապակենտրոնացվածութ-

<sup>1</sup> «Իրավական մշակույթ» (կուլտուրա) հասկացությունն օգտագործվում է նաև անհատական իմաստով, որն անհատի կողմից իրավունքի իմացությունն ու հասկացումն է, ինչպես նաև իրավունքին համապատասխան նրա դրսերած արարքները՝ վարքագիծը: Իրավամշակութացված անձին, բացի իրավական նորմերի իմացությունից, բնորոշ է դրանց կարգադրագրերի պահպանման, կատարման հոգևոր պահանջմունքը (տես՝ Վաղարշյան Ա.Գ., Պետության և իրավունքի տեսություն-2..., էջ 239-242):

յան ու անջատվողականության, ինչի հետևանքով գոյատևում էին հայ իրավական մշակույթի որոշ դրսերումներ:

Դիտարկելով իրավական մշակույթի առանձին բաղադրիչները՝ մասնավորապես իրավունքի ձևերի (օրենսդրություն), իրավական գործունեության (իրավաստեղծ, իրավակիրառ, իրավապահպան) և իրավագիտության վիճակը, նկատում ենք հայ հասարակական իրավական մշակույթի տարրերի զարգացման անհամաշափությունը, որի պատճառը քաղաքական անկախության բացակայությունն էր:

Հայ իրավական մշակույթը գոյատևում էր մահմեղական տերությունների իրավական միջավայրում շատ նեղ ինքնավարության միջոցով: Այս պայմաններում հայ իրավունքի ձևերի (օրենսդրության) հետագա զարգացման մասին խոսք գնալ չէր կարող: Հետևաբար պահպանողական հասարակական հարաբերությունների պայմաններում իրենց գործողությունն էին շարունակում նախորդ շրջանի հայ կանոնական իրավունքը, հայկական սովորության (ներառյալ գրի առնված) իրավունքը, ավատական (մելիքական) իրավունքը, համքարությունների կորպորատիվ իրավունքը:

Մահմեղական գերիշխանության պայմաններում, չնայած հայ եկեղեցու հարաբերականորեն կենտրոնացված կառույցի գոյությանը, չի նկատվում կանոնական իրավաստեղծագործության զարգացում: Աշխարհիկ հարաբերություններում հայ իրավունքի աղբյուրները գործում էին միայն ներհամայնքային մասնավոր հարաբերությունների ոլորտում: Այսպիսով, իրավական մշակույթի այնպիսի տարրերը, ինչպիսիք են պաշտոնական իրավաստեղծագործությունը և դրա արդյունքը համարվող իրավական նոր գրավոր ձևերը, բուն Հայաստանում այս և հետագա դարաշրջանում գոյություն չունեին:

Իրավական գործունեության մյուս տեսակները՝ իրավակիրառ և իրավապահպան, գոյատևում էին մահմեղական տերությունների ներսում այլահավատների իրավական ինքնավարութ-

յան շնորհիվ:

Թուրքահայաստանում հայ համայնքի հիմնական և բարձրագույն իրավակիրառ և իրավապահպան մարմինը նախորդ դարաշրջանում ստեղծված և իր գոյությունը պահպանող հայոց պատրիարքի ինստիտուտն էր: XVII դարում տեղի ունեցան հայոց պատրիարքարանի իրավասության վերաձևումներ: Դա կատարվում էր սովորանի հատուկ հրովարտակներով: Այս հրովարտակներից հնագույնը 1764 թ. հունիսի 3-ին Գրիգոր Պատմացյանին տրված «քերաքն» է: «Ըստ սովորանական հիշյալ հրովարտակի՝ Կ. Պոլսի պատրիարքը իրավունք ուներ տօնօրինելու Անաստիայի ու Ռումելիայի հայ ազգաբնակչության հոգևոր գործերը, ընտրել տալ կամ հրաժարեցնել առաջնորդներին, թեմակալներին: Ամուսնության, ամուսնալուծության և քաղաքացիական այլ խնդիրների դեպքում նրան էր պատկանում վճռական խոսքի իրավունքը: Պատրիարքն էր կարգավորում վակֆային հողերի, կտակների, հոգաբարձության խնդիրները, նվիրակներ հղում եկեղեցական տուրքերի և նվերների հավաքման համար, գավառներից ստացած բողոքները հանձնում սովորանին կամ Բ. Դուանը, պատժում, երբեմն էլ պատժել տալիս աղանդավորության ուղին բռնած «մնորյալ հայերին»: Պատրիարքն էր արտոնում վաճեքերի ու եկեղեցիների կառուցումը, դպրոցների ու նախակրթարանների բացումը մայրաքաղաքում, տպարանների հիմնումը, գրքերի տպագրությունը: Մինչև XIX դարակեսը պատրիարքները փաստորեն առինքնել էին նաև գրաբնիշների պաշտոնը»:<sup>1</sup> Ինչպես տեսնում ենք, թվարկված լիազորությունները իրենց բնույթով մեծամասք իրավական էին: Այդ լիազորություններն իրականացնելու համար պատրիարքարանն ուներ իրեն ենթակա երկու տասնյակից ավելի պաշտոնյաներ, բանտախցեր, դատական ու ոստիկանական իրավագործություններ:

Իրենց գոյությունն էին պահպանում նաև հայկական դատարաններ՝ նախորդ շրջանների հետ համեմատած կրելով որոշ

փոփոխություններ: Դրանցից զիսավորն այն էր, որ հայոց թագավորական դատարանի տեղը գրադեցնում էր շահի կամ տվյալնի կամ Հայաստանի բարձրագույն մահմեդական կառավարիքի դատարանը, որին ընդդատյա էին քաղաքական բնույթի քրեական գործերը՝ նվաճողներին դավաճանելը, անհնազանդությունը, ապստամբությունը և նման այլ արարքներ: Վեճերը, որոնցով կողմեր էին համարվում հայը և մահմեդականը, ընդդատյա էին մուտքանական դատարաններին: Իրենց դատական իրավագործությունն էին պահպանում գոյատեած հայկական իշխանությունները<sup>2</sup>:

Այսպիսով, հայ իրավական մշակույթի բաղադրատարք համարվող իրավակիրառ և իրավապահպան գործունեությունը դրսորվում էր բուն հայկական դատարաններում մասնավորապես եկեղեցական (կաթողիկոս կամ Ապարհիարքարան, Եպիսկոպոս, Վարդապետ, հոգևորական), դատական իրավագործությունը պահպանած ավատատեր-գիմնինների (տերունական), հայկական գյուղական և քաղաքային համայնական, ցեխերի, եղբայրությունների, համբարությունների: Այդ դատարաններին ընդդատյա բոլոր տեսակի գործերով կիրառվում էր հայկական (կանոնական և աշխարհիկ) իրավունքը:

Հայ պատմագրության մեջ մենք գտնում ենք բազմաթիվ փաստեր, որոնք նկարագրում են հայ եկեղեցական դատարանների, ինչպես նաև մելիքությունների կողմից իրավապահպան և դատական գործառույթների իրականացման դեպքեր<sup>3</sup>: Հայ մելիքներն ունեին բավականին ներքին լայն ինքնավարություն, այդ թվում՝ դատական:՝<sup>3</sup> Նրանց կիրառած հարկադրանքի և պատժի

<sup>1</sup> Տե՛ս Տօրքան Խ, նշված աշխ., էջ 73:

<sup>2</sup> Քննարկվող շրջանում հայոց եկեղեցու իրավակիրառական և դատական գործունեության առանձանահատկությունների վերաբերյալ հետաքրքիր փաստեր են պարունակում Միմենն Երևանցու «Զամբող», Զաքարիա Քանաքեռցու, Թովման Սեծոփեցու, Գրիգոր Կանախեցու կամ Դարանաղցու պատմությունները:

<sup>3</sup> Սելիմների իրավակիրառական և դատական գործունեության առանձանահատկությունների վերաբերյալ հետաքրքիր տվյալներ մեզ հասել են շնորհիվ Ա. Հակոստիառզենի, Ս. Եղիազարովի և Ե. Լալայանի հետազոտությունների:

միջոցներից էին ծեծը, տուգանքը, անվանարկումը, դամդա խփելը, ձիու պոչից կապելը և քարշ տալը, ազատազրկումը, մահապատիժը (այրելը, կախաղանը) և այլն<sup>1</sup>:

## § 2. Հայ իրավական մշակույթի կացությունը պայմանավորող գործոնները XIX դարում

Հայ իրավական մշակույթը նոր դարաշրջանում թևակոխել էր զարգացման նոր փուլ: Արևմտյան աշխարհում XVIII դարի երկրորդ կեսի պետական համակարգերը կորցրել կամ էլ կորցնում էին իրենց կրոնական բնույթը՝ համապատասխանաբար վերածվելով բացարձակ կենտրոնացված միապետությունների և ուշ միջնադարյան աշխարհիկ իրավական համակարգերի: Նոր շրջանում կազմավորվող ազգային կենտրոնացված պետությունները, հաղթահարելով միջնադարյան իրավունքի կրոնականությունը, մասնատվածությունը և ապակենտրանացվածությունը, ձևավորեցին նաև իրենց միասնական իրավական համակարգերը: Այդ համակարգերի կայացման գործընթացում վճռորոշ դեր էր կատարում պետությունը: Պետական իրավաստեղծագործությունը և դրա արդյունքը համարվող օրենսդրությունը դառնում էն իրավունքի առաջնային աղբյուրը: Այդպիսի նկարագիր ուներ նաև ռուսական իրավական համակարգը՝ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու պահին, ինչն էականորեն ազդելու էր հայ ժողովրդի սոցիոնորմատիվ կարգավորման համակարգի վրա, փոխելու էր նրա մինչ այդ ունեցած նկարագիրը:

Կենտրոնացված օրենսդրությունը հետին պլան մղեց կամ մերժեց ինքնակարգավորումը, իրավական ինքնավարությունը, իրավական կարգավորման ձերի ընտրության հայեցողական ազատությունը: Կենտրոնացված իշխանության իրավաստեղծագործությունը դարձավ իրավունքի զարգացման կարևոր գործիքը՝

դարձնելով այն ամբողջական, միասնական, համակարգված: Նոր ժամանակաշրջանի իրավական համակարգերին բնորոշ օրինաչափություն էր նաև դրանց կառուցումը անհատականացվածության սկզբունքի վրա, որն արտացոլում էր անհատի ապաճորտացումը և համապատասխանաբար նրա ազատազրումը կորպորատիվ (էսնաֆություններ, ու եղբայրություններ), դասային, կրոնական և այլ ավատական սանձերից:

Իրավական համակարգերի զարգացման այս համընդիանուր օրինաչափությունները, որ որոշում էին նաև Ռուսաստանի ու Թուրքիայի իրավական համակարգերի զարգացման ուղղությունները, էական ազդեցություն էին թողնելու նաև քաղաքական անկախություն չունեցող հայ ժողովրդի իրավական մշակույթի վրա:

XIX դ. հայ իրավական մշակույթի հիմնահարցերը վեր հանելիս պետք է նկատի ունենալ նաև մի շաք այլ գործոններ, որոնք պայմանավորել են դրա կացությունը և դրանորման ձևերը: Առաջին հերթին դա Հայաստանի բաժանումն էր Թուրքիայի և Պարսկաստանի միջև, իսկ այնուհետև՝ Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին: Տարբեր տերությունների քաղաքական տիրապետության տակ գտնվելը իր հետքերն էր թողնում հայ իրավական մշակույթի դրսորման վրա, ինչը պայմանավորված է քաղաքական գործոնի և իրավական համակարգի սերտ կապերով:

Մյուս գործոնը, որն էականորեն ազդում էր հայ իրավական մշակույթի զարգացման վրա, մահմեդական տերությունների իրավական համակարգերի առանձնահատկությունն էր, այն է՝ կրոնական-էքնիկ և ավատատիրական հատկանիշներով ապակենտրոնացվածությունը, ինչի հետևանքով հայ ժողովուրդը և հայկական եկեղեցին պահպանում էին իրենց իրավական ինքնավարությունը շատ նեղ, գերազանցապես մասնավոր հարաբերությունների ոլորտում:

Հաջորդ գործոնը, որն էականորեն ազդեց այս շրջանի իրավական մշակույթի որոշ տարրերի զարգացման վրա, օտար երկրների հայկական գաղթավայրերի մտավոր մշակութային զարգա-

<sup>1</sup> Տե՛ս Սարկոսյան Ս.Ս., Խմումիտետի իրավունքը Արարատյան երկրում XVII-XVIII դդ., Եր., 1975, էջ 82-83:

ցումն էր, ինչի հետևանքով հայ պետականական միտքը բորա-  
փեց կղերական բնութագիրը և սկսեց զարգանալ իրավաբանա-  
կան աշխարհայացքի հիմքերի վրա:

Իր հիմքերով չունենալով պետականություն՝ հայ իրավական  
մշակույթը բուն Հայաստանում առաջընթաց չէր ապրում: Հետևա-  
բար որպես իրավական մշակույթի դրսնորումներ՝ չկային իրա-  
վաստեղծագործությունը ներառյալ իրավաբանական տեխնիկան  
և դրա հետևանքը համարվող իրավական ճեղ՝ օրենսդրությունը:  
Հայ իրավական մշակույթը Արևմտյան և Արևելյան Հայաստա-  
նում մինչև Ուլուսաստանին միանալը գոյատևում էր միայն հայ-  
կական համայնքներում և հայկական եկեղեցու ներկազմակեր-  
պական հարաբերություններում՝ որպես իրավակիրառ և մասնա-  
կիորեն նաև իրավապահպան գործունեություն: Իրավական մշա-  
կույթի այլ դրսնորումները՝ իրավաստեղծագործությունը, իրավա-  
գիտական միտքն ու կրթությունը կրոնական (մահմեղական), ա-  
վատատիրական, միջնադարյան իրավական համակարգերի և  
անընդհատ պատերազմերի ու ավերածությունների պայմաննե-  
րում չէին կարող ձևավորվել և զարգանալ:

### § 3. Հայ իրավական մշակույթի առանձնահատկությունները

Արևելյան և Արևմտյան Հայաստաններում

XIX դարի սկզբին

Արևելյան Հայաստանում պարսկական տիրապետության  
պայմաններում հայ իրավական մշակույթը դրսնորվում էր միայն  
հայ եկեղեցու և ինքնավարությունը պահպանած մելիքություննե-  
րի ու տանուտերերի իրավակիրառական և իրավապահպան գոր-  
ծունեության միջոցով: Մելիքությունների և տանուտերերի ինքնա-  
վարությունը, սակայն, չէր կարող նպաստել հայկական իրավաս-  
տեղծագործության զարգացմանը, որովհետև XVIII դարի 60-ա-  
կան թթ., նրանցից ոմանք արդին հպատակված էին, մյուսները՝  
կիսանկախ: Բացի այդ՝ հայ համայնքների միջև չկային ներքին

էական սերտ կապեր: Մելիքությունների ու տանուտերություննե-  
րի տարածքների փորբությունը և հետևաբար վերահսկելիությու-  
նը, իրենց հերթին, չէին նպաստում նորմատիվ ակտերի միջոցով  
կարգավորման համակարգի զարգացմանը, քանի որ, գրեթե բո-  
լոր հարաբերությունների կարգավորումը հնարավոր էր անհա-  
տական մակարդակով՝ մելիքի կամ տանուտիրոջ կողմից:

XIX դարի սկզբին դեռևս պահպանվում էր հայկական գյու-  
ղական համայնքը: Յուրաքանչյուր գյուղական համայնք կազ-  
մում էր առանձին տնտեսական և վարչական միավոր: Գյուղա-  
կան համայնքի գլուխ կանգնած էին տանուտերերը (քյոխվա,  
խեղխուղա, յուզբաշի): Այդ պաշտոնն ընտրովի էր: Տանուտերը,  
բացի հարկային պարտականությունների կատարումից, լուծում  
էր նաև մանր-մունք վեճերը: Համայնքի ներքին կյանքի բոլոր  
հարցերը լուծվում էին սովորութային զգրված իրավունքի նորմերի  
համաձայն<sup>1</sup>: Գյուղական համայնքն ուներ միջնորդ դատարան,  
որը կոչված էր «խաղաղ» ճանապարհով լուծելու ոռոգման ջրի  
հերքի խախտման, ցանքսերի փշացման, միջնակների շուրջ ե-  
ղած վեճերը և այլն<sup>2</sup>:

Հայ մելիքությունների, տանուտերերի, համայնքների ու համ-  
քարությունների իրավագորությունը տարածվում էր միայն ներ-  
համայնքային հարաբերությունների վրա: Քաղաքացիական  
(գույքային, ընտանեկան, ժառանգական) և մանր քրեական գոր-  
ծերով վեճեր լուծելիս հայ եկեղեցական, մելիքական, տանուտե-  
րական, համայնքային դատարանները կիրառում էին կանոնա-  
կան իրավունքի նորմերը, սովորութային իրավունքը, երեխն նաև  
Մխիթար Գոշի «Դատաստանագիրը»:

Հայկական համայնքների և սոորադաս եկեղեցական դա-  
տարանների համար վերադաս էր համարվում Էջմիածնի կաք-

<sup>1</sup> Այդ մասին մանրամասն տես՝ Հայ ժողովրդի պատմություն, հ. V, Եր., 1974, էջ 29-31:

<sup>2</sup> Տես՝ С.А. Егиазаров, Исследования по истории учреждений в Закавказье, Т. 1, Казань, 1889, էջ 87-88:

դիկոսարանի դատարանը: Ըստ հայկական պատմագրության տվյալների՝ երբեմն հայկական դատարանների որոշումներից դժգոհ կողմերը դիմում էին մահմեդական դատարաններին, ինչը խրախուսվում էր տիրապետողների կողմից, որոնք կարող էին լրիվ հակառակ լուծում տալ գործին՝ հաշվի չառնելով արդարության տարրական պահանջները:

Հայկական արհեստագործական և առևտրական համբարությունները (Էսնաֆություններ) ունեին իրենց համբարային իրավունքը, որը երբեմն ամբողջագրվում (կողիքիկացվում) էր համբարային կանոնադրություններում (սահմանադրություններ): Դրանց նախագծերը երբեմն հաստատվել են Եջմիածնի կարողիկոսի կողմից<sup>1</sup>: Համբարություններին միավորող գործուներից մեկն էլ իրավակարգավորիչ և վարչադատական գործառույթի իրականացման անհրաժեշտությունն էր, որը կատարվում էր համբարային կորպորատիվ իրավունքի նորմերի, սովորությունների հիման վրա:<sup>2</sup>

Հայաստանի երկու մասերում էլ պետավարչական, տնտեսական, հողային, ֆինանսահարկային, մաքսային հարաբերությունների ոլորտում որպես կարգավորիչ գործում էր մահմեդական տերությունների իրավունքը: Երևանի խանությունում դատական գործառույթն իրականացնում էր մահմեդական հոգևորականությունը՝ Շարիաթական իրավունքի իման վրա: Մանր վեճերը լուծելիս խախտվում էին նաև սովորութային իրավունքի նորմերը: Սարդարը երբեմն անձամբ էր լսում քրեական գործերը և միջամտում քաղաքացիական գործերին, եթե դրանք եկանուտ էին խոստանում ընչարաղ իշխանավորին: Սարդարի խոսքը, որքան էլ այն դեմ լիներ արդարության սկզբունքներին, վերջնական վճռի և օրենքի ուժ ուներ: Նման դեպքերում զրաքարտության զրության մեջ պահանջություն էր կատարել իրավական համակարգի կողմից:

<sup>1</sup> Տե՛ս Մատենադարան, Կաք. դիվան, թղթ. 53, վավ. 8 (հղումն ըստ Հայ ժողովրդի պատմություն, հ. V, Եր., 1974, էջ 37):

<sup>2</sup> Համբարային կանոնադրությունների, դատարանների ու վեճերի լուծման կարգի մասին մանրամասն տե՛ս Ա. Եղազարօ, Иследование по истории учреждений в Закавказье, Т. 2, Казань, 1894, ինչպես նաև Ա. ֆոն-Գակտցայզен, Закавказский край, Спб., 1857 աշխատությունները:

Ճած հպատակները միայն խոշոր կաշառքների գնով կարող էին փրկել իրենց կյանքը կամ ունեցվածքը: Հետևաբար տարրական օրինականության մասին խոսք լինել չէր կարող: Քրեական գործերի վարույթը գտնվում էր մահմեդական կառավարչների՝ միքրոլոցների, իսկ հատկապես կարևոր գործերին՝ Երևանի սարդարի իրավասության ներքո: Նրանք չին խորշում և ոչ մի միջոցից, որպեսի նոյնիսկ արհեստականորեն մեղքը բարդեն քրիստոնյաների և անգամ Էջմիածնի վրա: Նման դեպքերում դատական որոշումը ելնում էր ոչ թե արդարության սկզբունքներից, այլ տիրակալի տրամադրությունից ու կամքից, նրա ընչարադցության աստիճանից<sup>1</sup>:

Հայ իրավական մշակույթը նոյն նկարագիրն ուներ նաև Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի այլ տարածքներում: Սինէ ԽIX դարի առաջին քառորդը Թուրքիան շարունակում էր մնալ միջնադարյան հետամնաց, մասնատված մի կայսրություն, որում գրեթե անփոփոխ էին մնացել ոչ միայն սոցիալ-տնտեսական կարգերը՝ հողատիրության ձևերն ու հողատիրական հարաբերությունները, այլև կառավարման համակարգն ու իրավունքը: Հետևաբար Թուրքիայի իրավական համակարգը պահպանում էր նախորդ շրջանի իր բնուրագրական գծերը՝ պվատատիրական, կրոնամահմեդական, պարտիկուլյար իրավական համակարգ: Այս համակարգում, դրա գործողության օրինաշափություններին համապատասխան, այլադապան բնակչությունը (համայնքները) պահպանում էր ներքին իրավական ինքնավարությունը:

XIX դարի 20-ական թթ. սուլթան Մահմուտ II-ի քաղաքականությունն ուղղված էր Թուրքիայի եվլուպականացմանը և պետախրավական համակարգի կենտրոնացմանը: Այդ քաղաքականությունը հայ ժողովրդի սոցիալ-նորմատիվ համակարգի համար ուներ երկակի նշանակություն: Այն մի կողմից այլահավատների համար ստեղծում էր կենտրոնական իշխանությունների կողմից

<sup>1</sup> Տե՛ս Դիլոյան Վ.Ա., Արևելյան Հայաստանի վարչական բաժանումը և վարչակարգը XIX դարի սկզբին, Հայ ժողովրդի պատմություն, հ. V, Եր., 1974, էջ 17:

Երաշխավորված և օրենսդրական կարգով ամրագրված երաշխիքներ, բայց մյուս կողմից իրավական համակարգի աշխարհիկացման, եվրոպականացման և կենտրոնացման փորձերը սպառնում էին վերացնելու ներհամայնքային իրավական ինքնավարությունը:

Իրենց գոյությունը պահպանած հայկական կիսանկախի իշխանությունները (Սասուն, Սավոր, Խոյան, Մոկս, Շատախ, Խնուս, Զեյթուն և այլն), ինչպես նաև ներքին հարցերում իրավագորությունը պահպանած հայկական քաղաքային ու զյուղական համայնքներն ունեին իրավական ինքնավարություն՝ իրենց ներքին հարաբերությունները կարգավորելու հայկական կանոնական, ինչպես նաև սովորութային իրավունքի նորմերով։ Կիսանկախի իշխանությունների և տարածքների տնտեսվարման ձևը՝ փակ բնատնտեսությունը, և դրա հետևանքով հասարակական հարաբերությունների պահպանողական բնույթը չէին նպաստում իրավական նոր ձևերի՝ կողիքիկացիաների առաջացմանը։ Այստեղ Շարիաթի նորմերը կիրառվում էին իմանականում միայն հարկային հարաբերությունների ոլորտում, իսկ մնացած հարցերում, այդ թվում նաև դատաիրավական, համայնքն ուներ ինքնավարության իրավունք։<sup>1</sup>

Հայկական կանոնական և սովորութային իրավակիառական մշակույթը մաքուր կերպով պահպանվել և գործել է հատկապես Զեյթունի իշխանական տների դաշնակցությունում։<sup>2</sup> Այստեղ իշխանների կառավարման իրավունքները ժառանգական էին։ «Ընդհանուր գավառին վերաբերող խնդիրները լուծելիս իշխանները հավաքվում էին Զեյթունի խորհրդարան, արքեալիսկոպոսի ու քեհյանների (ընտրովի տեղակալ զյուղապետեր) հետ, վիճա-

<sup>1</sup> Այսպես՝ Ղ. Ինժիճյանը, նկարագրելով Շատախի և Մոկսի անկախության աստիճանը, արձանագրում է, որ դրանցում «...նստում է հայազգի մելիքը և գործադրում է ամեն տեսակ իշխանություն, դատավորի պաշտոն, քանի որ քորդ թեկին չեն բողնում նատի այստեղ, ինչպես նաև Մոկսում» (տե՛ս Ղ. Ինժիճյան, Աշխարհագրութիւն, մասն Ա, էջ 163):

<sup>2</sup> Զեյթունի կենցաղի և իրավական որոշ սովորույթների մասին տե՛ս Պողոսյան Հ.Ս., Զեյթունի պատմությունը 1409-1921 թթ., Եր., 1969, էջ 27-84:

բանություններից հետո վճռական խոսքի իրավունքը վերապահելով իշխանապետին կամ հոգևոր առաջնորդին, վճիռ էին կայացնում»։<sup>1</sup>

Ակնհայտ է, որ այս պայմաններում նոր առաջացող հասարակական հարաբերություններին ներհամայնքային մարմններն, իրենց իրավասությանը համապատասխան, տալիս էին անհատական իրավական կարգավորում՝ հիմք ընդունելով կանոնական իրավունքի և սովորութային իրավունքի սկզբունքները։ Սակայն Թուրքիայի հայ համայնքը տարբերվում էր Արևելյան Հայաստանից նրանով, որ հայերի իրավական ինքնավարությունն ուներ լիազոր սուրբեկու՝ ի դեմս Հայոց պատրիարքարանի, որի իրավական կարգավիճակը ենթադրում էր հայոց եկեղեցու թեմական կառավարումը, ինչպես նաև հայ համայնքների կառավարչական կոորդինացումը։ Պատրիարքարանի նման կարգավիճակը պահպանվեց մինչև այսպես կոչված «Սահմանադրության» ընդունումը։ Այսպիսով, Կ. Պոլսի հայոց պատրիարքներին բուրգական պետությունը ճանաչում էր որպես արևմտահայերի հոգևոր պետ և միաժամանակ միջնորդ կառավարչական օղակ կայսության տարածքում գտնվող համայնքների ու օսմանյան պետության միջև։

Իրավական մշակույթի բաղադրատարբերից են նաև հասարակական իրավագիտակցությունը և նրա վիճակը։ Հայաստանի իրավական մշակույթի այս բաղադրատարբեր ևս տրոհված էր ազգային-կրոնական սկզբունքով։ Որպես իրավական մշակույթի դրսորում՝ այն բուն Հայաստանում չէր կազմում միասնական իրավագիտակցություն։

Այս դարաշրջանում Հայաստանում իրավագիտակցության որպես իրավական մշակույթի դրսորման ոլորտի մասին կարող է խոսք գնալ միայն դրա առօրեական բովանդակության առումով։ Ակնհայտ է, որ միջնադարյան ավատափիրական հասարակության պայմաններում կրոնից հատակ տարանջատված չէին մաս-

<sup>1</sup>Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. V, Եր., 1974, էջ 74:

նագիտական (պրոֆեսիոնալ) և զիտական (դոկտրինալ) իրավագիտակցությունը, չկար իրավաբանական կրթության տարրական համակարգ: Վերջինիս զարգացմանն արգելակում էր նաև այն հանգամանքը, որ մահմեղական տերություններում իշխանավարելը և պետական պաշտոններումը իշխանահավատների մենաշնորհն էին:

Բնակչության առօրեական իրավագիտակցությունը, ըստ բնակչության ժողովրդագրական կառուցվածքի, տրոհված էր երկու հիմնական տեսակների՝ հայկական և մահմեղական: Հայկական բնակչության անհատական և հասարակական իրավագիտակցության առածնահատուկ գծերն էին քրիստոնեական կրոնամշակութային արմատները և դրանցից բխող համապատասխան սկզբունքները՝ քրիստոնեական մարդասիրություն, արդարություն, հավասարություն, օրինահապատակություն և այլն: Դրան հակառակ՝ իշխանահավատ բնակչության և պետական պաշտոններության իրավագիտակցությունը կառուցված էր ուղղահավատների և անհավատների (ռայա, գիմնի, անհավատ-գյավուր) բաժանման սկզբունքի վրա: Կրոնական խորականության սկզբունքի վրա էր կառուցված շարիաթական ողջ հին ու նոր օրենսդրությունը, և դրան համապատասխան ձևավորվում էր նահմեղական բնակչության առօրեական ու պետական պաշտոնյաների մասնագիտական իրավագիտակցությունը:

#### § 4. Թուրքիայի դատաիրավական համակարգի աշխարհիկացման փորձերը

Թուրքիայի պետականության հիմքում դրված էին պահպանողականությունը, շովինիստական մահմեղականությունը, մեծապետականությունը: Այդ պայմաններում իրավական համակարգը մնում էր կրոնամահմեղական, ավատատիրական, մասնատված (պարտիկուլյար), հետադիմական, որում այլահավատները պահպանում էին իրենց ներքին իրավական ինքնավարությունը:

Դատարանը և դատավարությունը Թուրքիայում խսանական հոգևորականության մենաշնորհն էր, իսկ ոչ իսլամ հայտակների

կրոնական և քաղաքացիական հարաբերություններում վեճերի լուծումը՝ ազգային եկեղեցիների մենաշնորհը: Թուրքիայում դատական համակարգը կառուցված էր շարիաթական իրավունքի հիման վրա: Շարիաթական դատարանների համակարգը ներառում էր երեք օրակներ: Չրջանային (կազա) դատարան, մարզային (էլայեթ) դատարան, վերաբննիչ պալատ (Արզ օդաս), որը ենթարկվում էր շեյխ ուլ-խալամին: Վերջինս բաղկացած էր երկու պալատներից՝ ոռոմելիխական՝ Ոռոմելիի դադիասքերի գլխավորությամբ և անատոլիխական՝ Անատոլիայի դադիասքերի գլխավորությամբ: Չրջանային դատարանը կազմված էր պրոֆեսիոնալ դատավորից՝ դադի կամ խաքին, քարտուղարից, շարիաթական իրավական հարցերով խորհրդականից՝ մուֆթի: Դատավճիռը կամ վճիռը կայացնում էր միայն դատավորը՝ դադին: Ավելի ցածր վարչական միավորներում՝ նահիեներում, դատական իրավագորություն ունեին նախքները, որոնք համարվում էին չրջանային դադի տեղակալներ:

Քաղաքացիական գործերը, ներառյալ առևտրային, որ ծագում էին ոչ իսլամ հապատակների միջև, քննում էին համապատասխան կրոնական համայնքի հոգևոր դատարանները: Առավել ծանր հանցագործությունների վերաբերյալ գործերը և մեծ գումարով հայցերը ընդդատյա էին Բարձր դռանը, իսկ հետագայում՝ մեծ վեզիրի դիվանին: XIX դարի սկզբին դատական իրավագորություններ ունեին նաև տեղական վայիների դիվանները:

Թուրքուական հարաբերությունների ձևավորումը և եվրոպական տերությունների ճնշումները հարկադրեցին թուրքական իշխանություններին XIX դարի առաջին կեսի վերջերին (1840-1853 թթ.) վերակառուցել դատարանակազմությունը և դատավարությունը՝ զրկելով իսլամ հոգևորականությանը դատական մենաշնորհից:

Դեռ 1839 թ. «Գյուլխանեի Հարքը-շերիֆ»-ով (Վարդաստանի իրովարտակ) թուրքական պետությունը պարտավորվել էր սուլթանի բոլոր հպատակներին ապահովել կյանքի, պատվի և

գույքի անձեռնմխելիություն, օրենքի առջև հավասարություն՝ անկախ հավատքից և էթնիկական ծագումից: Հրովարտակը խոստանում էր վերացնել վարչական և դատական կանոնադրությունը, ապահովել բարեխիղճ քննություն և հրապարակային դատարան: Սակայն պահպանողական ուժերի դիմադրությունը այդ վերակառուցումը վերածեց կիսատ-պռատ միջոցառումների կամ էլ ձախողեց դրա իրազրությունը տեղերում: Այս ընթացքում իրականացված դատական բարեփոխումների արդյունքում Թուրքիայում ստեղծվեցին առաջին աշխարհիկ պետական դատարանները:

Իրավաբանական բարձրագույն խորհուրդը (բառացի՝ Իրավաբանական սամանումների բարձրագույն խորհուրդ), որի հիմնական գործառույթը բանզիմարթի իրավական ապահովումն էր, 1840 թ. ձեռք բերեց նաև դատական իրավագորություն. այն համարվեց բարձրագույն դատական ատյան պետության դեմ ուղղված և բարձրագույն պետական պաշտոնյաների հանցագործությունների քննման և լուծման համար:

1847 թ. ստեղծվեցին խառը առևտրային աշխարհիկ դատարաններ՝ կազմված քուրքական (իսլամական և ոչ իսլամական) և օտարերկրյա առևտրականներից: Այս դատարանները, որ ի սկզբանե կոչված էին քննելու միայն առևտրային վեճերը քուրք և օտարերկրացի առևտրականների միջև, աստիճանաբար սկսեցին քննել և լուծել նաև բոլոր քուրքահպատակ առևտրականների՝ անկախ հավատքից, քաղաքացիական վեճերը:

1847 թ. հիմնադրվեցին խառը քրեական դատարաններ (քննչական խորհուրդներ), որոնք քննում էին թուրքահպատակների քրեական գործերը՝ անկախ հանցագործի դավանանքից և էթնիկական պատկանելիությունից: Այս դատարանները կազմված էին քաղաքացիական աղմինիստրացիայի բաժնի պետից, վիլայեթի մեջիլսի անդամներից՝ վալիի գլխավորությամբ: Եթե քննվում էր քուրքահպատակի և օտարերկրացու քրեական վեճերը, ապա դատարանի կազմի մեջ համամասնորեն ներա-

ռում էին օտարերկրացիների: Դատարանը գործը քննում էր միայն քրեական օրենքի հիման վրա: Իսլամականի և ոչ իսլամականի ցուցմունքները համարվում էին հավասարապես: Արգելվում էին կտտանքները՝ հարցաքննելիս:

Մահապատճեն պատճեն հանցագործի վերաբերյալ գործը քննում էր Բարձրագույն իրավաբանական խորհուրդը:

Բարեփոխումների արդյունքում շարիաթական դատարանակազմությունը և դատավարությունը չփոխարինվեց աշխարհիկով: Աշխարհիկ և հոգևոր դատարանների համակարգերը գործում էին գորգահեռարար:

Ի վերջո, վերակառուցումներն արդարադատության ոլորտում անբավարար էին և քիչ արդյունավետ: Անարդարությունները և կամայականությունները քրիստոնյաների նկատմամբ շարունակվում էր՝ չնայած դրանք վերացնելու թուրքական բարձրագույն իշխանության խոստումներին: Դատարանները, հատկապես շարիաթական, կոռումպացված էին, դատավորները, նաիբները և դատական ծառայողները, կաշառք վերցնելով, գործերը լուծում էին հօգուտ կաշառատուի: Համատարած էր կեղծ վկայությունը: Դատարանների բոլոր նշված արատները հատկապես ծանր էին անդրադառնում ոչ իսլամ բնակչության վրա:

Թուրքիայում 1850 թ. ընդունվեց Առևտրային օրենսգիրքը, ինչը բուրժուական և եվրոպական հիմքերի վրա դրեց առևտրային հարաբերությունների կարգավորումը: 1860 թ. առևտրա-արհեստագործական էսնաֆությունները գրկեցին դատական իրավագորությունից: Դրանց դատական գործառույթները վերապահվեցին առևտրային դատարաններին, որոնք պետք է ղեկավարվեին աշխարհիկ օրենսդրությամբ<sup>1</sup>:

Իրավական բարեփոխումների ծրագիրը հոչակվեց նոր հրովարտակով, որը կոչվեց Հաքքը-հումայուն (1856 թ.):<sup>2</sup> Այդ հրո-

<sup>1</sup> Տե՛ս Ա Ռած-աճ Ա.Ա., Էնո՛տնեց Օօծօ՛ք. Ը. IV, Նորու առաջ առաջ (1853-1875 թ.թ.), Եղե., 1978, էջ 132, 133:

<sup>2</sup> Հրովարտակի մասին տե՛ս նույն տեղը, էջ 74, 82-84, 91-99:

վարտակը կազմվեց և հրապարակվեց արևմտյան տերությունների պահանջով: XIX դարի երկրորդ կեսի առաջին քառորդում Թուրքիայում ընդունվեցին մի շարք համակարգված օրենքներ: Դրանցից էին 1858 թ. հողային օրենքը և քրեական օրենսգիրքը (կառուցված Ֆրանսիայի 1810 թ. քրեական օրենսգրքի օրինակով), որը քրեական ոլորտում դուրս մղեց մահմեդական իրավունքը:

1861 թ. գործի դրվեցին Առևտրային դատավարության օրենսգիրքը, Ծովային առևտրային օրենսգիրքը:<sup>1</sup> Այս օրենսգրքերը կառուցված էին Եվրոպական իրավական հայեցակարգերի վրա: Սակայն 1869 թ. ընդունված քաղաքացիական օրենսգիրքը (պարտավորական իրավունքը) կառուցվեց մահմեդական իրավադրույթների վրա: Այն չփոխեց քաղաքացիական (պարտավորական) հարաբերությունների կարգավորումը՝ տարբերակելով թուրքական իրավունքը և ոչ մահմեդականների իրավունքը:

1864-1879 թթ. ընթացքում Թուրքիայում կատարվեց դատարանների և դատավարության բարեփոխման նոր փորձ, որի արդյունքում ստեղծված դատական համակարգը, առանց էական փոփոխությունների, գործեց մինչև նորագույն ժամանակները: Այդ բարեփոխումների արդյունքում դատարանները, որպես համակարգ, առանձնացվեցին պետական կառավարման գործադիր ապարատից: Յուրաքանչյուր վիլայեթում ստեղծվեց եռաստիճան դատական համակարգ. կազմում՝ շրջանում մեկ դատական մեջլիս, սանչակում՝ մեկական քրեական և քաղաքացիական դատարան, վիլայեթում՝ վճռաբեկ դատարան՝ քրեական և քաղաքացիական պալատներով: 1868 թ. ստեղծվեց Ստամբուլի համարութքական գերագույն դատարանը: 1872 թ. հիմնադրվեց հաշտարար դատավորների (ծերակույտի դատարան) ինստիտուտը: Հաշտարար դատարանի պարտադիր անդամներ էին իմամը և տեղական ոչ իսլամական կրոնական համայնքների գլուխները:

Բարեփոխումների արդյունքում շարիաթական և ոչ իսլամ

կրոնական համայնքների դատարանները պահպանվեցին, սակայն նրանց ընդդատությունը նեղացվեց. նրանք նոր պայմաններում քննում էին միայն կրոնական բնույթի գործերը, ամուսնալուծության, ժառանգության վերաբերյալ և նման բնույթի մի շարք այլ քաղաքացիական գործեր:

Սակայն 60-70-ական թվականներին անցկացված դատական բարեփոխումներն արմատական չէին, որովհետև աշխարհիկ պետական դատարանները ստեղծվում էին ոչ թե շարիաթական և այլահավատների կրոնական դատարանների փոխարեն, այլ դրանց զուգահեռ:

### § 5. Թուրքիայի իրավական վերափոխումները և հայ իրավական մշակույթի առանձին տարրերի վիճակը

Թուրքիայում XIX դարի երկրորդ քառորդից սկսված վերակառուցման գործընթացներն ուղղված էին իրավական համակարգի աշխարհիկացմանը և կենտրոնացմանը, ինչի առաջին ազդարը 1939 թ. Գյուլիանեի Հարթը-շերիֆն էր (Վարդաստանի հրովարտակ): Եթե Ռուսական կայսրությունը XIX դարի սկզբին արդեն լրիվ կենտրոնացված բացարձակ միապետություն էր, ապա Թուրքիայում նոր միայն սկզբում էին բարեփոխումները՝ ուղղված պետության տարածքային և իրավական կենտրոնացմանը: Հետևաբար Արևմտյան Հայաստանում և Թուրքիայում հայ իրավական մշակույթը շարունակում էր հարատևել: Սակայն հետագա իրավական բարեփոխումները հանգեցնելու էին նրան, որ հայ իրավական մշակույթի որոշակի տարրեր անհետանալու էին, մասնավորապես էսմաֆությունների իրավունքը, իսկ մյուսները ստանալու էին յուրահատուկ զարգացում՝ շնորհիվ հայկական համայնքի իրավական ինքնավարության, որը ոչ միայն չտուժեց բարենորդումների հետևանքով, այլ ապրեց որոշակի զարգացում:

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 115-128, 130-131, 133-134:

Հարթը-հումայուն հաստատում էր նախկին սովթանների կողմից ոչ մահմեդական կրոնական համայնքներին տրված առանձնաշնորհումները և միաժամանակ հոչակում, որ համայնքներին կառաջարկվի Բարձր դրանը ներկայացնել «նրա ղեկավարության տակ կազմված բարեփոխումների ծրագրեր, որ պահանջվում են լուսավորության և ժամանակի հաջողություններով»: Հրովարտակը միաժամանակ հայտարարում էր, որ ոչ մահմեդական համայնքների ղեկավարները կզրկվեն իրենց հավատակիցների նկատմամբ քաղաքացիական իշխանությունից, ինչը կանցնի «համայնքի միջավայրից ընտրված հոգեոր և աշխարհիկ ընտրյալների ժողովին»:<sup>1</sup>

Բարեփոխումների այդ ծրագրին համապատասխան՝ 1863 թ. քուրքական կառավարությունը եվրոպական պետությունների և Թուրքիայի հայ համայնքի ճնշման տակ հաստատեց Հայ ազգային ժողովի կողմից 1860 թ. մայիսի 24-ին ընդունված «Հայոց ազգային սահմանադրությունը», որը, չնայած իր անվանմանը, ոչ թե սահմանադրություն էր, այլ հայ քրիստոնեական համայնքի ներքին ինքնավարության կանոնադրություն կամ օրենք: «Հայոց ազգային Սահմանադրությունը» գործեց մինչև 1896 թ. Արդու Համիդի կազմակերպած ջարդերը: Դրա գործողությունը վերականգնվեց 1908 թ.<sup>2</sup> Երիտրուրքերի հեղաշրջումից հետո: 1915 թ. հայոց եղեռնի օրերին այն վերջնականապես արգելվեց, Ազգային ժողովը ցրվեց, իսկ նրա պատգամավորների մեծ մասը սպանվեց կամ աքսորվեց:

Այդ օրենքի գործադրմամբ ի հայտ եկան հայ իրավական մշակույթի այնպիսի տարրեր, ինչպիսիք են իրավաստեղծագործությունը (իրավաբանական տեխնիկան), դրա արդյունքը՝ հայոց ազգային մարմինների ընդունված ակտերը՝ օրենսդրությունը, նոր իրավական իիմքերի վրա դրվեցին «սահմանադրությամբ» նախատեսված հայկական ազգային մարմինների իրավակիրառ, իրավապահպան և դատական գործունեությունը: Այսպես, ըստ

«սահմանադրության» 34-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Ազգային ուսումնական խորհրդի գործառույթն էր «ազգային դաստիարակության ընդհանուր տեսչությունը», որը ներառում էր նաև այդ հարաբերությունների նորմատիվ կարգավորումը: Ազգային տնտեսական խորհրդը ևս ուներ նորմատիվ կարգավորման իրավագորություն՝ հատկապես ժառանգության հարցերով, մասնավորապես՝ կտակի: Այս ոլորտում «սահմանադրությունը» նրան օժտում էր «կտակի վերաբերյալ հատուկ կանոններ սահմանելու» և «մասնավոր հոգաբարձության հաստատման իրավունքով»: Բացի նորմատիվից՝ տնտեսական խորհրդը օժտված էր նաև անհատական իրավական կարգավորման իրավագորությամբ:

Համաձայն «սահմանադրության» 56-րդ հոդվածի՝ ստեղծվում էր նաև ազգային դատական խորհրդ, որի կազմի մեջ մտնում էին 10 անդամներ՝ 5 հոգևորական և 5 աշխարհիկ: Դատական խորհրդի գործառույթն էր «ազգային դատական գործերի ընդիհանուր տեսչությունը»: Խորհրդի պարտականությունների մեջ մտնում էր հայտարար միջնորդությունը վիճող կողմերի միջև՝ արդար համաձայնության հասնելու: Դատավճրոներ (վճրոներ) կայացնելիս դատական խորհրդը դրանց հիմքում պետք է դներ «նախնիների ավանդական օրենքները» կրոնական գործերով, կայարության դատավարական կանոնները աշխարհիկ գործերով: Դատական խորհրդի կողմից դատապարտված անձը կարող էր դատավճրող գանգատարկել կրոնական կամ քաղաքական խորհրդին կամ, ելնելով գործի հանգամանքներից, պահանջել խառը ժողով:

Սահմանադրության քննարկման և ընդունման ողջ գործընթացը իրանց հայ պետականական մտքի զարգացումը՝ իր համապատասխան հոսանքներով՝ կղերա-աղայական, ազգային-պահպանողական, ազատական, ազգային-ժողովրդավարական և հեղափոխական-ժողովրդավարական: Այդ գործընթացում, ինչպես նաև դրանից հետո, հայ տեսական պետականական մտա-

<sup>1</sup> Ste' u Karal E., Osmanli tarihi, c. VI, Ist., 1954, էջ 324:

ծողության մեջ գերիշխեց լուսավորյալ մտավորականությունը, որը և կազմեց ազգային «սահմանադրության» տարբերակները, քաղաքական-իրավական մրցակցության մեջ շեղոքացրեց ամիրայականությանը, կղերականությանն ու պատրիարքին և ազգային ներքին գործերի ղեկը վերցրեց իր ձեռքը:<sup>1</sup>

\*\*\*

Այսիսով, XIX դարի երկրորդ կեսին ձեռնարկված իրավական բարեփոխումները փորձում էին Թուրքիայի իրավական համակարգը վերածել աշխարհիկ, Եվրոպականացված, միասնական իրավական համակարգի: Այդ գործընթացները, սակայն, չհանգեցրին զուտ հայկական իրավական մշակույթի աճնետացմանը: Հայկական համայնքի իրավական ինքնավարությունը ապրեց որոշակի զարգացում: «Հայոց ազգային սահմանադրության» գործադրմանը ի հայտ եկան հայ իրավական մշակույթի նոր տարրեր: Այդուհանդերձ, Թուրքիայի պետականության և հասարակական իրավագիտակցության հիմքում դրված էին պահպանողականությունը, շովինիստական մահմեդականությունը, մեծապետականությունը, որոնք ճախորում կամ արգելակում էին ցանկացած իրավական բարեփոխում, ինչը հաստատում են բազմաթիվ ապօրինությունները, կամայականությունները, կոսոռածներն ու Հայոց ցեղասպանությունը:

#### § 6. Կայսերական Ռուսաստանի պետական համակարգի փոխակերպումները XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկիզբին

Արևմտյան Եվրոպայում մինչև XIX դարը տեսականորեն ձևավորվեցին և պրակտիկայում կենսագործվեցին պետական կարենություն հայեցակարգերը՝ ժողովրդականությունը, իրավական պետությունը, խորհրդարանականությունը, սահմանադրականությունը, իշխանությունների բաժանումը և

<sup>1</sup> Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. V, Եր., 1974, էջ 432:

111

այլն: Ռուսաստանում իրավական միտքը դրանք սկսեց լայնորեն քննարկել միայն XIX դարի երկրորդ կեսին: Արդեն XIX դարի վերջին և XX դարի սկզբին Ռուսաստանում նկատվում է ազգատական քաղաքական-իրավական մտքի առաջընթաց զարգացում<sup>1</sup>:

Ռուսաստանում ամենից համընդգրկուն և արմատական բարեփոխումները իրականացվեցին միայն XIX դարի 60-70-ական թվականներին: Այդ տարիներին իրականացված բարեփոխումները շոշափեցին հասարակական հարաբերությունների գրեթե բոլոր հիմնական ոլորտները՝ դատախրավական (1864 թ.), ոստիկանական, տեղական (քաղաքային և հողային) ինքնակառավարման, ֆինանսական համակարգերը, բանակը և այլն: Վերացվեցին ճորտատիրական իրավունքը և գրաբննությունը, հիմնադրվեց համալսարանական ինքնակառավարում, սահմանվեց համընդհանուր զինվորական պարտավորություն (1864-1874 թթ.):<sup>2</sup>

Ռուսաստանում՝ Ալեքսանդր II ցարի սպանությունից հետո (1881 թ.), հաստատվեց պահպանողական վարչաձեռ, որը պետական ոլորտում դրսեորվեց հակաբարեփոխումներով: Տարածքային (հողային) և քաղաքային ինքնակառավարման մարմինների ընտրություններում սահմանվեցին ընտրական գույքային ցենզերի ավելի բարձր չափեր:

1881 թ. օգոստոսի 16-ին ընդունվեց «Պետական կարգերի ու հասարակական հանգստության պահպանության, կայսրության առանձին տարածքներում ուժեղացված դրություն հայտարարելու կանոնադրությունը», որը սահմանեց ուժեղացված և արտակարգ պահպանության ռեժիմները: Կառավարման այդ ռեժիմների հայտարարման դեպքում տեղերում ամբողջ իշխանությունն անցնում էր գեներալ-մահանգապետին: Վերջինս ձեռք էր բերում

<sup>1</sup> Տե՛ս Գլյուշկովա Ս.Ի., Права человека в России. М., 2006, էջ 99:

<sup>2</sup> Թվարկված բարեփոխումների մասին մասնամասն տե՛ս Իстория государства и права России. Под ред. Ю.П. Титова, М., 1999, 192-210 էջերը:

112

Ժողովների արգելման, ձեռնարկատիրական կազմակերպությունները փակելու, մինչև 3 ամսի վարչական կալանք կիրառելու, տուգանելու և արտաքսելու լիազորությունները, կարող էր արգելել կոնկրետ անձանց մուտքն ուժեղացված պահպանության դրույան վիճակում հայտարարված տարածքներ, վարչական կարգով լուծել կառավարական կամ սեփական պարտադիր որոշումների խախտումների վերաբերյալ գործերը: Գեներալ-նահանգապետը, իսկ այն վայրերում, որ չկար գեներալ-նահանգապետի պաշտոն, ներքին գործերի նախարարը կարող էին ընդհանուր քրեական գործերի քննությունը հասարակական կարգի և հանգստի պահպանության նպատակով հանձնել ռազմական դատարանների քննությանը՝ ռազմական ժամանակի օրենքներով «դատելու համար»: Նրանք կարող էին պահանջել գաղտնի նիստերում քննել բոլոր այն դատական գործերը, որոնց իրավարակային քննությունը կարող էր առիթ ծառայել «մտքերի բորբոքման և կարգուկանոնի» խախտման համար<sup>1</sup>:

1889 թ. հունիսի 12-ին հիմնադրվեց տարածքային պետերի խնախտուտը, որը խախտեց 1864 թ. դատական բարեփոխման ամենակարևոր սկզբունքը՝ դատարանի բաժանումը պետական գործադիր ապարատից<sup>2</sup>: Տարածքային տեղամասի պետը արտակարգ լիազորություններով պաշտոնյա էր: Նա իրականացնում էր հսկողություն համայնական գյուղացիական ինքնավարությունների նկատմամբ և հաշտարար ենթակայության գործերի քննություն, ուներ մինչև 3 օր վարչական կալանք և տուգանք կիրառելու իրավունք: Գյուղական և գավառամասային պաշտոնյաների նկատմամբ նա կարող էր կիրառել դիտողություն, նկատողություն, տուգանք, մինչև 7 օր կալանք, պաշտոնից ժամանակավոր հեռացում:

Հակարաբեփոխիչ օրենսդրությամբ ստեղծվեց նաև հասուկ

խորհրդակցություն՝ կազմված ներքին գործերի և արդարադատության նախարարության պաշտոնյաներից: Այդ մարմինը իրավազոր էր կիրառելու վարչական աքսոր և արտաքսում պետական կարգերի և հասարակական հանգստության համար վտանգավոր ճանաչված անձանց նկատմամբ<sup>1</sup>:

1892 թ. ընդունվեց «Ռազմական դրույթյան մասին» օրենքը, որը, բացի պատերազմական վայրերից, թույլ էր տալիս ռազմական դրույթյուն հայտարարել նաև հեղափոխական առումով վտանգավոր վայրերում: Այդ դեպքում մի շարք հանցագործությունների վերաբերյալ քրեական գործերի քննությունը կատարվում էր ռազմական դատարանների կողմից՝ ռազմական ժամանակի օրենքներով սահմանված կարգով<sup>2</sup>:

1905 թ. հեղափոխական իրադարձությունների հետևանքով Ռուսաստանում իրականացվեց իրավական բարեփոխումների նոր քաղաքականություն: 1905 թ. հոկտեմբերի 17-ին կայսրը ընդունեց մանիֆեստ «Պետական կարգերի կատարելագործման մասին»<sup>3</sup>: Դրանով կառավարությունը պարտավորվում էր «կայսեր կամքով ժողովրդին նվիրել քաղաքացիական ազատության անկախ իիմքեր՝ անձի իրական անձեռնմխելիությամբ, խոճի, խոսքի, ժողովների և միությունների ազատությամբ»: Այս մանիֆեստի շարունակությունն էին մի շարք իրավական այլ ակտեր, որոնք շատ մեծ դեր խաղացին ազատականության և սահմանադրականության հաստատման գործում: Այդ ակտերից էին «Հավատիանդուրժողականության մասին հրովարտակը», որը դադարեցրեց կրօնական իիմքերով պաշտոնական հետապնդումները, «Գյուղացիների իրավունքների սահմանափակումների վերացման մասին հրովարտակը», որով ճանաչվեց գյուղացիների անձնական ազատության և ազատ տեղաշարժելու իրավունքը,

<sup>1</sup> Տե՛ս Տիտօվ Յ.Պ., Խրեստոմատիա ու պատմություն հայության մասին հրովարտակը, 1999, էջ 264:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 266-268:

<sup>3</sup> Տե՛ս Տիտօվ Յ.Պ., Խրեստոմատիա ու պատմություն հայության մասին հրովարտակը, 1999, էջ 274-275:

«Միավորումների և միությունների մասին ժամանակավոր կանոնները», որով, բացի մշակութային, լուսավորչական, փոխօգնության, ապահովագրական ու կոռուպտատիվ կազմակերպություններից, հաստակներին իրավունք տրվեց առանց հատուկ քույլտվության միավորվելու նաև արհմիություններում՝ հաստատման ներկայացնելով միության կանոնադրությունը<sup>1</sup>:

1905 թ. ընթացքում անցկացվեց ներկայացուցչական իշխանության համակարգի բարեփոխում, որն ազդարարեց Ռուսաստանի անցումը բացարձակից՝ սահմանադրական դուալիստական միապետության<sup>2</sup>:

Բոլորությունը պարագանական իրավական վերափոխումների ծրագիրը եզրափակեց 1906 թ. ապրիլի 23-ի «Ռուսաստանի կայսրության իիմնական պետական օրենքները», որն իրավական համակարգում հավակնում էր կատարելու սահմանադրության դեր:

1917 թ. փետրվարին ստեղծված Ժամանակավոր կառավարությունը, անցնելով իշխանության, հայտարարեց, որ իր գործունեության սկզբունքներն են խոսքի, մամուլի, միությունների, ժողովների և գործադրությունները, կրոնական, դասային, ազգային խորականության վերացումը: Արդարադատության ոլորտում ժամանակավոր կառավարությունը վերացրեց «դատական հակաբարեփոխումներ» ներմուծած օրենքները, ստեղծեց վարչական արդարադատության ինստիտուտը:

Ժամանակավոր կառավարությունը նախապատրաստում էր Հիմնադիր ժողովի ընտրությունները: Այդ ժողովը պետք է որոշեր Ռուսաստանի կառավարման ձևը և ընդուներ սահմանադրություն: Այդ կապակցությամբ էական փոփոխություններ կատարվե-

ցին օրյեկտիվ ընտրական իրավունքում: Ընտրություններին մասնակցելու իրավունք ստացան կանայք և զինվորականները, իշեցվեց տարիքային ցենզը՝ զինվորականներին՝ 18 տարի, մնացած քաղաքացիներին՝ 20 տարի: Ընտրական իրավունքից զրկվեցին քրեսական հանցագործությունների համար դատապարտվածները և կայսեր ընտանիքի անդամները<sup>1</sup>:

### § 7. Արևելան Հայաստանի իրավական մշակույթի զարգացման օրինաչափությունները XIX դարում

XIX դարի սկզբին Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին առաջ բերեց փոփոխություններ և առաջընթաց հայ ժողովրդի բաղադրական, տնտեսական և հոգևոր-մշակութային կյանքում: Սակայն իրավական մշակույթի բաղադրատարբերում այդ առաջնաբացը չդրսենությունը: Պատճառն այն էր, որ Ռուսական կայսրությունը բացարձակ, կենտրոնացված միապետություն էր, որի իրավական համակարգում չէր կարող գոյատևել որևէ իրավական ինքնավարություն: Այդ իսկ պատճառով հայ գործիչների առաջարկած Արևելյան Հայաստանի ինքնավարությունը «հայկական թագավորության» ձևով, որը պետք է ունենար քնակիշների իրավունքներ ապահովող օրենքներ,<sup>2</sup> անընդունելի էր կայսրության համար: Այդուհանդեռձ, Ռուսական կայսրությունը միանգամից չկիրառեց Արևելյան Հայաստանի գաղութացման և իրավական լրիվ միջամտության բաղադրականությունը:

Կառավարման համակարգի և իրավական կարգավորման հարցերում ցարիկմը որդեգրեց աստիճանական գաղութացման և Հայաստանի՝ որպես Ռուսաստանի սովորական վարչատարած-

<sup>1</sup> Տե՛ս Լукашева Е.А., Человек, право, цивилизации: нормативно-ценностное измерение. М., 2009, էջ 266:

<sup>2</sup> Խ. Լազարյանի, Վ. Արդուրյանի, Ալ. Խուդարշյանի մշակած այդ նախագծի մասին մանրամասն տե՛ս Վ.Ա. Պարսաճյան, Ա.Ս. Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, Եր., 1947, էջ 267, ինչպես նաև՝ Հայ ժողովրդի պատմություն, հ. V, էջ 202-204:

<sup>1</sup> Տե՛ս История государства и права России. Под ред. Ю.П. Титова, М., 1999, էջ 224:

<sup>2</sup> Այդ կապակցությամբ իրավարական կարևոր ակտերն էին՝ «Պետական դրումայի հիմնադրման մասին» մանիֆեստը, «Պետական դրումայի հիմնադրման մասին» օրենքը, «Պետական դրումայի ընտրությունների մասին կանոնադրությունը»:

քային միավորի վերածելու քաղաքականությունը: Այդ քաղաքականության ճանապարհին առաջին քայլը 1827 թ. հոկտեմբերի 6-ին Պասկվիչի կողմից ստեղծված Երևանի ժամանակավոր վարչությունն էր, իսկ այնուհետև՝ Հայկական մարզի ստեղծումը (1928 թ. մարտի 20-ին): 1833 թ. հունիսի 23-ի օրենքով Հայկական մարզի կառավարման կողեզիալ կարգը փոխարինվեց միանձնյա կառավարմամբ:

Այսպիսով, ցարիզմը աստիճանաբար ոռուացնում էր իրավական համակարգը՝ դուրս մղելով տեղական սովորություններն ու իրավունքը՝ ներմուծելով ոռուական օրենքների գործողությունն ընդհանրապես Անդրկովկասում, ներառյալ նաև Հայաստանում: 1836 թ. մարտի 11-ի «Պոլոժենիե»-ի (հայ եկեղեցական կանոնադրություն) հաստատմամբ խարիզմատիկ հայ եկեղեցու ինքնավարության և կանոնական իրավունքի իմբերը: Այս օրենքով հայ եկեղեցու կազմակերպական կառույցը և իրավակարգավորիչ լիազորությունները ենթարկվեցին կայսերական օրենսդրական կարգավորման: Իրավական տեսանկյունից «Պոլոժենիե»-ի նշանակությունը երկակի էր: Այն իրավաբանորեն ամրագրում էր Ռուսաստանի սահմաններում ապրող հայության ազգային-մշակութային սահմանափակ ինքնորոշման իրավունքը՝ դրան համապատասխանող եկեղեցական իրավագործություններով: Սակայն, մյուս կողմից՝ «Պոլոժենիե»-ն ջնջում էր հայոց կաթողիկոսի ինքնահշխան իրավունքները ներեկեղեցական հարաբերությունների կարգավորման ոլորտում, իսկ կանոնական իրավունքից մնում էին միայն փշրանքներ:

Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միանալու հանգամանքը հակասական ազդեցություն ունեցավ հայ ժողովրդի իրավական կյանքի վրա: Հայաստանը ենթարկվեց իրավական լրիվ գաղութացման. աստճանաբար գործի դրվեց ոռուական իրավունքն իր բոլոր դրսերումներով: Հայ ժողովուրդը կորցրեց իր մասնակի իրավական ինքնավարությունը, որի փշրանքները

պահպանվել էին պարսկաթուրքական տիրապետության օրոք:<sup>1</sup>

Սակայն այդ կորստին գուգահեռ կայսերական իրավունքի գործողությունը պարսկական կամ բուրքական իրավունքի համեմատությամբ բարերար էր իր ընդհանուր կարգավորիչ ազդեցությամբ, որովհետև այն վերացրեց ավատատիրական իրավական մասնատվածությունը, անիշխանությունը, կրոնական խորականությունը, բնակչության համար ապահովեց անձի, գույքի անձեռնմխելության տարրական իրավունքներ: Արևելյան Հայաստանը ներգրավվեց հետզհետե զարգացող ոռուական իրավական մշակութային տարածք, որի առաջադիմական գծերը, ի տարբերություն Արևելքի կրոնաիրավական խորական համակարգերի, ակնհայտ էին: Կայսերական գաղութային, սակայն համեմատաբար առաջադիմական իրավունքը իրավական երաշխիքներ ստեղծեց ընդդեմ հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման:

Ռուսական կայսրությունում դեռևս XVIII դարից նկատվում էր բացարձակ միապետության ձգտում՝ հասարակական և մասնավոր կյանքի բոլոր կողմերը ենթարկել մանրանան ու մանրակրկիտ կանոնակարգման: Այդ միտումն ահազնացող կերպով դրսերովեց նաև XIX դարում, երբ Ռուսաստանում իրավական ոլորտում ձեռնարկվեցին բարեփոխումներ և լայնամասշտար կողմից կացիստանում աշխատանքներ:

XIX դարի երկրորդ քառորդի վերջում Անդրկովկասի ամբողջ տարածքում գործում էին ոռուական օրենքները և շատ քիչ ոլորտներում՝ տեղական սովորությունները:<sup>2</sup> XIX դարի երկրորդ կեսին Ռուսական կայսրության իրավական համակարգն ավելի ու ավելի էր կենտրոնանում՝ դուրս մղելով մասնատվածությունը և պար-

<sup>1</sup> Իրավական համակարգի կենտրոնացումը նոր ժամանակներում կայսրության իրավական զարգացման օրինաչափություններից էր: Այն դրսերովիւմ էր ոչ միայն Արևելյան Հայաստանում, այլև պետության ողջ տարածքում: Դրա հետևանքով 1841 թ. վերացվեց «Աստրախանի հատուկ հայկական դատարանը», ինչպես նաև Աստրախանի հայոց դատաստանագրի գործողությունը:

<sup>2</sup>Տե՛ս Աւագ Ա.Ա., История государства и права России, М., 2004, էջ 281, 355, 385, 394-396:

**տիկուլյարիզմը:** Կայսերական օրենսդրությունը վերածվում է իրավունքի առաջնային աղբյուրի՝ տեղերում դուրս մղելով կամ վերացնելով իրավական ցանկացած ինքնապարություն:

Արևելյան Հայաստանը կայսրության սովորական վարչատարածքային մաս էր, որում գործում էր ռուսական օրենսդրությունը: Ըստ որում, որպես կանոն, XIX դարի առաջադիմական բարեփոխումները կայսրության ծայրամասերում կիրառվում էին կիսատ-պրատ, ժողովրդավարական իրավական ինստիտուտների էական վերապահումներով: Այսպես, 1866 թ. Կովկասյան փոխարքայությունում անցկացվեց դատական բարենորոգում: Համաձայն կայսերական օրենքների՝ Երիվանում ստեղծվեց շրջանային (օկրուգային) դատարան՝ Երիվանի նահանգի և Կարսի մարզի համար: Այդ դատարանը մտնում էր Թիֆլիսի դատական պալատի դատական շրջանի մեջ:<sup>1</sup>

Դատական բարեփոխումները կովկասյան փոխարքայության տարածքում անցկացվեցին էական տարբերություններով, որնք հետևանք էին ցարիզմի զաղութային քաղաքականության, մասամբ էլ պայմանավորված էին տեղական առանձնահատկություններով:<sup>2</sup>

Նախ՝ Կովկասյան երկրամասում չհիմնադրվեց երդվյալ ա-  
տենակաների ինստիտուտը:

Երկրորդ՝ տեղամասային հաշտարար դատավորները Կովկասում ոչ թե ընտրովի էին, այլ նշանակովի: Հաշտարար դատավորներին այստեղ նշանակում էր կայսրության արդարադատության նախարարը՝ Կովկասի քաղաքացիական մասի պետի համաձայնությամբ:

Երրորդ՝ յուրաքանչյուր հաշտարար դատարանին կից հիմնարովում եղ օգնականի ապացուն, որն իրականացնում էր ուս-

<sup>2</sup> Stăiu într-o măsură deosebită, hinnulwādītēn` 430, 432, 437, 438, 445, 446, 450, 456;

տական գործառույթներ հաշտարար օկրուզի առանձին տեղամասերում: Նա փոխարինում էր հաշտարար դատավորին հիվանդության և արձակուրդի դեպքերում:

Չորրորդ՝ Անդրկովկաս չներմուծվեց դատական քննիչների ինստիտուտը: Դատական քննիչների պարտականություններն այստեղ դրվում էին հաշտարար դատավորների կամ նրանց օգնականների վրա (միայն XX դ. սկզբին դատական քննիչների ինստիտուտը ներմուծվեց Անդրկովկաս): Երևանի օկրուգային դատարանին կից նշանակված էին նաև երկու հաստիքային քննիչներ՝ կարևորագույն գործերով նախաքննությունը վարելու համար:

Հինգերորդ՝ Անդրկովկասում շիհմնադրվեցին հաշտարար դատական Ենթահամակարգի այլ օղակները: Երիվանի օկրուզային դատարանը վերաքննիչ ատյան էր հաշտարար արդարադատության համար, իսկ Թիֆլիսի դատական պալատը՝ վճռաբեկ ատյան: Ընդհանուր ընդդատության գործերով վերաքննիչ ատյան էր Թիֆլիսի դատական պալատը, իսկ վճռաբեկ՝ Կառավարիչ սենատը:

Այսպիսով, դատական բարեփոխումները Կովկասում իրականացնելիս դրա կարևորագույն ժողովրդավարական ինստիտուտները՝ երդվայների դատարանը, հաշտարար դատավորների ընտրովիությունը, ընդհանուր և հաշտարար արդարադատության առանձնացվածությունը, չկիրառվեցին:

Կայսերական իրավական համակարգի միասնականացումը հանգեցրեց նաև նրան, որ բուն Ռուսաստանի հայկական գաղթավայրերը, որոնք մինչ այդ ունեին դատական և իրավական որոշակի ինքնավարություն, աստիճանաբար զրկվեցին դրանից՝ պետականացական ընդհանուր բարեփոխումներին զուգընթաց։ Ասորախանի «Հայկական դատաստանագիրը», որ կիրառվում էր Նոր Նախիջևանում (1782 թ.-ից), Ղզլարում, Մոզդոկում,<sup>1</sup> արդեն XIX դարի երկրորդ կեսից դադարեց գործել, որովհետև հայ-

<sup>1</sup> Տես Հայ ժողովողի պատմություն, հ. V, Եր., 1974, էջ 465, 478, 481, 488:

կական համայնքները կորցրին իրենց վարչադատական ինքնավարությունը՝ ինտեգրվելով կայսրության կառավարչական և իրավական համակարգին: Առաջինը վերացվեց Աստրախանի հայոց դատարանը՝ (1840 թ.), և, հետևաբար, Աստրախանի հայկական դատաստանագրի գործողությունը, իսկ այնուհետև վերացվեցին Նոր Նախիջևանի և հայկական մյուս գաղութների առանձնաշնորհումները (1860 թ.): Նրանք իրավական տեսանկյունից հավասարվեցին կայսրության մյուս բնակավայրերին, և դրանցում սկսեց գործել ընդհանուր օրենսդրությունը:<sup>1</sup>

Իրավական կենտրոնացումը շատ դեպքերում չուներ օրյեկտիվ հիմքեր, այլ գաղութային քաղաքականության դրսնորումն էր: Ինչպես Անդրկովկասի այլ ժողովուրդները, Հայաստանը ևս Ռուսաստանի համար սոսկ վարչատարածքային միավոր էր: Այդ քաղաքականության տրամաբանական հետևանքը 1903 թ. հունիսի 12-ին Նիկոլայ II-ի հաստատած օրենքն էր, որով հայ եկեղեցապատկան հողերը և գույքը բռնագրավվում էին: Այդ օրենքը վերացնում էր հայ եկեղեցու ինքնավարությունը, մշակութային գործունության տևանական-նյութական հիմքերը: Երկու տարի հետո՝ 1905 թ. օգոստոսի 1-ին, Նիկոլայ II-ը ստորագրեց նոր հրովարտակ, որով հայ եկեղեցուն վերադարձվեցին նրա գույքը, երկու տարվա ընթացքում դրանից ստացած եկամուտները, ինչպես նաև կրթական գործով գրադպելու իրավունքը:<sup>2</sup>

Իրավական մշակույթի բոլոր տարրերը նոր դարաշրջանի պետականական համակարգերում ավելի ու ավելի սերտաճեցին քաղաքականության հետ: Այդ օրինաչափության գործողության հետևանքով հայ իրավական մշակույթն արդեն չուներ դրսնորումներ ոչ իրավաստեղծագործության (օրենսդրության), ոչ իրավական գործունեության ոլորտներում: Հայաստանում գործում էր ոչ

թե հայկական, այլ կայսերական իրավունքը:

Այս շրջանի առանձնահատկություններից մեկն էլ այն էր, որ հայոց ազգային ինքնազիտակցության զարգացման պայմաններում պետականական հոգևոր մշակույթը ևս չդարձավ հասարակական-քաղաքական միտքը հոգող խնդիրներից: XIX դարի կեսերի հայկական կրթական կազմակերպությունները և մտավորականությունն ավելի շատ կենտրոնացել էին հայագիտական, կրթալուսավորչական, բնագիտական ուղղությունների վրա, քան թե պետականական ուսմունքների: Պետականական մտքի (իրավագիտության) զարգացման համար պայմաններն անբարենապաստ էին և երկրի ներսում, և երկրից դրւու: Քաղաքական անկախության չգոյության պայմաններում պետականական հիմնահարցերը հայ ժողովրդին հոգող հիմնախնդիր չէին, իսկ Հայաստանից դրւու, ապրելով այլ պետությունների քաղաքական ու սոցիալ-իրավական միջավայրում, հայ մտավորականները չէին կենտրոնացել հոգևոր մշակույթի այս ուղղության վրա:

\*\*\*

Այսպիսով, XIX դարի երկրորդ կեսին Արևելյան Հայաստանը կայսրության սովորական վարչատարածքային մասն էր, որում գործում էր ռուսական օրենսդրությունը: Կայսերական իրավական համակարգի միասնականացումը հանգեցրեց նաև Ռուսաստանի հայկական գաղթավայրերի դատական և իրավական ինքնավարության կորստին: Իրավական կենտրոնացումը շատ դեպքերում գաղութային քաղաքականության դրսնորում էր: Իրավական մշակույթի բոլոր տարրերը ավելի ու ավելի սերտաճեցին քաղաքականության հետ: Դրա հետևանքով հայ իրավական մշակույթն արդեն չուներ դրսնորումներ ոչ իրավաստեղծագործության, ոչ իրավական գործունեության ոլորտներում: Պետականություն չունեցող հայ ժողովրդին հոգող հիմնախնդիր չէին քաղաքական-իրավական հիմնահարցերը, ինչի արդյունքում հայ մտավորականները չէին կենտրոնացել հոգևոր մշակույթի այս ուղղության վրա:

<sup>1</sup> Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. V, Եր., 1974, էջ 478, 481, հ. VI, Եր., 1981, էջ 631, 649, 651-652:

<sup>2</sup> Տե՛ս Վահե Երկանյան, Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում (1870-1905 թթ.), Եր., 1976, էջ 280:

յան վրա: Միայն XIX դարի երկրորդ կեսին իրավական համակարգերում արդեն կատարված փոփոխությունները ազատ պայմաններ ստեղծեցին իրավաբանական կրթություն ստանալու համար, ինչը նպաստեց հայ իրավագետների առաջ գալուն: Նրանց մի մասը Հայաստանի առաջին և երկրորդ հանրապետություններում գրադարձնում էին կարևոր պետական պաշտոններ կամ իրենց համեստ ներդրումն արեցին հայ իրավական մտքի զարգացման գործին:

### § 8. Հայ իրավագետների առաջ գալը և իրավագիտության ձևավորումը

XIX դարի առաջին կեսում բուն Հայաստանում չկային արդի հասկացողությամբ իրավագետներ: Արտասահմանյան երկրներում իրավաբանական կրթություն ստացած, ազգությամբ հայ իրավագետները առաջ եկան հայկական այն գաղթավայրերում, որոնցում գործում էին մրցակցության սկզբունքի վրա կառուցվածքից թե շատ ժողովրդավարական արդարադատության համակարգեր: Այդպիսին էին, օրինակ, Հնդկաստանի հայկական գաղթավայրերը, որոնցում գործում էր անգլիական դատաիրավական համակարգը: Այդ համակարգի զարգացած ինստիտուտներից էր փաստաբանությունը: Արդյունքում արդեն XIX դարի առաջին կեսին այստեղ կային ազգությամբ հայ բազմաթիվ իրավաբաններ: <sup>1</sup> Այս ժամանակ ազգությամբ հայ իրավաբաններ հանդես են զալիս նաև Եգիպտոսում:<sup>2</sup>

<sup>1</sup> Այդ իրավաբանները ծառայում էին դատարաններում, քննչական մարմններում: XIX դարի երկրորդ կեսին հայ իրավաբանների քանակը քանից ավելի էր: Նրանցից ոմանք ունեին բակալավրի ու մագիստրոսի աստիճան: Նրանց մեջ աշքի ընկնող դեմք էր Գրիգոր Չարլզ Պոլը, ով փաստաբանել է Մ. Նալբանդյան՝ Սահել Բարաջանյանի կտակի առթիվ հարուցած գործը և շահել այն (տե՛ս Ռ. Գ. Արքահանձյան, Հնդկաստանի հայ գաղթավայրերը. Հայ ժողովրդի պատմություն, հ. V, Եր., 1974, էջ 521-527):

<sup>2</sup> Նրանցից ոմանք (Պ. Յուսուֆյանը, Նուբարը) Եգիպտոսում հասել են մինչև վարչապետի ու նախարարի պաշտոն:

Հայ բնակչության շրջանում իրավագետի մասնագիտության բացակայության պատճառով բացակայում էր նաև հայ իրավական միտքը՝ և Արևելյան, և Արևմտյան Հայաստանում: Ուստատանի դատաիրավական համակարգը ժողովրդավարական հիմքերի վրա վերակառուցելուց հետո միայն (1863 թ.) այլազգիների համար ազատ պայմաններ են ստեղծվում իրավաբանական կրթություն ստանալու համար, ինչի շնորհիվ հայ երիտասարդության շրջանում նկատվում է նաև ձգտում ստանալ ննան կրթություն: Արդեն XIX դարի վերջին և XX դարի սկզբին ոռուական համալսարանների իրավաբանական ֆակուլտետներում սովորում էին հայ ուսանողներ, օրինակ՝ Գ. Չուբարը, Ա. Մյասնիկյանը, Ս. Մյասնիկյանը, Ա. Գյուլխանդանյանը, Գ. Վարշամյանը, Ս. Հարությունյանը, Գ. Եվանգոլովը, Ս. Լուկաշինը, Խ. Սամվելյանը և այլք: Նրանց մի մասը, որ կայսրության օրոք աշխատում էր իրավական գործունեության զանազան ոլորտներում, Առաջին հանրապետության տարիներին և հետագայում գրադարձնում էր կարևոր պետական պաշտոններ: Հատկապես հիշարժան է Խ. Սամվելյանի գործունեությունը, որը դեռ նախահեղափոխական շրջանում սկսեց հայ իրավունքի պատմության գիտական հետազոտությունները: Առաջին հանրապետության օրոք նա հաշտարար դատավոր էր: Հետագայում, շարունակելով իր իրավագիտական հետազոտությունները, դրամք ամփոփեց հայ իրավունքի պատմական զարգացմանը նվիրված աշխատության մեջ:<sup>1</sup>

Արևելյան իրավական մշակույթում էական ներդրում ունի նաև Գ. Չուբարը, որին համարում են ՀԽՍՀ 1922 թ. Սահմանադրության նախագծի հեղինակը: Գ. Չուբարի իրավագիտական ժառանգությունից մեզ հասել է միայն «Դաշնակցության տաճկական օրինատացիան և Հայրենիքի փրկության կոմիտեն» աշխատությունը: Գիտական մյուս աշխատանքները ոչնչացվել են 1937 թ. ձերբակալումից հետո:

<sup>1</sup> Տե՛ս Սամվելյան Խ., Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1, Եր., 1939:

Թուրքահայաստանում ևս մինչ XIX դարի երկրորդ կեսը շկային հայ իրավաբաններ, որովհետև կիսաավատական մահմեդական իրավական համակարգում իրավագիտությունը մահմեդականների մենաշնորհն էր: «Մուսուլմանական իրավունքում կրոնը պետության հիմքն է: Ըստ այդ հայեցակետի՝ քաղաքացիությունն անպայման պետք է համընկնի կրոնի հետ: Սիայն մուսուլմանական կրոնին պատկանողներն են, որ մուսուլմանական քաղաքացիություն ունեն: Սիայն նրանց է վերապահվում պաշտոնավարելու քաղաքական իրավունքը՝ ինչպես ասենք. արդարադատության, ադմինիստրացիայի և ռազմական բնագավառի հետ կապված պետական պաշտոններում»:<sup>1</sup>

Սակայն XIX դարի երկրորդ կեսից Թուրքիայի իրավական համակարգի եվրոպականացման քարեփոխումները նպաստեցին հայ իրավաբանների առաջ գալուն: Նրանցից ականավորը Գրիգոր Զոհրապն էր, ով գրադիմ էր ոչ միայն գործնական իրավաբանությամբ, այլև կատարում էր իրավագիտական հետազոտություններ, դասավանդում էր: Գ. Զոհրապի գրքին են պատկանում «Օսմանյան իրավունքում քաղաքացիության տարրերության պատճառով ժառանգություն ստանալու արգելքի մասին», «Հայկական հարցը փաստարդերի լույսի տակ» (առաջին անգամ հրատարակվել է 1913 թ. Փարիզում) ֆրանսերեն աշխատությունները, ինչպես նաև «Քրեական իրավունք» թուրքալեզու հետազոտությունը:

Պոլսահայ իրավագետներ էին նաև Կ. Սասունին, Ս. Տիգրանյանը, ովքեր Առաջին հանրապետության պետական ականավոր գործիչներից էին: Վերջինս հայտնի է իր «Հայ իրավունքի պատմության ներածություն (Եր., 1924)» աշխատությամբ:

<sup>1</sup> Տե՛ս Գրիգոր Զոհրապ, «Օսմանյան իրավունքում քաղաքացիության տարրերության պատճառով ժառանգություն ստանալու արգելքի մասին» (Ավագյան Ռ.Հ., Գրիգոր Զոհրապի և Գրիգոր Չորբարյանի իրավական միտքը, Երևան, «Մանց», 2003, էջ 102):

### ԲԱԺԻՆ 3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՍԱԿԱՐԳԸ ԵՎ ԴՐԱ ԱՌԱՋԻՆ ՏԱՐՐԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

### ԳԼՈՒԽ 6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՍԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

#### § 1. Հայաստանի առաջին հանրապետության կազմավորումը և իրավական համակարգի նորմատիվային իմքերի ստեղծումը

Հայ ժողովրդի պատմաքաղաքական ճակատագրի հետևանքով ազգային անկախ իրավական քաղաքականության իրականացումը և նորագույն շրջանում հայաստանյան լիարժեք իրավական համակարգի կառուցումը իրական հիմնահարց դարձան միայն XX դարի սկզբին: 1918 թ. մայիսի 28-ին հայտարարվեց Հայաստանի անկախությունը և Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդն իրեն հռչակեց Հայաստանի բարձրագույն մարմին: Այնուհետև Ազգային խորհուրդը և Թիֆլիսում ձևավորված կառավարությունը տեղափոխվեցին Երևան, և սկսվեց պետական իրավական համակարգի շինարարությունը: Օրենսդիր մարմինների իրավասության բնույթը, կառավարության ձևավորման կարգը, կառավարության կազմակերպման, կառավարության ու խորհրդարանի հարաբերությունների բնույթը հաստատում են, որ Առաջին հանրապետության կառավարման ձևը խորհրդարանական հանրապետությունն էր՝ իշխանությունների բաժանման և պատասխանատու կառավարության սկզբունքներով<sup>1</sup>:

<sup>1</sup> Առաջին հանրապետության օրենսդիր և գործադիր իշխանությունների կազմակերպման և գործունեության պատմահրավական մանրամասները տե՛ս Վաղարշյան Ա.Գ., Հայաստանի առաջին հանրապետության գործադիր իշխանության համակարգը (1918-1920 թթ.): Եր., ԵՊՀ հրատ., - ԵՊՀ, 2012 թ., Վաղարշյան Ա.Գ., Հայաստանի առաջին հանրապետության օրենսդիր իշխանության համակարգը (1918-1920 թթ.): Եր., ԵՊՀ հրատ., - ԵՊՀ, 2012 թ.:

Պետականության վերածնունդով՝ Հայաստանի առաջին հանրապետության ձևավորմամբ օրակարգի խնդիր դարձավ նաև հանրապետության իրավական համակարգի կառուցումը: Առաջին հանրապետության հոչակումը նշանավորեց նոր շրջան Հայաստանի իրավունքի գարգացման մեջ: Առաջին հանրապետության օրենսդիր և գործադիր մարմինների կազմավորումից հետո նրանց առջև դրված գլխավոր խնդիրներից մեկն էլ հանրապետության իրավական համակարգի կառուցումն էր, հասարակական հիմնական ոլորտների հարաբերությունները կարգավորող համապատասխան օրենքների մշակումն ու ընդունումը: Առաջին հանրապետության իրավական համակարգում ձևավորվելիք նորմատիվային բաղադրատարրը՝ որպես համակարգակազմիչ տարր, շատ կարևոր դեր էր խաղում իրավական կարգավորման խնդիրների, բնականարար նաև հասարակական հիմնախնդիրների լուծման համար: Հետևաբար, իրավական պատշաճ կարգավորումն Առաջին հանրապետությունում ձեռք էր բերում պատմական նշանակություն՝ իր առջև կանգնած խնդիրների լուծմամբ նպաստել նորահոչակ պետականության կայացմանը:

Սակայն իրավական համակարգի կերտումը Հայաստանում ձեռք բերեց յուրօրինակ գծեր՝ պայմանավորված որոշակի պատմաքաղաքական գործոններով: Դրանցից հիմնականը, որ ազդեց իրավական համակարգի ձևավորման վրա, հանրապետության կազմավորման առանձնահատկությունն էր: Հանրապետությունը հիմնադրվել էր ներքին և արտաքին ծանր իրադրության մեջ: Այստեղ չկար նախորդող պետական կառուցակարգ և իրավական համակարգ: Այս հանգամանքը կանխորոշում էր կառավարության գլխավոր խնդիրը. «կասեցնել քայլայման գործընթացը, հանել երկիրն անիշխանության վիճակից ու պայմաններ ստեղծել պետական շինարարության համար ... Անձն քառուի և ավերակների կույտից նա պետք է ստեղծի կենսունակ և աշխատող մի նարմին»<sup>1</sup>: «Անձն քառում» գոյատևող հայ ժողովրդի համար

կարեռվում էր արագացված քայլերով ստեղծել պետական կառավարման և իրավական համակարգերը: Նորաստեղծ օրենսդիր և բարձրագույն գործադիր մարմինների առջև կանգնած էր խնդիր՝ դնել իրավական համակարգի նորմատիվային և կազմակերպական բաղադրատարրերի հիմքերը: Այսպիսով, իրավական համակարգի նորմատիվային հիմքերի ստեղծման վրա էական ազդեցություն բողեց հանրապետության ներքին և արտաքին բարդ իրավիճակը, ինչը պահանջում էր արագացված լուծումներ:

Որպես կանոն, նորահոչակ պետություններում պետական բարձրագույն մարմինները հայտարարում են պետակիրավական համակարգի ծրագիր համարվող հոչակագրեր, մասնիչեատներ և այլն: Այդպես են ստեղծվել նոր շրջանի գրեթե բոլոր ազատական պետությունները... Սակայն Հայաստանի առաջին հանրապետության պետականակերտությունը չսկզբնավորվեց նման ծրագրային ակտով, որ կարող էր լինել խորհրդարանի հայտարարություն կամ կառավարության դեկլարացիա (հայտարարագիր): Պատճառը Հայաստանում ստեղծված բավականին բարդ և խճճված իրադրությունն էր՝ իր սոցիալ-քաղաքական, տնտեսական, արտաքին քաղաքական բարդ հիմնախնդիրներով ու դժվարություններով: Այսպիսով, Առաջին հանրապետության օրենսդիր մարմինները որդեգրեցին սպասողական, հետաձգողական քաղաքականություն, պայմանավորված հանրապետության պատմաքաղաքական բավականին խճճված ու դժվարին կացությամբ՝ արտաքին քաղաքական կարգավիճակի անորոշություն,<sup>1</sup> սահմանային և տարածքային վեճերի առկայություն, ներքին քաղաքական, տնտեսական և սոցիալական բարդ իրավիճակ, պատերազմական իրադրություն և ներքին խոռվություններ: Այս գործոնների ազդեցությամբ քաղաքական մեծամասնությունը հետաձգեց պետական շինարարության մի շարք սկզբունքային հարցերի որոշումը, թեկուզ հոչակագրի ձևով:

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետությունը Փարիզի հաշտության վեհաժողովի կողմից դե ֆակտո ճանաչում ստացավ միայն 1920 թ. հունվարի 19-ին (տե՛ս Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Եր., Հայաստան, 1993, էջ 379):

<sup>1</sup> Տե՛ս «Զանգ», թերթ, 1918 թ., օգոստոս, թիվ 43:

Հայաստանի Խորհրդի՝ որպես խորհրդարանի, ձևավորումից հետո առաջին կառավարությունը (վարչապետ՝ Հ. Քաջազնունի, 1918 թ. հուլիս-օգոստոսից մինչև 1918 թ. նոյեմբերի 4) 1918 թ. օգոստոսի 3-ին նրան ներկայացրեց իր կառավարության հայտարարագիրը: Պայմանավորված հանրապետության պետական կառավարման ձևով՝ «կառավարությունն առաջատար դեր էր խաղում պետության արտաքին և ներքին քաղաքականության մշակման, ձևավորման և կենսագործման գործում ... կառավարության, որպես գործադիր իշխանության մարմնավորողի, հիմնական գործառույթն ընդհանուր քաղաքականության առաջարկությունն էր, որա ձևակերպումը, ինվեստիտուրան խորհրդարանում և, անշուշտ, կենսագործումը կյանքում: Այդ գործառույթի իրականացման իրավաբանական ձևը նոր ձևավորվող կառավարության հայտարարագիրն էր (դեկլարացիա, հայտագիր, հոչակագիր) էր, որը՝ որպես կառավարության գործողությունների քաղաքական ծրագիր, հաստատվում էր խորհրդարանում»:

Կառավարության հայտարարագիրը հաստատվեց խորհրդարանում 1918 թ. օգոստոսի 6-ին<sup>1</sup>: Այդ հայտարարագիրը կարելի է որպես պետության կառուցակարգի հիմնադրման և «նրա գոյությունն ապահովող ամենաանհրաժեշտ գրավականների ծրագիր»<sup>2</sup>: Իր կառավարության խնդիրը վարչապետը ձևակերպել էր այսպես. «Բացառիկ ծանր պայմանների մեջ է գործի անցել իմ կազմած կառավարությունը: Նա կոչված է իրականաց-

<sup>1</sup> Կառավարության հայտարարագիրն անցնում էր ինվեստիտուրայի գործընթաց, սակայն, ըստ էության, այն ավելի շատ քաղաքական փաստաթուղթ էր, քան իրավական: Այն կարող էր առաջ քերել քաղաքական երկակի հետևանքներ: Նախ հայտարարագիրը պետք է անցներ հաստատման գործընթաց՝ վաստակության քվե ստունալու համար: Այնուհետև հայտարարագիրի ծրագրերը կյանքի չկոչելու համար կարող էր առաջանալ կառավարության քաղաքական պատասխանատվության հարցը, եթե հանկարծ կառավարությանն այդ կապակցությամբ անվաստահության քվե հայտնվեր (տե՛ս **Վաղարշյան Ա.Գ.**, Հայաստանի առաջին հանրապետության գործադիր իշխանության համակարգը..., էջ 109-110):

<sup>2</sup> «Հ. Քաջազնունու առաջին կառավարության դեկլարացիան» (տե՛ս «Զանգ», թերթ, Եր., 1918, օգոստոսի 7, թիվ 43(59), ինչպես նաև **Ս. Վրացյան**, նշված աշխ., էջ 195-196):

նելու գործադիր իշխանություն մի պետության մեջ, որ դեռ նոր է ծննունդ առել և տակավին զորու չի եղել իր կազմակերպման առաջին շրջանից: Կառավարությունը չունի ոչ մի հենարան անցյալում, նա չի հաջորդում նախկին կառավարությանը՝ շարունակելու արդեն ընթացքի դրվագ պետական աշխատաճրը: Նա նոյնիսկ չի ժառանգում կենտրոնական իշխանության կարիքներին հարմարեցված պատրաստի ապարատներ: Նա հարկադրված է սկսելու ամեն բան սկզբից. անձն քառի և ավերակների կույտից նա պետք է ստեղծի կենսունակ և աշխատունակ մի մարմին: Մյուս կողմից, կառավարությունը գտնում է երկիրը այնպիսի վիճակի մեջ, որի բնորոշման համար մի բառ կա միայն՝ կատարությիկ: ... Այս բացառիկ դրույթունը նախորոշում է արդեն կառավարության բնույթը: Նա չի կարող ձգտել քազմակողմանի ու լրիվ գործունեության, չի կարող ունենալ լայն ծրագիր և սահմանափակվելու է ամենաանհրաժեշտ ու միանգամայն անհետաձգելի խնդիրներով»<sup>1</sup>:

Այս զիսավոր խնդիրից ելնելով՝ Քաջազնունու կառավարությունն իր հայտարարագրում ծրագրավորում էր իշխանության խնդիրները ներքին գործերի, ֆինանսների, արդարադատության, զինվորական ոլորտներում և արտաքին հարաբերություններում<sup>2</sup>: Կառավարության հայտարարագրում բացակայում էին սովորական պայմաններում բնական համարվող ծրագրերը իրավական համակարգի ոլորտում: Այդ հանգամանքը դարձավ հայտարարագրի խորհրդարանական քննարկումների քննադատության բիրախի՝ մնացած կուսակցությունների կողմից<sup>3</sup>: Կառավարությունը ընդունում էր դեկլարացիայի թերությունները և ոչ երկարատև ծրագրային բնույթը, բայց դա բացարում էր պահի հրամայա-

<sup>1</sup> Տե՛ս «Հ. Քաջազնունու առաջին կառավարության դեկլարացիան» (տե՛ս «Զանգ», թերթ, Եր., 1918, օգոստոսի 7, թիվ 43(59), ինչպես նաև **Ս. Վրացյան**, նշված աշխ., էջ 195-196):

<sup>2</sup> Այդ խնդիրների մասին տե՛ս **Ս. Վրացյան**, նշված աշխ., էջ 197:

<sup>3</sup> Տե՛ս «Ժողովուրդ», թերթ, 1918 թ., օգոստոս, թիվ 1, **Ս. Վրացյան**, նշված աշխ., էջ 197:

կանով և գլխավոր խնդիրներով, իրատեսական լինելու մոտեցմամբ: Միայն խորհրդարանական ելույթի ժամանակ վարչապետը քանավոր հայտարարեց, որ կառավարությունը դեկավարվելու է նախկին օրենքներով: Այսպիսով, հանրապետությունում 1918 թ. մայիսից մինչև նոյեմբեր իրավական համակարգի նորմատիվային հիմքերը անորոշ էին:

Հանրապետության իրավական համակարգի ձևավորման հիմնարար քայլն օրենսդիր իրականացրել էր 1918 թ. դեկտեմբերի 6-ին՝ ընդունելով՝ «Նախկին Ռուսական Կայսրության օրենքները ՀՀ տարածքի վրա գործադրման մասին» օրենքը: Այդ օրենքով պաշտոնապես պարզություն մտցվեց հանրապետության իրավական համակարգի նորմատիվային հիմքերի ձևավորման հարցում: Համաձայն այդ օրենքի՝ ՀՀ տարածքում ժամանակավորապես գործադրվելու էին նախկին Ռուսական կայսրության օրենքները՝ Ժամանակավոր կառավարության, Անդրկովկասյան կոմիսարիատի, Սեյմի, Հայաստանի խորհրդի փոփոխություններով ու լրացումներով:<sup>1</sup> Այդ քայլը, որը հետագայում խորհրդահայ իրավագիտությունը որակում էր հետադիմական, ստիպողական և ժամանակավոր միջոցառում էր, որովհետև իրավական համակարգը միանգամից ստեղծել հնարավոր չէր:

Դեկտեմբերի 6-ի օրենքի ընդունումը առաջ բերեց քաղաքական դիրքորոշումների լուրջ բախում: Ակնհայտ էր, որ պետության և հասարակության կենսագործունեության հիմքն օրենսդրությունն էր, և այն չէր կարող ստեղծվել կախարդական փայտիկի մեկ շարժումով: Պետական շինարարության տրամարանությունը հուշում էր, որ կառավարությունը հենց սկզբից պաշտոնապես պետք է ճանաչեր ին օրենսդրական համակարգի գործողությունը՝ փորձելով աստիճանաբար այն վերափոխել և հարմարեցնել հանրապետության պայմաններին: Սակայն այդ հարցն ուներ լուրջ ընդդիմադիրներ՝ ի դեմս խորհրդարանի կուսակցությունների, որոնք իրենց քաղաքական դիրքորոշումներով էականո-

րեն տարրեր էին: Ազ ազատականները դեմ էին դրան, հատկապես այն պատճառով, որ կայսերական օրենսդրությունը նվազ չափով ժամանակավոր կառավարության և քավականին մեծ թափով Անդրկովկասյան կոմիսարիատի ու Սեյմի ընդունած օրենքներով ձախ բնույթի փոփոխությունները էր կրել: Անդրկովկասյան իշխանությունները որդեգրել էին «սոցիալական բարեփոխումների ուղին և ամենից առաջ քանակորական ու հողային օրենսդրության ոլորտում»<sup>1</sup>: Հետաքրքիր է, որ բոլոր սոցիալական կուսակցությունները կողմ էին քվեարկել այդ օրենքին, իսկ ՀԺԿ-ն դա համարում էր սահմանադրական խախտում. «Սենք այն համոզնունքին ենք, որ մեր պետական կազմը, ինչպես նաև բարդ սոցիալական հարցերը պետք է վճռի հայ ժողովրդի խկական ներկայացուցությունը՝ հայկական հիմնադիր ժողովը: Ուստի լուծել քաղաքական և սոցիալական բարդ հարցեր Հայաստանի խորհրդի ներկա կազմը բարոյական իրավունք չուներ և դա կնշանակի կապել իր կամքը հայ ժողովրդի վզին: Սինչդեռ դեկտեմբերի 6-ին մեր պառականությունը մի քանի բոպետում և լոկ քվերակությամբ վճռեց քաղաքական խոշոր, ինչպես և հողային ու բանվորական հարցեր: Հայաստանի խորհրդն այդ օրն ավելի քան երթեր ընտրել էր «հեղափոխական» օրենսդրության ուղին՝ բռնագրավելով այդպիսով այսպահանագա հիմնադիր ժողովի իրավունքները»<sup>2</sup>: Սակայն պետք է նկատի ունենալ, որ կայսերական օրենսդրությունը փետրվարյան հեղափոխությունից հետո կրած փոփոխությունների շնորհիվ կրել էր էական առաջադիմական փոփոխություններ:

\* \* \*

Այսպիսով, 1918 թ. դեկտեմբերի 6-ի օրենքով Առաջին հանրապետությունում իրավաբանորեն գործի դրվեց ոռուսական նյութական ու վարույթային օրենսդրությունը՝ Ժամանակավոր կա-

<sup>1</sup> Տե՛ս «Զանգ», թերթ, 1918 թ., դեկտեմբեր, թիվ 81, էջ 2:

<sup>2</sup> Տե՛ս «Օրենսդրական ներկայական մեր պառականություն» հոդվածը «Ժողովրդ» թերթում, 1918 թ., դեկտեմբեր, թիվ 44:

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները, Երևան, 1918 թ., էջ 28:

ռավարության, Անդրկովկասյան կոմիսարիատի և Սեյմի փոփոխություններով ու լրացումներով: Այս օրենքով հաստատվեցին հանրապետության իրավական համակարգի նորմատիվային հիմքերը, իսկ օրենքի ընդունումից հետո օրենսդիր մարմինների խնդիրը իրավական համակարգում դարձավ գործադրված օրենսդրության կատարելազործումը և հատկապես դրա կենսագործման ընդհանուր պայմաններին դրական միտվածություն հաղորդելը:

## § 2. Իրավունքի առյուրները և Սահմանադրության հիմնահարցը Առաջին հանրապետության իրավական համակարգում

Հայաստանի առաջին հանրապետության իրավական համակարգի նախադրյալների և դրա հիմքերի կառուցման պատմությունը հաստատում է, որ հանրապետությունը վերցրել էր ռոմանական տեսակի իրավական համակարգի շինարարության ուղղություն և բարեհաջող ներքին ու արտաքին քաղաքական կացության դեպքում Հայաստանը կունենար կայացած ու առաջադիմական, աշխարհիկ իրավական համակարգ: Այդ համակարգում իրավունքի առաջնային և հիմնական աղբյուրը նորմատիվ իրավական ակտերն էին՝ օրենքները, ենթաօրենսդրական նորմատիվ ակտերը:

1918 թ. օգոստոսի 3-ին հանրապետության կառավարությունը Հայաստանի խորհրդի հաստատմանը ներկայացրեց իր դեկլարացիան, որի դրույթների մեծագույն մասը վերաբերում էին առօրյա հիմնախնդրներին՝ ներքին գործերի, ֆինանսների, արդարադատության, պաշտպանության, արտաքին գործերի ոլորտներում: Հեռանկարային ծրագրեր այն չուներ: Այսինքն՝ այն սահմանադրի բնույթի ակտ չէր, բացի նրանից, որ նախատեսում էր

Հայաստանի Սահմանադրի ժողովի գումարումը<sup>1</sup>, որն էլ պետք է մշակեր ու ընդուներ Հայաստանի Սահմանադրությունը:

Սահմանադրության հարցում և հանրապետության քաղաքական դեկավարության, և օրենսդիր մարմնի, և ընդդիմադիր քաղաքական որոշ ուժերի դիրքորոշումը եղել է հետևյալը. «ՀՀ Սահմանադրությունը կընդունվի ապագայում խաղաղություն հաստատվելու և ՀՀ տարածքային սահմանների հարցի վերջնական լուծումից հետո՝ Սահմանադրի ժողովի կողմից»:

Հայաստանի առաջին հանրապետությունը այդպես էլ չհասցրեց ունենալ Սահմանադրություն: Սակայն ՀՀ արդարադատության նախարարությունում 1920 թ. սկզբներին, նախարար Ա. Չիլինգարյանի պաշտոնավարության օրոք, հավանաբար հանրապետության քաղաքական դեկավարության համաձայնությամբ, աշխատանքներ են տարվել նաև ՀՀ Սահմանադրության նախագծի մշակման ուղղությամբ: Ո՞րն էր դիրքորոշումը փոխելու պատճառը: Նախ՝ հանրապետություն ժամանող տարրեր միջազգային կազմակերպությունների, դաշնակից պետությունների ներկայացուցիչների, ինչպես նաև արտասահմանում տարրեր երկրների հետ տարվող բանակցությունների ընթացքում ՀՀ պետական կառավարման ձևի մասին խոսք բացվելիս հայկական կողմը բավարարվում էր միայն «զանազան գրական շարադրանքներով», այսինքն՝ ՀՀ պետական կառավարման ձևն ու մարմինները նկարագրող տարրեր տեսակի տեղեկագրեր կազմելով և դրանք ՀՀ արտասահմանյան դիվանագիտական ներկայացուցչություններին ուղարկելով՝ փոխանակ մատնանշելու որոշակի հիմնական, սահմանադրական օրենքներ: Մյուս կողմից՝ Փարիզի հայկական պատվիրակությունը շտապեցնում էր հանրապետության դեկավարությանը, պատճառաբանելով «թե Ազգերի դաշնակցությունը (լիգան), որին դիմում է եղած դաշնակիցների կողմից վերցնելու իր վրա մեր պետության մանդատը, կամնենում է իմանալ ի միջիայլոց, թե ինչ պետական կազմակերպության ենք մենք ինքներս ձգտում», նոյնիսկ այդ «մանդատից հրաժարվելու դեպ-

<sup>1</sup> Տե՛ս նոյն տեղը:

քում իսկ՝ դաշնակիցները մեզ կարող են պարտադրել ամենակարծ ժամկետում ունենալ և ներկայացնել իրենց այս հիմնական օրենքը, որի վրա պիտի կառուցվի ապագա Հայաստանի պետական շենքը»<sup>1</sup>:

Այս հանգամանքներից դրդված, հավանաբար, հանրապետության քաղաքական ղեկավարության հանձնարարությամբ Ս. Չիլինգարյանը 1920 թ. ապրիլի 14-ի նամակով Ս. Տիգրանյանին և Հ. Մանանյանին (որոնք այդ ժամանակ աշխատում էին Ալեքսանդրապոլս՝ որպես համալսարանի դասախոսներ) առաջարկում է կազմել ՀՀ Սահմանադրության նախագիծը մեկ ամսվա ընթացքում<sup>2</sup>: Վերջիններս պատասխան նամակում հարցում էին անում, թե «Քիչափսի Սահմանադրության մասին է խոսքը»: Եթե «պետական կազմակերպման ձևն ու մարմիններն որոշող մի մնայուն հիմնական օրենք նախագծելու խնդիր է դրվում այժմ, որով ՀՀ-ն ապրելու է հետազայում»<sup>3</sup>, ապա այդափսի ակտի մշակումը նրանք համարում էին դեռ վաղ՝ ՀՀ պետական կյանքի արտաքին անորոշության պատճառով: Ըստ Էռյան, նրանք կողմնակից էին «ավելի համեստ-համառոտ մի օրենքի..., որ պետք է ձևավորի և որոշի այն հիմունքը, որով ներկայումս վարվում է և առաջիկայում էլ ղեկավարվելու է մեր հանրապետությունն իր մարմիններով», այսինքն՝ փաստաբուղը, որն իրավաբանական ձևակերպում կտար ՀՀ պետական կյանքի առկա, փաստացի վիճակին:

Չիլինգարյանի պատասխանը հետևյալն էր. «Չեզ առաջարկված է... կազմել նախագիծ Սահմանադրության, որ պիտի որոշի Հայաստանի պետական կազմակերպման հիմնական, մշտական ձևն ու մարմինները: Թե՞ ինչպես կընթանա մեր պետական կյանքը մոտ ապագայում, դժվար է հաստատապես ասել այժմ: Ինչ էլ լինի սակայն, պետք է, որ մեր տրամադրության տակ այժմ իսկ ունենանք մշակված մի նախագիծ այն հիմնական օրենքի, որի վրա մենք կամ նույն ենք կառուցել ՀՀ՝ մշտական:

<sup>1</sup> ՀՀ ԱԱ, ֆ. 206, գ. 1, գ. 150, թ. 12:

<sup>2</sup> ՀՀ ԱԱ, ֆ. 206, գ. 1, գ. 150, թ. 13:

<sup>3</sup> ՀՀ ԱԱ, ֆ. 206, գ. 1, գ. 150, թ. 13:

Խնդիրն ուրեմն մշտական սահմանադրության և ոչ թե ժամանակավոր սահմանադրություն մշակելու մեջն է»<sup>1</sup>:

Այստեղ զարմանալի են թվում «պետական կազմակերպման հիմնական, մշտական ձևն ու մարմինները որոշող», «մշտական սահմանադրություն» արտահայտությունները: Ամենայն հավանակությամբ կառավարող կուսակցության քաղաքական ղեկավարները փոխել էին իրենց նախնական դիրքորոշումը և ցանկանում էին օր առաջ հաստատել իրենց ձեռնուու և իրենց իշխանությունն ամրապնդող հիմնական օրենք՝ 1919 թ. խորհրդարանական ընտրությունների օրինակով, քանի դեռ իշխանության լծակները գտնվում էին իրենց ձեռքում:

Սահմանադրության ընդունումը մի երկրում, որտեղ դաժան իրականությունը, հասարակական հարաբերությունների անկայուն, ճգնաժամային կացությունը լրիվ անպետք էին դարձնում հասարակական հարաբերությունների որևէ ոլորտ կարգավորող նոր ընդունված օրենքը՝ մեկ կամ երկու ամսվա ընթացքում, երկրում, որում կային ոլորտներ, որոնց օրենսդրական կարգավորմանը իշխանությունները երկու և կես տարվա ընթացքում անդրադարձել են մի քանի անգամ, և չեն կարողացել տալ լավագույն լուծում, երկրում, որում օրենքների ծանրակշիռ մասը վերնագրված էր՝ «Ժամանակավոր», այլ կերպ մեկնաբանել անհնարին է, ինչքան էլ արտաքին ուժերի պարտադրանքով արդարացվեն այդ փորձերը:

Մայիսյան իրադարձությունները և հանրապետության քաղաքական կյանքի հետագա դեպքերը ընդհատեցին այս ուղղությամբ աշխատանքները<sup>2</sup>:

<sup>1</sup> ՀՀ ԱԱ, ֆ. 206, գ. 1, գ. 150, թ. 12:

<sup>2</sup> ՀՀ Սահմանադրության մշակման խնդիրներով գրադիւն է նաև «Հայաստանի իրավաբանական ընկերություն» հասարակական կազմակերպությունը, որի հիմնադիր ժողովը տեղի է ունեցել 1919 թ. ապրիլի 26-ին: Նոյյն թվի մայիսի 7-ին Շրջանային դատարանը հաստատել և ցուցակագրել է Հայաստանի իրավաբանական ընկերության կանոնադրությունը: Այնուհետև, ընկերությունն անցնելով գործի հիմնել էր դատավարության և դատարանակազմության, նյութական իրավունքի, հայկական իրավունքի, մուտքանական իրավունքի, Հայաստանի Սահմանադրության հարցերը ուսումնասիրելու և մշակելու հանձնաժողովներ:

Այսպիսով՝ Հայաստանի առաջին հանրապետության իրավական համակարգը, որը գոյատևեց ընդամենը երկու և կես տարի չհասցրեց ունենալ իր սահմանադրությունը: Սակայն հանրապետությունում ընդունվել և գործել են նորմատիվ իրավական ակտեր, որոնք կրում էին հիմնադիր, սահմանադիր բնույթ, որովհետև դրանք ունեին սահմանադրական-իրավական բովանդակություն, այսինքն՝ կարգավորում էին պետության և անհատի փոխհարաբերությունները, պետական իշխանության կառույցների ստեղծման և գործունեության հարաբերությունները: Այդպիսի բնույթ ունեցող ակտերից առաջինը 1918թ. մայիսի 30-ին Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդի հրապարակած Հայաստանի անվախության հայտարարությունն էր: Այդ հայտարարությունն իմանադիր սահմանադրական իրավական ակտ էր, որում ասված էր. ««*այց ազգային խորհուրդը իրեն հայտարարում է հայկական գավառների գերազույն և միակ իշխանություն...* Ազգային խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կառավարական բոլոր ֆունկցիաները՝ հայկական գավառների քաղաքական և վարչական դեկր վարելու համար»<sup>1</sup>: Դրանով Ազգային խորհուրդը լուծում էր երկու խնդիր, առաջին՝ հայտարարում էր իր գերազույն մենաշնորհային իշխանությունը, երկրորդ՝ այդ իշխանությունը տարածում էր Այսրկովկասի հայկական գավառների վրա: Վերջինս շատ կարևոր քաղաքական-իրավական նշանակություն ունեցող հանգամանք էր:

Հիմնադիր իրավական նշանակություն ունեին նաև հանրապետության կառավարության հայտարարագրերը (հոչակագրեր) և տարբեր ժամանակներում ընդունված օրենքները, օրինակ՝ Հայաստանի խորհրդի հրահանգը (1918 թ. օգսոսո), որը ժամանակակից նորմատիվ կարգավորման համակարգում համապատասխանում է խորհրդարանի կանոնակարգին (ռեգլամենտ): Հայաստանի խորհրդարանի ընտրությունների մասին օրենքը (1919 թ. ապրիլ), Հպատակության (քաղաքացիություն) մասին օրենքը

(1920 թ. մայիս): Բացի սրանից ՀՀ-ում գործել են բազմաթիվ այլ օրենքներ, ընդունված օրենսդիր մարմինների և օրենսդիր լիազորություններով օժտված կառավարության կողմից, որոնք կարգավորում էին կառավարության և պառամենտի, պետական իշխանության համակարգի կազմակերպման ու գործունեության հարաբերությունները:

Առաջին հանրապետության իրավական համակարգի մյուս առանձնահատկությունը այն է, որ սահմանադրական հարաբերությունների մի մասը կարգավորվում էին քաղաքական ուժերի բանակցությունների միջոցով կնքված համաձայնագրերի ու պայմանավորվածությունների հիման վրա, ինչպես, օրինակ՝ Հայաստանի խորհրդի կազմավորման կարգը և այլ հարաբերություններ: Երբեմն էլ որոշակի իրավական ինստիտուտներ, առանց նորմատիվ-իրավական ամրագրման, ուղղակիորեն ռեցեպցիայի էին ենթարկվում և կիրառվում էին իրեն իրավական սովորություններ: Օրինակ՝ կառավարությանն անվատահություն հայտնելու և դրա հետևանքով կառավարության հրաժարականի ինստիտուտը, չունենալով իրավական-օրենսդրական ամրագրում, կիրառվում էր գործնականում: Առանձին կուսակցությունների քաղաքական պայմանավորվածությունների միջոցով սահմանադրական հարաբերությունների կարգավորման օրինակ էր Հայ հեղափոխական դաշնակցության (այսուհետև՝ ՀՅԴ) և Հայ ժողովրդական կուսակցության (այսուհետև՝ ՀԺԿ) կնքած արձանագրությունը կուլիցիոն կառավարություն կազմելու կարգի, դրա կառուցվածքի և նախարարական պորտֆելների բաշխման կարգի մասին»<sup>2</sup>: Այսպիսի համաձայնագրեր կնքվել և կիրառվել են Առաջին հանրապետության գոյության ողջ ժամանակաշրջանում: Օրինակ՝ 1919 թ. կնքված այդպիսի արձանագրություններով Հայաստանի խորհրդի հայ քրակցիաները կառավարությանը օժտում են արտակարգ լիազորություններով՝ շրջանցելով խորհրդարանը:

<sup>1</sup> Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Փարիզ, 1928, էջ 131-132:

## «ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1919թ. մարտի 16-ի Հայաստանի խորհրդի հայ ֆրակցիաների մասնավոր խորհրդակցության նախագահ է ընտրվում պրճ. Ա. Սահակյանը: Չեկուցում է Սինիստրների խորհրդի նախագահի պաշտոնակատար պրճ. Ա. Խատիսյանը:

Հայաստանի խորհրդի հայ ֆրակցիաների խորհրդակցությունը լսելով ՀՀ կառավարության մինիստր-նախագահի պաշտոնակատարի գեկուցումը մեր երկրի սահմաններին սպառնացող վտանգի և մեր զորքի անկազմակերպ կացության մասին, ի նկատի ունենալով նաև, որ Հայաստանի խորհրդի նիստերը կանոնավոր չեն գումարվում, մինչդեռ զորքը վերակազմելու և զորեղացնելու համար կառավարությունը դրամի անմիջական կարիք ունի, որը բաշխեց «քույլ տալ Կառավարությանը զորական նախահաշվի հետևյալ պարագուաֆների վրա նույն նախահաշվի մյուս պարագանքներից դրամ ծախսել: Դոքա են».

1. Զինվորների սնունդը լավացնել սննդադրամը շատացնելով:  
2. Զորային գործը կանոնավորելու համար անհրաժեշտ ձիեցը և զորիները զնել:

3. Զորային զանազան մասնագիտական աշխատանքների համար ոռմիկով մասնագետ ծառայողներ պահել:

Այս առաջարկը անցնում է միաձայն: Չեկուցման մյուս մասը քննելու համար որոշվում է մասնավոր խորհրդակցություն գումարել մարտի 18-ին:

ստորագրություններ»<sup>1</sup>:

## «ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1919թ. մարտի 18-ի Հայաստանի խորհրդի հայ ֆրակցիաների մասնավոր խորհրդակցության:

Սինիստրների խորհրդի նախագահի պաշտոնակատար պրճ. Ա. Խատիսյանը խոսք առնելով, հիմնավորում է նախորդ ժողովին արած գեկուցումը և առաջարկում է քույլ տալ կառավարությանը՝ ա) ընդհանրապես զորային նախահաշվի մի պարագ-

րաֆից մյուսը ծախսեր անել, բ) երկրի սահմանները ապահովելու համար արտակարգ և համապատասխան միջոցներ ձեռք առնել և գ) բանալ կառավարությանը 10 միլիոն վարկ այդ նպատակներով ծախսեր անելու:

Ապա պրճ. Խատիսյանն առաջարկում է այդպիսի բացառիկ հանգամանքներում Սինիստրների խորհրդին տալ ավելի լայն իրավունքներ՝ համապատասխան միջոցների դիմելու, վստահելով, որ նա այդ իրավունքից կօգտվի բացառիկ հանգամանքներում միայն:

Ժողովը քննության առնելով Կառավարության արած առաջարկությունը ընդունում է ՀՅԴ ֆրակցիայի հետևյալ որոշումը.

«Երկրի պաշտպանության և զորքի վերակազմավորման գործը իրականացնելու համար ա) լիազորել կառավարությանը արտակարգ միջոցներ ձեռք առնել, բ) քույլ տալ կառավարությանը օգտվել զինվորական նախահաշվի գումարներից մի պարագանքից մյուս անցնելով և ը) նոր վարկ բանալ՝ 10 միլիոն ռուբլի, կառավարության անունով՝ նոյն նպատակների համար»:

ՀՅԴ ֆրակցիայի այս առաջարկությանը միանում է ՀԺԿ ֆրակցիան: Առց. դեմոկրատական ֆրակցիան պատճառ բերելով, որ Հայաստանի խորհրդի վերջին նիստում դաշնակցական ֆրակցիան հայտարարել է, որ առաջին հերթին նա քննելու է խորհրդի շենքում եղած ինցիդենտը՝ վենորվարի 28-ին պատահած, տեղական ինքնավարության և նոր խորհրդի ընտրությունների օրինագիծը, և որովհետև նոյն ֆրակցիան այս մասնավոր նիստում այդ առաջակությունը հետ չի վերցնում, բանաձեռ ըննության կեսին նոցա հեռանում են ժողովից:

Առց. հեղափոխական ֆրակցիան համաձայնվում է տրված բանաձեռին այն պայմանով, որ կամ Ավագների խորհուրդը և կամ Խորհրդից ընտրված մի նոր համաժողով հսկե և վարե արտաքին քաղաքականությունը: Որովհետև Առց. հեղափոխականների այս պայմանը չի ընդունվում, նորա ևս հեռանում են ժողովից:

ստորագրություններ»<sup>1</sup>:

<sup>1</sup> ՀՀ ԱԱ, ֆ. 199, գ. 1, զ. 27, թ. 149:

<sup>1</sup> ՀՀ ԱԱ, ֆ. 199, գ. 1, զ. 27, թ. 150:

### § 3. Իրավական համակարգի գործողության հասարակական պայմանները

Իրավական համակարգի արդյունավետ գործողությունը, օրինականության և իրավակարգի ապահովումը տարերային գործնքաց չեն: Այն պահանջում է համակարգված, նպատակառդղված, իրավիճակին համապատասխանող ներգործություն հասարակական հարաբերությունների առյևլունների վարժագծի և գործունեության վրա: Ցանկացած պետություն և, հատկապես, նորաստեղծ պետությունը պետք է ունենա և ստեղծի անհրաժեշտ նյութական, քաղաքական, սոցիալական, իրավաբանական նախադրյալներ և երաշխիքներ ամբողջ պետականիրավական համակարգի արդյունավետ գործունեության համար:

Բացի նորմատիվ իրավակարգավորումներից՝ իրավական համակարգի համար կարևոր նշանակություն ունի հասարակության տնտեսական, սոցիալական, քաղաքական, գաղափարական պայմանների ամբողջությունը: Դրանք նպաստում են իրավական համակարգի նորմատիվային հիմքերի ամրապնդմանը, գործողության արդյունավետության բարձրացմանը:

Միայն դրանց համալիր առկայության, միմյանց միջև փոխգործակցության ու փոխլրացման պայմաններում էր հնարավոր օրինականության իրական ապահովում, հաջող պայքար իրավախստումների դեմ, իրավական համակարգի արդյունավետ գործողության ապահովում: Հանրապետության իրավական համակարգի կառուցման և գործողության մեջ կային լուրջ թերություններ և անհաջողություններ՝ պայմանավորված մի շարք պատճառներով: Դրանց մի մասը ուներ օբյեկտիվ բնույթ ու ընկած էր օրենսդիր, գործադիր և դատական մարմինների հասանելիության ոլորտից դուրս, իսկ մյուս մասն էլ պայմանավորված էր պետական մարմինների կողմից իրավական համակարգում իրականացվող քաղաքականության մեջ բույլ տրված վրիպումներով, սխալներով:

«Չորս տարի տևող պատերազմը, մեծ հեղափոխությունը, ուստական գործերի անկանոն նահանջը մեր սահմաններից, կայարության տարրալուծումը, պատերազմական ճակատի վրա կրած մեր պարտությունը, տերիտորիաների կորուստը, Անդրկովկասի բաժանումը անջատ պետությունների՝ այս խորին ցնցումները չեն կարող չքողնել իրենց հետևից ահռելի հետքեր: Տնտեսական կյանքի ու ֆինանսական դրության կատարյալ քայլայում, ապրանքների արդյունաբերության և փոխանակության դադարում, կենամթերքների ծայր աստիճան պակասություն, ամենաանհրաժեշտ առարկաների պակասություն կամ սուկալի թանկություն, ներմուծման բացարձակ ընդհատում, երկարուղային հաղորդակցության դադարում, երթևեկության ուրիշ միջոցների պակասություն, ապա հարյուր հազարներով հաշվվող անտուն և անսնունդ գաղթականություն, անապահով կացություն սահմանների վրա և որպես անխուսափելի հետևանք այս բոլորի - անիշխանություն: Ահա թե ինչպիսի ծանր պայմանների մեջ է կանչվել աշխատանքի իմ կառավարությունը»<sup>1</sup>:

Հանրապետության ֆինանսատնտեսական պայմաններն աննպաստ էին իրավական համակարգի համար: Պատերազմի և շրջափակման հետևանքով խաթարվել էին տնտեսական կապերը, հանրապետության ֆինանսական համակարգն ապրում էր խոր ճգնաժամ, տարածված էին համաճարակները, իսկ 1918-19 թթ. ընթացքում մարդիկ մահանում էին նաև սովոր:

Իրավական համակարգի արդյունավետ գործողության սոցիալական երաշխիքը ենթադրում է հասարակական կայունություն և համերաշխություն: Սակայն հանրապետությունը այդ երաշխիքը ևս չուներ դրական ուղղվածություն, որովհետև բնակչության մահմեդական հատվածը որդեգրել էր անհնազանդության, իշխանության հետ չհամագործակցելու քաղաքականութ-

<sup>1</sup> Տե՛ս «Հ. Քաջազնունու առաջին կառավարության դեկլարացիան» («Զանգ», թերթ, Եր., 1918, օգոստոսի 7, թիվ 43(59):

յուն: Սոցիալական ոլորտում լուրջ հիմնախնդիր էր արևմտահայ գաղթականությունը, որի խնդիրը գոյատևում էր: Էսական բացասական գործուն էր նաև երկրի տնտեսության ազրարային բնույթը և բնակչության կառուցվածքում գյուղացիական, և այն էլ անգրագետ, զանգվածի գերակշռությունը:

Իրավական համակարգի քաղաքական երաշխիքը Առաջին համբապետության դեպքում ենթադրում էր պետության իրավահեղինակության բարձրացման ուղղված քաղաքականության կենսագործում, որը բացառում էր ապակյունացումը հասարակության մեջ, պայքար պետական ապարատի բյուրոկրատության ու կաշառակերության դեմ, քաղաքական կառույցների կայունություն, դրանց ընդունակությունը հասնելու հասարակական համաձայնության, ինչպես նաև բնակչության քաղաքական-իրավական մշակույթի պատշաճ մակարդակ և այլ քաղաքական գործուները:

Քաղաքական պայմանների համբազումարը ևս նպաստավոր չէր իրավական համակարգի արդյունավետ գործողության համար: Քաղաքական և պետական համակարգը նոր հիմնադրված կառույց էր, որը չուներ կառավարման ավանդույթներ և կայունություն:

Ոչ դրական միտում ունեցող հասարակական պայմաններն իրենց ավերիչ ազդեցությունն էին բողնում ամբողջ հասարակության բարոյահոգեբանական մթնոլորտի, իրավագիտակցության վրա: Անցման շրջանի գործուները, պատերազմները և հեղափոխությունները, սովոր պայմանավորել էին իրավագիտակցության մակարդակի անկում հասարակության լայն զանգվածների մեջ: Թաքար բնակչության կարգախոսն էր դարձել «Թագավոր շկա՝ օրենք չկա» ասացվածքը: Իշխանությունները լուրջ բարդությունների էին հանդիպում տարագիր, անտեղ ու անտուն, վրեժինդիր արևմտահայության հետ հարաբերություններում, և կառավարությունը ստիպված հայտարարություններ էր անուն, որ ՀՀ օրենքները պարտադիր են և ուսահայերի, և անխտիր բոլոր տաճկահայերի համար: Իրավագիտակցության մակարդակի

ընդհանուր անկումը, իին ու նոր արժեքների շփորհն ու բարոյական հասկացությունների աղավաղումը մուտք էին գործում նաև պետական մարմիններ, դատարաններ, ինչն էլ հանդիսանում էր իրավունքի նորմերի պահանջների շիրացման գործոններից մեկը: Սանձարձակության և անշխանության մթնոլորտը պայմանավորված էր նաև պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի շիրացմամբ: Այս գործոնների ուժով կորուկ անկում էր ապրում իշխանությունների հեղինակությունը՝ առաջ բերելով նրանց սուր քննադատություն հասարակության կողմից, որ կառավարող կուսակցության պաշտոնարերի որակմամբ վերածվել էր կառավարության հանդեպ «քշնամական» դիրքորոշման:

Քաղաքական կուսակցություններն իրենց քաղաքական դիրքորոշումներում ունեին լուրջ տարածայնություններ: Մեծամասնականները ծախս հեղափոխական սոցիալիստներ էին, որոնք չէին համագործակցում իշխանությունների հետ: Խորհրդարանում ներկայացուցչություն ունեցող կուսակցություններից երկուսը սոցիալիստական էին, սակայն իրարից էականորեն տարբերվող հայեցակարգերով՝ դաշնակցականներն ազգային-սոցիալիստական էին, իսկ սոցիալ-դեմոկրատները ժառանգել էին ուսական ժողովրդավարական (ոչ հեղափոխական) սոցիալիզմի գաղափարախոսությունը: Վերջիններս իրենց արտաքին քաղաքական դիրքորոշմամբ հակված էին դեպի Ռուսաստան: Ազատական քաղաքական զաղափարախոսության կրողներ էին սահմանադրական ժողովրդավարները (կադետները) և Հայ ժողովրդավարական կուսակցությունը: Սրանց գաղափարախոսությունն ուներ ընդիանություններ, սական այրուհաններձ քաղաքական դիրքորոշումներն էականորեն տարբերվում էին<sup>1</sup>: Քաղաքական ոչ նպաստավոր պայմաններից էին նաև կառավարող կուսակցությունների համարականությունը, որը պայմանավոր էր անհանդատ պատասխանականության մեջ:

<sup>1</sup> Տե՛ս Գ. Մանուկյան, «Քաղաքական կուսակցությունները Հայաստանի Հանրապետության խորհրդարանում», Նորք, հասարակական-քաղաքական, գեղարվեստական հանդես, 1991 թ., մայիս, թիվ 5, էջ 101-102, Հակոբյան Ա.Ս., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.): Երևան, 1998, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 40 էջ:

յան անհանդուրժողական և մենատիրական ձգտումները, հանրապետության արտաքին քաղաքական կացության անորոշությունը, սահմանային և տարածքային վեճերը Վրաստանի և Ադրբեջանի հանրապետությունների հետ, պատերազմները և խոռվորյունները:

Այս ամենը հաստատում է այն օրինաչափությունը, որ շրջակա միջավայրը կարևոր նշանակություն ունի գրեթե «փդեալական» պետականական նորմատիվային համակարգի համար: Ուեցեացիայի ենթարկված ցանկացած իրավական մոդել կարող է լինել բավականին ժողովրդավարական, առաջադեմ, սակայն լիովին չկատարել իր առջև դրված խնդիրները: Պատճառը կոլիզիան է սովորական, կայուն հասարակական պայմանների համար մոդելավորված համակարգի և օբյեկտիվորեն առկա հասարակական արտակարգ, բացասական պայմանների միջև, որոնք, ի վերջո, չեզոքացնում են ներդրված իրավական մոդելի գործառութափորումը, եթե այն աղեկված կերպով չի տեղայնացվում ու հարմարեցվում շրջակա հասարակական միջավայրի պայմաններին:

Նման պայմաններում կարևորվում էր պետական մտածողության, ինաստուն քաղաքականության և կառավարման դերը՝ ուղղված օրինականության և իրավակարգի ապահովմանը, դրանց հաստատման համար անհրաժեշտ նախադրյալների երաշխավորմանը: Հատուկ իրավաբանական-կազմակերպական, նորմատիվ երաշխիքները՝ իրավապահպան և դատական համակարգերի կազմակերպական և գործառութային առանձնահատկությունները, որ ընդունակ էին ազդելու արտահրավական երաշխիքների և պայմանների փոփոխման վրա դրական տեսանկյունից և անհրաժեշտ էին օրինականության ապահովման, արդարադատության ճիշտ, արագ և արդյունավետ իրականացման համար: Հետևաբար պատասխանատվության մեծ մասը ընկնում էր քաղաքական դեկավարության և օրենսդիր մարմինների վրա, որովհետև նրանք ավելի լայն սոցիալական և պետական մտահրիզոն պետք է ունենային, օրենքներ ընդունելու գործընթացում

զգալիորեն ավելի մեծ քանակով գործոններ պետք է հաշվի առնեին, ուսումնասիրեին և համեմատեին խնդիրների նկատմամբ բազմատարբերակ լուծումները, այդ ընթացքում ապահովելով նաև օրինատեղծ աշխատանքի որակական հատկանիշները: Քաղաքական դեկավարության և օրենսդիր մարմինների գործելակերպը ավելի շատ նման էր «հին շալվարը կարկատելուն», որովհետև չէին որոշված պահի հրամայական գիրիսնդիրներն ու կողմնորոշիչները, չկար համակարգված մոտեցում, որոնք էլ պիտի պայմանավորեին իրավաստեղծ աշխատանքի ուազմավարական ու մարտավարական ուղղությունները, և որոնց համապատասխան պետք է կազմվեին կյանքի պահանջնունքներից ու կարիքներից բխող օրենսդրական ծրագրեր ու իրագործվեին:

## ԳԼՈՒԽ 7. ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԱՏԱՐՐԸ

### § 1. Առաջին հանրապետության հոչակումը և կառավարման համակարգը մինչև առաջին խորհրդարանի հիմնադրումը

Նորահոչակ պետության ինքնիշխան ներկայացուցի կարգավիճակն իրեն վերապահեց Թիֆլիսի Հայոց կենտրոնական ազգային խորհուրդը, որը որպես մարմին 1917 թ. հիմնվել էր Հայոց ազգային համախորհրդակցության կողմից: Ուստանական փետրվարյան հեղափոխությունից հետո երկրի ամբողջ տարածքում տիրում էր անկառավարելի իրավիճակ, քանի: Ա. Վրացյանը այդ կացությունը Հայոց ազգային համախորհրդակցությանը ներկայացրած իր՝ «Քաղաքական մոմենտի մասին» գեկուցման մեջ որպակում է հետևյալ կերպ. «Երկիրը կանգնած է ծանր ճգնաժամի հանդեպ: Պատճառները զորեղ են և մեկից ավելի: Ամենից առաջ խանգարված է պետության մեխանիզմը: Չկա իշխանություն, ճիշտ է, թեև անվանապես գոյություն ունին պետական օրգաններ, սակայն նրանց ազդեցությունը կյանքի վրա չեն անդրադառնում: Գյուղերը, ծայրագավառները քայլայվում են անիշխանությունից: Երկիրը առաջ է գնում տարերային ընթացքով՝ չզգալով պետական իշխանության ուժը»<sup>1</sup>: Ստեղծված իրավիճակում ազգային բազմազան հարցերը լուծելու և ազգային միասնական ներկայացուցություն ապահովելու համար անհրաժեշտ էր ստեղծել ազգային հավաքական պատասխանատու մարմին: «Հայ հասրակական ու քաղաքական կազմակերպությունների ու գործիչների կողմից սկզբում մտադրություն է եղել հրավիրել հայոց ազգային համագումար, որի համար 1917 թ. ապրիլի 13-14-ը Թիֆլիսի

Հայոց առաջնորդարանում իրավիրված հատուկ խորհրդակցությունում որոշվել էր, որ համագումարի պատգամավորներն ընտրված քառանդամ ընտրական համակարգով (ընդհանուր, հավասար, գաղտնի և ուղղակի) և համագումարը իրավիրվի Երևանում: ... Սակայն Թիֆլիսի միջկուսակցական մարմինը, մասնակցությամբ Ազգային բյուրոյի նախագահության և Պետրոգրադի ու Մոսկվայի Հայկական կոմիտեների նախագահներ Ն. Ալբանցի և Ստ. Մամիկոնյանի, հաշվի առնելով ընտրությունների կազմակերպման հետ կապված դժվարությունները, ուստահայերի սփռված լինելը անձայրածիր Ուստաստանում, շարունակվող պատերազմը և այլն, 1917-ի սեպտեմբերի 8-ի նիստում որոշեց, մինչև Ազգային համագումարը (որն այդպես էլ չիրավիրվեց), սեպտեմբերի 27-ին Թիֆլիսում իրավիրել համախորհրդակցություն: Միջկուսակցական մարմինը հարմար գտավ համախորհրդակցությունը գումարել ոչ թե քառանդամ ընտրողական հիմունքներով, այլ հայ ազգի մեջ գոյություն ունեցող բոլոր դասերի, դասակարգերի և հոսանքների ներկայացուցիչների իրավիրմամբ: Խորհրդակցությունն իր նիստերն սկսեց սեպտեմբերի 29-ին»<sup>2</sup>:

Ազգային համախորհրդակցությանը որպես պատգամավորներ մասնակցում էին ՀՀ դաշնակցության, Հնչակյան (սոցիալ-ռեմոնկրատական հնչակյան), Հայ ժողովրդական կուսակցության, Սոցիալ-դեմոնկրատական բանվորական հայ կազմակերպության («Սպեցիֆիկներ»), Ուստաստանի սոցիալ-դեմոնկրատական բանվորական կուսակցության (մենչևկյան) և սոցիալիստ-հեղափոխականների (Էսեռներ) ներկայացուցիչները: Հայ բոլշևիկները հրաժարվեցին թիֆլիսյան խորհրդակցությանը մասնակցելուց<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս նոյն տեղը, էջ 6-7:

<sup>2</sup> Կուսակցական պատգամավորներն ընտրվել էին «Ուստահայ ժողովրդի յորաքանչյուր 10000 հոգուց մեկ պատգամավոր» սկզբունքով՝ ըստ ընտրական շրջանների, ընդամենը 11 շրջան, 46 շրջանակ և 185 պատգամավոր: Ինչպես և սպասվում էր, նախընտրական մրցապայքարում ավելի շատ ձայներ ստացել էին ՀՀ դաշնակցության պատգամավորական թեկնածուները՝ 91 հոգի: Կային նաև պատգամավորներ անկուսակցականներից (4 մանդատ) և հոգենոր դասից: Պատգամավորների ընդհանուր թիվը 228 էր (տե՛ս նոյն տեղը, էջ 8, 105-108):

<sup>1</sup> Տե՛ս «Քանրեր Հայաստանի արխիվների», Եր., 1992, թիվ 1(92) - 2(93): Հայոց ազգային համախորհրդակցությունը. Թիֆլիս, 1917 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր, փաստաթղթեր ու նյութեր, էջ 24:

Համախորհրդակցության պատգամավորները հասկանում էին, որ պահը հայ ժողովրդի համար խիստ ճակատագրական է, որ պետք է համախմբել ժողովրդի բոլոր ուժերը՝ ամրապնդելու Կովկասյան ռազմաճակատի պաշտպանությունը: Հայոց ազգային համախորհրդակցությունը, քննարկելով ազգամիջյան և ինքնորոշման հարցերը, ընդունեց հետևյալ բանաձևը. «Ընդունելով ազգերի ինքնորոշման իրավունքը, հայ ժողովուրդը պիտի ձգտի իրականացնել իր այդ իրավունքը պետականության հիմունքներով և սկզբունքներով, անդրկովկասյան ժողովուրդների դեմոկրատիայի փոխադարձ համաձայնությամբ»<sup>1</sup>: Համախորհրդակցությունը գտնում էր, որ «ուսաման պետության կառուցվածքը պետք է լինի դաշնակցային (ֆելեքատիվ) հանրապետություն, որ Անդրկովկասը պետք է ենթարկվի նոր վարչական բաժանման, և մտցվի գենստվային կառավարում, որ երկրամասում պետք է կազմակերպվեն Ռուսաստանի հետ կապված երեք ազգային (հայկական, վրացական, թաթարական) ինքնավար կենտրոններ»<sup>2</sup>:

Բուն քննարկումներից հետո համախորհրդակցությունն իր աշխատանքի վերջին օրը՝ հոկտեմբերի 13-ի երեկոյան նիստում, կարողանում է ընդհանուր համաձայնության գալ ստեղծվող Ազգային ժողովի և Ազգային խորհրդի «կազմակերպության և կոմպետենցիայի մանրամասնությունների վերաբերյալ»<sup>3</sup>: Արդյունքում թիֆլիսյան համախորհրդակցությունն ընտրեց ազգային հարցերի կառավարման երկու մարմին՝ **Ազգային ժողով՝ բաղկացած քաղաքական կուսակցությունների, Ռուսաստանի հայաշատ խոշոր քաղաքների ազգաբնակչության, արևմտահայերի, ինչպես նաև զանազան հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից, և Ազգային խորհուրդ՝ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներից:** Ազգային ժողովը բաղկացած էր

35 անդամից, որից 25-ը ընտրվում էին 4 կուսակցություններից՝ համախորհրդում իրենց ներկայացրած անդամների համամասնության սկզբունքով, 4-ը՝ Պետրոգրադ, Մոսկվա, Նոր Նախիջևան (ներառյալ Ռուսուս) և Բաքու քաղաքների Հայկական կոմիտեներից, 1-ը Հայոց կառողիկոսն էր առաջարկում, 5-ը՝ Արևմտահայ խորհուրդը<sup>4</sup>: Ազգային ժողովի գործադիր մարմինը Ազգային խորհուրդն էր, որ անմիջապես գրադարձություն էր ընթացիկ աշխատանքով: Նրա կազմը բաղկացած էր 15 անդամներից, որից 12-ը՝ կուսակցությունների ներկայացուցիչներ, և 3-ը՝ անկուսակցականներ<sup>5</sup>:

Ազգային ժողովը համարվում էր ռուսահայոց գերազույն ներկայացուցական մարմինը, լուծելու էր «սկզբունքային ու առանձին գործնական կարևորություն ունեցող ժողովրդական խնդիրներ»: Ազգային խորհուրդը համարվում էր Հայոց ազգային համախորհրդակցության և Ազգային ժողովի «գործադիր մարմինը, որը ամբողջ ժողովունի անունից վարում էր ռուսահայ քաղաքականությունը թե՛ մեր ժողովունի և թե՛ ամբողջ պետության մեջ»: Ազգային խորհրդի իրավասությանը վերապահված էին ազգային «ընթացիկ խնդիրները, եթե դրանք առանձնապես սկզբունքային բնույթ և գործնական կարևորություն չունեն»: Հակառակ դեպքում՝ խնդիրները քննարկվելու էին Ազգային ժողովում, իսկ Ազգային խորհուրդն իրականացնելու էր նրա որոշումները: Խորհրդում հարցերի լուծման երկու կարգ էր նախատեսված. սկզբունքային խնդիրները լուծելու էին փոխհամաձայնությամբ (կոնսենտուս), իսկ ընթացիկները՝ պարզ քերարկությամբ<sup>6</sup>:

**Դեպքերի բերումով հետագայում հայկական քաղաքական**

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 92:

<sup>2</sup> Անկուսակցականներին հրավիրում էին ՀՅԴ-ն, ՀԺԿ-ն, իսկ սոցիալիստ-հեղափոխականները և մենշևիկները միավիմ՝ 1-ական անդամ (տե՛ս նույն տեղը, էջ 92):

<sup>3</sup> Տե՛ս «Ռուսում Ռուսահայ Ազգային ժողովը ու Ազգային խորհուրդ ստեղծելու և դրանց կանոնադրությունը ընդունելու մասին» («Քանդեր Հայաստանի արխիվների», Եր., 1992, թիվ 1(92)-2(93): Հայոց ազգային համախորհրդակցությունը. Թիֆլիս, 1917 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր, փաստաթղթեր, փաստաթղթեր ու նյութեր, էջ 98-99):

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 13, 77:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 13:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 92:

շահերի ներկայացության և ազգային հարցերի կառավարման իրավագործությունն իր ձեռքում կենտրոնացրեց Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը: Այս խորհուրդը ժամանակի քաղաքական և իրավական գրականության մեջ, մանուլում երթեմն անվանել են «զերազույն և կամ կենտրոնական խորհուրդ»՝ նկատի ունենալով նրա ավելի բարձր կարգավիճակը մնացած հայկական ազգային խորհուրդների նկատմամբ: Հենց Թիֆլիսի Հայոց ազգային կենտրոնական խորհուրդն էր, որ 1918 թ. մայիսի 30-ին իրավարակեց Հայաստանի անկախության «Հայտարարությունը»<sup>1</sup>, որում ամրագրված էր. «Անդրկովկասի քաղաքական ամրոգության լուծումով և Վրաստանի ու Ալբրեցանի անկախության հոչակումով ստեղծված նոր դրուրյան հանդեպ, Հայոց ազգային խորհուրդը իրեն հայտարարում է հայկական զավառների գերազույն և միակ հշխանություն: Որոշ ծանրակշիռ պատճառներով քողմերով մոտիկ օրերը կազմել Հայոց ազգային կառավարություն, Ազգային խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կառավարական քողոր գունդցիաները՝ հայկական զավառների քաղաքական և վարչական դեկր վարելու համար:

Հայոց ազգ. խորհուրդ, 1918 թ. մայիս 30, Թիֆլիս»<sup>2</sup>:

Միայն հայկական հաշտատար պատվիրակության Բարումիից վերադառնալուց հետո (Բարումիի պայմանագիրը ստորագրվել է 1918 թ. հունիսի 4-ին) «Հայոց Ազգային Խորհուրդը ձեռնարկեց Հայաստանի կառավարության կազմակերպման՝ հրավիրելով վարչապետության Հ. Քաջազնունիին ... Քաջազնունիին հաջողվեց կյանքի կոչել հետևյալ կազմով կառավարություն. վարչապետ՝ ինքը, Քաջազնունին, արտաքին գործերի նախարար՝ Ա. Խատիսյան, ներքին գործերի՝ Արամ, ելամտական՝ Խ. Կարճիկյան, զինվորական՝ Հ. Հախվերդյան: Վերջինը միայն ան-

կուսակցական էր, մյուսները անդամ էին Հ.Հ. Դաշնակցության»<sup>1</sup>:

Մինչև 1918 թ. հուլիսի 19-ը Հայոց Ազգային խորհուրդը և կառավարությունը գործում էին Թիֆլիսում: Բուն Հայաստանում ամբողջ իշխանությունն իր ձեռքն էր վերցրել Երևանի նահանգային Հայոց ազգային խորհուրդը՝ Արամի գլխավորությամբ<sup>2</sup>: Չսպասելով Թիֆլիսի ազգային մարմինների կարգադրություններին և դժգոհելով այն հանգամանքից, որ կենտրոնական խորհրդի կազմը և նոր ձևավորված կառավարությունը դեռևս գտնվում են Թիֆլիսում, Արամը Երևանի Ազգային խորհրդի հունիսի 15-ի նիստում անցկացնում է մի որոշում: Այդ որոշմամբ ստեղծվում է «վարչություն, որը փաստորեն պետք է ունենար կառավարության ֆունկցիա հայկական հանրապետությունը ժամանակավորապես կառավարելու, մինչև Թիֆլիսից գա Հայաստանի խևական կառավարությունը և կենտրոնական Ազգային խորհուրդը»<sup>3</sup>: Այդ վարչության ստեղծմամբ վերացվեցին Երևանի նահանգային կոմիսարիատը, նահանգային պարենավորման բաժանմունքը, նահանգային գործադիր կոմիտեն, լուծարվեցին Ալեքսանդրապոլի հաշտության պայմանագրով Թուրքիային անցած տարածքների պետական մարմիններն ու հիմնարկները, իսկ դրանց պաշտոնական ներքին ծառայությունները արձակվեցին<sup>4</sup>: Բացի կառավարման

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, գ. 1, գ. 10, թ. 2, ինչպես նաև Վրացյան Ս., նշված աշխ., էջ 185-186:

<sup>2</sup> Հաստ ականատեսների հուշերի՝ 1918 թ. մարտի 1-ից Երևանի բնակչության հանրահավաքում Արամը հոչակվեց դիլուստոր: Մարմնավորելով ամբողջ իշխանությունը՝ Արամը «... իր զարմանալի նրբանության ու տակտի շնորհիվ կարողացավ շառկապել շրջանի բոլոր գործոն տարրերին, աշխատանքի ծել ամենքին: Ձեռք-ձեռքի տված՝ Դրոյի, զոր Սիրիկեանի ու Փիրումեանի, նահանգական կոմիսար Ա. Թորոսյանի, քաղաքական կուսակցությունների և կառավարական ու հասարակական մարմինների հետ՝ նա Երևան բերեց արտակարգ եռանդ և, ամենատագնապափի վայրկեանին ձեռնահաստիքյամբ վարեց Արարատյան դաշտի հայ ժողովրդին և նրա ճակատագիրը» (տե՛ս Վրացյան Ս., նշված աշխ., էջ 115):

<sup>3</sup> Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 441, գ. 1, գ. 11, թ. 12:

<sup>4</sup> Երևանում Արամի գլխավորած այդ վարչությունը «... փաստորեն Արարատյան դաշտի կառավարությունն էր, որի նախագահն ու զինվորական գործերի վարիչն Արամն էր, ներքին գործերի վարիչը՝ Ա. Թորոսյանը, պարենավորմանը՝ Ա. Կ. Մուսինյանը, Ելամտականը՝ Հ. Սելիքյանը, հնքնապաշտպանությանը՝ Արշ. Աստվածատրյանը» (տե՛ս Վրացյան Ս., նշված աշխ., էջ 115):

<sup>1</sup> Ըստ Ս. Վրացյանի «Հայտարարություն» նախագիծ-քանաձևի հեղինակը Նիկոլ Աղբալյանն էր:

<sup>2</sup> Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Փարիզ, 1928, էջ 131-132:

համակարգ կազմակերպելուց, Երևանի Ազգային խորհուրդը որոշումներ է ընդունել նաև հանրային կառավարման մի շարք այլ հրատապ հարցերի վերաբերյալ, հատկապես ֆինանսական համակարգը կանոնակարգելու և գաղթականությանը տեղափորելու, ապահովելու առումով։ Մասնավորապես, ազգաբնակչությանը հայտարարվեց, որ պետական ամեն տեսակ հարկերը և դրանց պարտքերը պետք է անպայման վճարվեն։ Նախատեսվում էր մշակել նախազիծ նոր հարկեր սահմանելու վերաբերյալ և ներմուծել ակցիզային հարկ ոգելից խմիչքների համար։ 1918 թ. նարուի 21-ին Հայկական Ազգային խորհրդի բոլոր մասնաճյուղերին ուղարկվեց թիվ 5 հրամանը, որով սահմանվում էր ազգային տուրք, որը կարող էր բռնագանձվել նաև հարկադրաբար<sup>1</sup>։ Ազգային խորհրդի որոշմամբ՝ հացամքերքի շրջանառությունը հայտարարվում էր պետական մենաշնորհ։ Հատուկ հայտարարությամբ հաստատվում էր, որ բոլոր դրամանիշները (ցարական, Կերենսկու, անդրկովկայան բռներ և այլն) համարվում էին պաշտոնական վճարամիջոց։ Երևանի Ազգային խորհուրդը ֆինանսական հարցերի կառավարչին միաժամանակ հանձնարարեց «լիտոգրաֆիայով» տպել մանր դրամանիշներ։ Գաղթականության պարենավորման կարիքները բարելավելու համար ստեղծվում էին հաստուկ «արժեթղթեր»<sup>2</sup>։ «Երևանի կառավարությունն» ուներ 10-12 հազար վարժ ու կարգապահությամբ աշքի ընկնող զորք, ինչը նրան հնարավորություն տվեց բացել ռազմավարական նշանակություն ունեցող գլխավոր ճանապարհները, ցրել Երևանի շրջակայքի մահմեդական խոռոչությունների բույները և որոշ կարգ ու կանոն հաստատել իրեն ենթակա տարածքներում։ Միաժամանակ այն միջոցներ ձեռնարկեց՝ պայքարելու դասալրության և հանցավորության դեմ<sup>3</sup>։

1918 թ. հունիսի 19-ին Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի կազմը ու կառավարության անդամները հասան Երևան։ Այսպիսվ, անկախության ճանաշումից մինչ 1918 թ. օգոստոսի 1-ը Հա-

յաստանի առաջին հանրապետության պետական բարձրագույն իշխանության ու ինքնիշխանության մարմնավորողը Թիֆլիսի Հայոց ազգային կենտրոնական խորհուրդն էր։ Որպես պետական մարմին այն հայոց ազգային տեսանկյունից լեզվիմ էր, որովհետև ի վերջ ձևավորվել էր «համահայկական» ընտրությունների արդյունքում։ Թիֆլիսի կենտրոնական ազգային խորհուրդը նորահոչակ պետության ինքնիշխան ներկայացուցիչ ճանաչելը երկի թե միակ ճիշտ, տրամաբանական, հանրային իշխանության կառուցման և դրա լեզվիմության ապահովման քաղաքական քայլն էր։ Սակայն այդ մարմնի ու նրա կառավարության թիֆլիսյան ժամանակի գործունեության մանրամասնությունները հնարավոր չեն պարզել, որովհետև չեն պահպանվել արխիվային փաստաթղթերը։ այդ մասին պատկերացում ենք կազմում մամուլի նյութերից և Ս. Վրացյանի բուուցիկ հուշերից։ Ըստ դրանց այն ձևավորեց հանրապետության առաջին կառավարությունը, միջոցներ ձեռնարկեց կառավարությունը Երևան տեղափոխելու համար։ Նոր ձևավորված կառավարությունը կարգավորեց մի շարք խնդիրներ, մասնավորպես՝ Վրաստանի կառավարության հետ կնքեց համաձայնություն անդրկովկայան նոր բռներ բաց թողնելու և դրանց մի մասը Հայաստանին հատկացնելու մասին, կարգավորեց հայկական կորպուսի գույքը Երևան տեղափոխելու հարցը, ինչպես նաև անդրկովկայան ընդհանուր գույքի բաժանման հարցը, դիվանագիտական կապեր հաստատեց Ավստրիայի, Գերմանիայի, Թուրքիայի ներկայացուցիչների հետ, նշանակեց Պոլիսի հաշտության խորհրդաժողովի հայկական պատվիրակության անդամներին և իրականացրեց այլ ձեռնարկներ<sup>1</sup>։

Թիֆլիսի կենտրոնական ազգային խորհուրդը կատարեց պատմական մեծ նշանակություն ունեցող դեր և ստանձնեց պատասխանատու պարտականություն։ Հռչակեց Հայաստանի անկախությունը, իսկ այնուհետև իրեն «հայտարարեց Հայաստանի պետական գերազույն իշխանության տեր և կատարեց րոպեի

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ԱՍ, ֆ. 289, գ. 1, գ. 8, թ. 1:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ ԱՍ, ֆ. 441, գ. 1, գ. 11, թ. 12:

<sup>3</sup> Տե՛ս Վրացյան Ս., նշված աշխ., էջ 115:

պահանջած բոլոր պաշտոնական քաղաքական գործառնությունները»<sup>1</sup>:

Այսպիսով, Առաջին հանրապետության հոչակման պահից մինչև 1918 թ. օգոստոսի 1-ը պետական իշխանության գերազույն մարմնի գործառույթները՝ ներառյալ օրենսդիր իրավասությունը, պատկանում էր Թիֆլիսի Հայոց ազգային կենտրոնական խորհրդին, որը իր կազմավորման կարգով պայմանավորված, համարվում էր միայն հայերի ազգային ներկայացուցչական մարմինը:

## § 2. Հայոց ազգային-քաղաքական ներկայացուցչության համակարգից անցումը բնակչության և քաղաքական կուսակցությունների ներկայացուցչական խորհրդարանական կառավարման համակարգին

Եթե Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի անդամները և այնտեղ ձևավորված Հայաստանի առաջին կառավարությունը տեղափոխվեցին Երևան, Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը և Երևանի Ազգային խորհուրդը մի քանի համատեղ ժողովներից հետո որոշեցին կազմել Հայաստանի խորհուրդը՝ որպես երկրի օրենսդիր և գերազույն մարմին: Իհարկե, Երևան տեղափոխվելուց հետո հնարավոր էր Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի՝ որպես պետական իշխանության գերազույն մարմնավորողի գործունեության շարունակությունը: Սակայն ժամանակի քաղաքական կուսակցությունները, ինքը՝ Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը իրաժարվեցին ապագա խորհրդարանի «հայ ազգային ներկայացուցչության» տարրերակից: Օրենսդիր մարմնի կազմավորման այդ եղանակից իրաժարվելու իրական դրդապատճառներն ու հանգամանքները մեզ հայտնի չեն: Հաստատավես հայտնի է միայն, որ Երևանում Թիֆլիսի հայոց ազգային և Երևանի ազգային խորհուրդները մի քանի համատեղ ժողովներից հետո որոշեցին կազմել «Հայաստանի խորհուրդը» կոչվող խորհրդարանը: Ա.

Վրացյանն այս հարցին անդրադառնում է քոռուցիկ, սակայն նշում է, որ Հայ ժողովրդական կուսակցությունը դեմ է եղել այդ քայլին<sup>1</sup>:

Հայաստանի խորհուրդը կազմավորվեց՝ համամասնորեն եռապատկելով Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի տասներկու կուսակցական անդամների թիվը, գումարած երկու չեզոք՝ անկուսակցական հայ, վեց մուսուլման, մեկական ոուս և եզրի պատգամավորներ (ընդամենը՝ քառասունվեց)<sup>2</sup>:

Թե որոնք էին հայոց ազգային ներկայացուցչական խորհրդարանից Հայաստանի բնակչության ներկայացուցչական խորհրդարանին անցնելու պաշտոնական դրդապատճառները և հանգամանքները, մեզ հայտնի չեն: Սակայն ակնհայտ է մի բան. տեղի ունեցավ անցում հայերի ազգային ներկայացուցչական համակարգից Հայաստանի բնակչության պետական ներկայացուցչական համակարգի, որի իրական դրդապատճառները կարելի է միայն եզրակացնել:

Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի գործունեությունը շարունակելը սպառնում էր նրան վերածել ոչ լեզիտիմ պետական մարմնի՝ պայմանավորված կենտրոնական խորհրդի կազմի թերությամբ, այն է՝ դրանում ներկայացված էին միայն արևելահայերը: Այդ խորհուրդը, որն իր արմատներով գալիս էր Հայոց ազգային համախորհրդակցությունից (1917 թ.), ձևավորվել էր այլ պատմական պայմաններում ու այլ նպատակներով: Այն ոուսահայության ազգային ներկայացուցչական մարմինն էր: Ներկայացուցչական նման սահմանափակվածությունը այդ մարմնի գլխավոր թերությունն էր, որը սպառնում էր ոչ լեզիտիմ դարձնել նրան: Պատմական իրադարձությունները և դեպքերը հանգեցրել էին նրան, որ Հայաստանը հոչակվել էր անկախ պետություն և ստացել էր միջազգային ճանաչում: Պատմական պայմանների էական շրջադարձը պահանջում էր փոխել նաև պետական իշխանությունը մարմնավորողի բնույթը: Պետականության ու նրա

<sup>1</sup> Տե՛ս Վրացյան Ս., նշված աշխ., էջ 190:

<sup>2</sup> Տե՛ս «Զանգ», թերթ, 1918, 4 օգոստոսի, թիվ 42(58):

<sup>1</sup> Տե՛ս «Զանգ», թերթ, 1918, 4 օգոստոսի, թիվ 42(58):

կառույցների և ազգի ու նրա ազգային ներկայացուցչական մարմինների տարբերությունը տեսական մակարդակով ըմբռնում էր նաև ժամանակի քաղաքական միտքը: Այս կապակցությամբ «Զանգ» թերթն իր 1918 թ. օգոստոսյան համարներից մեկում արձանագրում է: «Պետություն ասած երկրային (տեղիտորիային) համախմբություն է, մի երկրի բովանդակ բնակչությունն է, որը առանց ազգութեան, կրոնի և դասակարգի խորության, կազմում է նոյն հանրապետությունը. համայն ժողովուրդը տէր ու կարգադրիչ է հանդիսանում ոչ թե այս կամ այն ազգային, կրոնական կամ դասակարգային հաստածի որոշ գործերի, այլ ամրող բնակչության բոլոր քաղաքական հարցերի և պարագաների վերաբերմամբ: Միաժամանակ պետությունը համախմբությունն է, որն իրաւատէր է համարում նաև նոյն ինքն երկրի (տեղիտորիայի) քաղաքական հանգամանքներն ու բախտը տնօրինելու:

Այս կարևոր հատկանիշներից ստվորաբար գործ է լինում ըստիճանական ազգային համախմբությունը, որպես այդպիսին: ...»<sup>1</sup>:

Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը ներկայացնում էր ոչ միայն բուն Հայաստանի, այլև ամբողջ Կովկասի և նոյնիսկ Ռուսաստանի հայությանը: Բայց Հայաստանի բնակչությունն ազգային առումով խայտարեւ էր, բազմազգ: Հայաստանի բնակչության կառուցվածքից Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը ներկայացնում էր միայն հայ ազգաբնակչությանը: Այս պարագան, այսինքն՝ հայի և հայաստանու տարբերակումը և պետական կառույցներում ողջ ազգաբնակչության ներկայացուցությունն ապահովելու անհրաժեշտությունը, ընդունում էին նաև ժամանակի քաղաքական գործիչները: Այդ է վկայում ժամանակի մամուլում տեղ գտած հետևյալ միտքը. «Այս հանգամանքը մեր առաջ նոր պարտականություններ և իրավունքներ է դնում մեր հայրենիքի, նաև բոլոր ոչ հայ ազգերի ժողովուրդների և անձերի, ինչպես նաև նոյն ինքն երկրի հանդեպ: ... Հայաստանը միայն հայի գործն ու խնդիրը չէ, այլ նաև յուրաքանչյուր հայաստանու:

<sup>1</sup> Տե՛ս «Զանգ», թերթ, 1918, 4 օգոստոսի, թիվ 42(58):

Պիտի տարրերենք Հայկականի (հայոթեան) և Հայաստանի հասկացություններն ու իրողությունները: Հայաստանի սահմաններում և Հայաստանի վերաբերմամբ մեր նշանարանը պիտի լինի գործել հանուն երկրի և իր ամբողջ բնակչության շահերի առանց ազգի և կրոնի խորության»<sup>2</sup>:

Այսպիսով, Հայաստանի առաջին հանրապետությունում օրենսդիր գործառույթը 1918 թ. օգոստոսի 1-ից մինչև 1919 թ. ապրիլի 27-ը իրականացնում էր Հայաստանի խորհուրդը: Վերջինս՝ որպես խորհրդարան (պառլամենտ), իրականացնում էր օրենսդիր գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում մինչև 1919 թ. ապրիլի 27-ը, երբ այս մարմինն իր իսկ ընդունած օրենքով մեկ ամսով դադարեցրեց «Հայաստանի խորհրդի պարապմունքները» և իր «բոլոր իրավունքները» հանձնեց կառավարությանը<sup>3</sup>: Մինչ այդ Հայաստանի խորհուրդն ընդունել էր «Հայաստանի պառլամենտի ընտրությունների մասին» օրենքը, որովհետև հանրապետության քաղաքական դեկավարությունը մտադրված էր անցկացնել խորհրդարանական ընտրություններ: Հայաստանի խորհուրդն իր վերջին նիստը գումարել է 1919 թ. հունիսի 5-ին, երբ ընդունվեց օրենքը, համաձայն որի՝ դադարեցվեց այդ մարմնի գործունեությունը մինչև Հայաստանի պառլամենտի նիստ գումարելու օրը, իսկ Հայաստանի խորհրդի իրավասությունը նորից վերապահվեց կառավարությանը<sup>3</sup>:

1919 թ. օգոստոսի 1-ից մինչև 1920 թ. մայիսի 5-ը օրենսդրական գործառույթն իրականացրել է ժողովրդի կողմից համամասնական կարգով ուղղակի ընտրված Հայաստանի պառլամենտը: Վերջինս ևս իր իրավունքները, այդ թվում և օրենքներ ընդունելու իրավունքը, 1920 թ. մայիսի 5-ից սկսած մինչև հանրապետության անկումը, հատուկ օրենքներով հանձնում էր կառավարությանը՝ «Հայաստանի խորհրդարանի դադարի միջոցին խորհրդարանի բո-

<sup>1</sup> Տե՛ս «Զանգ», թերթ, 1918, 4 օգոստոսի, թիվ 42(58):

<sup>2</sup> Տե՛ս Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները, Եր., 1919, հոդվ. 115, էջ 61:

<sup>3</sup> Տե՛ս Հայաստանի խորհրդարանի դադարի միջոցին խորհրդարանի բո-

լր իրավունքները հանձնել կառավարությանը» կամ «դադարի միջոցին ընթացիկ օրինագծերը հաստատելու կամ մերժելու իր իրավունքը Հայաստանի խորհրդարանը փոխանցում է կառավարությանը» ձևակերպումներով:

Այն ժամանակահատվածում, երբ օրենսդիր գործառույթն իրականացնում էր բուն օրենսդիր մարմինը՝ խորհրդարանը, նախարարությունների մասնակցությունը օրինաստեղծ գործունեությանը հանգում էր նրան, որ նրանք մշակում էին օրինագծեր, իսկ այնուհետև նախարարը դրանք դնում էր Նախարարների խորհրդի նիստերի քննարկմանը: Կառավարությունում հավանություն ստանալու դեպքում օրինագծերն ուղարկվում էին Հայաստանի խորհրդի, իսկ 1919 թ. օգոստոսի 1-ից՝ Հայաստանի պառլամենտի դիվաններին, իսկ այնտեղից էլ՝ օրենսդիր մարմնի համապատասխան հանձնաժողովներ: Ըստ սահմանված կարգի՝ բոլոր օրինագծերը, որ մշակվել էին օրենսդիր մարմիններից դուրս, պետք է անցնեին Նախարարների խորհրդով, և «ոչ մի նախարար առանձին չի կարող օրինագիծ բերել խորհրդարան առանց Նախարարների խորհրդի, որը հավաքարար պատասխանատու է»<sup>1</sup>: Քանի որ որոշ նախարարություններ երեմն շրջանցում էին կառավարությունը, ուստի 1919 թ. նոյեմբերի 28-ի օրենքով պահանջվում էր, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունից օրենսդիր մարմին մտնող յուրաքանչյուր օրինագիծ պետք է ունենար «վարչապետի և համապատասխան նախարարի ստորագրությունները, իսկ ֆինանսական բնույթ ունեցող օրինագծերը նաև ֆինանսների նախարարի ստորագրությունը»<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ԱՍ, ֆ. 199, գ. 1, զ. 58, թ. 116:

<sup>2</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության, Օրենքների հախարածու, հրատ. Պարլամենտի, Եր., 1919, թիվ 6, հոդ. 70, էջ 48:

### § 3. Գործադիր իշխանության համակարգը և կառավարությանը օրենսդրական լիազորություններով օժտելու ինստիտուտը

Առաջին հանրապետության կառավարության կազմակերպման, կառավարության ու խորհրդարանի հարաբերակցության հիմնահարցերը ենթարկված էին ծավալով չնշին և մասնակի իրավական կարգավորման, ինչն առաջացնում էր բավականին շատ իրավական բացեր և հանգեցնում պատեհապաշտ անհատական իրավական կարգավորման: Հանրապետության պետական շինարարության վորձի ուսումնասիրությունից կարող ենք դուրս բերել կառավարության կազմավորման կարգի միայն ընդիհանուր գծերը: Կառավարության ձևավորման եղանակը պայմանավորված էր հանրապետության կառավարման ձևով, այն է՝ խորհրդարանական հանրապետություն: Կառավարության ձևավորման ուղիներից հանրապետությունը որդեգրել էր խորհրդարանականը. այդ գործընթացում վճռական դեր էր խաղում խորհրդարանը: Կառավարության ձևավորումը տեղի էր ունենում հետևյալ կերպ. խորհրդարանը խորհրդարանական խմբակցությունների առաջարկած թեկնածուին ընտրում էր վարչապետ, որն այնուհետև կազմում էր կառավարության անվանական կազմը և ներկայացնում էր խորհրդարանին ի գիտություն: Դրանից հետո վարչապետն իր կառավարության անունից խորհրդարանի հավանությանն էր ներկայացնում նաև ապագա կառավարության գործունեության ծրագրը՝ վստահության քվե ստանալու համար: Ծրագրի հաստատումը խորհրդարանի կողմից նշանակում էր կառավարության վերջնական հաստատում՝ ինվեստիտուրա: Բացի այդ, կառավարության գլուխը՝ նորընտիր վարչապետը, կառավարության անվանական կազմը հաստատում էր իր հրամանով: Վարչապետն օրենսդրի գծած կառուցվածքի շրջանակներում ինքն էր որոշում անհատական կազմը, հանում և նշանակում նախարարներին, այդ մասին տեղյակ պահելով խորհրդարանին:

Բայց նոր նախարարությունների հիմնադրման իրավունքը պատկանում էր բացառապես օրենսդրին: Վարչապետը չէր կարող ինքը բաժանել նախարարությունները, ստեղծել նոր նախարարություն: Սակայն նա կարող էր երկու նախարարությունների կառավարումը հանձնարարել մեկ անձի կամ մեկը վերապահել իրեն: Արդեն 1920 թ. կառավարության կազմավորման այդ կարգը հստակ դրվածք էր, որից և՛ օրենսդիրը, և՛ գործադիրը չէին շեղվում: Այսպիսով, Առաջին հանրապետության կառավարությունն իր մոդելով կարող ենք համարել բացարձակ խորհրդարանական կառավարություն, որը ձևավորվում էր միայն խորհրդարանի կողմից և լրիվ պատասխանատու էր միայն խորհրդարանի առջև:

Այդ կառավարության կազմում ներառվում էին վարչապետը կամ նախարար-նախագահը, ինչպես նաև որոշակի նախարարություններ դեկավարող նախարարները: Կառավարությունն ընդունում էր ընդհանուր և անհատական-կոնկրետ բնույթի որոշումներ, իսկ հանրապետության կյանքի զանազան ոլորտների գործադիրության դեմքը կառավարումն իրականացնում էին կենտրոնական ճյուղային կառավարման մարմինները՝ նախարարությունները և գերատեսչությունները:

Առաջին հանրապետության կառավարության՝ որպես կողեգիալ մարմնի կազմում մտնում էին կառավարության գլուխը՝ նախարար-նախագահը կամ վարչապետը, և պորտֆելով նախարարները: Վարչապետը միաժամանակ կարող էր ունենալ պորտֆել: Փոխվարչապետի իմստիտուտը սահմանված չէր: Նախարարների խորհրդի նիստերին վճռական ձայն ունեին միայն կառավարության այս անդամները: Խորհրդակցական ձայնի իրավունքը կառավարության նիստերին մասնակցում էին նաև գյուղատնտեսության և պետական կալվածքների վարչության պետը, ինչպես նաև պետական վերահսկչը:

Հյայստանի առաջին հանրապետության կառավարության կառուցվածքը և բվական կազմը պետականության կայացմանը զուգընթաց դրսերում էր կոչտ օրենսդրական կարգավորման մի-

տում: Շիշտ է, սկզբնական շրջանում կառավարության կառուցվածքը և բվական կազմը չէին սահմանվում այդ հարաբերությունները կարգավորող հատուկ օրենք ընդունելու միջոցով, բայց, այնուամենայնիվ, հարցի որոշողն, ինվեստիտուրայի միջոցով, օրենսդիր մարմինն էր, այլ ոչ թե կառավարությունը: Գործադիր իշխանության համակարգի զարգացման կայուն միտումներից մեկն էլ նախարարությունների և գերատեսչությունների աճն էր, որը կապված էր մի կողմից՝ նորահոչակ պետության պետական ապարատի գործեթ ոչնչից ստեղծելու հետ, մյուս կողմից՝ պետական կառավարման խնդիրների ու գործառույթների բարդացման հետ:

Կառավարության անդամների անձնական-անհատական հավաքագրումը կատարում էր խորհրդարանի կողմից ընտրված վարչապետը, որն իր կարգավիճակում գուգատեղում էր գործադիր իշխանության գլխի բոլոր լիազորությունները և պետության գլխի որոշ լիազորություններ<sup>1</sup>: Վարչապետի՝ որպես կառավարության դեկավարի կարգավիճակը ենթադրում էր մի շաք գործառույթներ, այն է՝ կառավարության գործունեության դեկավարում, նախարարների և գործադիր այլ մարմինների աշխատանքի համակարգում, կառավարության գործունեության կազմակերպման հարցերով կարգադրությունների և շրջաբերականների ընդունում:

Այսպիսով, կառավարության կառուցվածքում ներառվող նախարարությունների շրջանակը որոշում էր օրենսդիր մարմինը: Նոր նշանակված վարչապետն օրենսդրի գծած կառուցվածքի շրջանակներում ինքն էր որոշում անհատական կազմը, հանում և նշանակում նախարարներին՝ այդ մասին տեղյակ պահելով:

<sup>1</sup> Գործնականում կառավարության անդամների հավաքագրումը կատարվում էր կառավարող կուսակցության կողմից: Երկու խորհրդարաններում էլ դա պայմանավորված էր ՀՅԴ-ն ունեցած ձայների քանակով՝ 46-ից 18-ը Հյայստանի խորհրդում և 80-ից 73-ը Հյայստանի պատլանենտում: Կովկասին համաձայնագրերի առկայության դեպքում նախարարների ընտրության կարգը սահմանվում էր այդ համաձայնագրով:

խորհրդարանին: Նոր նախարարությունների հիմնադրման և վերացնան իրավունքը պատկանում էր բացառապես օրենսդիրին:

Նախարարությունը համարվում էր գործադիր իշխանության կենտրոնական մարմին, որի կազմակերպման ու գործունեության հիմնունքները կառուցված էին իշխանությունների բաժանման և օրինականության հիմնարար սկզբունքների վրա: Նախարարությունների որպես ճյուղային պետական կառավարման մարմինների կազմակերպման կարգի ու իրականացվող գործառույթների առանձնահատկությունների վրա ազդել են հասարակական կյանքի համապատասխան ոլորտների գործադիր կառավարման իրավական և կազմակերպական-կառային նախարրյալները մինչհանրապետական շրջանում, Առաջին հանրապետության պետական կառավարման ձևը, տվյալ նախարարության կողմից իրականացվող գործառույթների բնույթը:

Առաջին հանրապետությունում նախարարությունների կազմակերպման և գործունեության իրավական հիմքերն էին՝ հանրապետության օրենսդիր մարմինների կողմից հաստատված առանձին նախարարությունների «նախահաշիվներն ու հաստիքացուցակները», կոնկրետ նախարարության կամ դրա առանձին օդակների ստեղծման և կարգավիճակի մասին օրենքները, Ռուսական կայսրության նախարարությունների՝ որպես պետական մարմինների կարգավիճակը կանոնակարգող օրենսդրական ակտերը, որոնք գործել են Առաջին հանրապետությունում:

Նախարարության կազմակերպման հիմքում ընկած էր միանձնյա կառավարման սկզբունքը, և դրա գլուխ կանգնած էր նախարարը: Նախարարի իրավունքներն ու պարտականությունները և նրա իշխանության սահմաններն իրեն հանձնված ոլորտի կառավարման գծով սահմանված էին օրենսդրությամբ: Ամեն մի նախարարություն՝ իր կենտրոնական ապարատով և տեղական կառուցվածքային օդակներով, կազմում էր միասնական գերատեսչություն: Այդ գերատեսչությունն օժտված էր իրեն հասուն կառավարչական կարգերով, բյուջեով, պաշտոնյաների կազմով:

Օրենքով նախարարության կառավարմանը հանձնված գերատեսչության մեջ նախարարին էր պատկանում ամբողջ իշխանությունը, սակայն այդ իշխանությունն իր բնույթով միայն «գործադիր-կարգադրիչ ու ենթաօրենսդրական իշխանություն» էր<sup>1</sup>: Նախարարները նշանակվում էին ներկայացնեցական-օրենսդիր մարմնի կողմից ընտրված նախարար-նախագահի կամ վարչապետի կողմից: Վարչապետը, կատարելով նախարարի նշանակում կամ պաշտոնից ազատում, այդ մասին հայտնում էր օրենսդիր մարմնին՝ ի գիտություն: Այդպիսով նախարարը միանձնյա, նշանակովի պետական պաշտոնյա էր, որի պաշտոնը քաղաքական հայեցողական էր: Նախարարը կառավարության անդամ էր՝ վճռական ձայնի իրավունքով:

Գործող օրենսդրությունը յուրաքանչյուր նախարարի պարտավորեցնում էր անցնելով պաշտոնավարության ունենալ իրեն կառավարմանը վստահված ոլորտի կատարելագործման գործողությունների հիմնավոր ծրագիր<sup>2</sup>: Ծրագիրը պետք է պարունակեր այն առաջարկությունները և դրանց հիմնավորումները, որոնք նախարարը նախատեսում էր որպես իրեն հանձնարարված ոլորտի հաջող և լավագույն կառավարման պայմաններ: Այդպիսի ծրագրեր, որոնք թիւ թե շատ հիմնարար ծրագրային բնույթ ունեին, որոշ նախարարների կողմից մշակվում էին հանրապետության առաջին տարում: Սակայն հետագայում չեն հանդիպում կառավարությանը ներկայացված համակարգված և հիմնարար ծրագրեր: Արխիվում եղած փաստաթղթերն ավելի շատ նման են հոչակագրային հայտարարությունների՝ իրամանների, իրահանգների, շրջաբերականների:

Նախարարի՝ որպես գործադիր իշխանության կենտրոնական, ճյուղային իրավասության պետական կառուցից միանձնյա դեկանակարի կողմից իրականացվող կարերագույն խնդիրներն

<sup>1</sup> Տե՛ս Свод законов Российской империи, 1910. Т. 1, книга 5. “Учреждение министерств”, стр. 172, ст. 154:

<sup>2</sup> Տե՛ս նոյնատեղ, էջ 172, հոդ. 146-150:

Էին իր գերատեսչական համակարգի կառավարումը (անձնական կազմի կառավարումը, պետական շինարարության հարցերի լուծումը) և իրեն ենթակա հիմնարկությունների գործունեության վրա հսկողության իրականացումը:

Նախարարի խորհուրդը կամ նախարարության խորհուրդը, եթե նախարարությունում այն կար, գործում էր որպես նախարարին կից խորհրդակցական մարմին: Նախարարի խորհրդի նիստերն ըստ անհրաժեշտության հրավիրում էր նախարարը: Նիստերի ընթացքում քննարկվում էին նախարարության գերատեսչության գծով գործող կարևոր օրենքների լրացման կամ փոփոխման նախագծերը, նախարարության գործունեության կարևորագույն այլ հարցեր: Խորհրդի նիստերը նախազահում և վարում էր նախարարը կամ, նրա հանձնարարությամբ, նախարարի օգնականը:

Հայաստանի Հանրապետության կայացմանը զուգընթաց՝ գործադիր իշխանության մարմինների համակարգը բարդանում, ծավալվում և ճյուղավորվում էր: Դա օրինաչափ երևույթ էր, քանզի պետական կառավարման խնդիրներն օրակուր առաջ էին բերում նոր գործառույթների իրականացման անհրաժեշտություն, իսկ սա էլ իր հերթին պահանջում էր կատարող սուրյեկտի հիմնադրում: Եթե հանրապետության գոյության սկզբնական շրջանում կառավարությունը գոյություն ուներ և գործում էր լոկ որպես Սինիստրների խորհուրդ և դրա աշխատակազմ, ապա հետագայում աստիճանաբար ստեղծվեցին կառավարությանը սպասարկող գործառույթներ իրականացնող, նրան կից գործող հասուլ մարմիններ, ինչպես նաև գործակալություններ: Որպես այդպիսիք էին իրավաբանական խորհրդակցությունը, Նախարարների փոքր խորհուրդը, Հայաստանի հետազրական գործակալությունը և տեղեկատվական բյուրոն: Գործադիր իշխանության համակարգում առանձնահատուկ տեղ էին գրավում նախարարությունները: Ստեղծվելով գլեթե ոչնչից, առանց որևէ կազմակերպակառուցվածքային և նյութական նախադրյալների՝ 1920 թ. դրությամբ

գործադիր իշխանության համակարգում գործում էին ներքին գործերի, արտաքին գործերի, զինվորական, արդարադատության, ֆինանսների, հանրային կրթության և արվեստի, հաղորդակցության, աշխատանքի, խնամատարության և վերաշինության, գյուղատնտեսական և պետական գույքերի նախարարությունները: Հանրապետության գոյության վերջին շրջանում ստեղծվեց Հայաստանի կենտրոնական բանկը: Փորձեր են արվել հիմնադրելու նաև ժողովրդական տնտեսության մինիստրություն, տնտեսական կառավարման մասնագիտացված մարմին:

Գործադիր իշխանության համակարգի մեջ մտնող բոլոր մարմիններին բնորոշ կազմակերպման ու գործունեության սկզբունքն օրինականությունն էր: Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ վարչապետի գլխավորությամբ, 1919 թ. ապրիլի 27-ից մինչև օգոստոսի 1-ը, իսկ այնուհետև 1920 թ. մայիսի 5-ից մինչև հանրապետության անկումը՝ դեկտեմբերի 2-ը, վերածվում էր օրենսդրական լիազորություններով օժտված գործադիր մարմնի: Հետևաբար այս ժամանակահատվածներում նախարարների կողմից Նախարարների խորհուրդը բերված օրինագծերը հաստատվելուց հետո ստանում էին օրենքի ուժ<sup>1</sup>: Համաձայն Նախարարների խորհրդի ընդունած կարգի՝ յուրաքանչյուր նախարար իր առաջարկությունը պետք է ներկայացներ գրավոր և նախօրոք, իսկ այն առաջարկությունները, որոնք պահանջում էին օրենսդրական լուծում, անպայման պետք է ունենային համապատասխան օրինագիծ և բացատրագիր:

Հանրապետության քաղաքական դեկապարության՝ օրենսդրական լիազորությունների փոխանցմանն ուղղված քայլերը պայմանավորված էին երկու հիմնական հանգամանքներով: Մի կողմից՝ օրենսդրի մարմնում՝ հատկապես Հայաստանի խորհրդում կառավարող կուսակցությունը մյուս կուսակցությունների

<sup>1</sup> Այդ ժամանակամիջոցներում կառավարության կողմից ընդունված օրենքները բազմաթիվ են և իրենց քանակական առումով չեն զիջում, եթե չեն գերազանցում խորհրդարանական օրենքներին:

ընդդիմադիր դիրքորոշման պատճառով հանդիպելով որոշակի դժվարությունների, այսինքն՝ չկարողանալով անարգել իրազործել իր քաղաքականությունը, իր պատգամավորական մեծամասնության միջոցով կարողանում էր հասնել օրենսդրական լիազորությունների այդպիսի փոխանցման և դրանով իսկ՝ ազատվում ավելորդ գլխացավանքից: Մյուս կողմից՝ կառավարող ուժերի կամքից անկախ, ճգնաժամը հասարակության կյանքի բոլոր ոլորտներում, պատերազմները, հակապետական խոռվությունները և անցման շրջանը հրամայաբար պահանջում էին իշխանության կենտրոնացում, օպերատիվություն, և ակնհայտ էր դառնում, որ այդպիսի արտակարգ իրադրությունում պետական կառավարումը «պառլամենտական դանդաղաշարժ ձևով» չէր կարող ձեռնարկել կտրուկ միջոցներ, ունենալ արագ մաներող պետական իշխանություն: Հանրապետության իրականության առաջարրած հրատապ խնդիրները պահանջում էին շուտափույթ և առանձնահատուկ լուծումներ, որոնք հնարավոր էին միայն արագ ու օպերատիվ կառավարական որոշումներով, կարգադրություններով ու ձեռնարկումներով: Այսպիսի իրավիճակում քաղաքական ուժերի մի մասը կարծում էր, որ խորհրդարանը որոշ ժամանակ պետք է ձեռնապահ մնար օրինաստեղծ գործունեությունից, մինչև վիճակը կայունանար, և հնարավոր կդառնար խորհրդարանական աշխատանքը, խորհրդարանական օրինաստեղծությունը: Հանրապետության գոյության ողջ ժամանակահատվածում ժողովրդավարական կառավարման ձևերի, հաստատությունների ձգտման և ճգնաժամային իրավիճակից բխող արտակարգ, դիկտատորական միջոցառումների անհրաժեշտության միջև հակասությունը երբեք լուծում չգտավ, ինչի վկայությունն է նաև «պատշաճ» ու արտակարգ դատարանների, օրենսդիր ու գործադիր մարմինների գործառության մրցակցությունը:

\* \* \*

Այսպիսով, պետական իշխանության գերագույն մարմնի կամ օրենսդիր իշխանության համակարգի կայացման և ներքին

զարգացման տեսանկյունից Առաջին հանրապետության պետական կառավարման համակարգի պատմությունը կարելի է բաժանել կազմակերպական երեք փուլի:

**Առաջին փուլն** ընդգրկում է 1918 թ. մայիսի 28-ից մինչև օգոստոսի 1-ը ընկած ժամանակաշրջանը, որը, ըստ եռթյան, հայոց ազգային ներկայացուցչական համակարգով խորհրդարանական կառավարում էր: Այս շրջանի յուրահատկությունն այն է, որ պետական իշխանության բարձրագույն մարմին էր համարվում Թիֆլիսի Հայոց ազգային կենտրոնական խորհուրդը: Առաջին հանրապետության տարածքում տեղական կառավարման բոլոր գործառույթներն իրականացնում էր Երևանի Հայոց ազգային խորհուրդը:

**Երկրորդ փուլն** ընդգրկում է 1918 թ. օգոստոսի 1-ից մինչև 1919 թ. օգոստոսի 1-ը, և իր բնույթով հանրապետության բնակչության և քաղաքական հիմնական ուժերի (կուսակցությունների) նշանակովի-ներկայացուցչական համակարգով խորհրդարանական կառավարում էր, որում օրենսդիր իշխանությունը մարմնավորում էր Հայաստանի խորհուրդը:

**Երրորդ փուլը՝** 1919 թ. օգոստոսի 1-ից մինչև հանրապետության անկումն ընդգրկող ժամանակաշրջանը, կարելի է բնութագրել քաղաքական կուսակցությունների համամասնական ներկայացուցչության համակարգով ընտրված խորհրդարանական կառավարման համակարգ: Այս շրջանում առկա օբյեկտիվ ընտրական իրավունքը, այսպես կոչված, քաղաքական կուսակցությունների համամասնական ներկայացուցչության համակարգ էր, ըստ որի՝ ամեն մի կուսակցություն խորհրդարանական մանդատն ստացել էր իրեն տրված ձայներին համամասնորեն: Այս փուլում օրենսդիր իշխանությունը մարմնավորում էր Հայաստանի պալամենտը: Երկրորդ և երրորդ փուլերի առանձնահատկությունն այն էր, որ այս ժամանակամիջոցներում խորհրդարաններն իրենց օրենսդրական լիազորությունները երբեմն փոխանցել են կառավարությանը:

#### § 4. Առաջին հանրապետության դատական համակարգը

Առաջին հանրապետության օրենսդիր և գործադիր մարմինների կազմավորումից հետո նրանց առջև դրված գլխավոր խնդիրներից մեկն էլ հանրապետության դատական համակարգի կառուցման և գործունեության հիմունքների մշակումն էր, դատարանակազմական, քրեական ու քաղաքացիական դատավարական հարաբերությունները կարգավորող համապատասխան օրենքների մշակումն ու ընդունումը:

Առաջին հանրապետության պետական կառուցակարգում դատական մարմինները պետք է զբաղեցնեին կարևոր տեղ, որը պայմանավորված էր նրանց առջև դրված արդարադատության խնդիրներով: Այդ խնդիրների ուժով դատարանը և դատավարությունը առաջին հանրապետությունում ձեռք էին բերում նաև պատմական նշանակություն՝ արդարադատության խնդիրների լուծմամբ նպաստել նորահոչակ պետականության կայացմանը<sup>1</sup>:

1918 թ. օգոստոսի 3-ին Հայաստանի խորհրդի երկրորդ նիստում հրապարակվեց կառավարության հայտարարագիրը (դեկլարացիան)<sup>2</sup>, ըստ որի արդարադատության ոլորտում կառավարությունն իր առջև դրել էր հետևյալ խնդիրները. «Հարմարեցնել դատարանը երկրի քաղաքացիական իրավահասկացության և իրավական սովորույթներին, միաժամանակ քրեական դատավարությանը մասնակից դարձնել ժողովրդի ներկայացուցիչներին»<sup>3</sup>: Ինչպես տեսնում ենք, հայտարարագրի այդ դրույթները շատ ընդհանուր էին: Կառավարությունը չէր նախատեսել, թե ինչ միջոցներով ու եղանակներով պետք է օրինականություն և իրավա-

կարգ հաստատվի Հայաստանի Հանրապետությունում, թե ինչպիսի դատական համակարգ և իրավապահպան մարմիններ պետք է հիմնադրվեն, որպեսզի լուծվեն այդ խնդիրները<sup>1</sup>: Այս հիմնախնդիրների լուծման նպատակով արդարադատության նախարարի նպաստելությամբ գումարվեցին մի շարք խորհրդակցություններ և ժողովներ<sup>2</sup>: Արդյունքում մշակվեց «Հայաստանի Հանրապետությունում դատարանի կազմակերպման մասին» օրինագծերի փաթեթը, որը 1918 թ. սեպտեմբերի 5-ին քննարկվեց Նախարարների խորհրդում և, հավանության արժանանալով, ուղարկվեց Հայաստանի խորհուրդ<sup>3</sup>:

1918 թ. դեկտեմբերի 6-ին Հայաստանի խորհուրդը ընդունեց դատարանակազմական քնույր ունեցող 6 օրենք: Նույն օրը Հայաստանի խորհուրդը ընդունեց մեկ այլ օրենք, որը անմիջականորեն առնչվում է մեր կողմից քննարկվող հիմնախնդիրներին: Դա «Հայաստանի Հանրապետության տարածքում ուսուական կայսրության օրենքները գործողության մեջ դնելու մասին» օրենքն էր: Դրանով Հայաստանի խորհուրդը պաշտոնապես պարզություն մտցրեց հանրապետության իրավական համակարգի նորմատիվային հիմքերի հարցում սահմանելով, որ Հայաստանի Հանրապետության տարածքում ժամանակավորապես գործողության մեջ են դրվում Ռուսական կայսրության օրենքները, Ժամանակավոր կառավարության, Անդրկովկասյան կոմիսարիատի, Անդրկովկասյան Սեյմի, Հայաստանի խորհրդի փոփոխություններով և լրացումներով: Այդ օրենքի ուժով Հայաստանի Հանրապետությունում սկսեց գործել նաև Ռուսական կայսրության քրեական և քաղաքացիական նյութական ու դատավարական, ինչպես նաև դատարանակազմական օրենսդրությունը: Այսպիսով, ստացվում էր, որ, նախ՝ Հայաստանի Հանրապետությունում գործողության

<sup>1</sup> Տե՛ս Վաղարշյան Ա.Գ., Հայաստանի առաջին Հանրապետության դատական համակարգի հիմունքների մշակումը և դրանց օրենդրական կենսագրությունը, - Երավունք և օրինականություն, Երևան, 1996, թիվ 2(10), էջ 26:

<sup>2</sup> Տե՛ս Զանգ, 1918, օգոստոս, թիվ 43:

<sup>3</sup> Տե՛ս նոյեմբերի:

<sup>1</sup> Տե՛ս Վաղարշյան Ա.Գ., Հայաստանի առաջին Հանրապետության դատական համակարգի հիմունքների մշակումը և դրանց օրենդրական կենսագրությունը, - Երավունք և օրինականություն, Երևան, 1996, թիվ 2(10), էջ 26:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 404, գ. 1, գ. 68, Զանգ, 1918 թ., օգոստոս, թիվ 45:

<sup>3</sup> Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 206, գ. 1, գ. 2, թ. 32:

մեջ էր դրվում ոռւսական 1864 թ. դատական բարեփոխման իիմքը կազմող օրենքների փաքերը, իսկ այնուհետև՝ Հայաստանի խորհրդի վերոհիշյալ օրենքներով դրանցում ներմուծվում էին համապատասխան փոփոխություններ և լրացումներ:

Այդ օրենքների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետությունը ունեցել է ենթարկում ոռւսական դատական համակարգը, բացառելով XIX դ. երկրորդ կեսի հակաբարենորդումների հետևանքով մտցված իրավական դրույթները: Վերացվում էին Ալեքսանդր II-ի դատական կանոնադրություններում պարունակվող դատական պաշտոնների և երդվյալ ատենակալների թեկնածուների համար սահմանված արտոնություններն ու սահմանափակումները ծառայողական, կրոնական, դասային, գույքային հատկանիշներով: Վերացվեցին նաև Անդրկովկասի համար հատուկ սահմանված դատավարական կանոնները: Հայաստանի Հանրապետության տարածքում գործողության մեջ դրվեցին ընդհանուր դատավարական և դատարանակազմական նորմերը: Չեր նախատեսվում քաղաքական և պաշտոնական հանցագործությունների համար դասային ներկայացուցիչների դատարանի ստեղծումը: Այդ բնույթի գործերը Հայաստանի Հանրապետությունում ընդդատյա էին միայն շրջանային դատարաններ: Հայաստանի Հանրապետությունում չէր հիմնադրվում նաև գերազույն քրեական դատարան:

Այսպիսով, համաձայն 1918 թ. դեկտեմբերի 6-ի օրենքների՝ համաքաղաքացիական դատական համակարգը Հայաստանի Հանրապետությունում ընդգրկում էր հետևյալ դատական մարմինները.

1) Սիանանյա հաշտարար դատավորներ՝ իրենց սահմանափակ քրեական, քաղաքացիական ու լրիվ վարչական ընդդատությամբ:

2) Երևանի շրջանային դատարան, որն ընդհանուր իրավասության գործերով առաջին ատյանն էր, և որի կազմում պետք է գործեր երդվյալ ատենակալների դատարանը: Երևանի շրջանային դատարանը ուներ քրեական, քաղաքացիական, վարչական և

ցուցակագրական բաժանմունքներ: Շրջանային դատարանը միաժամանակ համարվում էր երկրորդ՝ վերաքննիչ ատյան հաշտարար դատարանների համար: 1920 թ. ապրիլի 5-ի օրենքով հիմնադրվեցին ևս երկու շրջանային դատարաններ՝ Կարսում և Ալեքսանդրապոլում: Վերջիններս համարվում էին IV կարգի շրջանային դատարաններ, այսինքն՝ չունեին առանձին բաժանմունքներ և հետևաբար կազմված էին նախագահից և դատարանի 4 անդամներից<sup>1</sup>: Այդ դատարաններին կից գործում էին նաև նոտարը և դատախազը՝ իր երկու օգնականներով: Երևանի շրջանային դատարանը Կարսի և Ալեքսանդրապոլի դատարանների ստեղծումից հետո մնաց որպես երրորդ կարգի դատարան՝ երկու բաժանմունքներով՝ քրեական և քաղաքացիական: Վերջին բաժանմունքը կատարում էր նաև վարչական և ցուցակագրական բաժանմունքների գործառույթները, քանի որ, համաձայն 1919 թ. հունվարի 13-ի և 1920 թ. ապրիլի 26-ի օրենքների, ցուցակագրական և վարչական բաժանմունքները վերացվել էին:

3) Դատական պալատը՝ որպես վերաքննիչ ատյան՝ ընդիանուր իրավասության գործերով՝ երկու դեպարտամենտներով՝ քրեական և քաղաքացիական:

4) Հայաստանի սենատը՝ որպես և՛ հաշտարար, և՛ ընդիանուր արդարադատության համար միասնական վճռաբեկ դատարան:

Այսպիսով, Հայաստանի առաջին հանրապետության դատական համակարգը կառուցվածքային առումով տարբերվում էր 1864 թ. դատական հիմնարկությունների «ուշերեժենիայով» նախատեսված դատական մարմինների համակարգից: Իսկ ինչ վերաբերում է այդ համակարգի դատավարական առանձնահատ-

<sup>1</sup> Համաձայն դատական հիմնարկների «ուշերեժենիայի»՝ շրջանային դատարանները կարող էին բաժանման վեցել բաժանմունքների՝ ելենով գործերի բանակից տվյալ դատական տարածքում: Գոյություն ունեին շրջանային դատարանների 4 կարգեր՝ առաջին, ուներ վեց և ավելի բաժանմունքներ, երկրորդ՝ երեք բաժանմունք, երրորդ՝ երկու բաժանմունք, չորրորդ՝ բաժանմունքների չին բաժանմունք: Բաժանմունքները մասնագիտանում էին կամ քրեական, կամ քաղաքացիական գործերի բնույթամբ (տե՛ս Թիֆլիսի գաղաքանական դատարանի համաձայն՝ 1997 թ. 8 հունվարի 40, 91):

կուրյուններին, ապա դրանք գրեթե գոյուրյուն չունեին: Դատական համակարգի նորմատիվային հիմքը կազմում էին այն նույն օրենքները (դատարանակազմական և դատավարական), ինչ Ուսուական կայսրությունում: Այդ օրենքներով ամրագրված էին այնպիսի սկզբունքներ, ինչպես գործադիր և դատական իշխանությունների բաժանումը, որը պետք է ընկալել որպես արդարադատության իրականացումը միայն դատարանի կողմից սկզբունքի, այլ ոչ թե իշխանությունների տարանջատման սկզբունքի արտահայտություն: Այդ օրենքներով Հայաստանի Հանրապետությունում ներմուծվում էին այնպիսի կարևորագույն ժողովրդավարական ինստիտուտներ, ինչպիսիք են երրվյալ ատենակալների դատարանը, դատական քննիչների ինստիտուտը, վարչական արդարադատության ինստիտուտը և այլն: Դատարանակազմության ժողովրդավարական ինստիտուտներին համապատասխանում էին դատավարության ժողովրդավարական սկզբունքներ՝ ամրագրված քրեական և քաղաքացիական դատավարությունների կանոնադրություններում: Այս օրենսդրական ակտերը ամրագրում էին դատավարության մի շարք հիմնարար սկզբունքներ՝ օրինականության, իրապարակայնության, բանավորության, մրցակցության, անմեղության կանխավարկածի, մեղադրյալի պաշտպանության իրավունքի, անմիջականության և անընդհատության, կողմերի իրավահավասարության, դիսպոզիտիվության և այլն:

Այսպիսով, Հայաստանի առաջին Հանրապետությունում սկզբում ստեղծվեց այնպիսի դատական համակարգ, որը՝ և իր կառուցվածքի, և իր գործունեության սկզբունքների առումով, և տվյալ ժամանակաշրջանում այլ երկրներում գոյություն ունեցող դատական համակարգերի՝ հատկապես դրանից հետո եկող խորհրդային դատական համակարգի հետ համեմատած, անվերապահուեն կարելի է համարել առաջախմական, ժողովրդավարական: Այսպես՝ քրեական դատավարության կանոնադրությունը սահմանում էր. «Ոչ որ չի կարող պատժվել դատական գերատես-

չությանը ենթակա հանցագործության կամ զանցանքի համար այլ կերպ, քան պատշաճ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով և դատական կանոնադրություններով սահմանված պատշաճ ընթացակարգով»<sup>1</sup>:

Հայաստանի խորհրդի 1918 թ. դեկտեմբերի 6-ի դատարանակազմական և դատավարական օրենքների համաձայն՝ արդարադատությունը, որպես պետական գործունեության հատուկ տեսակ, առանձնանում էր գործադիր և օրենսդիր մարմիններից:

Դատական հաստատությունների կանոնադրության առաջին հոդվածի՝ «Դատական իշխանությունը պատկանում է հաշտարար դատավորներին, շրջանային դատարաններին, Դատական պալատին և Սենատին»<sup>2</sup>, ինչպես նաև քրեական դատավարության կանոնադրության առաջին հոդվածի «պատշաճ դատարաններ», «պատշաճ ընթացակարգ» արտահայտությունները վկայում էին, որ արտակարգ դատարանների ստեղծումը օրենքով արգելված էր, և դատավարության իրականացման կարգը չէր կարող կամայականորեն փոփոխվել օրենսդիր նարմինների կողմից: Արդարադատությունը ՀՀ-ում պետք է իրականացվեր միայն օրենքում նշված պատշաճ դատարանների կողմից, որոնք հոչակած էին անկախ, իսկ դատավորները օժտված էին անփոփոխելիության իրավունքով<sup>3</sup>:

Ուսուական դատական բարենորոգման հետազոտողները «արդարադատության իրականացումը միայն դատարանների կողմից» սկզբունքի օրենսդրական իրացումը համարում են ոչ լիարժեք և խախտված՝ հիմք ընդունելով քրեական դատավարության կանոնադրության առաջին հոդվածի ծանոթագրությունը, ըստ որի՝ «Դատական հետապնդում չեն համարվում այն միջոցառումները, որ օրենքով նախատեսված կարգով ձեռնարկում են ոստիկանական և այլ վարչական իշխանությունները հանցա-

<sup>1</sup> Տե՛ս Թիմուենենա չահի 1 հականակության X-XX հականակության 8. Նույնականացումը միայն առաջական դատարանների կողմից»

<sup>2</sup> Տե՛ս նույնականացումը միայն առաջական դատարանների կողմից, էջ 1, 14:

<sup>3</sup> Տե՛ս նույնականացումը միայն առաջական դատարանների կողմից, էջ 32, հ. 1:

գործությունների ու զանցանքների կանխման համար»<sup>1</sup>: Այս դրույքը էապես նպաստում էր «վարչական իշխանության ներխուժմանը դատարանների գործունեության մեջ»<sup>2</sup>, հնարավորություն տալով նրանց վարչական կարգով կիրառելու արտաքսում և արսոր:

Սակայն ցարական կառավարության օրոք նույնիսկ վարչական հարկադրանքը կիրառվում էր օրենքի հիման վրա, և առանց օրինական հիմքերի վարչական մարմիններն այդպիսի հարկադրանք կիրառելու իրավունք չունեին: Արդարադատության իրականացումը միայն դատարանի կողմից սկզբունքը Հայաստանի Հանրապետության գոյության ընթացքում էլ ավելի խեղաթյուրվեց, որպիես արտակարգ լիազորություններով օժտված գործադիր զանազան մարմիններ, օգտվելով իրենց արտոնյալ վիճակից, դատ ու դատաստան էին իրականացնում հանրապետության ամբողջ տարածքում: Հաճախ այդ մարմինները գործում էին իրավական հիմք ընդունելով ոչ թե օրենքները, այլ այսպես կոչված՝ «իշխանությունների պարտադիր որոշումները», այսինքն՝ կառավարման կենտրոնական մարմինների կողմից ընդունված նորմատիվ-իրավական ակտերը<sup>3</sup>: Իրավական տեսակետից այդ որոշումները «չանչը է հակասեին գործող օրենքներին»<sup>4</sup>: Բայց իրականում այդ կանոնը չէր պահպանվում: «Բյուրո կառավարության» ներքին գործերի նախարար Ա. Զամալյանը 1920 թ. մայիսի 13-ին արձակել և նախարարության ստորին օրակներին է ուղարկել հետևյալ իրամանը. «Ստանձնելով ժամանակավորապես ներքին գործերի նախարարի պաշտոնը՝ սրանով հայտնում եմ ի գիտություն ներքին գործերի վարչության բոլոր մարմիննե-

<sup>1</sup> Տե՛ս նոյն տեղը, էջ 120, 1 հ.:

<sup>2</sup> Տե՛ս Անդրեաս Ա.Ա., Նոհանական ծառայության մարմինների գործությունների մասին որոշումը, 1962, էջ 337:

<sup>3</sup> Հաշտարար դատարանները, որպես վարչական ընդդատության առաջին աստյան, հեղեղված էին, այսպես կոչված, «վիազորական գործերով», այսինքն՝ զանագատներով ընդդամ կառավարական և տեղական զանազան կոմիսարների, միլիցիայի պետերի:

<sup>4</sup> ՀՀ ՍՍ, ֆ. 199, գ. 1, գ. 221, թ. 57:

րին ու պաշտոնյաներին.

1. Այն պաշտոնյան, որ կմերկացվի գեղծում կատարելու, կաշառք վերցնելու, խուզարկության ժամանակ իրեր սեփականացնելու, քաղաքացիների վրա բռնություն գործի դնելու և շանտաժի մեջ, 48 ժամվա ընթացքում բանտարկությունից մինչև մահվան պատիժ կատանա՝ համաձայն արտակարգ դատարանի համար սահմանված օրենքների:

2. Այն պաշտոնյան, որ կմերկայանա կատարելու իր պարտականությունները և կանցնի իր իրավունքների սահմաններից, կենթարկվի բանտարկությունից մինչև տաժանակիր աշխատանքների համաձայն նոյն օրենքների տրամարանության»<sup>1</sup>:

Հրամանում խոսքը գնում է 1920 թ. մայիսի 8-ի «Արտակարգ դատարանի և դրա դատին ենթակա գործերի մասին» ժամանակավոր օրենքի հիման վրա ստեղծված արտակարգ դատարանների և նրանց ընդդատյա հանցագործությունների մասին: Բայց օրենքով՝ պաշտոնեական հանցագործությունները հրամանը ընդունելու պահին ընդդատյա էին ընդիհանուր իրավասության դատարաններին, այլ ոչ թե արտակարգ դատարաններին: Փաստութեան, նախարարն իրեն իրավունք էր վերապահում փոխել արտակարգ դատարանների ընդդատությունը և մահապատիժ սահմանել այն հանցագոր արարքների համար, որոնք օրենքով մահապատիժ ենթակա չէին:

Օրենսդիր և գործադիր մարմինները ներխուժում էին արդարադատության իրականացման ոլորտ նաև արտակարգ դատարանների հիմնադրմամբ՝ հատկապես 1920 թ. մայիսյան արտակարգ դատարանների, որոնք աչքի էին ընկնում ոչ միայն իրենց արտակարգությամբ, դատավարական երաշխիքներ պահպանվելու անկարողությամբ, այլև նրանով, որ անմիջապես և ուղղակիորեն դեկանական էին կառավարության կողմից՝ ստանալով իրահանգներ՝ դատելու կամ չդատելու, մահապատիժ նշանակելու կամ չնշանակելու մասին: Այդ դատարանները, նոյնիսկ ձևակա-

<sup>1</sup> ՀՀ ՍՍ, ֆ. 201, գ. 1, գ. 98, թ. 47:

Այսպէս, չին մտնում արդարադատության նախարարության համակարգի մեջ, նրանցում չեր գործում դատավորի անկախության երաշխիք հանդիսացող անփոփոխելիության սկզբունքը:

Այս փաստերը և ընդհանրապես Հայատանի առաջին հանրապետության դատական համակարգի պատմաիրավական ուսումնասիրությունը մեզ հիմք են տալիս պնդելու, որ արդարադատության, որպես պետական գործունեության հատողի տեսակի, և օրենսդիր ու գործադիր մարմինների իրավասությունների տարանջատումը կատարված էր ոչ լիսրժեք կերպով, որ այն համապետության գոյության տարիներին, օրենսդիր, գործադիր և կուսակցական մարմինների կողմից անբնիատ խախտվում էր:

Այսպիսով՝ չնայած այն բանին, որ օրենսդիրն օգտագործել է «դատական իշխանություն» տերմինը, այնուամենայնիվ, իշխանությունների տարանջատման սկզբունքը, որի մեջը ոչ միայն ամբողջական պետական իշխանության սովորական, աշխատանքային, մեխանիկական բաժանումն է, այլ այնպիսի կազմակերպարավական միջոցառումները, որոնք ապահովում են դրանց համագործակցությունը, հավասարակշռությը և հակակռումը<sup>1</sup>, ՀՀ-ում, փաստորեն, չեղ իրականացված:

Դատական իշխանությունը՝ որպես պետական իշխանության լիարժեք տարրերից մեկը, միայն արդարադատությունը չէ։ Դատական իշխանությունը և արդարադատությունը նույնական հասկացություններ չեն։ Տեսական գրականության մեջ «դատական իշխանություն» հասկացությունը բնորոշվում է՝ որպես պետական կառուցակարգի մեջ հատուկ տեղ գրադեցնող մարմինների՝ դատարանների կողմից մարդկանց վարքագծի և ընկերային գործընթացների վրա ներգործելու հնարավորություն ու ընդունակություն<sup>2</sup>։ Այլ կերպ ասած՝ դատական իշխանություն հասկացությունը ընդգրկում է բազմազան լիազորություններ, որոնցով օժտված են դատարանները։ Ամբողջութեան մեջ որպես հոգածումն

<sup>1</sup> Słův Áçàðêèí f. I., I í òàñêüä. I , 1988, kç 69-70.

<sup>2</sup> Stú Áróái éit E.Ó., Eíláeáti Í .A., Í ðaái iððaí èðaéii úá íðaaí ú. Í .., 1995, tge 33:

Էլ հենց դատական իշխանության իրացումն է, որպես իշխանությունների տարանջատման սկզբունքի բաղկացուցիչ: Այդ լիազորությունների մեջ կարևոր տեղ է գրադաւում արդարադատությունը, սակայն լիիրավ դատական իշխանությունը չի հանգում միայն քրեական և քաղաքացիական արդարադատությանը: Դատական իշխանությունը պարտադիր ընդգրկում է նաև մի շարք այլ լիազորություններ, ինչպես՝ սահմանադրական վերահսկողությունը, պետական մարմինների և պաշտոնատար անձանց որոշումների ու գործողությունների օրինականության և հիմնավորվածության վրա կանոնավոր վերահսկողությունը, գործող օրենսդրության մեկնաբանումը դատական պրակտիկայի հիման վրա և այլն:

Հայաստանի առաջին Հանրապետությունը չուներ սահմանադրական արդարադատության ինստիտուտ, չկար կանոնավոր վերահսկողություն գործադիր մարմինների ընդունած որոշումների օրինականության և հիմնավորվածության վրա: Այս իմաստով օրենսդիր մարմիններն իրենց իրավաստեղծագործության ընթացքում ունեին անսահմանափակ պողիստիվլիստական հնարավորություններ և կարող էին կամայականորեն փոխել քրեական դատավարության իրականացման կարգը, հիմնել դատավորների անկախությունը և անկողմնակալությունը շապահովող իրավական ընթացակարգ ունեցող արտակարգ դատարաններ առանձին գործերի և անձանց, կոնկրետ իրավության համար: Օրենքն ու իրավունքը «պարտադիր էին միայն ենթականների համար, բայց ոչ այն ստեղծող իշխանության»<sup>1</sup>, դա էլ հիմք է տալիս մեզ պնդելու, որ ՀՀ-ն իր կառավարման ձևով հանրապետություն էր, սակայն ոչ իրավական պետություն: Այդաիսի պողիստիվլիստական իրավագիրները և գործելակերպ հայրենասիրական բռնապետության նպատակահարմարության տեսանկյունից էլ արդարացմելու հիմքեր չկան, որովհետև ուժեղ ազգային պետական իշխանությունը չի նշանակում կամայականություն:

<sup>1</sup> Stúr Í ãðñéñýí ð Á.N., Í óðe ðàçàèðèý ñí áàðñéñâ íâí âí ñóáàðñòâà è íðàâà /â éí éää Í óëüñ ðàðí ðí. Í .. 1989, tþg 38:

Ոչ բավարար տնտեսական, անկայուն քաղաքական նախադրյալները, բացասական միտում ունեցող բարոյահոգեբանական գործոնները պայմանավորում էին պետական կառուցակարգի ոչ լավագույն, անարդյունավետ գործունեությունը: Այդ երաշխիքների բացասական ազդեցության պայմաններում կարևորվում էր հատուկ իրավաբանական-կազմակերպական, նորմատիվային երաշխիքը, որ երկրորդական տեղ չէր գրադեցնում մնացած երաշխիքների շարքում, այլ հանդես էր գալիս որպես ակտիվ գործոն: Պետության կողմից ընդունված հատուկ իրավաբանական միջոցառումները (դատական համակարգի կազմակերպական և գործառության առանձնահատկությունները) ընդունակ էին ազդելու մյուս երաշխիքների փոփոխման վրա դրական միտումով և շատ կարևոր էին օրինականության ապահովման, արդարադատության ճիշտ, արագ, արդյունավետ իրականացման համար: Ռուսական դատական բարենորոգման դրույթների ոչ հաջողակ ձևով ընկալումը դարձավ արդարադատության նարմինների անարդյունավետ գործունեության պատճառներից մեկը: Հանրապետության իշխանությունները շարողացան «ստեղծել պայմաններ, որոնցում դատարանները կկարողանային անցնել արդարադատության իրականացմանը»:

Անհաջողության գլխավոր պատճառը ռազմավարական խնդիր սխալ ընտրությունն էր, այսինքն՝ ոչ թե իրականությունը պետք է հարմարեցվեր դատական համակարգին, այլ դատական համակարգը պետք է կառուցվեր իրականությանը, հասարակական հարաբերություններին համապատասխան: Իսկ հնարավոր բազմատարերակ լուծումներ այսպիսի պայմաններում կային: Օրինակ՝ սկզբում կառուցված դատական համակարգում տեղական պայմաններից ելնելով պատշաճ կառուցվածքային և դատավարական վերափոխումների իրականացումը, սակայն պայմանով, որ դրանք կապահովվեին անհարժեշտ կազմակերպական-տեխնիկական և կադրային երաշխիքներով: Վերջինս, այսինքն՝ բարեփոխումների կադրային ապահովումը ենթադրում էր դատական, դատախազական, քննչական պաշտոնյաների աշ-

խատանքի և կյանքի նվազագույն պայմանների բանական սահմաններում երաշխավորումը, ինչը հնարավորություն կտար նրանց լինել անկախ և ինքնուրույն, գործուն: Նման մոտեցման կենսագործումը նախադրյալներ կստեղծեր համակարգից դուրս գտնվող մասնագետներին ներգրավել ոլորտում աշխատելու համար: Իր բացասական ազդեցությունը քողեց նաև այն հանգամանքը, որ արդարադատության նախարարությունը գլխավորել են տաս նախարարներ կամ պաշտոնակատարներ: Հերթականորեն փոխարինելով միմյանց՝ ամեն մեկը միջին հաշվով պաշտոնավարել է երեքց-չորս ամիս: Նախարարական այդպիսի խառնաշփոթ և ամեն անգամ կառավարական կուրսի փոփոխությունը չին կարող լավագույն ազդեցություն քողենել դատական համակարգի գործունեության վրա:

Արդարադատության մարմինների համակարգի կառուցման թերություններն ակնհայտ էին նաև ժամանակակիցների համար: Հատկապես մանուլը և հասարակայնությունը պահանջում էին վերափոխումներ, պայքար հանցավորության դեմ, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանություն և ապահովում: Իշխանություններն էլ այդ ճնշման տակ փոխանակ միջոցներ ձեռնարկելու՝ արդեն կառուցված համակարգը արդյունավետ դարձնելու, դիմում էին արտակարգ դատարանների և դատավարական ձևերի օգնությանը՝ խախտելով դատարանի միասնականության սկզբունքը, քաղաքացու շահերը շոշափող յուրաքանչյուր գործի արդարացի և օրյեկտիվ քննության իրավունքը: Սակայն նույնիսկ արտակարգ միջոցառումներն իրենց օրենսդրական, կազմակերպական-կառուցվակարգային առանձնահատկություններով այնքան վատ էին, որ սրանք ևս չէին կարողանում կենսագործել իրենց առջև դրված խնդիրները, հաստատել օրինականություն և իրավակարգ հանրապետությունում: Մայիսյան արտակարգ դատարանների հիմնադրման հարցադրման, նրանց վերաբերյալ օրենքների մշակման ու ընդունման, դրանք կենսագործելու և հետագայում դրանցում փոփոխություններ կատարելու մեջ, ինչպես ջրի կաթիլի մեջ, արտացոլվել է ժամանակի իրա-

կանության, քաղաքականության հակասականությունը, ազգային բռնապետության և ժողովրդավարության հակասությունը, քաղաքական դեկավարների անորոշ դեգերումներն ու խարիսափումները: Այդպիսի քաղաքանության հետևանքով պետական կառուցակարգում դատական մարմինները վերածվել էին պետական կառավարման արտակարգ լիազորություններով օժտված մարմինների, ՆԳՆ-ն քնահաճույքներից կախված, կառավարչական ապարատի հետևից քարշ եկող կառուցակարգի:

Աղյուրների ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում նաև մեկ այլ օրինաչափություն. դատական համակարգը, ինչպես և ամբողջ պետական կառուցակարգը սոցիալապես պայմանավորված է, այսինքն՝ այն պետության կամայական հայեցողության արդյունքը չէ, այլ հասարակական հարաբերություններին, իրավիճակին համապատասխան ստեղծվող ու գործող համակարգ: Դատական համակարգը, որը սովորական պայմաններում գործում էր քավականին արդյունավետ, հանրապետության ծանր տնտեսական, քաղաքական, սոցիալական, հոգեբանական իրականության մեջ ի վիճակի չէր ապահովելու իր առջև դրված խնդիրների նվաճումը: Անիշխանությունը և քառոր, Առաջին հանրապետության գորշ իրականությունը ոռուական դատական կանոնադրությունների շատ դրույթներ վերածեցին «ֆիեալիզմի»: Եթե հնարավոր չէր ապահովել եղած համակարգի գործունեության համար անհրաժեշտ պայմաններ, ապա համակարգը պետք է վերափոխվեր, հարմարեցվեր իրականության պայմաններին: Առաջնակարգ խնդիրը ոչ թե «ներդաշնակ և ամբողջական» դատական համակարգի հաստատումն էր, այլ իրավական հիմքերի վրա դրված արդարադատության իրականացումը: Այլ կերպ ասած գերինդիրը, նպատակը արդյունքն է, այսինքն՝ իրավակարգի հաստատումը, արդարադատության խնդիրների լիովին կենսագործումը, այլ ոչ թե դատական մարմինների համակարգը, որը միայն միշտ է հասնելու իրավական հիմքերի վրա դրված արդարադատության կենսագործմանը:

## ԳԼՈՒԽ 8. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԵՆԹԱՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԻՐԱՎԱՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՍՏԱՐԱԿՈՒՄ

### § 1. Խորհրդարանների իրավասության բնույթը և իրավական ամրագրման հիմնախնդիրը

Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանների՝ Հայաստանի խորհրդի և Հայաստանի պաղամենուի տեղը պետական մարմինների համակարգում որոշելու համար կարելոր նշանակություն ունի նրանց՝ որպես խորհրդարանների իրավասությունը: Սովորաբար խորհրդարանների իրավասությունը կախված է պետական կառավարման և կառուցվածքի ձևերից, երկրում ժողովրդավարության աստիճանից, քաղաքական ուժերի հարաբերակցությունից և մի շարք այլ պայմաններից: Հայաստանի համար հասուն նշանակություն էին ձեռք բերում նրա նորահռչակ հանրապետություն լինելը, չձևավորված իրավական համակարգը, վերջինիս սահմանադրական կարգավորում չունենալը: Խորհրդարանների իրավասությունը Առաջին հանրապետությունում չուներ իրավական հստակ ամրագրում: Պետահրավական համակարգի հիմունքները որոշելիս հանրապետության հայրերը ընտրեցին կառավարման խորհրդարանական հանրապետության ձևը, որով էլ պայմանավորվեց առաջին և երկրորդ խորհրդարանների իրավասությունը: Սակայն ո՞չ հանրապետության հոչակնան պահին և ո՞չ էլ հետագա գոյության ընթացքում քայլեր չձեռնարկվեցին խորհրդարանի իրավասությունն իրավաբանութեան ամրագրելու ուղղությամբ<sup>1</sup>: Միակ իրավական ակտը, որն ա-

<sup>1</sup> Խորհրդարանի իրավասության ոչ քավարար իրավական ամրագրումը եղակի երևույթ չէ: Երկրների մի մասում խորհրդարանների իրավասությունը ենթարկված է մանրամասն իրավական ամրագրման, մյուսներում այդ իրավասությունն իրավական հստակ կարգավորում չունի:

Առողջակիորեն շոշափում էր այդ հարցը, 1918 թ. օգոստոսի 10-ին ընդունված «Հայաստանի խորհրդի նակազ»-ն էր, որում ամ-րագոված խորհրդարանական գործառնության կառուցակարգը և ընթացակարգերը հճարավորություն են տալիս անողջակիորեն փաստել խորհրդարանի իրավասության բաղադրատարրերը։ Այսպիսով, Հայաստանի առաջին հանրապետության խորհրդա-րանների իրավասության հիմնախնդիրներն ուսումնասիրելու և դրա բաղադրատարրեր վեր հանելու համար շատ թույլ ելակետ են խորհրդարանի ներքին կանոնակարգը և, անշուշտ, Հայա-ստանի խորհրդի ու Հայաստանի պառլամենտի փաստական գոր-ծունեությունը, որոնց վերաբերյալ կցկոտոր տվյալներ են պահ-պանվել դրանց նիստերի համառոտ արձանագրություններում։

Խորհրդարանների իրավասության բնույթից կամ լիազորությունների հանրագումարի տեսանկյունից պաղամենտագիտության մեջ ընդունված է առանձնացնել խորհրդարանների երեք տեսակ՝ անսահմանափակ լիազորություններով, սահմանափակ լիազորություններով և խորհրդատվական բնույթի պաղամենտներ<sup>1</sup>: Մեկ այլ դասակարգման համաձայն, որի չափանիշը խորհրդարանների իրավասության ծավալն է, առանձնացնում են երեք տեսակի խորհրդարան՝ անսահմանափակ իրավասությամբ, բացարձակ սահմանափակ իրավասությամբ, հարաբերականորեն սահմանափակ իրավասությամբ: Վերջին դասակարգման հետինակներն անսահմանափակ իրավասությամբ խորհրդարանի օրինակ են համարում խորհրդարանական կառավարման ձև ունեցող երկրների պաղամենտները՝ որպես օրինակ վկայակոչելով բրիտանական պաղամենտը, որի վերաբերյալ արժե հիշատակել հայտնի թևակոր խոսքը, որ «Խորհրդարանը կարող է անել ամեն ինչ, բացի կնոջը տղամարդ դարձնելուց և հակառակը»<sup>2</sup>: Սակայն պետք է նկատի ունենալ, որ «անսահմա-

<sup>1</sup> Sł. u xèðëèí Ä.Ä., I àðëàì áí òû â çàðóáàæí ûô ãî ñöääðñöåàõ, I ., 2006, kq 22-25:

<sup>2</sup> Stú **Áíæááðýí** Ð.Á., *Nðàáí èòáëüí íà êí í nòèòóèí íí á iðaáí*, I., 2005, t. 295-298.

նափակ իրավասությամբ խորհրդարան» հասկացությունը չի ենթադրում բացարձակություն: Եթե պետական իշխանության համակարգում գործում է թեկուզել իշխանությունների բաժանման սկզբունքը, ապա դրանով իսկ արդեն առկա է խորհրդարանի իրավասության սահմանափակում, հետևաբար «անսահմանափակ իրավասությամբ խորհրդարան» ձևակերպմանը պետք է վերաբերվել վերապահումով<sup>1</sup>:

Իրավաբանական տեսանկյունից «անսահմանափակ խորհրդարան» հասկացությունը կամ խորհրդարանի գերակայությունը, ըստ բրիտանական սահմանադրագետների, նշանակում է ընդամենը մի շարք պայմանների առկայություն, մասնավորապես՝ «ա) օրենքների գերակայություն (օրենսդրելը խորհրդարանի մեջաշնորհն է, իսկ օրենքներն ունեն բարձրագույն իրավաբանական ուժ այլ ակտերի նկատմամբ), բ) խորհրդարանի իրավագործությունը հաստատել պետական բյուջեն և սահմանել հարկեր, գ) կառավարության կողմանիվ պատասխանատվությունը խորհրդարանի առջև, դ) նման այլ մրցակցող իշխանության բացակայությունը և այլն»<sup>2</sup>:

Առաջին հանրապետության իիմնադրման եղանակը և պետական իշխանության ստեղծման առանձնահատկությունները, ներառյալ խորհրդարանական կամ պետական շինարարության փորձի բացակայությունը, կառավարման դուալիստական միապետական համակարգից անցումը հանրապետականի, պատշաճ սահմանադրական կարգավորման բացակայությունը, անսպասելիության գործոնը պայմանավորեցին այն հանգամանքը, որ առաջին խորհրդարանը իիմնադրվեց ոչ թե որպես բացարձակ

<sup>1</sup> Από αυτήν την περιοχή προέρχεται ο Καραϊσκάκης, ο οποίος σύμφωνα με την επίσημη ιστορία της Ελλάδας ήταν ο πρώτος πολιτικός που διαδέιξιε την ύπαρξη της Ελλάδας στην ιστορία.

<sup>2</sup> St'u Áí áeáaðýí B.A., Éí i nñöòðööéí ííà ðåçâéðéá á nñi áðáà áííí i èðá. Í nñi áái ûá ðáí ááj öéé. J., 2007, f. 356:

սահմանափակ իրավասությամբ խորհրդարան կամ հարաբերականորեն սահմանափակ իրավասությամբ խորհրդարան<sup>1</sup>, այլ անսահմանափակ իրավասությամբ խորհրդարան: Նման կարգավիճակի «ավանդույթները» շարունակեց Հայաստանի պառլամենտը: Լինելով անսահմանափակ իրավասությամբ խորհրդարաններ՝ դրանց իրավասության առանձին, լիարժեք և կիմնական տարրեր էին օրենսդիր լիազորությունը, բյուջետային լիազորությունը, գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողական իրավասությունը՝ իր բազմազան լիազորություններով հանդերձ, իրավասությունը դատական իշխանության ոլորտում:

## § 2. Խորհրդարանի օրենսդրական իրավասությունը և օրինատեղծագործության կառուցակարգը

Օրենսդրական իրավասությունն օրենքներ ընդունելու լիազո-  
րությունների համակցություն է, որը կազմում է խորհրդարանի  
ամբողջ իրավասության գլխավոր մասը, և որի կեսագործումը  
խորհրդարանի գործունեության մեջ զբաղեցնում է ամենամեծ  
տեղը: Ընդ որում, Հայաստանի դեպքում խոսքը և՝ օրենքների ըն-  
դունման, և՝ դրանց հրապարակման մասին է, որովհետև այստեղ  
վերջին գործառույթը ևս իրականացնում էր խորհրդարանը: Օ-  
րենքների հրապարակման գործընթացին չեր մասնակցում որևէ  
այլ արտախորհրդարանական մարմին: Ռուսական կայսրության  
«Հիմնական պետական օրենքների հավաքածուն»՝ 1906 թ. ապ-  
րիլի 23-ի խմբագրությամբ, սահմանում էր, որ օրենսդիր իշխա-  
նությունն իրականացնում է կայսրը՝ Պետական դրումայի և Պե-  
տական խորհրդի հետ համատեղ: Ընդ որում, կայսրն ուներ օ-  
րենսդրական նախաձեռնության և բացարձակ վետոյի իրա-

<sup>1</sup> Առաջին հանրապետության խորհրդարանները չի կարելի դիմուլ որպես քացարձակ սահմանափակ կամ հարաբերականորեն սահմանափակ իրավազորությանք խորհրդարաններ, որովհետև Հայաստանում չկար խորհրդարանի օրենսդիր իրավագործության շրջանակի մեջ մտնող հարցերի սահմանափակում, ինչպես նաև ուսանուածին կամ այլ ինքնուրույն անտության ասպարենտունացում:

վունք<sup>1</sup>: Նման սահմանադրական կարգավորման պայմաններում Հայաստանի խորհրդարանները օրենսդրման ոլորտում յուրացրել էին և կայսեր, և Պետական դումայի իրավունքները:

Օրենքների՝ որպես խորհրդարանի ղնդրունած ակտերի գերակայությունը խարսխված է այն հիմնադրույթի վրա, որ դրանք ժողովրդի ընդհանուր կամքն արտահայտող մարմնի ակտեր են և կարգավորում են կարևոր, կայուն հասարակական հարաբերությունները: Հայաստանի խորհրդող՝ խորհրդարանի կարգավիճակ ունեցող առաջին մարմինը, ստեղծվեց որպես «պետական իշխանության բարձրագույն օրենսդիր մարմին»: Այդ են վկայում Հայաստանի խորհրդի անդրանիկ՝ բացման կամ հիմնադիր նիստին Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի փոխնախագահ Ա. Սահակյանի հետևյալ խոսքերը. «Քաղաքացիներ, պատզամապորներ Հայաստանի խորհրդի՝ Գերագույն Հայոց Ազգային խորհրդի կողմից ես պատվի ունիմ այսօր քաց անել անդրանիկ նիստը Հայաստանի Խորհրդի և հայուարաել, որ այսուհետև սա է միակ լիազոր մարմինը ամփոփող իր մեջ Հայաստանի Հանրապետության պետական իշխանությունը: ... Կազմակերպված է վերջնականացնեալ և Հայաստանի խորհրդող, իրու երկրի օրենսդիր բարձր մարմին»<sup>2</sup>:

Պառլամենտագիտության մեջ, ըստ խորհրդարանի օրենսդրական իրավասության ամրագրման բնույթի, խորհրդարաններն ընդունված է բաժնել երեք խմբի՝ բացարձակ անսահմանափակ, բացարձակ սահմանափակ, հարաբերական սահմանափակ օրենսդրական իրավասությունով<sup>3</sup>: Եթե այս տեսանկյունից դիտարկենք Առաջին հանրապետության օրենսդրի իշխանության

<sup>1</sup> Stiu Nāi ä iññ iññ ñüö çäéé iññâ, 1906 å., 23 àíðäéë, nö. 7, 8, 9. /å éí. Öä+ñâå Ä.E., I ðeññâå I Å., Èññòì ðëë yññ ñöääðñöåà è iññâå Ðiññè XIX-XX åå.: Õáí ééñ, 2000, tÿ 82-83:

<sup>2</sup> Stéu << UU, §. 198, q.1, q. 11, p. 32-33:

<sup>3</sup> St'u Ḳ̓ī nōeōdōeīñīā iñdaāi q̓adōaāéūñō nōdāi. Ḳ̓īā iñáuáé ñaaāéëeåé ñ. A. Áåäéäy, P.E. Eäéái, Ḳ̓ī. Yí ñeīá. I., Iñdi a, 2005, t<sub>q</sub> 309: Áiæåäöyí ñ. A., Nñdaái ñeåäüñiā eíññóeōdōeīñiā iñdaāi... t<sub>q</sub> 297:

իրական մողելը, ապա կարող ենք եզրակացնել, որ երկու խորհրդարաններն էլ՝ և Հայաստանի խորհուրդը, և Հայաստանի պառլամենտը, իրենց օրենսդրական իրավասության բնույթով բացարձակ անսահմանափակ օրենսդրական իրավասությամբ խորհրդարաններ էին, քանզի դրանք իրավաբանորեն օժտված էին իրավագործությամբ՝ ընդունելու օրենքներ ցանկացած հարցով։ Առաջին հանրապետության ոչ մի օրենսդրական ակտով թվարկված չէր հարաբերությունների որևէ շրջանակ, որը չէր կարող քննարկվել խորհրդարանում և լուծվեր դրա ընդունած օրենքով<sup>1</sup>։ «... պարզագոյն ձևեր են ՀՀ գործող օրենսդիր օրգանն ու օրինադրման ձևը։ Մենք ունենք մեկ հասիկ մարմին, որմ իրավունք ունի մենակ և անբաժան գործադրելու օրենսդրական իշխանությունը. մեզանում գոյություն չունի ոչ 2-րդ պալատ, ոչ հանրապետության նախագահ, կամ որևէ այլ հիմնարկություն ու պաշտոնատար անձ, որմ իրավատեր լիներ բաժանելու օրենսդիր իշխանություն բանեցնելու իրավասությունը Հայաստանի խորհրդի հետ։ Միայն այն կարգադրությունն է օրենք մեզանում, ինչ որ Խորհրդարանն է սահմանում. և ինչ որ սահմանում է Խորհրդարանը – օրենք է»<sup>2</sup>։

Անշուշտ, խորհրդարանի օրենսդրական իրավասության բացարձակ անսահմանափակ բնույթը, որ հաստատվեց սկզբնական շրջանում, կայուն կարգավիճակ չէր, որովհետև նույնիսկ երկու և կես տարվա գործունեության ընթացքում նկատվում էր դրա, այսինքն՝ օրենսդրական իրավունքների սահմանափակման միտում։ Այդ միտումը դրսևորվում էր նախ նրանով, որ օրենսդրական նախաձեռնության իրավունքը մեծապես կենտրոնանում էր կառա-

վարության ձեռքին, և երկրորդ՝ Առաջին հանրապետության պետական կառուցակարգում պատվիրակված օրենսդրման յուրահատուկ ինստիտուտի դրսևորմամբ։ Նույնիսկ այս դեպքում խորհրդարանը, հատկապես Հայաստանի պառլամենտը, ձգուու էր իր ձեռքում կենտրոնացնել վերահսկողությունը պատվիրակված օրենսդրության նկատմամբ։

Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանների օրենսդրական իրավասություններն իրենց բնույթով, իրավական կարգավորման առանձնահատկություններով իրարից չէին տարբերվում։ Ուստի օրենսդրական իրավասության հետազոտումը չենք կատարի հատվածարար, առանձին-առանձին, հատկապես որ երկուսն էլ գործել են օրենսդրական գործունեության նույն կառուցակարգի հիման վրա։ «Հայաստանի խորհրդի նախագ»-ի 4-րդ գլուխ (Խորհրդում գործերի վարույթի կարգը) առաջին բաժինը, որ նվիրված էր «օրենսդրական գործերի քննարկման կարգին», կարգավորում էր օրենսդրական գործընթացը խորհրդարանում։ Այստեղ այդ կարգավորումը վերաբերում էր օրենսդրական գործընթացի միայն ներխորհրդարանական փուլին, չէր ներառում օրենսդրական նախաձեռնության և այնուհետև օրենքների հրապարակման ու ուժի մեջ մտնելու հարաբերությունների կարգավորումը։ Սա, անշուշտ, «նախագի» թերություններից էր, որը, սակայն, հետագայում մասնավոր ընթացիկ օրենքներով ներառվեց օրենսդրական կարգավորման շրջանակի։

Սովորաբար օրենսդրական գործընթացը ենթադրում է օրենսդրական նախաձեռնության, օրինագծի քննարկման, օրինագծի ընդունման, օրենքի հաստատման և հրապարակման, ինչպես նաև ուժի մեջ մտնելու փուլերը։ Նշված փուլերից խորհրդարանի կանոնակարգը կարգավորում էր օրինագծի քննարկման և օրինագծի ընդունման փուլերը։ Մնացած փուլերի կարգավորումը սկզբնական շրջանում կատարվում էր իին օրենսդրության հիման վրա, սակայն հանրապետության պետական կառուցակարգի ձևավորմանը զուգընթաց՝ դրանք ևս ենթարկվեցին կարգավոր-

<sup>1</sup> Խորհրդարանների իրավասության, ներառյալ օրենսդրական, կարգավորման անհատակությունը բնորոշ է շատ երկրների։ Բայց, այդուհանդերձ, բոլոր երկրներում սահմանադրական ակտերը խորհրդարանների իրավասության շրջանակ են ներառում օրենսդիր, բյուջետային, վերահսկողական, արտաքին քաղաքական և մի շարք այլ բնույթի ոլորտները (տե՛ս Էնինօծօծօծին իշակ չածօաք նօ նօձաւ..., էջ 308)։

<sup>2</sup> Տե՛ս «Զանգ», թերթ, Եր., 1918, 20 սեպտեմբերի, թիվ 55 (71)։

ման զուտ հանրապետական, ընթացիկ օրենքներով:

**Օրենսդրական նախաձեռնության փուլը:** Օրինագիծը, որպես կանոն, քննարկման ենթակա էր, եթե այն նախաձեռնված էր պատշաճ սուբյեկտուների կողմից և համապատասխանում էր սահմանված կանոններին: Ըստիանրապես, կախված օրենսդրական նախաձեռնության սուբյեկտից, տարրերում են նաև ժողովրդական և հատուկ նախաձեռնությունները (պետական արտախորհրդարանական որոշ մարմինների իրավունքը՝ կատարել օրենսդրական նախաձեռնություն): Օրենսդրական նախաձեռնության սուբյեկտուների շրջանակի հարցը օրենսդրական հստակ կարգավորման ենթարկված չէր: Խորհրդարանների արձանագրությունների հետազոտությունը ցույց է տալիս, որ վերը նշված երկու տեսակներն Առաջին հանրապետությունում գոյություն չունեին: Հայաստանի առաջին հանրապետությունում ընդունված էր օրենսդրական նախաձեռնության երկու տեսակ՝ կառավարական (քայլ ոչ պետության գլխի) և խորհրդարանական<sup>1</sup>: Խորհրդարանի կանոնակարգը կարգավորում էր միայն օրենքների քննարկման և ընդունման կարգը: Իսկ դրանց նախորդող հարաբերությունները դուրս էին մնացել օրենսդրական կարգավորման շրջանակից: Արխիվային փաստաթղթերի հետազոտությունը վկայում է, որ Հայաստանի երկու խորհրդարաններում էլ օրենսդրական նախաձեռնության իրավունքով օժտված էին կառավարությունը, խորհրդարանի պատգամավորը և խորհրդարանի հանձնաժողովները<sup>2</sup>:

<sup>1</sup> Խորիրդարանական օրենսդրական նախաձեռնությունը, որպես կանոն, ընդունված է բոլոր պետություններում, և դրա սուբյեկտներ են համարվում անհան պատգամավորը, պատգամավորների խմբը, Աշտական հանճնաժողովները և այլն (տե՛ս Էջ 1 հոդվածութեան 1 համար, Էջ 323: **Անձնագիր Դ.Ա.**, Նույն հոդվածութեան 1 համար, Էջ 1 հոդվածութեան 1 համար, Էջ 314):

<sup>2</sup> Ορθόστατη παραγγελία της Επιτροπής Αναπομπών στην Κυβερνητική Διεύθυνση Πολιτισμού, έκδοση 1998, σελ. 12.

Օրինաստեղծագործության այս փուլի հարաբերությունների իրավական կարգավորմանն առաջինն անդրադարձավ կառավարությունը։ Վերջինս օրինագծերը դնում էր քննարկման նախարարների խորհրդի նիստում, այնուհետև, եթե օրինագիծը հավանության էր արժանանում կառավարության կողմից, այն ուղարկվում էր խորհրդարան՝ պատշաճ կարգով ընթացքի մեջ դնելու համար։ Կառավարությունը կարող էր օրինագիծը հայտարարել շտապողական<sup>1</sup>։ Այդ դեպքում խորհրդարանը պետք է անցկացներ արագացված քննարկում։ Կառավարությունը հենց սկզբից կանխեց նախարարությունների կողմից, այսպես կոչված, «օրենսդրական առաջարկության» ինստիտուտի կիրառումը, եթե որ օրենսդրական նախաձեռնության սուբյեկտը միայն առաջարկում կամ գաղափար է տալիս ընդունելու, փոխելու կամ վերացնելու օրենքը։ 1919 թ. մայիսի 2-ին վարչապետի պաշտոնակատարը բոլոր նախարարներին ուղարկել էր շրջաբերական, որով նրանց պարտադրվում էր իրենց առաջարկությունները «Մինիստրների խորհուրդ ներկայացնել գրավոր կերպով, նախօրոք, և այն առաջարկություններին, որոնք պահանջում են օրենսդրական լուծում, կցել անպայման օրինագիծ»։ Իհարկե, այդ պահին կառավարությունն ուներ օրենսդրական լիազորություններ և նրա համար շատ դժվար էր հանպատրաստից ձեռնարկել օրենսդրական գործընթաց, որով և պայմանավորված էին շրջաբերականի պահանջները։ Սակայն հետագայում, եթե սկսեց գործել Հայաստանի պառլամենտը, նկատվում էին օրենսդրական նախաձեռնության կարգի խախտումներ, ինչը հանգեցրեց խորհրդարանի կողմից հարցի քննարկմանը (10 հոկտեմբերի, 1919 թ.): Քննարկման նախաձեռնողը պատգամավոր Վ. Փափազյանն էր, որն առաջարկում էր այնպիսի կարգ սահմանել, որով բոլոր օրինագծերը

<sup>1</sup> Օրինակ՝ կառավարությունը 1919 թ. հունվարի 27-ի նիստում հաստատված օրինագիր կապակցությամբ կայացրել է հետևյալ որոշումը. «Օրինագիրն հավանություն տալ և ներկայացնել Հայաստանի խորհրդին՝ ի հաստատություն՝ հայտնելով շտապողականությունը» (տե՛ս ՀՀ ԱՍ, ֆ. 199, գ. 1, գ. 14, 1-ին մաս, թ. 19):

խորհրդարան մտնեն նախարարների խորհրդի անունից, այլ ոչ թե առանձին նախարարների կողմից<sup>1</sup>: Քանի որ Նախարարների խորհուրդը «հավաքական պատասխանատուն» էր, ուրեմն, որպես նրա համաձայնության հավաստիք, բոլոր օրինագծերը պետք է կրեին նախարարապետի և համապատասխան նախարարի ստորագրությունները: Ֆինանսական բնույթի օրինագծերը (վարկային խնդրանք, հարկային, բյուջետային և այլն) անպայման պետք է կրեին նաև ֆինանսների նախարարի ստորագրությունը, որովհետև նա էր միակ պատասխանատուն պետական բյուջեի հավասարակշռության և համաչափության համար:

1919 թ. նոյեմբերի 28-ին Հայաստանի պառլամենտն ընդունեց օրենք «Կառավարության կողմից պառամենտ մտնող օրինագծերի ձևի մասին», որով ամրագրվեց հետևյալը. կառավարության կողմից Հայաստանի խորհրդարան մտնող յուրաքանչյուր օրինագծի պետք է կրի վարչապետի և համապատասխան նախարարի ստորագրությունները, իսկ ֆինանսական բնույթ ունեցող օրինագծերը՝ նաև ֆինանսների նախարարի ստորագրությունը<sup>2</sup>: Սակայն նույնիսկ այս օրենքի ընդունումից հետո նախարարությունները շարունակում էին օրինագծերը ներկայացնել օրենքի խախունով: Նախարարների խորհրդի գործերի կառավարիչը 1919 թ. դեկտեմբերի 23-ին ստիպված շրջաբերական նամակ է հղում բոլոր նախարարություններին՝ պահանջելով օրինագծի ձևին ներկայացվող կանոնների պահպանում: Նամակում արձանագրված է, որ «Կառավարության դիվանը ստիպված է լինում երեսն մի քանի անգամ վերադարձնել օրինագծերը, մինչև որ միջնասորությունը կկատարի օրինագծերը ներկայացնելու պահանջված ձևականությունները: Այդ հանգամանքը տեղիք է տալիս երկուստեք ավելորդ գրագրության, ժամանակի կորսույան, որի հետևանքով հաճախ կառավարության դիվանը հնարավորութ-

*յուն չի ունենում օրինագծերը ժամանակին ներկայացնել պառլամենտում»<sup>1</sup>:*

**Օրինագծի քննարկումը:** Ըստ «նակազի»՝ խորհրդարանը առանց հանձնաժողովների քննարկման և նրանց ներկայացրած գեկուցման չեր կարող ձեռնարկել օրինագծի քննարկում: Խորհրդարանի ստացած օրինագծերի (կառավարական) և օրենսդրական հայտարարությունների մասին մոտակա նիստերից մեկում գեկուցվում էր խորհրդարանի ընդհանուր ժողովին: Այնուեւս օրենսդրական հայտարարությունները և օրինագծերը խորհրդարանի որոշմամբ փոխանցվում էին համապատասխան խորհրդարանական հանձնաժողովին: Բոլոր օրինագծերը, որ հանձնաժողովներից փոխանցվում էին ընդհանուր ժողովին, ենթակա էին երեք քննարկումների:

Օրինագծի քննարկումը սկսվում էր դրա հիմնական դրույթների ընդհանուր քննարկումով (առաջին ընթերցում), որից հետո նիստի նախագահողը քվեարկության էր դնում օրինագիծը հոդված առ հոդված քննարկելու հարցը: Եթե դա քվեարկությամբ մերժվում էր, ապա օրինագիծը համարվում էր չընդունված: Երկրորդ և երրորդ ընթերցումների առարկան օրինագծի հոդված առ հոդված քննարկումն էր: Սակայն տարբերությունն այն էր, որ երկրորդ քննարկման ընթացքում կարելի էր անել փոփոխությունների և լրացների գրավոր առաջարկներ, իսկ երրորդ ընթերցման ժամանակ՝ ոչ:

Եթե օրենսդրական նախաձեռնության հեղինակը կառավարությունն էր, ապա օրինագիծը նախքան խորհրդարանի քննությունը տրվում էր համապատասխան հանձնաժողովներին՝ ելնելով օրինագծի բովանդակությունից: Եթե օրինագիծն օրենսդրական բնույթի էր, հաճանակում էր օրենսդրական հանձնաժողովին, ֆինանսականի դեպքում՝ ֆինանսականին և այլն: Հանձնաժողովում քննարկելուց հետո օրինագիծը հանձնաժողովի եզրակացությամբ հանձնվում էր խորհրդարանի քննարկմանը: Իսկ եթե օ-

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ԱՍ, ֆ. 199, գ. 1, գ. 58, թ. 116:

<sup>2</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության, Օրենքների հախաքածու, հրատ. Պարլամենտի, 1919 թ., դեկտեմբերի 5, Երև., թիվ 6, հոդվ. 70, էջ 47-48:

թենսղրական նախաձեռնության հեղինակը հանձնաժողովն էր, ապա խորհրդարանի նախագահության կողմից նիստում հայտարարվելուց հետո այն անմիջապես մտնում էր հաջորդ նիստի օրակարգ: Խորհրդարանի ընդհանուր նիստի քննարկմանը հասած օրինագծերը կարող էին լինել երկու տեսակ՝ սովորական կամ ոչ շտապողական և շտապողական: Սովորական օրինագծերի դեպքում 2-րդ և 3-րդ ընթերցումների միջև եղած ժամանակամիջոցը լինում էր 3 օրից ոչ պակաս և 7 օրից ոչ ավելի: Շտապողական ժամանակամիջոցը օրինագծերի դեպքում այդ ժամանակամիջոցը սովորաբար կրճատվում էր:

**Օրինագծի ընթացումը:** Երրորդ ընթերցման ժամանակ հոդված առ հոդված քվեարկվելուց հետո նախագահովով քվեարկության էր դնում հարցն այն մասին, թե ընդունում է արդյոք խորհրդարանն օրինագիծն ամբողջությամբ: Դրական ելքի դեպքում օրինագիծը համարվում էր ընդունված: Խորհրդարանի ընդունած օրինագիծը հանձնվում էր խորհրդարանի խմբագրական հանձնաժողովին, որը խմբագրում էր օրինագծի վերջնական տեքստը, իսկ այնուհետև օրինագիծը ներկայացնում էր ընդհանոր ժողովի հաստատմանը:

**Օրենքի հաստատումը և հրապարակումը:** Խորհրդարանի ընդունած օրինագիծը, որպես կանոն, անցնում է հաստատման (կամ ստորագրում) և հրապարակման (պրոմուգացիա) փուլերը: Խորհրդարանական կառավարման ձև ունեցող հանրապետության համար առաջանում էր օրինաստեղծ գործընթացի այս երկու փուլերից հատկապես առաջինի հիմնախնդիրը, որովհետև խորհրդարանական հանրապետությունում օրենքի ստորագրությունը սովորաբար կատարում է պետության գլուխը: Առաջին հանրապետության պետական կառավարման առանձնահատկություններից ելնելով՝ երկի թե այդ գործառույթը պետք է կատարեր ՀՀ վարչապետը: Սակայն Առաջին հանրապետության քաղաքական վերնախավը ընտրեց այդ ուղին: Ամենայն հավանականությամբ, օրենքները ստորագրելու և հրապարակելու հարցին չորվեց օրինաշափ լուծում, որովհետև դա ձեռնտու չէր ո՞չ դաշ-

նակցականներին, ո՞չ էլ Հայաստանի խորհրդի մյուս խմբակցություններին: 1918 թ. օգոստոսին վարչապետ ընտրված ուրույն քաղաքական գործիչ Հ. Քաջազնունին դաշնակցության համար անվերապահորեն ընդունված չէր: Նրա վարչապետ ընտրվելը քաղաքական փոխվահումների արդյունք էր: Հենց այդ հանգամանքն էր պատճառը, որ օրենքների հաստատման իրավունքը հանրապետության վարչապետին չվերապահվեց: Հետագա իրադարձությունները՝ դաշնակցության կողմից Հ. Քաջազնունու մեկուսացումը և չեղոքացումը, նրա՝ արդեն հետհանրապետական շրջանում բռնած դիրքորոշումը հաստատում են այս ենթադրությունը, բացատրում օրենքների հաստատման նման ինստիտուտ հիմնադրելու քաղաքական դրդապատճառները:

Համաձայն «Հայաստանի խորհրդի նակագի» 61-րդ հոդվածի՝ խորհրդարանի ընդունած օրինագիծը հանձնվում էր խմբագրական հանձնաժողովին, որը, հաստատելով օրինագծի վերջնական շարադրանքը, այն ներկայացնում էր խորհրդարանի ընդհանուր ժողովի հաստատմանը: Խորհրդարանի կանոնակարգը չէր կարգավորում ընդունված օրենքի հետագա ճակատագիրը: Խորհրդարանի գործունեության առաջին իսկ օրից նկատվեց այս բացը: Այս դեպքում չէր կարող գործել կայսերական իին օրենսդրությունը, որովհետև օրենքների հրապարակման միապետական կառուցակարգը չէր համապատասխանում խորհրդարանական հանրապետության կառավարման ձև ունեցող իշխանական կառույցին: Հանրապետական օրենսդրությամբ բաց էր մնացել օրենքների հաստատման և հրապարակման գործընթացի կարգավորումը: Այդ հարցը դարձավ վիճահարույց, վերածվեց բանավեճի կառավարության և խորհրդարանական որոշ ուժերի, խորհրդարանի տարբեր խմբակցությունների միջև<sup>1</sup>: Դա վկայում է դաշնակցական օրգան «Զանգ» թերթում հրապարակված հոդվածը,

<sup>1</sup> Այդ հաստատվում է Հայաստանի խորհրդի 1918 թ. սեպտեմբերի 11-ի և 24-ի նիստերի, թեկուզ քողովիկ, արձանագրություններով («Կառավարության լրաբեր», պաշտոնաթերթ, 1918թ., սեպտեմբեր, թիվ 4, «Զանգ», թերթ, Եր., 1918, սեպտեմբեր, թիվ 60(75):

որի հեղինակն ամեն կերպ փորձում է հիմնավորել, որ օրենքների հրապարակումը գուտ խորհրդարանական գործառույթ է. «Եվ վերջապես այդ մեկ հատիկ օրենսդիր մարմինը (Հայաստանի խորհուրդը) ինքնի սահմանում ազատորեն օրենք հրատարակելու կարգն ու եղանակը և գոյուրյուն չտնի որևէ այլ մարմին կամ իշխանության կողմից սահմանված, խորհրդարանի համար դրսից հրամանագրված և պարտադիր իրավական կանոն օրենքներ հրատարակելու և հաստատելու կարգի վերաբերյալ: Մեկ հատիկ և կատարելապես լիազոր, որևէ ուրիշ իշխանությունից չսահմանափակված օրենսդիր հիմնարկություն և մեկ օրենսդրական եղանակ գոյուրյուն ունեն ՀՀ մեջ ամեն խնդիր, առարկայի և գործի վերաբերյալ ամեն տեսակ օրենքներ դնելու և վերացնելու համար: Հայաստանի պետական խորհրդարանն է այդ հիմնարկությունը, սրա կազմի ծայների մեծամասնության վճիռն է այդ եղանակը: Հետևապես, մեզանում օրենքի իրավական ծագման վավերականության ստուգումը՝ պարզապես խորհրդարանի համապատասխան նիստի և որոշման օրինավորության հարցի ստուգումն է:

Ինչպես հայտնի է, յուրաքանչյուր կողեզրայի նախագահի իրավունքն ու պարտականությունն է՝ հետանոել և վերահսկել ժողովի նիստի օրինապահության սահմաններից չշեղվելու վրա, իսկ օրինավոր ճանաչելու վերին իրավունքը, երբ խնդիրը գերազույն մի ժողովի (պարլամենտի) նիստի է վերաբերում, պատկանում է բնականորեն նույն այդ ժողովին. այդ օրինավորության վավերագիր-ապացույցը – նույն նիստի արձանագրությունն է՝ պատշաճավոր կերպով վավերացված: Հետևապես, Խորհրդարանի նախագահի վկայությունն ու վավերացումը լուծում է մեզանում օրենքի ծագման վավերականությունն հաստատելու խնդիրը: Այդ ակտը կատարվում է նախագահի պարզ մակագրությամբ՝ տվյալ օրենքը հրապարակելու մասին: Նույն մակագրական կարգադրությունը խորհրդարանի նախագահի պարտականությունն ու իրավունքն է նաև մի այլ տեսակետով: Օրենքը խորհրդարանի մի վճիռ է, որը սահմանվում է երկրում, ժողովրդի ու կառավարութ-

յան կողմից կատարվելու համար. Երկրում կատարելու համար օրենքը պետք է, այսպես ասած, դուրս գա խորհրդարանի դահլիճի պատերից և հաղորդվի դրսի աշխարհին, ընդհանրությանը. օրենքի հրապարակումն այն առաջին քայլն է, որ նախապայմանն ու անհրաժեշտ ինքնի է հանդիսանում օրենքի գործադրման. յուրաքանչյուր կողեզրայի (քազմանձնյա աստիճանի) վճիռների գործադրման մասին առաջին և զիսավոր հոգացողը և կարգադրողն ի պաշտոն հանդիսանում է նույն կողեզրայի նախագահը: Հետևապես Հայաստանի խորհրդի նախագահին է պատկանում օրենքի հրապարակման պատշաճավոր կարգադրությունը, որպես մեր պարլամենտական կողեզրայի դրած վճորի (օրենքի) գործադրման մասին հոգալու մի ակտ:

Օրենքի հրապարակման կարգադրությունը և հսկողությունը մեզանում բնականարար Խորհրդարանի նախագահին պատկանող մի ֆունկցիա է: Նույն կարգով է լուծվում նաև օրենքի հրատարկելիք բովանդակության ստուգության և ճիշտ սրբագրության խնդիրը: Օրենքի իսկական բնագիրը մեզանում պետք է որոշել Խորհրդարանի համապատասխան նիստի արձանագրության մեջ, որի անբաժան մասն է նա կազմում: Այդ բուն բնագրից բնողորինակած պատճենը, Խորհրդարանի ավագ քարտուղարի ձեռքով վավերացված նախագահի մակագրությամբ հանձնվում է տպագրության»<sup>1</sup>:

Ինչպես տեսնում ենք, հողվածագիրը, որը կատարել է խորհրդարանի դաշնակցական խմբակցության պատվերը, լրիվ միակողմանի դիրք ընդունելով, անտեսելով այդ հարցում համաշխարհային փորձը, իմնավորել է, որ Հայաստանի համար բնական և օրինաչափ է օրենքի հաստաման ու հրապարակման գործառույթը խորհրդարանում կենտրոնացնելը: Հակամարտության հետևանքը եղավ այն, որ 1918 թ. սեպտեմբերի 24-ին Հայաստանի խորհուրդն ընդունեց օրենք «Օրենքները պահելու և հրատա-

<sup>1</sup>Տե՛ս «Չանգ», թերթ, Եր., 1918, 20 սեպտեմբերի, թիվ 55(71):

րակելու մասին»<sup>1</sup>: Փոփոխելով և լրացնելով հին օրենսդրությունը՝ այս օրենքը սահմանեց, որ օրենքների բնագրերը պահպում են Հայաստանի խորհրդում: Օրենքի խևական բնօրինակ էր համարվում Հայաստանի խորհրդի կողմից հաստատված վերջնական բնագրը՝ վավերացված խորհրդի նախագահի և ավագ քարտուղարի ստորագրություններով: Այսպիսով, օրենքի հաստատման լիազորությունը Հայաստանի խորհուրդը վերապահեց խորհրդարանի նախագահին: Նա դեկավարում էր նաև օրենքների հրապարակման գործընթացը: Հայաստանի խորհրդի կողմից հաստատվելուց հետո օրենքի կրկնօրինակները՝ վավերացված խորհրդի ավագ քարտուղարի կողմից, խորհրդի նախագահի կարգադրությամբ տրվում էին «Օրենքների հավաքածու»-ում տպագրելու, հրապարակելու<sup>2</sup>: Այսպիսով, 1918 թ. սեպտեմբերի 24-ի «Օրենքները պահելու և հրատարակելու մասին» օրենքը հիմնեց նաև «Օրենքների հավաքածու», որի տպագրության ու սրբագրության աշխատանքները դեկավարում էր խորհրդարանի դիվանի համապատասխան պաշտոնյան՝ օրենքների բաժնի վարիչը: Վերջինս նշանակվում էր խորհրդարանի նախագահի կողմից և գործում էր նախագահի «վերին հսկողությամբ»:

Հայաստանի պառլամենտի դիվանի կազմում կար նաև «օրենքների բաժին»՝ վարիչի գլխավորությամբ, որը ենթարկվում էր պառլամենտի նախագահին և գրադում էր «Օրենքների հավաքածուի» հրատարակմանը<sup>3</sup>: Եթե Հայաստանի խորհուրդը «օրենքների հավաքածուն» հրապարակել է տարեկան ժամանակագրական ինկորպորացիայի տեսքով, ապա Հայաստանի պառլամենտն օրենքների հրապարակումն իրականացնում էր ամսական ժամանակագրական ինկորպորացիայի ձևով:

Հայաստանի խորհրդի հրատարակած օրենքների հավաք-

ծուն կրում էր «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները» վերտառությունը՝ առանձին բաժիններով՝ 1918 և 1919 թթ.: Օրենքները դրանում ունեին հոդվածային համարակալում, հաստատման օրվա նշում: Ժողովածուի վերջում կար ժամանակագրական ցանկ՝ «Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները» վերտառությամբ, 1918 և 1919 թթ. համար առանձին-առանձին: Այդ ցանկում նշված էին օրենքների հաստատման օրը, ամիսը, տարին, հոդվածային համարը, վերտառությունը և «Կառավարության լրաբերում» հրատարակման օրը, համարը: Հետաքրքիր է, որ օրենքների հավաքածուի մեջ չկար «Հայաստանի խորհրդի նակազը»: Ժողովածուն ավարտվում է հոդված 116 կարգային համարն ունեցող «Հայաստանի խորհրդի պարագաներների դադարեցման մասին» 1919 թ. հունիսի 5-ի օրենքով: Ինչպես գիտենք, 1919 թ. ապրիլի 27-ից սկսած մինչև 1919 թ. օգոստոսի 1-ը օրենսդրական լիազորությունները փոխանցված էին կառավարությանը, որն ընդունել էր բավականին մեծ թվով օրենքներ, սակայն դրանք չեն հրապարակվել: Տարօրինակ է, թայց ոչ բուն ժողովածուի մեջ, ոչ էլ նրա ժամանակագրական ցանկում նշված չէ նաև «Հայաստանի պառլամենտի ընտրությունների մասին» օրենքը:

Հայաստանի պառլամենտում պահպանվեց Հայաստանի խորհրդի կողմից սահմանված օրենքների հաստատման և հրապարակման կարգը: Սակայն այստեղ օրենքները տպագրվում էին «Օրենքների հավաքածու» հրատարակություն պարլամենտի» վերտառությամբ՝ պարբերական համարներով: Դրանք կազմված էին այնպես, որ էջակալումը և օրենքների հոդվածային համարները շարունակական էին, այնպես որ կարող էին միացվել և դառնալ տարեկան ժողովածու: Դրա համար, օրինակ, 1919 թ. վերջին համարում տրված էին «Օրենքների հավաքածու»-ի բովանդակությունը՝ ըստ պրակտիկի, դրանց հրապարակման օրը, յուրաքանչյուրում ընդգրկված օրենքների հոդվածային համարները և

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները, 1918 թ., հոդվ. 12, էջ 7-8:

<sup>2</sup> Մինչև «Օրենքների հավաքածու»-ի ստեղծումը, օրենքները հրապարակվում էին «Կառավարության լրաբեր» կոչված պաշտոնաթերթում՝ հայերեն և ռուսերեն:

<sup>3</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետություն, Օրենքների հավաքածու, հրատ. Պարլամենտի, 1919 թ., նոյեմբերի 24, Եր., թիվ 4, հոդվ. 41, էջ 29:

Էջերը: Միաժամանակ կար նաև 1919 թ. օրենքների ցանկը՝ ըստ պրակի, հրապարակման օրվա, համարի, օրենքի վերտառության, հաստատման ու հրապարակման կարգադրության օրվա և հավաքածուի էջերի: Ժողովածուն եզրափակում էր այբբենական ցանկը՝ ըստ ազգանունների և նյութերի, որոնց դիմաց նշված թիվը ցույց էր տալիս օրենքի հոդվածային համարը: Ժողովածուի ամենավերջում գետեղված էին էական վրիփակները՝ ըստ օրենքների համարների:

Հայաստանի պառամենտի «օրենքների հավաքածու»-ի մեջ, բացի օրենքներից, տեղ են գտել նաև խորհրդարանի մի շարք որոշումներ, ինչը չենք նկատում Հայաստանի խորհրդի դեպքում: Երկու խորհրդարանների որոշումներն էլ կանոնավոր չեն հրատարակել, և դրանց միակ հավաստի աղբյուրը նիստերի կցկոտոր պահպանված արձանագրություններն են: Այսպիսով, ինչպես տեսանք, Հայաստանի խորհրդը օրենքների հաստատման և հրատարակման գործը կենտրոնացրեց իր ձեռքում՝ որպես սեփական լիազորություն: Նույն կարգով գործեց նաև պառամենտը: Սակայն օրենքի հաստատման և հրապարակման գործընթացը սովորական վարույթ չէ: Անշուշտ, վերջնական նպատակն այն է, որ յուրաքանչյուր որ՝ անհատ, պետական մարմին, հասարակական կազմակերպություն, հնարավորություն ունենա իմաստու, թե որ պահանջներն են օրենք, և որն է այդ օրենքի բովանդակությունը: Այսինքն՝ պաշտոնական հրատարակությունը նպատականդված է հանրության իրազեկմանը և օրենքների կենսագործման ապահովմանը: Սակայն օրենքների պաշտոնական հրատարակությունը նպատականդված է այլ որակ՝ վավերականությունը: Հետաքրքիր է այն փաստը, որ այս խնդիրն առաջացել է նաև Առաջին հանրապետությունում: Այսպես, 1918 թ. սեպտեմբերի 20-ին «Զանգ» թերթում լրիս է տեսել «Օրենքների հրապարակման կարգի խնդիրը մեզանում» վերտառությամբ հոդվածը, որտեղ անանուն հեղինակը նշում է. «Օրենքը է միայն այն կարգը կամ կանոնը, որը որոշ օ-

րինավոր եղանակով է առաջ եկել ու հաստատվել: Մի օրենքը հրապարակելիս՝ պետք է նախապես ստուգվի նրա օրինավոր եղանակով հաստատված լինելը: Օրենքը է միայն այն բովանդակությունը, այն բնութագիրը, որը աչքի առաջ է ունեցել և հաստատել օրենադիր մարմինը: Օրենքը հրապարակելիս պետք է միջոցներ ծեռը առնել, որ լրիս ընծալված բովանդակությունը ճիշտ ընդորինակությունը, վավերական պատճենը լինի օրենադիր մարմնի հաստատած իսկական բնագրի: Օրենքի պաշտոնական հրապարակման կարգը պետք է այնպես կազմակերպված լինի, որ իր այդ կրկնակի կոչման կատարումը երաշխավորել կարողանա: Առաջին պահանջը՝ օրենքի իրավական ծագման վավերականության ստուգումը - ավելի բարդ է, քան երկրորդը - հրապարկվող բնագրի վավերականության կիրառումը: Առաջինը մի իրավական-սահմանադրական խնդիրի իրավասու լուծումն է. երկրորդը՝ որիշ բան չէ, բայց երեք տվյալ բնագրի տպագրության պատասխանատու սրբագրումը<sup>1</sup>: 1918 թ. սեպտեմբերի 24-ի «Օրենքները պահելու և հրատարակելու մասին» օրենքը, կարգավորելով օրենսդրական գործընթացի մեջ հետաքրքրող փուլերը, շեշտադիր էր միայն օրենքի վավերականության երկրորդ պահը՝ «քննագրի տպագրության պատասխանատու սրբագրումը»: Բաց էր մնացել օրենքի իրավասահմանադրական վավերության հրմնախնդիրը: Սովորաբար պետական իշխանության համակարգում օրենսդիր մարմնից դուրս լինում է մի առանձին պետական կառույց, որը կատարում է օրենքի բովանդակային քննողի ու ստուգողի դեր՝ պարզելու համար՝ արդյոք տվյալ օրենքն իր ծագման և բովանդակության իրավական հանգամանքներով համապատասխանում է օրենսդրության սահմանադրական պահանջներին: Կայսերական Ռուսաստանում պետական իշխանության համակարգում այդպիսի գործառույթը հատկացված էր Կառավարիչ սենատին. սենատը արգելում էր հրապարակել այն օրենսդրական որոշումները, որոնց հրատարակման-հաստատման կարգը չէր համապա-

<sup>1</sup>Տե՛ս «Զանգ», թերթ, Եր., 1918, 20 սեպտեմբերի, թիվ 55 (71):

տասխանում «Հիմնական օրենքների» կանոններին<sup>1</sup>: Ստացվում է, որ Հայաստանի խորհուրդը վերացրեց օրենքների վավերականության նկատմամբ այլ մարմնի կողմից նման հսկողության իրավունքը՝ չսահմանելով հսկողության նոր ընթացակարգ: Բացի այդ, «բնագրի տպագրության պատասխանատու սրբագրման» ընթացակարգը ևս թերի էր: Այդ է հաստատում պառլամենտին նախագահության կողմից պառլամենտին առաջարկվող «Հաստատված, բայց դեռ չիրապարակված օրենքի հրապարակման կանգ առնվելու մասին» օրինագիրը, որի բացատրագրում Ս. Տիգրանյանը՝ օրենսդրական հանձնաժողովի նախագահը, հիմնավորում էր հետևյալը: «Պառլամենտից վերջնականացես հաստատվելոց հետո, օրենքը հանձնվում է հրապարակման: Արա համար պատրաստվում է իսկական օրինակը, որը վավերացվում է պարլամենտի նախագահի և ավագ քարտուղարի ստորագրությամբ, ապա իսկականից ընդօրինակվում է օրենքի այն պատճեն-օրինակը՝ վավերացված ավագ քարտուղարից, որի վրա ստորագրությունը կատարվում է օրենքի սղագրությունն ու սրբագրությունը (վերջնական սրբագրությունը, իհարկե, կատարվում է օրենքի իսկականի համեմատ) այնուհետև նախագահի կողմից կարգադրվում է օրենքը հրապարակելու մասին: Այսպիսով, օրենքը հաստատելու և հրապարակելու միջև որոշ, առնվազն մի քանի օր, ժամանակ է անցնում: Այդ միջոցին կատարվող վերևում հիշատակված գործառնությունների շնորհիվ նախագահությունը, քարտուղարությունը և օրենքների բաժինը կրկին անզամ գրադկում են օրենքի մանրակրկիտ զննությամբ, որով կարող են երևալ օրենքի այնպիսի թերություններ, որոնք ի նկատի չեն առնվել նույն օրենքի նախորդ մշակման քննության ընթացքում: Մանավանդ մեզանում, օրենսդրական գործի նորության և աշխատող մարմինների ու անձերի անփորձ ու անվարժ յինելու պատճառով հեշտությամբ կա-

բող են պատահել դեպքեր, երբ օրենքը հաստատվելուց հետո միայն պարզվում են նրա այնպիսի թերի ու պակասավոր կողմերը, որոնց անմիջական ճախրան օրենքի հրապարակվելը և գործադրելը սկսելը, ուղղումն անհրաժեշտ է թե՛ օրենսդիր մարմնի վարքը բարձր պահելու, թե՛ Հանրապետության շահերի տեսակետով։ Անշուշտ օրենքը հրապարակվելուց հետո նրա ուժի մեջ մտնելը տեղի է ունենալու սահմանված կարգով, նրա գործողությունը չի կարող կանգ առնել նախազահի կարգադրությամբ, իսկ վերաբենությունը կարող է կատարվել միայն մեկ եղանակով - պարլամենտի ուշադրությանը այդ մասին նոր օրինագիծ ներկայացնելով։ Բայց և հրապարակումը դեռ չէ կատարվել և օրենքը տակալին չէ դուրս եկել պարլամենտական շրջանակից, թվում է, թե ավելի նպատակահարմար կլիներ կանգնեցնել դրա հրապարակումը, եթե նախազահությունը բավականաչափ կարևոր հիմքեր է տեսնում այդ անելու նկատված թերությունների պատճառով<sup>1</sup>։ Այս հիմնավորումներով խորհրդարանի նախազահությանն առաջարկվում էր օրենսդրորեն սահմանել, որ եթե վերջնականապես հաստատված, բայց դեռ չի հրապարակված օրենքի թերության պատճառով պառլամենտի նախազահը դիմում է պառլամենտին՝ օրենքը վերաբենելու մասին, ապա այդ օրենքի հրապարակումը կասեցվում է մինչև պառլամենտի կողմից վերաբենվելը։ Սակայն այս նախազիծը չի դարձել խորհրդարանի քննության առարկա։

**Օրենքների ուժի մեջ մտնելը:** Օրենսդրական գործընթացի կարևորագույն և եզրափակիչ փուլն օրենքի ուժի մեջ մտնելու կարգն է: Կայսերական Ռուսաստանի օրենքներն այս հարաբերությունները կարգավորում էին սահմանադրական մակարդակով: Համաձայն «Պետական իիմնական օրենքների հավաքածուի» 89-րդ հոդվածի՝ «Օրենքն ուժ ուներ միայն ապագա ժամանակում, բացի այն դեպքերից, երբ բուն օրենքում սահմանված էր, որ դրա ուժը տարածվում է նաև նախորդ ժամանակի վրա, կամ

<sup>1</sup> Stiu Naiia iiniiai uo çaeiiai, 1906 a., 23 aidaeey, no. 91 /a ei. Oaiaa A.E., 1 deiaa I.A., Enoiidey ai noaaednoaa e iidaa Dianee XIX-XX aa.: Oaieen, 2000, t2 84:

որ այն համարվում է միայն նախորդ օրենքի հաստատում կամ մեկնաբանություն»<sup>1</sup>: Հայաստանի խորհուրդը 1918-19 թթ. իր օրենսդրական գործունեության ընթացքում չանդրադարձավ այս հարաբերությունների կարգավորմանը: Դա նշանակում էր, որ այս հարաբերությունները կարգավորվում էին ռուսական օրենքների հիման վրա, սակայն մինչև 1919 թ. գարունը, երբ կառավարությունն առաջին անգամ ձեռք բերեց օրենսդրական լիազորություններ: 1919 թ. մայիսի 5-ին նախարարների խորհուրդը փինանսների նախարարի գելուցման հիման վրա ընդունել է օրենք «Օրենքները հաստատելու օրից ուժի մեջ մտցնելու մասին»<sup>2</sup>: Յավոր, կառավարության նիստի համառոտ արձանագրության մեջ չկան մանրամասնություններ, որոնցից հնարավոր կլիներ պարզել դրդապատճառները: Արդյո՞ք խոսքը վերաբերում էր բոլոր օրենքներին, թե՞ միայն ֆինանսական բնույթ ունեցողներին: Միգույն վերջին դեպքում նման պահանջն ինչ-որ տեղ արդարացված էր, եթե նկատի ունենանք պաշտոնական վճարամիջոցի արագ արժեզրկումը: Բայց եթե խոսքը բոլոր տեսակի և բնույթի օրենքների՝ նման կերպ ուժի մեջ մտնելու և գործողության մասին էր, ապա դա առնվազն տարօրինակ լուծում էր<sup>3</sup>:

Այսպիսով, օրենքներն ուժի մեջ մտնելու կարգի իրավական կառավորմանն արագին անողոապածել է օրենսդրական իհա-

<sup>1</sup> Sū Ņāîå ā îñí îâi ûô çâèîíâ, 1906 å., 23 aïðâéÿ, nö. 89, 90 /å éí. Öä-îâå Ä.É., I ðerâå f. A., Ènöî ðèÿ åñöääðñöåà è iðâåå Ðîññèè XIX-XX åå.: Óáí èëñ, 2000, tø 71, 85-86.

<sup>2</sup> Տե՛ս Նիս-ի 1919 թ. մայիսի 5-ի նիստը թիվ 73 օրագիրը (ՀՀ ԱԱ, փ. 206, գ. 1, գ. 2, 84-85);

<sup>3</sup> Ամենայն հավանականությամբ, խոսքը վերաբերում էր ոչ բոլոր օրենքներին: 1919 թ. հուլիսի 8-ին կառավարությունն ընդունել է մեկ այլ օրենք, որի **ա)** հողածով սահմանվում էր, որ «մեկից ավելի անզամ դասարարության մեջ բռնվողները հանձննվում են զինվորական դատի», իսկ **բ)** կատով սահմանվում էր, որ «օրենքը ամենուրեք ուժ է ստանում լոյս տեսմելոց 24 ժամ հետո: Եթե՛ վերը նշված «Օրենքները հաստատելու օրից ուժի մեջ մտնելու մասին» օրենքը վերաբերում էր բոլոր օրենքներին, որին օրենսդիր լիազորություններով օժտված կառավարությունն ինչպես էր նոյն օրը ընդունած մեկ այլ օրենքով սահմանում, որ օրենքի ուժի մեջ է մտնում «լոյս տեսմելոց 24 ժամ հետո» (անը ՀՀ ԱՍ, ֆ. 1, գ. 14, 2-րդ մաս, թ. 7 (Ներ-ի 1919 թ. հուլիսի 8-ի նիստի թիվ 117 որադիրը)):»

զորություններով օժտված կառավարությունը: Սակայն հետագայում Հայաստանի պառլամենտը, դժողով լինելով կառավարության նման կարգավորումից, պատվիրակված օրենսդրման նկատմամբ վերահսկողության կարգով չհաստատեց կառավարության ընդունած «Օրենքները հաստատելու օրից ուժի մեջ մտցնելու մասին» օրենքը, ուղարկեց այն օրենսդրական համանաժողովին, որի իրավաստեղծ ջանքերի շնորհիվ խորհրդարանը 1919 թ. դեկտեմբերի 22-ին ընդունեց օրենք «Օրենքն ուժի մեջ մտնելու ժամանակի մասին»<sup>4</sup>: Այդ օրենքը սահմանում էր օրենքների ուժի մեջ մտնելու հետևյալ կարգը.

1) Յուրաքանչյուր օրենք գործողության մեջ էր մտնում՝ Երևանում «Օրենքների հավաքածուի» մեջ հրապարակվելու 5-րդ օրը, իսկ հանրապետության մնացած վայրերում՝ 15-րդ օհն:

2) Առանձին դեպքերում, խորհրդարանի հատուկ որոշմամբ, օրենքը գործադրության մեջ էր մտնում՝ այդ օրենքում սահմանված ժամանակից սկսած և նոյն օրենքում հիշատակված ճնով՝ անկախ «Օրենքների հավաքածու»-ի մեջ հրապարակվելուց: Դա նշանակում էր, որ խորհրդարանը առանձին օրենքի համար կարող էր սահմանել հրատարակման այլ ձև, ինչպես նաև գործողության բնդիմանուր ժամկետներից շեղումներ<sup>2</sup>:

Այսպիսով, խորհրդարանների գործունեության ժամանակաշրջանում երկուսն էլ փորձում էին քիչ թե շատ իրավական դիրքորոշումների հիմքի վրա կարգավորել օրենքների հրապարակման և գործողության մեջ մտնելու հարաբերությունները: Հենց որ օրենսդրական լիազորությունները փոխանցվում էին կառավարությանը, սա անպայման դիմում էր արտակարգ միջոցներ նախատեսող օրենսդրական կարգավորումների: Դա հաստատում

<sup>1</sup> Στέν Ζωγραφικήν Ζωγραφικού της Ελλάς, Ορθόδοξη Εκκλησία, Επίσκοπος Αθηνών, 1919 π., ηδεκατέτος Ιανουαρίου 25, Έργο, ρήμα 9, ημέρα 94, τελ 69:

<sup>2</sup> Նման կարգով հրատարակված օրենքը պետք է գետեղվեր նաև «Օրենքների հավաքածուի» մեջ, որով, սակայն, այդ օրենքների ուժի մեջ մտնելու ժամանակը չէր փոխվում:

Են ոչ միայն 1919 թ. կառավարության ընդունած վերոնշյալ երկու օրենքները, այլ նաև «բյուրո կառավարության»՝ 1920 թ. գարնանից ընդունած օրենքները: Այսպես, 1920 թ. մայիսի 8-ին կառավարությունը լսել է «Կառավարության որոշումները պաշտոնաթերի մեջ իր ժամանակին հրատարակելու մասին» գեկուցումը<sup>1</sup> և կայացրել է հետևյալ որոշումը. «Այն կառավարական որոշումները, որոնք կիրատարակվեն «Հառաջ» թերթի մեջ, նկատել զայն պաշտոնական թերթի մեջ հրատարակված լինելուն համագոր»: Այսպիսով, բացի «Կառավարության լրաբեր»-ից, կառավարական պաշտոնաթերթ էր ճանաչվում նաև ՀՅԴ օրգան «Հառաջ» թերթը: Ընդ որում, այդ թերթը 1920 թ. նոյեմբերից կառավարության շրջաբերականով դիտվում էր լրիվ պաշտոնաթերթ<sup>2</sup>: Նոյեմիսկ այս հարցում դաշնակցական կառավարությունը ձեռնարկեց կուսակցականացված լուծում: Փոխանակ միջոցներ ձեռնարկելու, որ պաշտոնաթերթը պատշաճ հրատարակվի և արագ հասցվի տեղեր, նա կուսակցական օրգանը դարձրեց պաշտոնաթերթը:

Օրենքներն ուժի մեջ մտնելու կարգի իրավական սկզբունքների հաջորդ խախտումը կառավարությունը կատարեց 1920 թ.: 1920 թ. մայիսի 8-ին Նախարարների խորհուրդն ընդունեց «Արտակարգ դատարանի և նրա դատին ենթակա գործերի մասին» ժամանակավոր օրենքը: Համաձայն այդ օրենքի՝ Հայաստանի Հանրապետությունում հիմնադրվում էին չորս արտակարգ դատարաններ: Օրենքը սահմանում էր արտակարգ դատարանների քննությանը ենթակա և ընդդատյա հանցագործությունների շրջանակը, տալիս էր այդ հանցավոր արարքների հանցակազմերի հատկանիշները, նախատեսում պատժամիջոցները: Պատժական քաղաքականութ-

յան տեսակետից նորամուծություն էր այն, որ քրեական որոշակի արարքներ կատարելու համար որպես սանկցիա նախատեսվում էր միայն մահապատիժը (Ժամանակավոր օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներ): «Բյուրո կառավարությունը», որպես օրենսդիր ամսեսելով այն հանգամանքը, որ եղած օրենսդրական դաշտը հնարավորություն էր տալիս պատասխանատվության ենթարկելու մայիսյան դեպքերի մասնակիցներին, հետագայում այդ օրենքի կիրառման ընթացքում իրականացրեց նաև ոչ իրավական քայլեր, որոնք հետևանք էին իրավական մշակույթի ու իրավագիտակցության ցածր մակարդակի, պետական շինարարության մեջ տեղ գտած տարատեսակ թերությունների, այսպես կոչված, «հեղափոխական վճռականության»: Այդ քայլերից մեկն էլ այն էր, որ մայիսի 8-ի ժամանակավոր օրենքին տրվեց հետադարձ ուժ: Ժամանակավոր օրենքի 19-րդ հոդվածը սահմանում էր, որ այդ օրենքն ուժի մեջ է մտնում ընդունման օրից, այսինքն՝ մայիսի 8-ից: Սակայն 1920 թ. մայիսի 17-ի օրենքով այդ հոդվածը փոփոխության ենթարկվեց և սահմանվեց, որ «ներկա օրենքին ենթակա են սույն օրենքում նախատեսված գործողությունները, որոնք տեղի են ունեցել ապրիլի 15-ից հետո»: Օրենսդրի այս քայլը բացատրվում է նրանով, որ մեծամասնականները նախապատրաստվել էին մայիսյան իրադարձություններին և շատ դեպքերում հակառական արարքներ կատարել և քարոզություն էին տարել մայիսյան դեպքերից առաջ կամ դրանց ընթացքում մինչև ժամանակավոր օրենքի ընդունումը և գործողության մեջ մտնելը: Իրավական առումով մեծամասնականների ներքոիշյալ փաստարկները հիմնավոր էին և կարող էին խոչընդոտել դատավարությանը: Այսպես՝ մեծամասնական խոռվարաբների մի մասը, որպես իրենց պաշտպանության կովան, բերում էր այն փաստարկը, որ նախ և առաջ իրենք չէին կարող դատապարտվել մայիսի 8-ին ընդունված օրենքով դրա ընդունումից առաջ կատարած արարքների համար, իսկ երկրորդ, որ օրենքը հրապարակվել է մայիսի 14-ին, այսինքն՝ Կարսում և Ալեքսանդրապոլում խոռվարությու-

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, գ. 1, գ. 118, 1-ին մաս, թ. 82, ՆԽ-ի 1920 թ. մայիսի 8-ի թիվ 254ա օրագիրը:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 206, գ. 1, գ. 103, թ. 268: Այս շրջաբերականից բխում է, որ մինչ այդ «Հառաջ»-ը պաշտոնաթերթը էր ընտրողաբար, իսկ 1920 թ. նոյ.-ից արդեն՝ բոլոր օրենքների և որոշումների համար:

Ար ճնշելուց հետո միայն, հետևաբար այն չի տարածվում իրենց՝ մինչ այդ կատարած հակապետական արարքների վրա<sup>1</sup>: Այս ամենի հետևանքով ստեղծվել էր իսկական իրավական խառնաշփոթ, որի մանրամասներն ու կողմներից յուրաքանչյուրի (մեղադրող և պաշտպանվող) փաստարկներն ու այդ վիճակից դուրս գալու լուծումները հայտնի չեն մեզ, քանի որ չեն պահպանվել արտակարգ դատարանների գործունեության վերաբերյալ կոնկրետ փաստարդերն ու նրանց քննած քրեական գործերի նյութերը:

Հենվելով զուտ իրավական նյութի վրա՝ կարելի է անել որոշ ենթադրություններ միայն: Համաձայն Հայաստանի խորհրդարանի 1919 թ. դեկտեմբերի 24-ի օրենքի՝ յուրաքանչյուր օրենք գործադրության, այսինքն՝ ուժի մեջ էր մտնում Երևանում «Օրենքների հավաքածուի» մեջ հրապարակելու հինգերորդ օրը, իսկ հանրապետության մնացած վայրերում՝ տասնինգերորդ օրը: Բայց առանձին դեպքերում խորհրդարանի հատուկ որոշմամբ օրենքը կարող էր գործողության մեջ դրվել ընդունվող օրենքում սահմանված ժամանակից սկսած՝ անկախ «օրենքների հավաքածուի մեջ հրապարակվելուց»: Սա նշանակում է, որ մեծամասնականների երկրորդ պաշտպանական փաստարկն անհիմն էր: Օրենքները կարող էին ուժի մեջ մտնել և կիրառվել նաև առանց օրենքների հավաքածուի մեջ հրապարակվելու: Սակայն հիմնավորված էր մեծամասնականների առաջին փաստարկը, այսինքն՝ հակաիրավական ու հակաօրինական էր մայիսի 8-ի ժամանակավոր օրենքի այն լրացումը, որով հետադարձ ուժ էր տրվում քրեական պատիժը խստացնող կամ համցավոր նոր արարքներ սահմանող այս օրենքին, առավել ևս, որ այդ իրավական սկզբունքը, այն է՝ օրենքը հետադարձ ուժ չունի, Հայաստանի Հանրապետության իրավական համակարգն ինքնաբերաբար փոխառել էր ոռուական օրենսդրությունից:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ԱՍ, ֆ. 4009, գ. 2, գ. 5, թթ. 27-28:

\* \* \*

Այսպիսով, Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանների օրենսդրական իրավասություններն իրենց բնույթով, իրավական կարգավորման առանձնահատկություններով իրարից չեն տարբերվում: «Հայաստանի խորհրդի նակագ»-ի 4-րդ գլուխ (Խորհրդում գործերի վարույթի կարգը) առաջին բաժինը, որ նվիրված էր «օրենսդրական գործերի քննարկման կարգին», կարգավորում էր օրենսդրական գործընթացը խորհրդարանում: Այստեղ այդ կարգավորումը վերաբերում էր օրենսդրական գործընթացի միայն ներխորհրդարանական փուլին, չեր ներառում օրենսդրական նախաձեռնության և այնուհետև օրենքների հրապարակման ու ուժի մեջ մտնելու հարաբերությունների կարգավորումը: Սա, անշուշտ, «նակագի» բերություններից էր, որը, սակայն, հետագայում ընթացիկ օրենքներով մասնակիորեն ներառվեց օրենսդրական կարգավորման շրջանակ: Առաջին հանրապետությունում օրինաստեղծ գործընթացի առանձնահատկությունն այն էր, որ օրենքի հաստատման և հրապարակման գործը ևս կենտրոնացված էր խորհրդարանում: Քաղաքական հանգամանքների պատճառով օրենքների հաստատման իրավունքը հանրապետության վարչապետին շվերապահվեց: Հայաստանի պառլամենտում պահպանվեց Հայաստանի խորհրդի կողմից սահմանված օրենքների հաստատման և հրապարակման կարգը: Օրենսդրական գործընթացի կարևորագույն և եզրափակիչ փուլն օրենքի ուժի մեջ մտնելու կարգն է: Խորհրդարանների գործունեության ժամանակաշրջանում երկուսն էլ փորձում էին քիչ բեշ շատ իրավական դիրքորոշումների հիմքի վրա կարգավորել օրենքների հրապարակման և գործողության մեջ մտնելու հարաբերությունները: Հենց որ օրենսդրական լիազորությունները փոխանցվում էին կառավարությանը, սա անպայման դիմում էր արտակարգ միջոցներ նախատեսող օրենսդրական կարգավորումների, սահմանելով օրենքների ընդունումից հետո ուժի մեջ մտնելու կարգ, ինչպես նաև պատասխանատվությունը խստացնող կամ պատասխանատվություն սահմանող օրենքների հետադարձ գործողություն:

### § 3. Հայաստանի խորհրդի և Հայաստանի պառամենտի օրենսդրական գործունեությունը

Հայաստանի խորհրդը 1918 թ. օգոստոսի 1-ից մինչև 1919 թ. հունիսի 5-ը, երբ ընդունվեց օրենք «Հայաստանի խորհրդի պարագմունքների դադարեցման մասին», ըստ Հայաստանի խորհրդի հաստատած օրենքների ժամանակագրական ինկորպորացիայի ցանկի, ընդունել է 116 օրենք: Այդ ցուցակում ընդգրկված չեն երկու հիմնարար օրենքները՝ «Հայաստանի խորհրդի նակազը» (1918 թ. օգոստոս) և «Հայաստանի պառամենտի ընտրությունների օրենքը» (1919 թ. ապրիլ):

Հայաստանի խորհրդի ընդունած և հավաքածուում հրապարակված այդ ակտերը, որոնք բոլորն էլ կրում են օրենք անվանումը, մասամբ անհատական իրավական ակտեր են և ունեն խորհրդարանի որոշումների կարգավիճակ: Այդպիսիք են, օրինակ, ժամանակագրական ցանկում տեղ գտած որոշակի պաշտոնատար անձանց նշանակելու և ներման կամ պատժի մեղմացման որոշումները: Այդպիսով, 118 օրենքների քանակից եթե հանենք խորհրդարանի որոշման բնույթ ունեցող 7 ակտը, ապա կմնա ընդամենը 111 օրենք: Մյուս կողմից՝ օրենքների մեծագույն մասը ֆինանսարյուջետային բնույթ ունեցող նորմատիվ ակտեր են: Դրանց քանակը հասնում է 69-ի: Այսպիսով, իրական օրենքների քանակը մնում է ընդամենը 42: Եթե այդ արդյունքը դիտարկենք 9 ամսվա կտրվածքով, ապա տվյալներն այնքան ել գոհացուցիչ չեն:

Որպես հաստատում այս եզրակացության՝ կատարենք հետևյալ վերլուծությունը. 1918 թ. սեպտեմբերին Հայաստանի խորհրդի քննարկման առարկա է դարձել 17 օրինագիծ, որոնց մի մասը խորհրդարանի օրակարգ էր փոխանցվել օգոստոսից: Ընդ որում, օգոստոսին դրամը կամ բոլորովին քննարկման չեն ենթարկվել, կամ էլ անցել էին միայն առաջին կամ երկրորդ ընթեր-

ցումները: 17 օրինագիծ սեպտեմբերին խորհրդարանն ընդունել է միայն 10 օրենք<sup>1</sup>: Եթե նկատի ունենանք, որ դրանցից երկուսն ընդամենը ֆինանսական հատկացումներ են, ապա կստացվի 8 օրենք, որոնցից չորսն ունեն ընդամենը մեկ էջ ծավալ, իսկ չորսը՝ կես էջ: Կարծում ենք, որ պատկերը գոհացուցիչ չէ: Հայաստանի խորհրդի գործունեությունից գոհ չին նաև ժամանակակիցները: Իհարկե, դաշնակցական կողմնորոշում ունեցող գործիչներն ու թերթերը 1918 թ. ընթացքում դեռևս գրվարանում էին խորհրդարանը և նրա օրենսդրական գործունեությունը: Այդ գործունեությունը վառ գույններով է ներկայացրել նաև Ս. Վրացյանը<sup>2</sup>: Չնայած նա ընդիհանուր առնամբ դժգոհ էր Հայաստանի խորհրդից, սակայն ոչ թե գործունեության արդյունավետության, այլ կազմի պատճառվ: Ըստ Վրացյանի՝ «... իր կյանքի առաջին իսկ օրից, Հայաստանի Խորհրդը դուրս եկավ ներքին շաղախից գորկ, ամուր մեծամասնություն չունեցող, հակամարտություններով և անսկնկալներով հարուստ մի մարմին: Նրա այս հիվանդությունը բնածին էր մինչև վերջ էլ կարելի չեղավ դարմաներ»:

Ընդդիմությունը և հանրությունը մեղադրում էին խորհրդարանին դանդաղարժության մեջ և առաջին հերթին նրա համար, որ խորհրդարանը շաբաթական ընդամենը երկու նիստ էր գումարում: Դաշնակցական գաղափարախոսները 1918 թ. ընթացքում փորձում էին պաշտպանել խորհրդարանին: Այսպես, «Զանգ» թերթը, անդրադառնալով խորհրդարանի գործունեությանը, հիմնավորում էր. «Ամենից առաջ սիսակ է այն կարծիքը, որը հաճախ լսվում է այստեղ կամ այստեղ, որ իր Հայաստանի Խորհրդարանը քիչ է աշխատում - այդ բառի ֆիզիկական իմաստով: Մենք ձեռքներս զնելով մեր խղճի վրա, խոստովանում ենք, որ նաև աշխատում է մինչև հնարավորության վերջին սահմանը: Ճիշտ է, նա շաբաթական միայն երկու հերթական նիստ ունի

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի խորհրդի հաստատած օրենքները, 1918 թ., հոդվ. 7-17, էջ 4-10:

<sup>2</sup> Տե՛ս Վրացյան Ս., նշանակ աշխատակից, էջ 200-202:

այս հանգամանքը թերևս կարող է շատերի համար պատճառ լինել ենթադրելու, թե խորհրդարանը քիչ է աշխատում, բայց դա իրոք ճիշտ չէ: Խորհրդարանի զիսավոր աշխատանքը կատարվում է խորհրդարանից դուրս, հանձնաժողովներում, որոնց թիվը ներկայում 16 է: Խորհրդարանի յուրաքանչյուր պատգամավոր անդամ է մի քանի հանձնաժողովների, որոնց մեջ նա գործում է հասարակության ու մարդկանց աշքերից հեռու: Մյուս կողմից, պետք է նաև արձանագրել, որ Խորհրդարանի անդամների ճնշող մեծամասնությունը - եթե ոչ ամենքը - տողորված է աշխատանք կատարելու ցանկությամբ, որ նրանք այն զիտակցությունն ունեն, թե միայն համար և անդույլ աշխատանքի միջոցով կարելի է մեղմել մեր երկրի ու պետության ներկա ծանր կացությունը: Երկրորդ, մեր կարծիքով մի քիչ խիստ է այն մեղադրանքը, թե Խորհրդարանի աշխատանքները արդյունավետ չեն: Եվ, եթե դա այդպես էլ է, բայց ունի իր արդարացուցիչ պատճառները: Նման դժվարին պայմաններում Խորհրդարանի մի այլ կազմ - այն է պարլամենտական անցեալ և փորձառություն չունեցող - հազիվ թե ի վիճակի լիներ ավելի արդյունք ցուցաբերելու: Սակայն դրա հետ մեկտեղ, մենք բնդունում ենք, որ այս, Խորհրդարանում աշխատանքները ցանկալի արագությամբ չեն ընթանում, դանդաղում են»<sup>1</sup>: Հոդվածագիրն աշխատանքի անարդյունավետությունը բարդում է խմբակցությունների և նրանց դիրքորոշումների վրա: Բայց չէ՞ որ կարելի էր նիստերի քանակը դարձնել շաբաթական գոնե երեք անգամ:

Հայաստանի խորհուրդը 1919 թ. հունվար-ապրիլ ամիսներին ևս գործեց անարդյունավետ: Այդ ընթացքում խորհրդարանն ընդունել է 52 օրենք, որոնցից 29-ը, այսինքն՝ գրեթե կեսը, ունի ֆինանսահարկային բնույթ և բովանդակություն: Եթե նկատի ունենանք, որ մնացած 23 օրենքներից 4-ը ներման կամ պատժի մեղմացնան անհատական որոշումներ են, իսկ 3-ը՝ պաշտոնատար անձանց նշանակման որոշումներ (երկու տեսակ որոշումներն ել

ընդունվել են օրենք անվան տակ), ապա կստացվի, որ իրական օրենքներ են համարվում Հայաստանի խորհրդի 1919 թ. ընթացքում ընդունված 17 ակտերը: Տպավորությունն այնպիսին է, որ Հայաստանի խորհրդի դեկավարությունը նման ձևով, այսինքն՝ ֆինանսահարկային օրենքների անընդհատ քննարկումով փորձում էր շեղել խորհրդարանի ուշադրությունը իրավասության կարևորագույն այլ ոլորտներից:

Որպեսզի պատկերն ամբողջական դառնա, իսկ եզրակացությունը ճշմարիտ լինի, փորձենք ամփոփել նաև Հայաստանի պառլամենտի օրենսդրական գործունեությունը: Թվում է, թե Հայաստանի պառլամենտի ձևակորմանը օրենսդիր իշխանության գործունեության անարդյունավետությունը և դանդաղաշրժությունը կվերանան: Սակայն վերլուծությունը ցույց է տալիս, որ նման գործելակերպը բնորոշ էր նաև Հայաստանի պառլամենտին: Այս մարմնի՝ 1919 թ. ընդունած 117 օրենքների մեջ նորից գերակշռում են ֆինանսահարկային և բյուջետային բնութագիր ու բովանդակություն ունեցող օրենքները, որոնց թիվը հասնում է 70-ի: Մնացած 47 օրենք կոչվածներից 9-ը ներման կամ պատժի մեղմացնան և նույնիսկ դատավճռի վերաբենության որոշումներ են՝ օրենք անվան տակ, իսկ 11-ը՝ ընտրությունների կամ պաշտոնատար անձնաց նշանակման վերաբերյալ «անհատական օրենքներ»: Ստացվում է, որ 1919 թ. 5 ամսվա ընթացքում Հայաստանի պառլամենտն ընդունել է ընդամենը 27 իսկապես կարգավորիչ օրենք: Խորհրդարանի 1920 թ. հունվար-մայիս գործունեության ընթացքում ընդունված 85 օրենքից 52-ը ֆինանսահարկային բովանդակություն ունեն: Մնացած 33 օրենքից 11-ը ներման կամ պատժի մեղմացնան ակտեր են: Հետևաբար խորհրդարանի ընդունած բուն օրենքների քանակը 5 ամսվա ընթացքում կազմում է 22 համառոտ օրենք:

Եթե թվաբանական վերլուծությունն ամփոփենք, կստացվի հետևյալ պատկերը. Հայաստանի երկու խորհրդարաններն իրենց գործունեության ընթացքում ընդունել են օրենք կոչված 318 ակտ,

<sup>1</sup> Տե՛ս «Զանգ», թերթ, Եր., 1918, 9 հոկտեմբերի, թիվ 60 (78):

որից 38-ը ուղակիորեն անհատական իրավական ակտեր են (ներման, ընտրությունների և պաշտոնյաների նշանակման որոշումներ): Մնաց 280 օրենք: Դրանցից 191-ը ֆինանսական-հարկային ոլորտի օրենքներ էին: Մնացած 89 օրենքից հիմնարար և ծավալուն օրենքներ էին «Հայաստանի խորինի նակագր» և «Պառլամենտի ընտրությունների օրենքը»: Մյուսները կարևոր, սակայն համառոտ օրենքներ էին: Երկու խորհրդարանների 18 ամսվա գործունեության ընթացքի համար անսական ստացվում է 5 օրենք, ինչը շատ քիչ էր նորակազմ և վատքար կացության մեջ գտնվող պետության համար:

Օրենսդրական աշխատանքի նման նկարագրի պատճառներից մեկն էլ խորհրդարանի կանոնակարգն էր, որում չկար տարբերակված կարգավորմամբ մոտեցում՝ քննարկման և հաստատման պարզ և բարդ ընթացակարգեր՝ կախված «օրենսդրական գործեր» կոչված հարցերի բնույթից և բարդությունից: Ընդ որում, այդ փաստը ցցուն ու ակնհայտ էր նաև ժամանակակիցների համար, ովքեր, կաշկանդված չիմելով կուսակցական-քաղաքական դիրքորոշումներով, փորձում էին անկողմնակալ վերլուծել խորհրդարանի գործունեությունը: Օրինակ՝ «Զանգ» թերթի հոդվածագրներից մեկը, դիտարկելով խորհրդարանի գործունեությունը 1918 թ. ընթացքում, արձանագրել է. «Այդ մեկ հասիկ օրգանը մինմոյն եղանակով է գործում օրենքներ հաստատելիս, ինչ խնդրի և առարկայի էլ վերաբերելիս լինի հորիժնվող օրենքը. մերանում այսպես կոչված «սահմանադրական» և «հասարակ» օրենքների, ոչ էլ սահմանադրական և սովորական օրենստվության տարրերություն չկա: Արդյոք մինհատրական կառավարության սահմանադրության իրավական իիմքերն ենք դնում, մի առանձին մինհատրություն ենք հիմնարիում, դպրոցի պետությունից ազատագրումն ու քաղաքացիների՝ կառավարությունից դպրոցական ասպարեզում վայելելիք անկախությունն ենք սահմանում, թե մի ուսուցչական սեմինարիայի ժամանակավոր փակումն ենք կար-

գաղրում, համաձարակից մահացած ֆելդերի ընտանիքին տրվելիք նպաստի քանակն ենք որոշում, կամ դատարանին՝ դատավճիռող հայտնելուց հետո նույն դատավճիռը մանրամասն կազմելու համար 5, թե 10 օր ժամանակ տալու հարցն ենք որոշում, այս բոլոր դեպքերում էլ օրենքը մեզանում սահմանվում է և վերացվում է (մի նոր օրենքով) մինմոյն եղանակով՝ Խորհրդարանի կազմի մեծամասնության որոշումով<sup>1</sup>: Բուն խորհրդարանում իշխող ուժերն այդ փաստի վրա որևէ ուշադրություն չին դարձնում, ինչն էլ հիմք է տալիս պնդելու, որ իշխող կուսակցությանը ձեռնտու էր նման իրավիճակը՝ որպես խորհրդարանի ուշադրությունը շեղելու միջոց:

Այսպիսով, ակնհայտ էր, որ նորահոչակ պետության խորհրդարանի առջև հառնում էր օրենսդրական ահռելի աշխատանք: Վիճակը բարդ էր նաև այն առումով, որ ՀՀ օրենսդրական համակարգը հեղիեղուկ վիճակում էր: Ուստական հին օրենքների մնացորդները. ժամանակավոր կառավարության հրատարակած օրենքները, այնուհետև Կովկասյան կոմիսարիատի ու Սեյմի օրենսդրական ակտերը, Հայաստանի խորհրդի, կառավարության, հետագայում նաև պաղամենտի օրենքները խառնվել էին իրար: Այս վիճակից դուրս գալու համար անհրաժեշտ էր կազմել օրինաստեղծ աշխատանքի ուազմավարական ծրագիր: Դրա անհրաժեշտությունը կար, սակայն Հայաստանի խորհրդող չէր շտապում այն մշակելու և կենսագործելու: Եթե դա բացատրենք միայն խնդրակցությունների հակամարտությամբ, ապա ճիշտ չի լինի, որովհետև նոյն ուրուկ գնաց նաև երկրորդ խորհրդարանը: Օրինակ՝ տեղական պետական կառավարման մարմինների, միիցիայի, գավառական և քաղաքային ինքնավարությունների վերաբերյալ օրենսդրական ակտերը, որոնցից մի քանիքը ներքին գործերի նախարարության միջոցներով թարգմանվել ու տպվել էին, լի էին լրացումներով, փոփոխություններով, որոնք շատ հա-

<sup>1</sup> Տե՛ս «Զանգ», թերթ, Եր., 1918, 20 սեպտեմբերի, թիվ 55 (71):

ճախ հակասում էին իրար, առաջացնում իրավական շփոթ: Լինում էին դեպքեր, երբ, օրինակ՝ ներքին գործերի նախարարությունը դիմում էր խորհրդարանին՝ պահանջելով մեկնարանել որոշ օրենսդրական ակտեր: Հայաստանի պառլամենտի փոխնախագահը՝ որպես նախագահի պաշտոնակատար, պառլամենտին տված զեկուցման հիման վրա կազմած պատասխան գրության մեջ նաև նախագահի պաշտոնակատար, պառլամենտին տված զեկուցման հիման վրա կազմած պատասխան գրության մեջ նաև նախագահի պաշտոնակատար, պառլամենտին որոշում է, որ պառլամենտն օրենքի մեկնարանմամբ չի գրաղվում. «Կառավարության մարմինները և պաշտոնյանները պարտավոր են ինքնները մեկնարանել բոլոր օրենքները, թե Հայաստանի խորհրդի և ներկա Պարլամենտից հաստատվածները, թե Ռուսական և Անդրկովկասյան ծագում ունեցողները: Յուրաքանչյուր վարչաճյուղի մարմիններն ու պաշտոնեանները ղեկավարվելու են իրենց բարձր մարմնի, համապատասխան միջնառության, իրահանգներով և ցուցումներով: Որևէ օրենքի մեկնարանութեան առիթով զանազան միջնառությունների միջև ծագող տարածայնությունները հարթելու և համաձայնութեան են բերվելու Միջնառությունը: Ըստորդ քաղաքացինները կառավարության ընդունած մեկնարանության դեմ բողոքով պիտի դիմեն դատական իշխանությանը: Հետևապես, օրենքը մեկնարաններու խնդիր հարուցանող դիմումները, պառլամենտի կամ իր հանձնաժողովի անունով ստացված, անընթացը և անհետևանը են բողոքներու»<sup>1</sup>:

Առաջացած իրավական խառնաշփոթը հուզում էր նաև արդարադատության նախարարությանը: Նախարարությունը գտնում էր, որ անհրաժեշտ է հիմնել մի հանձնաժողով ոլուսական օրենքները վերաքննելու համար, ինչպես նաև կազմել մի «կարգավորյալ ընդհանուր օրենք», որը լինի պարզ, հասկանալի ու կենսունակ: 1919 թ. սեպտեմբերի 26-ին այդ մասին գեկուցելով Նախարարների խորհրդին՝ նախարարությունը ստացավ մերժում. առաջարկը համարվեց վաղաժամ՝ 5 դեմ և 1 կողմ ձայնով<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 201, գ. 1, գ. 280:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, գ. 1, գ. 14, 2-րդ մաս, թ. 73:

Իրավական խառնաշփոթում իր բաժինն ուներ արևմտահայ գաղթականությունը, որի համար ուստական իրավական համակարգն անհասկանալի էր, իսկ շատ դեպքերում՝ նրա իրավամտածողությանը խորը: Այստեղ, բացի իրավամտածողության տարբերությունից, առկա էր նաև քաղաքացիական անհնագանության պես մի բան: Իրավիճակը շտկելու համար կառավարությունը 1919 թ. օգոստոսի 8-ին կայացնում է հատուկ որոշում, որը իրապարակվում է ի լուր բոլորի. «ՀՀ Կառավարությունը հայտարարում է. Համաձայն Միացյալ Հայաստանի անկախության 1919 թ. մայիսի 28-ի ակտի՝ Պառլամենտի և Հանրապետության կառավարության բոլոր օրենքները և որոշումները համահավասր չափերով պարտադիր են Միացյալ Հայաստանի բոլոր քաղաքացիների՝ նրանց բվում և Օսմանյան կայսրության նախկին հպատակ հայերի համար»<sup>1</sup>:

Որպես գաղթականության իրավական հիմնահարցերի լուծման երաշխիք՝ սկզբնական շրջանում արդարադատության նախարարության կենտրոնական ապարատում կար արևմտահայ գործերով խորհրդական, որը կոչված էր հանրապետության իրավական ոլորտում ապահովելու արևմտահայ իրավագետների մասնակցությունը, իսկ նրանց միջոցով՝ Հայաստանի իրավական համակարգը հարմարեցնելու արևմտահայ գաղթականության իրավամտածողությանը<sup>2</sup>: Հետագայում՝ 1920 թ. մարտի 1-ին, պառլամենտը կառավարության օրենսդրական նախաձեռնությամբ ընդունեց օրենք՝ արդարադատության նախարարության դիմանին կից արևմտահայոց իրավագիտական բաժին հիմնելու մասին<sup>3</sup>: Բաժնի գործառույթն էր ուսումնասիրել բնակչության արևմտահայ հատվածի մեջ գոյություն ունեցող ընտանեկան, ժառանգական և այլ սովորույթներն ու իրավագիտակցությունը՝

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, գ. 1, գ. 23, մաս 1-ին, թ. 473:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, գ. 1, գ. 121, թ. 34:

<sup>3</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության, Օրենքների հայաբաժու, իրատ. Պարլամենտի, 1920, թիվ 3, էջ 21: Համաձայն այդ օրենքի՝ բաժինը բաղկացած էր 3 հոգուց՝ նախագահ և 2 անդամներ:

դրանց ոգին նոր մշակվող օրենսդրության մեջ ապահովելու համար: Այդ գործառույթի իրականացման համար բաժինը պետք է կարողանար իր շուրջ համախմբել արևմտահայ իրավագետներին, շահազրգուել նրանց հանրապետության օրենսդրական աշխատանքով<sup>1</sup>:

Պատշաճ վիճակում չեր նաև իրավաբանական եզրութաբանության և հասկացությունների վիճակը: Ըստ Ժամանակի մասունի տվյալների՝ «Խորհրդարանը, Կառավարությունը ու պաշտոնաթերթերը և ոչ մի ուշադրություն չեն դարձրել լեզվի վրա: Վերջինիս մեջ մենք հաճախ հանդիպում ենք այնպիսի կոսյու լեզվախանների, որ խմբազրի տեղ դուք ինքներդ եք ամաշելու: Օրենքների բարգմանությունը ուստերեն բնազրից հայերենի, միշտ էլ եղել է շտապ և տառացի: Դրանով հաճախ ստացվում է մի այսպիսի պատկեր, որ հայերեն ու ուստերեն բարգմանություններն իրար հակուտնեա, իրարից տարրեր են ներկայացնում: Այլպիսի պարագաներում, ասացեք խնդրեմ, դատարանը դրանցից որ մեկովն է դեկավարվելու: Դա էլ մի հարց է, պատասխանի կարուտ, բայց Խորհրդարանի ներկա կազմը մեզ այդ պատասխանը չի ուղեցել տար»<sup>2</sup>: Իրավաբանական լեզվի հիմնախնդիրը, իհարկե, նաև օրինական պատճառներ ուներ, որի լուծման համար ընդամենը ժամանակ էր պետք: Այդ ուղղությամբ էլ կառավարությունը որոշակի քայլեր ձեռնարկեց: 1919 թ. հունիսի 25-ին կառավարությունն արդարադատության նախարարությանը գումարներ է հաստկացրել իրավաբանական տերմինների բառարան հրատարակելու համար<sup>3</sup>:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ԱՍ, ֆ. 199, գ. 1, գ. 121, թ. 35:

<sup>2</sup> Տե՛ս «Հայաստանի աշխատավոր», 1919 թ., 13 ապրիլի, թիվ 42:

<sup>3</sup> Տե՛ս ՀՀ ԱՍ, ֆ. 199, գ. 1, գ. 14, մաս 1-ին, թ. 144, ՆԽ-ի 1919 թ. հունիսի 25-ի նիստի թիվ 108 օրագիրը:

#### § 4. Կառավարության լիազորություններն օրինաստեղծագործության կառուցակարգում

Բացի գործադիր կանոնակարգող իշխանությունից՝ Հայաստանի առաջին հանրապետության կառավարությունն ուներ լայն լիազորություններ, որոնք բույլ էին տալիս նրան լուրջ կերպով ազդել օրենսդրական գործնքացի վրա: Այդ ազդեցության լծակները երկուսն էին, առաջին՝ կառավարության օրենսդրական նախաձեռնության իրավունքը և դրան հարակից մի շարք իրավունքներ, երկրորդ՝ կառավարությանն օրենսդիր մարմնի իրավագործությունների փոխանցման արդյունքում նրա կողմից իրականացվող օրինաստեղծ գործունեությունը:

Կառավարությունը, լինելով օրենսդրական նախաձեռնության իրավունքի սուրբեկտ, ըստ էության ինքն էր տնօրինում խորհրդարանի ողջ ժամանակը: Խորհրդարանների, ինչպես նաև կառավարության նիստերի արձանագրությունների հետազոտությունը ցույց է տալիս, որ խորհրդարանի կողմից ընդունված և օրենքի ձև ստացած օրինագծերի գերակշռող մասը մշակվել և օրենսդրական նախաձեռնության կարգով խորհրդարան էր ներկայացվել կառավարության կողմից:

Կառավարությունն օրինագծերը դնում էր քննարկման Նախարարների խորհրդի նիստում, այնուհետև, եթե օրինագիծը հավանության էր արժանանում կառավարության կողմից, այն ուղարկվում էր խորհրդարան՝ պատշաճ կարգով ընթացքի մեջ դնելու համար: Կառավարությունը կարող էր օրինագիծը հայտարարել շտապողական<sup>1</sup>: Այդ դեպքում խորհրդարանը պետք է անցկացներ արագացված քննարկում: Հենց սկզբից կառավարությու-

<sup>1</sup> Օրինակ՝ կառավարությունը 1919 թ. հունվարի 27-ի նիստում հաստատված օրինագիծի կապակցությամբ կայացրել է հետևյալ որոշումը. «Օրինագիծին հավանություն տալ և ներկայացնել Հայաստանի խորհրդին ի հաստատություն՝ հայտնելով շտապողականությունը» (տե՛ս ՀՀ ԱՍ, ֆ. 199, գ. 1, գ. 14, 1-ին մաս, թիվ 108 օրագիրը):

նը կանխեց նախարարությունների կողմից, այսպես կոչված, «օրենսդրական առաջարկության» ինստիտուտի կիրառումը, երբ որ օրենսդրական նախաձեռնության սուբյեկտը միայն առաջարկում կամ գաղափար է տալիս ընդունել, փոխել կամ վերացնել օրենքը: 1919 թ. մայիսի 2-ին վարչապետի պաշտոնակատարը բոլոր նախարարներին ուղարկել էր շրջաբերական գրություն, որով նրանց պարտադրվում էր իրենց առաջարկությունները «Մինիստրների խորհուրդ ներկայացնել գրավոր կերպով, նախօրոք, և այն առաջարկություններին, որոնք պահանջում են օրենսդրական լուծում, կցել անպայման օրինագիծ»<sup>1</sup>: Իհարկե, այդ պահին կառավարությունն ուներ օրենսդրական լիազորություններ, և նրա համար շատ դժվար էր հանպատրաստից ձեռնարկել օրենսդրական գործընթաց, որով և պայմանավորված էին շրջաբերականի պահանջները: Սակայն հետագայում, երբ սկսեց գործել Հայաստանի պառլամենտը, նկատվում էին օրենսդրական նախաձեռնության կարգի խախտումներ, ինչը հանգեցրեց խորհրդարանի կողմից հարցի քննարկմանը: Քննարկում նախաձեռնողը պատգամավոր Վ. Փափազյանն էր, որն առաջարկում էր (1919 թ. հոկտեմբերի 10-ին) այնպիսի կարգ սահմանել, որով բոլոր օրինագծերը մտնեն խորհրդարան Նախարարների խորհրդի անունից, այլ ոչ թե առանձին նախարարների կողմից<sup>2</sup>: Քանի որ Նախարարների խորհրդը «հավաքական պատասխանատուն» էր, որեմն որպես նրա համաձայնության հավաստիք, բոլոր օրինագծերը պետք է կրեին նախարարապետի և համապատասխան նախարարի ստորագրությունները: Ֆինանսական բնույթի օրինագծերը՝ վարկային խնդրանք, հարկային, բյուջետային և այլն, անպայման պետք է կրեին նաև ֆինանսների նախարարի ստորագրությունը, որովհետև նաև էր միակ պատասխանատուն պետական բյուջեի հավասարակշռության և համաշափության համար:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ԱՍ, ֆ. 199, գ. 1, զ. 23, մաս 1-ին, թ. 255:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ ԱՍ, ֆ. 199, գ. 1, զ. 58, թ. 116:

1919 թ. նոյեմբերի 28-ին Հայաստանի պառլամենտն ընդունեց օրենք «Կառավարության կողմից պառլամենտ մտնող օրինագծերի ձևի մասին», որով ամրագրվեց, որ յուրաքանչյուր օրինագիծ, որ կառավարության կողմից մտնում է Հայաստանի խորհրդարան, պետք է կրի վարչապետի և համապատասխան նախարարի ստորագրությունները, իսկ ֆինանսական բնույթ ունեցող օրինագծերը՝ նաև ֆինանսների նախարարի ստորագրությունը<sup>1</sup>: Սակայն նույնիսկ այս օրենքի ընդունումից հետո նախարարությունները շարունակում էին օրինագծերը ներկայացնել օրենքի խախտմամբ: Ստիպված Նախարարների խորհրդի գործերի կառավարիչը 1919 թ. դեկտեմբերի 23-ին շրջաբերական նամակ է հղում բոլոր նախարարություններին՝ պահանջելով օրինագծի ձևին ներկայացների կատարում: Նամակում արձանագրված է, որ «Կառավարության դիվանը ստիպված է լինում երբեմն մի քանի անգամ վերադարձնել օրինագծերը, մինչև որ նախարարությունը կկատարի օրինագծերը ներկայացնելու պահանջված ձևականությունները: Այդ հանգամանքը տեղիք է տալիս երկուստեր ավելորդ գրագրության, ժամանակի կորսույան, որի հետևանքով հաճախ կառավարության դիվանը հնարավորություն չի ունենում օրինագծերը ժամանակին ներկայացնել պառլամենտու»<sup>2</sup>: Խորհրդարանի ստացած կառավարական օրինագծերի մասին գեկուցվում էր խորհրդարանի ընդհանուր ժողովին՝ մոտակա նիստերից մեկում: Այնուհետև օրինագծերը խորհրդարանի որոշմամբ փոխանցվում էին համապատասխան խորհրդարանական հանձնաժողովին և ընթացք ստանում խորհրդարանի կանոնակարգով սահմանված վարույթակարգին համապատասխան:

Հանրապետության պետական կառավարման կառուցակարգի առանձնահատկություններից մեկն էլ այն էր, որ կառավա-

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետություն, Օրենքների հավաքածու, հրատ. պատմանետի, 1919, դեկ. 5, Եր., թիվ 6, հոդվ. 70, էջ 47-48:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ ԱՍ, ֆ. 199, գ. 1, զ. 58, թ. 202:

րությունն օրենսդիր մարմնի կողմից՝ և Հայաստանի խորհրդի, և Հայաստանի պաղամենտի, ստացել է օրենսդիրի իրավունքներ: Այդ ժամանակաշրջաններն են՝ 1919 թ. ապրիլի 27-ից մինչև օգոստոսի 1-ը և 1920 թ. մայիսի 5-ից մինչև հանրապետության անկումը: Այդ ժամանակամիջոցներում կառավարությունն ընդունել է բազմաթիվ օրենքներ, ընդ որում՝ նաև լուրջ բնույթի հիմնադիր, սահմանադիր օրենքներ, որոնք, ըստ էության, որպես գործադիր ընդունելու իրավունքը չուներ: Օրինակ՝ Միացյալ և Անկախ Հայաստանի հոչակման ակտը և դրա հետ կապված Հայաստանի խորհրդի անդամների քանակի ավելացումը և այլն: 1919 թ. ապրիլի 27-ից մինչև 1919 թ. հունիսի 1-ը կառավարությունը, ըստ հետագայում խորհրդարանին ներկայացրած հաշվետվության, ընդունել էր «99 օրենքներ»: Դրանցից 71-ը 1918 թ. դեկտեմբերից մինչև 1919 թ. փետրվար ամիսն ընկած ժամանակամիջոցը կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով խորհրդարան ներկայացված օրինագծեր էին», որոնք, սակայն, խորհրդարանը չէր հասցել ընդունել<sup>1</sup>: Մնացած 28 (95 – 71 = 28) օրենքները բանակի կազմակերպման, Հայաստանին անցած նոր տարածքների կառավարման, հանրային կրթության հարաբերությունները կարգավորող նորմատիվ ակտեր էին, որոնք, ըստ վարչապետի, «միանգամայն անհետաձգելի էին: 99 օրենքներից

<sup>1</sup> Ընդ որում, կառավարությունը նախապատրաստվել էր իրեն օրենսդրական լիազորություններով օժտելուն: Արդեն 1919 թ. ապրիլի 27-ին, երբ խորհրդարանը նոր միայն պետք է կառավարությանն օժտեր օրենսդրական լիազորություններով, վարչապետը Նախարարների խորհրդի նիստում հաղորդում է, որ Հայաստանի խորհրդի մտցված խորհրդարանին մեկ ամսով արձակուրդ տալու և նոր բոլոր գործառույթները կառավարությանը հանձնելու օրինագիծը: Այդ կապակցությամբ վարչապետի առաջարկության հիման վրա Նախարարների խորհրդն ընդունում է որոշում՝ **ա)** դիմել Հայաստանի խորհրդին խնդրանքով՝ կառավարությանը հանձնել խորհրդում կուտակված բոլոր օրինագծերը, **բ)** բոլոր նախարարություններին առաջարկել կազմել իրենց ներկայացրած օրինագծերի ցուցակը և դրանցից առանձնացնել ու կառավարությանը ներկայացնել այն օրինագծերը, որոնք նախարարությունների կարծիքով անհետաձգելի են (տե՛ս ՆԽ-ի 1919 թ. ապրիլի 27-ի նիստի թիվ 67 օրագիրը (ՀՀ ԱՍ, ֆ. 199, գ. 1, գործ 14, 1-ին մաս, թերթ 84-85): Հետազոտում պատվանանոր վերացրեց այդ օրենքը և 1919 թ. դեկտեմբերի 22-ին ընդունեց «Օրենքն ուժի մեջ մտնելու ժամանակի մասին» օրենքը (տե՛ս Հայաստանի Հանրապետություն, Օրենքների հավաքածու, հրատ. պատվանանոր, 1919, դեկտեմբերի 25, Եր., թիվ 9, հոդ. 94, էջ 69):

96-ը անցել են միաձայն»<sup>1</sup>: Այդ օրենքների մի մասը, հատկապես պետական մարմնների և հաստատությունների նախահաշիվներն ու հաստիքացուցակները սահմանող ակտերը, իսկապես, անհետաձգելի էին, ու շատ իրատապ էր դրանց օպերատիվ ու արագ գործադրությունը: Չանի որ Հայաստանի խորհրդուն արձակուրդում էր, և նրա օրենքների հավաքածուն չէր իրապարակվում, մնում էր «Կառավարության լրաբերում» դրանց իրապարակումը և այնուհետև ուժի մեջ մտնելը: Դա ևս բավականին դանդաղաց շարժ գործներաց էր: Այդ պատճառով 1919 թ. մայիսի 5-ին՝ ֆինանսների նախարարի առաջարկով, Նախարարների խորհրդն ընդունեց օրենք «Օրենքները հաստատելու օրից ուժի մեջ մտցնելու մասին»<sup>2</sup>: 1919 թ. հունիսի 5-ին, նորից ստանալով «պատվանանոր իրավունքները», կառավարությունը շարունակեց իր օրենսդրական գործունեությունը: Եթե մինչ այդ ընդունվել էր 99 օրենք, ապա հունիսի 6-ից մինչ օգոստոսի 1-ն ընկած ժամանակամիջոցում նա ընդունեց ևս 53 (152 - 99 = 53) օրենք<sup>3</sup>:

Հետաքրքիր է, որ Նախարարների խորհրդի կողմից ընդունված օրենքների խորհրդարանական վերահստատման գործներաց չէր սահմանված: Սակայն կառավարությունն իր կողմից ընդունված օրենքների ցուցակը 1919 թ. հունիսի 5-ին ներկայացրել էր Հայաստանի խորհրդի նախազարդյանը<sup>4</sup>: Բայց այդ օրն ընդունած օրենքի համաձայն՝ «Հայաստանի խորհրդի պարագ-

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի խորհրդի 1919 թ. հունիսի 5-ի նիստի արձանագրությունը («Հայաստանի աշխատավոր», թերթ, 1919, հունիս, թիվ 65):

<sup>2</sup> Տե՛ս ՆԽ-ի 1919 թ. մայիսի 5-ի նիստի թիվ 73 օրագիրը (ՀՀ ԱՍ, ֆ. 199, գ. 1, գործ 14, 1-ին մաս, թերթ 84-85): Հետազոտում պատվանանոր վերացրեց այդ օրենքը և 1919 թ. դեկտեմբերի 22-ին ընդունեց «Օրենքն ուժի մեջ մտնելու ժամանակի մասին» օրենքը (տե՛ս Հայաստանի Հանրապետություն, Օրենքների հավաքածու, հրատ. պատվանանոր, 1919, դեկտեմբերի 25, Եր., թիվ 9, հոդ. 94, էջ 69):

<sup>3</sup> Տե՛ս Հայաստանի պատվանանորի 1919 թ. օգոստոսի 1-ի նիստի արձանագրությունը («Հայաստանի աշխատավոր», թերթ, 1919, օգոստոս, թիվ 115):

<sup>4</sup> Տե՛ս Հայաստանի խորհրդի 1919 թ. հունիսի 5-ի նիստի արձանագրությունը («Հայաստանի աշխատավոր», թերթ, 1919, հունիս, թիվ 65):

մունքները դադարեցվեցին» ընդհանրապես, և Հայաստանի խորհուրդը հնարավորություն չունեցավ արտահայտելու իր վերաբերմունքը կառավարության կողմից ընդունված օրենքների նկատմամբ: Երբ գումարվեցին նորընտիր խորհրդարանի նիստերը, նրա դեկավար մարմինների ու հանձնաժողովների կազմավորումից հետո որոշ պատգամավորներ սկսեցին հետաքրքրություն դրսւորել կառավարության՝ 1919 թ. ապրիլի 27-ից մինչև հուլիսի 31-ն իրականացրած օրենսդրական գործունեության նկատմամբ: Արդյունքում 1919 թ. օգոստոսի 15-ի նիստում դաշնակցական խմբակցությունը դիմում է խորհրդարանի նախագահությանը՝ պահանջելով, որ կառավարության ընդունած օրենքները «քերվեն պառակնենտ, որպեսզի հարկ եղածները վերաքննության ենթարկվեն»<sup>1</sup>: Պառակնենտն ընդունում է այդ առաջարկը և այն մտցնում առաջիկա նիստի օրակարգի մեջ: 1919 թ. օգոստոսի 24-ին՝ քննելով այդ հարցը, պառակնենտն ընդունում է որոշում՝ «լիազորել օրենսդրական հանձնաժողովին՝ պահանջել կառավարությունից սույն թվի ապրիլի 28-ից սկսած բոլոր հրատարակած օրենքները և դրանցից պառակնենտի քննության նյութ դարձնել այն օրենքները, որոնք օրենսդիր հանձնաժողովն անհրաժեշտ կգտնի»: Այդ հարցը քննելիս սոց.-հեղ. խմբակցությունն առաջարկեց մեկ այլ բանաձև, այն է. «Պարտավորեցնել Նախարարների խորհրդին երկու շաբաթվա ընթացքում ներկայացնել պառակնենտին ի քննություն և ի հաստատումն բոլոր այն օրենքները, որոնք հրատարակված են ապրիլի 28-ից մինչև օգոստոսի 1-ը, այն լիազորությունների հիման վրա, որ տրված էին Նախարարների խորհրդին Հայաստանի խորհրդի կողմից»:<sup>2</sup> Այսպիսով, ընդդիմությունը պահանջում էր կառավարության ընդունած բոլոր օրենքներն անխստիր վավերացնել խորհրդարանում, սակայն դաշ-

նակցական խմբակցությունն այդ դիրքորոշմանը դեմ գնաց՝ հարցի լուծումը թողնելով օրենսդրական հանձնաժողովի հայեցողության վրա: Պարզ է, որ ընդդիմության դիրքորոշումը չէր կարող անցնել, քանի որ պառակնենտում արդեն գերակշռող մեծամասնությունը պատկանում էր դաշնակցությանը: Մոտ մեկ ամիս հետո՝ 1919 թ. հոկտեմբերի 1-ին, օրենսդրական հանձնաժողովը գեկուցում է խորհրդարանին իր կատարած աշխատանքների մասին: Ցավոք, խորհրդարանի այս նիստի արձանագրությունը շատ համառոտ է, և հնարավոր չէ պարզել մանրամասնությունները: Ըստ օրենսդրական հանձնաժողովի ներկայացուցչի գեկուցման՝ «... հունիսի 5-ից մինչև օգոստոսի 1-ը կառավարության հրատարակած օրենքներից 150-ը վերաքննության կարու չեն, իսկ 34 օրենքներ հանձնաժողովը քննել է, ուստի և առաջարկում է ուղարկել համապատասխան հանձնաժողովների քննությանը»: Հանձնաժողովի գեկուցումն առաջ է բերում մտքերի փոխանակություն, որի մանրամասներն արձանագրված չեն: Ըստ արձանագրության առաջարկված երեք բանաձներից՝ «Զայների մեծամասնությամբ ընդունվում է պատգամավոր Արդությանի առաջարկը: 34 օրենքները վերադարձնել նախագահությանը՝ բաշխելու համապատասխան հանձնաժողովներին, որոնք իրենց եզրակացություններով կմտցնեն պառակնենտ՝ որպես նոր օրինագծեր»<sup>1</sup>: Ամենայն հավանականությամբ ընդդիմությունը նորից դեմ է դրւու եկել դաշնակցական խմբակցության դիրքորոշմանը՝ առաջարկելով կառավարության բոլոր օրենքների վերաքննություն խորհրդարանում, որը, սակայն, չի ընդունվել խորհրդարանական մեծամասնության կողմից:

Կառավարությունը երկրորդ անգամ բավականին երկար ժամանակով ձեռք բերեց խորհրդարանի իրավունքները 1920 թ. մայիսի 5-ից, որն ըստ էության տևեց մինչև հանրապետության ան-

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի պառակնենտի օգոստոսի 15-ի նիստի արձանագրությունը («Հայաստանի աշխատավոր», թերթ, 1919 թ., օգոստոս, թիվ 123-124):

<sup>2</sup> Տե՛ս Հայաստանի պառակնենտի 1919 թ. օգոստոսի 24-ի նիստի արձանագրությունը («Հայաստանի աշխատավոր», թերթ, 1919, օգոստոս, թիվ 130):

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի պառակնենտի 1919 թ. հոկտեմբերի 1-ի նիստը («Յառաջ», թերթ, Եր., 1919, հոկտեմբեր, թիվ 13):

կումը: Այդ ընթացքում ևս կառավարությունը ծավալեց լուրջ օրինաստեղծ գործունեություն<sup>1</sup>: Դրա վերաբերյալ ամբողջական հաշվետվություն պառական է այս գործունեության մեջ հայտնվելը և անկումն այդպիսի հնարավորություն չտվեցին: Հայաստանի պառական մեջ 1920 թ. օգոստոսի 2-ի նիստում վարչապետի գեկուցման մեջ կա ընդունվել մեկ պարբերություն՝ նվիրված կառավարության օրենսդրական գործունեությանը: «Այս երկու ամսվա ընթացքում կառավարությունն ընդունել է 52 օրինագիծ, անց է կացրել 117 նախահաշիվ ու վարկ և ունեցել է շատ կարևոր որոշումներ»<sup>2</sup>: Ենթադրվում է, որ խոսքը միայն կառավարության հումսի և հումս ամփական օրենսդրական գործունեության մասին է, քանի որ մայիս ամսվա գործունեության համար կառավարությունը հաշվետվություն էր տվել հունիսի 5-ին և ստացել էր խորհրդարանի հավանությունը: Եթե նկատի ունենանք, որ նախահաշիվները և վարկային հատկացումներն օրենքի կարգավիճակ ունեցող փաստաթղթեր էին, ապա կառավարության երկու ամսվա ընթացքում ընդունած օրենքների թիվը հասնում է 169-ի:

Կառավարության կողմից օրենսդրական գործառույթի իրականացման քարենված կառուցակարգ էր պառական հանձնաժողովների միջոցով օրինագծերին օրենքի ուժ տալու հնարավորությունը: Ինչպես Հայաստանի խորհրդում, այնպես էլ Հայաստանի պառական հանձնաժողովների միջոցով օրենքի ուժ տալու հնարավորությունը: Հայաստանի խորհրդի գործունեության ընթացքում գործել են մի քանի նման կառուցակարգեր: Այդ ընթացակարգերից առաջինը խորհրդարանի երկու արտակարգ, հատուկ

<sup>1</sup> Այդ կապակցությամբ դեռ 1920 մայիսին Նախարարների խորհրդն ընդունեց որոշում «Կառավարության մեջ օրենսդրական աշխատանքը գորացնելու մասին»: Այդ որոշմամբ դիմեց պառական նախագահությանը՝ իր դիմանի պաշտոնյաներից մի քանիսին դնել կառավարության տրամադրության տակ (տե՛ս ՆԽ-ի 1920 թ. մայիսի 5-ի նիստի թիվ 251 որագիրը (ՀՀ ԱԱ, ֆ. 199, գ. 1, գ. 118, 1-ին մաս, թ. 70):

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 206, գ.1., գ.2, թ.5:

մարմիններն էին, որոնք իրենց բնույթով նման էին հանձնաժողովներին, սակայն լիազորությունների առումով էապես տարբերվում էին դրանցից: Այդ մարմինների ստեղծումը պայմանավորված էր ռազմական և դիվանագիտական գաղտնիքների պաշտպանության անհրաժեշտությամբ: Հայաստանի խորհրդի որոշ խմբակցություններ, մեղմ ասած, բարեկամաբար չեն տրամադրված հայկական պետականության նկատմամբ: Այստեղից էլ առաջանում էր որոշակի ոլորտներում ծերանրկվող միջոցառումների գաղտնիության պահպանման հիմնախնդիրը: Որպեսզի երաշխավորվի այդ գաղտնիությունը, Հայաստանի խորհրդի նախագահն առաջարկում է կառավարությանը ստեղծել խորհրդի անդամներից կազմված հատուկ մարմին, որը կառավարության հետ համատեղ պետք է լուծեր ռազմական գերատեսչության և արտաքին քաղաքականության հարցերը<sup>1</sup>: Կառավարությունը 1918 թ. օգոստոսի 8-ին քննարկելով այդ նախաձեռնությունը՝ համաձայն վում է խորհրդի առաջարկին: Նույն օրը տեղի է ունենում կառավարության անդամների և Հայաստանի խորհրդի խմբակցությունների ներկայացուցիչների համատեղ նիստը<sup>2</sup>: Քննարկումների արդյունքում խորհրդի ներկայացուցիչների և կառավարության անդամների համատեղ նիստը որոշում է ստեղծել երկու հանձնաժողովներ, որոնք կառավարության հետ համատեղ լուծելու էին ռազմական գերատեսչության և արտաքին քաղաքականության կարևորագույն հարցերը: Հանձնաժողովները քաղաքացած էին Հայաստանի խորհրդի անդամներից՝ խորհրդի ընտրությամբ<sup>3</sup>: Անդամներին ներկայացնելու էին խորհրդի հայկական կազմ ունեցող խմբակցությունները:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 206, գ.1., գ.2, թ.5:

<sup>2</sup> Խորհրդի ներկայացուցիչներն էին՝ Հայաստանի խորհրդի նախագահ Ա. Սահակյանը, պատգամավորներ Հեր-Հակոբյանը, Արշամ Խոնդլարյանը, Հայկ Ազատյանը, Արշալույ Միհրաբյանը և Սմբատ Խաչատրյանը: Ինչպես տեսնում ենք, նաև նակցում էին միայն խորհրդարանի հայկական խմբակցությունների ներկայացուցիչները:

<sup>3</sup> Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 201, գ. 1., գ. 484, թ. 5:

Որպեսզի հետագայում չառաջանա բանավեճ, կառավարության առաջարկով համատեղ նիստում որոշվեց, որ կարևորագույն են ճանաչվում այն հարցերը, որոնք՝ 1) խորհրդում օրենսդրական կարգով ենթակա են քննարկման, 2) կճանաչվեն կարևորագույն ուազմական և արտաքին գործերի նախարարների կողմից<sup>1</sup>: Այսպիսով, ստացվում էր, որ վերը նշված կարևորագույն հարցերի լուծումը, թեկուզ օրենսդրական բնույթի, շրջանցում էին Հայաստանի խորհրդի նիստերը, այնտեղ չէին անցնում ընդիհանուր հիմունքներով քննարկման և ընդունման ընթացակարգերը: Արտակարգ հանձնաժողովների հաստատումից հետո դրանք ձեռք էին բերում օրենքի ուժ: Այս երկու արտակարգ հանձնաժողովների գործունեության մասին մասնամասն տվյալներ չեն պահպանվել, բայց ակնհայտ է, որ դրանք գործել են: Այդ հաստատում են այն փաստերը, որ, առաջին՝ Հայաստանի խորհրդի 1918 թ. օրենքների և որոշումների շարքում քիչ են այդ երկու ոլորտներին վերաբերող հարցերը: Դա նշանակում է, որ այդ հարցերը լուծվում էին բուն խորհրդի նիստերից դուրս և չէին հրապարակվում: Այս երկու կառույցներից զինվորականը գործեց մինչև Հայաստանի խորհրդի զինվորական մշտական հանձնաժողովի ստեղծումը՝ 1918 թ. սեպտեմբերը: Դրանից հետ պաշտպանական ոլորտի օրինագծերը և հարցերը անցնում էին այս հանձնաժողովով, որը, սակայն, նույնպես օժտված էր արտակարգ լիազորություններով: Այսպես՝ կառավարության 1918 թ. սեպտեմբերի 1-ի որոշումից ակնհայտ է դառնում, որ զինվորական հանձնաժողովը, շրջանցելով խորհրդարանը, կարող էր կառավարությանը հատկացնել վարկեր պաշտպանական ոլորտի ծախսերը կատարելու համար<sup>2</sup>: Սեկ այլ

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 201, գ. 1, գ. 484, թ. 5, նաև ֆ. 206, գ. 1, գ. 2, թ. 5:

<sup>2</sup> Այդ օրը զինվորական նախարարը կառավարությանը գեկուցում է հետախուզության և հակահետախուզության ծախսերի համար միջոցներ տրամադրելու անհրաժեշտության մասին: Կառավարության նիստի օրագրում որոշումը ձևակերպված է հետևյալ կերպ: «Հավանություն տալ և խնդրել պարլամենտի զինվորական հանձնաժողովին բաց բողնել այդ գումարը» (տե՛ս ՆԽ-ի 1919 թ. սեպտեմբերի 1-ի նիստի թիվ 145 օրագիրը (ՀՀ ԱԱ, ֆ. 199, գ. 1, գ. 14, 2-րդ մաս, թ. 47):

դեպքում, կառավարության 1918 թ. հոկտեմբերի 12-ի նիստում պաշտպանական ոլորտի ֆինանսական օրինագիծը, հավանություն ստանալով, ներկայացվում է «Հայաստանի խորհրդի զինվորական հանձնաժողովի և կառավարության խառը նիստի քննությանը»<sup>1</sup>: Որդումից բխում է, որ խառը նիստում հավանություն ստանալուց հետո օրինագիծը ձեռք էր բերում օրենքի ուժ:

Խորհրդարանական օրինաստեղծագործության ստվրական ընթացակարգը շրջանցելու կառուցակարգ էր նաև 1919 թ. գործած հայկական խմբակցությունների մասնավոր խորհրդակցությունը: Արխիվային նյութերում հաջողվել է հայտնաբերել այս արտակարգ մարմնի երկու նիստերի արձանագրությունները. դրանցից մեկը թվագրված է 1919 թ. մարտի 16-ով, իսկ մյուսը՝ մարտի 18-ով: Առաջին նիստում, որը վարել է խորհրդի նախագահ Ա. Սահակյանը, գեկույցով հանդիս է եկել վարչապետի պաշտոնակատար Ա. Խատիսյանը: Նիստի արձանագրության մեջ ամրագրված է հետևյալը. «Հայաստանի խորհրդի հայ ֆրակցիաների խորհրդակցությունը լսելով ՀՀ կառավարության մինիստր-նախագահի պաշտոնակատարի գեկուցումը մեր երկրի սահմաններին սպառնացող վտանգի և մեր զորքի անկազմակերպ կացության մասին, ի նկատի առնելով նաև, որ Հայաստանի խորհրդի նիստերը կանոնավոր չեն գումարվում, մինչդեռ զորքը վերակացմելով և զորեղացնելու համար կառավարությունը դրամի անմիջական կարիք ունի, որոշեց. «Ժույլ տալ Կառավարությանը զորական նախահաշվի հետևյալ պարագափներից վրա նոյն նախահաշվների մյուս պարագափներից դրամ ծախսել. լրաց են. 1) Զինվորների սնունդը լավացնել՝ սննդադրամը շատացնելով, 2) Զորային զորքը կանոնավորելու համար անհրաժեշտ ծիեր և ջորիներ գնել, 3) Զորային զանազան մասնագիտական աշխատանքների համար ոռջկով մասնագետ ծառայողներ պահել»:

<sup>1</sup> Տե՛ս ՆԽ-ի 1918 թ. հոկտեմբերի 12-ի նիստի թիվ 55 օրագիրը (ՀՀ ԱԱ, ֆ. 199, գ. 1, գ. 207):

Այս առաջարկն անցնում է միաժայն: Զեկուցման մյուս մասը քննելու համար որոշվում է մասնավոր խորհրդակցություն գումարել մարտի 18-ին»<sup>1</sup>:

Խորհրդարանի հայկական խմբակցությունների մասնավոր խորհրդակցությունը նիստ է գումարել նաև մարտի 18-ին: Որպեսզի հասկանանք կատարվածի եռարյունը, այդ արձանագրությունը բերենք ամբողջությամբ: «Արձանագրություն 1919 թ. մարտի 18-ի Հայաստանի խորհրդի հայ ֆրակցիաների մասնավոր խորհրդակցության»:

Մինհատր-նախագահի պաշտոնակատար այ. Ա. Խատիսյանը խոսք առնելով հիմնավորում է նախորդ ժողովին արած զեկուցությունը և առաջարկում է քույլ տալ կառավարությանը՝ ա) ընդհանուրապես գորային նախահաշվի մի պարագրաֆից մյուսը ծախսեր անել. բ) երկրի սահմանները ապահովելու համար արտակարգ և համապատասխան միջոցներ ձեռք առնել և զ) բանալ կառավարությանը 10 մլն ռ վարկ՝ այդ նպատակներով ծախսեր անելու: Ապա այ. Խատիսյանն առաջարկում է այդպիսի բացառիկ հանգամանքներում Մինհատրների խորհրդին տալ ավելի լայն իրավունքներ՝ համապատասխան միջոցների դիմելու, վստահելով, որ նա այդ իրավունքներից կօգտվի բացառիկ հանգամանքներում միայն:

Ժողովը՝ քննության առնելով կառավարության արած առաջարկությունը, ընդունում է ՀՅԴ ֆրակցիաների հետևյալ որոշումը. «Երկրի պաշտպանության և զորքի վերակազմավորման գործը փորացնելու համար. ա) լիազորել կառավարությանը արտակարգ միջոցներ ձեռք առնել. բ) քույլ տալ կառավարությանն օգտվել զինվորական նախահաշվի գումարներից՝ մի պարագրաֆից մյուսին անցնելով. զ) նոր վարկ բանալ 10 մլն. ռ՝ կառավարության անունով՝ նույն նպատակի համար»:

ՀՅԴ ֆրակցիայի այս առաջարկությանը միանում է ՀԺԿ-ի

ֆրակցիան: *Սոցիալ-դեմոկրատական ֆրակցիան պատճառ բերելով, որ Հայաստանի խորհրդի վերջին նիստում դաշնակցական ֆրակցիան հայտարարել է, որ առաջին հերթին նա քննելու է խորհրդի շենքում եղած ինցիդենտը վետրվարի 28-ին պատահած, տեղական ինքնակարության և նոր խորհրդի ընտրությունների օրինագիծը և, որովհետև նոյն ֆրակցիան այս մասնավոր նիստում այդ առաջարկությունները հետ չի վերցնում, բանաձեռնության կեսին նոցա հեռանում են ժողովից:*

*Սոցիալիստ-հեղափոխականների ֆրակցիան համաձայնություն է տրված բանաձեռն այն պայմանով, որ կամ Ավագների խորհուրդը և կամ խորհրդից ընտրված մի նոր հանձնաժողով հակի և վարե արտաքին քաղաքականությունը: Որովհետև սոցիալիստ-հեղափոխականների այս պայմանը չի ընդունվում, նոքա ևս հեռանում են ժողովից»<sup>1</sup>:*

Այսպիսով, խորհրդարանի հայկական խմբակցությունների մասնավոր խորհրդակցությունը խորհրդին շրջանցելու յուրահատուկ ձև էր, որը, սակայն, տապալվեց: *Սոց.-դեմ. կուսակցության խմբակցությունը խորհրդարանական կուլիցիայի հետ համագործակցությունը պայմանավորում էր պառլամենտական ընտրությունների գաղափարից հրաժարվելով, զգալով, որ ապագա խորհրդարանում ինքը ձայններ չի ստանալու:*

Օրենսդիրին շրջանցելու կառուցակարգեր գործել են նաև Հայաստանի պառլամենտի գործունեության ժամանակաշրջանում: Հայաստանի պառլամենտի զինվորական հանձնաժողովը ևս օժտված էր արտակարգ լիազորություններով<sup>2</sup>: Բացի այդ, զինվորական հանձնաժողովի բոլոր 8 անդամները դաշնակցա-

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, գ. 1, գ. 27, թ. 150:

<sup>2</sup> Հայաստանի պառլամենտն արտաքին հարաբերությունների հանձնաժողով չուներ: Դրա 1920 թ. հունվարի 10-ի նիստում քննության է առնվում պատգամավոր Լ. Թումանյանի առաջարկը՝ արտաքին գործերի հանձնաժողովը ընտրելու մասին, սակայն խորհրդարանը քվեարկությամբ (10 կողմ, 18 դեմ, մեկ ձեռնպահ ձայներով) այդ առաջարկը մերժում է (տե՛ս «Հայաց», թերթ, 1920, 1 փետրվարի, թիվ 23, ինչպես նաև ՀՀ ԱԱ, ֆ. 198, գ. 52, թ. 14):

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, գ. 1, գ. 27, թ. 149:

կան էին: Հանձնաժողովը՝ շրջանցելով խորհրդարանին, կարող էր կառավարությանը հատկացնել վարկեր պաշտպանական ոլորտի ծախսերը կատարելու համար: Այսպես, 1919 թ. սեպտեմբերի 1-ին զինվորական նախարարը գեկուցել է Նախարարների խորհրդին հետախուզության և հակահետախուզության ծախսերի համար նախարարությանը վարկ տրամադրելու մասին: Կառավարությունը՝ հավանություն տալով նախարարի առաջարկությանը, դիմել է պառլամենտի զինվորական հանձնաժողովին՝ այդ գումարը բաց թողնելու խնդրանքով<sup>1</sup>: Խորհրդարանի հայկական խմբակցությունների մասնավոր խորհրդակցությունը այստեղ ևս գործել է, երբեմն ընդունելով շատ կարևոր որոշումներ: Հանդիպում են նաև խորհրդարանների բոլոր խմբակցությունների ներկայացուցիչների խորհրդակցությունը, խորհրդարանական հանձնաժողովների նախագահների խորհրդակցությունը: Սակայն բոլոր այդ խորհրդակցությունների խորհրդարանական կարգավիճակի, ընդունած որոշումների բնույթի վերաբերյալ տվյալներ չեն պահպանվել<sup>2</sup>:

\* \* \*

Սուազին հանրապետության կառավարության իրավասությունը չուներ որևէ իրավական ամրագրում, սակայն ակնհայտ է, որ դրա իշխանությունը՝ որպես գործադիր-կարգադրիչ, ուներ ենթաօրենսդրական նշանակություն: Կառավարության իրավասության հարցերը կարգավորում էին «կառավարությունը և նրա դեկազրի իրականացնում են ազգային քաղաքականության մշակումն ու կենսազործում» դասական բանաձևով: Արխիվային նյութի հետազոտությունը թույլ է տալիս կառավարությունը բնութագրել որպես երկրի ընթացիկ կառավարումն իրականացնող ընդհանուր իրավասության գործադիր-կարգադրիչ մարմին, որի իրավասությունն ընդգրկում էր պետական կյանքի բոլոր հարցե-

րը, որքանով որ դրանք չեն վերապահված խորհրդարանի և մյուս պետական մարմինների իրավասությանը:

Կառավարության հիմնական գործառույթը պետության արտաքին և ներքին քաղաքականության ընդհանուր ծրագրի առաջարկությունն էր, դրա ձևակերպումը, ինվեստիտուլան խորհրդարանում և, անշուշտ, կենսագործումը կյանքում, իսկ դրա իրականացման իրավաբանական ձևը նոր ձևավորվող կառավարության հայտարարագիրն էր, որը, որպես կառավարության գործողությունների քաղաքական ծրագիր, հաստատվում էր խորհրդարանում: Առաջին հանրապետության հինգ կառավարություններից հայտարարագիր ունեցել են միայն առաջին, երրորդ և հինգերորդ կառավարությունները: Բացի գործադիր կանոնակարգող իշխանությունից, Առաջին հանրապետության կառավարությունն ուներ լայն լիազորություններ, որոնք թույլ էին տալիս նրան լուրջ կերպով ազդել օրենսդրական գործընթացի վրա: Այդ ազդեցության լծակները երկուսն էին՝ առաջին՝ կառավարության օրենսդրական նախաձեռնության իրավունքը և դրան հարակից մի շարք իրավունքներ, երկրորդ՝ կառավարությանն օրենսդիր մարմնի իրավագորությունների փոխանցման արդյունքում նրա կողմից իրականացվող պատվիրակված օրինաստեղծ գործունեությունը: Կառավարության կողմից օրենսդրական գործառույթի իրականացման թարմված կառուցակարգ էր պառլամենտական հանձնաժողովների միջոցով օրինագծերին օրենքի ուժ տալու հնարավորությունը, ինչպես նաև կառավարության և խորհրդարանի անդամներից կազմված հատուկ հանձնաժողովները, խորհրդարանի հայկական խմբակցությունների մասնավոր խորհրդակցությունը:

<sup>1</sup> Տե՛ս ՆԽ-ի 1919 թ. սեպտեմբերի 1-ի նիստի թիվ 145 օրագիրը (ՀՀ ԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, 2-րդ մաս, թ. 47):

<sup>2</sup> Տե՛ս «Յառաջ», թերթ, 1920, փետրվար, թիվ 23:

## § 5. Գործադիր իշխանության ենթաօրենսդրական ակտերը և «պարտադիր որոշումների» ինստիտուտը

Կառավարության կողմից ընդունված ակտերն իրենց իրավաբանական բնույթով տարատեսակ նշանակություն ունեին: Դասական սահմանադրական դրկտրինային համապատասխան՝ գործադիր իշխանության ակտերն իրենց բնույթով ենթաօրենսդրական ակտեր էին և ընդունվում էին օրենքի հիման վրա՝ ի կատարումն դրա: Կառավարության ընդունած ակտերը կարելի է բաժանել երկու տեսակի՝ նորմատիվ իրավական ակտեր և անհատական իրավական ակտեր: Նորմատիվ իրավական ակտերը, որոնք ընդունվել են Առաջին հանրապետության կառավարության կողմից, իրենց հերթին բաժանվում են երկու տեսակի՝ օրենքներ և ենթաօրենսդրական նորմատիվ ակտեր, որոնց պաշտոնական անվանումն էր «որոշում»: Կառավարությունն օրենքներ ընդունելու լիազորություններ ստացել է երկու անգամ՝ 1919 թ. ապրիլի 27-ից մինչ օգոստոսի 1-ը և 1920 թ. մայիսի 5-ից մինչ հանրապետության անկումը:

Չուտ իրեն պատկանող իրավասության շրջանակում կառավարության ընդունած նորմատիվ ակտերը՝ որոշումները, իրենց կարգավիճակով ենթաօրենսդրական ակտեր էին և կարգավորում էին գործադիր իշխանության իրավասության շրջանակում գտնվող տարաբնույթ և բազմազան հարաբերություններ: Կառավարության նորմատիվ որոշումներն ունեին համապատասխան բնույթ, գործում էին ամբողջ երկրի տարածքում և կազմում էին նոր ձևակորվող ազգային իրավունքի կարևորագույն մասը: Կառավարության ընդունած ակտերի քանակական աճը և ոլորտային ընդարձակումը ցույց էին տալիս կառավարության դերի անընդհատ աճը պետական իշխանության կառուցակարգում, որը երբեմն մրցակցում էր օրենսդիրի հետ, դրսնորում էր օրենքներին դուրս մղելու միտում:

Կառավարության ընդունած ակտերի իսկական օրինակը ստորագրում էին նախարար-նախագահը, գործերի կառավարիչը

և քարտուղարը: Իսկականի պատճենները բազմացնում էր Նախարարների խորհրդի քարտուղարը և իր ստորագրությամբ ուղարկում էր համապատասխան նախարարությունների դիվաններին՝ ի գիտություն և ի կատարումն այն դրույթների, որոնք վերաբերում էին տվյալ նախարարությանը<sup>1</sup>:

Կառավարության որոշումները հրապարակվում էին «Կառավարության լրաբեր» պաշտոնաթերթում: 1920 թ. մայիսի 8-ին Նախարարների խորհրդի ընդունած որոշման համաձայն՝ «Հառաջ» թերթի մեջ հրապարակված կառավարական որոշումները ևս համարվում էին պաշտոնական հրապարակում<sup>2</sup>:

ՀՀ կառավարությունը, ինչպես նաև վարչապետը, շրջաբերական նամակներով և կոչերով դիմում էին գործադիր իշխանության տեղական և կենտրոնական, ինչպես նաև ինքնակառավարման մարմիններին, ազգաբնակչությանը: Օրինակ՝ 1920 թ. օգոստոսի 25-ին նախարարապետ Հ. Օհանջանյանը հրապարակել է հետևյալ կոչը: «Հայաստանի ազգաբնակչության և զորածակատի միջև սերտ կապ հաստատելու նպատակով կազմակերպված է «Զորածակատին օժանդակող կոմիտե», որի կենտրոնը գտնվում է Երևանում և շտուռ ճյուղերը կրում այլ գործում և հանրապետության մյուս քաղաքներում<sup>3</sup>: ՀՀ զորքը, որ անձնվի-

<sup>1</sup> Տե՛ս ՆԽ-ի 1919 թ. մայիսի 20-ի նիստի թիվ 87 օրագիրը (ՀՀ ԱԱ, ֆ. 199, գ. 1, գ. 14, 1-ին մաս, թ. 106):

<sup>2</sup> Տե՛ս ՆԽ-ի 1920 թ. մայիսի 8-ի նիստի թիվ 254 ա օրագիրը (ՀՀ ԱԱ, ֆ. 199, գ. 1, գ. 118, 1-ին մաս, թ. 82):

<sup>3</sup> «Զորածակատին օժանդակող կոմիտեն» (ԶՕԿ) ստեղծվել էր 1920 թ. ամռանը: Որպես հասարակական նախաձեռնության հիմնա վրա գործող կազմակերպություն՝ նրա կանոնադրական խնդիրներն էին՝ դասավառության դեմ պայքարին օժանդակելը, հայրենիքի ինքնապաշտպանության քարոզչությունը, գինվորների կարիքավոր ընտանիքների ապահովության հոգացողությունը, անկախության փոխառության հաջողությանը նպաստելը: ԶՕԿ-ի մասնաճյուղերը պետք է կազմակերպվեին ՀՀ գավառային քաղաքներում, շրջանային կենտրոնական վայրերում և գյուղերում: Գյուղական կոմիտեները պետք է ենթական շրջանային կոմիտեներին, վերջիններս՝ գավառային կոմիտեներին: Այդ կազմակերպության կենտրոնական կոմիտեի նախաձեռնություններից մեկն էլ «զորաց ուժեստի փոնդ» կազմելն էր (տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 215, գ. 1, թթ. 296-299):

րաբար և արիաբար պաշտպանում է Հայրենիքի ազատությունն ու անկախությունը մեր քաջնատեսակ թշնամիների դեմ, պեսար է մեր ժողովրդի հաստոկ գորգուրանքի առարկա դառնա, քանի որ նրանց ենք պարտական մեր կյանքի, գույքի և պատվի պաշտպանության համար: Այն երիտասարդը, որ գորքի մեջ չէ, և այն քաղաքացին, որ գորքի հետ չէ, հայ ժողովրդի թշնամին է: Չորքը զոհում է իր անձն ու իր աշխատանքը, թերևացնելու այն ծանր պարտականությունը, որ անողոք պայմանների բերումով բաժին է ընկած մեր քաջարի գորքին: Ուստի ողջունելի է «Զորաճակատին օժանդակող կոմիտեի» կազմակերպությունը և արժանի քաջալերանքի: Հրամայում եմ պաշշաճավոր իշխանություններին, աշակեցություն ցույց տալ այդ կոմիտեին և նրա գործականներին, որ կարողանան հաջողությամբ կատարել իրենց հաճրօգուտ հանձնառությունները»<sup>1</sup>: Նման կոչերով բնակչությանը դիմում էր ոչ միայն կառավարությունը, այլև վարչապետը: Այսպես, «հայրենիքի փրկության կառավարությունը» չմշակեց և խորհրդարանի հաստատմանը չներկայացրեց հայտարարագիր՝ որպես կառավարության գործունեության ծրագիր, այլ ընդունեց և հրապարակեց ՀՀ քաղաքացիներին ուղղված «Կոչ»-եր (1920 թ. մայիսի 5-ին): Դրանցից մեկը կառավարության կողմից ուղղված էր ժողովրդին: Կոչը պետք է ստորագրվեր բոլոր նախարարների կողմից, տպագրվեր և տարածվեր: Երկրորդ կոչն ուղղված էր գորքին և պաշտոնությանը՝ ստորագրված վարչապետի, զինվորական նախարարի և «սպարապետի», այսինքն՝ գլխավոր հրամանատարի կողմից<sup>2</sup>:

**Ծրջաբերական հրահանգները կամ նամակները** հրապարակում էր հիմնականում վարչապետը կամ նրա անունից Նախարարների խորհրդի գործերի կառավարիչը: Օրինակ՝ վարչապետ

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 215, գ. 1, գ. 17, թ. 296:

<sup>2</sup> Տե՛ս ՆԽ-ի 1920 թ. մայիսի 5-ի նիստի թիվ 251 օրագիրը (ՀՀ ԱԱ, ֆ. 199, գ. 1, գ. 118, 1-ին մաս, թ. 70): Կառավարության կողմից ժողովրդին ուղղված կոչի տեքստը տե՛ս Ս. Վրացյան, նշված աշխ., էջ 415-416:

Գ. Խատիսյանը գործադիր իշխանության համակարգի մարմիններին 1920 թ. հունվարի 6-ին ուղարկել է հետևյալ շրջաբերականը. «Պետական մեխանիզմի դանդաղության դեպքերի և հետևապես անկանոնության ամենազիստավոր պատճառներից մեկն էլ այն է, որ հիմնարկությունների դիվաններում գործարարությունը երբեմն տարվում է ոչ ցանկափ արագությամբ: Մի որևէ գրություն, մինչև որ կհասնի իր վերջնական լուծման, անցնում է երբեմն ամիսներ: Այս երևոյթը առանձնապես ամբողյատքելի է պետական նշանակություն ունեցող խնդիրների նկատմամբ, ինչպես, օրինակ, օրինագծերի և ընդհանրապես օրենսդրական աշխատանքների հետ կապված խնդիրները, որոնց դանդաղեցումը զգալի չափով հետաձգում է սեփական օրենսդրություն ունենալու գործը: Ընորիկվ դիվանական օրինազանցությունների մեր երկրի համար անհետածգելի պահանջ ներկայացնող մի օրինագիծ օրենքը է դառնում այն ժամանակ, երբ նրա անհրաժեշտության սուր կարիքն արդեն անցած է լինում:

Ի նկատի ունենալով, որ մեր երկիրը գտնվելով մի անցողիկ շրջանում, երբ օրենքները մեռնում են մինչև որոշ ժամանակներում վերջնական նշանակություն են ստանում, խնդրում են պայմանագրական աշխատանքներին հետ կապված գրագրությունների վրա, մասնավորապես, որպեսզի վերջինները կատարվեն ամենակարճ ժամանակամիջոցում, առաջին հերթին և գործավարությունն արագացնելու վրա ընդհանրապես»<sup>1</sup>:

Կառավարությունն ընդունում էր նաև հայտարարություններ (երբեմն՝ հաղորդագրություններ) ու նոտաներ, որոնք ունեին տարբեր նշանակություն: Հայտարարությունների մի մասը կառավարական կոչեր էին՝ ուղղված բնակչությանը, կամ պաշտոնական տեղեկատվական նշանակություն ունեին: Այսպես, 1920 թ. մայիսյան դեպքերից հետո կառավարությունում պատ-

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 206, գ. 1, գ. 103, թ. 3:

րաստվեց և հրապարակվեց Ալեքսանդրապոլի դեպքերի հաղորդագրությունը<sup>1</sup>: Մյուս մասն օրենքների պարզաբանման իմաստունեցող ակտեր էին: Օրինակ՝ 1919 թ. օգոստոսի 8-ին կառավարությունն ընդունել է հայտարարություն «Հայաստանի բոլոր օրենքները թե՛ ռուսահայերի և թե՛ տաճկահայերի, անխափ բոլորի համար պարտադիր լինելու մասին» և որոշել է հրապարակել այն<sup>2</sup>: Կառավարությունն ընդունում էր այլ պետությունների բողոքի նոտաները և արձագանքում դրանց, ինչպես նաև ինքն էր հղում բողոքի նոտաներ՝ ողջված այլ պետությունների:

Գործադիր իշխանության արտակարգ լիազորություններից էր «պարտադիր որոշումների» կայացման իրավունքը: «Պարտադիր որոշումների» ինստիտուտը հանրապետությունը ժառանգել էր ռուսական իրավական համակարգից: Պարտադիր որոշումներ իրավարակելու իրավունքը սահմանված էր 1881 թ. «Պետական կարգերի ու հասարակական հանգստության պահպանության, առանձին տարածքներում ուժեղացված դրություն հայտարարելու» կանոնադրությամբ: Այդ օրենքը սահմանում էր, որ պարտադիր որոշումները իրավարակվում են այն շրջաններում, ուր հայտարարված է ուժեղացված կամ արտակարգ պահպանության կամ զինվորական դրություն: Պարտադիր որոշման ընդունման իրավունքը պատկանում էր նահանգապետերին, քաղաքապետերին: Ուստական հիմնական օրենքների 124-րդ հոդվածի համաձայն՝ պարտադիր որոշումներ ընդունելու իրավունք ձեռք բերեցին Նախարարների խորհուրդը, նախարարությունների գլխավոր վարչությունների կառավարիչները և այլ պաշտոնյաներ: Այդ որոշումները չեն կարող հակասել գործող օրենքներին, չեն կարող սահմանել նոր հարկեր և տուրքեր, պարհակներ (վերջիններիս կարգավորման աղբյուրը միայն օրենքն էր): Պարտադիր ու

րոշումների ընդունման իրավունքից զրկված էին զինվորական պաշտոնյանները<sup>1</sup>: Այս ինստիտուտը լայնորեն կիրառվում էր հանրապետությունում, հատկապես այն ժամանակամիջոցներում, երբ խորհրդարանները չեն գործում և խորհրդարանական վերահսկողությունը գործադիր իշխանության նկատմամբ բացակայում էր:

Պարտադիր որոշումները կոչված էին պայքարելու և կանխելու հասարակական կարգի դեմ ուղղված իրավախսումները: Պարտադիր որոշումները կարող էին սահմանել դրամական տուգանքներ: Սակայն պարտադիր որոշումների առանձնահատկությունը այն էր, որ նոյն ռուսական օրենսդրությունից հանրապետությունը ժառանգել էր արտադատական (վարչական) կալանքի ինստիտուտը: Այդպիսով, գործադիր իշխանությունն իր պարտադիր որոշումները երբեմն երաշխավորում էր վարչական կալանքով՝ վկայակոչելով օրենսդրությունը, ըստ որի՝ նա այդ իրավունքն ուներ:

Ուստական դատական կանոնադրությունները գործադիր իշխանությանն այդպիսի լիազորություն տալիս էին: Ուստական դատական բարենորոգման հետազոտողներն արդարադատության իրականացումը միայն դատարանների կողմից սկզբունքի օրենսդրական կենսագործումը գնահատում են ոչ լիարժեք և մասսամբ խախտված այն բանի հետևանքով, որ «Ծրեական դատավարության կանոնադրության» 1-ին հոդվածի ծանոթագրությունը սահմանում էր հետևյալ դրույթը. «Նատական հետապնդում չեն համարվում այն միջոցառումները, որ օրենքով նախատեսված կարգով ձեռնարկում են ոստիկանական և այլ վարչական իշխանությունները հանցագործությունների և զանցանքների կանխման համար»<sup>2</sup>: Այս դրույթը էապես նպաստում էր գործադիր իշխանության ներխուժմանը դատարանների գործունեության ոլորտ՝

<sup>1</sup> Տե՛ս ՆԽ-ի 1920 թ. մայիսի 12-ի նիստի թիվ 257 օրագիրը (ՀՀ ԱԱ, ֆ. 199, գ. 1, գ. 118, 1-ին մաս, թ. 83):

<sup>2</sup> Տե՛ս ՆԽ-ի 1919 թ. օգոստոսի 8-ի նիստի թիվ 136 օրագիրը (ՀՀ ԱԱ, ֆ. 199, գ. 1, գ. 14, 2-րդ մաս, թ. 34):

հնարավորություն տալով նրանց վարչական կարգով կիրառելու արտաքսում և արսոր: Ժամանակավոր կառավարությունը երկրում անհշխանությունները և անկարգությունները կանխելու նպատակով շերացրեց վարչական կալանքի ինստիտուտը, բայց 1917 թ. հուլիսի 16-ին ընդունեց «Արտադատական կարգով կալանված անձանց վերաբերյալ գործերի քննության կարգի մասին» որոշումը<sup>1</sup>: Նոյն տրամաբանությամբ և նախադրյալներից ելնելով՝ Օզակոմը (Հատուկ Անդրկովկասյան կոմիտե) 1917 թ. հոկտեմբերի 27-ին ընդունեց որոշում, որով Անդրկովկասի վարչական իշխանություններին իրավունք տվեց կատարել արտադատական կալանավորում<sup>2</sup>: Ինչպես ցույց են տալիս արխիվային փաստաթղթերը, և՛ կառավարությունը, և՛ նախարարները լայնորեն կիրառում էին «պարտադիր որոշումների» ինստիտուտը և դրանցով նույնիսկ սահմանում էին արտադատական կալանավորում:

\*\*\*

Այսպիսով, Հայաստանի առաջին հանրապետությունում օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների կարճատև գործունեության իրավական փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հանրապետությունը վերցրել էր ոռմանագերմանական տեսակի իրավական համակարգի շինանարության ուղղություն և բարեհաջող ներքին ու արտաքին քաղաքական կացության դեպքում Հայաստանը կունենար կայացած ու առաջնմական աշխարհիկ իրավական համակարգ:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ԱՍ, ֆ. 199, գ. 1, գ. 62, թ. 87, ինչպես նաև գ. 49, թ. 24:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ ԱՍ, ֆ. 199, գ. 1, գ. 62, թ. 85, ինչպես նաև գ. 49, թ. 25:

## ԲԱԺԻՆ 4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՍՏԱԿՄԱԳԸ

### ԳԼՈՒԽ 9. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՍՏԱԿՄԱԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈԽԵՐԸ

#### § 1. Սոցիալիստական հասարակության և պետության տեսական հիմունքները

Հայաստանի առաջին հանրապետության գոյության ժամանականություն ձևավորված հանրապետական պետական կարգերը, պառլամենտարիզմը, իրավական օրենսդրական կարգավորման փորձը իրենց հակասականությամբ հանդերձ մի շարք պատճառների ուժով չապրեցին բնական պատմական զարգացում, որովհետև ընդհատվեցին բոլշևիկյան ամբողջատիրության և դրան համապատասխանող իրավական կարգավորման հաստատմամբ:

Ամբողջատիրական իրավունքի, սոցիալիստական սահմանադրությունների ելակետային սկզբունքները և պատմական զարգացումը պայմանավորված էին մարքս-լենինյան ուսմունքով, որը պետությունը դիտարկում էր որպես կոմունիզմի կառուցման նպատակով բոլոր հասարակական հարաբերությունների վերակառուցման գիսավոր գործիք: Հետևաբար միմյանց բուն սոցիալիստական իրավական կարգավորման հիմնահարցերի քննարկման անցնելը կարիք կա անդրադանալու սոցիալիստական պետության և իրավունքի տեսական հիմունքներին:

Մարդիկ դարերով որոնել են շահագործումից, բռնությունից, նյութական և հոգևոր աղքատությունից ազատվելու ուղիներ: Հերթաքններում, լեզենդներում, ուսուախտ-սոցիալիստների աշխատություններում ձևավորվում էին պատկերացումներ արդար և

մարդասիրական հասարակության մասին: Դեռ XVI դարից սկսած՝ ուստովիստ-սոցիալիստները նկարագրում էին պետություններ (ուստովիստ - վայր, որը չկա), որտեղ հաստատված էր հասարակական սեփականություն, բոլորը բարեխիղճ աշխատում էին հավասարության և ժողովրդավարական կառավարման պայմաններում:

Մարդիկ տարբեր կերպ էին պատկերացնում քանականության, բարու և արդարության հասարակության ու պետության հաստատման եղանակները: Ոմանք հույսը դնում էին իմաստուն և լուսավորյալ միապետների, մյուսները՝ ամրոխին իրենց հետևից տանող քաջարի հերոսների վրա, երրորդները կոչ էին անում դիմելու դավադրությունների և տեռորի՝ ուղղված ընդդեմ իշխողների:

XIX դարի երկրորդ կեսին տեսական կոմունիզմի հիմնադիրներ Մարքսը և Էնգելսը մշակեցին սոցիալիստական հեղափոխության, սոցիալիստական պետության և իրավունքի տեսական հիմքերը, որոնք հետագայում զարգացվեցին Լենինի կողմից, կոմունիստական կուսակցությունների փաստարդերում, մարքս-լենինյան տեսության դիրքերում կանգնած իրավագետների տեսական հետազոտություններում:

Բոլոր ուղղությունների մարքսիստները խոսում են իրենց կողմից առաջ քաշված սոցիալիստական պետության և իրավունքի զարգարի գիտականության և առաջադիմության մասին: Նրանց քաղաքական և գաղաքարական ընդդիմախոսները, բնականաբար, պնդում են հակառակը: Սոցիալիստական պետության և իրավունքի մասին մարքսիստական ուսմունքին տրված գնահատականներից և մոտեցումներից անկախ՝ նրա հիմնական ելակետային դրույթները հանգում են հետևյալին:

1. Սոցիալիստական պետությունը և իրավունքը, համաձայն մարքսիստական տեսության, ծագում են ոչ թե էվոլյուցիոն ճանապարհով, այլ սոցիալիստական հեղափոխության միջոցով: Կոմունիստների մոտակա նպատակն էր, ասկում էր «Կումունիստա-

կան կուսակցության մանիֆեստում», «քուրժուազիայի գերիշխանության տապալումը, պրոլետարիատի կողմից քաղաքական իշխանության նվաճումը»: Մարքսիզմ-լենինիզմի դասականների աշխատություններում հանգանանորեն մշակված էին սոցիալիստական հեղափոխության տեսությունը, նրա նպատակը, իրականացման ձևերը (խաղաղ և ոչ խաղաղ), մեթոդները: Օգտագործելով մարքսիստական թեզը հեղափոխության անընդհատության մասին և առաջ քաշելով իմայերի ականական կայտալիզմի թոհջանակ օրինաչափությունը՝ Լենինը մշակեց բուրժուածողովրդավարական հեղափոխությունը սոցիալիստական հեղափոխության վերամեյու տեսությունը:

2. Սոցիալիստական պետության և իրավունքի առաջացման և զարգացման կարևոր օրինաչափությունը և միաժամանակ նախադրյալը, ըստ մարքսիստական դոկտրինայի, հանդիսանում է հին պետական մեխանիզմի զարդը, բուրժուական պետական ապարատի վերացումը: Բոլոր հեղաշրջումները, գրում էր Մարքսը, միայն կատարելագործել են իին պետական մեքենան՝ փոխանակ զարդելու այն<sup>1</sup>: Զարգացնելով այդ միտքը՝ Լենինը համոզում էր, որ «հեղափոխությունը չպետք է հանգի նրան, որ նոր դասակարգը կառավարի հին պետական մեքենայի օգնությամբ, այլ նրան, որ նա զարդի այդ մեքենան և կառավարի նոր մեքենայի օգնությամբ»<sup>2</sup>: Սակայն Լենինը միաժամանակ կոչ էր անում այդ հարցում դրսերել խիստ տարբերակված մոտեցում, այն իմաստով, որ զարդման ենթակա էին միայն առավելապես հարկադրանքի մարմինները և ինստիտուտները, իսկ հաշվիշ-վիճակագրական գործառույթ կատարող մարմիններն անհրաժեշտ էր պահպանել: Այդ զարդը անխօնելիորեն կապված էր նաև բուրժուական իրավունքի համակարգի հեղափոխական բացասաման հետ:

3. Նոր պետության էությունը, որ գործում է կապիտալիզմից սոցիալիզմին անցնան փուլում, պրոլետարիատի դիկտատուրան

<sup>1</sup> Տե՛ս Ղ ձեռն Է., Յիշաքն Օ., մ՛մ. Օ. 8, էջ 206:

<sup>2</sup> Տե՛ս Էնթ Ա. Է., Ի 1 էջ. մ՛մ Օ. 33, էջ 114-115:

Է: Այս դրույթին մարքսիստական տեսության մեջ այնքան սկզբունքային ու կարևոր նշանակություն էր տրվում, որ դրա հետ անուղղակիորեն կապում էին քաղաքական մտածողների և գործիչների՝ մարքսիզմին կամ օպորտունիզմին պատկանելու հարցը։ Այսինքն՝ իսկական մարքսիստ էր համարվում միայն նա, ով դասակարգային պայքարի ճանաչումը տարածում էր մինչև արությունարիատի դիկտատորայի անհրաժեշտության ընդունումը։ Ըստ մարքսիստական պետության և իրավունքի տեսության՝ արությունարիատի դիկտատորայի պետությունը նորովի ժողովրդակառական պետություն է՝ աշխատավորների համար և նորովի դիկտատորական՝ ընդդեմ բուրժուազիայի։ «Դիկտատորայի անհրաժեշտ հատկանիշը, պարտադիր պայմանը շահագործողների, որպես դասակարգի, բռնի ճնշումն է»<sup>1</sup>։ Պրոլետարիատի դիկտատորայի պետության գլխավոր խնդիր էր համարվում սոցիալիզմի կառուցումը։ Հետևաբար, դասակարգային բռնությունը պրոլետարիատի դիկտատորայի պետության նապատակը չէր, այլ սոցիալիզմի կառուցման համար պայմաններ ստեղծելու մեթոդներից մեկը։

4. Ըստ մարքսիզմի՝ կապիտալիզմից սոցիալիզմի անցման ժամանակաշրջանում սուր պայքար է գնում նորի և հնի միջև, լուծվում է «ով՝ ում» հարցը: Տապալված, բայց դեռ չվերացված շահագործող դասակարգերն անհաջող պայքար են մղում հեղափոխսական իշխանության դեմ: Այդ իսկ պատճառով պետությունը և իրավունքն անցման ժամանակաշրջանում չեն կարող լինել ոչ այլ ինչ, քան ալրոլետարիատի դիկտատուրա: Անցման շրջանի պայմանները պրոլետարիատի դիկտատուրայի առջև դնում են բարդ խնդիրներ՝

ա) քաղաքական ոլորտում պետական իշխանության ամրապնդում, նոր պետական ապարատի և օրենսդրության ստեղծում, պաշտպանություն ներքին և արտաքին թշնամիներից,

բ) տնտեսական ոլորտում՝ բազմակազութաձևության վերա-

ցում, նոր արտադրաեղանակի հաստատում, սոցիալիզմի նյութա-  
տեխնիկական բազայի ստեղծում,

գ) սոցիալ-դասակարգային ոլորտում՝ շահագործող դասակարգերի վերացում, բանվոր դասակարգի և զյուղացիության դաշինքի ամրապնդում,

դ) գաղափարախոսության ոլորտում՝ նոր մշակույթի ստեղծում, մարքս-լենինյան գաղափարախոսության գերիշխող վիճակի ապահովում<sup>1</sup>:

5. Սոցիալիստական պետության կառավարման ձևը հանրապետությունն է: Այդ հարցի առնչությամբ Ֆ. Էնգելսը գրել է. «Մարքսը և ես 40 տարվա ընթացքում անվերջ պնդում էինք, որ մեզ համար ժողովրդավարական հանրապետությունը միակ քաղաքական ձևն է, սակայն այն, ինչպես և ցանկացած կառավարման ձև, պայմանավորված է իր բովանդակությամբ»<sup>2</sup>: Դա նշանակում էր, որ սոցիալիստական պետության համար ընդունելի կառավարման ձև է միայն այն հանրապետությունը, որը ծառայում է աշխատավոր մասսաների շահերին և, հետևաբար, լցված է սոցիալիստական բավանդակությամբ: Իսկ ինչ վերաբերում է մնացած բոլոր կառավարման ձևերին, այդ թվում և բուրժուական հանրապետությանը, ապա այն՝ որպես սոցիալիստական պետության ձև, մարքսիստների համար անընդունելի էր: Զարգացնելով սոցիալիստական պետության հանրապետական կառավարման ձևի նասին գաղափարները Ռուսաստանի վերաբերմամբ՝ Լենինը որպես այդպիսին ճանաչեց խորհուրդների հանրապետությունը: «Ապրիլյան թեզիսներ» աշխատության մեջ նա արձանագրում է. «Ոչ թե պառլամենտական հանրապետություն, վերադարձ դեպի նրան, բանվորների դեպուտատների խորհուրդներից կինքի մի քայլ ետ, այլ բանվորների, բատրակների և գյուղացիների դեպուտատների խորհուրդների հանրապետություն, ամ-

<sup>1</sup> Stéú Òáî ðèý áî ñóääðñóää è í ðàâà, I., 1985, t. 159

<sup>2</sup> Stú Í àðeñ É., Yí ááëñ Ó., nî ÷. Ó. 22, tø 287

բողջ երկրում՝ վերից վար»<sup>1</sup>:

Խորհրդային հանրապետությունը պետության նոր ձև էր, որի կարևորագույն հատկանիշներից էին ժողովրդավարական կենտրոնացումը, միևնույն մարմնում՝ խորհրդում օրենսդիր և գործադիր գործունեության միավորումը: Ըստ Լենինի՝ խորհրդադների այդ հատկանիշը, բուրժուական պառլամենտարիզմի հետ համեմատած, ուներ համաշխարհային պատմական նշանակություն ժողովրդավարության զարգացման գործում<sup>2</sup>:

6. Մարքսը, Էնգելսը և Լենինը չեն օգտագործել սոցիալիստական իրավունք հասկացությունը: Ըստ նրանց՝ սոցիալիզմի ժամանակ գործող իրավունքը բուրժուական իրավունք է: Հետազայտմ խորհրդային իրավագետները մշակեցին սոցիալիստական իրավունքի՝ որպես իրավունքի նոր տիպի հայեցակարգը՝ համարելով այդ իրավունքը պետության առջև կանգնած մոտակա և ռազմակարական խնդիրների լուծման միջոց:

7. Ըստ մարքսիզմի՝ պետությունը և իրավունքը հավերժական և անփոփոխ երևույթներ չեն: «Դասակարգային հասարակության զարգացմանը գուգընթաց և դասակարգերի աստիճանական «մահվամբ», պետությունը և իրավունքը՝ որպես դասակարգային ինստիտուտներ ու երևույթներ, ևս «մահանում» են: Պետության և իրավունքի մահացման համար անհրաժեշտ են նյութական, սոցիալական և այլ պայմաններ, որոնք տանում են դասակարգային տարրերությունների վերացման, ինչպես նաև հասարակական գիտակցության բարձր մակարդակի ձևավորման, երբ մարդիկ կակտեն աշխատել հասարակության համար՝ առանց իրավունքի նորմների և հարկադրանքի:

Այսպիսով, ըստ մարքսիզմի դասականների՝ սոցիալիստական պետությունը՝ որպես կիսապետություն, կոչված էր ճնշելու տապալված դասակարգերի դիմադրությունը, աշխատավորների համար ապահովել բարձրագույն տիպի ժողովրդավարություն,

կառուցել սոցիալիզմ, նախապատրաստել անցումը դեպի անդասակարգ հասարակություն, այնուհետև՝ «մահանալ»:

Սակայն իրականության մեջ այդ կանխագուշակությունները չարդարացան: Պրոլետարիատի դիկտատուրայի գոյության շրջանը չափից դուրս ձգձգվեց: Պետությունը՝ որպես բռնության բյուրոկրատական հսկայական ապարատ, վեր էր կանգնած հասարակությունից, և ծառայում էր ոչ թե բանվոր դասակարգին, այլ կուսակցական պետական վերմախսավին: Ժողովրդավարությունը սահմանափակված էր միակուսակցական համակարգով: Ընտրությունները ձևական էին: Պետությունը դարձել էր զանգվածային բռնությունների գործիք, տեղի էր ունեցել հասարակական կյանքի լրիվ պետականացում: Սոցիալիստական տնտեսությունը կապիտալիզմի հետ մրցակցությունում պարտվում էր:

## § 2. Իրավունքի նկատմամբ իշխանության գերակայության հայեցակարգի մշակումը և խորհրդահայ իրավագիտության ձևավորումը

Ցանկացած իրավական համակարգ ունի գաղափարական բաղադրատարք: «Դրա հիմքում՝ անկախ տեսակից (իրավական որևէ ընտանիքին պատկանելուց), միշտ ընկած է որևէ հայեցակարգ: Վերջինը վճռական նշանակություն ունի իրավական համակարգի կազմակերպակառուցվածքային տարրի և իրավական ինստիտուտների իրավական բովանդակության համար: Խորհրդային Հայաստանի իրավական սոցիոնորմատիվ համակարգի ձևավորման վրա ազդեցին երկու հիմնական գործուներ՝ ա) մարքսիստական-կոմունիստական հայեցակարգը և բ) հայ կոմունիստների կողմից ոռուսական հոկտեմբերյան հեղափոխության իրավական կարգավորման փորձի մեխանիկական վերարտադրությունը Հայաստանում:

Խորհրդային իշխանության հաստատումը Հայաստանում տեղի ունեցավ խաղաղ կերպով: «Առաջին հանրապետության դե-

<sup>1</sup> Տե՛ս Էպիֆ. Ա.Է., Ի թէ՛ս մ՛ած. մ՛. Օ. 33, էջ 115:

<sup>2</sup> Տե՛ս Էպիֆ. Ա.Է., Ի թէ՛ս մ՛ած. մ՛. Օ. 34, էջ 305:

կավարությունն իշխանությունը կամավոր հանձնեց մեծամասնականներին: Սակայն այդ հանգամանքը ևս չխանգարեց հայ մեծամասնականներին իրացնել իին պետադրավական կառուցակարգը «ջարդի» ենթարկելու քաղաքական իրավական դրկտրինան, որը ծայրահեղ իրավական նիհիլզմի դրսնորում էր»<sup>1</sup>: Հայաստանի հեղափոխական կոմիտեն՝ բոլշևիկյան դիկտատորայի բարձրագույն մարմնը, 1920 թ. դեկտեմբերի 21-ին ընդունեց դեկրետ Առաջին հանրապետության օրենսդրությունը վերացնելու մասին: Միաժամանակ Հայաստանում գործող ճանաչվեց ՌԴՖՍՀ օրենսդրությունը, հեղափոխական մարմինների կատարած վոլոխություններով ու լրացումներով<sup>2</sup>: Այդ քայլով միանգամից վերացվեցին Առաջին հանրապետության ժամանակ մեծ դժվարությունների գնով ստեղծված իրավակարգավորումները: Այդ դեկրետով սոցիալական կարգավորման համակարգի հիմքում դրվեց մարքսիստական-կոմունիստական գաղափարախությունը:

Մարքսիստական-կոմունիստական իրավական գաղափարախության հայեցակարգային դրույթները մշակվեցին Հայաստանից դուրս: Հայ կոմունիստներն այս հարցում, իհարկե, չունեին այլընտրանք, որովհետև կուսակցական խստագույն կարգապահության պայմաններում կուրորեն հետևում էին հեղափոխական կենտրոնի հրահանգներին: Այդ տեսությունը մշակվում էր քաղաքական ու գաղափարական բավականին բարդ պայքարի պայմաններում, որի համար մարքսիստ իրավաբաններն ունեին միայն երկու կանխադրույք՝ Կ. Մարքսի «սոցիալիզմի ժամանակ բուրժուական իրավունքի մասին հայեցակարգը» և իրավունքի դասակարգային պողիտիվիստական հայեցակարգը, որն իրավունքը դիտում էր որպես տնտեսապես իշխող դասակարգի կամք՝ բարձրացրած օրենքի աստիճանի:

<sup>1</sup> Տե՛ս Ղազինյան Գ.Ս., Քրեական դատավարության պատմական և արդի հիմնահարցերը Հայաստանում, Երևանի համալս. հրատ., 2001, էջ 55:

<sup>2</sup> Տե՛ս ՀՍԽՀ դեկրետների և իրամանների ժողովածու, 1921 թ., պ. 1, հոդվ. 30:

Մարքսը, կանխատեսելով ապագան, խոսում էր սոցիալիզմի ժամանակ բուրժուական իրավունքի պահպանման մասին: «Ուստի, - զրում էր նա, - հավասար իրավունքն այստեղ, սկզբունքորեն, դեռևս բուրժուական իրավունք է, չնայած որ սկզբունքը և պրակտիկան այստեղ արդեն չեն հակասում միմյանց, այն դեպքում, եթե ապրանքափոխանակության ժամանակ համարժեքների փոխանակումն առկա է սոսկ միջին, այլ ոչ թե ամեն մի առանձին դեպքում: Չնայած այդ առաջընթացին՝ այդ հավասար իրավունքը մեկ հարաբերությունում դեռևս սահմանափակված է բուրժուական շրջանակներով: Արտադրողների իրավունքը համամասնական է նրանց աշխատանքին: Հավասարությունն այս է, որ չափումն իրականացվում է հավասարաչափ աշխատանքով... Այդ հավասար իրավունքն անհավասար իրավունք է անհավասար աշխատանքի համար: Ուստի այն, ինչպես ցանկացած իրավունք, իր բովանդակությամբ անհավասարության իրավունք է»<sup>1</sup>:

Դիմելով բուրժուազիային՝ Մարքսը և Էնգելսը «Կոմունիզմի մանիֆեստում» զրում են. «Ձեր իրավունքը ձեր դասակարգի կամքն է՝ բարձրացված օրենքի աստիճան, որի բովանդակությունը որոշվում է ձեր դասակարգի կյանքի նյութական պայմաններով»<sup>2</sup>: Ծիշտ է, բուրժուական իրավունքը, ի տարբերություն իրավունքի այլ տիպերի, հոչակում է իրավահավասարության սկզբունքը, սակայն ըստ մարքսիզմի դասականների՝ դա ձևական հավասարություն է. «Փեղողական բոլոր արտոնությունները, անցած դարերի քաղաքական մենաշնորհները պետք է փոխվեին մեկ մեծ արտոնությամբ՝ դրամի մենաշնորհով»<sup>3</sup>:

Այս կանխադրույթներով սխոլաստիկ տեսական օպերացիան անող մարքսիստների տեսական եզրահանգումը դարձավ իրավունքի դասակարգային-տնտեսական սոցիոլոգիկական պողիտիվականությունը: Իրավական այդ հայեցակարգի և պրոլետա-

<sup>1</sup> Տե՛ս Լ ձեռն Է., Յի անըն Օ., Ն 1/., 2-րդ էջա., Օ. 19, էջ 19:

<sup>2</sup> Տե՛ս Լ ձեռն Է., Յի անըն Օ., Ն 1/., 2-րդ էջա., Օ. 21, էջ 172:

<sup>3</sup> Տե՛ս Լ ձեռն Է., Յի անըն Օ., Ն 1/., 2-րդ էջա., Օ. 7, էջ 357:

րիատի դիկտատուրայի տեսության միախառնումից ստացված եզրակացությունն այն էր, որ «այլուետարիատի դիկտատուրան չի կարող լինել իրավական՝ իշխանության իրավունքի նկատմամբ գերակայության փաստական ուժով»<sup>1</sup>: Այս մոտեցման կողմնակիցներից մեկը Ի. Խյինսկին էր, որը, ենելով իրավունքի դասակարգային բնույթից, օրենսդրությունը հայտարարում էր որպես պլանային քաղաքականություն<sup>2</sup>:

«Մեծամասնականների այդպիսի սոցիալական փորձարարության և պատկերացումների հիմքում ընկավ վերափոխման գաղափարը, իսկ մեծամասնականների քաղաքական-իրավական գաղափարախոսության բաղկացուցիչ մասն էր համարվում հակաազատականությունը: Ազատական անհատապաշտությանը՝ հիմնված անհատի արժանապատվության և ազատության նկատմամբ հարգանքի վրա, մեծամասնականները հակադրում էին աշխատավոր դասակարգերի և շահագործվող ժողովուրդների անդեմ և առաջնային շահերը... Պրոլետարիատը ոռուական հողի վրա պետք է հետևեր Կ. Մարքսի ուսմունքին՝ բարձրացներ իր իշխանությունը մինչև դիկտատուրայի աստիճանի՝ անպայման միացնելով օրենսդիր և գործադիր իշխանությունները մեկ մարմնում... Դիկտատուրան տվյալ դեպքում ներկայացված է այնպիսի իշխանությամբ, որը չի ճանաչում ոչ մի սահմանափակում, այդ թվում նաև իրավունքի և օրենքի կողմից»<sup>3</sup>:

Մարքսիստ իրավագետների տեսական մշակումների օգնությամբ դեռևս 1919 թ. դեկտեմբերի 12-ին ՌՍՖՍՀ արդարադատության ժողկոմատի որոշմամբ հաստատած «ՌՍՖՍՀ քրեական իրավունքի դեկավար դրույթներում» տրվեց իրավունքի պաշտոնական հասկացությունը. «իրավունքը հասարակական

հարաբերությունների համակարգ (կարգ) է, որը համապատասխանում է գերիշխող դասակարգի շահերին և պահպանվում է նրա կազմակերպված ուժով»<sup>1</sup>: Այդ ուժը ստեղծելու համար Հայաստանում 1921 թ. հունվարի 15-ին ընդունվեց «Գերազույն տրիբունալի և հեղափոխական տրիբունալների մասին» դեկրետը, 1920 թ. դեկտեմբերի 6-ին՝ «Արտակարգ հանձնաժողովի մասին» դեկրետը, իմնադրվեցին հեղափոխական արտակարգ այլ մարմիններ, որոնք իրականացրին բազմաթիվ ապօրինություններ<sup>2</sup>:

Կենտրոնից ելնող նման հայեցակարգային դրույթներին և պրոլետարական դիկտատուրայի իրավական քաղաքանության նման ոժին հետևեց նաև հայ իրավագիտությունը: Իհարկե, այս շրջանում նկատվեց միտում՝ խուսափել իրավական հիմնահարցերի տեսական քննարկումներից և խորանալ հայ իրավունքի պատմության հիմնահարցերի հետազոտության մեջ: Նման խուսանավումը ինչ-որ տեղ անհամաձայնություն էր տիրող իրավական գաղափարախոսությանը: Ժամանակի հայտնի իրավագետներ U. Տիգրանյանը և Խ. Սամուելյանն իրենց հետազոտություններում արծարծեցին հայ իրավունքի պատմության հիմնահարցերը և ամփոփեցին դրանք առաջինը՝ «Հայ իրավունքի պատմության ներածություն, Եր., 1924», իսկ երկրորդը՝ «Հին հայ իրավունքի պատմություն, հատ. 1, Եր., 1939» աշխատություններում: Այնուամենայնիվ, այդ աշխատությունները ևս կրում էին իրավունքի դասակարգային տեսության կնիքը: Այսպես, Խ. Սամուելյանի կարծիքով՝ «Իրավունքը գոյանում է որպես արտադրական հարաբերությունների իրավաբանական արտահայտումն և ըստ այն էլ կարող է ստանալ զանազան բովանդակություն՝ արտադրական-հասարակական հարաբերությունների փոփոխումով: Ոչ թե հասարակությունն է հիմնված օրենքների, իրավունքի վրա, այլ ընդհակառակը, իրավունքը, օրենքները բխում են հասարա-

<sup>1</sup> Տե՛ս Становление и развитие советского государствоведения. Исследования ученых 20-х гг., ч. 1, Проблемы власти / Под ред. Ю.С. Пивоварова, М., 1990, էջ 29:

<sup>2</sup> Տե՛ս Исаев И.А., История государства и права России. М., 1996, էջ 356:

<sup>3</sup> Տե՛ս К. Экштайн, Основные права и свободы. По российской Конституции и европейской конвенции. М., 2004, էջ 376:

<sup>1</sup> Տե՛ս Хрестоматия по истории отечественного государства и права России. М., 1997, էջ 64:

<sup>2</sup> Այդ մասին տե՛ս Ղազինյան Գ.Ս., նշված աշխ., էջ 55-67:

կության կառուցվածքից»<sup>1</sup>:

Արևմուտքի առաջադիմական երկրներում իրավական պաշտոնական տեսությունների մեծ մասը կառուցված էր իրավունքի (բնական) և դրական (օրենքի) երկմիասնության վրա: Սոցիալիստական իրավունքի տեսությունում ձևավորվեց իրավունքի դասակարգային պողիտիվիստական-լեզիստական հասկացությունը: Այդպիսի իրավահասկացողությունը, հակառակ իրավունքի իրավաբանական տեսության, չէր ներառում իրենում համընդիանուր ազատության, իրավահավասարության, արդարության, իրավունքների անքաղաքականության ու անօտարելիության սկզբունքները, որոնք, լինելով իրավունքի էությունը, գերակայում են ինչպես քաղաքական իշխանության, այնպես էլ նրա պտուղը համարվող օրենքի նկատմամբ: Այդպիսի իրավունքը զսպաշապիկ է պետության համար:

Սոցիալիստական պետության համար չկար նման իրավական զսպաշապիկ, իրավունքը նրա ձեռքին գործիք էր դասակարգային կառավարչական խնդիրները լուծելու համար: Իրավունքի էության նման տեսական ըմբռնումը գործնականում պետությանը վերածեց ամենակարող «երկրային աստվածի»: Դրանով իսկ սոցիալական կարգավորման համակարգում ձևավորվեց ու գործեց քաղաքականության և դրանից բխող սոցիալիստական շինարարության նպատակների գերակայություն իրավունքի նկատմամբ:

### § 3. Խորհրդային Հայաստանի իրավական համակարգի զարգացման փուլերը

Համաձայն մարքիսիտական տեսության՝ սոցիալիստական պետությունն անցնում է ձևավորման և զարգացման մի քանի փուլեր: Խորհրդային և արտասահմանյան մարքիստական գրականության մեջ երկար ժամանակ վեճեր էին տարվում զարգացման այդ փուլերի քանակի, յուրաքանչյուրի էության և բովանդա-

կության, պետության և հասարակության զարգացման փուլերի հարաբերակցության վերաբերյալ<sup>1</sup>:

Վեճի էությունը հանգում էր հետևյալին. ի նկատի ունենալով այն փոփոխությունները, որոնք կրում են սոցիալիստական պետությունը և իրավունքը՝ բանվոր դասակարգի կողմից քաղաքական գերիշխանության որակները կորցնելու հետևանքով, դրանց զարգացման մեջ առանձնացնում էին կամ երկու, կամ երեք գլխավոր փուլեր: Երկու տեսակետների կողմնակիցներն ել ենում էին նրանից, որ պրոլետարիատի դիկտատորան՝ որպես սոցիալիստական պետություն, իր պատմական առաքելությունը կատարելով, վերածում է համաժողովրդականի: Ավելին, երկուսն էլ գտնում էին, որ պրոլետարական պետությունը և իրավունքը վերածում են համաժողովրդականի ոչ միանգամից, այլ աստիճանաբար: Սակայն երկիրու պարբերացման կողմնակիցները վերածման փուլը վերապահում էին համաժողովրդական պետության և իրավունքի փուլին, իսկ եռափուլ պարբերացման կողմնակիցները տվյալ փուլը դիտում էին որպես սոցիալիստական պետության և իրավունքի զարգացման առանձին փուլ:

Առաջինների հիմնական փաստարկն այն էր, որ չնայած կրած փոփոխություններին՝ սոցիալիստական պետությունը և իրավունքը վերաճնան փուլում վերջին հաշվով մնում են դիկտատորական: Երկրորդները գտնում էին, որ այն օժտված է այնպիսի հատկանիշներով, որոնք արդեն էապես տարբերվում են պրոլետարականից, սակայն դեռ թույլ չեն տալիս բնութագրել նրան որպես համաժողովրդական պետություն: Դրա համար էլ առաջարկում էին այն դիտել որպես սոցիալիստական պետության և իրավունքի զարգացման ինքնուրույն փուլ:

Այդ վիճաբանությունում գերակշռեն և լայն տարածում, իսկ այնուհետև ԽՍՀՄ-ում պաշտոնական ճանաչում գտավ այն տեսակետը, որի համաձայն՝ սոցիալիստական հեղափոխության

<sup>1</sup> Տե՛ս 1 էօճառակ 1.Ա., Նույնականության մասին առաջարկ 1981, էջ 17-25:

<sup>1</sup> Տե՛ս Խ. Սամուելյան, նշանակած աշխատանք, էջ 6:

հետևանքով ստեղծված պետությունն անցնում է զարգացման հետևյալ փուլերը՝ պրոլետարիատի դիկտատորայի պետություն, սոցիալիստական պետություն և, վերջապես, համաժողովրդական պետություն:

Պետության և իրավունքի զարգացման փուլերից յուրաքանչյուրը համապատասխանում էր սոցիալիստական հասարակության զարգացման համապատասխան փուլին: Հասարակության զարգացման՝ կապիտալիզմից սոցիալիզմին անցման փուլի պետությունը պրոլետարիատի դիկտատորան էր: Հասարակության զարգացման բուն սոցիալիստական փուլի պետությունը դիտվում էր սոցիալիստական, իսկ զարգացած սոցիալիստական հասարակության փուլին համապատասխանում էր համաժողովրդական պետությունը և իրավունքը:

**ԳԼՈՒԽ 10. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ  
ԴԻԿԱՍԱԾՈՒՐԱՅԻ ՀԱՍՏԱԾՈՒՐԸ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ  
ՆՈՐՍԱՏԻՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՍԱԿԱՐԳԻ  
ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ**

**§ 1. Հայաստանի խորհրդայնացումը և «հին պետականական համակարգի օարդի» մեծամասնական քաղաքականությունը**

Հայաստանի առաջին հանրապետությունը 1920 թ. նոյեմբերին հայտնվեց ծանր, ողբերգական արտաքին քաղաքական իրադրության մեջ: 1920 թ. նոյեմբերի 23-ին գումարվեց խորհրդանի արտակարգ նիստ, որում վարչապետ Օհանջանյանը հանդես եկավ հայտարարությամբ. «Որպեսզի Հայաստանի խորհրդարանը ազատ լինի ինքն իր վերաբերմունքը ցույց տալու, իմ կառավարությունը ներկայացրեց իր հրաժարականը՝ ի նկատի ունենալով հանրապետության շահերը»: Հանրապետության համար հետագա բախտորոշ քայլերն արվեցին կառավարության կողմից, երբեմն Խորհրդարանի անդամների և նրա նախագահության հետ ոչ պաշտոնական խորհրդակցությամբ: Նոր վարչապետ ընտրված Ս. Վրացյանը կազմեց կույցիոն կառավարություն, որը հաստատվեց նոյեմբերի 25-ին: Սակայն իրադրությունը գնալով ավելի էր բարդանում: Նոյեմբերի 29-ին Ղազախի ճակատում հայ կոմունիստները Աղրբեջանի օգնությամբ մտան Իջևան, իսկ նոյեմբերի 30-ին Լեզրանը Հայաստանի կառավարությանը ներկայացրեց վերջնագիր, որով պահանջում էր խորհրդայնացնել Հայաստանը: Այս պայմաններում դեկտեմբերի 1-ին ՀՅԴ «բյուրոն, ֆրակցիան, կառավարությունը որոշեցին ընդունել կարմիրների առաջարկը սովետիզացիայի մասին»<sup>1</sup>: Կառավարությունը Ս. Վրացյանի գլխավորությամբ բանակցությունների մեջ մտավ Լեզրանի հետ և դեկտեմբերի 2-ին ստորագրվեց

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ՍՍ, ֆ. 199, գ. 1, գ. 248, թ. 1:

հետևյալ համաձայնագիրը ՈՒՖԱՀ լիազոր ներկայացուցության (Լեզրանի) և ՀՀ կառավարության (Դրոյի և Տերտերյանի) միջև.

«1. Հայաստանը հայտարարվում է անկախ սոցիալիստական խորհրդային հանրապետություն:

2. Սինչև Հայաստանի խորհուրդների համագումարի հրավիրումը կազմվում է ժամանակավոր ռազմահեղափոխական կոմիտե, որին կանցնի բովանդակ իշխանությունը Հայաստանում:

3. Ուստաստանի Խորհրդային կառավարությունն ընդունում է, որ ՀԽՆՀ հողերի մեջ անվիճելի կերպով մտնում են՝ Երևանի նահանգն իր բոլոր գավառներով, Կարսի նահանգի մի մասը, որը զինվորական տեսակետից կապահովե երկարուղու տիրապետությունը՝ Զաջուռ կայարանից Արաքս կայարանը, Գանձակի նահանգի Զանգեզուր գավառը և Ղազախի գավառի մի մասը՝ օգոստոսի 10-ի համաձայնության սահմաններում, Թիֆլիսի նահանգի այն մասերը, որոնք ՀՀ տիրապետության տակ էին գտնվում մինչև 1920 թ. սեպտեմբերի 28-ը:

4. ՀՀ բանակի հրամանատարական կազմը չի ենթարկվում պատասխանատվության այն գործերի համար, որ կատարել է բանակի շարքերում մինչև Հայաստանում խորհրդային իշխանության հայտարարությունը:

5. Դաշնակցության և ուրիշ սոցիալիստական կուսակցությունների անդամները ոչ մի հաղածանքի չպետք է ենթարկվեն կուսակցությանը պատկանելու, կոմունիստական կուսակցության դեմ մղված կրիվներում մասնակցելու, Խորհրդային Հայաստանի հայտարարությունից առաջ կատարած գործերի համար:

6. Ռազմահեղափոխական կոմիտեի մեջ մտնում են՝ հինգ անդամներ նշանակված կոմունիստական կուսակցության կողմանց և երկու անդամ ծախ դաշնակցականների խմբակից՝ համաձայնեցնելով կոմունիստական կուսակցության հետ:

7. Ուստաստանի Խորհրդային կառավարությունը միջոցներ է ձեռք առնում անմիջապես կենտրոնացնելու ՀԽՆՀ պաշտպա-

նության համար անհրաժեշտ զինվորական ուժեր:

8. Սույն համաձայնագիրն ստորագրվելուց հետո ՀՀ կառավարությունը քաշվում է իշխանությունից: Իշխանությունը ժամանակավոր կերպով, մինչև ռազմահեղափոխական կոմիտեի գաղն անցնում է գորահրամանատարությանը, որի գույն է կանգնում Դրոն: Ուստաստանի կողմից Հայաստանի գորահրամանատարությանը կոմիտեը է նշանակվում ընկեր Միջինը<sup>1</sup>:

Այս պայմաններում նոյն դեկտեմբերի 2-ին կառավարությունը հրապարակեց հետևյալ ակտը, որը հեռագրվեց գավառական իշխանություններին և գորամասերի պետերին ի գործադրություն.

«ԱԿՏ.

Ի նկատի ուժենալով արտաքին հանգամանքների շնորհիվ երկրում ստեղծված կացությունը՝ ՀՀ կառավարությունն իր 1920 թ. դեկտեմբերի 2-ի նիստում որոշեց՝ հրաժարվել իշխանությունից և հանձնել զինվորական ու քաղաքացիական բովանդակ իշխանությունը գորարանակի ընդհանուր հրամանատարին, որպիսի պաշտոնում նշանակել ուղանական նախարար Դրոյին:

Նախարարների խորհրդի նախագահ՝ Ա. Վրացյան նախարարներ՝ Ա. Հովհաննիսյան, Ա. Խոնդկարյան, Հ. Տերտերյան, Դ. Կանայան»<sup>2</sup>:

Դեկտեմբերի 3-ից Հայաստանը դարձավ Խորհրդային: Դեկտեմբերի 6-ին Երևան ժամանեց կոմունիստների ռազմահեղափոխական կոմիտեն և Լեզրանի կնքած համաձայնությունը հայտարարեց չեղյալ: Հայաստանում հաստատվեց «քռնության, բալանի, կամայականության և ահաբեկչական ռեժիմ»<sup>3</sup>:

Հետևելով սոցիալիստական պետության կառուցման օրինաշափություններին՝ «ջարդի» ենթարկվեց նաև Առաջին հանրապետության իրավական համակարգը: Հայիեղկոմը իր 1920 թ. դեկտեմբերի 12-ի դեկրետով հիմնադրեց Հայաստանի ՍԽՆՀ արդար:

<sup>1</sup> Տե՛ս Վրացյան Ա., Հայաստանի Հանրապետություն, Փարիզ, 1928, էջ 438:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ ԱԱ, ֆ. 199, գ.1, գ. 248, թ. 2:

<sup>3</sup> Տե՛ս Վրացյան Ա., Հայաստանի Հանրապետություն, Փարիզ, 1928, էջ 490:

րադատության ժողկոմատը<sup>1</sup>: Արդեն դեկտեմբերի 18-ին արդարադատության ժողկոմատը հրապարակեց «Հին դատարանների լուծարման մասին» հրամանը, որով վերացվում էին հանրապետության տարածքում գոյություն ունեցող բոլոր դատական մարմինները»:<sup>2</sup>

Հայհեղկոմի 1920 թ. դեկտեմբերի 21-ի դեկրետով Հայաստանի տարածքում չգործող հայտարարվեց առաջին հանրապետության օրենսդրությունը: Այդ նույն դեկրետով վերացված օրենսդրության փոխարեն՝ գործող համարվեց ՌԽՖՍՀ՝ օրենսդրությունը, այն փոփոխություններով և լրացումներով, որոնք անհրաժեշտ կհանարեց հեղափոխական կառավարությունը՝ ելնելով հանրապետության առանձնահատկություններից:<sup>3</sup> Այսպիսով՝ Հայաստանում ևս հաստատվեց պրոլետարիատի դիկտատուրայի պետություն, որի քաղաքական հիմքը սկզբում հեղափոխական կոմիտեներն էին: Այնուհետև այն վերածվեց խորհրդային կառավարման ձև ունեցող սոցիալիստական հանրապետության:

Հայաստանում սոցիալիստական հեղափոխության իրականացման և պրոլետարիատի դիկտատուրայի պետության հաստատման մյուս առանձնահատկությունն այն, որ այստեղ բանվորների, գյուղացիների ու կարմիրբանակայինների դեպուտատների խորհուրդների փոխարեն՝ որպես պրոլետարիատի դիկտատուրայի մարմիններ, ստեղծվեցին հայ բոլշևիկների կուսակցության կողմից նշանակվող Հայհեղկոմը և վերջինիս կողմից ստեղծված տեղական հեղկոմները: Այդպիսի յուրահատկությունը պայմանավորված էր նրանով, որ Հայաստանում կազմակերպված քանվոր դասակարգ և խորհուրդներ գոյություն չունեին: Հայհեղ-

<sup>1</sup> Հայաստանում խորհրդային իշխանության հաստատվելուց հետո և մինչև 1937 թ. Սահմանադրության ընդունումը հանրապետությունը անվանվում էր Երկակիորեն՝ «Հայաստանի Սոցիալիստական Սովետական Հանրապետություն» և «Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն Հայաստան»: Այս Երկակիորյունը վերացվեց 1937 թ. Սահմանադրությամբ, որով այն կոչվեց Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն:

<sup>2</sup> Տե՛ս ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, 1921, պ. 1, հոդ. 30:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը, հոդ. 39:

կոմը ՀՍԽՀ-ի պետական իշխանության և պետական կառավարման միասնական և միակ բարձրագույն մարմինն էր, որն իրը այդպիսին գործեց մինչև 1921 թ. մայիսը, երբ այն վերակազմափորձեց Ժողկոմխորհի: Հայհեղկոմի մի շարք դեկրետներ սահմանադրական բնույթի ակտեր էին, որովհետև դրանցում լուծվում էին ոչ միայն ընթացիկ, այլև հասարակական-պետական կյանքի հիմնարար խնդիրներ: Հետևաբար այդ փաստաթղթերի ընդունման հանգամանքը կարելի է դիտարկել որպես ՀՍԽՀ-ում իրավական համակարգի շինարարության սկիզբ, որոնք հետագայում իրենց ամփոփումը գտան ՀՍԽՀ 1922 թ. Սահմանադրության մեջ:

Հայհեղկոմն իր առաջին իրավական ակտում՝ Դեկլարացիայում (1920 թ. նոյեմբերի 29), որն ուներ սահմանադրական նշանակություն, Հայաստանը հռչակեց Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն, սահմանեց պետական գործունեության հիմնական ուղղությունները և իր դիկտատուրայի հիմնական նպատակները: Դեկլարացիան նախատեսում էր հողի, ջրերի, անտառների, ընդերքի, գործարանների, ֆարբիկաների ազգայնացում (պետականացում): Դեկլարացիայի դրույթներն իրենց զարգացումն ստացան հայհեղկոմի և ժողկոմխորհի հետագա դեկրետներում, առանձին ժողկոմատների ակտերում, որոնք հիմնականում վերաբերում էին ազգայնացման խնդիրներին, հին պետական ապարատի վերացման և նորի ստեղծման հարցերին, քաղաքացիության հարաբերությունների կարգավորմանը և այլն: Այս նորմատիվ-իրավական ակտերն ամրագրեցին նոր հասարակական և պետական կյանքի իրավական հիմքերը և նախադրյալ հանդիսացան ՀՍԽՀ առաջին Սահմանադրության նախագծի մշակման և ընդունման համար:

Հայ բոլշևիկներն անմիջապես անցան, այսպես կոչված, ուազմական կոմունիզմի քաղաքականության իրացմանը՝ պարենմանատրման, ուղղակի ապրանքափոխանակության, ուազմական հարկադրանքի, քաղաքական տեղորի և այլն: Ըստ Էության, հանրապետությունում հաստատվեց ուազմական դիկտատուրա,

որը հենվում էր 11-րդ կարմիր բանակի վրա: 1920 թ. աշնանը ձերքակալվեցին Առաջին հանրապետության պետաքաղաքական գործիչները, անցկացվեց հայոց բանակի սպաների հաշվառում և 70 սպաների միանգամից աքսորեցին Բաքու, 1921 թ. հունվարից աքսորվեց նաև Դրոն իր զինակիցներով, հունվարի 24-ին՝ 1200 սպաներ, երկրի բոլոր վայրերում սկսվեցին ապօրինի զանգվածային խուզարկություններ և ձերքակալություններ, գույքի կամայական բռնագրավումներ և պետականացում<sup>1</sup>: Ընդ որում, բռնության այդ մեքենան գործեց ոչ միայն խորհրդային իշխանության հաստատման սկզբում, այլև հետագայում: Այդպիսի քաղաքականության հետևանքը 1921 թ. քաղաքացիական պատերազմն էր:

1921 թ. հուլիսից Հայաստանում հաստատվեց ներքին խաղաղություն և ՈւԽՖՍՀ-ի օրինակով՝ Հայաստանում ևս կատարվեց անցում նեպի քաղաքականությանը: Քազմակացութածն տնտեսության վրա հիմնված տնտեսական գործունեության նոր կանոնները, տնտեսաշվարկը, գյուղատնտեսության կոռուպտացման ծրագրերը, ինչպես նաև ընդդիմադիր ուժերի քննադատությունը դրդեցին իշխանություններին միջոցառումներ ձեռնարկել հստակ գործող և վերահսկող պետական ապարատ հիմնելու համար: Հայաստանի Կ(բ)Կ առաջին համագումարում հանրապետության նոր դեկավարությունը որոշեց իշխանության նշանակովի արտակարգ մարմիններից՝ հեղափոխական կոմիտեներից անցնել ընտրովի խորհուրդների<sup>2</sup>:

1921 թ. նոյեմբերի 17-ին ՀՍԽՀ ժողկոմխորի ընդունեց ժամանակավոր կանոնադրություն պատգամավորների խորհուրդների, գործադիր կիոմիտեների և համագումարների մասին<sup>3</sup>: Այդ կանոնադրությունը սահմանում էր գյուղական, քաղաքային խորհուրդների ընտրությունների և խորհուրդների շրջանային, գավա-

ռային ու համահայկական համագումարների պատգամավորների ընտրությունների կարգը: Այդ կանոնադրությանը համապատասխան՝ կազմակերպվեցին խորհուրդների և խորհուրդների համագումարների ընտրությունները:

Այս շրջանի առանձնահատկություններից մեկն էլ այն էր, որ որոշակի ժամանակ հասարակական հարաբերությունները չունեին պատշաճ օրենսդրական կարգավորում: Օրինակ՝ քննարկվող ժամանակաշրջանում ՀՍԽՀ-ում դատական համակարգը կազմված էր երեք ենթահամակարգերից՝ ժողովրդական դատարաններ, հեղափոխական տրիբունալներ, արտակարգ հանձնաժողով: Օրենսդրությամբ սահմանվում էր միայն յուրաքանչյուր ենթահամակարգի կառուցվածքը, լիազորությունների շրջանակը, իսկ այդ մարմինների դատավարական գործունեությունը, եզակի բացառություններով հանդերձ, ընդհանրապես չէր կարգավորված: Ըստ հեղափոխական տրիբունալների կանոնադրության՝ ուելքեսիայի որոշման հարցերում տրիբունալներն օժտված էին անսահմանափակ իրավունքներով, այսինքն՝ սահմանված էր պատժի ազատ ընտրության սկզբունքը:

1921 թ. քաղաքացիական պատերազմի պատճառներից մեկն էլ այն ապօրինությունները, ամենաթղթությունն ու բռնություններն էին, որ իրականացնում էին նոր իշխանությունները ուազմական կոմունիզմի քաղաքականության համատեքսում: Քաղաքացիական պատերազմից հետո Հայաստանում նկատվում է հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման միտում, որի նպատակն էր այդ ոլորտում խստագույն կարգի ու օրինականության հաստատումը, քաղաքացիների նկատմամբ չիմնավորված հարկադրանքի կիրառման բացառումը: Օրինակ՝ Ռազմահեղափոխական կոմիտեի 1921 թ. ապրիլի 3-ի հրամանով բոլոր անիմն խուզարկությունները համարվեցին հեղափոխական կարգուկանոնի խախտումներ և պատժվելու էին օրենքի ամ-

<sup>1</sup> Տե՛ս Ա. Վրացյան, ճշված աշխ., էջ 543-544:

<sup>2</sup> Տե՛ս Հայաստանի Կ(բ)Կ I համագումարի սղագրական հաշվետվություն, Երևան, 1922, էջ 41:

<sup>3</sup> Տե՛ս ՀՍԽՀ դեկրետների և որոշումների ժողովածու, Երևան, 1921, պրակ 2, հ. 13:

բողջ խստությամբ<sup>1</sup>: Սակայն, այդուհանդերձ, իրավական կարգավորումը դեռևս չուներ ամբողջական, համակարգային բնույթ, այլ ձևավորվում էր աստիճանաբար, իրավական առանձին ինստիտուտների քայլ առ քայլ հաստատման միջոցով:

Ակաած 1922 թ. ՈւԽՍՀ-ում հեղափոխական օրինականության դոկտրինայի ազդեցությամբ իրականացվում էր իրավական բարենրոդում: Սակայն ՀՍԽՀ-ում դեռ նկատվում էին արտակարգայնությունը և ծայրահեղ հեղափոխական նիկիլիզմի դրսերումները: Այսպես, ՀՍԽՀ ԿԳԿ-ի 1922 թ. մայիսի 19-ի որոշման ուժով ժողովրդական դատարաններին կից հիմնադրվեցին հասուկ արտակարգ նատաշրջանները<sup>2</sup>: Արտակարգայնության մյուս դրսերումը արտակարգ եռյակի հիմնադրումն էր՝ ՀՍԽՀ ԿԳԿ-ի 1922 թ. հունվարի 19-ի որոշմամբ<sup>3</sup>: «Դասալքության դեմ պայքարն ուժեղացնելու համար այդ եռյակին իրավունք տրվեց դասալիքների կամ նրանց օժանդակող անձանց գործերով նշանակել պատիժ ընդհուպ մինչև գնդակահարություն:

## § 2. Հեղափոխական իրավագիտակցությամբ սոցիալական կարգավորումից անցումը կենտրոնացված նորմատիվ (օրենսդրական) կարգավորման

Նոր տնտեսական քաղաքականության հոչակումը պահանջեց վերանայել օրինակության և քաղաքացիների իրավունքների վերաբերյալ պատկերացումները: Զեավորվեց հեղափոխական օրինականության դոկտրինան, որը և դարձավ դատարանավական բարենրոդումների գաղափարական հիմքը: Այդ բարենրոդումը ՀՍԽՀ-ում անցկացվեց ՈՒԽՍՀ-ի համապատասխան բարենրոդման օրինակով:

<sup>1</sup> Տե՛ս ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, 1921, պ. 2, հոդվ. 1:

<sup>2</sup> Տե՛ս ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, 1922, թիվ 12, հոդվ. 75:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը, 1922, թիվ 2, հոդվ. 7:

Եթե սոցիալական հեղափոխության հաղթանակի և ինն օրենսդրության վերացման վուլում իրավունքի համարյա միակ աղբյուրը հեղափոխական իրավագիտակցությունն էր, ապա նոր տնտեսական քաղաքականությանն անցնելով՝ ծագեց նոր մոտեցում հեղափոխական օրինականության նկատմամբ:

Այն ժամանակների իրավունքի տեսարանները հեղափոխական օրինականության տակ սկսեցին հասկանալ այն իրավակարգը, որը պրոլետարական դիկտատորիայի գերազույն մարմինների կողմից ճանաչվում էր նպատակահարմար և համապատասխիր, իսկ խորհրդային իրավունքը բնորոշվում էր հետևյալ կերպ: «Իրավունքը գերիշխող դասակարգի շահերին համապատասխանող և նրա կազմակերպված ուժով պահպանվող հասարակական հարաբերությունների համակարգ է»<sup>1</sup>: Այս պայմաններում արդեն իրավագիտակցությունը դիտարկվում էր իրավաստեղծագործության հիմք, որի միջոցով այն դրվում էր օրենսդրության հիմքում, դրսերովում էր ընդունվող օրենսգրքերի բովանդակության մեջ: Այդպիսի տեսական մոտեցման դեպքում հեղափոխական (սոցիալական) իրավագիտակցությունը ձեռք էր բերում նոր՝ օրենքում առկա բացերի լրացման մերողի նշանակություն: Պատահական չէր, որ այն ժամանակվա համարյա բոլոր ճյուղային օրենսգրքերով բույլատրված էր անալոգիան<sup>2</sup>:

«Պրոլետարական դատարան - բուրժուական իրավունք» դիմայի լուծումն իրականացվում էր հետևյալ կերպ՝ դատավորը նախ պետք է փորձեր գործող օրենքում գտնել ուղղակի պատասխանը: Եթե դա չէր հաջողվում, ապա նա դիմում էր խորհրդային օրենսդրության էռյունից բխող «ընդհանուր դրույթների» վերլուծությանը: Այստեղ ևս չգտնելով բավականաշափ որոշակի պատասխան՝ դատավորներն իրավունք ունեին լուծումը փնտրել վերջին ատյանում՝ «դասակարգային քաղաքականության ընդ-

<sup>1</sup> Տե՛ս Նօծ-քա Ի. Է., Էջաձայ նա յօն էջաձայ է յ աձենէնոնէ քա էն ծե յօնա թէա, 1964, էջ 58:

<sup>2</sup> Տե՛ս Էնաձ Է. Ա., նշանական աշխ., էջ 438:

հանուր սկզբունքներում»<sup>1</sup>:

Այսիսի տեսական մոտեցումը պայմանավորեց մանրամասն իրավական կարգավորման անհրաժեշտությունը: Ծավալվեց կողիֆիկացիոն մեծ աշխատանք, իրականացվեց դատաիրավական բարեփոխում: Սակայն այդ գործընթացն ուներ հակասական բնույթ, քանի որ մի կողմից՝ դրանց իրականացման ընթացքում չընկալվեցին համաշխարհային իրավական մտքի նվաճումները, իսկ մյուս կողմից՝ օրենսդրության և իրավունքի մահվան դրկտրինայի համատեքստում անցման շրջանի իրավունքը դիտարկում էր որպես հարաբերական և ժամանակավոր երևոյթ: «Իրավական ձևը թվում էր անցողիկ, սպասում էին որևագ անհետացմանը և իրավական նորմերը տեխնիկական ու կազմակերպական նորմերով փոխարինելուն»<sup>2</sup>: Դա, իհարկե, չէր կարող չհանգեցնել իրավական նիկիլիզմի, իրավական ձևի անտեսման և, վերջին հաշվով, սոցիալիստական օրինականության խախառումների:

Ենչևէ, իրավական բարենորոգումների իրականացման սկիզբը դրվեց Սահմանադրության ընդունմամբ: 1922 թ. հունվարի 30-ին գումարվեց ՀՍԽՀ բանվորների, գյուղացիների և կարմիր բանակայինների պատգամավորների խորհուրդների առաջին համագումարը, որի օրակարգի հարցերից մեկն էլ ՀՍԽՀ Սահմանադրության նախագծի քննարկումն ու ընդունումն էր: 1922 թ. փետրվարի 3-ին համագումարը նախագծի քննարկումից հետո հոդված առ հոդված քվեարկելու միջոցով հաստատեց այն:

Սահմանադրության ընդունումից հետո, ՀՍԽՀ ԿԳԿ-ն 1922 թ. հուլիսի 22-ին ընդունեց դատարանակազմության կանոնադրությունը<sup>3</sup>: Այդ կանոնադրությունը հրաժարվեց արտակարգությունից՝ վերացնելով հեղափոխական տրիբունալները: Բարենորոգումների գաղաքնակետը դարձավ ՀՍԽՀ ԿԳԿ-ի կողմից 1923 թ.

սեպտեմբերին երեք օրենքների՝ ՀՍԽՀ դատարանակազմության կանոնադրության, քրեական դատավարության օրենսգրքի, քաղաքացիական դատավարության օրենսգրքի ընդունումը:<sup>1</sup>

Բարենորոգումների արդյունքում վերացվեց հեղափոխական տրիբունալների համակարգը, և ստեղծվեց համաքաղաքացիական դատարանների միասնական համակարգ, որն ընդգրկում էր երեք օղակ՝ գավառի սահմաններում գործող ժողովրդական դատարան, հանրապետության գլխավոր դատարան, գերագույն դատարան: Վերացվեցին ժողովրդական դատարանների խորհուրդը և արդարադատության ժողովնատի գավառային բաժնները: Այդ մարմինների բոլոր գործառույթներն անցան նոր ստեղծված գլխավոր դատարաննին: Գերագույն դատարաննին անցան վճռաբեկ ատյանի գործառույթները և արդժողովնատի բարձրագույն դատական հսկողության բաժնի լիազորությունները:

Բացի ընդհանուր դատարաններից՝ կազմակերպվեցին հատուկ դատարաններ՝ ա) ռազմական տրիբունալներ, բ) աշխատանքային գործերով ժողովրդական դատարանի հատուկ նստաշրջաններ, գ) հղային հանձնաժողովներ, դ) տնտեսական վեճերի լուծման արբիտրաժային հանձնաժողովներ:

Իրավական համակարգի կազմակերպական հիմքերի ոլորտում այդ տարիներին նկատվող միտումներն էին՝ հրաժարումը արտակարգությունից և արդարադատության նվազագույն պահանջներին համապատասխանող դատարանների ստեղծումը, ճյուղային օրենսգրքերի՝ որպես ամբողջական, միասնական օրենսդրական ակտերի ընդունումը:

<sup>1</sup> Տե՛ս նոյեմբերի, էջ 439:

<sup>2</sup> Տե՛ս նոյեմբերի, էջ 441:

<sup>3</sup> Տե՛ս ՀՍԽՀ դեկտեմբերի և որոշումների հավաքածու, 1923, թիվ 4, հոդվ. 55:

<sup>1</sup> Տե՛ս նոյեմբերի, 1924, թիվ 4, հոդվ. 23, 1924, թիվ 5, հոդվ. 4:

### § 3. Խորհրդային Հայաստանի 1922 թ. Սահմանադրության բնդիանուր բնութագիրը

ՀՍԽՀ առաջին Սահմանադրությունը կազմված էր հինգ քայլմաներից, տասներկու գլուխներից, 89 հոդվածներից: Այն ամրագրեց հասարակական ու պետական նոր կարգերի, պետական իշխանության, կառավարման և արդարադատության մարմինների կազմակերպման ու գործունեության, ընտրական համակարգի, բյուջետային իրավունքի հիմունքները, քաղաքացիների հիմնական իրավունքները և պարտականությունները, սահմանեց Հանրապետության գերբը, դրոշը:

ՀՍԽՀ 1922 թ. Սահմանադրությունը իրավաբանորեն ամրագրեց պետական իշխանության անցումը բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության ձեռքը և վավերացրեց Հայաստանում պետության նոր տիպի՝ սոցիալիստական պետության հաստատումը խորհրդների հանրապետության ձևով՝ կառուցված դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքով:

Ի տարբերություն հետագա խորհրդային սահմանադրությունների՝ այն՝ որպես ՀՍԽՀ առաջին Սահմանադրություն, չէր հենվում սահմանադրական զարգացման հաջորդականության սկզբունքի վրա և, լինելով առաջին սահմանադրությունը հայ իրականության մեջ, դեկավարվում էր ոչ թե համաշխարհային սահմանադրական իրավական մտքի նվաճումներով, այլ այն կարգախոսներով, որոնցով մեծամասնականները նվաճել էին իշխանությունը, և որոնք իրենց արտահայտությունն էին գտել խորհրդային իշխանության դեկրետներով:

Այդ Սահմանադրությունը լրիվ ջնջեց Հայաստանի առաջին Հանրապետության պետական շինարարության փորձը, իսկապես հիմնովին ջարդի ենթակելով վերջինիս՝ արդեն ձևավորված պետական ինստիտուտները, համարելով դրանք «քուրժուազգայնական, իմպերիալիստական»<sup>1</sup>: Սահմանադրության

10-րդ հոդվածը հոչակում էր. «Բուրժուական իրավակարգը և արդարադատությունը արմատախիլ անելու և պրոլետարիատի ու աղքատ գյուղացիության դիկտատուրայի հաստատման ու պաշտպանության համար վերացվում են նախկին հակահեղափոխական կառավարությունների բոլոր օրենքները և դատարանները: Դրանց փոխարեն՝

ա) բանվորագյուղացիական իրավունքի աղբյուր են ճանաչվում խորհրդային օրենսդրությունը, սոցիալիստական իրավագիտակցությունը և հեղափոխական խիղճը,

բ) արդարադատության հիմք է ճանաչվում միասնական ժողովրդական դատարանը, որ հենվում է աշխատավոր մասսաների դասակարգային կազմակերպությունների վրա, միաժամանակ ճանաչվում է արտակարգ դատավարության անհրաժեշտությունը բանվորագյուղացիական հեղափոխության բարձրագույն շահերի պաշտպանության համար»:

Ընդհմադիր քաղաքական ուժերը՝ դաշնակները, փորձում էին համոզել և ապացուցել, որ ՀՍԽՀ Սահմանադրությունը պարտադրված է հայ ժողովրդին, օտար է նրան: Սակայն պրոլետարիատի դիկտատուրայի համար այդպիսի արձագանքը հնչում էր իրեն «Ճայն քարբառյ հանապատի»: Սահմանադրության ստեղծողները մի կողմ նետեցին ժամանակի սահմանադրական իրավական մտքի նվաճումները և առաջին հանրապետությունում արդեն ձևավորված խորհրդարանական համակարգի ժողովրդավարական սկզբունքները: Պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում խորհրդարանի, պատասխանատու կառավարության, ընդդմության իրավունքների ճանաչման, պետությունը իրավունքն ենթարկելու մասին ընդհանրապես խոսք լինել չեր կարող:

ՀՍԽՀ առաջին Սահմանադրությունը չափոց դուրս գաղափարականացված էր և կրում էր բացահայտորեն դասակարգային բնույթ: Նրանում լրիվ մերժվում էր ժողովրդի՝ որպես պետության ինքնիշխանության կրողի և աղբյուրի համաժողովրդավարական հայեցակարգը: Այն ամրագրում էր խորհրդների մեջ միա-

<sup>1</sup> Տե՛ս Էնդի ծեց ա՛ն ու ծոված է 1974 թ. 1 հունիսի 115:

Վորված երկրի բանվոր բնակչության իշխանությունը, ուղղակիորեն վավերացնելով պրոլետարիատի դիկտատորիայի պետության հաստատումը: Վեկավարվելով դասակարգային շահերով, Սահմանադրությունը զրկում էր բնակչության առանձին խավերին ընտրական իրավունքներից, որոնք կարող էին օգտագործել՝ ի վեհա սոցիալիստական հեղափոխության, սերմանելով բացահայտ խորականություն:

Բոլշևիկների, այդ թվում և հայ մեծամասնականների ընդհանուր մոտեցումը պետության նկատմամբ ոչ միայն հեռու էր արևմուտքում տարածված և առաջին համբաւետությունում օրակարգի խնդիր համարվող իրավական պետության հայեցակարգից, այլև ուղղակիորեն հակառիք էր դրան: Պետության գլխավոր պարտականությունը քաղաքացիների իրավունքների և ազատությունների պահպանությունը չէր, եթե նույնիսկ խոսքը «աշխատավոր դասակարգերի» ներկայացուցիչների մասին էր: Իրավունքները խոսքերով երաշխավորված էին, սակայն իրականում ոչ մի անհատ չէր կարող դրանք պահանջել պետությունից, քանի որ գործում էր իրավունքից օգտվելու հակադրական կրթեկտիվիզմը, իսկ պետությունը դիտարկվում էր որպես ընդհանուր շահերի մարմնավորում: Դասակարգային տեսության ծնունդ հանդիսացող այդպիսի հայեցակարգը ճորտացնում էր մարդուն՝ ստեղծելով ազատության բուրժուական ձևականության հայրահարման բվացյալ տպավորություն: Հակայական պետական կառուցակարգի վերահսկողությունը տարածվում էր ոչ միայն մարդու յուրաքանչյուր գործողության վրա, այլև մտքերի: «Մենք ոչինչ մասնավոր չենք ճանաչում», – ասում էր Լենինը: Հետևաբար, իշխանության սահմանազանցման և այն չարաշահելու հիմնախնդիրները մեծամասնականների համար գոյություն չունեին, այդ իսկ պատճառով անպետք էր նաև իշխանության տարանջատման սկզբունքը:

Հիմնելով խորհուրդների հանրապետություն, որի իշխանության և կառավարման (գործադիր) պետական մարմինները կա-

ռուցվում ու գործում էին դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքով, մեծամասնականները մի կողմ նետեցին իշխանությունների բաժանման սկզբունքը, որովհետև պետության դասակարգային ըմբռնման պայմաններում պետական իշխանության սահմանագնցման և այն չարաշահելու հիմնախնդիրները գոյություն չունեին, որովհետև պրոլետարիատի դիկտատորական անպայման ենթադրում էր բռնություն:

Լենինը ուղղակիորեն հիմնավորում էր գործադիր և օրենսդիր իշխանությունների միասնությունը՝ հակառակ բուրժուական պաղամենտարիզմի: Նրա համար իշխանությունների փոխադարձ հավասարակշռման անհրաժեշտությունը հոգս չէր: Նման հայեցակարգն իր արտահայտությունն էր գտել ՌԽՖՍՀ 1918 թ. Սահմանադրության մեջ, իսկ այնտեղից էլ՝ ՀՍԽՀ Սահմանադրության մեջ, որում ընդգծվում էր, որ օրենքներ (դեկրետներ) հրատարակելու իրավունք ունեն ՀՍԽՀ երեք բարձրագույն մարմինները՝ Խորհուրդների համահայկական համագումարը, այդ համագումարի Կենտգործկոմը և Ժողկոմխորիքը:

Չսանձված գործադիր իշխանությունն ամենից ահավոր պետական ինստիտուտն էր, որ մեծամասնականները մտցրին նոր սահմանադրական իրավունքում: Մարդու բնական իրավունքների ու ազատությունների լրիվ մերժման պայմաններում այդ իշխանությունը՝ չենքարկվելով դատական վերահսկողության, վերածվեց ամենից գլխավոր իշխանության, կատարում էր ահավոր չարաշահումներ: Ոչ հրապարակային ցուցումների հիման վրա զնդակահարվում էին հարյուրավոր մարդիկ, հազարավորները՝ կալանավորվում, վտարվում բնակարաններից ու բնակավայրերից, ենթարկվում սեփականագրեկման:

Սահմանադրությունը վերացված էր հայտարարում հողի մասնավոր սեփականությունը ՀՍԽՀ սահմաններում, «արտագրավում և պետական սեփականություն էր ճանաչում ամբողջ հողը բոլոր ջրերով ու անտառներով, այլև մասնատիրական և կրոնական հաստատությունների չարժական ու անշարժ գույքը, և

ճրիաբար մշակելու համար տալիս աշխատավորներին, նրանց կողեկայիվներին ու խորհրդային տնտեսություններին», պետականացնում էր երկարութիները, բանկերը և «ընդհանրապես խոշոր արտադրության բոլոր միջոցները, այս ամենի կառավարումն ու շահագործումը վերապահելով խորհրդային օրգաններին կամ արտադրական միավորներին»: Մասնավոր ձեռնարկատիրությանը վերապահված շրջանակը որոշվում էր ընթացիկ օրենսդրությամբ:

1922 թ. Սահմանադրությունը սուբյեկտիվ իրավունքներ տրամադրում էր միայն աշխատավորներին<sup>1</sup> և միայն նրանց «քաղաքացիական դաստիարակության, մտավոր-քարոյական ազատագրության և դասակարգային կազմակերպության նպատակով»: Այս չափորոշիչների շրջանակում Սահմանադրությունը հոչակում էր.

«ա) Եկեղեցին անջատվում էր պետությունից՝ վերածվելով հավատացյալների մասնավոր համայնքի, և դպրոցը՝ Եկեղեցուց: Բոլոր քաղաքացիներին իրավունք էր տրվում ազատորեն վարել կրոնական և հակակրոնական քարոզություն: Դպրոցը դառնում էր սոցիալիստական դաստիարակության օրգան՝ կիրառելով արտադրական աշխատանքը որպես կրթության միջոց,

բ) աշխատավորների խոսքի ազատություն և մասուի անկախություն իրավես ապահովելու համար նրանց տրամադրվելու էին նյութական, տեխնիկական և այլ ամեն տեսակի միջոցներ,

գ) աշխատավորներին ժողովների, միտինգների, ցույցերի և այլ համախմբումների ազատությունն իրավես ապահովելու համար նրանց տրամադրվելու էին ժողովատեղիներ, կահ-կարասիք, լուսավորություն և վառելիք,

<sup>1</sup> Պաշտպանելով միջազգային սոցիալիստական հեղափոխության շահերը և «բոլոր երկրների ու ժողովուրդների աշխատավորների համերաշխության գաղափարը՝ ՀՍԽՀ սահմաններում ապրող օտարերկրացի բոլոր աշխատավորներին տրվում է քաղաքացիության իրավունք, իսկ քաղաքական ու կրոնական հալածանքի ենթակա բոլոր օտարերկրացիներին՝ ապահովություն և պաշտպանություն:

դ) աշխատավորներին իրավես միությունների ազատություն ապահովելու համար բանվոր դասակարգին և գյուղացիությանը լիավես տրվում են նյութական և այլ տեսակի իրական միջոցներ,

ե) ՀՍԽՀ աշխատավորներին գիտություն ստանալու գործը իրավես ապահովելու համար բանվոր դասակարգին և գյուղացիությանը տրվում են լիակատար, բազմակողմանի և ճրի կրթության բոլոր հնարավորությունները,

զ) աշխատանքը համարվում էր պարտականություն «Ով չի աշխատում չի ուտում» սկզբունքով»:

1922 թ. Սահմանադրությունն անտեսում էր անձնական անձնությունը, սեփականության, կյանքի, սոցիալական ապահովության իրավունքները, իսկ հոչակված իրավունքները ձևական էին, որովհետև Հայատանում հաստատվել էր հեղափոխական տեռոր: Մարդու իրավունքները դարձան իշխանության հայեցողությունից կախված նվիրատվություն, ինչը հիմք էր անհատի իրավունքների անվերջ սահմանափակումների կիրառման համար:

1922 թ. Սահմանադրությունը բացահայտորեն ճանաչում էր բռնության կիրառման անհրաժեշտությունը նոր՝ սոցիալիստական կարգերի սկզբունքների հաստատման նպատակով: Այդ գիծը հասուիկ չէր ժողովրդավարական համարվող ոչ մի երկրի սահմանադրությանը և նոյնիսկ հետագա սոցիալիստական սահմանադրություններին: Օրինակ՝ այն ամրագրում էր մասնավոր սեփականության բռնի վերացումը, բոլոր աշխատավորների անհատույց բռնագրավում (եքսպրոպրիացիա):

ՀՍԽՀ 1922 թ. Սահմանադրությունը աշխատավորների ընկնում նաև իր ծրագրային մեծաքանակ դրույթներով: Շատ հոդվածներ սահմանում էին նպատակներ, որոնց հասնելուն էր ուղղված Սահմանադրությունը: Դա վերաբերում է քաղաքացիների որոշ իրավունքների ամրագրմանը, որոնց իրացումը հնարավոր կրառնար ապագայում: Սահմանադրության մեջ բավականին շատ էին

«նպատակային» հոդվածները: Օրինակ՝ 11-րդ հոդվածը սահմանում էր. «Քանիզորների և աշխատավոր գյուղացիների դասակարգային դիլտատուրան, որ կոչված է վերջ դնելու կապիտալիստական հասարակական կարգին և հեղափոխական վերափոխումներով իրականացնել սոցիալզմ, վերջ կրնի նաև դասակարգերի գոյությանը, հետևաբար և ամեն տեսակ դիլտատուրայի ու քաղաքական իշխանության, որոնք դասակարգային գերիշխանության պտուղն ու արտահայտությունն են»:

1922 թ. Սահմանադրությունը պետահրավական ինստիտուտների իրավաբանական ձևակերպման տեխնիկայի տեսակետից ևս նշանակալիորեն անկատար էր, որը բացատրվում էր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով: Օբյեկտիվ հանգամանքների հետևանքով ընդհանրացված տեսրով չեր ներկայացված հասարակական կարգի հիմունքներ բաժինը, քանի որ վերջինս նոր էր ձևավորվում, գոյություն ուներ միայն տեսականորեն, իսկ ընդորինակելու արժանի գործնական սահմանադրավական փորձ չկար: Սահմանադրության ամբողջ հայեցակարգը վերցված էր ՌԽՖՍՀ 1918 թ. Սահմանադրությունից, որը ևս աչքի էր ընկնում նույնաբնույթ թերություններով: Ընդ որում, Հայաստանում դրությունը բարդացնում էր նաև իրավաբանական պատշաճ տերմինարանության բացակայությունը:

ՀՍԽՀ 1922 թ. Սահմանադրությունը, ի տարբերություն 1937 և 1978 թթ. Սահմանադրությունների, դեռևս ուղղակիորեն չեր պարունակում կոմունիստական կուսակցության դեկավար դերի մասին դրույթներ: Սակայն Սահմանադրության 5-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ հոդվածներից, որոնցում խոսվում էր այրուետարիատի դիլտատուրայի մասին, խորհրդային սահմանադրական իրավունքի գիտությունը բխեցնում էր կոմկուսի դեկավար դերը<sup>1</sup>: Համարվելով բանվոր դասակարգի ավանդարդը՝ «այն գլխավորեց աշխատա-

վորների պայքարը ցարիզմի դեմ, հասավ այն բանին, որ հաստատվի շահագործվող դասակարգերի իշխանություն, հետևաբար նրա դեկավար դերը կար ու պետք է մնար»<sup>1</sup>:

\*\*\*

1922 թ. Սահմանադրության բոլոր գծերը բնութագրում են այս՝ որպես հեղափոխական տիպի Սահմանադրություն, որն ընդունվեց հանրապետական և պառլամենտական կարգերը բռնի վերափոխելու հիման վրա՝ մերժելով մինչև հեղափոխությունը գոյություն ունեցող իրավական հիմնադրույթները, որն իրավաբանական նիկիիզմի վատագույն դրսւորումն էր՝ պայմանավորված դասակարգային մոտեցմամբ: Այս ամենով հանդերձ՝ 1922 թ. Սահմանադրությունը հակազգային էր, որովհետև անվավեր էր հայտարարում Առաջին հանրապետության օրոր կնքված միջազգային բոլոր պայմանագրերը:

#### **§ 4. Դասակարգային խտրականության սահմանադրական քաղաքականությունը և քաղաքական ազատության վերացումը**

Սահմանադրությամբ ամրագրված իշխանության նոր կառուցվածքը բացառում էր ընտրությունների ազատությունը՝ սահմանելով բացահայտ ընտրական խտրականություն, և բռնի ճնշման միջոցով արգելում էր քաղաքական բազմակարծությունը:

Բազմատիճան և անուղղակի ընտրական համակարգը, փաստորեն, քաղաքացիներին գրկում էր իշխանության միջին և բարձրագույն ներկայացուցչական մարմինների կազմի վրա իրականում ազրելու հնարավորությունից: Ընտրությունները տեղի էին ունենում ձեռք բարձրացնելով բաց քվեարկությամբ: Հեղափոխական տեսորի պայմաններում բաց քվեարկությունը բացա-

<sup>1</sup> Տե՛ս Պետրոսյան Շ.Ն., ՀԽՍՀ Սահմանադրությունը և նրա պատմական գրագումը, Եր., 1982, էջ 12:

<sup>1</sup> Տե՛ս Էնձն ծեղ անոնածնոհան է յօնական Նուածնոհան է Ածն ան է. Էն. 1. Ածնական, 1974, էջ 118:

ոում էր ընտրողների կամքի ազատությունը: Գյուղական և քաղաքային խորհուրդների ընտրությունները ուղղակի էին: Այստեղ ընտրողները խորհուրդների պատգամավորներին ընտրում էին ժողովներում: Գյուղական և քաղաքային խորհուրդները ընտրում էին գավառական խորհուրդների համագումարների պատգամավորներին, իսկ վերջիններս էլ՝ բաց քվեարկությամբ՝ Խորհուրդների համահայկական համագումարի պատգամավորներին: Բազմասիճան ընտրական համակարգը պատգամավորների կազմը «օտար տարրերից» գտնու և կոմկուսի մեջշխանությունը ապահովելու յուրօրինակ միջոց էր:

Խորհուրդների աստիճանական ամբողջական համակարգը կենտրոնացված համակարգ էր, որը մարմնավորում էր ոչ թե քանվորների, այլ համառորեն վարչարարությամբ զբաղվող վերևների դիկտատորան: Խորհրդային իշխանությունը անբաժան, անվերահսկելի և բացարձակ իշխանություն էր: Իրավահավասարության իրավունք ունեին միայն բոլոր աշխատավորները՝ առանց ազգի և դաշնանքի խորության: Դա նշանակում էր, որ ոչ աշխատավորների նկատմամբ կարելի է իրականացնել պետական և իրավական խորական քաղաքականություն: Այդ է հաստատում այն փաստը, որ Սահմանադրությամբ նախատեսված ընտրական համակարգը ամբողջովին հակաժողովրդական բնույթ ուներ: «Քանվորների և աշխատավոր գյուղացիների հեղափոխական դիկտատորայի իրականացման նպատակով՝ իշխանությունը ամբողջովին և բացառապես վերապահվում էր քանվորներին ու գյուղացիներին և նրանց ընտրած մարմիններին, իսկ շահագործող դասակարգերը զրկվում էին ընդհանրապես քաղաքական իրավունքներից և հատկապես քաղաքական պաշտոնակալության իրավունքից»՝ հոչակում էր Սահմանադրությունը:

1922 թ. Սահմանադրությունը սահմանում էր. «Քանվորների, գյուղացիների և կարմիր բանակայինների պատգամավորական խորհուրդների համար ընտրելու և ընտրվելու իրավունքը ունեն անկախ ազգությունից, դաշնանքից, նաև կեցությունից՝ ՀՍԽՀ

երկու սեռի՝ մինչև ընտրությունների օրը 18 տարին լրացած հետևյալ քաղաքացիները. ա) բոլոր արտադրող և հանրօգուտ աշխատանքով ապրուստի միջոցներ ձեռք բերողները, այլև նրանք որոնք տնային տնտեսությամբ առաջինների համար աշխատանքի հնարավորություն են ստեղծում, բ) կարմիր բանակայինները, գ) սույն հողվածի ա) և բ) կետերում մատնանշված և աշխատունակությունը կորցրած քաղաքացիները»:

«Ընտրելու և ընտրվելու իրավունքից զրկվում են, թեկուզ վերիիշյալ կատեգորիաներից մեկին պատկանող՝ ա) վարձու աշխատանք շահագործողները, բ) անշխատ եկամուտով ապրողները, գ) մասնավոր առևտրականները և առևտրական միջնորդները, դ) կրոնավորները և կրոնական պաշտամունքի հոգևոր սպասավորները, ե) տապալված կառավարության անդամները և քաղաքական հետախուզության ու ոստիկանության պատասխանատու պաշտոնյաները, խմբապետները ու մատուցերիստները, զ) սահմանված կարգով տկարամիտ և խելագար ճանաչված, ինչպես նաև խնամակալության տակ գտնվող անձինք, է) օրենքով կամ դատական դատավճռով իրավունքներից զրկման դատապարտված անձինք»<sup>1</sup>:

1922 թ. Սահմանադրությունը բանվոր դասակարգին տրամադրում էր քաղաքական արտոնություններ գուղացիների հանդեպ: Այդ Սահմանադրության 51-րդ հոդվածի համաձայն պատգամավորների խորհուրդների գավառային համագումարը կազմվում էր խորհուրդների գավառամասային համագումարների և քաղաքային խորհուրդների ներկայացուցիչներից, ըստ որում, գյուղի 1000 ընակչից ընտրվում է մեկ պատգամավոր, իսկ քաղաքի 200 ընտրողից մեկ պատգամավոր:

Դեռ Ժամանակավոր կառավարության օրոք Սահմանադրի

<sup>1</sup> Ընտրական իրավունքից զրկելը դատարանի դատավճռով նշանակվող լրացուցիչ քրեական պատժատեսակ էր, որ կիրավում էր որոշ հանցագործություններ կատարած անձանց նկատմամբ հիմնական պատժատեսակը՝ պատագրկումը կրելուց հետո:

Ժողովի ընտրությունների արդյունքները, ինչպես նաև Հայաստանի առաջին հանրապետությունում անցկացված խորհրդարանական, քաղաքային ու գավառային ինքնավարության մարմինների ընտրությունների արդյունքները վկայում էին, որ համընդիանուր և հավասար ընտրությունների անցկացման դեպքում մեծամասնականները պարտվում են, որ բնակչության գերակշռող մասը չի քվեարկում հօգուտ նրանց: Այդ հիմնախնդիրը մեծամասնականները լուծեցին քաղաքական հակառակորդների զախչախմամբ: Քաղաքական քատերարեմից հարկադրական ճանապարհով հեռացվեցին բոլոր այն կուսակցությունները, հատկապես դաշնակցականները, որոնք կարող էին հավակնել քաղաքական իշխանության:

Այնուհետև պրոլետարական բյուրոկրատիայի հարկադրամն ընդդեմ կոմկուսի ներսում առկա ընդդիմությանը: 1921 թ. կոմկուսի 10-րդ համագումարում Լենինն առաջարկեց երկու որոշումներ, որոնցով արգելվում էին կոմկուսի ներսում ընդդիմադիր խմբերի կամ ֆրակցիաների ստեղծումը: Այդ պահից անվտանգության մարմինները ձեռնամուխ եղան ամենից արմատական ընդդիմադիր խմբերի ջախջախմանը<sup>1</sup>: Օպրտունիստական, «դավաճանական» հայացքների քարոզությունը արգելելու պատրվակով աստիճանաբար անհետացավ հասունացած հիմնախնդիրների բաց քննարկման և բանավիճության կուսակցական ավանդույթը: Կոմկուսի միասնության ֆետիշացումը հանգեցրեց ներկուսակցական բազմակարծության վերացնան: Պրլետարիատի դիկտատուրան պարբերաբար ձեռնարկում էր այլախոհներից կոմկուսի կամ հասարակության «գտնան» միջոցառումներ: Օրինակ՝ 1933 թ. հունվարին կոմկուսը ընդունեց որոշում իր շարքերի համընդհանուր մաքրման մասին: Այդ տարում համամիտենական մաշտարով կուսակցությունից հեռացվեցին

<sup>1</sup> Stiu Í ói-+ááa Í ., Ómoeííá Á.Í ., Í iééðe-+áneáy énóí deý Dínné. Í ò n-  
ðái í áéái éy níá i ááðæááéy áí i íáái éy ní ááðóíé aéanóé. Í .. 1999, t9 474:

275

<sup>1</sup> 800 000 կոմունիստներ,իսկ 1934 թ.՝ 340 000 կոմունիստներ<sup>1</sup>:

Բոլշիկները բավականին ազրեափ կերպով հաշվեարդար տեսան մնացած քաղաքական կուսակցությունների հետ, որոնք արգելվեցին, իսկ նրանց առաջնորդները բռնությունների ենթարկվեցին կամ զնդակահարվեցին: Խորհրդային իշխանության հաստատմամբ՝ Հայաստանի կոմկուսը համար և հետևողական պայքար ծավալեց ՀՅԴ-ի և այլ քաղաքական կուսակցությունների դեմ՝ նրանց ինչպես գաղափարապես, այնպես էլ կազմակերպականորեն ասպարեզից վերացնելու համար՝ դրա համար գործադրելով նաև բռնություն, գաղտնի ծառայություններ, տեսող, համապարտ պատասխանատվություն, այլ ոչ համաչափ միջոցներ<sup>2</sup>:

Կոմունիստական կուսակցությունը ծեռք բերեց հասարակության և պետության դեկավարման մեջաշնորհը: Խորհուրդները ամբողջովին անցան բոլշևիկների ծեռքը, ավելի ճիշտ՝ կուսակցական ապարատի դեկավարության տակ: Աստիճանաբար տեղի էր ունենում կուսակցական և պետական իշխանության սերտածում, իշխանության լրիվ կենտրոնացում: Կուսակցական համագումարներում և Կենտկոմի պլենումներում քննարկվում և լուծվում էին երկրի կյանքի արմատական հարցերը: Խորհրդային ապարատում, ինչպես նաև հասարակական կազմակերպություններում, բոլոր նշանակումները արվում էին միայն կուսակցական ուղղությունների միջոցով: Կուսակցական առաջնորդները բացահայտորեն յուրացրին «ժողովրդի առաջնորդներ» տիտղոսները: Պրոլետարիատի դիկտուտուրան վերածվեց կուսակցության դիկտուտուրայի, իսկ նրա միջոցով՝ առաջնորդների դիկտուտուրայի, սակայն սահմանադրական իրավունքն այդ մասին լուր էր:

<sup>1</sup> Տե՛ս Անոլին առեղոր, էջ 502

<sup>2</sup> Տե՛ս Հ. Հայնանցությունը և խորհրդային իշխանությունը (Փաստաթղթերի և նյութերի ժողովածու), պատմականատու խմբագիր և կազմող պրոֆեսոր Վ.Ն. Ղազախենյան, Երևան, 1999, 370 էջ:

\* \* \*

Հայաստանի խորհրդայնացմամբ ամբողջովին վերացվեց Առաջին հանրապետության նոր ձևավորվող իրավական համակարգը. 1920-22 թթ. ընթացքում, օգտագործելով հեղափոխական Ռուսաստանի փորձը, կառուցվեց սկզբունքորեն նոր, խորհրդային իրավական համակարգ, որը վերածվեց դասակարգային-քաղաքական պայքարի հզոր միջոցի, ամբողջատիրական իշխանության ձեռքին դարձավ գործիք՝ դասակարգային թշնամիներին, քաղաքական հակառակորդներին, այլախոհներին ճնշելու համար: Խորհրդային իրավական համակարգը Հայաստանի օրինակով ուներ այնպիսի բնութագրական գծեր, ինչպիսիք են օրենսդրության մեջ սոցիալ-քաղաքական շարժադրությունը, իրավունքի և արդարադատության դասակարգային բնույթի ճանաչումը, սոցիալստական իրավագիտակցությունը և հեղափոխական խիդը իրավունքի աղբյուր ճանաչելը, իրավական ձևերի և ընթացակարգերի դերի ու նշանակության նվաստացումը:

Ամբողջատիրական սոցիալստական իրավունքի տեսական հիմքը դասակարգային նորմատիվատական իրավագիտությունն էր, իսկ հիմնական աղբյուրը՝ 1922 թ. հակաժողովրդավարական Սահմանադրությունը: Բոլշևիկների, այդ քվում հայ, ընդհանուր մոտեցումը իրավական համակարգի նկատմամբ ոչ միայն հեռու էր Արևմուտքում տարածված ռոմանագերմանական իրավունքի հայեցակարգից, այլև ուղղակիորեն հակադիր էր դրան: Պետության գլխավոր պարտականությունը քաղաքացիների իրավունքի և ազատությունների պահպանությունը չէր: Դասակարգային տեսությունը ճորտացրեց մարդուն՝ ստեղծելով բոլժուական պատության ձևականության հաղթահարման պատրամք:

## ԳԼՈՒԽ 11. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՒ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

### § 1. Խորհրդային իրավական համակարգի կենտրոնացումը

1922 թ. մարտի 11-ին Թիֆլիսում գումարվեց երեք անդրկովկասյան խորհրդային հանրապետությունների ԿԳԿ-ների լիազոր համախորհրդակցությունը, որը մարտի 12-ին հաստատեց «Անդրկովկասյան Սոցիալստական Խորհրդային Հանրապետությունների Ֆեդերատիվ Սիուրյուն կազմավորելու մասին» պայմանագիրը: Դրանից հետո՝ 1922 թ. դեկտեմբերի 10-ին, Խորհուրդների Անդրկովկասյան համագումարը որոշեց կազմավորել Անդրկովկասյան Սոցիալստական Խորհրդային Ֆեդերատիվ Հանրապետությունը և ընդունեց դրա Սահմանադրությունը: 1922 թ. դեկտեմբերի 29-ին տեղի ունեցավ անկախ խորհրդային հանրապետությունների լիազոր ներկայացուցիչների պատվիրակությունների համաժողով, որի հավանությանն արժանացան ԽՍՀՄ կազմավորման մասին դեկլարացիան և պայմանագիրը:

1922 թ. դեկտեմբերի 30-ին բացվեց ԽՍՀՄ խորհուրդների 1-ին համագումարը, որը իրավաբանորեն հաստատեց ԽՍՀՄ կազմավորումը, ընդունելով ԽՍՀՄ կազմավորման մասին Դեկլարացիան և Պայմանագիրը: Անցնելով հաստատման մի շարք ընթացակարգեր՝ 1924 թ. հունվարի 31-ին ԽՍՀՄ խորհուրդների 2-րդ համագումարը միաձայն ընդունեց ԽՍՀՄ Սահմանադրությունը:

Անդրֆեդերացիայի, իսկ այնուհետև ԽՍՀ Միության կազմավորումը և նրանց սահմանադրությունների ընդունումը անհրաժեշտ դարձրին հանրապետության 1922 թ. Սահմանադրության մեջ փոփոխություններ մտցնելը: 1925 թ. մարտի 12-15-ը կայացավ Հայաստանի խորհուրդների 4-րդ համագումարը, որը, ըննարկելով «ԱՍՖԽՆՀ Սահմանադրությունը և Հայկական ԽՍՀ

Սահմանադրությունը ԱՍՖԽՀ և ԽՍՀՄ Սահմանադրությունների հետ համաձայնեցնելու հարցը», միաձայն հաստատեց Սահմանադրության նոր տեքստը:

1925 թ. Հայաստանի խորհուրդների 4-րդ համագումարում փաստորեն ընդունվեց նոր Սահմանադրություն, որովհետև այն փոխել էր խորհրդային Հայաստանի պետական կարգավիճակը՝ վերածելով այն դաշնության սուրյատի: 1922 թ. Սահմանադրության մեջ մտցվեց նոր՝ 2-րդ գլուխ՝ «Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Խորհրդային Հանրապետության և Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Սիության կազմի մեջ մտնելու մասին»: Դրանով սահմանափակվեց մեր հանրապետության գերազույն մարմնի լիազորությունների շրջանակը: Սիութենական մարմիններին հանձնվեցին արտաքին հարաբերությունները, պաշտպանությունը, տրանսպորտի և կապի դեկավարությունը: Սակայն ՀԽՍՀ-ն նորից հոչակվում էր ինքնիշխան: Նրա իշխանությունը սահմանափակված էր միայն միութենական մարմինների իրավասությանը վերապահված հարցերով:

Խորհրդային դաշնության կազմավորումից հետո օրենսդրության համակարգը որոշվում էր ԽԽՍՀ 1924 թ. Սահմանադրությամբ, որը դաշնության իրավասությանը վերապահեց օրենսդրության իմանալիք սահմանումը: Դրա հիման վրա 1924 թ.-ից սկսեցին ընդունել ԽԽՍՀ Սիության և միութենական հանրապետությունների տարբեր ոլորտների օրենսդրության իմանալիքները: Օրինակ՝ 1924 թ. հոկտեմբերի 31-ին ընդունվեց ԽԽՍՀ Սիության և միութենական հանրապետությունների քրեական դատավարության իմանալիքները<sup>1</sup>: Այդ իմանալիքներում ամրագրվել էին ապացուցական իրավունքի իմանական դրույթները: Դատական վարություն ստացված բոլոր ապացույցները մանրազնին պետք է

ստուգվեին դատական նիստում և օրենքի հիման վրա, դատավորի ներքին համոզմամբ, դատական քննության նյութերի համակցության հետ պետք է գնահատվեին դատարանի կողմից: Սակայն 1924 թ. իմանալիքները չեն պարունակում այնպիսի սկզբունքային դրույթներ, ինչպիսիք են բոլոր դատարաններում գործերի քննությունը ժողովրդական ատենակալների մասնակցությամբ, դատավորների անկախությունը և նրանց ենթարկվելը միայն օրենքին, մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովումը, քրեական պատժի նշանակումը միայն դատարանի դատավճռով և այլն: Դրանում չեն սահմանված քրեական դատավարության խնդիրները և տուժողի իրավունքները:

Ի տարբերություն նախորդ շրջանի՝ իրավական համակարգի հիմքում ընկած էր սոցիալիստական օրինականության սկզբունքը, որը, օրինակ՝ քրեական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածում ամրագրված էր հետևյալ կերպ. «ՀԽՍՀ դատական հիմնարկություններում քրեական գործերով վարույթի կարգը սահմանվում է սույն օրենսգրքով»:

Այս շրջանում բուն Հայաստանում սահմանադրական-իրավական կարգավորման մասին կարող է խոսք գտնալ մինչև ՀԽՍՀ-ի ԽԽՍՀ կազմի մեջ մտնելը: Դրանից հետո Հայաստանը փաստորեն կառավարվում էր Անդրֆեդերացիայի, իսկ այնուհետև՝ ԽԽՍՀ Սիության մարմինների և օրենքների միջոցով, իսկ ՀԽՍՀ սահմանադրությունները, ԽԽՍՀ սահմանադրությունների կրկնօրինակներն էին Հայաստանի համար: Չնայած դրանք ՀԽՍՀ-ն հայտարարում էին ինքնիշխան պետություն, բայց իրականում հանրապետության պետական մարմինները և իրավական համակարգը խստորեն ենթարկված էին միութենական պետության կենտրոնացված իշխանության համակարգին: Այսպիսվ, Հայաստանի իրավական համակարգի նորմատիվային հիմքը կազմում էր Անդրֆեդերացիայի, իսկ այնուհետև՝ ԽԽՍՀ Սիության օրենսդրությունը:

<sup>1</sup> Տե՛ս ՆՀ ՌՆՌՆԹ, 1924, թիվ 24, հոդվ. 206:

Օրենսդրության համամիութենական և անդրկովկասյան համակարգումները կողիքիկացիայի ձևով արտացոլում էին երկրում ընթացող իշխանության, կառավարման և կարգավորման կենտրոնացման գործնթացները: Վերջանում էր նեպի ժամանակաշրջանը, և սկսվում էր պետականական պատմության նոր փուլը:

## § 2. Սոցիալիզմի կառուցման քաղաքական կուրսը և իրավական համակարգի փոփոխությունների բնույթը 1925-30-ական թթ.

1925-30-ական թթ. Խորհրդային Սիությունում սկսեց ձևավորվել ամբողջատիրական իշխանության համակարգ: Իրավունքի պատմության մեջ այդ շրջանը կարելի է բնութագրել որպես 1922-24 թթ. անցկացված բարենորոգումների ընթացքում նկատվող ժողովրդավարական միտումներից աստիճանաբար հրաժարվելու ժամանակաշրջան: Իրավական համակարգում նման միտումը տևեց մինչև 1953 թ.: Նահանջը դրսերվեց երեք ուղղություններով՝ անկախ դատարանների նորակազմ համակարգի զարգացման կասեցում, արտակարգ դատական մարմինների վերաստեղծում, հակաժողովրդավարական փոփոխություններ օրենսդրության մեջ (հատկապես քրեական և դատավարական):

Իրավական համակարգում մյուս բացասական միտումը 20-ական թթ. սկսված և 30-ական թթ. ահազնացող իրավական կարգավորման և պետական կառավարման ոլորտների կենտրոնացումն էր:

ՆԵՊ-ի տարիներին ամբողջ խորհրդային երկրում նկատվեց տնտեսական կյանքի որոշ աշխուժացում, բայց դա տևական չեղավ: 1929 թ. գործնականում վերջ տրվեց ՆԵՊ-ի քաղաքականությանը: Զախցախվեց «օպորտունիստական» որակված ընդդմությունը, և ասպարեզ նետվեց ուզմակոմունիստական բնույթի մի նոր քաղաքականություն՝ ամբողջ ճակատով սոցիալիզմի հար-

**ճակման քաղաքականությունը**, որի քաղադրամասերն էին՝ ա) արդյունաբերության լրիվ սոցիալիստական ինդուստրացումը, բ) գյուղատնտեսության բռնի կողեկտիվացումը, գ) մշակութային հեղափոխությունը:

1929 թ. խորհրդային հասարակության զարգացման պատմության մեջ համարվեց մեծ քեկման տարի, երբ գործի դրվեց սոցիալիզմի կառուցման «լենինյան» կոչվող կուրսը: Դա նշանակում էր՝ վերջ տալ մասնավոր սեփականությանն ու շուկայական հարաբերություններին, արտադրության միջոցների պետականացման ու մերենայացման հիման վրա ինդուստրացնել երկիրը. կոլեկտիվացնել գյուղատնտեսությունը՝ վերացնելով անհատական գյուղացիական տնտեսությունները. կոմունիստական գաղափարախոսության սերմանման միջոցով ձևավորել նոր՝ սոցիալիստական տիպի մարդ, ինչպես նաև մշակույթ, այսինքն՝ իրագործել մշակութային հեղափոխություն: Այդ գործնթացները մեծ դժվարություններով, բռնույթուններով և զոհողություններով իրականացվեցին նաև Հայաստանում:

Արդեն 30-ական թվականների վերջերին Հայաստանում ևս կառուցվեցին սոցիալիզմի հիմքերը: Այդպիսով, նեպի տարիներին բոլշևիկների առաջադրած «ով՝ ում» հարցը լուծվեց հօգուտ սոցիալիզմի ու պրոլետարիատի: Խորհրդային Սիությունում կառուցվեց մի հասարակարգ, որն անվանում են նաև «զորանցային», «ստալինյան» սոցիալիզմ:

Բացասական, հակաժողովրդավարական միտումները օրենսդրության մեջ պայմանավորված էին նաև այն բանով, որ իրավունքի հիմնարար ընդհանուր սկզբունքները, իրավական երաշխիքներն այն ժամանակ չունեին սահմանադրական ամրագրում և պատշաճ սահմանադրախրավական կարգավորում: Չնայած մարքս-լենինյան գաղափարախոսության վրա հենվող «սոցիալիստական օրինականության» դոկտրինը ելնում էր իրավունքի մասին նորմատիվիստական պատկերացումներից, սակայն դա չը նշանակում օրենքի և Սահմանադրության գերակայութ-

յան հաստատում, քանի որ օրենսդրության մեջ և դրա կիրառման պրակտիկայում առաջնային էին համարվում նպատակահարմարությունը, անալոգիան և օբյեկտիվ մեղսայնացումը: Դա իր հերթին հանգեցնում էր օրենքի բազմաթիվ խախտումների:

Քրեական իրավունքում ամանորդիայի պահպանման պատճառով ՀԽՍՀ 1934 թ. քրեական դատավարության օրենսգրքը սահմանում էր, որ «դատական մարմիններն իրավունք չունեն իրաժարվելու՝ ի քննություն ընդունելուց կամ կարծելու քրեական հետապնդումը, կամ առկախ բողնուելու գործի վճռահատությունը հասարակության համար վտանգավոր արարքի վերաբերմանը այն իինան վրա, թե քրեական օրենքի մեջ նատնանշված չեն այդ արարքի հատկանիշները, այլև օրենքների թերության, մթության կամ հակասության պատճառաբանությամբ»:

Քաղաքական բոլոր գործնաբացները կրում էին հակասական բնույթ, օրինակ՝ մշակութային հեղափոխության ընթացքում մի կողմից՝ տեղի էր ունենում կրթության, գիտության առաջնորդաց, համատարած անգրագիտության վերացում, իսկ մյուս կողմից՝ հանուն «նոր մարդու ձևավորման» և նոր մշակույթի արմատավորման, հետապնդվում էին ազատ մտածողությունը, այլախոհությունը, առողջ քննադատությունը: «Ժողովրդի թշնամի», «տրոցկիստ», «նացիոնալիստ», «քուրժուազիայի լրտես» պիտակավորումներով, հազարավոր անմեղ մարդիկ քշվում էին համակենտրոնացման ճանրաբներ ու անխնան ոչնչացվում:

Ուսպրեսիաների կիրառման գործում էական էր 1920-ական թթ. վերջերին վերականգնված արտակարգ դատական մարմինների դերը: Եթե ՌԽՖՍՀ-ում Համառուսական ԿԳԿ-ի 1922 թ. փետրվարի 6-ի դեկրետով Համառուսական արտակարգ հանձնաժողովը և նրա տեղական մարմինները վերակազմավորվեցին պետական քաղաքական վարչության՝ ՌԽՖՍՀ-ի ներքին գործերի ժողկոմատին կից<sup>1</sup>, ապա ՀԽՍՀ-ում չեկայի մարմինները շա-

րունակում էին գործել: Ավելին, 1925 թ. Հայաստանի ԿԳԿ-ի որոշմամբ Հայաստանի Արտակարգ հանձնաժողովին կից հիմնադրվեց Հատուկ խարիդակցությունը՝ կազմված ԿԳԿ-ի նախագահության կողմից նշանակված երեք անդամներից: Հատուկ խորհրդակցությունը լիազորված էր Հայաստանի սահմաններում աքսորի ենթարկելու հասարակության համար վտանգավոր ճանաշված անձանց՝ մինչև 3 տարի ժամանակով<sup>1</sup>: Հատուկ խորհրդակցության նիստերին մասնակցում էին հանրապետության դատախազը կամ նրա տեղակալը: Վերջիններս իրավունք ունեին կասեցնել խորհրդակցության ապօրինի որոշումները և բողոքարկել դրանք Հայաստանի ԿԳԿ-ի նախագահություն:

Հայաստանի արտակարգ հանձնաժողովը և նրա գավառային բաժինները վերացվեցին Հայաստանի ԿԳԿ-ի 1926 թ. սեպտեմբերի 8-ի որոշմամբ: Հայաստանի Ժողկոմխորհին կից ստեղծվեց Պետական քաղաքական վարչություն, որը ենթարկվում էր Անդրբերացիայի պետական քաղաքական վարչությանը<sup>2</sup>: Հայաստանի պետական քաղաքական վարչության խնդիրներն էին՝ պայքարը հակահեղափոխական հացագործությունների, լրտեսության, բանիխտիզմի, մաքսանենգության դեմ, սահմանների, երկարուղային և ջրային հաղորդակցության ուղիների պահպանությունը, հեղափոխական կարգերի պահպանությունը՝ հանրապետության ԿԳԿ-ի և Ժողկոմխորհի հատուկ հանձնարարությունների հիման վրա:

Հայաստանի ԿԳԿ-ի 1926 թ. սեպտեմբերի 8-ի որոշմամբ Պետական քաղաքական վարչությունն իրավունք ստացավ կիրառելու արտադատական ռեպրեսիաներ ընդիկուացիոն մինչև գնդակահարություն՝ հակահեղափոխական, մաքսանենգության, պաշտոնական հանցագործությունների վերաբերյալ գործերով<sup>3</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Էնձական ՀՀ Ակտ, նշանակված աշխատական մարմինների շահությունը՝ 1925 թ. մայիս ամիսը, էջ 261:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 262:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 262:

<sup>1</sup> Տե՛ս Էնձական ՀՀ Ակտ, նշանակված աշխատական մարմինների շահությունը՝ 1925 թ. մայիս ամիսը, էջ 261:

Այդ դրությունը մնաց անփոփոխ նաև 1934 թ. ներքին գործերի նախարարությունը վերականգնելուց հետո, որի կազմում ստեղծվեց պետական անվտանգության վարչությունը: Պետական քաղաքական վարչության դատական կոլեգիան վերացվեց, իսկ նրան ընդդատյա գործերը, բացի հակահեղափոխական բնույթի գործերից, հանձնվեցին ՀՍԽՀ Գերագույն դատարանի ընդդատությանը: Բայց դա չէր նշանակում, որ արտադատական մարմինները վերացվեցին: ՀՍԽՀ ներքին գործերի ժողկոմատին կից ստեղծվեց հասուլ խորհրդակցություն, որի կազմի մեջ մտնում էին ներքին գործերի ժողկոմիսարը (նախագահ), նրա տեղակալները և հանրապետության միլիցիայի կոմիսարը: Այդ խորհրդակցության նիստերին պարտադիր մասնակցում էր հանրապետության դատախազը կամ նրա տեղակալը: Խորհրդակցությունը քննում էր հակահեղափոխական բնույթի քրեական գործեր:

Հայաստանում 1936-37 թթ. ընթացքում քաղաքական և պետական հանցագործությունների մեղադրանքով ձերբակալվել էին 1138 մարդ<sup>1</sup>: 1936 թ. ընթացքում Գերագույն դատարանի հատուկ կոլեգիան քննության էր ընդունել 352 քրեական գործ 662 մարդու նկատմամբ: 1936 թ. ընթացքում դրանցից քննել էր 242 գործ՝ 374 մարդու նկատմամբ, նյուու գործերը փոխանցելով 1937 թ.<sup>2</sup>: 242 գործով 199 մարդ դատապարտվել էր «հակահեղափոխական ազիտացիայի, պրոպագանդայի, ազգայնական և տրոցկիստական արտահայտություններ տարածելու համար»: Հակահեղափոխական կազմակերպություններին և խմբերին մասնակցելու կամ պատկանելու համար դատապարտվել էր 54 մարդ:

§ 3. Խորհրդային իրավական նիկիլիզմը դատավարական  
ձևի նկատմամբ. իրավական վարույթը՝ որպես  
դասակարգային պայքարի ոլորտ

Բուրժուական իրավունքի ջարդի դրկտրինայից հեղափոխական օրինականության դրկտրինային անցնելով՝ 1923 թ. դատաիրավական բարենորդումնան ընթացքում մասամբ հաղթահարվեց իրավական նիկիլիզմը դատավարական ձևի նկատմամբ։ Սակայն ժամանակ առ ժամանակ ծավալվող տեսական վիճաբանությունների ընթացքում դասակարգային-մարքսիստական մոտեցումներն ընդհանրապես իրավունքի և, մասնավորապես, քրեադատավարական իրավունքի նկատմամբ իրենց զգացնել էին տալիս։ Օրինակ՝ քրեադատավարական իրավունքին վերագրվում էր միայն դասակարգային էություն։ «Խորհրդային քրեական դատավարությունը ևս դասակարգային դատավարություն է, քանի որ այդ դատավարությունը կազմող դատավարական հարաբերությունները կառուցվում են անցման շրջանի պայմաններին համապատասխան, սոցիալիստական շինարարությանը առավելագույն օժանդակության օգտին...»<sup>1</sup>։ Խորհրդային քրեական դատավարության էության այդպիսի բնորոշումից ելնելով՝ նրա առջև դրվում էր հետևյալ խնդիրը՝ ջախջախված, սակայն չոչնչացված դասակարգային թշնամիների դեմ պայքարը համարվում է արդարադատության մարմինների գլխավոր խնդիրը։ Դրան համապատասխան շատ զգալի է դատավարական ձևի դերը, որը ևս դասակարգային թշնամիների դեմ արագ և վճռական պայքարի միջոցները<sup>2</sup>։

1927 թ. Ն.Ն. Պոլյանսկին հրատարակեց իր «Քրեական դատավարության ընդիանուր տեսուրյան ակնարկներ» աշխատությունը, որում հեղինակը համուես էր գախս «ձևական դատավարական երաշխափների» ոլորդերից: Համաձայն այդ տեսուրյան՝

<sup>1</sup> Տե՛ս Հ.Յ.Ղաշիմակցությունը և խորհրդային իշխանությունը..., էջ 326:

<sup>2</sup> Տես Հ.Յ.Դաշնակցությունը և խորհրդային իշխանությունը..., էջ 329:

<sup>1</sup> Տե՛ս Ստրոգովիչ Մ.Ա., Քրեական դատավարություն, Եր., 1937, էջ 4:

<sup>2</sup> Sté u ūnijū unēnē, t̄q 34-36:

քրեական դատավարությունը չպետք է դիտարկվեր որպես պետության քրեական քաղաքականության իրականցան նպատակ: Ընդհակառակը, քրեական դատավարության խնդիրն է յուրաքանչյուր առանձին դեպքում լուծելու այն հարցը, թե պետությունն իրավունք ունի<sup>1</sup> արդյոք կիրառել պատիժ: Այլ խոսքով՝ քրեական դատավարության իրավունքը սահման, արգելք է պետության համար ընդդեմ կամայականության, այլ ոչ թե քրեական քաղաքականության իրականացման միջոց:

Քրեադատավարական իրավունքի էության նման ըմբռնումն արմատական ձևով հակասում էր դասակարգային բնորոշմանը, որի արտահայտողներից մեկը Մ.Ս. Ստրոգովիչն էր: «Պատահական չէր, որ Մ.Ս. Ստրոգովիչը Ն.Ն. Պոլյանսկու վերոնշյալ մոտեցումը որակեց որպես ազատական-բուրժուական և պնդում էր, որ պրոլետարական պետության պայմաններում այդ մոտեցումն օբյեկտիվորեն նշանակում է դատարանի՝ որպես պրոլետարիատի դիկտատորայի մարմնի գինաթափում, թուլացում: «Անկասկած քրեական դատավարությունը պարունակում է մի շարք երաշխիքներ քաղաքացիների համար, որպեսզի նրանց առանց հիմքերի դատի չտան և չդատապարտեն: Սակայն այդ տեսությունը քրեական դատավարության ողջ էությունը հանգեցնում է հենց դրան, առանձնացնում է դատավարությունը խորհրդային պետության քաղաքականությունից, դատարանը վերածում է անզգա, արտաքաղաքական արիտրի պետության և քաղաքացու միջև»<sup>1</sup>:

Այսպիսի տեսական դրույթներից ելնելով էլ կառուցվեց ամբողջ դատավարական համակարգը, որում դատավարական ձևը ևս դիտարկվում էր պրոլետարիատի դիկտատորայի շահերի դրսնորում ու արտահայտություն: Դատավարական ձևի նկատմամբ նման մոտեցումը տրամաբանորեն հանգեցնում էր քրեական դատավարության պարզեցման անհրաժեշտության, մի շարք դատավարական երաշխիքներից հրաժարման, ինչն էլ հեշտացնում էր դատական ռեվլեսիաների կիրառումը: Բնական է, որ

մրցակցային ժողովրդավարական դատավարության պայմաններում այն դժվարանում էր:

Այդպիսի տեսական նախադրյալները հանգեցնում էին նրան, որ, օրինակ, մրցակցության սկզբունքը ևս դիտարկվում էր դասակարգային տեսանկյունից՝ պայմանավորված հասարակության սոցիալ-քաղաքական կացությամբ: «Մրցակցության սկզբունքը չի կարելի և չպետք է վերածել պաշտամունքի: Դատավարական մրցակցության շրջանակները և կողմերի իրավունքների սահմանները քարացած չեն և չեն կարող արգելք հանդիսանալ հանցագործության դեմ պայքարի խնդիրների իրականացման գործում: Ահա թե ինչո՞ւ, ելնելով սոցիալ-քաղաքական շրջապատից, դասակարգային պայքարի ձևերից և սոցիալստական շինարարության պայմաններից, դրանք կարող են ինչպես ընդլայնվել, այնպես էլ նեղացվել»<sup>2</sup>: Մրցակցության բովանդակության այդպիսի մեկնարանությունը այդ սկզբունքը և ընդհանրապես դատավարական ձևը դնում էր դասակարգային պայքարի պահանջներից կախվածության մեջ: Նման հայեցակարգային մոտեցումը ընկալվում էր պարակտիվայի և օրենսդրի կողմից:

Դատավարական պարզունակացումն իր արտահայտությունը գտավ նաև ՀՍԽՀ քրեադատավարական օրենսդրության մեջ: Հայաստանի արդիողունատը մշակեց և 1929 թ. սեպտեմբերի 4-ին Հայաստանի ԿԳԿ-ի հաստատմանը ներկայացրեց օրինագիծ, որը դատարաններին իրավունք էր տալիս «ակնհայտ հանցագործությունների» դեպքում արգելել պաշտամի մասնակցությունը գործին, ինչպես նաև չբույլատել կողմերի վիճարանություն կամ սահմանափակել այն որոշակի ժամկետով<sup>2</sup>: Համաձայն այդ պահին գործող ՀՍԽՀ քրեական դատավարության օրենսդրի 218-րդ հոդվածի՝ գործը քննիչից կամ դատախազից ստանալով՝ գործով նախագահող դատավորը նշանակում էր դա-

<sup>1</sup> Տե՛ս նոյն տեղը, էջ 32:

<sup>2</sup> Տե՛ս ՀՍԽՀ օրենքների և կարգադրությունների ժողովածու, 1929, թիվ 10, բաժ. 1, հոդվ. 150:

<sup>1</sup> Տե՛ս նոյն տեղը, էջ 39-40:

տական նիստ, այդ մասին հայտնում էր գործին մասնակցող անձանց, իսկ ամբաստանյալին ուղարկում էր մեղադրական եզրակացության պատճենը, որը պետք է հանձնվեր նրան գործի լսման օրվանից երկու օր առաջ:

1929 թ. սեպտեմբերի 4-ի օրենքը դատարանին իրավունք էր տալիս ամբաստանյալի համաձայնությամբ գործը լսել մեղադրական եզրակացությունը նրան հանձնելուց հետո՝ երկօրյա ժամկետից ավելի շուտ, սահմանափակել կամ կրծատել վկաների հարցաքննությունը<sup>1</sup>: Այդ օրենքով վերացվեցին դատարանի տնօրինական նիստերը (նախապատրաստական նիստերը), ինչը նշանակում էր դատի տալու՝ որպես քրեական դատավարության առանձին փուլի վերացում: Դատի տալու գործառույթն այն գործերով, որոնցով անցկացվում էր նախաքննություն, հանձնվեց դատախազին: Նրա կողմից մեղադրական եզրակացության հաստատումը միաժամանակ համարվում էր մեղադրային դատի տալու ակտ: Այն գործերով, որոնցով նախաքննություն չէր անցկացվում, դատի տալն իրականացնում էր քննիչը: Քրեական դատավարության օրենսգրքի այս նորմերը պարզեցնում և արագացնում էին դատավարությունը, սակայն չէին երաշխավորում ճշմարտության բացահայտումը, քաղաքացիների իրավունքները: 1923 թ. քրեական դատավարության օրենսգրքը նախատեսում էր պարզեցված վարույթի այնպիսի ձևեր, ինչպես օրինակ՝ հեռակա վարույթը, գործերի լսումը ժողովրդավարական դատարանի հերթապահ կամերայում, գործի լուծումը դատական հրամանի կարգով, այսինքն՝ առանց դատական նիստում քննության:

1930-ական թթ. սկզբներին ԽՍՀՄ ԿԳԿ-ի և Ժողկոմխորի «Հեղափոխական օրինականության մասին» հասուկ որոշման ազդեցության տակ ինչ-որ չափով հաղթահարվեցին պարզունակ մոտեցումները դատավարական ձևի նկատմամբ և դատավարական երաշխիքների անտեսումը: Այդ որոշումը թելադրում էր հատուկ ուշադրություն դարձնել աշխատավորների գանգատների

լուծմանը, ընդգծում էր այդ ուղղությամբ դատարանի աշխատանքի նշանակությունը: Այն կտրականապես արգելում էր ժողովրդական դատավորներին պաշտոնից հանելը կամ տեղափոխելն այլ կերպ, քան մարզային (Երկրամասային) գործադիր կոմիտեների կողմից<sup>1</sup>: Հայաստանի պայմաններում այդ իրավունքը պատկանում էր միայն հանրապետության ԿԳԿ-ին: Դատախազը կարող էր ազատվել կամ տեղափոխվել այլ աշխատանքի միայն վերադարձ դատախազի կողմից:

Այդ որոշման ազդեցության տակ քրեական դատավարության տեսության մեջ վերանայվում էին նախկին զուտ դասակարգային մոտեցումները: Նոր պայմաններում նույն ինքը՝ Մ.Ս. Ստրոգովիչը, արդեն քրեադատավարական ձևը դիտարկում էր որպես «քննության մարմինների», դատարանի, դատախազության գործունեության մեջ սոցիալստական օրինականության իրականացման և անցկացման մեջոդ... Հենց դրանում է քրեադատավարական ձևի առաջին խնդիրը, առաջին նշանակությունը... Դատավարական ձևի խախտումները միշտ սպառնալիքի տակ են դնում գործը ճիշտ քննելը, ըստ էության լուծելը, միշտ բացասար են ազդում քննության և գործի լուծման էության վրա: Այդպիսով, դատավարական ձևի պահպանման համար պայքարը, պայքարը ընդդեմ դատավարական պարզունակացման միշտ պայքար է քննության և դատական աշխատանքի բարձր որակի համար: Հենց սա էլ դատավարական ձևի երկրորդ նշանակությունն է»<sup>2</sup>:

Այդպիսի տեսական մոտեցումը, սակայն, իհմք չէր խորհրդային դատավարական իրավունքի կայուն ժողովրդավարացման համար: Այսպես՝ 1934 թ. Կիրովի սպանության առիթով ԽՍՀՄ ԿԳԿ-ի 1934 թ. դեկտեմբերի 1-ի որոշմամբ, տեղորիխատական հանցագործությունների դեմ վճռական պայքարի նպատակով սահմանվեցին մեղադրայի իրավունքների մի շարք դատավարա-

<sup>1</sup> Տե՛ս ԱՀ ԱՀՆՆԾ, թիվ 50, հոդվ. 298:

<sup>2</sup> Տե՛ս Խօժանական Օճառական անուն 1940 թ., էջ 72-73:

կան սահմանափակումներ տեղորիստական կազմակերպությունների և տեղորիստական ակտերի վերաբերյալ գործերով<sup>1</sup>: Ի կատարումն այդ որոշման՝ 1934 թ. դեկտեմբերի 11-ին ՀՍԽՀ ԿԳԿ-ն և Ժողկոմխորհը ընդունեցին օրենք 1934 թ. քրեական դատավարության օրենսգրքի 115-րդ, 349-րդ, 367-րդ, 397-րդ հոդվածները ծանրություններով լրացնելու մասին<sup>2</sup>: Համաձայն այդ լրացումների՝ տեղորիստական կազմակերպությունների և տեղորիստական ակտերի վերաբերյալ գործերով քննությունը պետք է ավարտվեր 10 օրվա ընթացքում: Նախնական քննության սովորական ժամկետը երկու ամիսն էր: 1934 թ. քրեական դատավարության օրենսգրքի 349-րդ հոդվածի լրացումը (ծանրությունը) վատքարացնում էր ամբատանյալի վիճակը: 349-րդ հոդվածը սահմանում էր, որ ՀՍԽՀ Գերագույն դատարանին՝ որպես առաջին ատյանի, ընդդատյա գործերով պաշտպանության և մեղադրանքի կողմերի մասնակցությունը դատական նիստերին պարտադիր չէ, և յուրաքանչյուր անգամ գործով նախագահողը միանձնյա կերպով լուծում է այդ հարցը: 349-րդ հոդվ. ծանրությունը արգելում էր դատարանին տեղորիստական կազմակերպությունների և տեղորիստական ակտերի վերաբերյալ գործերով թույլատրել կողմերի մասնակցությունը:

359-րդ հոդվ. սահմանում էր սովորական կարգը, ըստ որի՝ մեղադրական եզրակացության պատճենները պետք է հանձնվեին մեղադրյալներից յուրաքանչյուրին գործը լսելուց 3 օր առաջ: Ծանրությունը սահմանում էր, որ տեղորիստական կազմակերպությունների և ակտերի վերաբերյալ գործերով մեղադրական եզրակացությունը մեղադրյալն հանձնվում է գործի դատական քննությունից մեկ օր առաջ:

367-րդ հոդվ. ծանրությունը սահմանում էր, որ այդ քնույթի գործերով դատավճիռները ենթակա չեն գանգատարկման վճա-

րեկության կարգով, ինչպես նաև արգելում էր այդ գործերով ներման միջնորդագրությունների ընդունումը:

397-րդ հոդվ. սահմանում էր դատավճոյի կատարման սովորական կարգը, ըստ որի՝ դրանք ի կատար էին ածվում անհապաղ՝ օրինական ուժի մեջ մտնելուց հետո: Այդ հոդվածի նոր՝ երկրորդ ծանրությունը սահմանում էր, որ տեղորիստական կազմակերպությունների և տեղորիստական ակտերի վերաբերյալ գործերով մահապատիժ սահմանած դատավճիռները ենթակա են անհապաղ կատարման:

Կարծում ենք՝ ահարեկչության դեմ պայքարի ուժեղացումը չպետք է բացառեր քրեական դատավարությունում անհատի պաշտպանության դատավարական երաշխիքները՝ որպես դատական սխալներ և քաղաքական կամայականություն թույլ չտալու միջոցներ:

#### **§ 4. Խորհրդային Հայաստանի 1937 թ. Սահմանադրության ընդունումը և ընդիանուր քնութագիրը**

Խորհրդային հասարակության կրած փոփոխությունները տնտեսական, քաղաքական, սոցիալ-դասակարգային, ազգային-պետական շինարարության ոլորտներում հիմք հանդիսացան հետագա սահմանադրական գարգացման համար:

1935 թ. փետրվարին ՀԿ(թ)Կ կենտրոնի պլենումը հանդես եկավ Սահմանադրության մեջ փոփոխություններ մտցնելու նախաձեռնությամբ: Դրանից հետո ԽՍՀ Միության խորհուրդների համագումարը ընդունեց համապատասխան որոշում և հանձնարարեց Կենտրոնական ստեղծել սահմանադրական հանձնաժողով՝ Ստալինի նախագահությամբ: 1936 թ. նոյեմբերին՝ համաժողովական քննարկումից հետո, Խորհրդների համամիութենական 8-րդ արտակարգ համագումարը քննարկեց և դեկտեմբերի 5-ին ընդունեց ԽՍՀՄ Սահմանադրությունը:

Դրանից հետո Հայաստանի հետագա իրավական գարգացումը ավելի սերտ կերպով է կապվում ԽՍՀ Միության նոր օրենսդրության ընդունման հետ: Ընդ որում, այդ գործընթացը

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ ՆՆՆԹ, 1934, թիվ 12, հոդվ. 124:

<sup>2</sup> Տե՛ս ՀՍԽՀ օրենքների և կարգադրությունների ժողովածու, 1934, թիվ 12, հոդվ. 124:

գնում էր հանրապետությունների օրենսդրական ակտերի, այդ թվում՝ սահմանադրությունների կառուցվածքի ու բովանդակության ավելի ու ավելի համընկնելու ուղղությամբ և հանգեցնում էր բոլոր հանրապետություններում գրեթե նույն տեքստով իրավական ակտերի ընդունմանը։ Այդ իսկ պատճառով ՀԽՍՀ հետագա օրենսդրական ակտերի հիմնական գծերը և առանձնահատկությունները լրիվ ածանցված էին ԽԽՍՀ ակտերից։

Միութենական մասշտարով սահմանադրական քարեփոխումը պայմանավորեց նաև ՀԽՍՀ-ում սահմանադրական քարենորդության իրականացումը։ 1937 թ. մարտի 23-ին ՀԽՍՀ խորհությունների 9-րդ արտակարգ համագումարը ընդունեց ՀԽՍՀ Սահմանադրությունը և որոշեց. «ԽԽՍՀ Սահմանադրության 13-րդ հոդվածին համապատասխան, որով նախատեսվում է Աղբբեջանի ԽԽՍՀ-ի, Վրաստանի ԽԽՍՀ-ի և ՀԽՍՀ-ի անմիջական մուտքը ԽԽՍՀ Միության մեջ, անհրաժեշտ համարել Անդրկովկասյան Սոցիալիստական Ֆեդերատիվ Սովետական Հանրապետության ու նրա դեկազար մարմնների վերացումը, որոնք կատարել էին իրենց պատճական դերը»<sup>1</sup>։

1937 թ. Սահմանադրությունը համարվում էր «հաղթանակած սոցիալիզմի» Սահմանադրություն, որն ազդարարում էր երկրի մուտքը զարգացման նոր էտապ, ամրագրում էր սոցիալիզմի հիմքերի կառուցումը, շահագործողական դասակարգերի և տարրերի լրիվ վերացումը և այդ հիմքով ընդլայնում էր «սոցիալիստական ժողովրդավարությունը»։ Այն ամրագրում էր սոցիալիստական հասարակության տնտեսական գլխավոր հիմքերը՝ մասնավոր սեփականության վերացումը, տնտեսության սոցիալիստական համակարգը և սոցիալիստական սեփականությունը, ժողովրդատնտեսական պետական պլանը, որպես պետության տնտեսական կյանքի ուղղորդիչ։

1937 թ. Սահմանադրությունը, ինչպես և նախկինը, պահպանում էր դասակարգային էությունը, մարմնավորում էր պրոլետա-

րիատի դիկտատուրան, ինչի մասին ուղղակիորեն նշվում էր ՀԽՍՀ Սահմանադրության 2-րդ հոդվածում. «ՀԽՍՀ քաղաքական հիմքն են կազմում աշխատավորների դեպուտատների խորհուրդները, որոնք աճել ու ամրապնդվել են կավածատերերի ու կապիտալիստների իշխանությունը տապալելու, հայ ժողովուրդը ցարիզմի ու ռուսական ինպերիալիստական բոլոժուազիայի ազգային ճնշումից ազատագրելու, դաշնակցական նացիոնալիստական հականեղափոխությունը ջախչախելու և պրոլետարիատի դիկտատուրան նվաճելու հետևանքով»։ Սակայն այդ էության արտահայտման ձևը փոխվել էր: Շահագործող դասակարգերի վերացման հետ կապված՝ վերացվել էր քաղաքացիներին քաղաքական իրավունքներից զրկումը ըստ սոցիալական հատկանիշի, մտցվել էր համընդիանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունք՝ գաղտնի քվեարկությամբ։

1937 թ. Սահմանադրության դասակարգային էության պահպանման մասին էր վկայում կոմունիստական կուսակցության դեկազար դերի ամրագրումը։ Առաջին անգամ Սահմանադրության մեջ մտցվում էր Կոմկուսի վերաբերյալ նորմը: ՀԽՍՀ 1937 թ. Սահմանադրության 101-րդ հոդվածը սահմանում էր, որ «քանիոր դասակարգի, աշխատավոր զյուղացիության, աշխատավոր ինտելիգենցիայի շարքերից առավել ակտիվ ու գիտակից քաղաքացիները կամավոր կերպով համախմբվում են համամիութենական կոմունիստական (մեծամասնական) կուսակցության մեջ, որն աշխատավորների առաջավոր ջոկատն է կոմունիստական հասարակարգի կառուցման համար նրանց մղած պայքարում և իրենից ներկայացնում է աշխատավորների ինչպես հասարակական, այնպես էլ պետական բոլոր կազմակերպությունների դեկազարման կորիզը»։ Այս սահմանադրական նորմն արտահայտում էր կուսակցությունը պետական կառույցի վերածելու աճող միտումը։

Առաջին անգամ 1937 թ. Սահմանադրության մեջ ներառվեց գլուխ քաղաքացիների իրավունքների ու պարտականությունների

<sup>1</sup> Տե՛ս Է՛ռ և օ՛ւ է՛ռ, 1937, 24 ։ ձեռագիր, N 68:

վերաբերյալ (գլուխ 8)<sup>1</sup>: «Դրանում ամրագրվում էին սոցիալ-տնտեսական իրավունքները, քաղաքական ու անձնական իրավունքներն ու ազատությունները, ինչպես նաև քաղաքացիների որոշ իրավունք-երաշխիքներ (մեղադրյալի պաշտպանության, դատարանում մայրենի լեզվով ելույթ ունենալու իրավունքները, դատարանում գործերի քննության դրսքացության սկզբունքը):

Սահմանադրությունն առաջին անգամ ամրագրում էր քաղաքացիների իրավահավասարության սկզբունքը, սակայն շատ սահմանափակ տեսքով: Այսպես, 98-րդ հոդվածը սահմանում էր քաղաքացիների իրավահավասարությունը միայն «անկախ նրանց ազգությունից ու ռասայից»: Հետևաբար, ընթացիկ օրենսդրությունն այլ իմքերով կարող էր սահմանել խտրական նորմեր:

Առաջընթաց էր Սահմանադրության 97-րդ հոդվածը, որը հատուկ ամրագրում էր կնոջ և տղամարդու իրավահավասարության սկզբունքը՝ տնտեսական, պետական, մշակութային և հասարակական-քաղաքական կյանքի բոլոր բնագավառներում՝ սահմանելով կանանց իրավահավասարության իրական ապահովման երաշխիքները<sup>2</sup>:

Ամրագրված սոցիալ-տնտեսական իրավունքներից էին աշխատանքի, հանգստի, ծերության ժամանակ, ինչպես նաև հիվանդության ու աշխատունակության կորստի դեպքում նյութական ապահովության, անձնական սեփականության և դրա ժա-

ռանգման իրավունքները: Բացի իրավունքներից՝ սոցիալ-տնտեսական ոլորտում սահմանվել էին նաև սահմանադրական պարտականություններ՝ աշխատանքի պարտականությունը, աշխատանքային կարգապահությունը պահպանելու պարտականությունը, սոցիալիստական սեփականությունը պահպանելու ու ամրապնդելու պարտականությունը:

Սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների սահմանադրական ամրագրման փաստը երբեմն ներկայացվում է խորհրդային նվաճում: Սակայն այդ իրավունքների սահմանադրական ամրագրումը 1930-ական թթ. դրությամբ նորություն չէր: «Դեռև XIX դ. վերջերից որոշ երկրների ներպետական իրավունքում ամրագրված էին նման իրավունքներ: XX դ.-ից սկսած դրանք ներաբափանցեցին նաև սահմանադրական իրավունք: Գործազրկության և անաշխատունակության դեպքում սոցիալական ապահովության, աշխատանքի իրավունքները, երեխաների աշխատանքի և կանանց գիշերային աշխատանքի արգելքներն ամրագրել էին Մեքսիկայի 1917 թ., Վայմարյան Հանրապետության 1919 թ., Ռումինիայի 1866 թ. (1923 թ. խմբագրությամբ), Չեխոսլովակիայի 1920 թ., Լեհաստանի 1921 թ., Սերբերի, Խորվաթների և սլովենների թագավորության 1921 թ., Իսպանիայի 1931 թ. Սահմանադրությունները<sup>1</sup>: Սոցիալ-տնտեսական իրավունքների հարցում խորհրդային սահմանադրություններն աշքի էին ընկնում դրանց իրականացման կոնկրետ երաշխիքների սահմանումով:

Քաղաքական ոլորտում ամրագրվել էին՝ խոսքի, մամուլի, ժողովների ու միտինգների, փողոցային երթերի ու ցույցերի ազատության իրավունքները, հասարակական կազմակերպությունների մեջ համախմբվելու իրավունքը, ընտրական իրավունքները, պատգամավորներին ետ կանչելու իրավունքը (հոդված 118)<sup>2</sup>:

<sup>1</sup> Տես **Глухарева Л.И.**, Права человека в современном мире (социально-философские основы и государственно-правовое регулирование). М., 2003, էջ 142:

<sup>2</sup> 1937 թ. Սահմանադրությունը սահմանում էր նաև քաղաքական պարտականություններ՝ պահպանել խորհրդային Սահմանադրությունները, կատարել օրենքները, ազնվորեն վերաբերվել հասարակական պարտքին, հարգել սոցիալիստական համակեցության կանոնները, ծառայել զինված ուժերի շարքերում և պաշտպանել հայրենիքը:

Սակայն քաղաքական իրավունքների օգտագործման հնարավորությունը երաշխավորվում էր միայն «աշխատավորների շահերին համապատասխան և սոցիալիստական կարգերն ամրապնդելու նպատակով» (հոդված 100): Սահմանադրական այդ սահմանափակման հիման վրա խոսքի ազատությունը սահմանափակված էր քրեական օրենսգրքով հակասովետական ազիտացիայի և պրոպագանդայի արգելմամբ, իսկ հասարակական կազմակերպությունների մեջ համախմբվելը ենթադրում էր անդամակցությունը միայն սոցիալիստական կազմակերպություններին: ԽՍՀՄ-ում այդ պահին արդեն հաստատվել էր միակուսակցական համակարգ, կոմկուսին տրվել սահմանադրական կարգավիճակ՝ որպես քաղաքական համակարգի կորիգի:

Անձնական իրավունքներից ու ազատություններից 1937 թ. Սահմանադրությունն ամրագրում էր անձի անձեռնմխելիությունը, բնակարանի անձեռնմխելիությունը, նամակագրության գաղտնիությունը, խղճի ազատությունը: Մշակութային ոլորտում առաջին անգամ ամրագրվեց կրթության իրավունքը (հոդված 96):

Սակայն «հաղթանակած սոցիալիզմի» Սահմանադրության հիմքում ընկած իրավական հայեցակարգը՝ խորհրդային սոցիոլգիական պողիտիվիզմը՝ ամրագրված մարդու իրավունքները վերածել էր ձևական, հոչակագրային իրավունքների (հատկապես անձնական, քաղաքական իրավունքները) դիտարկելով դրանք որպես պետության կողմից քաղաքացուն տրված շնորհ<sup>1</sup>:

ՀԽՍՀ 1937 թ. Սահմանադրությունն իր կառուցվածքով և հիմնական սկզբունքներով համապատասխանում էր ԽՍՀՄ Սահմանադրությանը և այդ տեսակետից շատ նման էր նյութ

<sup>1</sup> «Մարդու իրավունքները որպես շնորհ» գաղափարը նույնիսկ քարոզվում էր: Քաղաքական գրականությունը օգտագործում էր այնպիսի ձևակերպումներ, ինչպիսիք են՝ «իշխանությունն ապահովել է աշխարհում գոյություն չունեցող իրավունքներ», «սովետական պետությունը բոլոր քաղաքացիներին տալիս է իրավունքներ», «պետությունն իր հաշվին կատարում է սոցիալական ապահովագրություն, տալիս է կենսարշագիններ և նպատակներ», «պարտիայի և պետության հոգատարության շնորհիվ սովետական կինն իրավահավասար է տղամարդու հետ...» (տե՛ս Օգնություն քաղղաքոցների ունկնդիրներին, Եր., Հայպետհրատ., 1953, էջ 157-170):

միութենական հանրապետությունների սահմանադրություններին: Էական տարրերություն դրանց միջև չկար՝ բացի մեկ առանձնահատկությունից, որը վերաբերում էր պետական լեզվի մասին դրույթին: ԽՍՀՄ 1936 թ. Սահմանադրության 12-րդ գլուխը ուներ «Գերբը, Դրոշակը, Մայրաքաղաքը» վերտառությունը, իսկ ՀԽՍՀ 1937 թ. Սահմանադրության դրան համապատասխանող 10-րդ գլուխը ուներ «Պետական լեզուն, Գերբը, Դրոշակը և Մայրաքաղաքը» վերտառությունը: Այսպիսով՝ մեր Սահմանադրությունը պարունակում էր առանձին հոդված, որում ուղղակիորեն ամրագրված էր. «ՀԽՍՀ պետական լեզուն հայերենն է»: Այդպիսի հոդվածների ԽՍՀՄ կազմի մեջ մտնող միութենական հանրապետություններից պարունակում էին նաև Վրացական և Աղբեջանական հանրապետությունների սահմանադրությունները:

### § 5. Արդարադատության սահմանադրական համակարգի դեկլարատիվ բնույթը

Հակաժողովրդավարական միտումները արդարադատության ոլորտը կարգավորող օրենսդրության մեջ պայմանավորված էին արդարադատության մարմինների համակարգի, արդարադատության սկզբունքների և երաշխիքների ոչ պատշաճ սահմանադրավական կարգավորմամբ:

ԽՍՀՄ 1936 թ. Սահմանադրությունը ամրագրեց միայն դաշնային, միութենական և ինքնավար հանրապետությունների դատական համակարգերի, դատախազության կազմակերպման և գործունեության հիմունքները, ինչպես նաև արդարադատության որոշ սկզբունքներ:

Հայկական ՀԽՍՀ 1937 թ. Սահմանադրության ընդունմամբ հասարակական հարաբերությունների այդ ոլորտն առաջին անգամ ենթարկվեց սահմանադրական-իրավական կարգավորման, ելնելով ԽՍՀՄ Սահմանադրության դրույթներից: ՀԽՍՀ Սահմանադրությունը «Դատարանները և դատախազությունը» 7-րդ գլ-

խում վերարտադրում էր դատարանի և դատախազության կազմակերպման և գործունեության հիմունքները Հայկական ԽՍՀ-ի համար:

Համաձայն Սահմանադրության՝ արդարադատությունը իրականացնում էին ՀԽՍՀ Գերազույն դատարանը, ԽՍՀՄ Գերազույն խորհրդի որոշմամբ հիմնադրված ԽՍՀՄ հատուկ դատարանները, ժողովրդական դատարանները:

Սահմանադրությունը ամրագրում էր դատարանի կազմակերպման և գործունեության հետևյալ սկզբունքները՝ դատավորների ընտրովիրուն, բոլոր դատարաններում գործերի քննությունը ժողովրդական ատենակալների մասնակցությամբ, բացի օրենքով հատուկ սահմանված դեպքերից, բոլոր դատարաններում գործերի բաց քննություն՝ օրենքով նախատեսված բացառություններով հանդերձ, մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովումը, դատավորների անկախությունը և նրանց ենթարկվելը միայն օրենքին:

ՀԽՍՀ Սահմանադրության 86-րդ հոդվ. ամրագրում էր դատավարության ազգային լեզվի սկզբունքը. «Հայկական ԽՍՀ-ում դատավարությունը կատարվում է հայերեն լեզվով, իսկ բնակչության ոուսական կամ աղբեջանական մեծամասնություն ունեցող շրջաններում՝ համապատասխանորեն ոուսերեն կամ աղբեջաներեն լեզուներով, այդ լեզվին չտիրապետող անձերի համար ապահովելով լիակատար ծանոթացում գործի նյութերին բարգմանի միջոցով, ինչպես նաև դատարանում մայրենի լեզվով հանդես գալու իրավունք»:

Այս շրջանի սահմանադրական օրենսդրությունը չէր ամրագրում արդարադատության բոլոր ժողովրդավարական սկզբունքները՝ այդ հիմնախնդիրների լուծումը բողնելով ընթացիկ օրենսդրությանը: Արդեն հաստատված ամբողջատիրական իշխանության պայմաններում դա հանգեցրեց նրան, որ խորհրդային դա-

տարանները և դատավարությունը չփոխեցին իրենց էությունը, մնացին որպես դասակարգային պայքարի գործիք:

Քննարկվող ժամանակաշրջանի քրեադատավարական օրենսդրության մյուս բնութագրական գիծը նրա հակասահմանադրական ու դեկլարատիվ բնույթն էր: Զևականորեն իշխանությունները և պաշտոնական իրավագիտությունը քարոզում էին սահմանադրականություն և օրինականություն, սակայն Սահմանադրության շատ թե քիչ ժողովրդավարական դրույթները տարրալուծում էին ընթացիկ օրենսդրության մեջ, երբեմն նաև ձեռք էին բերում հակասահմանադրական բնույթ:

ԽՍՀՄ 1936 թ. Սահմանադրության դրույթները զարգացվեցին ԽԽՍՀ, միութենական, ինքնավար հանրապետությունների 1938 թ. օգոստոսի 16-ի դատարանակազմության մասին օրենքում: Այդ օրենքով սահմանվեցին արդարադատության հետևյալ հիմունքները՝ բոլոր քաղաքացիների համար, անկախ նրանց սոցիալական, գույքային և ծառայական դրույթունից, ազգային և ուսայական պատկանելությունից միասնական, հավասար դատարան (հոդվ. 5), բոլոր դատարանների համար միասնական և պարտադիր ԽԽՍՀ քրեական, քաղաքացիական և դատավարական օրենսդրություն<sup>1</sup>:

Չնայած համամիութենական օրենքը հոչակում էր «բոլոր քաղաքացիների համար միասնական և հավասար դատարան», այնուհանդերձ միութենական հանրապետություններում պահպանվում էին ԽԽՍՀ 1934 թ. դեկտեմբերի 1-ի վերոնշյալ օրենքի դրույթները: Ավելին, ԽԽՍՀ 1937 թ. սեպտեմբերի 14-ի օրենքով

<sup>1</sup> Համաձայն այդ դրույթի՝ ակնկալվում էր միասնական համամիութենական քրեական դատավարության օրենսգրքի ընդունումը: ԽԽՍՀ արդմողկոմատի համամիութենական իրավաբանական ինստիտուտում ստեղծվել էին ԽԽՍՀ քաղաքացիական և քրեական դատավարությունների օրենսգրքերի նախագծերի մշակման հանձնաժողովներ: Այդ նախագծերը մշակվեցին, սակայն պատերազմը և հետպատերազմական ժամանակաշրջանի իրավարձություններն ու պայմանները բույլ չտվեցին այդ աշխատանքը հասցնել ավարտին:

սահմանվեցին դատավարական սահմանափակումներ հակահեղափոխական վճարաբորությունների և դիվերսիաների վերաբերյալ գործերով:

Ի կատարումն այդ օրենքի՝ ՀԽՍՀ ԿԳԿ-ն և ժողկոմիստրիը 1937 թ. սեպտեմբերի 8-ին ընդունեցին որոշում ՀԽՍՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփխություններ կատարելու մասին: Համաձայն այդ օրենքի՝ քրեական դատավարության օրենսգրքի 359-րդ, 367-րդ հոդվածներին ավելացվում էին երկրորդ, իսկ 397-րդ հոդվածին՝ երրորդ ծանրություն-լրացումները<sup>1</sup>: Այդ ծանրություններով հակահեղափոխական վճարաբորության և դիվերսիայի վերաբերյալ գործերով մեղադրյալին մեղադրական եզրակացությունը հանձնելու ժամկետը կրճատվեց մինչև մեկ օր դատական քննությունից առաջ, և վերացվեց դրանցով կայացված դատավճիռների վճռաբեկ գանգատարկման իրավունքը (իտարբերություն 1934 թ. դեկտեմբերի 11-ի օրենքի՝ պահպանվեց դատարանում պաշտպանի և մեղադրողի մասնակցության իրավունքը, ինչպես նաև ներման միջնորդագիր ներկայացնելու իրավունքը): Հակահեղափոխական վճարաբորության և դիվերսիայի գործերով կայացված և մահապատիժներ սահմանած դատավճիռները պետք է ի կատար ածվեին անհապաղ՝ դատապարտյալների ներման միջնորդագրերի մերժման պահից:

ԽՍՀՄ դատարանակազմության մասին օրենքը սահմանում էր վճռաբեկ գանգատ և բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը՝ այդ իրավունքով օժտելով միայն դատավարության մասնակիցներին: Համաձայն այդ օրենքի 15-րդ հոդվածի՝ բացի ԽՍՀՄ Գերագույն դատարանից և միութենական հանրապետությունների գերագույն դատարաններից, մնացած բոլոր դատարանների դատավճիռներն ու որոշումները կարող էին օրեն-

քով սահմանված կարգով գանգատարկվել դատապարտյալների, նրանց պաշտպանների, հայցվորների, պատասխանողների և վերջիններիս շահերը պաշտպանող անձանց կողմից կամ կարող էին բողոքարկվել դատախազի կողմից: Սակայն 1938 թ. դատարանակազմության մասին օրենքով նեղացվեցին հսկողության կարգով գործերը վերանայող ատյանների, ինչպես նաև հսկողության կարգով բողոք բերելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակները. Հայկական ԽՍՀ-ում օրինական ուժի մեջ մտած դատավճիռներն ու որոշումները վերանայելու իրավունք ուներ միայն հանրապետության գերագույն դադարանը: Բողոքներ կարող էին բերել միայն ԽՍՀՄ դատախազը և ԽՍՀՄ Գերագույն դատարանի նախագահը, հանրապետության դատախազը և գերագույն դատարանի նախագահը:

<sup>1</sup> Տե՛ս ՀԽՍՀ օրենքների և կարգադրությունների ժողովածու, 1937, թիվ 10, հոդվ. 45:

§ 6. Існорієнтація її на розроблені та впроваджені нормативні документи та  
законодавчі акти України та іншої держави

Լենինյան պետական պահպանական ծներով Խորհրդային Սիությունում հաստատվեց անձնական իշխանության ստալինյան ռեժիմը: Սակայն Ստալինը, հղակելով իշխանության բազմակողմանի ամրապնդման կուրս, միաժամանակ եկավ այն եզրակացության, որ պահանջվում է ժողովրդավարականացնել այդ իշխանության տեսքը: Դրա անմիջական հետևանքը 1930-ական թթ. խորհրդային սահմանադրություններն էին: Դրանք ձևական-իրավական առումով շատ ժողովրդավարական բնույթ ունեին տվյալ ժամանակի համար: Խորհրդային պետության պատմության մեջ առաջին անգամ 30-ական թվականների սահմանադրությունների մեջ եր խոսվում քաղաքական և անձնական իրավունքների ու ազատությունների, սոցիալ-տնտեսական իրավունքների, դրանց երաշխիքների մասին: Սակայն այդ իրավունքների և ազատությունների ամրագրումը էական բարելավում չմտցրեց խորհրդային քաղաքցու իրավական կարգավիճակի մեջ: Քաղաքացին եղել և մնում էր իրավագործի:

1936 թ. մարտին Ստալինը, շարադրելով սոցիալիզմի օրոք ազատության իր ըմբռնումը, պնդում էր, որ սոցիալիզմը չի բացատում անձնական ազատությունը. «Այս հասարակությունը կառուցել ենք ոչ թե անձնական ազատությունը սահմանափակելու համար, այլ որպեսզի մարդկային անհատը իրեն զգա իրականում ազատ: Մենք այս կառուցել ենք իրական, անձնական ազատության համար, առանց չակերտների ազատության համար... Իսկական ազատությունը առկա է միայն այստեղ, որտեղ վերացված է շահագործումը, որտեղ չկա մարդկանց մի մասի կողմից մյուսին ճնշումը, որտեղ չկա գործազրկություն և աղքատություն, որտեղ մարդը չի վախենում, որ վաղը կարող է կորցնել աշխատանքը, բնակարանը, հացը: Միայն այդպիսի հասարակությունում է հնա-

լրավոր իսկական, այլ ոչ թե բղբային, անձնական և ամեն տեսակ ազատություն»<sup>1</sup>:

Այդպիսի մոտեցման համաձայն՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների մեջ առաջին տեղը գրադեցնում էին սոցիալ-տնտեսական իրավունքները՝ աշխատանքի, հանգստի, ծերության, հիվանդության և աշխատունակության կորստի դեպքում նյութական ապահովության, կրթության։ Այդ իրավունքների սահմանադրական երաշխիքները համակողմանի էին, սակայն հենց վում էին միայն պետական միջոցների վրա, բացառելով որևէ մասնավոր համակարգ (ապահովագրություն, դպրոց, աշխատանքի բորսա և այլն)։ Այսպես՝ Սահմանադրությունը կրթության իրավունքի ապահովման երաշխիքներ (96-րդ հոդվածի 3-րդ մասը) էր ճանաչում ընդիհանուր պարտադիր ուժամյա կրթությունը, միջնակարգ ընդիհանուր պոլիտեխնիկական կրթությունը, պրոֆեսիոնալ-տեխնիկական կրթությունը, միջնակարգ մասնագիտական և բարձրագույն կրթության լայն զարգացումը, «երեկոյան և հեռակա կրթության ամեն կերպ զարգացումը, ճրի կրթության բոլոր տեսակները, պետական բոշակների սիստեմը, դպրոցներում մայրենի լեզվի ուսուցումը», աշխատավորների՝ աշխատանքի վայրերում ճրի ուսուցման կազմակերպումը։ Իրականում 1940 թ. դրությամբ Հայաստանում անգրագիտությունը վերացվել էր։ Հանրապետությունում գործում էր 1218 դպրոց՝ 333 հազար աշակերտով և 11217 ուսուցիչ, 62 միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություն՝ 9000 ուսանողով, 9 քոհ 11120 ուսանողով<sup>2</sup>։

Ծակատագրի հեղմանքով 1930-ական թթ. սահմանադրական նորամուծությունները համընկան անմեղ մարդկանց նկատմամբ ռեպրեսիաների հետ: Մարդիկ առանց դատարանի և

<sup>1</sup> Stú Ááñäää ðí ááðëéùà Ñòëëèí à ñ í ðääñääðäéàí àí ááðëéàí ñéí áí áàçäöí áäí í ááñääéí áí éy “Ñéðëí ñ-Áí ááðä Í üþmí ïðòí áðñ” á-í í ñ Áí ááðäí í 1 í áðòá 1936ä. Í ., 1936, t9 18-19:

<sup>2</sup> Стру Советская Армения за 50 лет, № 275, 281, 285:

քննության գրկում էին ազատությունից, ուղարկվում համակենտրոնացման ճամբարներ, որտեղ նրանց աշխատանքն օգտագործվում էր «սոցիալիստական շինարարության» նպատակներով:

Շատերը գնդակահարվում էին կամ զոհվում աքսորում: 30-ական թվականների բռնությունները ոչ միայն պատեհապաշտական բնույթ ունեցող քաղաքական պայքարի ակտ էին, այլև ամբողջ խորհրդային իրավական համակարգի գործունեության սկզբունք: Ըստ Էռյան, այդ սկզբունքի հիմքը դրել էր Լենինը, իսկ Ստալինը կատարելագործեց այն՝ դարձնելով մշտական իրավական գործունեության համար քաշեց «ժողովրդի թշնամիների» և «դասակարգային պայքարի սրման» հայեցակարգերը, որոնք կազմում էին զանգվածային բռնությունների քաղաքական, իրավաբանական հիմքը: Այդ հայեցակարգի կենսագործումը պետք է հանգեցներ այլախոհների ֆիզիկական վերացմանը, երկրում ստեղծեր վախի հոգեբանական մթնոլորտ՝ ժողովրդին հնագանդ դարձնելու նպատակով: «Քննությունը, հարկադրանքը, ունարեսիաները, որոնք կատարում էր խորհրդային կառավարությունը որպես ներքին քաղաքականության մերող, կուսակցական դիկտատորայի իշխանության արմատավորումը ուղեկցվում էր զանգվածային մահապատիժներով»<sup>1</sup>: Մահվան դատապարտածների մեծ մասը հետագայում արդարացվեց:

Դրան նպատում էր նաև սահմանադրական կարգավորման համակարգը, որը անհատի քաղաքական և անձնական իրավունքները կարգավորում էր շատ բռուցիկ: Այսպես, խոսքի, մամուլի, ժողովների և միտինգների, փողոցային երթերի ու ցույցերի ազատությունները միայն հոչակվում էին, միաժամանակ սահմանված էր սահմանադրական սահմանափակում. այդ ազատություններ կարող էին օգտագործվել միայն «աշխատավորների շահերին համապատասխան և սոցիալիստական կարգերն ամրապնդելով»: Քրեական օրենսդրության մեջ «հակա-

հեղափոխական ազխոացիայի և պրոպագանդայի» ու «հանցավոր ընկերակցությունների» դեմ պայքարի հողվածների ընդգրկումը վերացրեցին խոսքի, մամուլի, ժողովների, շքերթների ու հանրահավաքների ազատությունը:

Իրավական համակարգում իրավական պատասխանատվության կիրառման հարցում նկատվում էր անցում անձնական պատասխանատվության սկզբունքից համապարտ պատասխանատվության: Ուսպեսիվ միջոցները՝ ազատագրկումը, աքսորը, արտաքսումը և այլն կիրառում էին «կուլակների», «ժողովրդի թշնամիների» և նրանց ընտանիքի անդամների նկատմամբ, ովքեր իրավախսանություն չեն կատարել: Քրեական իրավունքում կոպտորեն խախտվում էր օրինականության սկզբունքը: Քրեական օրենսդրերը հնարավոր էին համարում անալոգիայի կիրառումը, քրեական պատասխանատվության կիրառումն անձանց նկատմամբ, որոնք չեն կատարել կոնկրետ հանցագործություն, սակայն «վտանգավոր էին հանցավոր միջավայրի հետ իրենց կապերով»:

Անձնական ազատության ճնշումը հիմնվում էր օրենքների վրա, այսինքն՝ կրում էր կազմակերպված բնույթ: Սահմանադրությունն անձնական իրավունքներից բռուցիկ բռվանդակությամբ ամրագրում էր միայն անձի անձեռնմխելիությունը, բնակարանի անձեռնմխելիությունը, նամակագրության գաղտնիությունը, որպես դրանց ապահովման երաշխիք՝ ճանաչում էր «օրենքով պահպանվածությունը»: Խորհրդային լեգիզմի պայմաններում օրենքը չէր կարող դառնալ հիմնական իրավունքների երաշխիք, քանի որ այն քաղաքականության և կառավարման գործիք էր: Անձնական անձեռնմխելիության իրավունքի երաշխիք էր համարվում միայն դատախազի սանցիան կամ դատարանի որոշումը: Իսկ դատախազությունը և դատարանը խորհրդային շքանում լրիվ քաղաքականացված մարմիններ էին<sup>1</sup>:

«Առաջին անգամ քաղաքացիների իրավունքների և պար-

<sup>1</sup> Ст. Глызкова С.И., Права человека в России. М., 2006, т. 226:

<sup>1</sup> Այդ մասին տես Ղազինյան Գ.Ս., նշված աշխ., էջ 67, 95-96, 100:

տականությունների վերաբերյալ գլուխ հայտնվեց ԽՍՀՄ Սահմանադրության մեջ՝ պատրաստված Ն.Ի. Բոլխարինի կողմից՝ Եվրոպական և ամերիկյան սահմանադրական իրավունքի նորագույն նվաճումների հաշվառմամբ ... տեսական առումով դա խորհրդային իրավունքի էական նվաճումն էր, իսկ գործնականում՝ ձևականություն՝ ստեղծված բացառապես զաղափարական, քարոզական նպատակներով, որպեսզի ապացուցի խորհրդային կարգերի առավելությունը սոցիալստական և կապիտալիստական կարգերի հակամարտության պայմաններում»<sup>1</sup>:

Սահմանադրության և ընթացիկ օրենսդրության միջև կար էական խզում: Քաղաքական նպատակահարմարությունից ելնելով՝ «իրավախախտ» օրենսդրության ընդունումը դարձել էր օրինաչափություն: Վարչական կարգով քրեական պատասխանատվության՝ արտաքսման ենթարկվեցին Դրիմի բարարները, չեշենները, ինգուշները և այլն<sup>2</sup>: Այդ տարիներին միայն Հայաստանից արտաքսվել է 10000 մարդ<sup>3</sup>:

Միլիոնավոր գյուղացիներ վերացվեցին կամ աքսորվեցին կուլեկտիվացման ընթացքում «կուլակության դեմ պայքարի» անվան տակ<sup>4</sup>: Զանգվածային կերպով խախտվում էր ազատ տեղաշարժվելու և բնակության վայր ընտրելու իրավունքը: Կատարվեց բնակչության համընդհանուր անձագրանցում: Սակայն գյուղացիներին անձնագրեր չտվեցին, ինչի հետևանքով գյուղացիներին արգելվում էր ազատ փոխել բնակության վայրը: Խորհրդային խոշոր քաղաքներում մտցվեց գրանցման համակարգ, ինչը

զրկում էր մարդկանց սեփական ընտրությամբ բնակության վայրը որոշելու հնարավորությունից: Արգելվեց օտարերկրյա քաղաքացիների հետ ամուսնությունը և երկրից ազատ ելքը: Այս ամենը հիմք է տալիս պնդելու, որ խորհրդային սահմանադրությունները մեծամասամբ հոչակագրային, չգործող հիմնական օրենքներ էին:

### § 7. Դաշնային իրավական համակարգի միասնականացումը 1940-50-ական թթ.

1936 թ. ԽՍՀՄ Սահմանադրությունը, անտեսելով հանրապետությունների ինքնիշխան իրավունքները, նրանց զրկեց սեփական օրենսդրություն սահմանելու իրավունքից: Նախապատերազմական և պատերազմական տարիներին օրենսդրությունը գարգանում էր միայն համամիութենական նորմատիվ ակտերի ընդունման ճանապարհով, որոնք կամ առանց փոփոխության ընդգրկվում էին միութենական հանրապետությունների ճյուղային օրենսգրքերում, կամ գործում էին որպես համամիութենական օրենքներ: Այսպես, ԽՍՀՄ Գերազույն խորհրդի նախագահության 1940 թ. օգոստոսի 10-ի հրամանագիրը սահմանում էր, որ առանց հարգելի պատճառների աշխատանքից բացակայելու և ձեռնարկություններից ու իհմնարկություններից ինքնազրուխ կերպով հեռանալու վերաբերյալ գործերը ժողովրդական դատավորները բնուում են միանձնյա:

ԽՍՀՄ Գերազույն խորհրդի նախագահության 1940 թ. օգոստոսի 10-ի հրամանագիրը սահմանում էր նաև խուլգանության վերաբերյալ գործերի քննության պարզեցված կարգ: Համաձայն այդ օրենսդրական ակտի՝ ձեռնարկություններում, հիմնարկություններում, հասարակական վայրերում խուլգանություն կատարած և տեղում ձերբակալված անձանց գործերը միիցիայի մարմիններն անմիջականորեն ուղարկում էին ժողովրդական դատարան: Նախնական քննություն այդ քնույթի գործերով կատարվում

<sup>1</sup> Տե՛ս Գլուշկովա Ս.Ի., նշված աշխ., էջ 225:

<sup>2</sup> Տե՛ս Կոմентарий к Уголовному кодексу РФ. / Под ред. А.В. Наумова. М., 1996, էջ 44:

<sup>3</sup> Տե՛ս Բուգայ Н.Ф., Государственная политика в сфере национальных отношений в условиях социалистического эксперимента // Россия XX в.: проблемы национальных отношений. М., 1999, էջ 311:

<sup>4</sup> Մարդու իրավունքների իրեշավոր խախտումների մասին, որոնք տեղի են ունեցել ԽՍՀՄ-ում ստալինյան տարիներին, մանրամասն տե՛ս Գլուշկովա Ս.Ի., նշված աշխ., էջ 238-265, Կորиցին Վ.М., История государства и права России 1929-1940 гг., М., 1998, էջ 94-133:

Էր միայն այս դեպքերում, եթե դա համարվում էր անհրաժեշտ: Այդ գործերի համար սահմանվում էր քննության երկօրյա ժամկետ: Դատավճիռն ի կատար էր ածվում անմիջապես:

Իրավական համակարգի միասնականացման միտումից բացի՝ առաջ եկավ նաև օրենքների գերակայության անտեսման և օրենսդրական կարգավորումը ենթաօրենսդրական կարգավորմամբ փոխարինելու միտումը: Ընդ որում, դրանում նորից նկատվում էր հակասահմանադրականությունը: Օրինակ՝ այս շրջանի ուղղիչ-աշխատանքային քաղաքականության ոլորտում, չնայած խորհրդային սահմանադրությունների դրույթներին, ազատազրկման վայրերի համակարգը օրենսդրական կարգավորումից անցում կատարեց ենթաօրենսդրական գերատեսչական կարգավորմանը: Չատ հաճախ ենթաօրենսդրական այդ ակտերը գաղտնի էին: Փաստորեն հանրապետությունների ուղղիչ-աշխատանքային օրենսդրերն անտեսվեցին և մատնվեցին մոռացության<sup>1</sup>: Ներքին գործերի ժողովադատի համակարգը գործում էր ամենաքռողության պայմաններում: Այս մարմինն իր ակտերով վերացնում էր ոչ միայն միութենական հանրապետությունների օրենքները, այլև դաշնային օրենքները: Այսպես՝ այդ ժողովադատի 1939 թ. հունիսի 15-ի հրամանով վերացվեց ազատազրկման վայրերից պայմանական վաղաժամկետ ազատելու՝ օրենքով սահմանված կարգը<sup>2</sup>:

Հակասահմանադրական գործելակերպի մեկ այլ դրսեւորումը 1940 թ. հունիսի 26-ի ԽՍՀՄ Գերազույն խորհրդի հրամանագիրն էր, որով հակառակ Սահմանադրության՝ յոթ ժամյա աշխատանքից անցում կատարվեց ութ ժամյա աշխատանքային օրվա, իսկ աշխատանքային շաբաթի տևողությունը հասցվեց յոթ օրվա: Այդ հրամանագրով արգելվեց աշխատողների հնարինուրույն անզումը

<sup>2</sup> Skú Gíslu umh. f. 168:

մեկ աշխատավայրից մյուսը, ինչը աշխատողին զրկեց մասնագիտության և աշխատանքի ազատ ընտրության իրավունքից<sup>1</sup>: Սահմանադրության ձևականության հիմնական պատճառներից մեկն իրավական համակարգի հիմքում ընկած իրավահասկացությունն էր, որն իրավունքը նույնացնում էր օրենքի և օրենսդրության հետ: Այդպիսի իրավական հայեցակարգը ջնջում էր նաև Սահմանադրության բարձրագույն ուժը և կարգավորիչ նշանակությունը, որովհետև սահմանադրական ռեժիմն ուղղակիորեն կապում էր իրականացվող պետական-քաղաքական ռեժիմի հետ: Ստացվում էր, որ նույն սահմանադրության պայմաններում կարող էր իրականացվել լրիվ տարրերվող իրավական քաղաքականություն՝ սկսած բռնատիրությունից մինչև խորհրդավայրական հալոց:

1941-45 թթ. ղճացքում իրավական համակարգը կրեց փոփոխություններ, որոնք բխում էին պատերազմական ժամանակի պայմաններից: Մեծ հայրենականի տարիներին ՀԽՍՀ-ում գործում էին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1941 թ. հունիսի 22-ի «Ռազմական դրույթյան մասին», «Պատերազմական դրույթյան մեջ հայտարարված վայրերում և ռազմական գործողությունների շրջաններում ռազմական տրիբունալների կանոնադրության հաստատման մասին»<sup>2</sup> և 1943 թ. ապրիլի 15-ի «Բոլոր երկարագծերում ռազմական դրույթյուն մտցնելու մասին»<sup>3</sup> հրամանագրերը և բազմաթիվ այլ ակտեր:

«Ուազմական դրության մասին» հրամանագիրը նշանակալիորեն ընդունեց զինվորական տրիբունալների ընդդատությունը: Ժողովրդական դատարանների և հանրապետության Գերազույն դատարանի ընդդատությունից հանվեցին և զինվորական տրիբունալների քննությանը հանձնվեցին պետական հանցագործությունների վերաբերյալ գործերը, զինծառալողների կատարած

<sup>1</sup> Сіу Глущкова С.И., 62-річна жінка, № 226

<sup>2</sup> Ст. Ведомости Верховного Совета СССР, 1941, № 29.

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը, 1943, թիվ 15:

հանցանքների, ավազակության, դիտավորյալ սպանությունների, կալանավայրերից և ազատազրկման վայրերից բռնի կերպով ազատվելու, համընդհանուր զինվորական պարտավորության մասին օրենքի կատարումից խուսափելու, իշխանության ներկայացուցիչներին դիմադրելու, ապօրինի գենք կրելու, վաճառելու և պահելու վերաբերյալ քրեական գործերը: Զինվորական իշխանություններին իրավունք էր տրվում զինվորական տրիբունալների քննությանը հանձնել նաև սպեկուլյացիայի, չարամիտ խուսափանության և այլ հանցագործությունների վերաբերյալ գործերը, եթե իրամանատարությունը, ուղղական ժամանակների հանգամանքներից ելնելով, դա կհամարել անհրաժեշտ:

Պատերազմի տարիներին Հայկական ԽՍՀ-ում ստեղծվեցին Կարմիր բանակի, ներքին գործերի ժողկոմատի գորքերի և երկարգծի զինվորական տրիբունալներ: Դատավարությունը զինվորական տրիբունալներում աչքի էր ընկնում իր առանձնահատկություններով: Զինվորական տրիբունալները ուղղական դրույթան մեջ հայտարարված տարածքներում գործերը քննում էին առանց ժողովրդական ատենակալների մասնակցության՝ դատարանի երեք մշտական անդամների կազմով: Զինվորական տրիբունալն իրավունք ուներ մեղադրյալին մեղադրական եզրակացությունը հանձնելու 24 ժամ հետո սկսել գործի լսումը: Զինվորական տրիբունալների դատավճիռները վճռաբեկ գանգատարկման ենթակա չեն և կարող էին վերացվել կամ փոխվել միայն դատական հսկողության կարգով:

Պատերազմից հետո վերականգնվեց խաղաղ ժամանակի օրենքների գործողությունը: Սակայն հետպատերազմյան տարիներին ևս տեղի էին ունենում օրինականության խախտումներ, հատկապես՝ քաղաքական աստաղ ունեցող քրեական գործերով:

## ԳԼՈՒԽ 12. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՍՏԱԿՐԴԸ 1953-1990 թթ.

### § 1. Խորհրդային հասարակության քաղաքական-իրավական վարչածկի ազատականացումը 1953-64 թթ.

1953 թ. Ստալինի մահից հետո իրադրությունը ԽՍՀՄ-ում աստիճանաբար փոխվում էր: Տեղի էր ունենում քաղաքականության ազատականացում: Վրա հասան այսպես կոչված «իսրուշովյան հալոցքի» տարիները: 1956 թ. փետրվարին ԽՄԿ Խ համագումարի փակ նիստում Ն.Ս. Խրուչչովը կարդաց զեկուցում Ստալինի անձի պաշտանմունքի մերկացման մասին, որում բացահայտորեն իրապարակվեցին զանգվածային բռնությունների և օրինականության խախտումների փատերը:

Հասարակական-քաղաքական կյանքի ժողովրդավարականացման կուրսն իր համապատասխան շարունակությունն ստացավ իրավական ոլորտում՝ իրավահասկացության հարցում, դատաիրավական բարեփոխումներում, քաղաքական բռնությունների գոհերի արդարացմամբ:

Իրավունքի պողիտիվ-նորմատիվիստական բնորոշումը՝ տրված 1938 թ. խորհրդակցությունում և դրան համապատասխանող իրավահասկացությունը, ըստ Էության, հետագա բոլոր տարիներին ամբողջ խորհրդային իրավագիտության համար դարձավ պաշտոնական, համապարտադիր դիրքորոշում: Իրավունքի նույնացումն ամբողջատիրական օրենսդրության հետ, ոչ քննադատական, գովարանական պողիտիվիզմը բացառում էին օրենքի իրավական արժեորման, իրավունքի և օրենքի տարբերակման և համադրման, իրավունքի և իրավախսատող օրենսդրության հակադրման բուն հնարավորությունը<sup>1</sup>:

ԽՄԿ Խ համագումարից հետո հնարավոր դարձան տե-

<sup>1</sup> Տե՛ս Էնդ՛օ Շահումյան գոհերի աշխատանքները և անդամությունները 1998 թ., էջ 656:

սական վիճաբանություններն իրավունքի հասկացության և քննության հիմնախնդիրների շուրջ: Այնուամենայնիվ, իրավունքի նախկին հասկացությունը, քննորոշումը և մեկնաբանումը ըստ էության պահպանվեցին նաև հետագա տարիներին, նույնիսկ եթե 60-ական թթ. սկզբներից սոցիալիստական համաժողովրդական պետության օրինակով սկսեցին խոսել սոցիալիստական համաժողովրդական իրավունքի մասին:

1962 թ. ԽՍԿԿ ԽII համագումարում արձանագրվեց, որ ժամանակակից պայմաններում, երբ սոցիալիզմը հաղթել է «ոչ միայն լրիվ, այլև վերջնականապես», երբ խորհրդային հասարակությունը թևակոխել է կոմունիզմի շինարարության փուլ, ԽՍՀՄ-ում պրոլետարիատի դիկտատորան ներքին զարգացման տեսակետից անհրաժեշտություն չէ: Սոցիալիստական պետությունը, որ ծագել է որպես պրոլետարիատի դիկտատորայի պետություն, արդի պայմաններում, ասկում էր համագումարի որոշման մեջ, վերածվել է համաժողովրդական պետության: «Սակայն պրոլետարիատի դիկտատորայի պետությունից և իրավունքից համաժողովրդական պետության և իրավունքի անցնելու վերաբերյալ դրույքը, ըստ Էռիքյան, կրում էր դեկլարատիվ և քարոզական քննությունը, քանի որ երկրի քաղաքական վարչաձևում, օրենսդրության մեջ, տնտեսական, հոգևոր կյանքում կատարված որոշ փոփոխությունները և «Ստալինի անձի պաշտամունքի հետևանքների հաղթահարման» միջոցառումներն աճրողությամբ իրականում չշոշափեցին հասարակության սոցիալիստական և տնտեսական քննութագիրը, պրոլետարիատի դիկտատորայի հիմնարար սկզբունքները, գործառույթները և կառույցները, ինչպես նաև նրա հարկադրահրամայական կարգավորիչ համակարգը:

Համաժողովրդական պետության և իրավունքի դեկլարատիվ անցման պայմաններում ևս խորհրդային իրավագիտության մեջ, քիչ բազառություններով հանդերձ, շարունակում էին գերիշխել

բառացիորեն թերևնակի արդիականացված, սակայն ըստ Էության, նախկին պատկերացումները ընդհանրապես իրավունքի մասին և մասնավորապես սոցիալիստական խորհրդային իրավունքի մասին՝ որպես վարքագծի կանոնների (նորմերի) համակցություն (կամ համակարգ) սահմանված պետության կողմից և ապահովված նրա հարկադրանքով»<sup>1</sup>:

Այդպիսի մոտեցման հետևանքն այն փաստն էր, որ 50-ական թթ. վերջերի իրավական բարեփոխումները կրում էին կիսատ ու անհետառղական բնույթը: Հակասական բնույթը ուներ նաև քաղաքական ահարեկչության գոհերի արդարացման գործընթացը, որն սկսվեց իրավապահպան մարմնների գործունեության մեջ օրինականության վերականգնման համատեքստում, 1953 թ. սեպտեմբերին ԽՍՀՄ ՆԳ մինիստրությանը կից «հատուկ խորհրդակցության» վերացման մասին որոշման ընդունմամբ:<sup>2</sup> ԽՍՀՄ Գերագույն դատարանն իրավունք ստացավ վերանայելու այդ արտադատական մարմնի կողմից 30-40-ական թթ. և 50-ական թթ. սկզբներին կայացրած դատավճիռները՝ ԽՍՀՄ գլխավոր դատախազի բողոքների հիման վրա:

Սիամամանակ աշխատանքներ իրականացվեցին այն ան-  
ձանց բացահայտելու ուղղությամբ, ովքեր մեղավոր էին կամայա-  
կանության ակտերում, քաղաքացիների ապօրինի հետապնդում-  
ներում և նրանց նկատմամբ գործեր կեղծելու մեջ։ Ստալինյան ա-  
պօրինությունների և կամայականությունների զոհերի արդարա-  
ցումը դարձավ դատական մարմինների գործունեության հիմնա-  
կան ուղղություններից մեկը։ 1954-1966 թթ. արդարացվեց ավելի  
քան 700 հազար մարդ, շատերը՝ հետմահու։<sup>3</sup> Սակայն 30-40-ա-  
կան թթ. և 50-ական թթ. սկզբների բռնությունների հետևանքների

<sup>2</sup> ζωτική βασικότερη σημασία έχει το παραπάνω απότομο διάταξης γεγονότος στην ιστορία της Ελλάδας, μεταξύ των οποίων η θεωρείται ότι ήταν η πρώτη σημαντική προσπάθεια για την επανάσταση της Ελλάδας.

<sup>3</sup> Shū 1 ói+àââ 1 .1 , Ôndéíâ Á.1 ., նշված աշխ., էջ 677:

լիկ վերացումը չիրականացվեց գլխավորապես քաղաքական պատճառներով<sup>1</sup>: Արդարացնան գործընթացը ևս հակասական էր, քանի որ սկզբնական շրջանում արդարացումը, որպես կանոն, հանգեցվում էր ապօրինի որոշումների վերացնանը և «զործերի» կարձման: Վերականգնվում էր բռնադատվածների բարի անունը, իսկ գույքային, աշխատանքային, բնակարանային և այլ իրավունքները՝ ոչ: Ավելի ուշ (1955-56 թթ.) առաջ եկան ակտեր, որոնք բույլ էին տալիս վերականգնել նաև այդ իրավունքները, բայց ոչ լիկ ծավալով:

Այսպիսով, 1956-64 թթ. միջև ընկած շրջանը խորհրդային հասարակության քաղաքական վարչաձևի ազատականացման շրջանն է: Այդ ազատականացումը պայմանավորված էր ԽՍՀԿ ՀՀ համագումարում առաջ քաշված «կուսակցական և պետական կյանքի լենինյան նորմերի վերականգնման» քաղաքականությամբ, որի համատեքստում ներադրվում էր ներքաղաքական կյանքի բոլոր ոլորտների ժողովրդավարացում և ընդհանուր օրենսդրական ու դատաիրավական բարենորդուման անցկացում:

Իրավունքի համար այդ շրջանը նշանավորվեց անցյալի հակաժողովրդավարական շատ ինստիտուտների վերացմամբ: Սակայն ժողովրդավարակական վերափոխումների կիսատ-պոտությունը և անհետնողականությունը չհանգեցրին լիկ ժողովրդավարական իրավական համակարգի հիմնադրմանը:

1950-ական թթ. վերջերի բարեփոխումների անհետնողականության վառ ապացույցը արդարադատության իրականացումը միայն դատարանի միջոցով սկզբունքի հոչակումը և դրա կիսատ-պոտատ կենսագործումն էր: Խորհրդային ընթացիկ օրենսդրությունը նախատեսում էր գործերի արտադատական լուծման մի շարք ձևեր: Օրինակ՝ խորհրդային քաղաքացիությունից զրկելը, առանց ինչ-որ մեղադրանքի առաջադրման և դատական քննության

ԽՍՀՄ սահմաններից բոնի արտաքսելը, արտադատական մարմնի որոշման հիման վրա, այսպես կոչված, հանրութեն օգտակար աշխատանքից խուսափող և հակահասարակական, պարագիտ կյանքով ապրող անձանց վարչական արտաքսումը<sup>1</sup>, անշափահասների նկատմամբ հարկադրամբ միջոցների կիրառումը անշափահասների գործերով հանձնաժողովների միջոցով<sup>2</sup> և այլն:

## § 2. Խորհրդային ընթացիկ օրենսդրության կիսարքեփոխումները «խրուշչյան հալոցքի» տարիներին

Իրավական բարենորդումները բավի առան 1957 թ. փետրվարի 11-ի «Սիութենական հանրապետության դատարանակազմության մասին օրենսդրությունը», քաղաքացիական, քրեական և դատավարական օրենսգրքերի ընդունումը միութենական հանրապետությունների իրավասությանը վերապահելու մասին» ԽՍՀՄ օրենքի ընդունումից հետո:<sup>3</sup> Այդ օրենքը փոխեց ԽՍՀՄ Սահմանադրությունը և մասամբ վերականգնեց միութենական հանրապետությունների ինքնիշխան իրավունքները՝ ԽՍՀՄ Միության իրավասությանը թողնելով միայն դատարանակազմության և դատավարության օրենսդրության հիմունքների, ինչպես նաև քրեական ու քաղաքացիական օրենսդրության հիմունքների ընդունումը:

Օրենսդրության նշանական դրուտներում համամիութենական և հանրապետական իրավասության նման սահմանագաստումը պայմանավորեց համամիութենական և հանրապետական օրենսդրության մեջ հետևյալ հարաբերակցությունը: ԽՍՀՄ օրենսդրությունը կազմված էր համամիութենական հիմունքներից, որոնք ամրագրում էին բոլոր միութենական հանրապետություն-

<sup>1</sup> Այդ ակտերն իրենց ուժը կորցրին միայն 1990 թ. (տե՛ս Ահանջողության 1990 թ. ակտերը՝ ԱՆ ՆՆԴ 1990, թիվ 23, հոդվ. 418, 1990, թիվ 39, հոդվ. 773, 1990, թիվ 47, հոդվ. 1004):

<sup>2</sup> Տե՛ս Լ Եօվանես Է. Ահանջողության ակտերը՝ ԱՆ ՆՆԴ 1989, 26 հունիսի:

<sup>3</sup> Տե՛ս Ահանջողության ակտերը՝ ԱՆ ՆՆԴ 1957, թիվ 4, հոդվ. 63:

<sup>1</sup> Տե՛ս Ահանջողության ակտերը՝ ԱՆ ՆՆԴ 1989, 26 հունիսի:

Աերի համար պարտադիր իրավունքի համապատասխան ճյուղի սկզբունքային դրույթները, ինչպես նաև այդ հիմունքներին համապատասխանող առանձին օրենսդրական ակտերից, որոնք պահպում էին համապետական, առանձին հանրապետությունների միջև շրաժանված հասարակական հարաբերությունների կարգավորումը:

Միութենական հանրապետությունների օրենսդրությունը կազմված էր համամիութենական հիմունքներին լրիվ համապատասխան կառուցված օրենսգրքերից, որոնք հաշվի էին առնում համապատասխան հանրապետության հատուկ պայմանները, ինչպես նաև միութենական հանրապետության իրավասության մեջ մտնող հասարակական հարաբերությունների ոլորտները կարգավորող առանձին օրենսդրական ակտերը:

1957 թ. մարտի 18-ին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը ընդունեց օրենք հանրապետության Սահմանադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու մասին<sup>1</sup>: Այնուհետև միութենական մասշտարկվ ձեռնարկվեցին իրավունքի հիմնական ոլորտներում ԽՍՀ Սիության օրենսդրության հիմունքների մշակման և ընդունման աշխատանքներ:

Ներկայացուցական համակարգը լճացած և ձևականացված էր: Պետափրազական ինստիտուտների հայտնի նորացումը սկսված ԽՄԿ 20-րդ համազումարից հետո (1956 թ.), արտացոլում էր վերևների քաղաքականությունը, որոնք ձգտում էին մի կողմ նետել ստալինիզմի ամենից վատագույն կողմերը, պահպանելով ամբողջափրությունը: Փորձեր արվեցին աշխուժացնել ներկայացուցական համակարգը, բոլացնել քաղաքացիական ազատությունների սահմանափակումները, ամրապնդել արդարադատությունը: Սակայն բոլոր գործընթացները վերահսկվում էին կուսակցական ապարատի կողմից, որը բացահայտորեն չէր

ցանկանում իրաժարվել իշխանությունից: Այդ իսկ պատճառով, բարեփոխումների փորձերն ավարտվում էին անհաջողությամբ: Իրական սահմանադրական կարգեր այդպես էլ չենավորվեցին:

«Զնայած լուրջ տրանսֆորմացիային իրավունքի տեսության և խորհրդային օրենսդրության մեջ՝ ԽՍՀՄ-ում քաղաքացիների իրավունքները և ազատությունները կրում էին հոչակագրային բնույթ՝ կուսակցական բյուրոկրատիայի կողմից իշխանության մենաշնորհացման պայմաններում։ Անհրաժեշտարար հասունանում էր կուսակցական ընտրանու քաղաքական գաղափարախոսության փոփոխման հարցը, որն արդեն չէր համապատասխանում ժամանակի ոգուն և զապում էր պետության ու հասարակության սոցիալ-տնտեսական ու քաղաքական զարգացումը։ Քանի դեռ պետության գլխավոր կանգնած էին ԽՄԿԿ ղեկավարները, գերիշխում էր այլ կուսակցությունների, մարդու իրավունքների և իրավական պետության գաղափարների բացահայտ քննարկման ոչ հրապարակային արգելքը, ցանկացած փոփոխություն օրենսդրության մեջ կուսակցական բյուրոկրատիայի գաղափարական պլանների իրականացում էր, այլ ոչ թե կոնկրետ քաղաքացիների շահերի և իրավունքների ապահովում»<sup>1</sup>:

Իրավական համակարգի բարեփոխումները Խրուչչովի և Բրեժնիկի կառավարման տարիներին շռջափեցին դրա էությունը: Պետականական ինստիտուտները, ճնայած որոշ ժողովրդականացնանը, նախկինի պես ամրագրում էին կոմկուսի իշխանությունը, անտեսում մարդու, նրա իրավունքների և ազատությունների առաջնայնությունը: Երկրում գործում էին «Քրավական» մեխանիզմներ, որոնք իրականում չէին ապահովում խոսքի, մամուլի, խոճի, քաղաքական գործունեության ազատությունները:

<sup>1</sup> Stu Çanakkale'ye Âadeðîai ãiat Nîââoda Âðî ÿiñeîe NÑD ÷âðââððîai ñî çûââ, ÷âðââððâye ñânev. Nöâai ãð. ïð-âð. Âðââââí, 1957, tþ 286:

<sup>1</sup> Стіу Глущкова С.И., бізнес-школа, № 237-238

### § 3. Խորհրդային երրորդ սերնդի սահմանադրությունների ընդունման ներպետական և միջազգային իրավական նախադրյալները

Սոցիալիստական հասարակության զարգացման երրորդ փուլը զարգացած սոցիալիզմի փուլն է, որին համապատասխանում են համաժողովրդական պետությունը և համաժողովրդական իրավունքը: Այս փուլի պատմական շրջանակներում պետք է նախադրյալներ ստեղծվեին հասարակական կոմունիստական ինքնակառավարման և կարգավորման անցնելու համար<sup>1</sup>: Խորհրդային պետականագիտությունը գուավ, որ կատարելով պրոլետարիատի դիկտատորայի խնդիրները՝ խորհրդային պետությունը դարձավ համաժողովրդական: Լինելով նոր փուլ սոցիալիստական պետականության զարգացման գործընթացում՝ համաժողովրդական պետությունը, ըստ կոմունիստական ուսմունքի, պահպանում էր արողետարիատի դիկտատորայի գիւսավոր նպատակները և հատկանիշները: Այն ընկալում և զարգացնում է պրոլետարիատի դիկտատորայի շատ գործառույթներ: Սակայն լինելով արողետարիատի դիկտատորայի հաջորդը՝ համաժողովրդական պետությունն ունի մի շարք առանձնահատկությունները<sup>2</sup>:

Համաժողովրդական պետության տնտեսական հիմք էր դիտվում սոցիալիստական սեփականությունը, որն արդեն անբաժանելիորեն գերիշխողն էր: Համարվում էր, որ տնտեսական ոլորտում ձևավորվել էր միասնական ժողովրդատնտեսական համամիք:

Համաժողովրդական պետության սոցիալական հիմքը, ըստ այդ հայեցակարգի, ավելի լայն էր և կազմում էր բանվորների, գյուղացիների ու մտավորականության անխախտ դաշինքը: Այն

հենվում էր «նոր պատմական ընդհանրության՝ խորհրդային ժողովրդի վրա, որը ձևավորվել էր բոլոր դասակարգերի և սոցիալական խմբերի մերձեցման, բոլոր ազգերի ու ազգությունների իրավաբանական իրավահավաքարության վրա»<sup>1</sup>: Համաժողովրդական պետությունում չկար դասակարգային հակամարտություն:

Համաժողովրդական պետության գաղափարախոսական հիմք էր համարվում մարքսիզմ-լենինիզմը, որի վրա կառուցվել էր ժողովրդի սոցիալ-քաղաքական և գաղափարախոսական ենթարկող միասնությունը: Համաժողովրդական պետության բարձրագույն նպատակն անդասակարգ կոմունիստական հասարակության կառուցումն էր:

Ընդհանրացնելով այս հատկանիշները՝ սոցիալիստական պետության և իրավունքի տեսությունը համաժողովրդական պետությունը բնորոշում էր որպես նոր սոցիալական ընդհանրության՝ խորհրդային ժողովրդի քաղաքական կազմակերպություն, որն արտահայտում էր նրա կամքն ու շահերը, հանդիս գալիս որպես սոցիալիզմի պլանաշափ կատարելագործման և սոցիալիստական հասարակության պաշտպանության գործիք:

Ելնելով զարգացած սոցիալիզմի հասարակության հայեցակարգից՝ 1962 թ. կազմվեց համամիութենական սահմանադրական հանձնաժողով: Սակայն 60-ական թվականների վերջերին արագորեն կոմունիստական հասարակության անցնելու խրուշչովյան գաղափարները աստիճանաբար ձևափոխվեցին նոր կարգախոսային ձևակերպումներով, որն էլ իր հերթին դանդաղեցրեց նոր սահմանադրության նախագծի մշակման աշխատանքները: Դրա վերջնական նախագիծը նախապատրաստվեց միայն 1977 թ. մայիսին: Սկզբում այն հաստատեց ԽՍԿԿ կենտրոնական կոմիտեի պլենումը, այնուհետև ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով այն դրվեց հա-

<sup>1</sup> Տե՛ս Օձի ծեղ անհօգածողական է լուսական, 1985, էջ 165:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 167-170:

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 167-170:

մաժողովրդական քննարկման: 1977 թ. հոկտեմբերի 7-ին ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը ընդունեց ԽՍՀՄ Սահմանադրության ընդունման ու հայտարարման հոչակագիրը և Սահմանադրությունը գործողության մեջ դնելու կարգի մասին օրենքը:

Բրեժենյան բյուրոկրատիայի իրավական քաղաքականության մեջ և գործողություններում նկատվում էր ակնհայտ երկակիություն: Սի կողմից ծավալվում էին դատավարություններ ուղղված այլախոհների դեմ. հարյուրավոր այլախոհներ ազատազրկվում էին, ուղարկվում հոգեբուժարաններ, իսկ շատերն արտաքսվում էին երկրից: Մյուս կողմից՝ տարվում էր զիջումների քաղաքանություն երկրի ներսում ծավալված ազատական տրամադրությունների և արևմուտքի հասարակական կարծիքի ճնշումների ներքո:

1975 թ. ԽՍՀՄ-ի վավերացրեց Հելսինկյան եզրափակիչ փաստաթուրը, իսկ 1976 թվականին՝ ՍԱԿ-ի 1966 թ. մարդու իրավունքների վերաբերյալ դաշնագրերը, սակայն առանց «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» դաշնագրի 1966 թ. լրացուցիչ արձանագրության: Այդ պայմանագրերի վավերացման փաստը դարձավ որոշիչ ԽՍՀՄ Սահմանադրության նախապատրաստման ընթացքում<sup>1</sup>:

Այդ փաստաթուրը երկրում իրական իրավաբանական ուժ ձեռք չբերեցին, որովհետև «մարդու իրավունքների միջազգային բիլում» ամրագրված մարդու իրավունքների սկզբունքները կարծես թե պարտադիր չեն խորհրդային միության համար: Այդ սկզբունքներն էին՝ ազատություն, մարդու իրավունքներն անօտարելի են և պատկանում են նրան ի ծնե, մարդու իրավունքները համընդիմություն են, իրավահավասարություն, մարդու իրավունքները բարձրագույն սոցիալական արժեք են, մարդու իրավունքների

հարգանքը, պահպանումը և պաշտպանությունը պետության պարտականությունն է, մարդու իրավունքների և ազատությունների իրականացումը չպետք է խախտի այլոց իրավունքները, մարդու իրավունքներն անհամատեղելի են խորականության հետ<sup>1</sup>: Օրինակ՝ ազատության սկզբունքի համաձայն՝ բոլոր մարդիկ ծնվում են ազատ և ունեն հետևյալ իմնական ազատությունները՝ ազատության իրավունք, ազատություն ստրկությունից և անազատ վիճակից, ազատություն կամայական կալանքից, ձերբակալությունից և վտարումից, ազատություն անձնական և ընտանեկան կյանքին կամայական միջամտությունից, ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու ազատություն<sup>2</sup>: Ակնհայտ է, որ այս սկզբունքի հիմքում ընկած էր բնական իրավունքի տեսությունը, իսկ մարդու իրավունքների խորհրդային հայեցակարգի հիմքում իրավունքի դասակարգային սոցոլոգիական պողիտիվականությունը:

ԽՍՀՄ 1977 թ. Սահմանադրությունն արտահայտում էր բրեժենյան քաղաքականության այդ երկակիությունը: Այն պահպանում էր իշխանության հակաժողովրդավարական կառուցակարգը՝ ստեղծված Ստալինի կողմից, և միաժամանակ փորձում էր ընդլայնել քաղաքացիական իրավունքների և ազատությունները շրջանակը: Սակայն վերջիններս ևս կրում էին երկակիության կնիքը. միջազգային փաստաթուրերից վերցված ձևակերպումներին ավելացվում էր «կոմունիստական շինարարության նպատակներ» արտահայտությունը:

<sup>1</sup> Ст. Сандов А.Х., Общепризнанные права человека. Под ред. И.И. Лукашука, М., 2002, т. 19:

<sup>2</sup> Ст. Сандов А.Х., Международное право прав человека. Отв. ред. Б.Н. Топорнин, М., 2002, т. 9, 91:

<sup>1</sup> Ст. Глызкова С.И., նշված աշխ., էջ 235:

#### § 4. ՀԽՍՀ 1978 թ. Սահմանադրության ընդհանուր բնութագիրը

1977 թ. հուլիսի 7-ին ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը, հավանություն տալով ԽՍՀՄ Սահմանադրության նախագծին, միաժամանակ դրոշում ընդունեց ՀԽՍՀ Սահմանադրության նոր նախագծի նախապատրաստման՝ 37 մարդուց քաղկացած հանձնաժողով ստեղծելու մասին<sup>1</sup>: Այդ հանձնաժողովը, դեկավարվելով ԽՍՀՄ Սահմանադրության դրույթներով, մշակեց ՀԽՍՀ Սահմանադրության նախագիծը, որը, Գերագույն խորհրդի նախագահության 1978 թ. մարտի 22-ի հրամանագրի համապատասխան, հրապարակվեց մամուլում համաժողովրդական քննարկման համար: 1978 թ. ապրիլի 12-ին այն ըննարկվեց ՀԿԿ Կենտրոնական կոմիտեի պլենումում: 1978 թ. ապրիլի 14-ին Գերագույն խորհուրդը միաձայն ընդունեց դեկլարացիա ՀԽՍՀ Սահմանադրությունը (հիմնական օրենքը) ընդունելու և հայտարարելու մասին:

ՀԽՍՀ 1978 թ. Սահմանադրությունն արտացոլում էր խորհրդային հասարակության զարգացման նոր՝ զարգացած սոցիալիզմի փուլը, որ նշանակում էր խորհրդային պետության վերածում պրոլետարիատի դիկտուրայի պետությունից համաժողովրդական պետության, ինչն ուղղակիորեն ամրագրված էր Սահմանադրության մեջ: Այդ կապակցությամբ ԽՍՀՄ Սահմանադրության մեջ մտցվեց «ժողովուրդ» հասկացությունը: Ժողովուրդը հայտարարվում էր իշխանության սուբյեկտ:

Չնայած պետության համաժողովրդական բնույթի մասին պնդմանը՝ Սահմանադրությունը չէր կորցնում իր դասակարգային բնութագիրը: Սահմանադրության էության այդպիսի մեկնաբանումն ընդունված էր քաղաքական և պետականական գրականության մեջ, քանի որ պրոլետարիատի դիկտուրայի գաղափարը վերափոխվել էր բանվոր դասակարգի առաջատար դերի մասին գաղափարով:

<sup>1</sup> Տե՛ս Պետրոսյան Ծ.Ն., ՀԽՍՀ Սահմանադրությունը և նրա պատմական զարգացումը, Երևան, 1982, էջ 172-173:

Սահմանադրության դասակարգային բնույթը ընդգծվում էր նրանով, որ այն ավելի բացահայտ և ուղղակիորեն էր արտացոլում կոմկուսի դերը՝ սահմանելով դա 6-րդ հոդվածում: «Խորհրդային հասարակության դեկավար և ուղղություն տվող ուժը, նրա քաղաքական համակարգի, պետական ու հասարակական կազմակերպությունների միջուկը ԽՍՀԿ-ն է: ԽՍՀԿ-ն գոյություն ունի ժողովրդի համար և ծառայում է ժողովրդին»:

Զինված մարքս-լենինյան ուսմունքով, կոմունիստական կուսակցություններ սահմանում է հասարակության զարգացման հեռանկարը, ԽՍՀՄ ներքին և արտաքին քաղաքականութան գիծը, դեկավարում է խորհրդային ժողովրդի մեծ ստեղծարար գործունեությունը, պլանաշախ, գիտականորեն հիմնավորված քննույթը է տախի կոմունիզմի հաղթանակի համար նրա պայքարին: Բոլոր կուսակցական կազմակերպությունները գործում են ԽՍՀՄ Սահմանադրության շրջանակներում»:

Ի տարրերություն նախորդ Սահմանադրության՝ կուսակցության մասին առանձին հոդվածը ընդգրկված էր 1-ին գլխում: 1937 թ. Սահմանադրության նույնարովանդակ հոդվածը գտնվում էր 8-րդ գլխում և կազմում էր 101-րդ հոդվածի մի մասը: Դա նշանակում էր կուսակցության դերի՝ որպես ամբողջ պետական կառույցի հիմքի հետագա սահմանադրական ամրապնդում:

Սահմանադրության մեջ պահպանված էր ժողովրդավարության դասակարգային ուղղվածությունը, որը բնորոշվում էր «սոցիալիստական ժողովրդավարություն»: Սակայն դրա շրջանակները, ի տարրերություն նախորդ սահմանադրությունների, էականորեն ընդլայնված էին: Սահմանադրությունը մասնավորապես ամրագրում էր օրենքի առջև քաղաքացիների հավասարության սկզբունքը՝ անկախ ծագումից, սոցիալական և գույքային դրույթունից, կրթությունից, լեզվից, կրոնի նկատմամբ վերաբերմունքից, զբաղմունքի բնույթից ու տեսակից, բնակության վայրից, ռասայական և ազգային պատկանելիությունից (հոդված 32), ինչը չկար նախորդ սահմանադրությունների մեջ:

1978 թ. Սահմանադրությունն ամրագրում էր քաղաքացիների իրավունքների ավելի լայն շրջանակ՝ ներմուծելով այնպիսի նոր իրավունքներ, ինչպիսիք են բնակարանի իրավունքը, առողջության պահպանության իրավունքը և այլն: Առաջին անգամ ամրագրվում էր դրույթը այն մասին, որ պետական կյանքի առավել կարևոր հարցերը հանձնվում են համաժողովրդական քննարկման, ինչպես նաև դրվում համաժողովրդական քվեարկության (հոդված 5):

1978 թ. Սահմանադրության պրեամբուլայում առաջին անգամ ասվում էր, որ «ՀԽՍՀ Սահմանադրությունը հոչակվում է ժողովրդի կողմից՝ իհարկե ընդգծելով. «Պեկալարվելով կոմունիզմի վեհ իդեալներով և համապատասխան ԽՍՀ Սիոնթյան Սահմանադրության»:

ՀԽՍՀ 1978 թ. Սահմանադրությունն առաջին անգամ ուղարկիորեն ամրագրում էր, որ «ՀԽՍՀ-ն սուվերեն, խորհրդային, սոցիալատական պետություն է» (հոդված 68): Այս դրույթը, իհարկե, իրական սահմանադրական իրավական ռեժիմի տեսակետից ձևական բնույթ էր կրում:

1978 թ. Սահմանադրությունը պահպանեց 1937 թ. Սահմանադրության առանձնահատկությունը պետական լեզվի մասին: Սահմանադրության համաժողովրդական քննարկման դրված նախագծում այդ հոդվածը բացակայում էր: Քննարկման ընթացքում մի շարք աշխատավորական կոլեկտիվներ առաջարկեցին Սահմանադրության մեջ պահպանել 1937 թ. Սահմանադրության ՀԽՍՀ պետական լեզվի մասին նորմը: Միայն Սահմանադրության վերջնական տեքստը հաստատելիս նրանում ավելացվեց նոր հոդված, որում ասված էր. «ՀԽՍՀ պետական լեզուն հայոց լեզուն է: ՀԽՍՀ-ն պետական հոգատարություն է իրականացնում հայոց լեզվի ըստ ամենայնի զարգացման նկատմամբ և ապահովում է նրա գործածությունը պետական ու հասարակական նարմիններում, կոլտուրայի, լուսավորության և այլ հիմնարկներում: ՀԽՍՀ-ն ապահովում է այդ մարմիններում և հիմնարկներում ռու-

սաց լեզվի և ուրիշ լեզուների ազատ գործածությունը, որոնցից օգտվում է բնակչությունը: Այս կամ այն լեզվի գործածության որևէ արտոնություն կամ սահմանափակում չի թույլատրվում»:

ՀԽՍՀ 1978 թ. Սահմանադրությունը, հետևելով ԽՍՀՄ Սահմանադրությանը, կառուցվածքով նշանակալիորեն փոխված էր: Լինելով ավելի ծավալուն, այն խորացրել էր սահմանադրական նորմերի համակարգումն առարկայական հատկանիշով: Այսպես՝ «Հասարակարգի և քաղաքականության հիմունքներ» առաջին բաժնում առանձնացված էին մի շարք գլուխներ՝ «Քաղաքական համակարգը», «Տնտեսական համակարգը», «Սոցիալական զարգացումը և կուլտուրան», «Արտաքին քաղաքական գործունեությունը և սոցիալիստական հայրենիքի պաշտպանությունը»: Այս ամենը վկայում են սահմանադրական կարգավորման առարկայի ընդլայնման, պետականական ինստիտուտների ձևակերպան ավելի բարձր մակարդակի և իրավագիտական մշակված տերմինարանության առկայության մասին:

ԽՍՀՄ 1977 թ. և ՀԽՍՀ 1978 թ. Սահմանադրությունների ընդունումը և հետագա փոփոխություններն ու լրացումները օրենսդրության մեջ կրում էին հիմնականում մակերեսային բնույթը. դրանք չփոխեցին սոցիալիստական կոչված իրավունքի էությունը: Այդուհանդեռձ, համամիութենական և հանրապետական օրենսդրությունը նոր սահմանադրություններին համապատասխանեցնելու համար սկզբում համամիութենական, իսկ այնուհետև հանրապետական մակարդակներում նախապատրաստվեցին և ընդունվեցին մի շարք հիմնարար օրենքներ: 1970-80-ական թթ. օրինաստեղծությունը յուրահատուկ բնույթ էր կրում: Եթե դատենք քանակական ցուցանիշներով, ապա ՀԽՍՀ հիմնարար օրենսգրքերում այդ տարիներին կատարված փոփոխություններն ու լրացումները կարելի է հաշվել հազարներով: Սակայն դրանք չեն փոխում համապատասխան օրենսգրքի հայեցակարգը, չեն շղափում նրա գաղափարախոսական հիմքերը:

## § 5. Անհատի սահմանադրական իրավունքների խորհրդային ինստիտուտի գարգացումը և դրա հայեցակարգային բացթղումները

1978 թ. Սահմանադրությամբ նախատեսված քաղաքացու իրավունքների, ազատությունների և պարտականությունների ինստիտուտը, նախորդ՝ Սահմանադրության համանման ինստիտուտի հետ համեմատած, կարելի է համարել գարգացում ինչպես իրավատեխնիկական, այնպես էլ բովանդակային տեսանկյունից: Բարձրացվել էր «Պետություն - քաղաքացի» փոխհարաբերությունների սահմանադրական ինստիտուտի տեղը և դերը սահմանադրական կարգավորման համակարգում: Եթե 1937 թ. Սահմանադրությունն այդ ինստիտուտի կարգավորումն իրականացնում էր 8-րդ գլխում, ապա 1978 թ. Սահմանադրությունը դրան նվիրել էր 2-րդ բաժինը, որը կոչվում էր «Պետությունը և անհատը՝ երկու գլուխներով՝ «ՀՍՍՀ քաղաքացիությունը: Քաղաքացիների իրավականարությունը» (5-րդ գլուխ) և «ՀՍՍՀ քաղաքացիների հիմնական իրավունքները, ազատությունները և պարտականությունները» (6-րդ գլուխ)<sup>1</sup>:

1978 թ. Սահմանադրությամբ քաղաքացու կարգավիճակում նկատվում էր նաև բովանդակային գարգացում: Տեղի էր ունեցել հիմնական իրավունքների շրջանակի ընդլայնում և իրավական բովանդակության հարստացում: Սահմանադրությունն ամրագրում էր քաղաքացու իրավական վիճակի սկզբունքները՝ իրավահավասարությունը, լիիրավությունը, իրավունքների և պարտականությունների միասնությունը:

Քաղաքացու իրավունքները «1978 թ. Սահմանադրության մեջ էլ ավելի խորացվել, կատարելագործվել ու գարգացել են: Դրա վկայությունն են՝ երաշխավորված աշխատանքի իրավուն-

քը, որ լրացվել է մասնագիտության և աշխատանքի տեսակ ընտրելու իրավունքով, նամակագրության գաղտնիության մասին հոդվածը լրացվել է հեռախոսային խոսակցությունների և հեռագրական հաղորդումների գաղտնիության ապահովման կետերով և այլն ... Հոչակվել են մեծ բվով նոր իրավունքներ ու ազատություններ (առողջության պահպանության իրավունք, բնակարանի իրավունք, գիտական, տեխնիկական և գեղարվեստական ստեղծագործության ազատություն և այլն): Նոր իրավունքների ու ազատությունների ընդհանուր թիվը տպավորիչ է՝ այն հասնում է 10-ի»<sup>1</sup>:

Նոր իրավունքներից ու ազատություններից էին «կուլտուրայի նվաճումներից օգտվելու իրավունքը, պետական և հասարակական գործերի կառավարմանը, համապետական և տեղական նշանակություն ունեցող օրենքների և որոշումների քննարկմանն ու ընդունմանը մասնակցելու իրավունքը (ներառում էր նաև համաժողովրդական քվեարկությունը), պետական և հասարակական կազմակերպություններին առաջարկություններ ներկայացնելու և քննադատելու իրավունքը, ամուսնության և ընտանիքի նկատմամբ պետական հոգատարության իրավունքը, քաղաքացու անձը հարգելու պետական մարմինների ու պաշտոնատար անձանց պարտականությունը, պետական մարմինների գործողությունները գանգատարկելու (նաև դատական կարգով) իրավունքը, ապօրինի գործողությունների հետևանքով պատճառված վնասի հատուցում ստանալու իրավունքը: Սահմանվել էին նաև քաղաքացու սահմանադրական իրավունքների նոր երաշխիքներ՝ տնտեսական, քաղաքական, սոցիալական, կազմակերպական, իրավաբանական և այլն<sup>2</sup>:

Սահմանադրությունն ամրագրել էր նոր պարտականություններ՝ այլ քաղաքացիների իրավունքներն ու օրինական շահերը հարգելու, բնությանը հոգատար վերաբերվելու, նրա հարստութ-

<sup>1</sup> Տե՛ս **Թոխյան Ֆ.Պ.**, «Քաղաքացիների սահմանադրական ստատուի գարգացումը Հայկական ՍՍՀ-ում (1920-1980թթ.)», ՀՍՍՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտ - Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987 էջ 102:

<sup>2</sup> Տե՛ս **Թոխյան Ֆ.Պ.**, նշված աշխ., էջ 102:

<sup>2</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս **Թոխյան Ֆ.Պ.**, նշված աշխ., էջ 103-180:

յունները պահպանելու, պատմական հուշարձանների և մշակութային մյուս արժեքների պահպանաման նկատմամբ հոգատարության, երեխանների դաստիարակության պարտականությունները<sup>1</sup>:

Առաջընթացով հանդերձ՝ պետք է նկատի ունենալ, որ իր հայեցակարգային հիմքով քաղաքացու կարգավիճակը պայմանափորված էր պողիտիվ իրավական պատկերացումներով: Խորհրդային իրավահասկացությունը չէր ընդունում քաղաքացու իրավունքների երկատումը բնականի և պողիտիվի: Հետևաբար, մարդու իրավունքների միջազգային իրավունքին բնորոշ սկզբունքների հիմնական մասը խորք էր նրա համար: «Իրավունքի աղբյուրը նորից մնում էր պետությունը, այլ ոչ թե ինքը՝ քաղաքացին, ինչը հիմնավորվում էր անշեղորեն գերակշռող իրավունքի պողիտիվատական մեկնարարանությամբ»<sup>2</sup>:

Խորհրդային սահմանադրությունները նսեմացրել էին անձնական իրավունքները՝ դրանց իրավական երաշխիք ճանաչելով միայն օրենքը, դատախազությունը և դատարանը: Իրավախախտ օրենսդրության հնարավորության և անկախ դատական իշխանության բացակայության պայմաններում այդ երաշխիքները շատ քոյլ էին: Բնական իրավահասկացողության բոլոր առավելությունները վերածվում էին թերության՝ քաղաքացու կարգավիճակի խորհրդային իրավական հնատիտուտի համար:

XX դարի առաջին կեսին մարդու իրավունքները ներպետական իրավունքի ինստիտուտ էին: Սակայն հետազայտմ ձևավորվեց մարդու իրավունքների միջազգային իրավունքը: Տեղի ունեցավ մարդու իրավունքների միջազգայնացում, իսկ այնուհետև՝ համընդհանրացում: XX դարի երկրորդ կեսից մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը վերածվեց նորագույն շրջանի միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներից մեկի: «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» դաշնագրի

<sup>1</sup> Տե՛ս ՀԽՍՀ 1978 թ. Սահմանադրության 58-67-րդ հոդվածները, ինչպես նաև Թղթական Ֆ.Պ., նշված աշխ., էջ 102-103:

<sup>2</sup> Տե՛ս Գլուշկովա С.И., նշված աշխ., էջ 236:

1966 թ. լրացուցիչ արձանագրության չվավերացնելը ԽՍՀՄ քաղաքացիներին զրկեց մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային կառուցակարգերին դիմելու հնարավորությունից:

XX դարի վերջերին մարդու իրավունքների պրակտիկան զիտեր մարդու իրավունքների պաշտպանության բազում ինստիտուտներ՝ մարդու իրավունքների պաշտպան, մարդու իրավունքների հանձնաժողով, դատական համընդհանուր պաշտպանության իրավունք, որոնցից ոչ մեկը նախատեսված չէր խորհրդային միությունում: Աղյունքում անհատը ներպետական ոլորտում ևս չուներ իրավունք պաշտպանվելու իրավախախտ օրենսդրությունից՝ այն վիճարկելու միջոցով:

#### § 6. Արդարադատության երաշխիքների սահմանադրական հոչակումը և ընթացիկ օրենսդրության ու իրավակիրառման հետադիմական պահպանողականությունը

Խորհրդային արդարադատության համակարգի զարգացման և հետագա ժողովրդավարացման համար նոր հնարավորություններ էր բացում ԽՍՀՄ 1977 թ., իսկ այնուհետև Հայկական ԽՍՀ 1978 թ. սահմանադրությունների մեջ համաժողովրդավարական պետության, հասարակական և պետական կյանքի իրավական հիմունքների, սոցիալիստական ժողովրդավարության և օրինականության զարգացման վերաբերյալ դրույթների ամրագրումը: Սակայն այդ հնարավորությունների իրացմանը խոչընդոտում էին այն ժամանակվա իրադրությունը, քաղաքական դեկավարության կարծրատիպերը, որոնք պայմանավորում էին նաև օրինաստեղծագործության պահպանողականությունը:

Հայկական ԽՍՀ 1978 թ. Սահմանադրության բովանդակության վերլուծությունը ցույց է տալիս, որ այն նախ և առաջ վերարտադրում էր 1937 թ. Սահմանադրության մեջ ամրագրված դատավարության մի շարք սկզբունքներ, երկրորդ՝ ընդլայնում էր

հասարակական հարաբերությունների այդ ոլորտի սահմանադրական կարգավորման շրջանակները՝ արդարադատությանը վերաբերող մի շարք հիմանդրույթներ դարձնելով սահմանադրական:

Հայկական ԽՍՀ 1978 Սահմանադրությունը վերարտադրեց 1937 թ. Սահմանադրության որոշ սկզբունքներ՝ մասամբ խմբագրելով դրանք: Այսպես, դատավորների անկախության և միայն օրենքին ենթարկվելու հոդվածում ավելացվում էր ժողովրդական ատենակալների անկախության մասին դրույթը: 1937 թ. Սահմանադրությունից վերարտադրվել էին նաև գործերի հրապարակային քննության, մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովման, դատավարության ազգային լեզվի սկզբունքները:

Առաջին անգամ սահմանադրական մակարդակով ամրագրվում էին հետևյալ սկզբունքները՝

— Հայկական ԽՍՀ-ում արդարադատությունն իրականացվում է միայն դատարանի միջոցով: Հայկական ԽՍՀ դատարաններ են Հայկական ԽՍՀ Գերագույն դատարանը և շրջանային (քաղաքային) ժողովրդական դատարանները (հոդվ. 149): Այս սահմանադրական սկզբունքից բխում էր, որ արտադատական հարկադրանքներն արգելված էին, և որ ոչ մի այլ պետական մարմին իրավունք չուներ իրականացնելու արդարադատություն:

— Ոչ ոք չի կարող հանցագործության մեջ մեղավոր ճանաչվել, ինչպես նաև քրեական պատմի ենթարկվել այլ կերպ, քան դատարանի դատավճռով և օրենքին համապատասխան (հոդվ. 158): Խորհրդային իրավագիտությունը այս դրույթը դիտարկում էր որպես անմեղության կանխավարկածի սկզբունքի արտացոլում խորհրդային քրեական դատավարությունում:

— Գործերի քննության կողեգիալությունը, քաղաքացիական և քրեական գործերի քննությունը բոլոր դատարաններում կատարվում է կոլեգիալ կարգով, առաջին ատյանի դատարանում՝ ժողովրդական ատենակալների մասնակցությամբ: Ժողովրդական ատենակալները արդարադատությունն իրականացնելիս

օժտվում են դատավորի բոլոր իրավունքներով (հոդվ. 152):

— Արդարադատությունն իրականացվում է օրենքի և դատարանի առջև քաղաքացիների հավասարության սկզբունքներով (հոդվ. 154):

— Հասարակայնության մասնակցությունը դատավարությանը, քաղաքացիական և քրեական գործերի դատավարությանը բոլոյատրվում է աշխատավորական կողեկտիվների ներկայացուցիչների մասնակցությունը (հոդվ. 159): Այս սկզբունքը 1961 թ. քրեական դատավարության օրենսգրքում արտահայտված էր հասարակական մեղադրողի և պաշտպանի ինստիտուտների տեսքով:

— Մեղադրյալի համար ապահովվում է պաշտպանության իրավունք (հոդվ. 156):

Համամիտքենական և հանրապետական օրենսդրությունը նոր սահմանադրություններին համապատասխանեցնելու համար սկզբում համամիտքենական, իսկ այնուհետև՝ հանրապետական մակարդակներում նախապատրաստվեցին և ընդունվեցին մի շարք հիմնարար օրենքներ: Այսպես, 1979 թ. նոյեմբերի 30-ին ԽՍՀՄ Գերագույն խորհուրդն ընդունեց օրենք ԽՍՀՄ Գերագույն դատարանի մասին, օրենք ԽՍՀՄ դատախազության մասին, օրենք ԽՍՀՄ-ում փաստաբանության մասին<sup>1</sup>: Փոփոխություններ կատարվեցի համապատասխան դատավարական օրենքներում:

Արդարադատության սահմանադրական հիմունքների որոշակի ընդարձակումը, սակայն, չէր նշանակում, որ 1978 թ. Սահմանադրության մեջ ամրագրված էին արդարադատության համընդհանուր ճանաչում գտած բոլոր սկզբունքները: Օրինակ՝ այդ փոփոխությունները նույնիսկ ոչ մի կերպ չազդեցին քրեական դատավարության եռթյան վրա, քանի որ Սահմանադրությունն ամփոփեց քրեական դատավարության այն դրույթներն ու սկզբունքները, որոնք արդեն ամրագրված էին ընթացիկ խորհրդային օրենսդրության մեջ՝ ընդունված 50-ական թթ. վեջերի դատաիրա-

<sup>1</sup>Տե՛ս Ահա՛ն Ինձե՛ ԱՆ ՆՆՆԾ, 1979, թիվ 49, հոդվ. 842, հոդվ. 843, հոդվ. 846:

վական բարեփոխումների արդյունքում: Այլ խոսքերով՝ Հայկական ԽՍՀ 1978 թ. Սահմանադրությունը շպայմանավորեց նոր դատարավական բարեփոխումների անցկացման անհրաժեշտությունը: Այն միայն աճրագրեց 50-ական թթ. վեջերի դատական բարեփոխումների արդյունքները:

Հայկական ԽՍՀ Սահմանադրությունում առկա որոշ ժողովադատական դրույթներ, ինչպես օրինակ՝ դատական պաշտպանության իրավունքը, (55-րդ հոդվ. 2-րդ մաս), քաղաքացիների իրավունքը՝ օրենքով սահմանված կարգով գանգատարկել դատարանում պաշտոնատար անձանց այն գործողությունները, որոնք կատարվել են օրենքի խախտումով, լիազորությունների սահմանազանցությամբ և սահմանափակում են քաղաքացիների իրավունքները (56-րդ հոդվ. 2-րդ մաս), հետևողականորեն չկենազործվեցին և մնացին որպես հոչակագրեր:

Վերակառուցման շրջանի խորհրդային իրավագետները շատ արտահայտիչ և ընդգծուն բնութագրել են լճացման ժամանակների արդարադատության զարգացման ընթացքը, որը Հայաստանում փաստորեն տևեց մինչև 90-ական թթ. սկիզբը: «50-ական թթ. կեսերին ձեռնարկված պետական և կուսակցական գործունեության ժողովրդավարականացման գործընթացը դրեց խորհրդային քրեական դատավարության կատարելազործման և այն անհատի պաշտպանությի ժառանգությունից ազատագրման սկիզբը: Ցավոք, 70-ական թթ. կեսերից ի հայտ եկան լճացման երեսույթները՝ բյուրոկրատիզմ, անպատճախանատվություն, դոգմատիզմ: Խոսքի և գործի, հայտարարագրերի և իրական արդյունքների միջև ակնհայտ խզումը հանգեցրեց օրինականության հիմունքների և սոցիալական արդարության բացահայտ անտեսման:

Ղննադատության համար անհասանելի գոտիների ծագումն ուղղված է ի հասարակական վերահսկողությունից իրավապահպան մարմինների գործունեության ոլորտի դրւյտ բերմանք: Ներքին գործերի մարմինների աշխատանքի զնահատումը կա-

Իրավունքի կարգավորիչ հնարավորությունների անտեսման, իրավաբանական դրույթները ճնշմամբ և մերկ վարչարարությամբ փոխարինելու պատճառով դատարանը վերածվեց սովորական պետական հիմնարկության, որն էլ ծնեց իշխանության ու կառավարման տեղական մարմինների կողմից արդարադատության իրականացմանը միջամտելու արատավոր պրակտիկան։ Դա վկայում էր դատավորների անկախության սահմանադրական սկզբունքի խախտման մասին, որը հանգեցրեց ծանր դատական սխալների, կեղծված դատավարությունների, անմեղների դատապարտման։ Ըստ քեկանված դատավճիռների քանակի՝ դատավորի աշխատանքի գնահատման սխալ մերողը հեղինակագրկում էր ապացուցման կարևորագույն սկզբունքը՝ ապացույցների գնահատումը ներքին համոզման հիման վրա։ Դատավորների ոչ քննադատական վերաբերմունքը նախաքննության նյութերին, կողմնակալությունը և մարդկանց ճակատագրերի նկատմամբ անտարբերությունը գրեթե ամենուր դատական պրակտիկայից բացասեցին արդարացման դատավճիռների կայացման դեպքերը»<sup>1</sup>։

Այսպիսով՝ 1950-ական թթ. կեսերին ձեռնարկված խորհրդային օրենսդրության բարեփոխումները հիմք դրեցին խորհրդային իրավունքի կատարելագործման և ժողովրդավարականացման, այն անհատի պաշտպանունքի ժառանգությունից ազատագրման համար։ Սական սահմանադրական բարեփոխումներից հետո աստիճանաբար գերակշռեց սոցիալիստական համաժողովրդական պետության մեջ ժողովրդավարականացման գործընթացի

<sup>1</sup> Stú Éðóðn ní áðóðnéttá óáttí éttáttá í ðí ðí óánná. Í áuðay +áñðou. Í tå ðää. A.Ä. Ái eét-  
áà. E.È. Éaði aða. I., 1989, tþ 414-415;

հարաբերական ավարտվածության վերաբերյալ կարծիքը: Կոմունիստական կուսակցության և պետության ղեկավարների ոչնչով չիմնավորված այդ դիրքորոշումը հաճգեցրեց նրան, որ 70-ական թթ. կեսերից կուսակցական-պետական գործունեության և հասարակական գիտակցության մեջ առաջ եկան «զճացման» ու ճգնաժամային երևույթներ:

### § 7. Ներպետական և միջազգային իրավունքի հարաբերակցության հիմնահարցը

Խորհրդային պաշտոնական իրավական դրվագինը միջազգային պայմանագրերը չեր համարում ներպետական իրավական համակարգի տարր և չեր ընդունում միջազգային իրավունքի առաջնորդությունը ներպետական իրավունքի նկատմամբ: ԽՍՀՄ 1977 թ. Սահմանադրության 29-րդ հոդվածը սահմանում էր, որ «Այսու պետությունների հետ ՍՍՀՄ-ի հարաբերությունները կառուցվում են սուվերեն հավասարության, ուժ գործադրելուց կամ ուժով սպառնալուց փոխադարձ հրաժարման, սահմանների անխախտելիության, պետությունների տերիտորիալ ամբողջականության, վեճերի խաղաղ կարգավորման, ներքին գործերին շմիջամտելու, մարդու իրավունքների ու ազատությունների հարգման, ժողովուրդների իրավահավասարության և իրենց բախսոր տնօրինելու իրավունքի, պետությունների համագործակցության, միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներից ու նորմերից, ՍՍՀՄ-ի կնքած միջազգային պայմանագրերից բխող պարտավորությունների բարեխիղ կատարման սկզբունքների պահպանման վրա»:

Միջազգային իրավունքի գոյության հիմքը «կնքած միջազգային պայմանագրերից բխող պարտավորությունների բարեխիղ կատարման սկզբունքն» է: Վկայակոչելով այս սկզբունքը՝ Սահմանադրությունը չեր կարգավորում միջազգային և ներպետական իրավական համակարգերի փոխադարձակցության ձևերը, միջազգային իրավունքի անմիջական կամ միջնորդավորված

գործողության հիմնահարցը, երկուսի միջև կոլիզիաների լուծման եղանակները, դրա իրավական միջոցները և այլն: Խորհրդային իրավական դրվագինը քննադատորեն էր վերաբերվում արևմտյան երկրների սահմանադրական այն նորմերին, որոնցով միջազգային պայմանագրերը հայտարարվում էին ներպետական իրավական համակարգի տարր, սահմանվում էին միջազգային իրավունքի առաջնորդությունը ներպետական իրավունքի նկատմամբ<sup>1</sup>:

Խորհրդային իրավագիտությունը ընդունում էր միջազգային իրավունքի նորմերի իրականացումը, կիրառումը ներպետական իրավունքում՝ տարբերելով ներպետական իրավունքի միջոցով միջազգային իրավունքի իրացման և կիրառման երեք ձև<sup>2</sup>:

ա) միջազգային պայմանագրերի կատարման նպատակով նոր օրենսդրական ակտի իրավարակում կամ գործող օրենսդրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարում (տրանսֆորմացիա կամ ինկորպորացիա),

բ) միջազգային պայմանագրերի կիրառման կարգը սահմանող ակտի ընդունում,

գ) ազգային օրենսդրության մեջ հատուկ հղումները (վկայակոչումները) միջազգային պայմանագրերին, որոնք իրավասում մարդիններին կողմնորոշում են համապատասխան պայմանագրերի նորմերի կատարմանը: Ներքին իրավունքում հղումների կիրառումը խորհրդային պրակտիկայում լայնորեն տարածված էր և գործնականում կային դրա երկու տեսակները՝ միջազգային պայմանագրերի համալիր կիրառում (միջազգային և ներպետական նորմերի համատեղ կիրառում) և առաջնային կիրառում: Վերջինս հասկացվում էր որպես միջազգային և ներպետական իրավունքների կոլիզիայի լուծման ձև, սակայն միայն հղման առկայության դեպքում:

<sup>1</sup> Ст. 6 Международное право /Под ред. Н.Т. Булатовой, М., 1987, т2 63:

<sup>2</sup> Ст. 6 Игнатенко Г.В., Взаимодействие внутригосударственного и международного права. Свердловск, 1998, т2 4-16; Международное право /Под ред. Н.Т. Булатовой, М., 1987, т2 64:

\* \* \*

Այդպիսով, խորհրդային իրավական դրկտրինը չէր ընդունում առանց հղումների միջազգային նորմի ներպետական ոլորտում անմիջական գործողությունը: Նույնիսկ միջազգային նորմի հղումների առկայության դեպքում համարում էր, որ վկայակոչումը կամ (հղումը) չի ներմուծում միջազգային նորմը ներպետական իրավունք, այլ միայն բնութագրում է երկու իրավական համակարգերի փոխհարաբերությունները դրանց կիրառման գործընթացում:

## § 8. Վերակառուցման շրջանում իրավագիտության ապաճորտացումը և սոցիալիստական իրավական պետության կառուցման հոչակումը

1985 թ. սկսված սոցիալիստական բարեփոխումների քաղաքականությունը, որն անցնում էր «հրապարակայնություն, արագացում, վերակառուցում» կարգախոսների ներքո, ազդարարեց վճռական շրջադարձ սոցիալիստական իրավունքի և իրավագիտության զարգացման մեջ: Հրապարակայնության քաղաքականությունը հնարավորություն տվեց հաղթահարելու իրավագիտության այնպիսի թերություններ և արատներ, ինչպես իրականությունից կտրվածությունը, դոգմատիզմը, պատեհապաշտությունը, բացասական երևույթները թարցնելը, հրաժարվելը գիտականության պահանջներից, իրականության գովաբանական գունազարդումը և այլն:

Ապաճորտացման պայմաններում իրավագիտությունը կարդացավ տալ 80-ական թթ. կեսերին առկա իրավունքի օրյեկտիվ գնահատականը և հիմնավորել ամբողջ իրավական համակարգի արմատական բարեփոխման անհրաժեշտությունը, որի իրականացման ընթացքում պետք է լուծվեին ծառացած հիմնախնդիրները: Բարեփոխումներն անհրաժեշտ էին այն պատճառով, որ հասարակական կյանքի բոլոր ոլորտների կառավարման վարչական

բամայական համակարգի պայմաններում օրենսդրությունը զգալիորեն դադարել էր լինել քաղաքացիների պատվի և արժանապատվության, կյանքի և առողջության, անձնական ազատության և գույքի պաշտպանության իրավունքի երաշխիք:

Իր հերթին դատական համակարգը լստ էության վերածվել էր կառավարչական հիմնարկների գերատեսչական կառույցի՝ ավել կամ պակաս չափով կախված քննության և դատախուզության մեղադրական դիրքորոշումից, տեղական և այլ իշխանություններից<sup>1</sup>:

Սկսվել էր խորհրդային իրավական համակարգի ճգնաժամի շրջանը, որը նոր պայմաններում ցույց տվեց իր անընդունակությունն իրավանության կողմից դրված հիմնական խնդիրների արդյունավետ լուծման հարցում: Իրավագիտության հիմնավորած ընդհանուր իրավական և դատաիրավական բարեփոխումների անցկացման ամիրաժեշտությունն աստիճանաբար ճանաչում գտավ նաև Կոմիսուսի ղեկավարության կողմից:

Սոցիալիստական իրավական պետության գաղափարի իրացման ընթացքում ենթադրվում էր դատական բարեփոխման անցկացում, որն իր հերթին կոչված էր քրեադատավարական ոլորտում բարձրագնել դատարանի դերը սոցիալիստական ժո-

<sup>1</sup> Stú Êñôðèá è iî üüéî êñôðèá! Í ýöü ááñää í ñóääáíî -i eðíâé ðáðíðí á. Í .., 1990, tø 142:

<sup>2</sup> Stiu Ðatçë ëþöøy XIX Äñäñi þçí îé êîí ôåðáí öèè ËÍ ÑÑ.— Ëì i ói èñò, 1988, þþü 10, l. 65:

դովրդավարության համակարգում նրա հեղինակության և անկախության ամրապնդման, մրցակցության և իրապարակայնության երաշխիքների ապահովման, անմեղության կանխավարկածի պահպանման, մեղադրական թերման վերացման, դատախազների անկախության ամրապնդման, դատավարությանը պաշտպանական կողմի մասնակցության ընդլայնման, բարդ գործերի դատական քննությանը ժողովրդական ատենակալների քանակի ավելացման միջոցով<sup>1</sup>: Արդյունքում համամիութենական մակարդակում ձեռնարկվեցին այդ որոշումների իրացման առաջին քայլերը:

Վերակառուցման շրջանի խորհրդային դաշնային օրենսդրությունը զարգացել է մի քանի փուլերով: Առաջին փուլն ընդգրկում է 1985-1989 թթ., երբ իրավական բարեփոխումները շոշափում էր «իրավունքի գործող համակարգի կատարելագործման, բացերի, հնացած կամ հակասական նորմերի վերացման» հարցերը: Դրանք որևէ արմատական և սկզբունքային փոփոխություն չեն ներմուծում իրավական համակարգ<sup>2</sup>:

Կուսակցական քաղաքական իշխանության համակարգի քանդման պայմաններում իրական հնարավորություններ առաջացան միութենական հանրապետություններում ինքնիշխան պետական իշխանության կազմավորման ու ամրապնդման համար: Սակայն ՀԽՍՀ-ն այդ տարիներին կարծես թե մի կողմ էր կանգնած ընթացող վերափոխումների հոսքից, մինչև Ղարաբաղյան շարժման պոռթկումը:

Իրավական բարեփոխումների երկրորդ փուլում՝ 1990-1991 թթ. ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը ընդունեց ավելի քան 200 օրենքներ, որոնց մեծ մասն ուղղված էին իրավական պետության և շուկայական հարաբերությունների ստեղծմանը<sup>3</sup>: ԽՍՀՄ Գերա-

գույն խորհուրդը դեռևս 1990 թ. հունիսի 12-ին ընդունեց օրենք «Մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների մասին», որը վերացնում էր պետության և կոմկուսի մենաշնորհը ԶԼՄ-ների հարցում: ԶԼՄ հիմնադրելու իրավունք էր տրվում ոչ միայն պետական, կոռուկրատիվ, կրոնական և այլ կազմակերպություններին, այլ նաև քաղաքացիներին: Այդ օրենքը վերացնում էր ամեն տեսակ գրաքննություն, ինչպես նաև սահմանում էր խոսքի ազատության չարաշահման արգելքը:

ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը 1990 թ. հոկտեմբերի 9-ին ընդունեց «Հասարակական միավորումների մասին» օրենքը, որը քաղաքացիներին թույլ էր տալիս առանց որևէ արգելքի ատեղծել ցանկացած կուսակցություն, հասարակական կազմակերպություն, շարժում, հիմնադրամ՝ հասարակական և պետական գործերի կառավարմանը մասնակցելու, քաղաքացիների իրավունքները և ազատությունները պաշտպանելու, օրենքով չարգելված այլ գործունեություն իրականացնելու համար: Արգելվում էր պահանջել որևէ պաշտոնական փաստաթղթում նշում կատարել այս կամ այն հասարակական միավորմանն անդամակցելու մասին: Այս օրենքը ուղղված էր ԽՍԿԿ քաղաքական մենաշնորհների վերացմանը և կուսակցությունների իրավահավասարության ապահովմանը:

\*\*\*

Այսպիսով, վերակառուցման շրջանում ԽՍՀՄ-ում ծավալված իրավական բարենորոգումների իրականացման և սոցիալիզմի գաղափարախոսությունից ու պրակտիկայից հետ կանգնելու գործում մեծ դեր խաղացին գրաքննության թուլացումը, իրապարակայնության ու հասարակական կարծիքի ազատության սկզբունքների գարգացումը, գաղափարախոսական ու քաղաքական բազմակարծության պաշտոնական ճանաչումը, միութենական կենտրոնի դերի ու լիազորություն թուլացումը և միութենական հանրապետությունների ինքնուրույնության ուժեղացումը, շուկայական հարաբերությունների մասնակի բույլատրումը:

<sup>1</sup> Տե՛ս նոյյն տեղը, էջ 87:

<sup>2</sup> Տե՛ս Ծարքի Վ.Մ., История государства и права России. Советский и современный периоды: М., 1999, էջ 444:

<sup>3</sup> Տե՛ս նոյյն տեղը, էջ 446:

## § 9. Խորհրդային Հայաստանի իրավական պատմության քաղաքական գնահատականը

Հայաստանի երկրորդ հանրապետության իրավական համակարգի զարգացումը արտացոլում է բոլշևիզմի հաղթանակով Հայաստանում ամբողջատիրական իրավական կարգավորման հաստառումը և նրա գոյությունը տարբեր մոդեֆիկացիաներով, մինչև Երրորդ հանրապետության հոչակումը:

Ամբողջատիրությունն իր բոլոր տարբերակներով և դրանումներով պետության ինքնիշխանության սկզբունքի բացասումն է, պետական ինքնիշխանության կազմակերպման ներքին քաղաքակիրք ձևերի և դրանց հետ անհրաժեշտորեն կապված համընդհանուր իրավական նորմերի, ընթացակարգերի փոխարինումն է արտակարգ, ուղղակի բռնության կամ դրա կիրառման սպառնալիքի վրա հենցող քաղաքական իշխանական կառույցներով, ինստիտուտներով, նորմերով: Այդպիսի ամբողջատիրությունն ինքնին նշանակում է իրավունքի և պետության արմատական բացասում, անհատի իրավունքների և ազատությունների, քաղաքացիական հասարակության անկախության բացասում: Վերջինս լրիվ քաղաքականացվում է, գրկում է ինքնուրույնությունից, քայլավում և կլանվում է ամբողջատիրական հանակարգի կողմից:

Իրական սոցիալիզմի ամբողջատիրական համակարգն անհամատեղելի էր ազատության, իրավունքի, պետականության հետ: Լրիվ կոմունիզմի օրոր պետության և իրավունքի մահացումը, որ կանխագուշակում էր մարս-լենինյան գաղափարախությունը, իրականում իրենից ներկայացնում էր գործուն, քաղաքակիրք պետականացված նորմերի ու ինստիտուտների (ներառյալ նաև իշխանությունների տարանջատման) բացասում արդեն սոցիալիզմի օրոր և դրանց փոխարինում պրոլետարական-կոմունիստական դիկտատուրայի վարչական ակտերով ու պատժի հիմնարկներով: Իրական քաղաքական իշխանությունն անբաժանելիորեն գտնվում էր կոմկուսի ձեռքին, իսկ տարբեր տեսակի

պետական կառույցները (խորհուրդներ, գործադիր և դատական մարմիններ) լրիվ կախված էին կուսակցական որոշումներից և քողարկիչ դեր էին խաղում:

Պրոլետարիատի դիկտատուրայի համակարգում կոմկուսի դեկավար դերը բացառում էր բուն իշխանությունների բաժանման հնարավորությունը: Այստեղ, ինչպես և այլ դեպքերում, սոցիալիստական շինարարությունը հենվում էր կոմունիստական դրկտրինայի վրա: Մարքսը Փարիզի կոմունայի փորձի վերլուծության ժամանակ հիմնավորեց մեկ հիմնարկությունում օրենսդիր և գործադիր իշխանության միավորման անհրաժեշտությունը<sup>1</sup>: Լենինը պաշտպանեց այդ դրույթը. «Կոմունան պետք է լիներ ոչ թե պառլամենտական, այլ աշխատող հիմնարկություն, միաժամանակ և օրենսդիր և օրենքները կատարող»<sup>2</sup>:

Պրոլետարիատի դիկտատուրան իր հակապառլամենտարիզմով, իշխանությունների տարանջատման ու մարդու իրավունքների մերժմամբ, ուժային նորմերի գերիշխանությամբ և այլն, ըստ մարքսիզմի, պետք է պահպանվեր մինչև «լրիվ կոմունիզմ»: Այդ դրկտրինան սոցիալիզմի համար այլ պետություն, բացի կուսակցական դասակարգային դիկտատուրայից, չէր նախատեսում: Որպեսզի ազատվի ստալինյան տեռորի պայմաններում իրեն վարկաբեկած պրոլետարիատի դիկտատուրա հասկացնությունից, 60-ական թվականների սկզբներին կոմկուսն առաջ քաշեց պրոլետարիատի դիկտատուրայից համաժողովրդական պետության անցնելու վերաբերյալ դրույթը: Սակայն ինչպես այդ դրույթը, այնպես էլ դրա ամրագրումը բրեժենյան 1977 թ. Սահմանադրության մեջ, կրում էր դեկլարատիվ բնույթ, քանի որ, ըստ Էռլիքյան, անձեռնմխելի էին մնում պրոլետարիատի դիկտատուրայի բոլոր նախկին հիմքային և վերնաշենքային կառույցները՝ ԽՄԿ մենաշնորհային կառավարմամբ:

Կուսակցական-քաղաքական դիկտատուրայի այդ կառույց-

<sup>1</sup> Տե՛ս Լ ձեռն Է., Յիշաքան Օ., մ՛մ. Օ. 17, էջ 345:

<sup>2</sup> Տե՛ս Էնթե Ա. Է., Ի 1 էջ. մ՛մ ած. Օ. 33, էջ 46:

ները, որը անվանում են նաև վարչահրամայական համակարգ, պահպանեցին իրենց ուժը և դիրքերը նաև վերակառուցման տարիներին, եթե ժողովրդավարական ուժերի ազդեցության տակ ստիպված եղան գնալ որոշ զիջումների՝ հարաբերականորեն ազատ և այլնտրանքային ընտրություններ, բարձրագույն ներկայացուցչական և գործադիր մարմինների մասնակի բարենորոգում, ԽՍՀՄ մշտական գործող Գերագույն խորհրդի կազմավորում, ԽՍՀՄ պրեզիդենտի ինստիտուտի ներմուծում, ԽՍԿԿ դեկավար և ուղղություն տվող դերի վերաբերյալ սահմանադրական նորմի վերացում: 1988 թ. ԽՍԿԿ համամիութենական 19-րդ կոնֆերանսը հոչակեց, որ սկզբունքորեն կարևոր նշանակության գործ է համարվում սոցիալիստական իրավական պետության՝ որպես սոցիալիզմին լրիվ համապատասխանող քաղաքական իշխանության կազմակերպման ձևի, կառուցումը: Սակայն ինչպես դա, այնպես էլ շատ դրույթներ՝ քաղաքական, տնտեսական, իրավական և ազգային-պետական վերափոխումների ոլորտում մնացին որպես մտադրությունների մասին հոչակագիր:

Քաղաքական հետագա իրադարձությունները և խորհրդային դեկավարության դիրքորոշումները ցույց տվեցին, որ իրական սոցիալիզմը իր մարքս-լենինյան-ստալինյան մոդելով (սոցիալիստական պետական սեփականության գերիշխանությամբ, դիկտատուրայով, կուսակցական իշխանության մենաշնորհով, իրամայական պլանով, կայսերական կենտրոնի դիկտատուրայով միութենական հանրապետությունների նկատմամբ, կառավարման և տնտեսավարման բռնի մերողներով) իրականում վերակառուցվել չի կարող, որովեհու ամեն մի շարժում դեպի իրավունքը, անհատի ազատությունը, մարդկանց սեփականության իրավունքի սուբյեկտ ճանաչելը, շուկա, քաղաքացիական հասարակություն, իրավական պետություն, անխուսափելիորեն հանգեցնում է սոցիալիզմի շրջանակներից դուրս գալուն: Հենց սրանով էր պայմանավորված կոմկուսի դեկավարությամբ իրականացվող վերակառուցման քաղաքականության անհաջողությունը:

## ԲԱԺԻՆ 5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԻ ՆՈՐՍԱՏԻՎԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ԿԱՅԱՑՄԱՆ ՓՈԽԵՐԸ (1990-1995 ԹԹ.)

### ԳԼՈՒԽ 13. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՋԱԿԱԳԻՐԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ, ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՍՏԱԿԱԳՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄԸ

**§ 1. Գերագույն խորհրդի 1990 թ. մայիսյան ընտրությունները և Հայաստանի անկախության հոչակագիրի ընդունումը,  
դրա քաղաքական իրավական նշանակությունը**

ՀԽՍՀ 1978 թ. Սահմանադրությամբ ամրագրված ընտրական համակարգի հիմունքները ձևական իրավաբանական առումով բավականին ժողովրդավարական բնույթ ունեին: Սակայն ամրողատիրական հասարակության և կոմկուսի քաղաքական մենաշնորհի պայմաններում դրանք ծեռք էին բերում հակաժողովրդավարական, ոչ իրավական բնույթ, որովհետև չկար «ընտրություններ» կոչված գործընթացի համար անհրաժեշտ ամենակարևոր հատկությունը՝ այլնտրանը: Հարկադրական գաղափարաքաղաքական մենաշնորհության, կազմակերպված ընդիմության ու անկախի «չորրորդ իշխանության» բացակայության պայմաններում ընտրությունները վերածվում էին ձևականության:

Ընտրությունները՝ որպես ժողովրդակիշխանության ձև, իմաստ ունեն միայն այն ժամանակ, եթե ազատ են, քաղաքացիներին հնարավորություն են տալիս ընտրելու մի քանի թեկնածուներից մեկին, իսկ դրանց արդյունքները չեն կեղծվում: Այլնտրանքային ընտրությունների՝ որպես «հասարակական համախառն իմաստնություն» վեր հանելու, հասարակական զարգացման միջտ ուղիները որոնելու միջոցի բացակայությունն էլ հենց վերջին հաշ-

վով հանգեցրեց սոցիալստական համակարգի փլուզմանը:

Գորբաչովի իշխանության գալով ԽՍՀՄ-ում հոչակվեց տնտեսական, քաղաքական, սոցիալ-մշակութային ոլորտների բարենորոգման անհրաժեշտություն՝ «արագացման», «հրապարակայնության», «վերակառուցման» ճանապարհով։ Հրապարակայնության և վերակառուցման քաղաքականությունը բնակչության աշքում հեղինակագրեցին կոմկուսին և խոհրդային պետությանը։ Դժգոհությունը հատկապես ահազմանում էր տնտեսության ճգնաժամի և սպառման ապրանքների «գեֆիցիտի» պատճառով։ Բնակչության ժողովրդավար տրամադրված զանգվածները պահանջում էին վերացնել ԽՍՀՄ Սահմանադրության 6-րդ հոդվածը, որն ամրագրում էր կոմկուսի դեկավար և ուղղություն տվյող դերը։

Կոմկուսը նոր պայմաններում, 1988 թ. ամռանը հրավիրված ԽՍԿԿ 19-րդ համամիութենական խոհրդակցությունում հոչակեց քաղաքական համակարգի խոր բարեփոխումների և սոցիալստական իրավական պետության ձևավորման քաղաքականությունը։ ԽՍԿԿ 19-րդ խորհրդակցության ընդունած բանաձերի ուժով ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը 1988 թ. դեկտեմբերի 1-ին ընդունեց օրենք ԽՍՀՄ Սահմանադրության (Հիմնական օրենքի) փոփոխությունների և լրացումների մասին<sup>1</sup>։ Այդ օրենքով կատարված նորամուծությունների մի մասը վերաբերում էր ընտրական իրավունքին։

Այս օրենքով սահմանվեց, որ ժողովրդական պատգամավորության թեկնածուների թիվը չի սահմանափակվում։ Նախընտրական ժողովի յուրաքանչյուր մասնակից կարող է քննարկման համար առաջարկել ցանկացածի թեկնածությունը, այդ թվում նաև իրեն։ Քվեաթերթիկների մեջ կարող էին մտցվել ցանկացած թվով թեկնածուներ։

1988 թ. դեկտեմբերի 1-ին ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը ըն-

դունեց սահմանադրական նորամուծություններին համապատասխանեցված «ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատների ընտրությունների մասին օրենքը»<sup>1</sup>։ Այդ օրենքի հիման վրա 1989 թ. անցկացվեցին ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների համագումարի ընտրությունները։ Դրանք իրավես այլընտրանքային և բազմակարծության պայմաններում ընթացած ընտրություններ էին, որ հնարավորություն տվեցին ընտրվելու նաև նախկին այլախոհներին։

Քաղաքական կյանքի հրապարակայնությունը և ժողովրդավարականացումը հասարակությանը հնարավորություն տվեցին ազատ արտահայտելու իրենց մտքերը, քննադատելու խորհրդային իշխանությունը և կոմկուսին, անմիջական մասնակցություն ունենալու երկրի հասարակական և քաղաքական կյանքին, ստեղծելու հասարակական անկախ կազմակերպություններ, կուսակցություններ, շարժումներ։ Տարածում գտան նաև գործադրությունները։ Սիութենական շատ հանրապետություններում զարդոնք ապրեցին ազգային և անջատողական տրամադրությունները։

Հայաստանում ընդիհանուր ժողովրդավարական շարժումը ձեռք բերեց ազգային ազատագրական շարժման տեսք՝ հանձինս «Ղարաբաղյան շարժման», որը 1988 թ. դեկավարում էր «Ղարաբաղ կոմիտեն»։ 1989 թ. նոյեմբերին «Ղարաբաղ կոմիտե» նախաձեռնությամբ ձևավորվեց Հայոց համազգային շարժումը։ Շարժման դեկավարները, բացի Ղարաբաղի ազգային-ազատագրական պայքարը դեկավարելուց, իրենց առջև դրել էին նաև մի շարք քաղաքական խնդիրներ, որոնցից մեկն էլ մասնակցությունն էր 1990 թ. մայիսի 20-ին տեղի ունենալիք ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ընտրություններում։

Հայոց համազգային շարժումը Հայաստանի Գերագույն խորհրդի պատգամավորների այլընտրանքային ընտրություններում հաղթեց Հայաստանի կոմունիստական կուսակցությանը։

<sup>1</sup> Տե՛ս ԽՍՀՄ Գերագույն խորհրդի տեղեկագիր, թիվ 49 (2487), 7 դեկտեմբ., 1988թ., հոդվ. 727։

1990 թ. օգոստոսի 4-ին հանրապետության նորընտիր Գերագույն խորհրդի նախագահ ընտրվեց Հայոց համազգային շարժման վարչության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը, իսկ Նախարար-ների խորհրդի նախագահ՝ Վազգեն Մանուկյանը:

Այսպիսով, ՀԽՍՀ 1978 թ. Սահմանադրությամբ ամրագրված ընտրական համակարգի թերություններից մեկը հաղթահարվեց վերակառուցման քաղաքականության արդյունքում այլընտրանքային ընտրական համակարգի սահմանման միջոցով։ Այդ տարիներին, ինչպես ամբողջ ԽԽՍՀ, այնպես էլ ՀԽՍՀ մասշտարով հաստատվել էր շատ բարենպաստ քաղաքական վարչաձև։ Վարչաձևն, որն իրենում ներդաշնակորեն գուգակցում էր սոցիալիստական և բուրժուական կոչված ժողովրդավարությունների լավագույն նվաճումները, սոցիալիզմի սոցիալ-տնտեսական երաշխիքները և շուկայական ժողովրդավարության քաղաքական ազատությունները։ Ներդաշնակություն, որ չկար մինչև վերակառուցումը և, որպես կայուն միտում, չպահպանվեց անկախ պետականության շրջանում, որովհետո իրավական բնույթ ունեցող նորացված ընտրական համակարգի պայմաններում խեղաթյուրվեց քաղաքական պետական ռեժիմը, ինչի հետևանքով կյանքի կոչվեցին «կեղտոտ ընտրական կառուցակարգերը», ընտրական խաղերը, սոցիալական դեմագոգիան։

Այսպիսով, գորբաշովյան վերակառուցման անխուսափելի հետևանքը խորհրդային հանրապետությունների անկախացման գործընթացն էր։ 1990 թ. օգոստոսի 23-ին Հայաստանի Գերագույն խորհրդային ընդունեց «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին», որով դրվեց անկախության գործընթացի սկիզբ։

### ՀՌՉԱԿԱԳԻՐ

#### Հայաստանի անկախության մասին

Հայկական ԽԽՍՀ Գերագույն խորհուրդը՝  
արտահայտելով Հայաստանի ժողովրդի միասնական կամ-

քը,

գիտակցելով իր պատասխանատվությունը հայ ժողովրդի ճակատագրի առջև համայն հայության իղձերի իրականացման և պատմական արդարության վերականգնման գործում,

ելնելով Մարդու իրավունքների համբնդիանուր հրչակագրի սկզբունքներից և միջազգային իրավունքի համրածանաց նորմերից,

կենսագործելով ազգերի ազատ իմքնորոշման իրավունքը, իմնակելով 1989 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայկական ԽԽՍՀ և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» Հայկական ԽԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ որոշման վրա,

զարգացնելով 1918 թվականի մայիսի 28-ին ստեղծված անկախ Հայաստանի Հանրապետության ժողովրդավարական ավանդույթները,

խնդիր դնելով ժողովրդավարական, իրավական հասարակագրի ստեղծումը,

### ՀՌՉԱԿՈՒՄԸ ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՄԿԻՉՁՔԸ:

1. Հայկական ԽԽՍՀ-ն վերանվանվում է Հայաստանի Հանրապետություն, կրօնած՝ Հայաստան։ Հայաստանի Հանրապետությունը ունի իր դրոշը, զինանշանը և հիմնը։

2. Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան պետություն է՝ օժտված պետական իշխանության գերակայությամբ, անկախությամբ, լիիրավությամբ։ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում գործում են միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և օրենքները։

3. Հայոց պետականության կրողը Հայաստանի Հանրապետության ժողովուրդն է, որն իր իշխանությունն իրագործում է անմիջականորեն և ներկայացուցական մարմինների միջոցով՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքների

հիման վրա: Հանրապետության ժողովրդի անունից հանդես գալու իրավունքը պատկանում է բացառապես Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդին:

4. Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող բոլոր քաղաքացիների համար սահմանվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն: Արտերկրի հայությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիության իրավունք ունի: Հայաստանի Հանրապետության քաղաքացիության գտնվում են նրա պաշտպանության և առաջկցության ներքո: Հայաստանի Հանրապետությունը ապահովում է իր քաղաքացիների ազատ ու իրավահավասար զարգացումը՝ անկախ ազգությունից, ուսայական պատկանելությունից և դավանանքից:

5. Հայաստանի Հանրապետությունը իր անվտանգությունը և սահմանների անձնունիշներությունն ապահովելու նպատակով ստեղծում է Գերագույն խորհրդին ենթակա սեփական զինվածութեր, ներքին գորքեր, պետական և հասարակական անվտանգության մարմիններ: Հայաստանի Հանրապետությունը ունի ԽՍՀՄ սպառազինության իր մասնաբանի իրավունքը: Հայաստանի Հանրապետությունը ինքն է որոշում իր քաղաքացիների զինվորական ծառայության կարգը:

Այլ երկների գորամիավորումները, նրանց ուազմական բազաները և շինությունները կարող են տեղաբաշխվել Հայաստանի Հանրապետության տարածքում միայն Գերագույն խորհրդի որոշմամբ:

Հայաստանի Հանրապետության զինվածությունը կարող են օգտագործվել միայն նրա Գերագույն խորհրդի որոշմամբ:

6. Հայաստանի Հանրապետությունը, որպես միջազգային իրավունքի սուրբեկություն, վարում է անկախ արտաքին քաղաքականություն, անմիջական հարաբերություններ է հաստատում այլ պետությունների, ԽՍՀՄ, ազգային-պետական կազմավորումների հետ, մասնացում է միջազգային կազմակերպությունների գործունեությանը:

7. Հայաստանի Հանրապետության ազգային հարստությունը՝ հողը, ընդերքը, օդային տարածությունը, ջրային և այլ բնական պաշարները, տնտեսական, մտավոր, մշակութային կարողությունները նրա ժողովրդի սեփականությունն է: Դրանց տիրապետման, օգտագործման և տնօրինման կարգը որոշվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով: Հայաստանի Հանրապետությունն ունի ԽՍՀՄ ազգային հարստություն, այդ բվում ուկու պաշարների, ալմաստի և վայրուտային ֆոնդերի մասնաբաժնի իրավունքը:

8. Հայաստանի Հանրապետությունը սեփականության բազմաձևության հիման վրա որոշում է իր տնտեսվարման սկզբունքները և կարգը, հիմնում սեփական դրամ, ազգային բանկ, ֆինանսավարկային համակարգ, հարկային և մաքսային ծառայությունները:

9. Հայաստանի Հանրապետությունն իր տարածքում ապահովում է՝

խոսրի, մամուլի, խոճի ազատություն.

օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատում.

բազմակուսակցությունների իրավահավասարությունը, իրավապահ մարմինների և զինվածությունների ապարագականացում:

10. Հայաստանի Հանրապետությունն ապահովում է հայերենի, որպես պետական լեզվի, գործառնությունը հանրապետության կյանքի բոլոր որորտներում, ստեղծում կրթության, գիտության և մշակույթի սեփական համակարգը:

11. Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915 թվականի Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործիմ:

12. Սույն Հռչակագիրը հիմք է ծառայում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մշակման, իսկ գործող սահ-

մանադրության մեջ՝ փոփոխությունների և լրացումների կատարման, պետական մարմինների գործունեության, հանրապետության նոր օրենսդրության մշակման համար:

ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ՝ *L. ՏԵՐ-ՄԵՏՐՈՍՅԱՆ*  
ՀՀ Գերագույն խորհրդի քարտուղար՝ *Ա. ՍԱՀԱԿՅԱՆ*  
23 օգոստոսի 1990 թվականի, քաղ. Երևան

Անկախության հռչակագրի ընդունումը հայոց պետականության զարգացման պատմության մեջ սկզբնավորեց զարգացման նոր՝ Հայաստանի երրորդ հանրապետության շրջանը։ Անկախության սկիզբը հռչակած Երրորդ հանրապետության քաղաքական դեկավարության առջև կանգնում էր կարևոր խնդիր՝ որոշել պետականական համակարգի ռազմավարական զարգացման ուղղությունը։ 1990 թ. օգոստոսի 23-ի Հայաստանի Անկախության մասին հռչակագիրը ազդարարեց այդ ռազմավարության իրավական ամրագրումը և պաշտոնականացումը։ Այդ հռչակագիրը, հայտարարելով հայկական պետության անկախության գործընթացի սկիզբը, հռչակում էր նաև այն իհմքերը, ռազմավարական խնդիրները, պատմաքաղաքական նախադրյալները, որոնք ընկած էին անկախության քաղաքական-իրավական սկզբնավորման հիմքում։

Անկախության հռչակագիրը խորհրդային հանրապետությունների «ֆնքնիշխանության շքերթում» առաջինը չէր։ Պատմական տարօրինակությունն այն է, որ կայսրության իիմքը կազմող ՌԽՖՍՀ-ն դեռևս 1990 թ. հունիսի 19-ին ընդունել էր «Հռչակագիր ՌԽՖՍՀ պետական ինքնիշխանության մասին», որում, ի տարբերություն Հայաստանի, միանգամից հայտարարվում էր Ռուսաստանի օրենքների գերակայությունը դաշնային օրենքների նկատմամբ<sup>1</sup>։ Այսպիսով, ՌԽՖՍՀ-ն ոչ միայն ժամանակով, այլև

արմատականությամբ առաջամարտիկ էր՝ ի տարբերություն Հայաստանի, որը որդեգրել էր ավելի զգույշ քաղաքականություն՝ պայմանավորված Ղարաբաղի հիմնահարցով։

**§ 2. Հայաստանի անկախության հռչակագրի նախանշած ժողովրդավարական, իրավական հասարակությունը՝ որպես զարգացման ռազմավարություն, և իրավական բարեկինխումների հիմնական ուղղությունները**

Հայաստանի համար առաջանում էր իրավական բարեկինխումների ռազմավարության ընտրության հարցը՝ կամ շարունակել նախորդ իրավական համակարգի էվոլյուցիոն վերափոխումները, կամ էլ կատարել դրա արմատական հեղարեկում։ Երկրորդ ուղղության դեպքում առաջանում էր սահմանադրական-իրավական մարտավարության խնդիրը։ Հայաստանի իրավական զարգացման ռազմավարության ընտրությունը կատարվեց որոշակի գործոնների և պայմանների ազդեցությամբ։ Դրանցից էին համաշխարհային մասշտարով պետականության և իրավական համակարգերի՝ որպես սոցիալական ինստիտուտների վիճակը և զարգացման միտումները, Հայաստանի պետականական զարգացման պատմական փորձը, խորհրդային պետական կառավարման և իրավական կարգավորման համակարգերի ճգնաժամը, դրանով պայմանավորված նոր աշխարհաքաղաքական վիճակը։

Ռազմավարության ընտրությունը կատարվեց 1990 թ. օգոստոսի 23-ի Անկախության հռչակագրով, որը, «հռչակելով անկախ պետականության հաստատման սկիզբը», խնդիր դրեց ստեղծել «ժողովրդավարական, իրավական հասարակարգ»։ Այսպիսով, Հայաստանի պետական իշխանության բարձրագույն մարմինը ծրագրային-իրավական բնույթ ունեցող Հռչակագրով որպես ռազմավարական նպատակ սահմանեց «ժողովրդավարական և իրավական հասարակության» կառուցումը։

<sup>1</sup> Տե՛ս Ստեփենկո Լ.Ա., Ռամիկ Տ.Մ., История государства и права России: Академический курс. В 2-х т., Т. 2, XX в.- М., 2003, էջ 404:

Այս ուզմավարությունը Հայաստանում չուներ պատմական նախադրյալներ: Ժողովրդավարության գաղափարը հայ իրականության մեջ առօրեական քաղաքականության առարկա դարձավ միայն հայոց պետականության վերածննդրվ՝ Առաջին հանրապետության հոչակմամբ: Սակայն դժվարին պայմաններում նորոնր ձևավորված ժողովրդավարական կարգերը և ինստիտուտները չունեցան իրենց բնականոն պատմական զարգացումը, որովհետև ընդհատվեցին բոլշևիկյան ամբողջատիրության և պրոլետարիատի դիկտատորայի հաստատմամբ: Կոմունիստական գաղափարախոսությունը մերժում էր համաշխարհային քաղաքակրթության ամենամեծ նվաճումներից մեկը՝ ժողովրդավարությունը, և դրա իրացման քաղաքակիրք ձևերը, ինստիտուտներն ու ընթացակարգերը: Այսպիսով՝ նոր հոչակված հանրապետության համար սոցիալիստական պետախրավական զարգացման փորձն անընդունելի էր, որովհետև այն կառուցված էր պետության և իրավունքի մարքսիստական-դասակարգային հայեցակարգի հիմնադրույթների վրա: Այս պայմաններում կարևորվում էր ընդօրինակման արժանի համաշխարհային փորձը:

XX դարի վերջերին աշխարհը հսկայական առաջընթաց է ապրել ժողովրդավարության գաղափարների կենսագործման, ժողովրդավարության ինստիտուտների կայացման ուղղությամբ: Համաշխարհային քաղաքական-իրավական մտքի վերլուծությունը վկայում է, որ նորագույն աշխարհում ժողովրդավարության մողելի հիմնական հենասյուներն են մարդու իրավունքները (ազատությունը), քաղաքացիական հասարակությունը, սոցիալական-իրավական պետությունը:

Այս հայեցակարգում պետությունը և քաղաքացիական հասարակությունը միմյանց ժողովրդավարականացման պայմաններ են: Պետական իշխանության ինստիտուտները միջոցներ են, որոնց օգնությամբ կենսագործվում են իրավական օրենքները, հոչակվում է սոցիալ-տնտեսական քաղաքականությունը, սանձգում և իրավական շրջանակի մեջ են դրվում հասարակական հա-

կամարտությունները, այլ կերպ ասած, պետական իշխանությունը քաղաքացիական հասարակության գոյության ու գործունեության քաղաքական-իրավական երաշխավորն է: Մյուս կողմից՝ քաղաքացիական հասարակությունը իր խայտարդետ կազմակերպություններով վերահսկում է քաղաքական-պետական «ներկայացուցիչներին», զայտում և հակաշշում է պետական իշխանությանը: Այլ կերպ ասած, առանց անկախ, ինքնակարգավորվող, այլուրախատական քաղաքացիական հասարակության՝ ժողովրդավարությունը, ազատությունը և հավասարությունը կվերածվեն դատարկ կարգախոսների, իսկ առանց պետության հուսալի պաշտպանության, վերաբաշխման ու հակամարտությունների լուծման գործառույթների՝ քաղաքացիական հասարակությունը կծնի անազատության և անհավասարության նոր ձևեր<sup>1</sup>: Պետությունը և քաղաքացիական հասարակությունն իրար կապող օղակը՝ որպես երկուսի ժողովրդավարականացման պայման, մարդն է՝ իր բնական և անօտարելի իրավունքներով: Իրավական կարգավորման ողջ իմաստը պետական իշխանության, քաղաքացիական հասարակության և մարդու ազատության միջև ներդաշնակ հավասարակշռության հաստատումն է:

Անկախության հոչակարգի իրավական նշանակությունը Հայաստանի իրավական համակարգի համար հստակ էր. այն՝ որպես նպատակային, ծրագրային բնույթի ակտ, ամրագրեց իրավական բարեփոխումների մի ռազմավարություն, որի խնդիրն էր խելամիտ, հավասարակշռված ինստիտուցիոնալ-սահմանադրական վերակառուցումների միջցողով իրավանցնել հասարակական բոլոր հիմնարար կառույցների ժողովրդավարականացումը, Հայաստանում կայացնել քաղաքացիական հասարակություն, իրավական, սոցիալական պետություն, մարդու իրավունքներ:

Զարգացման նման ռազմավարությունը չուներ ոչ մի ներքին խոշնդուտ, նույնիսկ քաղաքակրթական: Հայկական մշակույթն իր արժեքային համակարգով չէր հակասում ժողովրդավարությունը:

<sup>1</sup>Տե՛ս Կին Ջոն, Դեմոկратия и гражданское общество. М., 2001, էջ 50:

յան համընդիանուր հայեցակարգի հիմնարար սկզբունքներին: Միակ խոշնոտը քաղաքական բնույթ ուներ՝ պայմանավորված խորհրդային պետափրավական համակարգի գոյությամբ, որը, սակայն, հաղթահարելի էր, հատկապես, որ Անկախության հոչակագիրը ստեղծում էր դրա նախադրյալները: Անկախության հոչակագիրը այդ ռազմավարության կենսագործման իրավական բարեփոխումների մարտավարական ուղղություններ էր ճանաչում ՀՀ ինքնիշխանության երաշխիքները, սահմանադրական օրենսդրության ապագաղափարականացումը, քաղաքական ու գաղափարական այլակարծիքության ճանաչումը, «իշխանությունների բաժանման» կիրառման անհրաժեշտությունը, անցումը քաղակացության տնտեսական համակարգին:

Հայաստանում սկզբնավորվում էր նոր տիպի իրավունք, որին զուգահեռ պետք է ձևավորվեր նաև իրավագիտության նոր դպրոցը և լծեր ամբողջատիրությունից հրաժարվելու և ժողովրդավարական, իրավական պետություն կառուցելու գործին: Իրավագիտությունը ապրում էր դժվարին շրջան: Նրա առջև կանգնած էր իր մերողաբանական զինանոցը վճռականորեն վերակառուցելու խնդիրը, ազատազրվելով մարքսիզմ-լենինիզմի ճիրաներից: Այդ ժամանակներից սկսած՝ հայ իրավագիտության մեջ առաջ եկան սկզբունքորեն նոր մոտեցումներ և հայեցակարգեր, որոնք հայ իրավունքի զարգացումը կապեցին համաշխարհային իրավական գիտության նվաճումների հետ: Իրավագիտությունը կարող է դառնալ իրական գիտություն միայն կարծիքների բանական քազմականության, իրավական իրականության նկատմամբ քննադատական վերաբերմունքի հիման վրա: Մարքսիզմը, ինչպես և ցանկացած այլ ուսմունք, չունի մենաշնորհի իրավունք: Բայց նաև ոչ որ իրավունք չունի արգելելու մարդսիզմը, քանի որ այն եղել և մնում է խոշորագույն քաղաքական ուսմունք: Այլ է մարքսիզմ-լենինիզմի պրակտիկան, որն ապացուցեց, որ կոմունիզմը անրաժանելի է քոնությունից:

### § 3. Սահմանադրական կարգավորման հիմնախնդիրները 1990-1991 թթ. և Սահմանադրության նկատմամբ ընթացիկ օրենքների գերակայության հաստատումը

Անկախության գործընթացի սկիզբը հոչակած Հայաստանի Հանրապետության համար իրավական համակարգի գործողությունը և դրա առաջընթացը հայտնվել էին քավականին բարդ և հակասական իրավիճակում: 1990 թ. դեռևս գրյատևում էր ԽՍՀՄ, Հայաստանի Հանրապետությունը համարվում էր խորհրդային դաշնության սուբյեկտ: Դրանով իսկ անկախ պետականության կառուցման քաղաքականություն որդեգրած հանրապետությունն իր իրավական հիմքերով հայտնվել էր հակասական իրավիճակում: Այդ հիմքերը սահմանված էին ԽՍՀՄ, ինչպես նաև ՀԽՍՀ սահմանադրական և ընթացիկ օրենսդրությամբ, որին գումարվում էր Հայաստանի երրորդ հանրապետության նորընտիր Գերագույն խորհրդի օրինասեղծ գործունեության արդյունքում ստեղծված օրենսդրությունը:

Սովորական պայմաններում այդ իրավիճակը հակասական չէր կարող դառնալ, սակայն խորհրդային հասարակության պայմաններում այն ձեռք էր բերում նույնիսկ անտագոնիստական բնույթ, որովհետև խորհրդային պետափրավական համակարգի հիմքում ընկած իրավական սկզբունքները սուր հակասության մեջ էին նոր որդեգրված պետափրավական սկզբունքների հետ: Ըստ էության Անկախության հոչակագիրի ընդունումն ազդարարում էր սահմանադրական իրավական զարգացման նոր ռազմավարություն, որը ներառում էր բարեփոխումներ մի քանի ուղղություններով՝ մարդու իրավունքների առաջնայնության ապահովում, ՀՀ իրական ինքնիշխանության ապագաղափարականացում, քաղաքական և գաղափարական այլակարծություն, իշխանությունների բաժանում, անցումը շուկայական տնտեսության համակարգին:

Այս ուղղություններով իրականացվելիք իրավական նորա-

մուծություննեն իրենց հայեցակարգային բովանդակությամբ հակասության մեջ էին մտնում առկա սահմանադրական իրավական իրողությունների հետ:

Այսպիսով՝ իրավական քաղաքականության մեջ տեղի էր ունենում շրջադարձ. ամբողջատիրական, մարքսիստական խորհրդային սոցիալիստական իրավունքից անցում էր կատարվում իրավական նոր համակարգի, որի հայեցակարգային հիմքերն էին իրավական, ժողովրդավարական, սոցիալական և ինքնիշխան պետության հիմնարար սկզբունքները (տեսությունները): Այս պայմաններում սահմանադրական կարգավորումը հայտնվեց ճգնաժամային իրավիճակում:

Հայաստանի երրորդ հանրապետության պայմաններում ընթացող իրավական բարենորոգումները իրենց նորմատիվ ամրագրումն էին ստանում ՀԽՍՀ 1978 թ. Սահմանադրության մեջ՝ լրացումների, փոփոխությունների տեսքով: 1990-1991 թթ. ընթացքում ՀԽՍՀ 1978 թ. Սահմանադրության տեքստը բազմից և էականորեն փոփոխվել է: Օրինակ՝ «ՀՀ Սահմանադրության (Հիմնական օրենքի) և ՀՀ մյուս օրենսդրական ակտերի հայերեն տեքստերում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 1990 թ. նոյեմբերի 5-ի օրենքը, «ՀՀ Սահմանադրության (Հիմնական օրենքի) մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» ՀՀ 1990 թ. նոյեմբերի 13-ի օրենքը, «ՀՀ Սահմանադրության (Հիմնական օրենքի) մեջ և ՀՀ մյուս օրենսդրական ակտերում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 1991 թ. ապրիլի 15-ի օրենքը և այլն<sup>1</sup>:

Այսպիսով, մի կողմից Հայաստանի Հանրապետության անդամակցությունը խորհրդային դաշնությանը և դրանով պայմանավորված դաշնային օրենսդրության առաջնությունը հանրապետական օրենսդրության նկատմամբ, դաշնային կառավարման ճգնաժամը, Դարարաղի հիմնախնդիրը՝ որպես քաղաքական գործուներ, կասեցրին նոր սահմանադրության մշակման և ըն-

դունման գործընթացը: Հետևաբար 1990 թ. օգոստոսի 23-ից մինչև 1990 թ. դեկտեմբերի 10-ը իրավական բարեփոխումներն ընթանում էին առանձին ընթացիկ օրենքների ընդունմամբ և դրանով պայմանավորված՝ ՀԽՍՀ Սահմանադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելով:

Սակայն էին Սահմանադրության մասնակի նորացումը չեր վերացնում նոր Սահմանադրության ընդունման անհրաժեշտությունը, ընդհակառակը, ավելի իրամայական էր դարձնում այս: Գործող Սահմանադրությունը էական ներքին հակասությունների մեջ էր նոր սահմանադրական կարգերի հետ: Այն պարունակում էր դրույթներ, որոնք ենթում էին խորհրդային-կոմունիստական նախկին համակարգի գաղափարներից ու սկզբունքներից, չեն համապատասխանում իշխանությունների տարանջատման, պառամենտարիզմի, իրավական պետության, քաղաքացիական հասարակության պահանջներին:

Գործող Սահմանադրությանն էին հակասում նաև նոր ընդունվող ազատական-իրավական օրենքները: Այդ հակասությունն անհնար էր լուծել առկա սահմանադրական-իրավական միջոցներով: Գրեթե ամեն մի նոր օրենք ընդունելիս անհրաժեշտ էր փոփոխություններ և լրացումներ կատարել Սահմանադրության մեջ: Այդպիսի իրավիճակում կար երկու ելք՝ կա՞մ նոր Սահմանադրության նախագծի անհապաղ մշակում ու ընդունում, կա՞մ անընդհատ փոփոխություններ և լրացումներ կատարել գործող Սահմանադրության մեջ: Սակայն վերջին ճանապարհը մի կողմից շատ բարդ ու դժվարին գործ էր՝ իրավաբանական տեխնիկայի տեսակետից, իսկ մյուս կողմից՝ դանդաղեցնում էր ընթացիկ օրենսդրական գործընթացը:

Այս պայմաններում իշխանությունները գնացին շատ ուրույն և հետաքրքիր ճանապարհով: 1990 թ. դեկտեմբերի 10-ին ընդունվեց «Սահմանադրական օրենք «Հայաստանի անկախության մասին» հռչակագիրն համապատասխան ընդունված օրենսդրական ակտերի մասին», որի համաձայն՝ «Մինչև ՀՀ Սահմանադ-

<sup>1</sup> Տես ՀՀ գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.), Եր., 1995, էջ 39-40, 131:

բության ընդունումը դադարեցվում էր գործող Սահմանադրության այն դրույթների գործողությունը, որոնք հակասում էին «Հայաստանի անկախության մասին» հռչակագրի հիման վրա ՀՀ Գերազույն խորհրդի կողմից ընդունված օրենքներին»:

Փաստորեն, այդ օրենքի ընդունմամբ՝ հանրապետության օրենսդիր մարմինը բռնում էր գործող Սահմանադրության մեջ փոփոխություններ և լրացումներ չկատարելու ուղին: Նման «լրացող» իրավաբանական ձևակերպումը հակասական իմաստ ուներ, որովհետև ստացվում էր, որ ՀՀ-ն և ուներ Սահմանադրություն, և չուներ: 1990 թ. դեկտեմբերի 10-ին ընդունված «Հայաստանի անկախության մասին» հռչակագրին համապատասխան ընդունված օրենսդրական ակտերի մասին» սահմանադրական օրենքի ընդունմամբ ՀԽՍՀ Սահմանադրության մեջ փոփոխություններ և լրացումներ չեն կատարվում: Ստացվում էր յուրահատուկ իրավիճակ՝ ընթացիկ օրենքների գերակայություն Սահմանադրության նկատմամբ: Այդ սկզբունքը գործեց մինչև 1995 թ. Սահմանադրության ընդունումը:

#### **§ 4. Օրենսդրական բարեփոխումների քաղաքականությունը 1990 թ. օգոստոսից մինչև 1991 թ. սեպտեմբեր**

1990-95 թթ. բարեփոխումների ռազմավարությունը մնաց նույնը, այն է՝ «Ժողովրդավարական իրավական հասարակության» կառուցումը: Սակայն իրավական բարեփոխումների իրականացման իրավատեխնիկական ձևի տեսանկյունից այդ ժամանակաշրջանը միասեռ չէ, այլ անցել է մի քանի փուլեր:

Առաջին շրջանում՝ 1990 թ. օգոստոսի 23-ից մինչև 1990 թ. դեկտեմբերի 10-ը, բարեփոխիչ օրինաստեղծ գործունեությունը տեղի էր ունենում՝ ընթացիկ օրենքների ընդունման և դրանվագայմանավորված՝ ՀԽՍՀ 1978 թ. Սահմանադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելով: Հաջորդ շրջանը ներառում է 1990 թ. դեկտեմբերի 10-ից մինչև 1991 թ. սեպտեմբերի

25-ը ընկած ժամանակամիջոցը՝ 1990 թ. դեկտեմբերի 10-ին ընդունված «Հայաստանի անկախության մասին» հռչակագրին համապատասխան ընդունված օրենսդրական ակտերի մասին» սահմանադրական օրենքով դադարեցվեց գործող Սահմանադրության այն դրույթների գործողությունը, որոնք հակասում էին «Հայաստանի անկախության մասին» հռչակագրի հիման վրա ՀՀ Գերազույն խորհրդի կողմից ընդունված օրենքներին: Այդ պահից սկսած՝ իրավական համակարգի բարեփոխումները կատարվում էին ընթացիկ օրենքների ընդունմամբ, և համապատասխանաբար՝ ՀԽՍՀ Սահմանադրության մեջ փոփոխություններ և լրացումներ չեն կատարվում, որովհետև ընթացիկ օրենքներն ունեին գերակայություն Սահմանադրության նկատմամբ:

Անկախության հռչակագրի և դրանից հետո ընդունված մի շարք օրենսդրական ակտերի վերլուծությունը ցույց է տալիս, որ իրավական բարեփոխումներն ընթացան հետևյալ հիմնական ուղղություններով:

**1. Սահմանադրական օրենսդրության ապագաղափարականացումը (պետության անվան փոփոխում, նոր խորհրդանիշների ընդունում):** 1990 թ. օգոստոսի 24-ին ընդունվեց «ՀԽՍՀ-ի վերանվանման մասին» օրենքը: Հանրապետության պաշտոնական անվանումից հանվեցին «Խորհրդային», «Սոցիալիստական» բնորոշումները: Մեր երկիրը անվանվեց Հայաստանի Հանրապետություն, կրծատ՝ Հայաստան: Փոփոխություններ կրեցին նաև պետական խորհրդանիշները՝ հաստատվեց նոր պետական դրոշը (1990 թ. օգոստոսի 24-ի «ՀՀ պետական դրոշի մասին» օրենքը), զինանշանը (1992 թ. ապրիլի 19-ի «ՀՀ պետական զինանշանի մասին» օրենքը), օրիներգը: Այդ օրենքներով վերականգնվեցին Առաջին հանրապետության խորհրդանիշները:

**2. Քաղաքական և զարարական քազմակարծության ճանաչումը:** Այս ուղղությամբ մեծ նշանակություն ուներ «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» ՀՀ օրեն-

քի ընդունումը (1991 թ. փետրվարի 26)<sup>1</sup>: Այդ օրենքը կարևոր նշանակություն ուներ քաղաքական ազատության երաշխավորման հարցում, երաշխիք էր միակուսակցական քաղաքական համակարգի վերացման համար: Այն ճանապարհ էր բացում կամավորության հիմքերով ստեղծվող հասարակական քաղաքական կազմակերպությունների ստեղծման ու գործունեության համար: Օրենքի իրավական բնորոշման համաձայն՝ «Հասարակական-քաղաքական կազմակերպությունը կամավոր հիմունքներով միավորած ՀՀ ընտրական տարիք ունեցող քաղաքացիների միավորում է, ունի ծրագիր և կանոնադրություն, ընտրությունների միջոցով մասնակցում է պետական իշխանության մարմինների կազմավորմանը, դրանց գործունեությանը, ինչպես նաև հանրապետության հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային կյանքին»:

«Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» օրենքն ամրագրեց քաղաքական բազմազանության և հասարակական-քաղաքական կազմակերպությունների իրավահավասարության սկզբունքները: Այդ իրավահավասարության ապահովմանն էր ուղղված Գերագույն խորհրդի 1991 թ. ապրիլին ընդունած որոշումը, որով պետականացվեց հայկոմկուսի և նրա փաստացի մասը կազմող ՀԼԿԵՄ-ի ամբողջ ունեցվածքը: Նման որոշումը ընդունվել էր՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ պետական իշխանության կառույցների հետ կոմկուսի սերտաճումը և կոմկուսին դեկավար դեր ինքնաշնորհելը օգտագործվել է կուսակցության ձեռքում հսկայական նյութական միջոցների կուտակման համար, ինչպես նաև որ կոմկուսի ունեցվածքը ստեղծվել էր հանրապետության քաղաքացիների մի քանի սերունդների պետական միջոցների հաշվին: Ո-Դ-ում նման որոշում ընդունվեց միայն պուտչից հետո՝ 1991 թ. օգոստոսին:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.), Եր., 1995, էջ 115-119:

**3. Ժողովրդաիշխանության սկզբունքի ճանաչումը և կենսագործումը:** 1990 թ. Անկախության մասին հոչակագիրը ամրագրեց, որ հայոց պետականության կրողը ժողովուրդն է, որն իր իշխանությունն իրագործում է անմիջականորեն և ներկայացուցչական մարմինների միջոցով՝ Սահմանադրության և օրենքների հիման վրա: 1991թ. ապրիլի 2-ին Գերագույն խորհրդը ընդունեց օրենք «ՀՀ հանրաքենի մասին», որի 1-ին հոդվածը սահմանում էր, որ հանրաքենի հանդիսանում է ժողովորդի իշխանության իրավանացման անմիջական միջոց, որով լուծվում են պետական կյանքի ամենից կարևոր հարցերը, ընդունվում են օրենքներ և որոշումներ, վեր է հանդում հասարակական կարծիքը<sup>1</sup>:

**4. Իշխանությունների տարածաշատման սկզբունքի կենսագործումը:** Դեռ 1991 թ. հունիսի 25-ին Գերագույն խորհրդը որոշել էր հիմնել ՀՀ պրեզիդենտի պաշտոն և մինչև 1991թ. դեկտեմբերի 31-ը անցկացնել պրեզիդենտի ընտրություններ: 1991 թ. օգոստոսի 1-ին Գերագույն խորհրդը ընդունեց ՀՀ օրենքը «ՀՀ Նախագահի մասին»: Այդ օրենքով սահմանվում էր, որ ՀՀ Նախագահը հանրապետության բարձրագույն պաշտոնատար անձն է և գլխավորում է հանրապետության գործադիր իշխանությունը<sup>2</sup>: Նախագահի ընտրությունների կարգը սահմանում էր 1991 թ. օգոստոսի 2-ին ընդունված «Նախագահի ընտրությունների մասին» օրենքը<sup>3</sup>:

**5. Անցումը տնտեսավարման շուկայական համակարգին:** Իրավական բարեփոխումների արդյունքում օրենսդրությունը պետք է ամրագրեր սեփականության ձևերի բազմազանությունը, պետության կողմից բոլոր ձևերի հավասար պաշտպանությունը, ազատ ձեռներեցության իրավունքը՝ պայմաններ ստեղծելով դրա գարգացման համար:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր, թիվ 7 (987), 15 ապրիլի 1991թ., էջ 12-23:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր, թիվ 15 (995) 15 օգոստոսի, 1991 թ., էջ 4-9:

<sup>3</sup> Տե՛ս նոյեմբերի 1991 թ. օգոստոսի 15 օգոստոսի, 1991 թ., էջ 4-9:

ՀԽՍՀ 1978 թ. Սահմանադրությունը հողը ճանաչում էր որպես պետական սեփականության բացարիկ օրիեկտ: Գերագույն խորհուրդը 1991 թ. հունվարի 22-ին ընդունեց «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» ՀՀ օրենքը, որով սահմանվեց գյուղատնտեսական նշանակության հողը ապագետականացնելու և որպես մասնավոր սեփականություն տրամադրելու կարգը<sup>1</sup>: 1991 թ. հունվարի 29-ին ընդունված ՀՀ հոդային օրենսգիրը հողը ճանաչում էր որպես ազգային հարստություն, հանրապետության տարածքում բնակվող ժողովրդի սեփականություն, միաժամանակ սահմանելով, որ յուրաքանչյուր քաղաքացի ունի հողի նկատմամբ սեփականության իրավունք<sup>2</sup>:

Մասնավոր սեփականության իրավունքի երաշխիքների ստեղծման և ձեռնարկատիրական գործունեության ազատության ապահովման նապատակով ՀՀ Գերագույն խորհուրդը 1991 թ. փետրվարի 13-ի որոշմամբ հաստատեց կառավարության ներկայացրած «Հայաստանի Հանրապետությունում սեփականաշնորհման հիմունքները» ծրագրային փաստաթուղթը<sup>3</sup>: Այդ իրավական ակտը սահմանում էր ՀՀ-ում սեփականաշնորհման հիմնական սկզբունքները, խնդիրն ու ուղղությունները: Դրանք հիմք դարձան սեփականաշնորհման վերաբերյալ հետազայտմ ընդունվելիք իրավական ակտերի ու ծրագրերի մշակման համար:

«Հայաստանի Հանրապետությունում սեփականաշնորհման հիմունքները» սեփականաշնորհումը բնորոշում էր որպես գործնքաց, որի միջոցով տեղի էր ունենալու ՀՀ պետական ունեցվածքի փոխանցում քաղաքացիներին, նրանց խմբերին, ինչպես նաև ոչ պետական իրավաբանական անձանց՝ վաճառքի, մասնակի փոխսհատուցման կամ անհատույց ձևով: Սեփականաշնորհումը դիտվում էր որպես տնտեսության մեջ պետական սեփական չափերը արմատական կրծատելու համալիր միջոցա-

ում, որը նպատակառուղիվ էր՝ քաղաքացիների ազատությունների և ձեռնարկատիրական հնարավորությունների ընդլայնմանը, շուկայական տնտեսության ձևավորմանը, զանգվածային ստեղծագործական ներուժի արքնացմանը, հասարակական տնտեսության արդյունավետության բարձրացմանը<sup>1</sup>: Այսիսով, «հիմունքների» կենսագործումը պետք է իրավական նախադրյալներ ստեղծեր տնտեսավարման շուկայական համակարգին անցնելու համար:

**6. Պետության և անհատի փոխսհարաբերությունների իրավական հայեցակարգի վերանայում:** Դա նշանակում էր, որ անձնական շահերի նկատմամբ հասարակական-պետական շահերի առաջնայնության փոխարեն՝ սահմանադրական օրենսդրության հիմքում պետք է դրվեր մարդու իրավունքների, պետության ու անհատի փոխսհարած պատասխանատվության հայեցակարգը՝ ելնելով մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավունքի նորմերից: Անկախության հոչակագիրը հիմք դրեց պետականաշնորհման հիմունքների համընդհանուր հայեցակարգը՝ հոչակեց որպես Հայաստանի իրավական համակարգի բարեփոխման ուղղություն: Հոչակագիրը պաշտոնական իրավական ձևով ազդարարեց «պետության և անհատի փոխսհարաբերությունների հայեցակարգի վերանայում»: Սահմանադրական զարգացման նման ռազմավարության ընտրությունը նշանակում էր մարդու իրավունքների հարցում ինտերնացիոնալացման քաղաքականության պաշտոնական ճանաչում և նախորդում էր այդ օրենսդրության զարգացման իրավական ուղղությունը, այն է՝ մարդու իրավունքների միջազգային իրավունքի փոխառումը (ուղեապցիան), որի ձևը, սակայն, անորոշ էր:

Անկախության հոչակագրի 9-րդ հոդվածը սահմանում էր, որ Հայաստանի Հանրապետությունն իր տարածքում ապահովում է

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 67-77:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 80-106:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 109:

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 110:

մարդու այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են խոսքի, մամուլի, խղճի ազատությունը:

Անկախության հոչակագրի ընդունումից հետո մարդու իրավունքների ինստիտուտի կայացումը ընթանում էր երկու ուղղությամբ՝ խորհրդարանական օրենսդրական գործունեության միջոցով և մարդու իրավունքների միջազգային պայմանագրերի վավերացմամբ:

1991 թ. հունիսի 17-ին ընդունվեց «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը<sup>1</sup>: Օրենքով հոչակվում էր «քաղաքացիների<sup>2</sup> խղճի և կրոնական դավանանքի ազատությունը», երաշխավորվում էր անհատների իրավահավասարությունը՝ անկախ կրոնի նկատմամբ վերաբերմունքից կամ կրոնական պատկանելությունից: Բացի այդ՝ օրենքը սահմանում էր, որ ՀՀ-ում եկեղեցին անջատված է պետությունից և կարգավորում էր այդ սկզբունքի մի շարք երաշխիք-արգելքներ պետության և եկեղեցու համար:

Այդ օրենքն ընդունվել էր՝ «ղեկավարվելով Հայաստանի անկախության մասին հոչակագրով, նկատի ունենալով հայ ժողովրդի հոգևոր զարգությունը, նրա դարավոր հոգևոր փորձն ու ավանդույթները, ճանաչելով Հայաստանյաց Առաքելական Եկեղեցին որպես հայ ժողովրդի ազգային եկեղեցի, նրա հոգևոր կյանքի շինուածան ու ազգապահպանման կարևոր պայման, առաջնորդվելով միջազգային նորմերով սահմանված մարդու իրավունքների և հիմնական ազատությունների սկզբունքներով և հավատարիմ մնալով Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 18-րդ հոդվածի դրույթներին»:

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 136-140:

<sup>2</sup> Այսուղի և հետագայում ընդունված ակտերում օգտագործված է «քաղաքացի», այլ ոչ թե «մարդ» կամ «անձ» հասկացությունը: Դրա պատճառը խորհրդային իրավական տերմինարանությունն էր: Խորհրդային սահմանադրությունները ամրագրում էին «քաղաքացու իրավունքները և ազատությունները», իսկ պետական իրավունքի գիտությունն օպերացիաներ էր անում «քաղաքացի» տերմինը: Հետևաբար՝ դա չպետք է դիտել ոչ քաղաքացիների իրավունքների նկատմամբ անտարբերության հայեցակարգային իրավական մոտեցում:

1978 թ. ՀԽՍՀ Սահմանադրության 47-րդ հոդվածն ամրագրում էր «պետական մարմիններին և հասարակական կազմակերպություններին՝ իրենց գործունեության բարելավման վերաբերյալ առաջարկությունները ներկայացնելու, նրանց աշխատանքի թերությունները քննադատելու քաղաքացու իրավունքները», իսկ 56-րդ հոդվածի առաջին մասը՝ պաշտոնատար անձանց, պետական և հասարակական մարմինների գործողությունները գանգատարկելու իրավունքը: Գանգատները պետք է քննության առնվելին օրենքով սահմանված կարգով և ժամկետներում: Սահմանադրության 56-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում էր, որ պաշտոնատար անձանց այն գործողությունները, որոնք կատարվել են օրենքի խախտմամբ, լիազորությունների սահմանազանցմամբ և սահմանափակում են քաղաքացիների իրավունքները, կարող են օրենքով սահմանված կարգով գանգատարկել դատարանում: Խորհրդային բոլոր սերնդի սահմանադրությունները չունեին անմիջական գործողություն: 1978 թ. Սահմանադրությունը վկայակոչում էր «օրենքով սահմանված կարգը և ժամկետները»: Հետևաբար, քաղաքացիների այդ սահմանադրական իրավունքը ձևական էր, որովհետև այդպիսի օրենք խորհրդային իրավական համակարգում չկար:

Օրենսդրական կարգավորման այդ բացը լրացրեց 1990 թ. դեկտեմբերի 4-ի «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և զանգատները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքը<sup>1</sup>, որը քաղաքացիների առաջարկությունների, դիմումների և զանգատների ճիշտ ու ժամանակին քննարկումը կարևոր էր համարում «ղեկության ժավալման և կատարելագործման համար», իսկ բուն առաջարկությունները, դիմումներն ու զանգատները դիտում էր իրավունքների և օրենքով պաշտպանվող նրանց շահերի խախտման փաստերին արձագանքելու, այդ խախտումները վերացնելու և կանխելու միջոց: Այդպիսով, այդ օրենքը հիմ-

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 47-49:

նադրում էր մարդու իրավունքների պաշտպանության վարչական կարգ:

Անկախության հոչակագրի իրավական նշանակությունը մարդու իրավունքների կայացման համար հանգում էր նրան, որ ոլորտի բարեփոխման կողմնորոշչի հիմքեր էին դառնում «Մարդու իրավունքների համընդհանուր հոչակագրում ամրագրված սկզբունքները, ինչպես նաև միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքները», մասնավորապես՝ մարդու իրավունքների հարգման սկզբունքը: Սակայն հոչակագրում խոսք չկար ՀՀ-ում դրանց գործողության կարգի մասին<sup>1</sup>: Իրավական այդ բացի պատճառն այն էր, որ հանրապետությունը դեռևս համարվում էր դաշնության սուբյեկտ, իսկ արտաքին հարաբերությունների ոլորտը դաշնության մարմինների իրավասությունն էր: Բացի այդ՝ Հոչակագիրը անկախության հայտարարման ակտ չէր, այլ դրա գործընթացի սկիզբն ազդարարող ծրագրային փաստաբուղք: Հայաստանը՝ մինչև անկախության հոչակումը (1991 թ. սեպտեմբերի 25)<sup>2</sup> 1991 թ. ապրիլի 1-ին վավերացրեց «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային պայմանագիրը՝ կից ֆակուլտատիվ արձանագրությամբ»<sup>2</sup>: Սակայն, միջազգային պայմանագրերի վավերացմամբ, բաց էր մնում դրանց՝ ՀՀ իրավական համակարգում գործողության հարցը: Նոր օրենսդրությունը չէր կարգավորում միջազգային և ներպետական իրավունքների հարաբերակցության հարցը:

**ԳԼՈՒԽ 14. «ԱՆԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՍԱՍԻՒՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ՕՐԵՆՔԸ ԵՎ ԱՐՄԱՏԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ  
ԲԱՐԵՓՈԽՆՈՒՄՆԵՐԸ  
(1991 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ - 1995 Թ. ՀՈՒԼԻՍ)**

**§ 1. Հայաստանի Հանրապետության անկախացումը և  
դրա սահմանդրական ամրագրումը**

1991 թ. անկախության գործընթացն ու սահմանադրական կարգերի վերափոխումները նոր թափ և որակ ստացան: Օգոստոսին Մոսկվայում պետական-կուսակցական պահպանողական ուժերի կազմակերպած պետական հեղաշրջման ձախողումից հետո անխուսափելի դարձավ ԽՍՀՄ փլուզումը: Հետօգոստոսյան վերափոխումները Հայաստանում ձեռք բերեցին որակապես նոր բնույթ և, ըստ էության, արդեն ուղղված էին սոցիալիզմի շրջանակներից դուրս գալուն, հետոցիալիստական կարգերին անցմանը՝ ընդհանուր կողմնորոշչի ունենալով ժամանակակից արևմտյան երկների համար բնութագրական հայեցակարգերն ու ինստիտուտները: Այդ են վկայում այդ շրջանի հիմնական միջոցառումները և նորմատիվ ակտերը, մասնավորապես՝ ՀԿ-ի ունեցվածքի ազգայնացումը, գաղափարախոսական և քաղաքական տարակարծության, քազմակուսակցության հիմունքների գարգացումը, իշխանությունների տարանջատման համակարգի ձևավորման առաջին քայլերը, մասնավոր սեփականության ինստիտուտի ամրագրումը, հողի սեփականաշնորհումը:

Հիմք ընդունելով 1991 թ. սեպտեմբերի 21-ի ԽՍՀՄ կազմից դուրս գալու հանրաքվեի արդյունքները, 1991թ. սեպտեմբերի 23-ի որոշումով Գերագույն խորհուրդը հոչակեց ՀՀ անկախությունը. «Մնալով հավատարիմ «Հայաստանի անկախության

<sup>1</sup> ՈՒՖՍՀՀ-ն 1991 թ. նոյեմբերի 22-ին ընդունեց «ՈՒՖՍՀՀ-ում մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների հոչակագիրը»: Դրանում սահմանված էր, որ մարդու իրավունքներին վերաբերող միջազգային իրավունքի համարաճանաչ նորմերն առաջնային են օրենքների նկատմամբ և քաղաքացիների համար անմիջականորեն առաջացնում են իրավունքներ և պարտականություններ (տե՛ս Հլյուկովա Ը.Ի., նշված աշխ., էջ 288):

<sup>2</sup> Տե՛ս Խաչատրյան Հ.Մ., Հայաստանի Հանրապետության առաջին Սահմանադրությունը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» իրատ., 1997, էջ 369:

*հոչակագրին», հենվելով մարդու իրավունքների ու ազգերի ազատ ինքնորշման միջազգային նորմերի վրա, նպատակ ունենալով ստեղծել ժողովրդավարական, իրավական հասարակություն, իիմք ընդունելով 1991 թ. սեպտեմբերի 21-ի ԽՍՀՄ կազմից դուրս գալու հարցով հանրաքվեի արդյունքները*

**«Հերազույն Խորհուրդը Հայաստանի Հանրապետությունը հոչակում է անկախ պետություն»<sup>1</sup>:**

Այս որոշմանը անկախ պետության հոչակման իրավական իիմքեր էին համարվում Հայաստանի անկախության հոչակագիրը, մարդու իրավունքների ու ազգերի ազատ ինքնորշման միջազգային նորմերը, 1991 թ. սեպտեմբերի 21-ի՝ ԽՍՀՄ կազմից դուրս գալու հարցով հանրաքվեի արդյունքները: Հետևաբար, ինչպես Անկախության հոչակագիրը, այնպես էլ Անկախության հոչակման որոշումը ամրագրում էին ռազմավարական նույն նպատակը՝ ստեղծել ժողովրդավարական, իրավական հասարակություն, ինչպես նաև վկայակոչում էին մարդու իրավունքների միջազգային իրավունքի նորմերը: Դրանով Հայաստանի անկախ հանրապետությունը հավաստում էր ներպետական իրավական համակարգի զարգացման գործում ժողովրդավարության և մարդու իրավունքների համընդհանուր հայեցակարգի իրավական ճանաչումը:

**ԱՊՀ ստեղծման մասին համաձայնագրի վավերացումից և հայկական ինքնիշխան պետականության միջազգային ճանաչումից հետո դադարեցին գործել 1978 թ. Սահմանադրության այն հորվածները, որոնք բխում էին ԽՍՀՄ-ի կազմում Հայաստանի գտնվելու փաստից: Հաստատեց ՀՀ միջազգային լիակատար իրավասուրելիությունը:**

Անկախության և ինքնիշխանության հոչակման գործընթացի տրամաբանական շարունակությունը եղավ 1991 թ. սեպտեմբերի

25-ի «Անկախ պետականության իմնադրույթների մասին» սահմանադրական օրենքը<sup>1</sup>: Այս օրենքը, որն իր բնույթով սահմանադրական ակտ էր, ի տարբերություն Անկախության հոչակագրի, ընդունվել էր արդեն անկախ հանրապետության օրենսդրի մարմնի կողմից: «Անկախ պետականության իմնադրույթների մասին» սահմանադրական օրենքը, որ բաղկացած էր 16 հորվածներից, կարևոր հանգրվան էր սահմանադրական և իրավական հետագա բարենորդումների ճանապարհին: Այն նպատակային, ծրագրային, համալիր բնույթի սահմանադրական ակտ էր, յուրօրինակ Սահմանադրություն, քանզի ամրագրում էր հետագա սահմանադրական զարգացման համար կարևորագույն նշանակություն ունեցող մի շարք դրույթներ:

ՀՀ օրենսդրի մարմինն, այդ օրենքի ընդունմամբ, ևս մեկ անգամ վավերացնում էր գործող Սահմանադրության մեջ հետագա փոփոխություններ չմտցնելու մասին դիրքորոշումը: Այդ ժամանակ իշխանության վերին խավերում խոսում էին իրայելյան սահմանադրական կարգավորման ճանապարհով գնալու մասին, այսինքն՝ երբ չկա Սահմանադրություն, այլ գործում են բազմաթիվ սահմանադրական օրենքներ:

Այդ սահմանադրական օրենքն ամրագրում էր հետևյալ կարևորագույն դրույթները, որոնց մի մասը մասնակիորեն իրացված էր, մյուսները նոր պետք է իրացվեին՝

1. ՀՀ-ն անկախ ժողովրդավարական պետություն է:
2. ՀՀ-ում պետական իշխանության կրողը ժողովուրդն է, որն իրականացնում է իր իշխանությունը անմիջականորեն՝ հանրապետի և ներկայացուցչական մարմինների միջոցով:
3. ՀՀ-ն իր տարածքում ապահովում է օրենսդրի, գործադրի և դատական իշխանությունների տարանջատումը:
4. ՀՀ Գերազույն խորհուրդն իրականացնում է օրենսդրի իշ-

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ Գերազույն խորհրդի տեղեկագիր, թիվ 18 (998), 30 սեպտեմբերի, 1991թ., էջ 3:

խանոթյունը և այլ լիազորություններ՝ սահմանված «ՀՀ Գերագույն խորհրդի մասին» օրենքով:

5. ՀՀ բարձրագույն պաշտոնատար անձը ՀՀ Նախագահն է, որը գլխավորում է ՀՀ գործադիր իշխանությունը և ներկայացնում է ՀՀ-ն երկրի ներսում և միջազգային հարաբերություններում:

6. ՀՀ ազգային հարատությունը՝ հողը, նրա ընդերքը, ջրային և այլ բնական ռեսուրսները, տնտեսական, մտավոր, մշակութային պոտենցիալը հանդիսանում են նրա ժողովրդի սեփականությունը (1978 թ. Սահմանադրությունը օգտագործում էր համաժողովրդական պետական սեփականություն եզրույթը):

7. ՀՀ-ում ճանաչվում և օրենքով պաշտպանվում են սեփականության իրավունքը և սեփականության բոլոր ձևերի իրավահավասարությունը: ՀՀ-ն խրախուսում է ազատ ձեռներեցությունը և ստեղծում է պայմաններ դրա զարգացման համար:

8. ՀՀ-ն, ելնելով Մարդու իրավունքների համընդիանուր հոչակագրի սկզբունքներից և միջազգային իրավունքի նորմերից, ապահովում է իր քաղաքացիների ազատ և իրավահավասար զարգացումը՝ անկախ ազգությունից, ռասայական պատկանելությունից և հավատքից:

9. ՀՀ-ում հասարակական քաղաքական կազմակերպությունները իրավահավասար են և հավասար իրավունքներով մասնակցում են պետության հասարակական քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքին:

10. ՀՀ պաշտպանության և ազգային անվտանգության ապահովման համար հիմնադրվում են զինված ուժեր, ազգային անվտանգության մարմիններ, և հայտարարվում է համընդհանուր զինվորական պարտավորություն:

11. ՀՀ-ն իրականացնում է ինքնուրույն ֆինանսավարկային քաղաքականություն և այդ կապակցությամբ կազմակերպում է անկախ պետական բանկային և վարկային մարմիններ, իինադրում է ազգային տարարժեք՝ վայրուտա:

«Անկախ պետականության հիմնադրույթների մասին» սահմանադրական օրենքը իրավաբանորեն ճանաչում էր իրավական, այսինքն՝ քաղաքացիական հասարակության գիտավոր հատկանիշը՝ մարդու և քաղաքացու ազատությունը և դրա անձնական, քաղաքական, տնտեսական հիմքերը և փորձում էր սահմանել դրանց որոշ երաշխիքներ:

**§ 2. Արմատական իրավական բարեփոխումների կենսագործման ընթացիկ օրենսդրական ձևը և դրա հիմնական ուղղությունները (1991 թ. սեպտեմբերից մինչև 1995 թ. հուլիս)**

ՀՀ անկախության հոչակումից մինչև 1995 թ. հուլիսի 5-ը բարեփոխումների իրավական ձևը ընթանում էր նախորդ փուլի պես՝ ընթացիկ օրենքների ընդունմամբ և դրանով պայմանավորված՝ ՀԽՍՀ Սահմանադրության մեջ փոփոխություններ և լրացումներ չկատարելով, որովհետև գործում էր 1990 թ. դեկտեմբերի 10-ին ընդունված «Հայաստանի անկախության մասին» հոչակագրին համապատասխան ընդունված օրենսդրական ակտերի մասին» սահմանադրական օրենքը, որով ընթացիկ օրենքները ձեռք էին բերել գերակայություն Սահմանադրության նկատմամբ: Իրավաբանական տեխնիկայի տեսանկյունից այն իրավական բարեփոխումների նոր փուլ չէր: Սակայն այդ օրինաստեղծ գործումներուն արդեն դաշնային օրենսդրության կապանքներից ազատված ինքնիշխան և անկախ պետության մենաշնորհային գործումներուն էր:

Այս տարաներին իրավական բարեփոխումների հիմնական ուղղություններն էին իշխանությունների տարանցատման սկզբունքի որոշ տարրերի կենսագործումը, սեփականության և ձեռնարկատիրական գործումներության ոլորտի ազատական օրենսդրության ընդունումը, ԶԼՄ-ների ազատության օրենսդրական կարգավորումը, պետական իշխանության մարմինների և պաշտոնատար անձանց ապօրինի գործողությունների հետևանքով պատճառ-

ված վնասի հատուցում ստանալու իրավունքի օրենսդրական կարգավորումը:

«Անկախ պետականության իիմնադրույթների մասին» սահմանադրական օրենքով ՀՀ-ն պարտավորվում էր իր տարածքում ապահովել օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատումը: Օրենքի դրույթների կենսագործումը պետք է ապահովեր իշխանությունների տարանջատման սկզբունքի նաև նաև ի հաստատումը: Նախագահի ինստիտուտի օրենսդրական իիմնադրումն արդեն կատարվել էր: 1991 թ. նոյեմբերի 19-ին ընդունվեց ՀՀ «Գերագույն խորհրդի մասին» օրենքը, որի 1-ին հոդվ. սահմանում էր. Գերագույն խորհրդողը մշտապես գործող մարմին է, որն իրականացնում է օրենսդիր իշխանությունը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունները: Օրենքի 3-րդ հոդվ. սահմանում էր այն պաշտոնատար անձանց շրջանակը, ովքեր չեն կարող միաժամանակ լինել ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր<sup>1</sup>:

1990 թ. հոկտեմբերի 31-ին ընդունվեց ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետությունում սեփականության մասին»<sup>2</sup>: Այս օրենքի ընդունման նպատակն էր մինչև քաղաքացիական օրենսդրության համակարգումն ապահովել շուկայական հարաբերությունների ձևավորման ու զարգացման իրավական հիմքերի ստեղծումը, տնտեսական համակարգի և սեփականության հարաբերությունների ամրապնդումը, դրա տարբեր ձևերի զարգացումը: Այդ օրենքն ազդարարում էր խորհրդային «անձնական սեփականության» իրավունքից անցումը մասնավոր սեփականության իրավունքին՝ թույլ տալով սեփականատիրոջը գույքն օգտագործել նաև ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր, թիվ 22(1002), 31 նոյեմբերի 1991 թ., էջ 3:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.), Եր., 1995, էջ 25-39:

«Հայաստանի Հանրապետությունում սեփականության մասին» օրենքը սեփականության իրավունքի ձևեր էր ճանաչում քաղաքացիների, կոլեկտիվ և պետական սեփականությունը, բույլատրվում էր նաև այդ ձևերի միավորումից առաջացած խառը սեփականությունը: Օրենքը, սակայն, սեփականության ձևերի շրջանակը դրանով չեր սահմանափակում. օրենքով կարող էին սահմանվել սեփականության այլ ձևեր:

Սեփականության բոլոր ձևերի իրավահավասարության հաստատման գործում կարևոր էր «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» ՀՀ 1992 թ. մայիսի 11-ի օրենքը, որը վերացրեց պետական, հանրային սեփականության այլ տեսակների և քաղաքացիների անձնական սեփականության իրավունքի քրեափական պաշտպանության միջև տարբերությունը՝ քրեական օրենսգրքում թողնելով միայն մեկ գույին՝ «Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ»<sup>1</sup>:

«Հայաստանի Հանրապետությունում սեփականության մասին» օրենքը սահմանում էր, որ սեփականատերն իր հայեցողությամբ տիրապետում, օգտագործում, տնօրինում է իրեն պատկանող գույքը, նա կարող է իր գույքի նկատմամբ ձեռնարկել օրենքին չհակասող ցանկացած գործողություն, ինչպես նաև կարող էր գույքն օգտագործել օրենքով չարգելված տնտեսական կամ այլ ցանկացած գործունեություն իրականացնելու համար:

Օրենքի 12-րդ հոդվ. սահմանում էր, որ օրենքով թույլատրվող հիմքերով քաղաքացու ձեռք բերած գույքի կազմն ու արժեքը չեն սահմանափակվում: Միայն օրենքով կարող էին սահմանվել գույքի այն տեսակները, որոնք չեն կարող լինել քաղաքացիների սեփականությունը:

ՀՀ Գերագույն խորհրդի 1991 թ. փետրվարի 13-ի որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետությունում սեփականաշնորհման հիմունքները» ծրագրային փաստաթուղթն իր տրա-

<sup>1</sup> Տե՛ս նոյն տեղը, էջ 370-377:

մարանական շարունակությունն ստացավ հետագայում՝ 1992 թ. օգոստոսի 27-ի՝ «Պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման մասին» ՀՀ օրենքում<sup>1</sup>: Պետական ձեռնարկությունը սեփականության իրավունքով պետությանը (իշխանության տեղական մարմիններին) պատկանող ձեռնարկություն էր, կամ դրանց միավորումը, կամ գույքային համալիր հանդիսացող և կազմակերպական-իրավական տեսակետից մեկուսացված, իսկ գործառության առումով ինքնուրույն գործելու հնարավորություն ունեցող ստորաբաժանում էր, ինչպես նաև կողեկտիվ կամ խառը սեփականության վրա հիմնված ձեռնարկություններում պետությանը (իշխանության տեղական մարմիններին) պատկանող բաժնեմասը կամ բաժնետոմսերը<sup>2</sup>:

Այս օրենքը սահմանում էր ՀՀ-ում արտադրության միջոցների նկատմամբ սեփականության հարաբերությունների փոխակերպման կազմակերպական-իրավական հիմքերը՝ պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման միջոցով արդյունավետ շուկայական տնտեսություն ստեղծելու համար: Սեփականաշնորհումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ձևերով պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների օտարումն էր ՀՀ քաղաքացիներին, նրանց խմբերին, ոչ պետական ձեռնարկություններին ու պետական մասնակցությամբ ձեռնարկություններին և օտարերկրյա անձանց: Ապապետականացումը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների տրամադրումն էր ՀՀ քաղաքացիներին, նրանց խմբերին, ձեռնարկություններին, օտարերկրյա անձանց

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 398-433:

<sup>2</sup> Տե՛ս «Պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման մասին» ՀՀ օրենքը // ՀՀ գործող օրենքների ժամանակագրական ժողովածու..., էջ 400-401:

լիազորագրային կառավարման, վարձակալության, ոչ պետական ձեռնարկություններ կամ պետական մասնակցությամբ ձեռնարկություններ ստեղծելու համար՝ առանց պետական սեփականության իրավունքի օտարման<sup>1</sup>:

«Հայաստանի Հանրապետության պետական և հանրային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» 1993 թ. հունիսի 29-ի ՀՀ օրենքը սահմանում էր ՀՀ տարածքում պետական բնակարանային ֆոնդի և հանրային բնակարանային ֆոնդի (բնակելի տների և այլ շինությունների բնակելի տարածությունների) սեփականաշնորհման հիմնական դրույթները, կարգավորում էր սեփականության հարաբերությունների ձևափոխման իրավական, տնտեսական և կազմակերպական հիմունքները<sup>2</sup>: Պետական և հանրային ֆոնդի տների բնակարանների սեփականաշնորհումը կամավորության սկզբունքով քաղաքացիներին բնակարանների (բնակելի տարածությունների) անհատույց հատկացումն էր: Սեփականաշնորհված բնակարանները և բնակելի տարածությունները վերածվում էին քաղաքացիների սեփականության: Սեփականաշնորհման սույբեկու էին համարվում ՀՀ-ում մշտապես բնակվող, տվյալ բնակտարածությունում գրանցում ունեցող, ինչպես նաև օրենքով սահմանված դեպքերում բնակտարածության նկատմամբ իրավունքը պահպանած քաղաքացիները:

«Ձեռնարկությունների և ձեռնարկատիրական գործունեության մասին» 1992 թ. մարտի 14-ի ՀՀ օրենքը կարգավորում էր ձեռնարկատիրական գործունեության հիմունքները, ձեռներեցների իրավունքները և պարտականությունները, ձեռնարկությունների կազմակերպական-իրավական տեսակները, դրանց ստեղծման, գործելու և գործունեության դադարեցման հիմքերը<sup>3</sup>: Օրեն-

<sup>1</sup> Տե՛ս «Պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման մասին» ՀՀ օրենքը // ՀՀ գործող օրենքների ժամանակագրական ժողովածու..., էջ 400-401:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ գործող օրենքների ժամանակագրական ժողովածու..., էջ 516-521:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 240-280:

քի բնորդմամբ ձեռնարկատիրական էր համարվում ձեռներեցների կողմից իրականացվող օրենսդրությամբ չարգելված ցանկացած տնտեսական գործունեություն, իսկ այդ գործունեության ելակետային սկզբունք էր դիտվում ձեռներեցության ազատությունը:

Ձեռնարկատիրական գործունեության կարգավորմանն էին ուղղված մի շարք այլ օրենքներ.

1) «Անհատ ձեռներեցի մասին» ՀՀ օրենքը (1993 թ. դեկտեմբերի 27)<sup>1</sup>, որը սահմանում էր «անհատ ձեռներեց» հասկացությունը, նրա գրանցման կարգը, իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը, գործունեության ընտրության և դադարեցման պայմանները, գործունեության երաշխիքները: Անհատ ձեռներեց էր համարվում այն ֆիզիկական անձը, ով իրականացնում էր տնտեսական որոշակի գործունեություն, և ով գործում էր ինքնուրույն և իր անունից: Անհատ ձեռներեց կարող էին լինել ՀՀ քաղաքացիները, այլ պետությունների քաղաքացիները, ինչպես նաև ապատրիդները, որոնց տնտեսական գործունեությամբ զբաղվելու իրավունքը սահմանափակված չէր օրենսդրությամբ:

2) «Սպառողական կոռուպտացիայի մասին» ՀՀ օրենքը (1993 թ. դեկտեմբերի 30)<sup>2</sup>: Սպառողական կոռուպտացիան դիտարկվում էր որպես շահույթ ստանալու նպատակ չիտապահող կազմակերպություն և կոչված էր քավարարելու իր անդամների կարիքներն ապրանքներով ու ծառայություններով նրանց շահերը ներկայացնելու և դրանք պաշտպանելու նպատակով:

3) «Անհատական (ընտանեկան) ձեռնարկության մասին» ՀՀ օրենքը (1994 թ. հունիսի 13)<sup>3</sup>: Անհատական ձեռնարկությունը մեկ ֆիզիկական անձի սեփականությունն էր, իսկ ընտանեկան ձեռնարկությունը համատեղ սեփականության իրավունքով պատկանում էր ընտանիքի անդամներին: Երկուսն էլ չունեին ի-

րավարանական անձի կարգավիճակ, իսկ անվան մեջ պետք է նշվեր սեփականատիրոց (տիրոց) անունը: Անհատական ձեռնարկության կառավարումն իրականացվում էր դրա սեփականատիրոց կողմից՝ անմիջականորեն կամ աշխատանքային պայմանագրի հիման վրա վարձված տնօրենի կողմից: Ընտանեկան ձեռնարկության բարձրագույն մարմինը սեփականատերերի ընդհանուր ժողովն էր: Դրա ընթացիկ դեկավարումն իրականացնում էր տնօրենը, որը կարող էր վարձվել աշխատանքային պայմանագրի հիման վրա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4) «Ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների սնանկացման մասին» ՀՀ օրենքը (1995 թ. հունիսի 15)<sup>4</sup>, որը սահմանում էր ձեռնարկություններին և անհատ ձեռներեցներին սնանկ (անվճարունակ) պարտապան հայտարարելու, նրանց հնարավոր սնանկացումը (անվճարունակությունը) կանխարգելելու, անվճարունակ պարտապանին վերակազմավորելու և (կամ) դրանց գույքն իրացնելու կարգը:

Մանուկի և զանգվածային լրատվության մյուս միջոցների ազատության կարգավորման և երաշխավորման գործում կարենը դեռ խաղաց 1991 թ. հոկտեմբերի 8-ի «Մանուկի և զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» ՀՀ օրենքը: Օրենքը սահմանում էր, որ ՀՀ-ում մամուլը և ԶԼ մյուս միջոցներն ազատ են, գրանցնության չեն ենթարկվում: ՀՀ քաղաքացիներն ունեն մամուլով և զանգվածային լրատվության այլ միջոցներով իրենց տեսակետները, կարծիքներն արտահայտելու, հասարակական կյանքի յուրաքանչյուր խնդրի վերաբերյալ հրատապ և հավատի լրատվություն ստանալու իրավունքը: Օրենքն արգելում էր ԶԼՄ-ի որևէ տեսակի մենաշնորհ:

Բացի մանուկի և ԶԼՄ-ի ազատության իրավունքից, այդ օրենքը կարգավորում էր նաև ԶԼՄ-ների՝ տեղեկատվություն ստանալու իրավունքը, եթե պահանջված լրատվության տրամադրումը

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 666-667:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 671-676:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 704-710:

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 873-899:

չի հակասում տվյալ կազմակերպության կանոնադրությանը և չի պարունակում պետական գաղտնիք կամ օրենքով արգելված և (կամ) հրապարակման ոչ ենթակա տեղեկություններ<sup>1</sup>:

Օրենքը սահմանում էր նաև մամուլի ազատության իրավունքի սահմանափակումները՝ ելնելով այն կանոնադրությից, որ մամուլի ազատությունից բխող խոսքի ազատությունը բացարձակ իրավունք չէ և հետևաբար չի բույլատրվում շարաշահել խոսքի ազատությունը: Դրան համապատասխան չեր բույլատրվում հրապարակել պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ, որոնց ցանկը սահմանում էր ՀՀ Նախարարների խորհուրդը: Հրապարակման ենթակա չեր պատերազմ, բռնություն, ազգային և կրոնական թշնամանք հրահրող, պոռնկություն, թմրամոլություն և քրեորեն պատժելի այլ արարքներ քարոզող, կեղծ և չստուգված լրատվությունը: Առանց քաղաքացու համաձայնության չեր բույլատրվում հրապարակել որդեգրման գաղտնիքը և քաղաքացու նեղ անձնական կյանքին վերաբերող տեղեկություններ:

ՀԽՍՀ 1978 թ. Սահմանադրության 56-րդ հոդվածի 3-րդ մասը երաշխավորում էր պետական մարմինների և պաշտոնատար անձնաց ապօրինի գործողությունների հետևանքով պատճառված վնասի հատուցում ստանալու իրավունքը: Մինչև խորհրդային դաշնության փլուզումը պետությունը այդպիսին ճանաչեց խորհրդային իշխանության տարիներին անհատների նկատմամբ քաղաքական շարժառիթներով դատական և ոչ դատական ճանապարհով քրեական հարկադրանք կիրառելու հետևանքով պատճառված վնասը: Դրանով առաջանում էր մի կողմից՝ քաղաքական շաժառիթներով բռնադատված անձանց արդարացնելու և մյուս կողմից՝ ապօրինի գործողություններով նրանց պատճառված վնասի հատուցման իրավական խնդիրը: Այդ խնդիրը լուծեց «Քոնսադատվածների մասին» ՀՀ օրենքը (1994թ. հունիսի 14):

Օրենքով բռնադատված էր համարվում ՀՀ-ում մշտապես

բնակվող ԽՍՀՄ այն քաղաքացին, քաղաքացիություն չունեցող անձը կամ օտարերկրյա քաղաքացին, որը խորհրդային կարգերի ժամանակաշրջանում սկսած 1920 թ. նոյեմբերի 20-ից, ՀՀ տարածքում քաղաքական շարժառիթներով՝ ա) դատապարտվել և հետագայում արդարացվել էր, բ) քրեական պատասխանատվության էր ենթարկվել արտադատական կարգով, գ) անօրինական կարգով ենթարկվել էր բժշկական բնույթի հարկադրական միջոցների, դ) արտաքսվել էր նախկին ԽՍՀՄ տարածքից կամ զրկվել քաղաքացիությունից, ե) արսորվել կամ արտաքսվել էր որպես բռնադատվածի ընտանիքի անդամ:

### § 3. Սոցիալական ոլորտի իրավական քաղաքականությունը

1990-1995 թթ. ընթացքում Հայաստանի պետական կարգը ընթացիկ օրենսդրական կարգավորման միջոցով ապրեց էական զարգացում: Տեղի ունեցավ սկզբունքային հայեցակարգային հեղաքեկում, սոցիալիստական պետության և իրավունքի հայեցակարգից անցում կատարվեց ազատական-իրավական պետության ու իրավական կարգավորման համակարգին: Այդ գործընթացն ուներ առաջադիմական նշանակություն Հայաստանի իրավական համակարգի և դրա կենտրոնական իրավական ինստիտուտի՝ մարդու իրավունքների համար:

Առաջընթացն ակնհայտ էր հատկապես որոշ անձնական, ինչպես նաև քաղաքական, բնապահպանական, տնտեսական իրավունքների հարցում: Մարդու իրավունքների սոցիալիստական հայեցակարգը, ի սկզբանե, թերագննահատում էր քաղաքական և անձնական իրավունքները: Բայց սոցիալիստական սահմանադրական կարգավորումն իր վերջին մոդելում՝ սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների համար սահմանում էր սահմանադրական երաշխիքների լայն համակարգ: Քանի որ այս իրավունքները ենթադրում էին պետության դրական գործողություն-

<sup>1</sup> Տե՛ս նոյեմբերի տեղը, էջ 180-188:

ներ<sup>1</sup>, ապա արտադրության միջոցների հանրային սեփականությունը և բաշխվող միջոցների՝ հանրային ֆոնդերում կուտակումը, հնարավոր էին դարձնում դրանց իրական լայն երաշխավորումը:

«Սակայն երրորդ սերնդի իրավունքների իրացման հիմնախնդիրը քննարկելիս պետք է նկատի ունենալ, որ ոչ բոլոր պետությունները կարող են իրականություն դարձնել սոցիալական, տնտեսական և նշակութային իրավունքները։ Դա պայմանավորված է այն փաստով, որ այս իրավունքների իրացմանը կարելի է հասնել ազգային եկամտի վերաբաշխման հաշվին։ Իսկ եթե երկրի տնտեսությունը չունի հնարավորություններ, ուրեմն և վերաբաշխումն է դառնում անհնարին։ Ահա այստեղ է, որ առաջանում է լուրջ հիմնախնդիր՝ ինչպես իրականացնել սոցիալական ժառայությունների մատուցումը, որպեսզի պահպանվեն շուկայական հարաբերությունները, ազատ ձեռներեցությունը և միաժամանակ ապահովի մարդկային զարգացումը»<sup>2</sup>:

Անկախություն ձեռք բերելուց հետո միանգամից շուկայական տնտեսական հարաբերություններին անցնելը, հանրապետության տնտեսական շրջափակումը, դարաբաղյան պատերազմը առաջ բերեցին տնտեսական խորը ճգնաժամ։ Դա հանգեցրեց պետության ֆինանսատեսական հնարավորությունների նվազման, «հանրային ֆոնդերի» սնանկացման, ինչը կասեցրեց պետության դրական գործունեությունը սոցիալական, մշակութային իրավունքների երաշխավորման բնագավառում։

<sup>1</sup> Մարդու իրավունքների այս համախումքը առանձնահատուկ է իր բնույթով։ Երրորդ սերնդի իրավունքների պարագայում պետության խնդիրն է սոցիալ-տնտեսական ծրագրերի, կազմակերպական և տնտեսական գործունեության, իրավական կարգավորման միջոցով իրական դարձնել դրան։ Այս իրավունքների դեպքում «Պետությունները պետք է ոչ միայն ձեռնպահ մնան։ Նրանք պարտավոր են գործել, և այդ պարտավորությունը վերածվում է իրավաբանական պարտականության՝ ապահովել ուսուցումը, երաշխավորել աշխատանքը» և այլն (տե՛ս Արքա Ն. Նույնագույն առաջնային օրենսդրությունը՝ 1999 թ. 72):

<sup>2</sup> Տե՛ս «Մարդկային զարգացման հիմունքներ», Եր., Նոյյան Տապան, 2004, էջ 265-266:

Շուկայական տնտեսության պայմաններում սոցիալական մի շարք իրավունքներ պետք է հարմարեցվեին քաղաքացիական հասարակության հայեցակարգին և առկա տնտեսական իրողություններին։ Կայացած քաղաքացիական հասարակությունում հասարակության մեծամասնությունն ինքնուրույն նախաձեռնության միջոցով հասնում է բարեկեցության։ Սակայն քաղաքացիական հասարակության մեջ սոցիալ-իրավական պետությունը պետք է ապահովեր նաև սոցիալական համերաշխություն, նպաստեր երկրի տնտեսական աճին, ստեղծեր իրական երաշխիքներ կենսամակարդակի, զբաղվածության, կրթության և առողջապահության ոլորտներում։ Այս խնդրի լուծմանն էր ուղղված սոցիալական ոլորտի մի շարք օրենքների ընդունումը։

1991 թ. դեկտեմբերի 27-ին ընդունվեց «Քնակչության զբաղվածության մասին» ՀՀ օրենքը<sup>1</sup>։ Քանի որ 1978 թ. Սահմանադրությամբ սահմանված աշխատանքի իրավունքը, որի դեպքում պետությունն իր վրա էր վերցնում համընդհանուր զբաղվածություն ապահովելու պարտականությունը, արդեն դեկլարատիվ էր, ապա անցում կատարվեց աշխատանքի ընտրության ազատության իրավունքին՝ սահմանելով աշխատանքի իրավունքի իրականացման, ինչպես նաև զործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության բնագավառներում պետության կողմից տրվող երաշխիքները։

Օրենքի հայեցակարգը հիմնված էր այնպիսի իրավական հասկացությունների վրա, ինչպիսիք են՝ «զբաղված քաղաքացիներ», «աշխատանք փնտրողներ», «զործազրկություններ»։ Զաղաքացիներին իրավունք էր տրվում ընտրություն կատարել զբաղվածության և զբաղվածության միջև։ Ելնելով դրանից, օրենքով հիմնադրվում էր աշխատանք փնտրողների հաշվառման և զբաղվառման համակարգ, սահմանվում էին նյութական օգնության երաշխիքներ զբաղվածության բնագավա-

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ զործազրկությունների ժամանակագրական ժողովածու..., էջ 215-225:

ոռում:

Արգելելով հարկադիր աշխատանքը՝ օրենքը երաշխավորում էր ընտրության ազատություն՝ աշխատել կամ չաշխատել: Մարդուն գործազրկությունից պաշտպանելու համար պետությունը ստեղծեց գրաղվածության պետական ծառայություն, որն իրականացնելու էր բնակչության գրաղվածության պետական կարգավորման և ֆինանսավորման խնդիրները: Աշխատանք փնտրող և գործազրկ անձանց համար օրենքը երաշխավորում էր մասնագիտական կողմնորոշման խորհրդատվության, ազատ աշխատատեղերի վերաբերյալ տեղեկությունների, հարմար աշխատանքի միջնորդության, անվճար վերանասնագիտացման և որակավորման բարձրացման, գործազրկության նպաստի և կրթառոշակի իրավունքները:

Ծովայական տնտեսության պայմաններում նորովի կարգավորման կարիք ունեին սոցիալական ոլորտի հարաբերությունները և իրավունքները: Մարդու (քաղաքացու) սոցիալական իրավունքները՝ հնարավորություն տալով պետությունից ստանալ որոշակի նյութական բարիքներ (օգնություն, ծառայություն)՝ ապահովում են նրա սոցիալական բարեկեցությունը: Ծովայական տնտեսության և ճգնաժամի պայմաններում պետությունը չէր կարող լրիվ անվճար երաշխավորել բժշկական օգնության իրավունքը, դժվարություններ էին առաջացել սոցիալական ապահովության իրավունքի, բավարար կենսամակարդակի և կենսապայմանների բարելավման իրավունքների ապահովման նյութական չափերում:

Սոցիալական ապահովության իրավունքի՝ նոր իրողությունների հիման վրա կարգավորման համար՝ 1992 թ. մարտի 20-ին ընդունվեց «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսարոշակային ապահովության մասին» օրենքը<sup>1</sup>, որը սահմանում էր քաղաքացիների պետական կենսարոշակային ապահովության իրավական, տնտեսական և կազմակերպական

կան դրույթները՝ երաշխավորելով կենսաթոշակառուների նյութական ապահովության և սոցիալական պաշտպանվածության իրավունքը: Կենսաթոշակառուների այդ իրավունքի երաշխիքը պետական կենսաթոշակն էր իր երկու տեսակներով. ա) աշխատանքային կենսաթոշակներ (տարիքային), տարիքային արտոնյալ, հաշմանդամության (աշխատանքային ստած ունեցող հաշմանդամներին), երկարամյա ծառայության, թարթային կենսաթոշակներ (ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում):

Նոր պայմաններում սոցիալական ապահովության իրավունքի կարգավորմանն էին ուղղված՝

1) «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքը (1993թ. հունվարի 7)<sup>1</sup>, որը սահմանեց զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովության և սոցիալական պաշտպանության իրավական, նյութական և կազմակերպական հիմքները: Զինծառայողներին կարող էին նշանակվել հետևյալ պետական կենսաթոշակները՝ երկարամյա ծառայության, հաշմանդամության, սոցիալական կենսաթոշակ զինծառայողների ընտանիքների անդամներին՝ կերակրողին կորցնելու դեպքում:

2) «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը (1993թ. մայիսի 24), որը կարգավորում էր հաշմանդամների սոցիալական պաշտպանության իրավական, տնտեսական, կազմակերպական հիմունքները, հաշմանդամներին այլ քաղաքացիների հետ համահավասար հնարավորություններ ապահովելու բարենպաստ պայմաններն ու արտոնությունները<sup>1</sup>:

\*\*\*

Այսպիսով, երրորդ սերնդի իրավունքների իրացումը կատար-

<sup>1</sup> Տե՛ս նոյն տեղը, էջ 453-465:

<sup>1</sup> Տե՛ս նոյն տեղը, էջ 504-515:

<sup>1</sup> Տե՛ս նոյն տեղը, էջ 297-316:

վում է ազգային եկամտի վերաբաշխման հաշվին և, քանի որ նոր պայմաններում երկրի տնտեսությունը չուներ հնարավորություններ, որեմն վերաբաշխումը նախկին չափով դարձավ անհնարին: Չնայած սոցիալական ոլորտի իրավակարգավորումներին՝ խնդիրը երրորդ սերնդի իրավունքների նյութական երաշխիքների բավականին ցածր մակարդակն էր: Այդպիսով՝ կենսամակարդակն ապահովելու ամբողջ ծանրությունը Հայաստանում ընկավ նարդու վրա, իսկ պետության հնարավորությունները դրա համար պայմաններ ստեղծելու, արգելվներն ու խոշնդրությունները վերացնելու ուղղությամբ դեռևս շատ փոքր էին:

#### **§ 4. 1995 թ. մարտի 27-ի «Սահմանադրական օրենքը» և խորհրդարանական ընտրությունների իրավակարգավորումը**

1990-95 թթ. ծավալված իրավական բարենորոգումները եղագակացին ՀՀ Գերազույն խորհրդի կողմից 1995 թ. մարտի 27-ի «Սահմանադրական օրենքը» և 1995 թ. ապրիլի 4-ի «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ընտրությունների մասին» օրենքը: Դրանով կայտն նորմատիվ-իրավական հիմք ստեղծվեց ՀՀ Համական օրենքի ընդունման համար, որի նախագիծը 1995 թ. դրությամբ պատրաստ էր:

Մարտի 27-ի Սահմանադրական օրենքը սահմանում էր հետևյալ դրույթները.

1. «ՀՀ Սահմանադրությունը ընդունվում է Գերազույն խորհրդի կամ ՀՀ հանրապետի միջոցով՝ Գերազույն խորհրդի հավանականությամբ:

2. «Նորրնտիր Գերազույն խորհրդը վերանվանել ՀՀ Ազգային ժողով: Ազգային ժողովի լիազորությունների ժամկետը 4 տարի է:

3. Պատգամավոր չեն կարող լինել կառավարության անդամները: Պատգամավոր չեն կարող լինել և պատգամավորական թեկնածու չեն կարող առաջադրվել դատավորները, դատախա-

զության, ազգային անվտանգության պետական վարչության աշխատակիցները, ներքին գործերում և զինված ուժերում ծառայողները:

4. ՀՀ այլ օրենադրական ակտերը գործում են այնքանով, որքանով չեն հակասում սույն Սահմանադրական օրենքին, ինչպես նաև «Ազգային ժողովի պատգամավորների ընտրությունների մասին» օրենքին»<sup>1</sup>:

Ընտրական իրավունքի կարգավորումը 1995 թ. ամփոփեց «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների ընտրությունների մասին» ՀՀ օրենքը<sup>2</sup>: Օրենքը հոչակում էր ընտրական իրավունքի այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրությունները և զաղտնի քվեարկությունը: Նոյն սկզբունքներն ամրագրված էին նաև ՀԽՍՀ 1978 թ. Սահմանադրության 85-րդ հոդվածում: Միակ սկզբունքային նորամուծությունն Ազգային ժողովի ընտրական համակարգում երկու կարգերի՝ մեծամասնականի և համամասնականի գուգակցումն էր (150 մեծամասնական գումարած 40 համամասնական, ընդամենը՝ 190):

Այս իրավական տարօրինակությունը հաստատում է այն հանգամանքը, որ ընտրական գործընթացների սոցիալական առաքելության իրացման իրավական-օրենսդրական երաշխիքների կողքին կարևոր տեղ են գրավում և երբեմն էլ ավելի առաջնային են քաղաքական, տնտեսական, բարոյական, գիտակցական գործուները, քան մերկ օրենսդրական կանոնները: Իրավական կարգավորման նպատակների, խնդիրների իրականացման ամենահուսալի երաշխիքը ոչ թե արհեստական նորմատիվ կանոններն են, այլ մարդիկ (բնակչությունը, քաղաքական գործիչները, պետական պաշտոնյաները), ինչպես նաև պայմանները, որոնցում ընթանում է նրանց ողջ կյանքն ու գործունեությունը: Անկախությունից հետո անցած ճանապարհը և ապագա ընտրությունների

<sup>1</sup> Տե՛ս նոյն տեղը, էջ 838:

<sup>2</sup> Տե՛ս նոյն տեղը, էջ 839-865:

կապակցությամբ ծավալվող գործնարացները վկայում են, որ այս ոլորտի թերությունների մեջ են թաղված մեր հասարակության բոլոր «չարիքների» արմատները: Սահմանադրական իրավունքի գիտությունը «ընտրություններ» եզրույթի տակ հասկանում է պետական մարմնի կազմավորման կամ պաշտոնատար անձին իշխանական լիազորություններով օժտելու ընթացակարգ, որն իրականացվում է ընտրողների քվեարկության միջոցով՝ պայմանով որ նման կարգով տրվող յուրաքանչյուր մանդատի համար կարող են հավակնել երկու և ավելի թեկնածուներ<sup>1</sup>:

Ընտրություններն օրինականացնում են իշխանությունը: Ընտրությունների միջոցով ժողովուրդը որոշում է իր ներկայացուցիչներին և նրանց օժտում իր ինքնիշխան իրավունքներն իրականացնելու լիազորություններով: Ընտրությունները հասարակության և պետության զարգացման սոցիալ-տնտեսական ծրագրերի, քաղաքական կուսակցությունների ու ղեկավարների «սելեկցիայի» միջոց են, դրանք քաղաքացիներին հնարավորություն են տալիս պետական իշխանության իրացումը հանձնել արժանիներին, համոզիչ ծրագրեր ունեցողներին: Արդյո՞ք այս հրամայական պահանջը բոլոր դեպքերում և ինքնարերարար կենսագործվում է, թե՞ ոչ: Պատասխանը, իհարկե, ակնհայտ է՝ ոչ: Իսկ որո՞նք են դրա պատճառները, կենսագործման արգելակմանը կամ խեղարյուրմանը նպաստող գործոնները:

Ընտրությունների առջև կանգնած սոցիալական առաքելության իրացման գլխավոր նախադրյալը պատշաճ իրավական կարգավորումն է: Սակայն պողիսիվ իրավական տարրն այդ առաքելության իրացման նախադրյալներից մեկն է միայն: Ոչ իրավական կամ արտաիրավական հասարակական գործոնների (քաղաքական, տնտեսական, բարոյական և այլն) բացասական ներգործության դեպքում իրավական-օրենսդրական կարգավորման ջանքերը կարող են չհասցնել նպատակին: Ընտրական գոր-

ծընթացներում դրսերվող այս օրինաչափությունը բնորոշ է ոչ միայն անցյալին, այլև մեր ժամանակներին:

### § 5. Հայաստանի Հանրապետության ազգային-ներպետական և միջազգային իրավունքի հարաբերակցության հիմնախնդիրները 1990-1995 թթ.

1991 թ. սեպտեմբերին Հայաստանի կառավարությունը դիմեց աշխարհի երկրներին՝ ճանաչելու Հայաստանի Հանրապետության անկախությունը: Այդ կարգավիճակը բույլ կտար Հայաստանին միջազգային ասպարեզում հանդես գալու որպես ինքնուրույն և լիիրավ անդամ՝ դրանից բխող բոլոր իրավունքներով և պարտավորություններով<sup>1</sup>: Հայաստանը դարձավ Սիավորված Ազգերի Կազմակերպության անդամ<sup>2</sup>:

Անկախության հոչակումից հետո, ՀՀ-ի միջազգային ճանաշմանը զուգընթաց, սկսվեց նաև միջազգային այլ պայմանագրերի վավերացման գործնարացը: Հայաստանի Հանրապետությունը, մինչև 1991 թ. սեպտեմբերի 25-ը, այսինքն՝ մինչև անկախության հոչակումը, 1991 թ. ապրիլի 1-ին վավերացրել էր «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային պայմանագիրը» կից ֆակուլտատիվ արձանագրությամբ<sup>1</sup>: 1991 թ. սեպտեմբերից մինչև 1995 թ. սկիզբը Հայաստանի Հանրապետությունը վավերացրել էր 148 միջազգային պայմանագրեր<sup>2</sup>:

<sup>1</sup> Հայաստանն առաջինը ճանաչվեց Վրաստանի կողմից: 1991 թ. դեկտեմբերի 25-ին ԱՄՆ-ի նախագահը, հեռուստատեսությամբ իր ժողովրդին շնորհագրելով Սուրբ Ծննդի առթիվ, նաև հայտարարություն արեց Հայաստանի անկախության ճանաշման մասին: Մինչև 1992 թ. օգոստոս ամիսը Հայաստանի անկախությունը ճանաչեցին և 103 պետություններ:

<sup>2</sup> 1992 թ. մարտի 2-ին Նյու Յորքում ՄԱԿ-ի շենքի առջև առաջին անգամ մյուս երկրների դրոշների կողմին հպարտորեն ծածանվեց նաև Հայաստանի Հանրապետության եռագույն դրոշը:

<sup>1</sup> Տե՛ս Խաչատրյան Հ.Մ., նշված աշխ., էջ 369:

<sup>2</sup> Հաստ ժամանակագրական հերթականության վավերացված միջազգային պայմանագրերի մասին տե՛ս Խաչատրյան Հ.Մ., նշված աշխ., էջ 369-384:

<sup>1</sup> Тե՛ս Конституционное право зарубежных стран. Общая часть. Т. 1-2, М., 1996, էջ 50:

ՀԽՍՀ 1978 թ. Սահմանադրությունը չէր կարգավորում միջազգային և ներպետական իրավունքի հարաբերակցության հարցը: Խորհրդային սահմանադրական օրենսդրությունն արտաքին-քաղաքական հարաբերությունների ոլորտը վերապահում էր ԽԽՍՀ Միության իրավասությանը: Հետևաբար, ՀԽՍՀ Սահմանադրությունը սահմանում էր, որ ՀԽՍՀ-ն արտաքին-քաղաքական գործունեության մեջ դեկավարվում է արտաքին քաղաքականության այն նպատակներով, խնդիրներով, որոնք որոշված են ԽԽՍՀ Սահմանադրությամբ<sup>1</sup>: Իսկ վերջինս չէր նախատեսում միջազգային և ներպետական իրավական համակարգերի փոխազդակցության ձևերի իրավական կարգավորումը՝ միջազգային իրավունքի անմիջական կամ միջնորդավորված գործողության հիմնահարցը, երկուսի միջև կողմիաների լուծման եղանակները, դրա իրավական միջոցները և այլն:

Անկախության ձեռք բերումը և միջազգային իրավական պայմանագրերի վավերացման գործընթացն առաջադրեցին ներպետական իրավունքի հետ այդ պայմանագրերի հարաբերակցության հարցը: Սակայն, ՀՀ անկախության հոչակումից հետո, այդ հարցը հստակ հայեցակարգային իրավական կարգավորման չէր ենթարկված:

1990-1995 թթ. ընդունված սահմանադրական ակտերից ոչ մեկը չէր անդրադաել այս հարաբերակցության կարգավորմանը: Օրենսդիրն այս հարցում դիմել էր ոչ թե ընդհանուր, այլ նաև ավոր կարգավորման, այսինքն՝ ամեն մի օրենքի ընդունմամբ, անհրաժեշտության դեպքում, սահմանվում էր այդ օրենքի և միջազգային պայմանագրերի հարաբերակցության հարցի լուծումը:

Առաջին օրենքը, որում օրենսդիրը վկայակոչում էր միջազգային պայմանագրերը, 1991 թ. հունվարի 29-ին ընդունված Հռոդային օրենսգիրը էր: Դրա ամենավերջին 78-րդ հոդվածը սահմանում էր, որ եթե ՀՀ միջազգային պայմանագրով սահմանված

են այլ կանոններ, քան պարունակում է սույն օրենքը, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի կանոնները<sup>1</sup>: Օրենքում օգտագործված այս հղումն անվանում են առաջնային կիրառում, ըստ որի՝ միջազգային և ներպետական իրավունքների հակասության դեպքում կիրառվում են միջազգային նորմերը:

Երրորդ հանրապետության օրենսդիր մարմնի պրակտիկայում հանդիպում ենք նաև փոխակերպման միջոցով միջազգային իրավունքի իրացման ձևին: Օրինակ՝ «Խողճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» (1991թ. հունիսի 17) ՀՀ օրենքի նախարանում սահմանվում էր, որ «առաջնորդվելով միջազգային իրավունքի նորմերով սահմանված նարու իրավունքների և հիմնական ազատությունների սկզբունքներով և հավատարիմ լինելով քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 18-րդ հոդվածի դրույթներին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը ընդունում է սույն օրենքը»: Այդ ձևակերպումից բխում էր, որ օրենքն իրենում ներառել էր կարգավորման հարաբերությունների վերաբերյալ միջազգային պայմանագրի դրույթները, ինչը հաստատում են նույն օրենքի 1-3-րդ հոդվածների իրավական ձևակերպումները, որոնք գրեթե վերարտադրում են «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի» դրույթները<sup>2</sup>:

1992 թ. հունիսի 6-ին ընդունվեց «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի կնքման, վավերացման և չեղյալ հայտարարման մասին» օրենք<sup>1</sup>: Այդ օրենքը սահմանեց, որ ՀՀ միջազգային պայմանագրերը ենթակա են անվերապահ կատարման, իսկ դրանց և ՀՀ օրենսդրության հակասության դեպ-

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.), Եր., 1995, էջ 106: Հետազայում ընդունվել են միջազգային իրավունքի առաջնային կիրառումն ապահովող բազմաթիվ օրենքներ (տե՛ս նույն տեղը, էջեր՝ 157, 240, 297, 339, 351, 473):

<sup>2</sup> Տե՛ս «Խողճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը, //ՀՀ գործող օրենքների ժամանակագրական ժողովածու..., էջ 136:

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 384-388:

<sup>1</sup> Տե՛ս ՀԽՍՀ 1978 թ. Սահմանադրության 28-րդ հոդվածը:

քում գերակայությունը տրվում է միջազգային պայմանագրով սահմանված իրավական նորմին<sup>1</sup>: Ինչպես տեսնում ենք, այդ օրենքը ևս ներպետական իրավունքում միջազգային իրավունքի իրացման ձևերը չեր ենթարկում հայեցակարգային օրենսդրական կարգավորման, սակայն սահմանում էր միջազգային իրավունքի առաջնային կիրառման սկզբունքը:

Այսպիսով՝ մինչև 1995 թ. Սահմանադրության ընդունումը, միջազգային իրավունքի ներպետական ոլորտում գործողության հարցում Հայաստանի Հանրապետությունը հետևում էր միջազգային պայմանագրերի իրացման երեք հիմնական ձևերին՝ տրանսֆորմացիա (ինկորպորացիա), ներպետական ակտում միջազգային ակտերին կատարվող հղումները՝ սահմանելով համալիր կիրառման կամ կողմիցն կիրառման կարգը:

## ԳԼՈՒԽ 15. ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՎԱԳԻ ՔԱՂԱՔԱՎԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԿԱՅՈՒՆԱՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՎԱԳՈՒՄԸ

### § 1. Իրավական համակարգի նորմատիվային հիմքերի կայունացման խնդիրը և Սահմանադրության նախագծի մշակման քաղաքական գործընթացը

1978 թ. Սահմանադրությունն անհամատեղելի էր նոր հասարակական և պետական կարգերի հետ, որովհետև դրա հիմքում դրված էր սոցիալիստական տիպի պետության և իրավունքի հայեցակարգը: Քաղաքացիների իրավունքները և ազատություններն ամրագրված էին միջազգային չափանիշներից կտրված, ենթարկված էին «կոմունիստական շինարարության» նպատակներին: Պետությունը դիտվում էր որպես «սոցիալիզմի և կոմունիզմի շինարարության հիմնական գործիք», հայտարարվում էր «խորհրդային» և «սոցիալիստական», բայց ոչ իրավական:

Սոցիալիստական համաժողովրդական պետության հայեցակարգին էր համապատասխանում նաև պետական իշխանության կառուցակարգը, որում անտեսված էր իշխանությունների տարանջատման սկզբունքը, ուժեղ գործադիր իշխանության անհրաժեշտությունը, անկախ դատական իշխանության համակարգը: Այդպիսի սահմանադրական կարգավորումը սուր հակասության մեջ էր մտնում նոր ծավալվող հասարակական-քաղաքական ու պետական իրավական իրողությունների հետ:

1990 թ. դեկտեմբերի 10-ի՝ «Հայաստանի անկախության մասին» հռչակագրին համապատասխան ընդունված օրենսդրական ակտերի մասին» սահմանադրական օրենքով սահմանված ընթացիկ օրենքների գերակայությունը Սահմանադրության նկատմամբ լավագույն լուծումը չեր, որովհետև Գերազույն խորհուրդը ներակա էր քաղաքական վայրիվերումների: Դրա օրինակը 1995

<sup>1</sup> Տե՛ս նոյեմբերի, էջ 387:

թ. մարտի 27-ի «Սահմանադրական օրենքն» էր, որի 1-ին հոդվածը ամրագրում էր ՀՀ պաղա Սահմանադրության ընդունման այլընտրանքային կարգ՝ կամ Գերագույն խորհրդի կողմից, կամ հանրաքվեի միջոցով՝ Գերագույն խորհրդի հավանությամբ։ Հետևաբար, իրավական համակարգի քաղաքական-իրավական հիմքերը կայունացման խնդիր ունեին, որը կարող էր լուծել միայն սահմանադրությունը։

Պետական իշխանության կառուցակարգի իրավական անկատարությունն ուրույն կերպով երևաց քաղաքական ուժերի սուրբենուացման պայմաններում։ Լիիշխան Գերագույն խորհրդում քաղաքական ուժերի պայքարը մշտապես ծնում էր բարդություններ և ճգնաժամեր՝ ցանկացած հարց լուծելիս։ Դեպքերի նման զարգացումը ցույց էր տալիս, որ ինն Սահմանադրության անկատարությունը հանգեցնում էր քաղաքական ճգնաժամերի, սակայն չէր պարունակում դրանք հաղթահարելու եղանակներ։

Նոր սահմանադրության ընդունման հարցը դրվեց Հայաստանի անկախության հոչակումից անմիջապես հետո։ Հայաստանի Գերագույն խորհրդի որոշմամբ, 1990 թ. նոյեմբերի 5-ին, նոր Սահմանադրության տեքստի մշակման համար ստեղծվեց սահմանադրական հանձնաժողով։ Հանձնաժողովի կազմում ընդգրկվեցին պետական և քաղաքական գործիչներ, պատգամավորներ և իրավունքի մասնագետներ։ Ընդամենը 20 մարդ։ Սահմանադրական հանձնաժողովը գլխավորեց Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը։ Հանձնաժողովի քարտուղար ընտրվեց Գերագույն խորհրդի քարտուղար Արա Սահակյանը։

Հայաստանում քաղաքական ուժերի քավականին բարդ տեղաբաշխումը ոչ միանշանակ վերաբերմունք առաջացրեց սահմանադրական բարեփոխումների գործընթացների նկատմամբ։ Այդ դրսուրվեց ոչ միայն նոր Հիմնական օրենքի հայեցակարգի վերաբերյալ լայն բանավեճում, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետությունում կառավարման ձևի ընտրության (նախա-

գահական, թե՞ պառամենտական հանրապետություն), սահմանադրության ընդունման եղանակի շուրջ, այլ նաև սահմանադրական հանձնաժողովից անկախ, այլընտրանքային նախագծերի մշակմամբ։

Սահմանադրական հանձնաժողովը, չգիտես թե ինչու, իր առաջին նիստը գումարեց միայն 1992 թ. հոկտեմբերի 15-ին։ Արդեն 1992 թ. դեկտեմբերից շրջանառության մեջ էին Սահմանադրության այլընտրանքային նախագծերը։ Հարկ է նկատել, որ կուսակցությունների ներկայացրած ՀՀ Սահմանադրության նախագծի տարբերակներն «աչքի ընկան» իրավաբանական անհերետություններով, ամբոխահաճ գաղափարներով։ Օրինակ, «Հիմնական օրենքը համայն հայության սահմանադրությունն է», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը սահմաններ չի ճանաչում», տարածքային պահանջատիրության, ցեղասպանության ճանաչման և դատապարտման հարցերի ուղղակի ամրագրումը սահմանադրության մեջ։ Կային նաև Հայաստանը դաշնային պետության վերածելու նախագծեր և այլն։

Ներկայացվեց ՀՅԴ նախագիծը, որտեղ ուղղակիորեն ասված է, որ «Սահմանադրությունը մշակվել է ՀՅԴ ծրագրային հիմնադրությների հիման վրա»<sup>1</sup>։ Ըստ Էության, այդ նախագծում ամրագրված էին կուսակցության տեսակետները Հայ դատի, տարածքային պահանջատիրության մասին։ Ըստ այդ նախագծի, պետք է ստեղծվեր ոչ թե Հայաստանի, այլ համահայկական պետություն։ Ազգային ժողովի (խորհրդարանի) 20 պատգամավորներ պետք է ընտրվեին ավելությամբ։ Ազգային ժողովի գաղթօջախներում ապրող ՀՀ քաղաքացիներից։ Համապետական հանրաքվեի հետ միասին նախատեսված էր համազգային հանրաքվեի գաղափարը, որը յուրովի նորույթ էր համաշխարհային պետականական պրակտիկայում։ Միայնու ավելացնելու համազգային հանրաքվե։ Գաղթօջախը դառնալու էր սահմանադրական-իրավական սուրյեկտ։

<sup>1</sup>Տե՛ս «Երկիր», օրաթերթ, 3 հունիսի, 1993թ.։

«Մեր անկախ ազգային պետականություն կերտման ժամանակաշրջանում սահմանադրական այս գլուխկոտրուկները հավանաբար նշմարելի տեղ կզբաղեցնեն սահմանադրության և սահմանադրական իրավունքի պատմության մեջ: Այդ կուսակցության նախագծում տեղ գտած սահմանադրական պատրանքներն իրենց անկանխատեսելիությամբ և անհետևողականությամբ ուներդային դարձան: Ինչ խոսք, նման հարցերից շատերն, իրոք, արտահայտելով հայ ժողովրդի շահերը և նրա արդարացի պահանջը՝ ուղղված միջազգային հանրությանը (օրինակ՝ ցեղասպանության ճանաչումը և դատապարտումը), այնուամենայնիվ, սահմանադրական կարգավորման հիմնահարցեր չեն, այլ պետության գործնական քաղաքականության»<sup>1</sup>:

Հետագայում ՀՀ սահմանադրական հանձնաժողովը, նրա աշխատանքային խումբը սկսեցին առավել ինտենսիվ գործել: 1992 թ. հոկտեմբերի 15-ից մինչև 1995 թ. մայիսի 11-ը սահմանադրական հանձնաժողովն անց է կացրել 109 նիստ: 1993 թ. հունիսի 24-ին սահմանադրական հանձնաժողովը հավանություն տվեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագծի առաջին տարբերակին և այն ներկայացրեց համաժողովրդական քննարկման, որը տևեց իննը ամիս: Նախագծի վերաբերյալ արվեց ավելի քան հազար դիտողություն և առաջարկություն: Դրանք բոլորը համակարգվեցին և նկատի առնվեցին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագծի լրամշակման ընթացքում<sup>2</sup>:

1993 թ. նոյեմբերի 12-ին ՀՀ Գերագույն խորհրդի նախագահությունը, լսելով և քննարկելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագծի ժողովրդական քննարկման ըն-

<sup>1</sup> Տե՛ս Խաչատրյան Հ.Մ., նշված աշխ., էջ 19:

<sup>2</sup> Հատկանշնական է, որ վեց կուսակցությունների ներկայացրած նախագծի վերաբերյալ, ստացվեց ընդամենը 72 առաջարկություն և դիտողություն՝ այդ թվում 17-ը ընդհանուր բնույթի, 55-ը՝ կոնկրետ հողվածների առնչությամբ: Դրանք ներկայացվեց յոթ կազմակերպություններից և երեք անհատներից (տե՛ս Խաչատրյան Հ.Մ., նշված աշխ., էջ 20):

թագրում ստացված դիտողություններն ու առաջարկություններն ամփոփող բազմակուսակցական հանձնաժողովի նախագահի հաղորդումը, որոշեց ի գիտություն ընդունել բազմակուսակցական հանձնաժողովի հաղորդումը՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագծի ժողովրդական քննարկման ընթացքում ստացված դիտողությունների ու առաջարկությունների ամփոփման մասին: Նաև որոշվեց ամփոփիչ տեղեկանքը հանձնել ՀՀ Գերագույն խորհրդի մշտական հանձնաժողովներին, սահմանադրական հանձնաժողովին և հնարավորություն ընձեռել պատգամավորներին և հասարակական-քաղաքական կազմակերպություններին՝ տեղեկանքին ծանոթանալու:

1994 թ. ապրիլի 20-ին սահմանադրական հանձնաժողովը հավանություն տվեց նախագծի լրամշակված տարբերակին և այն ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդ: Ներկայացվեցին նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության այլընտրանքային նախագծեր: Այլընտրանքային նախագծերի մեջ հատուկ տեղ էր գրավում վեց կուսակցությունների զանքերի շնորհիվ ներկայացված սահմանադրության նախագիծը, որի ոչ պաշտոնական անվանումն էր «Վեցյակի նախագիծ»:

Ընդհիմադրի քաղաքական ուժերի այն մասը, որ միավորվել էր վեցյակի նախագծի շուրջ, պետության կառավարման ձևի հարցում կողմնակից էր կիսանախագահական հանրապետության: Սակայն այս նախագիծը պաշտոնական նախագծից տարբերվում էր երկու հիմնական սկզբունքային հարցերում.

1) Վեցյակի նախագծի 3-րդ հոդվածը ամրագրում էր հայ դատի խնդիրը. «1. ՀՀ միջազգային ատյաններում և միջազուտական հարաբերություններում հետամուտ է Հայ դատի արդարացի լուծմանը, հասնել այն բանին, որպեսզի պետությունների համաշխարհային հանրությունը և իրավասու միջազգային կազմակերպությունները պաշտոնապես ճանաչեն ու դատապարտեն համայն մարդկության դեմ ուղղված այդ ծանրագույն հանցագոր-

ծուրյունը և վերացվեն հետևանքները»:

2) Վեցյակի նախագծի 12-րդ հոդվածը, հակառակ պաշտոնական նախագծի, որ ենում էր երկարադաշտության արգելման սկզբունքից, սահմանում էր, որ «Հայազգի յուրաքանչյուր մարդ իրավունք ունի ձեռք բերել ՀՀ քաղաքացիություն»<sup>1</sup>:

Սահմանադրական հանձնաժողովի ներկայացրած պաշտոնական նախագիծը մերժում էր հայ դատի խնդրի սահմանադրական ամրագրումը և երկարադաշտության սկզբունքը, վերջինիս մեջ տեսնելով ազգային պետականության անվտանգության սպառնալիք:

1994 թ. հունիսի 1-ին Գերագույն խորհուրդն իր արտահերթ նիստում ընդունեց որոշում՝ «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի սահմանադրական հանձնաժողովի կազմի ընդլայնման մասին»<sup>2</sup>: Այդ որոշմամբ սահմանադրական հանձնաժողովի կազմում ընդգրկվեցին Գերագույն խորհրդում ներկայացված և սահմանադրական հանձնաժողովում ներկայացուցիչների չունեցող հասարակական-քաղաքական կազմակերպությունների և օրենսդրական նախաձեռնության սուբյեկտների մեկական ներկայացուցիչ: Նույն օրը Գերագույն խորհուրդը որոշեց ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ Բարեկն Արաքցյանին ընտրել Հայաստանի Հանրապետության սահմանադրական հանձնաժողովի համանախագահ:

Սահմանադրական հանձնաժողովի՝ մինչ այդ մշակած և հավանության արժանացած նախագիծը վերադարձվեց հանձնաժողովին՝ նոր կազմով լրամշակելով՝ հաշվի առնելով նաև այլընտրանքային նախագծերը:

Ընդլայնված կազմով (32 մարդ) սահմանադրական հանձնաժողովն աշխատեց 1994 թ. հունիսի 30-ից մինչև 1995 թ. ապրիլի 13-ը: Այդ ընթացքում հրավիրվեց հանձնաժողովի 66 նիստ: Սահմանադրական հանձնաժողովը հետագա աշխատանքում որպես

հիմք ընդունեց սահմանադրության պաշտոնական նախագիծը (հասարակական շրջաններում նախագիծն այդպիսի անվանում էր ստացել), որը լրամշակվեց և ներկայացվեց ՀՀ Գերագույն խորհրդի քննարկմանը:

1995 թ. մայիսին նախագիծը մանրակրկիտ քննարկվեց Գերագույն խորհրդի նստաշրջանում: Անցկացվեցին երկարատև խորհրդաբանական քննարկումներ, Սահմանադրության նախագծում մտցվեցին զգալի թվով փոփոխություններ ու լրացումներ: Դրանք բոլորը հանգամանորեն քննարկվեցին սահմանադրական հանձնաժողովի լրացուցիչ նիստերում (1995 թ. մայիսի 10-ին և 11-ին): Համաձայնեցված տեսքում մեկ անգամ ևս քննարկեց Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը: Եվ, վերջապես, 1995 թ. մայիսի 12-ին Գերագույն խորհուրդը ընդունեց որոշում՝ «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագծի մասին»: Հենվելով Հայաստանի Հանրապետության 1995 թ. մարտի 27-ի Սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի վրա և դեկավարվելով «Հայաստանի Հանրապետության հանրաքեի մասին»՝ Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով, Գերագույն խորհուրդը որոշեց.

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի սահմանադրական հանձնաժողովի ներկայացրած Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նախագծին:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ընդունման նպատակով 1995 թ. հունիսի 5-ին անցկացնել հանրաքե՝ քվերակության դնելով հետևյալ հարցը. «Համաձա՞յն եք, արդյոք, ընդունել Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի հավանությանն արժանացած Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը»<sup>1</sup>:

Հայաստանի քաղաքացիները պետք է գնահատական տային սահմանադրական հանձնաժողովի ներկայացրած և Հայա-

<sup>1</sup> Տե՛ս «Երկիր» օրաբերք, 15 հունիսի, 1994 թ.:

<sup>2</sup> Տե՛ս «ՀՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր», թիվ 12(1064), հոդվ. 232-235:

տանի Հանրապետության Գերագույն խորհրդի հավանությանն արժանացած ՀՀ Սահմանադրության նախազծին: Հայաստանի պատմության ողջ ընթացքում առաջին անգամ 1995 թ. հուլիսի 5-ին անցկացվեց սահմանադրական հանրաքվե: Հայաստանի Հանրապետության ակտիվ ընտրական իրավունք ունեցող 2189804 քաղաքացիներից հանրաքվեին մասնակցեց 1217531 մարդ: Ընդ որում 828370-ը պատասխանեցին «այո» և միայն 349721-ը՝ «ո՛չ»: Անվավեր ճանաչվեց 39440 քվեաբերթիկ: Այսպիսով, հանրաքվեին մասնակցեց 1217531 քաղաքացի, այսինքն՝ քվեարկության իրավունք ունեցողների 55,66 տոկոսը: Հայաստանի Հանրապետության նոր Հիմնական օրենքի օգտին կողմ արտահայտվեց ընտրողների 68,04 տոկոսը<sup>1</sup>:

## § 2. ՀՀ 1995 թ. Սահմանադրության իրավաբանական ընդհանուր բնութագիրը և առանձնահատկությունները

ՀՀ 1995 թ. Սահմանադրությունն աչքի է ընկնում մի շարք յուրահատկություններով, որոնցով նա տարբերվում է Խորհրդային Հայաստանի սահմանադրություններից<sup>2</sup>:

**Առաջին,** ՀՀ նոր Սահմանադրությունն, ի տարբերություն նախորդների, հենվում է համաշխարհային սահմանադրական տեսության նվաճումների վրա: Այդ տեսության մեջ չկա միասնական հայացք սահմանադրության բովանդակության, կառուցվածքի վերաբերյալ: Տարբեր երկրներում դրանք ունեն տարբեր բովանդակություն և կառուցվածք, որը պայմանավորված է դրանց ընդունման պատմական պայմաններով, սահմանադրական իրավագիտության գարգացման մակարդակով, ազգային առանձնա-

հատկություններով:

Միաժամանակ համաշխարհային սահմանադրական տեսությունը և պրակտիկան աչքի են ընկնում որոշակի միասնականությամբ՝ արդի սահմանադրությունների բովանդականության պատկերացման մասին, որն իհմնված է ժողովրդավարության վերաբերյալ հայացքների ընդհանրության վրա: Ժամանակակից պայմաններում ձևափորվել է ժողովրդավարական պետության որոշակի մոդել, որն էլ պահանջում է, թե ինչը պետք է ընդգրկվի սահմանադրության մեջ: Դրանք են՝ մարդու բնական իրավունքների ու ազատությունների, իշխանությունների տարանջատման, ժողովրդաիշխանության, ներկայացուցչական համակարգի ու խորհրդաբանականության, իրավական և սոցիալական պետության վերաբերյալ հայեցակարգերը, որոնք և դրված են ՀՀ Սահմանադրության հիմքում:

Այսպիսով՝ «ՀՀ Սահմանադրությունն ամբողջությամբ վերցրած, համապատասխանում է միջազգային չափանիշներին և բավարարում է ժամանակակից կոնստիտուցիոնալիզմի համընդհանուր ճանաչում ստացած պահանջները, իհարկե, առաջին հերթին արտացոլելով Հայաստանի Հանրապետության առանձնահատկությունները»<sup>1</sup>:

Մի շարք իրավագետներ, համաձայնվելով այս տեսակետի հետ, համարելով, որ ՀՀ Սահմանադրությունն ունի ընդհանուր կողմեր այլ երկրների սահմանադրությունների հետ, միաժամանակ գտնում են, որ այն արտացոլում է «մեր ժողովրդի կյանքի, նրա նորաստեղծ պետականության առանձնահատուկ ու եզակի վիճակը, հետևաբար ունի դրանցով պայմանավորված առանձնահատկություններ: Խոսքը գնում է հայ ժողովրդի աշխարհասփյուռ և տարագիր վիճակի, հայ դատի արդարացի լուծման պահանջի մասին»: Սահմանադրության ներածությունը սահմանում է. «Հայ ժողովրդը իհմք ընդունելով Հայաստանի անկախության մասին հոչակարում հաստատագրված հայոց պետականության

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր, հոդվ. 13-14(1085), 15 մայիսի, 1995 թ.:

<sup>2</sup> Տե՛ս Խաչատրյան Գ.Մ., Первая Конституция Республики Армения, Ер., 2001, с. 24-28; Վաղարշյան Ա.Գ., Հայաստանի սահմանադրական գարգացման որոշ հիմնահարցեր - ԵՊՀ, Եր. համալս. իրատ., 2003, էջ 89:

իիմնարար սկզբունքները և համազգային նպատակները... ընդունում է ՀՀ Սահմանադրությունը»: Այստեղից բխում է, որ.

«1. «Հայ ժողովուրդ» արտահայտությունը ժխտում է անջրպետը սփյուռքի և հայաստանաբնակ հայերի միջև, իսկ ՀՀ ճանաչվում է ամենայն Հայոց պետական տունը:

2. Վկայակոչելով հոչակագիրը, այն վերածում է Սահմանադրության բաղադրամասի, որում ամրագրված է հայերի ցեղասպանության պաշտոնական ճանաչման, դատապարտման և դրա հետևանքների վերացման պահանջը:

3. Ելնելով հայ ժողովուրդի աշխարհասփյուռ վիճակից, հավատարիմ «մի ժողովուրդ, մի հայրենիք» նշանաբանին, Սահմանադրությունը սահմանում է. «ՀՀ միջազգային իրավունքի նորմերի շրջանակներում նպաստում է այլ պետություններում գտնվող հայկական պատմական ու մշակութային և կրթական կյանքի զարգացմանը»:

4. Հայ ժողովուրդի աշխարհասփյուռ վիճակից ելնելով 14-րդ հոդվածը ամրագրում էր, որ ազգությամբ հայերը ՀՀ քաղաքացիություն են ձեռք բերում պարզեցված կարգով»<sup>1</sup>:

**Երկրորդ,** ՀՀ նոր Սահմանադրությունն ուներ համակարգվածության բարձր մակարդակ, ներքին տրամաբանական կառուցվածք: Այն հավաք և սեղմ, ներքին միասնություն ունեցող իրավաբանական փաստաբուղթ էր: Սահմանադրական նորմերը հանդես էին գալիս իիմունքների ձևով այնպես, որ բացառվեին կամ նվազագույնի հասցեին հետագա ամեն կարգի փոփոխություններն ու լրացումները: «Սահմանադրական իիմունքներ» հասկացությունը ցույց է տալիս նորմերի այն համակցությունը, որոնք ամփոփում են Սահմանադրության հատկությունները սոցիալական իրականության որոշակի ոլորտի վերաբերյալ: Սահմանադրության մեջ ամրագրվում է հասարակական հարաբերություննե-

րի համակարգի կացության վրա իրավական ներգործության ցանկալի մոդելը, ընդ որում, այդ ներգործությունը պահանջում է գործուն կառավարչական գործունեություն՝ մոդելն իրականության մեջ կենսագործելու համար<sup>1</sup>: Սահմանադրական իիմունքները սահմանադրական պահանջների սոցիալական պրակտիկայում կենսագործելու բազմափուլ ճանապարհին առաջին օդակն են, և հիմնական օրենքի դրույթների հետագա զարգացումը կատարվում է այլ նորմատիվ ակտերի (օրենքների) միջոցով<sup>2</sup>:

**Երրորդ,** ի տարբերություն նախորդ սահմանադրությունների՝ նորը գործում է անմիջականորեն: 1995 թ. Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն «ՀՀ Սահմանադրությունը ունի բարձրագույն իրավաբանական ուժ և նրա նորմերը գործում են անմիջականորեն»: Սահմանադրությունն իրավաբանական հիմք է իրավունքի բոլոր ճյուղերի, օրենսդրության զարգացման համար, քանի որ դրա դրույթները առաջնային, ելակետային ու հիմնարար են: Սակայն, չպետք է ընկնել մեկ այլ ծայրահեղության մեջ՝ ենթադրելով, որ «Սահմանադրությունը ինքնիրեն, հպարտ մենակության մեջ, առանց այլ օրենքների ընդունակ է լուծել հիմնարար կարգավորման խնդիրները: Ծատ սահմանադրական նորմերի գործողությունը նպատակին է հասնում ընթացիկ օրենսդրության հետ համալիր, փոխկապակցված կերպով»<sup>3</sup>: Բայց մյուս կողմից վտանգ կա, որ Սահմանադրության նորմերը կտարալուծվեն ընթացիկ օրենքներում, քանի որ վերջիններս՝ չնայած Սահմանադրության առաջադիմական բովանդակությանը, մի շարք դեպքերում դրսորում են սահմանադրական նորմերին անհամապատահանության միտում: Ահա թե ինչու, կարևոր է սահմանադրական նորմերին տալ անմիջական գործողություն, ինչն էլ արփած է Սահմանադրության 6-րդ հոդվածում: Սակայն, ինչպես

<sup>1</sup> Տե՛ս Թօմանեան Ա.Ա., «Հայ ժողովրդավարության և ուժեղ պետականության Հիմնական օրենքը» // «117 հարց և պատասխան ՀՀ նոր Սահմանադրության մասին», Եր., 1995 թ., էջ 9-10:

<sup>2</sup> Տե՛ս Աճենեան Ա.Ա., Էածան ծեղ ՝ Ի՞ն ի ան ՝ ՆՆՆ. Անոն է ԷԱՕ, 1983, N 11, էջ 73-74:

<sup>3</sup> Տե՛ս Էին նուծօծությ թօ: Ի աօ-ի ն-ի ծան ծան է է ի ա ն ծ ծ է է, լ ., 1997, էջ 28:

ցույց է տալիս ՀՀ Սահմանադրական փորձը, անմիջական գործողությունը դեռևս մնում է որպես Սահմանադրության չիրացված հնարավորություն<sup>1</sup>:

**Չորրորդ,** ՀՀ Սահմանադրությունն ամենից առաջ իրավաբանական փաստաքույթ է, պետականության, իրավական համակարգի, օրինականության և իրավակարգի հիմքը: Հետևաբար, այն գերծ է գաղափարական դրգմաներից: Սակայն Սահմանադրությունը նաև քաղաքական փաստաքույթ է, որովհետև այն անպայման կարգավորում է նաև քաղաքական հարաբերություններ: Որոշ հեղինակներ ենթադրում են, որ սահմանադրությունը կատարում է նաև որոշակի գաղափարախոսական ֆունկցիա: Սակայն Սահմանադրությունը դուրս է գաղափարախոսությունից, այն միայն անհրաժեշտ պայման է ցանկացած գաղափարախոսության արտահայտման, սոցիալական տարակարծության ապահովման համար: Եթե Սահմանադրությունը արտահայտում է ինչ-որ որոշակի, համընդհանուր գաղափարախոսություն, ապա դա մարդու ազատության և սոցիալ-իրավական պետության փիլիսոփայությունն է: Այս տեսանկյունից 1995 թ. Սահմանադրությունը՝ որպես երկրի հիմնական օրենք, կարող է բավարարել և աջ լիբերալներին, և ձախ սոցիալիստական քաղաքական ուժերին:

**Հիմքերորդ,** ըստ իր ընդունման և փոփոխման եղանակի ՀՀ 1995 թ. Սահմանադրությունը կոչած էր: Դրանում փոփոխություններ մտցնելու համար անհրաժեշտ էր պահպանել որոշակի հատուկ պայմաններ, այսինքն՝ գիտակցորեն ստեղծված են դժվարություններ Սահմանադրության մեջ փոփոխություններ և լրացումներ մտցնելու համար: Կոչտ կարգը նպաստում է Սահմանադրության, հետևաբար նաև պետության ու հասարակության կայունությանը:

<sup>1</sup> Այս խնդրում մենք համաձայն ենք այն իրավագետների հետ, ովքեր առաջարկում են «մշակել ՀՀ Սահմանադրության անմիջական գործողության իրավական կառուցակարգ և ներդնել այն իրավակիրառ գործունեության մեջ» (տե՛ս Նազման Գ.Ս., նշված աշխ., Էջ 181):

**Վեցերորդ,** ՀՀ 1995 թ. Սահմանադրությունը սկիզբ դրեց Հայաստանում մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների բնական իրավական, ազատական հայեցակարգի ամրագրման, պահպանության, երաշխավորման և պաշտպանության իրավական գործընթացին<sup>1</sup>: Մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների սահմանադրական ինստիտուտի նորմերը գետեղված էին Սահմանադրության 1-ին գլուխ որպես ՀՀ սահմանադրական կարգի հիմունքներ<sup>2</sup>, ինչպես նաև՝ 2-րդ գլխում: Վերջինը ուներ ներքին տրամաբանական կառուցվածք՝ դրանում ամրագրված էին, նախ, ՀՀ քաղաքացիության սահմանադրական հիմքերը<sup>3</sup> (հոդված 14), ՀՀ քաղաքացիների լիիրավության և իրավականարության սկզբունքները (հոդվածներ 15-16), մարդու քաղաքացիական կամ անձնական իրավունքները

<sup>1</sup> Այդ հայեցակարգի փիլիսոփայական հիմքը ուսմունքն է ազատության մասին՝ որպես մարդու բնական կացույցուն և բարձրագույն արժեք կյանքից հետո: «Արդի սահմանադրական-իրավական ուսմունքն ազատության մասին իր բազմաեղբությամբ և բարդ դետերմինավորվածությամբ հանդերձ կարող է կարծ արտահայտվել հետևյալ հիմնական դուրյներում: 1) բոլոր մարդիկ ազատ են ի ծնե և ոչ որ իրավունք չունի օտարեկու նրանց բնական իրավունքները: Այդ իրավունքների ապահովումը և պաշտպանությունը պետության խնդիրն է և գլխավոր կոչումը, 2) ազատությունը հնարավորությունն է անել ամեն ինչ, ինչը չի արգելված և չի վնասում մյուս անձանց: Հետևաբար, մարդու ազատությունը չի կարող լինել բացարձակ, այս սահմանափակված է մյուս մարդկանց նոյն կացույցամբ: Հնարավորությունների հավասարությունը բոլորի համար ազատության հիմքն է, 3) ազատության սահմանները կարող են որոշվել միայն օրենքով, որն էլ հենց ազատության չափն է: Ազատությունը և իրավակարգը հակամարտ չեն, եթե օրենքը իրավական է և ժողովրդավարական: Հետևաբար ամենը, ինչ չի արգելվում, թույլատրելի է: Իրավունքների սահմանափակումը հնարավոր է բացառակերպ հասարակության ընդհանուր բարեկեցությանը նպաստելու նպատակով» (տե՛ս Անձնագիր 1.Ա. է աձ., Էնթոնուունը 1996 թ. էջ 155):

<sup>2</sup> Սահմանադրության 1995 թ. խմբագրությամբ 4-րդ հոդվածը սահմանվում էր. «Պետությունը ապահովում է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը Սահմանադրության և օրենքների հիման վրա՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան»:

<sup>3</sup> Համաձայն 1995 թ. Սահմանադրության 14-րդ հոդվածի՝ ՀՀ քաղաքացիության ձեռքբերման և դադարեցման կարգը սահմանվում էր օրենքով: Ազգությամբ հայերը ՀՀ քաղաքացիություն էին ձեռք բերում պարեցված կարգով: ՀՀ քաղաքացին միաժամանակ չէր կարող լինել այլ պետության քաղաքացի:

և ազատությունները (հոդվածներ 17-25), ՀՀ քաղաքացիների քաղաքական իրավունքները և ազատությունները (հոդվածներ 25-27), մարդու և քաղաքացու տնտեսական ու սոցիալական, մշակութային իրավունքներն ու ազատությունները (հոդվածներ 28-37), մարդու իրավունքների հատուկ իրավական երաշխիքները (հոդվածներ 38-42), մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակման կարգը և հիմքերը (հոդվածներ 44-45), ՀՀ-ում մարդու և քաղաքացու սահմանադրական պարտականությունները (հոդվածներ 46-48):

1995 թ. Սահմանադրության 2-րդ գլխում սահմանված նորմերը լիովին համապատասխանում էին այդ պահին ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերում ամրագրված մարդու իրավունքների միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին և նորմերին: Սակայն Սահմանադրության մեջ անհնար էր մեկ առ մեկ ամրագրել մարդու և քաղաքացու բոլոր հիմնական իրավունքները և ազատությունները: Այս տեսանկյունից կարևոր դրույթ էր ամրագրում Սահմանադրության 43-րդ հոդվածը. «Սահմանադրությամբ ամրագրված իրավունքները և ազատությունները սպառիչ չեն և չեն կարող մեկնարանվել որպես մարդու և քաղաքացու այլ հանրաճանաչ իրավունքների և ազատությունների բացառում»:

**Յոթերորդ,** ՀՀ 1995 թ. Սահմանադրությունը լուծեց միջազգային իրավունքի ՀՀ իրավական համակարգում գործողության հիմնահարցը: Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերում ամրագրվեցին այդ հարցի հետևյալ կարևոր իրավակարգավորումները:

ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերը ճանաչվում են ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մաս: Այս դրույթով ՀՀ-ն միջազգային իրավունքի նորմերի ճանաչման իրավական ձև համարեց միջազգային պայմանագրերի վավերացումը: Միջազգային իրավունքի նորերի ճանաչման այս ձևը այլ անվանում են ընդհանուր փոխակերպումից բացի, գործում են անմիջականորեն: Այդպիսի կիրառման ընթացքում հնարավոր են միջազգային պայմանագրի և ներպետական նորմատիվ ակտի՝ օրենքի կողիցիաներ (տարածայնություն, անհամապատասխանություն): Այս դեպքի համար Սահմանադրությունը սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են ՀՀ օրենքներով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը, այսինքն՝ վավերացված միջազգային պայմանագրերը ներպետական ակտերի նկատմամբ կիրառման առաջնություն ունեն: Միջազգային պայմանագրի փոխակերպման այս ձևը չի վերաբերում Սահմանադրությանը, որը պահպանում է իր գերակայությունը. ՀՀ Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը կարող են վավերացվել միայն Սահմանադրության մեջ համապատասխան փոփոխություն կատարելուց հետո:

Իրավական համակարգի բաղկացուցիչ մաս» իրավական ձևակերպումը նշանակում է, որ վավերացված միջազգային պայմանագրերը ճանաչվում են ներպետական հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման աղյուր: Սահմանադրական այդ դրույթով ՀՀ-ն պարտավորվեց, որ պետական մարմինները պետք է ներպետական օրենսդրությունը և իրավակիրառական պրակտիկան համապատասխանեցնեն միջազգային իրավական նորմերին: Միջազգային իրավունքի ներպետական իրավական համակարգում գործողության այս ձևն անվանում են միջազգային իրավունքի միջնորդավորված (ներպետական ակտերի միջոցով) փոխակերպում:

Քանի որ միջազգային պայմանագրերը համարվում են ՀՀ իրավական համակարգի մաս, ապա դրանք ներպետական իրավական համակարգում ձեռք են բերում իրավական կարգավորման աղյուրի ուժ և ընդհանուր փոխակերպումից բացի, գործում են անմիջականորեն: Այդպիսի կիրառման ընթացքում հնարավոր են միջազգային պայմանագրի և ներպետական նորմատիվ ակտի՝ օրենքի կողիցիաներ (տարածայնություն, անհամապատասխանություն): Այս դեպքի համար Սահմանադրությունը սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են ՀՀ օրենքներով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը, այսինքն՝ վավերացված միջազգային պայմանագրերը ներպետական ակտերի նկատմամբ կիրառման առաջնություն ունեն: Միջազգային պայմանագրի փոխակերպման այս ձևը չի վերաբերում Սահմանադրությանը, որը պահպանում է իր գերակայությունը. ՀՀ Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը կարող են վավերացվել միայն Սահմանադրության մեջ համապատասխան փոփոխություն կատարելուց հետո:

### § 3. Սահմանադրական կողիֆիկացիան և Հայաստանի իրավական զարգացման հետագա ուղղությունները

1990-95 թթ. իրականացված իրավական բարեփոխումներն իրենց հանգրվանը գտան 1995 թ. հուլիսի 5-ի՝ հանրաքվեի միջոցով ընդունված՝ Սահմանադրության մեջ: Իրավաբանական տեսանկյունից 1995 թ. Սահմանադրությունն իրականացրեց սահմանադրական կարգավորման համակարգում՝ կողիֆիկացիայի ձևով<sup>1</sup>:

ՀՀ Սահմանադրությունը մեր պետության և հասարակության հիմնական օրենքն է, որն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, ամրագրում է հասարակական և պետական կարգերի հիմնական սկզբունքները, մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, ինչպես նաև պետական իշխանության մարմինների համակարգը:

Սահմանադրությունը՝ որպես հիմնական օրենք՝ կամ օրենքներին օրենք, հիմնարար դեր է խաղում ժողովրդավարության երաշխիքների շարքում: Սահմանադրությունն ամրագրում է ժողովրդավարության կառուցակարգերը, սկզբունքները, ինստիտուտները և նորմերը՝ դրանց տալով բարձրագույն իրավաբանական ուժ: Սահմանադրական կարգավորման հիմնական նպատակը ժողովրդավարության իրացումն է: ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված բազմաթիվ ժողովրդավարական ինստիտուտները, սկզբունքները, նորմերը վերաբերում են հասարակությանը, պետությանը, ինչպես նաև մարդուն: Այլ կերպ ասած, ժողովրդավարությունն իրական դարձնելու համար ՀՀ 1995 թ. Սահմանադրությունը:

- ամրագրեց ժողովրդավարական հասարակության որոշա-

կի մոդել, որն անվանում են քաղաքացիական հասարակություն,

• ամրագրեց ժողովրդավարական պետության որոշակի մոդել, որն անվանում են սոցիալական-իրավական հանրապետություն,

• ամրագրեց մարդու (քաղաքացու) անօտարելի իրավունքներն ու ազատությունները, իսկ դրանց պահպանությունը սահմանեց որպես պետության պարտականություն, նպատակ:

Սահմանադրության ընդունումից սկսած հայ քաղաքագիտության և իրավագիտության մեջ առաջ են գալիս սկզբունքներն ուր մոտեցումներ և հայեցակարգեր՝ պայմանավորված համաշխարհային քաղաքական-իրավական գլխության նվաճումներով: Տեսական միտքը, որն ընկած է ժամանակակից սահմանադրական կարգավորման հիմքում, ամենից շատ մոտ է ժամանակակից արևմտյան ազատականությանը: Հենց այդ ուսմունքն է, որի արմատները գալիս են հին հույնների փիլիսոփայությունից, առաջ քաշել քաղաքացիական հասարակության, խորիրարանականության, իշխանությունների բաժանման, իրավական պետության և այլ գաղափարները: Միաժամանակ այն կրում է սոցիալ-ազատականության և սոցիալ-ժողովրդավարության ազդեցությունը: Այսինքն՝ Հայաստանի սահմանադրական կարգերը ներառել են համաշխարհային սահմանադրական իրավական մտքի նվաճումները, փորձելով այն դնել մեր ազգային հողի վրա:

Հայաստանում սահմանադրական բարեփոխումները հիմնականում դրեցին ժողովրդավարության հիմքերը, և այդ տեսանկյունից ժողովրդավարության հաստատման, հասարակության քաղաքական զարգացման հիմնական ինստիտուցիոնալ պայմանները, որպես առաջադիմության կարևորագույն պայման, առկա էին: Միևնույն ժամանակ միայն սահմանադրական-իրավական բարեփոխումներն ի վիճակի չեն երաշխավորելու ժողովրդավարությունը:

1995 թ. Սահմանադրության ընդունումից հետո ՀՀ-ն քևակ-

<sup>1</sup> Կողիֆիկացիան օրենսդրության համակարգման ձև է, որի ընթացքում նորմատիվ տարերի ակտերի կարգավորման առարկան միավորվում է միասնական, տրամադրանորեն ամբողջական նոր ակտում (տե՛ս Վաղարշյան Ա.Գ., Պետության և իրավունքի տեսություն-2..., էջ 197-198):

ինեց իր զարգացման նոր փուլը, որի բովանդակությունը Սահմանադրության հիմքում դրված գաղափարների, սահմանադրական հիմունքների և նորմերի կենսագործումն էր: Այդ պայմաններում Սահմանադրությունը կոչված էր անխախտելի դարձնել և երաշխավորել մարդու իրավունքներն ու ազատությունները, իիմք դառնալու սոցիալական-իրավական պետության ստեղծման ճանապարհին, նպաստել քաղաքացիական հասարակության կայացմանը:

Սահմանադրությանը սպասում էին լուրջ փորձություններ, որովհետև սպասվող բարեկեցությունը կամ գոնե դրա նախադրյալները չկային: Դեռևս ծանր էր տնտեսական և սոցիալական վիճակը: Արժեզրկման վտանգը մշտապես կախված էր բնակչության գլխին: Բնակչության տարրերակումը, ըստ Եկամուտների և նյութական ապահովածության, դարձել էր բացահայտ, և աճում էր: Լուրջ հիմնախնդիրներ կային հանրային իշխանության կազմակերպման և գործունեության հարցերում: Նման իրավիճակում հնչում էին մեղադրանքներ սահմանադրության հասցեին, փորձեր էին արփում առաջացած հիմնախնդիրների պատճառ դարձնել սահմանադրությունը:

Իհարկե, Սահմանադրությունը չի կարելի համարել կատարյալ փաստաթուղթ: Այն ուներ նաև թերություններ, ինչպիսիք էին՝ իշխանությունների անհավասարակշիռ տարանջատումը, հակակշիռների և զավիճների ոչ արդյունավետ համակարգը, գործադիր իշխանության երկատումը նախագահականի և կառավարականի, դատական իշխանության կազմակերպման և գործունեության սահմանադրական նորմերի ճնացող, ոչ հստակ բնույթը և այլն:

Բայց պետք է նկատի ունենալ երկու հանգամանք: Նախ, ընդհանրապես, կատարյալ սահմանադրությունը չի կարող լինել: Երկրորդ, չնայած սահմանադրական համակարգերի կազմակերպման գոյություն ունեցող բազմազանությանը, տարբեր երկր-

ներում պետական իշխանությունը ձևավորվում է մի շարք ընդհանուր օրինաչափություններին համապատասխան: Այսինքն՝ մարդկային հասարակությունն իր զարգացման ընթացքում, ամփոփելով սոցիալական փորձը պետական շինարարության ոլորտում, մշակել է սկզբունքներ, որոնք ձեռք են բերել արքունատիկ ճշմարտության բնույթը, և որոնց համապատասխան պետք է կառուցվի և գործի իրավական և ժողովրդավարական կոչված պետական իշխանությունը մարմնավորող համակարգը: Այդ սկզբունքներն ընդհանուր, օրենքավոր բնույթ ունեցող արժեքներ են, և բազմազանությունը տվյալ դեպքում դրսերվում է միայն և միայն սկզբունքների շրջանակում:

Սահմանադրական ցանկացած բարեփոխման հետևանքով ստեղծվող պետական կառավարման համակարգը որոշակիորեն հայեցողական հիմնախնդիր է, քանի որ կարելի է տուրք տալ այս կամ այն տեսականին, այս կամ այն երկրի փորձին և այլն, բայց բոլոր դեպքերում առաջնայինը, պարտադիր համաշխարհային պետականական մտքի կողմից մշակված սկզբունքների պահպանությունն է:

Հետևաբար սահմանադրության ընդունումից հետո սահմանադրական գարգացման առաջնակարգ խնդիրը եղել և մնում է սահմանադրության հիմունքների, ինստիտուտների և ընթացակարգերի կեսնագործումը կյանքում, դրանց ձևավորման գործընթացը մինչև վերջ հասցնելը, և դրանով իսկ հայկական հասարակության և պետականության սահմանադրական տեսականը իրականություն դարձնելը: Ընդ որում, այդ ճանապահին միայն սահմանադրական օրինականությունն էր ապահովելու իրական սահմանադրականություն, ժողովրդավարություն, հասարակության առջև կանգնած սոցիալական և տնտեսական խնդիրների լուծումը:

Այսպիսով, մեր իրավիճակում գորդյան հանգույցը պետք էր փնտրել ոչ բե սահմանադրության մեջ, այլ սահմանադրությունից

դուրս, Սահմանադրության դրույթների և իրականության միջև խզվածքում:

Սահմանադրության շատ դրույթներ հոչակագրային են ու իրականում չգործող: Այդ հանգամանքն ունի խորքային պատճառներ և հիմքեր: Բացի սահմանադրական նորմներից կան նաև այլ նախադրյալներ և պայմաններ, որոնցից ևս կախված է պետական իշխանության արդյունավետությունը, ընդ որում շատ ավելի, քան Սահմանադրությունից: Հետևաբար, ՀՀ Սահմանադրության պարզունակ համեմատությունը որևէ այլ երկրի սահմանադրության հետ կամ իրականությունից կտրված քննադատությունը գիտականորեն անընդունելի է, քանի որ տարբեր են մեր և նրանց սոցիալ-հոգեբանական, տնտեսական, քաղաքական, գաղափարամշակութային և մնացած պայմանները: Սահմանադրական հետագա զարգացման հրամայականը նշված գործոնների շեշտադրումը, դրանք բարենպաստ դարձնելն է:

Այս կարևորագույն ու բարդ խնդրի լուծման համար երկար ժամանակ էր պահանջվում: Միաժամանակ այն պայմանավորված է մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներով: Այսպիսով, առանց համապատասխան ամբողջական, համալիր, գիտականորեն և գործնականորեն հիմնավորված հայեցակարգի մշակման, ցանկացած օրենսդրական, այդ թվում և սահմանադրական բարեփոխում դատապարտված է անհաջողության: Անհաջողությունն ավելի հավանական է, եթե այդ բարեփոխումները չեն երաշխավորված դրական ազդեցություն ունեցող ընդհանուր կացությամբ՝ երկրի քաղաքական և տնտեսական դրությամբ, հասարակության բարոյահոգեբանական վիճակով ու որակներով, այլ հասարակական, արտաիրավական պայմաններով:

Միայն լավ սահմանադրության առկայությունը բավարար չէ հասարակական կյանքի բոլոր ոլորտներում իրական հաջողության հասնելու համար: Կան նաև այլ գործոններ, մասնավորապես, քաղաքական, պետական-իրավական ռեժիմը և գործելա-

կերպը, որոնք երբեմն կարող են ի չիք դարձնել լավագույն սահմանադրությունը, և ընդհակառակն, համապատասխան առաջադիմական, դրական ուղղվածության դեպքում նույնիսկ վատ սահմանադրության պայմաններում երաշխավորել հաջողությունները: Հետևաբար, պահի իրամայականներից էին խստագույն օրինականությունը (նաև սահմանադրական), պետական իշխանության իրավահեղինակության բարձրացումը, ընդհանուր հասարակական բարենպաստ պայմանների ստեղծումը, հասարակության սահմանադրական-իրավական սոցիալիզացիան և իրավական մշակույթի արմատավորումը:

**Gagik Ghazinyan,  
Artur Vagharshyan**

**ISSUES OF THE HISTORY OF  
ARMENIAN LAW  
*FROM ANCIENT TIMES TO PRESENT DAYS***

YSU press

**Resume**

The monograph presents a systematized legal and historical research highlighting the formation and operation of separate elements in the Armenian Law and its culture focusing on the major issues and regularities of its historical development.

In fact, it's the first attempt to study the History of Law in Prechristian Armenia, the state of affairs in the field of Law in 15-19-century Armenia, the legal system of the First Republic of Armenia, as well as the process of the normative basis formation in the legal system of the Third Republic of Armenia. Some problematic issues in the History of the Armenian Law relating to other historical periods are presented innovatively.

The research is conducted through the use of current approaches and methodologies which allowed to avoid merely formal legal analysis and to draw the entire picture of Armenian Law formation and operation at each historical stage correspondingly.

The book is designed for law professionals majoring in the field of History of the Armenian State and Law, as well as students and post-graduates at law schools.

**Казинян Гагик Сергеевич,  
Вагаршян Артур Гришаевич**

**ОСНОВНЫЕ ВОПРОСЫ  
ИСТОРИИ АРМЯНСКОГО ПРАВА  
*ОТ ДРЕВНИХ ВРЕМЕН ДО НАШИХ ДНЕЙ***

Издательство ЕГУ

**Резюме**

Монография является систематизированным историко-правовым исследованием, которое посвящено общим вопросам и закономерностям формирования, действия и исторического развития армянского права и отдельным элементам правовой культуры.

В монографии впервые исследуются основные вопросы истории права дохристианской Армении, правовое состояние Армении в XV-XIX веках, правовая система Первой республики, а также процесс образования нормативных основ правовой системы Третьей республики. Многие основные вопросы других периодов истории армянского права представлены в новом свете.

Исследование осуществлено с использованием современных подходов и принципов решения правоведческих задач, предпринята попытка представить обзор армянского права в соответствии с историческими этапами его формирования и развития.

Монография адресована преподавателям, аспирантам и студентам юридических факультетов, а также тем, кто интересуется основными вопросами истории государства и права Армении.

Ղազինյան Գագիկ, Վաղարշյան Արթուր

ՀԱՅՈՑ ԻՐԱՎՈՒՆՔԻ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

ՀԲՆ ԾՐՁԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՍԵՐ ՕՐԵՐԸ

Gagik Ghazinyan, Artur Vagharsyan

ISSUES OF THE HISTORY OF THE ARMENIAN LAW

FROM ANCIENT TIMES TO PRESENT DAYS

YSU press

Казинян Гагик Сергеевич, Вагаршян Артур Гришаевич

ОСНОВНЫЕ ВОПРОСЫ  
ИСТОРИИ АРМЯНСКОГО ПРАВА

ОТ ДРЕВНИХ ВРЕМЕН ДО НАШИХ ДНЕЙ

Издательство ЕГУ

ԵՊՀ հրատարակչություն  
ՀՀ, Երևան - 0025, Ալեք Մանուկյան 1

Հանձնվել է տպագրության 11.11.2014թ.:  
Զափաք 60x84<sup>1</sup>/<sub>16</sub>: Ծավալը՝ 26 տպ. մամուլ:  
Տպաքանակ՝ 300: